Հ. ՀՈՎՀՈՐԴԱՆՅԱՆ

ԻՐԵՐԸ ԻՐԵՐԻ ՄԱՍԻՆ

Zakł. U.U.N.
Gdańsk
27.VI.56

Գիրքը դուրս չի գրվում

Համազասպ Համբարձումյան

891.99
Հ-20

Հեղինակի իրավունքով

ՍՏՈՒԳՎԱԾ է 1961 թ.

ԻՐԵՐԸ ԻՐԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀԱՏՎԱԾՆԵՐ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
1903—1956

А 28282

ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

ԵՐԵՎԱՆ — 1956

АМАЗАСП АМБАРЦУМЯН

ВЕЩИ О ВЕЩАХ

Поэтические фрагменты

(На армянском языке)

Ереван — 1956

ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ

ՈԳԵՇՆՉՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔ

Ա.

ԴԱՐԻՆ

Մարդ կայծակներ շանթող բաշ գարդին,
Որ կյանք ու հոգի գիտես միշտ կռել,
Ինչո՞ւ, ինձ ասա, գործագուլ, անհոգ
Կռան գնդանին գագար ես տվել...
Կայծակին նայի՛ր,
Ճակատդ լայն բաց.
Ու կարդդ ձեռքով
Նեսի՛ր հոգի հարված...

Ու քա՜րկ, քա՜րկ անվերջ — երկաթե սրտեր
Ասուված հոգիներ կռող կռանով.
Այդ ասուվածաշունչ գնդանիդ վրա
Թող ծնունդ տանի շանթե մարդի ծով։
Հարատև անհունին
Հարատևում եղբայր՝
Ջնդան ու մուրճով
Հրդեհիր աշխարհ...

Տիեզերքը հանուր հոգեբուղխ գարբնոց —
Հոգեծին արդանդ կռանն ու գնդան.
Կայծակը քեզ ձե՛ռք ու սիրտդ որսա,
Կռի՛ր ու կռի՛ր, կռիր հավիտյա՜ն ...
Արար աշխարհը
Գարշ, գծո՜ւծ զանգված՝

Կրակի՛ր, դարձրու
Միտք, Հոգի՞ կամ ...
Լազուրը լաջվարվի տատղերով ցիրցան
Դարերնց երազին թող փա՞ռք նվագեն.
Մտքս, Արարած և լեռ ու Հովիտ
Թեզնով կրակված՝ թող Հոգի շնչեն ...
Եվ կյանքն ու արտեր,
Եվ շարն ու բարին
Թող ի մի կազմեն
Հրաշանշ Հոգին ...

Դարերի՛ն քաջարի, Հակատոգ ոգաս՝
Վերցուր Հաղթ կռանն ու դարի զնգանին.
Ու դարի անցուց, կռի՛ր ու կռի՛ր,
Որ գծած աշխարհն առնե իր ուղին...

Է.

ՉՈՒՀԱԿՆԵՐ

Երկնքի գավակ — արևի ծնունդ.
Քա՞ջ աշխատավոր՝ մաքի ջուլհակներ.
Ձեր սիրտը ազատ՝ լույսերի խառնուրդ,
Երկաթե մկան՝ ոժդահա ձեռքեր,—
Հպարտ և արի
Ձեռք գարկեք գործի.
— Ձեր թատին ու հանճար
Նոր կյանք կառեղծի ...

Եվ արևազարդ երկնքի նման,
Որ արարչական գաղդահն է, դիվան.
Գզրար ու ջուլհակ՝ ձեր կուրծքը արնոտ՝
— Կանգնեցեք գաղդահ հոգու մեծության ...
Ձեր ճակտին կնճիռ, ձեր արտին ավյուն՝—
Քանի երկնքում դեռ կա արեգակ,
— Գործի վիճակված բանվո՛ր ու ջուլհակ.
Զարկե՛ք, վերանա կապանքն ու արյուն

Քանի այս հզոր և վեհ տիեզերքում
Գաղդահն է գործում անմահ բնության —
Իսկ արևն, աստղեր, երկինք ու եթեր
Վանմ գաղդահի կերտվածն են միայն, —
Ձեր վիշտն ու հույսեր
Երկաթ արտերից,

Քրտինքն ու լուցքը
Ձեր լույն ճակատից
Սուրբ ազատության անհուն թեր տակ
Երկի՜նք կթանեն, հաղթանա՜կ կերգեն ...
— Դաղգահի՜ն գարկեք բանվոր ու ջուլհակ,
Աշխատանքն ու լուցս թող կյանքը գրկեն ...

Հողմերն աշխարհի թող նյութ կատակեն,
Եվ մանեն մանած կյանքի անիմներ.
Գցեք ամեն ինչ դաղգահի բերան,
Գցեք ու գործեք մեկ ազատ օրեր:
— Արդ՝ նորոգ կյանքի թերթերն են վառում
Հիմնված դաղգահի վրա կախարդան.
Թոխիչն ու թոխմախ, մարանչն ու մանած
Կանչում են միշտ ձեզ դեպ գործ անհուն ...
Աշխատավորնե՜ր,
Ձեր սիրտ ազե,
Հորինե՛ք ատամած
Եվ սեր հարատև ...

Ձեր նոր գարունքին թող փարթամ ծաղկին
Սուրբ ազատությունն՝ ատամած մարի.
Թող գործն ու հոգին հեղեղեն աշխարհ, —
— Գործում են ազատ արտերը փառքի ...
Գործի ասրբ դեղում
Յրեք աչ ու ձախ.
— Զարկե՛ք անդադրում.
Թախ հա թախ... թախ հա թրախ...

ԳԶՊԱՐԻ ԵՐԳԸ

Դեռ մեր կյանքը չունի՛ արեգակ,
Մեր հոգուում քարացած է խավար.
— Բայց մեր սիրար ուսկուն, համարձակ,
Մեկ նոր կյանք կառեղծի մեր համար ...
— Երգիր երգ լուսավոր,
Երգը արի ու քրտինք —
Արևներ ու երկինք
Հորինող քաջ բանվոր ...
Ինչպես մեզն է լիրան ուսերին
Կուտակված վաղորդյան ժամերին,
Անդիպ բուրգը ոխուր, խառն ի խուռ,
Որ ծնունդ է կյանքի, փորձանքի,
Կուտակված է մեր դեմ միշտ և լուռ,
— Պետք է գործ և ձեռքի, և մտքի ...
Ահա և վեհ շարին,
Ահա մեր սուրբ անեղ.
— Ջա՜ն, ընկեր, անմեկին,
Ջա՜րկ, գլենք, «բը՜գ ու գրգ, չախ ու չեխ»...
Շուտ գլենք ու փորձենք հաղթաբար,
Նոր արև հորինենք մեկ համար ...
Երգիր ե՜րգ լուսավոր,
Երգ արևն ու քրտինք.
Արևներ ու երկինք
Հորինող քաջ բանվոր ...

Մեր կնճիռը կայծակն է մարի՝
Մեր ճակատին բարացած լերան պես, —
Մեր այս գործը ապրյուրն է փառքի,
Նա միշտ կյանք է գալիս — ա՜յ էապես ...
Ջա՜ն ընկեր. գեթ նայիր դեպ հեռուն,
Տե՛ս, ինչի՜ն են կյանքում կատարվում.
Այս տանջանքն ու արյունն գառնության
Թշնամին մեր գլխին է թափում ...
Տե՜ս, հեռվից՝ ծովի պես անսահման —
Հեղեղվում է կեղծիք և չարիք.
— Օձի պես նենգավոր ու դաժան
Իրար միս են ուտում չար մարդիկ ...

Ահա՛ քո վեհ չարին,
Ահա՛ քո սուրբ անեկ.
Ջա՜ն, ընկեր անմեկին,
Ջա՜րկ, գրենք միասեղ ...
Գրենք բուրգը ազատ. խճճված,
Գրենք կյանքը մթին, դառնագին.
— Աշխատանք է մեզի վիճակված,
Գրելով կհասնենք արևին ...
Աշխարհի սկզբից կյանքի կեղտը այսպես —
Կուտակված է մեր դեմ՝ անգիր բուրգ ծովի պես.
Նրա մեջ խճճված են բարին և չարիք
Ճշմարիտն ու կեղծիք և սուտ,
— Ամե՜ն բան, ինչ անում են մարդիկ ...
Բայց մեր ձեռքը ազատ, քաջ ընկեր,
Մեր անեղը կայծակ երկնացել,
Մեր չարին է հոգին անվեհեր, —
— Ջարկ, գրենք, դառնք բուրգը խոժոռ ...

Եթե ճիշտ է, այս բուրգը ազատ, մթագույն
Իր մեջ ծերք, լույս արև էլ ունի.
Թե կյանքին վիճակված է գարուն,
— Մեր անեղ ու չարին կծնի...
Եվ բանի երկնքում շողշողան

Տիեզերքի հրաղները — աստղեր —
Իսկ ծովում ալիքները դաժան
Միշտ ոռնան, կրծոտեն սև ժայռեր —
— Թող անդուլ կայծկատ մեր աչեզ,
Թող չարին շանթն միշտ հաղթ հարված,
Շուտ դդե՞նք բրդի գեղը ահեղ,
Զավեալ է այս բուրդը բերված ...

Ողջ աշխարհն ու արևը հզոր
Նույնպես մեծ մի գզրոց են ապատ ու համայն
Ժամանակն է վարպետը նրանց — մեծ գզրար ահավոր,
Որ գզում է անխախտ անց ու դարձը հզոր բնության...
Նա է, որ միշտ գզում է, զատում իրարից
Լուսավոր անհուն ծերք և օվանք ապատից —
Իսկ երկիրը, լուսին և աստղեր
Երկնաչին, հաղթական, այդ գզրոցն է ծնել...
— Ահա մեր վեհ. չարին,
Ահա մեր սուրբ անեզ.
Ձա՞րկ ընկեր սրատգին,
Գզենք.կյանքը ահեղ...
Ե՛կ, գզենք բուրդը մութ, լեռնացած.
Ու գիզենք ծերքը ջոկ, օվանք ջոկ,
Կուտակենք ու գիզենք մենք այստե՛ղ լուսնի մոտ...
Բնության գզրարից,— որ ահեղ ժամանակն է կարգված,
Առավել փառահեղ մենք կարող ենք գզել կյանքի բուրդը
ապատ...
Շո՛ւտ արա. այ, էսպես, ծերքը ջոկ, օվանք ջոկ.
Ձա՞րկ, ընկեր, աշխարհում չենք ծնված
Որ ապրենք ու սողանք միշտ անզարթ ու անհոգ...

ԿԼԵՅԶԻ

Շուտ արա, ընկեր իմ ատրպիր.
Գրամվիր, սիրտդ բաց.
— Պետք է գործ ու եռանդ անխախիր,
— Աշխատանքն է հոգի և ատամած...
Դե՛հ, վեր կաց, փուքդ բեր,
Շուտ վառենք մեր քուրան երկնային.
Մենք երբեք չենք մնա անտարբեր
Հաղթական հոգևոր նոր կյանքին...
Բեր, վառենք սիրտ ու ջանք,
Եկ, լարենք աշխատանք.
— Տիեզերքին նոր արև,
Մարդկության ազատ կյանք
Հորինենք հարատև...

Դու, լուսին, քո մատին
Շատ հաճախ են խոսում —
Երազներ ու հեքիաթ.
— Ի՞նչ ես միշտ թափառում
Լուսնկոտվդ արծաթ...
— Զանգվածի են, անշատ գանգատին
Քո գնացքը անփույթ, քո ուղին...
Մեզ ահա աշխատանքն է կանչում.
Մեր ուղին՝ մեր սրտին
Նոր գարուն ու հույսեր է հնչում,

Կախարդված մեր հոգին
Նոր կյանքի է տենչում...

— Տե՛ս, այստեղ մի կողմից
Մեր ծանոթ հին գրքերն է գալիս,
Եվ շարժում քաջաբար իր շարքին.
Մյուս կողմից՝ պատին կից
Իր մեծ փուքրն է փչում
Մեր ծանոթ քաջ դարբին...
— Ահա, նա բորբոքում է թուրն
Եվ սարքում իր կռանն ու զնգոն,
Որ երկաթն ու պողպատը հալի
Եվ լինի երկնային գոնեին բանալի...

Դե՛հ, սարքենք մեր գալգահը անվախ.
Ճո՛ւտ արա, փուքդ բեր և փչի՛ր.
Բանվորներ ենք ազատ ու խիզախ,
Ինչո՞ւ է, որ մեզ կատեն կլեցի...
— Ա՛յ այստեղ միշտ արբիր,
Հա՛ երգիր ու կանչիր.
— Աշխատանքը մեզնից չի փախչի...
Կուրծքդ լայն բաց արա ու փչիր.
Գործի գիր և շարժիր փուքդ ժիր.
Թող անվերջ բորբոքվի այս ածուխը բնաիր,
Ու անվերջ շողշողան մեր բոցերը կարմիր...
Այս բոցերը կարմիր ու փայլուն
Ինչպես հոգի են հզոր ու ազատված,
Կվառեն, կպատեն մարդկությունն...

— Գիտե՞ս, ուր են տանում
Մեր կռիվն, աշխատանք...
Աշխարհի սկզբից կատարված՝
Անարդար մեր վզին փաթաթված
Սեվ ոճիրն ու հանցանք
Կշիռների միայն նա —
Մեր տոկուն, անխոնջ —

Հայթական աշխատանք...
Ես՞ սա արա. մի լինի անտարբեր.
Բե՛ր, տարբերիր մեր դարպասը գործի.
Տես, ինչքան ամաններ
Ադամով լի, կեղտով լի
Կուտակված են մեր դեմ...
Միայն մեր աշխատանքը վանեմ
Այս ապատա ամաններն ու անոթ
Կմաքրի, կդնի Հաստիրյան...

— Ես՞ սա արա. ես գործի եմ կարում.
Բեր, վառե՛նք մեր կրակն ու քուրան...
Նյութեղեն, հրեղեն ամաններ
Արդ՝ ընկած են մեր դեմ շարեշար.
Զանազան ու անթիվ անոթներ,
Որ սրանք են կարծես կենդանի,
Եվ հոգի հանցավոր ու խավար...
Տե՛ս, շատերը կեղտով են պատած,
Իսկ ամանք՝ ոչխանդակ, վայրենի
Կյանքից դուրս են նետված...
Պետք է, ձեռք ու մկան,
Աշխատանք հայթական,
Որ մաքրենք ամանները ապատա...
Զա՞րկ անվերջ, որ սրբենք սիրտ, հոգի և աման,
Եվ առնենք վերհարար մեր փառքն ու կարում...

ԼՈՒՄ ԵՍ ՄԱՍԻՍ

(Բանվորի երգը)

Ճակատիդ կնճիռ, դեմքիդ ամպեր, լուռ ես Մասիս.
Այդ ի՞նչ մարեր, անհուն խոհեր,
Դաշկանդել են քեզ, Մասի՜ս...
Սեզ լեռները, գաշտ և արտ,
Անտառ, հովիտ կանաչ հագած,
Քեզ են օրհնում՝ կամքիդ կարոտ.
— Դու վի՛շտ ունես, լեռների թաչ...
Դու տեսնում ես և լավ գիտես —
Միրաղ մեծ է, հսկա լերանց,
— Մենք գարդ ունենք, մեզ էլ քեզ պես
Ցավն է մաշում, վիշտ անանց...

Եվ բյուր գարեր իրրև գերի՝
Մեր սիրտը ցավ.
Ծծում ենք սև թանձն աշխարհի՝
Կյանքը ողբում, լույսին ծարավ...
Այս գառնության սև օրերին
Մեր սիրտը պիրկ քար է կարել.
Բռունցքն ու սուր միշտ մեր գլխին —
Մեր ուղեղն է արյան փոխվել...
Այդ մենք միշտ այս լուսնի տակ
Դառը գտանում, կարոտ նստում...
Սովն ու կարիք, վիշտն ու կրակ
Աշխարհը բիրտ մեզ է բերում...
Բանվո՞ր ենք մենք իրավարարկ.

Բայց գարբնոցում աշխատանքի
Կատեղծվի նոր արև կյանքի.—
Լույսի համար մեր սիրտն է տարբ...
Նոր անցյալի անմոռաց վիպա՝
Լուս ես Մասիս.

Սեղ լեռների տերն ես, Արքա՛.
Մեր սև օրը քեզ ենք լալիս...
Մենք գատ ունենք խոր և արդար,
Մենք գարդ ունենք սարի նման.
Այս հարատևությունն ու խիտ խավար
Արդյոք մի օր վերջ կունենա՞ն...
Եթե ճիշտ է — արշալույս կա,
— Մեր հանձարն է այն հարինել.
Մենք ենք հյուսել, ասուված վիպա,
Կյանքին արև, ազատ օրեր...
Դեմքդ մռայլ, հակատդ սև,
Լուս ես Մասիս.

Մենք մեր գատը գտիր ներքև
Քեզ ենք բերում, և ատնջահար
Աշխատանքի արև երգում.—
— Անվերջ կռիվ լույսի համար,
Նոր ասուած ենք մենք հարինում...
Եթերի մեջ՝ գտիր կանգնած՝
Ասաղ ու երկինք՝ հակատիդ պատկ,—
Այս կույր կյանքում միշտ հալածված՝
Գատ ենք ուզում մենք համարձակ...
Դու աշխարհի չարն ու բարին
Միշտ տեսել ես և լավ գիտես.
Քո բարձունքից այդ երկնային
Ճշմարտության պատգամ տուր մեզ...

Քաջդ լերանց՝ երկնապտակ —
Լուս ես Մասիս.
Մեր կրծքի տակ ցավ ու կրակ,

Մեր ցավերը բե՛զ ենք լալիս...
Մեզ դատ տրա արդար ու խոր
Եվ խորհուրդը կյանքի մեկնիր...
Ու դարերի կամքով հզոր
Մեր սև օրին շուտով հասիր...

Ա 28282

ՀԱՅԿ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ
ՏԵՍՈՒԹՅԱՆ
ՏՈՒՆԸՆԴՐՈՒՆ
ԱԿԱԴԵՄԻԱ

ԳՈՐԾԱՐԱՆ

— Հե՜յ հարգար հարգարներ —
Աշխատանք-արևի հերոսներ.
Ձեզ կանչում են հեռվից փարոսներ.
Բայց արեք գործարանը ահեղ.
Որ իր լույսը ամուր ամեն տեղ...
Թող շարժվի գործարանը կյանքի ու մարի
Ու կանգնի սուրբ տաճար ճշմարտի, գեղեցկի...

Բյուր դարեր են անցել այն օրից,
Երբ շարիքը ծնվեց աշխարհում.
Եվ երբ վեհ գործարանը ծնվեց իր մարից,
Որ իր սուրբ ջանքերովն անդադրում
Կյանքի վիշտը խորտակի...

Բյուր դարեր է, գործել նա արի
Եվ նյութել մեր կյանքին արևներ ու դարուն,—
— Գործարանը մարի, փրկության ալեկոծի —
Հավիտյան կդարձի ճշմարիտը անհուն...

— Հե՜յ հարգար-հարգարներ —
Ձեր ալեկոծը հարենոց

Հշմարտի ուղիներ որոնող՝
Աշխատանք — արևի հերոսներ...
Շուտ եկե՛ք ու բերեք փայտ ու կիր,
Քարածուխ, հումքն ասա՞ս, անխոսիր,
Քար, արճիճ ու երկաթ,
Ե՛վ պղինձ անապատ, և՛ պողպատ,
Շուտ բերեք ու լցրեք գործարանն,
Հոգու պես լուսավոր ձուլարանը, բուրան...

— Բրա՞խ, թա՞խ, թրա՞խ... շախ, շուխ հա՛ շախ...
Քաջ բանվոր, զսպանակը բանիր,
Մեծ անիվն ու շարժիչը շարժիր աջ ու ձախ...
Կայծակի պես հզոր խթանները նետիր,
Միշտ մարդի պես արագ, համարձակ
Տար ու բեր այդ հզոր պատակն...
Թող անթիվ կոճակները շարժվեն...
Եվ թոխմախն ու թոխիշ,
Գելարանն ու գերոց և մամլակն ու պրկոց
Զուլարանն ու սանակն և կարիշ
Թող շարժվեն, կայծակի պես հզոր գալարվեն...
Բյուրավոր մասնիկներ աջ ու ձախ
Թող պարեն, հեծկլտան անխարդախ...
— Մի՛ կանգնիր դու, ուստա, ժիր վարպետ.
Սատակացի՛ր վեհ շարժում պողպատի ու մարի...
Շուտ հալե՛ք ու ձուլեք հումքն ու ցամ և աղետ
Ու կանգնեք նոր գարուն ամենքիի...
Թող նորա կրակված մեռուցի սուրբ գանգված,
— Միայն նա կատեգծի ձեզ մարի նոր ասված...
— Երազո՞ւն և անհուն ամենքիի
Լուսերամբ հզի հաղթական գործարան.
Թող անմահ գալարվեն անիվներդ մարի
Եվ նյութեն նո՞ր աշխարհ բերկրության...
— Բրա՞խ, թախ, թրա՞խ, շախ, շուխ, հա՞ շախ...
Բանվորնե՛ր, գարկեցեք միշտ անվախ,
Որ մարի գործարանը քաղցած չմնա —
Եվ ձեզ նո՞ր արևներ ստեղծի անխոնա...

Դո՛ւ, բանվոր ու վարպետ,— մի՛ կանգնիր.
Բաշաբար ու անհաղթ քո ջանքերը լարիր...
Շուտ եկեք և անտառն ու ծովերը արեք տեղահան,
Սև ժայռերն ու լեռները պոկեք արմատից.
Վերո՛ւ առեք ուժն ու շունչը հողմից,
Ճառագայթը և լույսն արևից —
— Վերո՛ւ առեք ու լեցրեք գործարանն,
Որ երկրի երեսին
Նա գործի անմեկին—
Մեր գնացքը դեպ վեր, դեպ երկինքը տանի.
Բնությանն, աստղերին մեզ անմահ տեր անի...
— Ի՞նչ ես զուր դալարվում, ա՛յ երկիր,
Ու շրջում միշտ անհայտ ուղիներ.
Դու, լուսին, մեր երկրի երեսին
Ի՞նչ ես զուր քո ճանճրույթը ցանում...
Արևներ ու աստղեր անհամար —
— Նա քաշվեք, բաց արեք մեր ուղին, խաբարդա՞ր...
Մեծ մարդի գործարանն է գալիս,
Ձեր գնացքը նա կարող է շեղել.
Եվ լույսով ողջ աշխարհն հեղեղել...
— Ե՛լ, վարպետ, հաղթական քո ձեռքով
Մեր զանգերը քաշիր,
Կյանքի երգը հնչիր...
Արևին, աստղերին անխռով
Հրեղեն մեր գնացքը հայտնիր...
Ե՛լ, վարպետ, պողպատից կրակված
Մեր զանգերը քաշիր ահավոր.
Թող աստղերը լսեն ճշմարիտը հզոր,
Որ մեր միտքը նյութից հորինում է աստված...
Ձեր կրակն հավիտյան թող վառվի
Ու կանչի բնությունը կռվի...
Թող բոցերը կարմիր ու կապույտ
Երկնքին միշտ նեռեն մարդի լույսն ու պայծա՞ռությի...
— Անխափան գործարան նոր կյանքի,
Մեծ արդանդ լույսերի, հանճարի՞,
Միշտ հաղար հազարներին,

Քաջարի բանվորներն
Քո շնչով են շնչում.
Քո հանճարն են կանչում,
Քո փուքսերն են փչում,
Որ վառեն և այրեն կյանքի սուտն ու չարիք,
Եվ նյութեն նոր աշխարհ, նոր արև ու բարիք...
— Զարկեցեք բանվորներ ժրաջան
Ու վառեք Հշմարտի գործարանն...
Քաջ վարպետ. Հավիտյան քո գանդերը քաշիր,
Ասուղերին, արևին նոր կյանքի դու կանչիր...
— Հե՜յ Հայաստ-Հայաստներ,
Աշխատանք — արևի Հերոսներ,
Ձեզ կանչում են Հեռվից փարոսներ...

ԳՈՐԾԱՐԱՆԻ ՄՈՏ

(Տեսարան)

(Անհայտ ձայն, հեռվից)

Շրջում է միշտ երկիրը ճիշտ անխափան —
Ժամանակի, տարածության ծովի մեջ.
Եվ նախորդող նորա ճամբին անքաժան
Չկա պայման, չկա սահման, չկա վերջ...
Նրա մեջքին, նրա կրծքին անասրբեր
Բուն են դրել մահն ու կյանքը վասվասան.
— Ի՞նչ է ուզում մարդը անել ինքնասեր՝
Հավերժության գործի դիմաց վեհագույն...
Դուք, մարդկության մշակներդ քաջարի,
Ի՞նչ եք անում, ի՞նչ եք արել մինչ այսօր:
Անմահական շենքերի մեջ աշխարհի
— Ինչ կարող է մարդը անել փոսավոր...

ՎԱՐՊԵՏ (առաջ գալով դեպի ձայնը):
Արարչական գահի հանդեպ և անվախ՝
Տիեզերքի մեծ իրադարձում վեհարար՝
Մարդը հոգի է հարինող և անկախ,
Որ ծնում է անմահական նոր աշխարհ...
Իմ ձեռքի՝ տակ դարեր ի վեր և հզոր
Աշխատում է մարդի անվախ գործարան:
Արարչության նոր կարգ ու սարք բաստավոր
Նա կերտում է օր ու դիշեր անդադար...

Մեր հոգևոր գործարանի շենքի մեջ
Միաբը փոխում է տիեզերքը ծերացած՝—
Ժամանակի, տարածության ելևէջն.
Նա հորինում է նոր երկինք, նոր աստված...
— Ահա անթիվ բանվորներս ժիր ու քաջ՝
Ճիշտ կպատմեն մարդի անմահ գործերից.—
Ի՞նչ է անում մարդու հոգին բազմատանջ,
Ո՞ւր է տանում նրա ուղին բերկրալից...

ԼՈՒՍԱԼԱՐ:

Ամենից շատ մեզի պետք է լույսը պայծառ արևի.
Նրա մեջ են կյանք որոնում մարդ և դալան վայրենի,
Ծովն ու ցամաք, անտառ ու բույս, կամ աճումը տերևի.
Առանց լույսի երթը կյանքի վայրկենաբար կկանգնի:
Հզոր և քաջ իմ նախնիքը՝ երկունքի մեջ դարավոր
Նոր լույս դատն երկրի համար՝ արևներին մրցակից.
— Ահա հզոր այդ լույսը մեր թև է տալիս մեզ այսօր՝
Որ արշավենք դեպի վերև՝ նոր դարունքին մատնակից.
Եվ արևի, աստղերի դեմ մենք վառում ենք նոր լույսեր,
— Մեր լույսերն են կիրթ ու կերտող, նուրբ ու ճկուն
և կարող:
Լույս մարերից նավ կկերտենք, որ կճախրի դեպի վեր,—
— Զուր չեն ասում մեզ էն պլխից՝ նոր արևներ ստեղծող...

ՀՆՈՅԱՊԱՆ:

Անուշադիր է բնության ճարտարապետը հանճար,
Դեպի կարիքը տանջահար մեր կյանքի.
— Ի՞նչ է հզոր ջերմն ու կրակը՝ պիտանի մեզ համար,
Նա կուտակել հեռու, օտար աստղերի մեջ երկնքի...
Չէ՞ որ աշխարհը չի կարող այդ հեռավոր պահեստից
Ջերմ ստանալ, կամ թե կրակ՝ համաձայն իր կարիքին՝
Կամ գործ անել, վեր ընթանալ, իր ցավերին կարեկից...
Այս ծրագիրը աշխարհի համար չէ մեզ բնավին...
— Ժամանակի, տարածության սահմանագիրը անսիրտ

Վարում է իր գործերը դուր, օտարոտի մեկ համար...
Իսկ իրադարձ տիեզերքի անխուսափ է և կոպիտ,
— Նա չի հոգում կարիքները մեր բանական ու արդար...
Մեր ցավերի հետևն ընկած, մտքերի ժիր թևի տակ —
Մենք մեզ համար հորինել ենք նոր ջերմություն ու կրակ...
Եվ կրակը մեր ձեռքի տակ՝ հլու է միշտ մեր կամքին.
— Նոր կրակով մենք կհասնենք արարչության ակունքին...

ԴԱՐԲԻՆ:

Կրակը լի՝ հնոցում,
Ավյունը լի՝ մեր ծոցում՝—
— Սիրտ ենք զոդում և ասեղած,
— Մերն է կյանքը՝ նոր ծնված...
Կռանը հարթ մեր ձեռքին,
Հարվածում ենք գնդանին,
Որ հորինենք նոր սրե,—
Եվ նոր գարուն հարատև...
Կայծակի պես հաղթարար
Զենքեր ունենք ու հանճար,
Որ երկաթից, պողպատից
Միտք է ծնում ոգելից...
Արարչի հետ մրցակից՝
Միտքն է հոսում կրակից...
— Դարբնոցը մեր անխափան
Նոր կյանք կտա մարդկության...

ՋՈՒՀԱԿ:

Գործեր ունենք համարձակ
Եվ շարժում ենք ճախարակ.
Մեր գործվածքը նուրբ ու խաս,
Մենք գործում ենք միշտ ասլաս,
Որ բնությունը հագնի
Մեր գործվածքը անվանի...

ԳԵՐԶԱԿ:

Թել ու ասեղ մեր ձեռին,
Արդուկը տաք մեր առաջ.
— Կտորներ են թանկագին
Բռնված հիմա մեր դիմաց...
Տիեզերքի մեջ անսահման
Առանց շարի, հաղուստի
Չկա ոչինչ, ոչ մի բան,—
— Շոր ենք ձևում Աշխարհի...
Աշխարհը ողջ նյութական՝
Լույսն արևի, աստղերի՝
Շոր են միայն իսկությամբ,
— Շորն է ծածկը իրերի...
Մարմինը իսկ հագածին
Մի հագուստ է անցավոր.
Եվ նրա մեջ մեր հոգին
Կյանք է վարում գրավոր...
Մատնոցը խոր մեր մատին,
Ասեղն ու թել մեր ձեռին
Արդուկը տաք մեր դիմաց,
— Շոր ենք կարում անդադար.
Որ մեր կարածը արդար
Կյանքին բերի նոր ատված...

(Բոլորը միասին):

Աշխատանքի լույսի տակ
Մենք գնում ենք մեր ուղին.
Կայծակի պես համարձակ
Հարթում ենք նոր հողին:
Մեր սրտերում նոր հանճար,
Մեր ձեռքերը պողպատից,
Մեր սրտերի կրակից
Ստեղծում ենք նո՛ր աշխարհ:

(Անհայտ ձայներ հեռվից)։

Փորձն է մարդու անմահական, միտք հարուցող հնոցում,
Գործն է մարդու հավերժական՝ կրակ ու հուր դարբնոցում.
Թող միշտ արի միտքը բարի ժիր ճրագները վառի,
Թող քաջարի ջանքն հանճարի կուրծքը ճեղքի երկնային.
— Մարդը մի օր հասնելու է խոր իմաստին աշխարհի
Մարդը հզոր դառնալու է ասուած ու ան՞ր սիեղերքի՞ն...

ԵՐԳ ԵՐԳՈՑ

* * *

Այս աշխարհում կյանքս մի լույս դրամ էր.
Իսկ սրտիս հուր ճանապարհը անհա՞ս էր...
Տանջանքը միշտ, դարուն ու վիշտ շուտ անցան,
— Կյանքս ավա՞ղ, մի անհնչուն անապ էր...

Միտքս մի օր նավ էր հզոր հավերժության ծովի մեջ.
Սիրտս ուներ բյուր այդիներ՝ միշտ աննման ու անվերջ.
Դիրքս մոլոր և անցավոր ձախորդության ծովի մեջ,
— Կյանքս մի լի, անմեկնելի երա՞գ էր...

Քունս կանցնի, տունս կընկնի հավերժության սահմանում.
Մտքիս նավը կմոռանա կիրք ու կռիվ, մաքառում.
Սրտիս ցավը կվերանա մոռացության խորանում,
— Ինչո՞ւ, յարար, կյանքս մոլի դարհուրելի անապ էր...

ԻՄ ԿՅԱՆՔԸ

Հեքիաթի պես օրս վառվեց ու անցավ.
Ողջ աշխարհը սրտիս համար ցավ դարձավ.
Լոկ մի վայրկյան փայլից ունայն իմ ուղին,
— Հավերժության ծովը կիսով նավ դարձավ...

Ինձնից առաջ՝ հավերժությունն անպակաս,
Ինձնից հետո նա կլինի հանապազ...
Երկու անվերջ սահման ունի իմ ուղին,
Երկու կողմից հավերժությունն է անհաս
Անդրդվելի սահման դրել իմ ճամբին...
— Կյանքս իզուր անցավ, ասես մի երազ...

ՄԻՏՔ ՈՒ ԵՐԱԶ

Դուրս եմ գալիս իմ պարտեզ,—
— Բյուր աննման ծաղիկներ.
Երազների հուր հանդես,—
— Ո՞վ է վառել իմ լույսերն...
Ծաղիկները աննման
Լուռ նայում են արևին.
Երազներս դյութական,
— Ձեզ ո՞վ ցանեց սև հողին...

Ման եմ գալիս ծովափին,
— Մրրիկներն են շառաչում.
Իսկ ջրերը կայծակին
Անվախ կռվի են կոչում...
— Ո՞վ էր բռնեց իմ սրտից
Մրրիկները սհարկու.
Ո՞վ էր հանձնեց երկնքին
Կայծակները իմ հոգու...

Ո՞Վ Է ԽՈՍՈՒՄ ՄԹԻ ՄԵՋ

Ո՞վ է խոսում մթի մեջ,
Խոսքեր ասում ինձ անվերջ.
— Լռեա՛ զիշերին իր հաշերին
Միայն է շաղում երկնից։

Ո՞վ է վառել սրտիս մեջ
Ճրագները միշտ անշեջ.
— Ծաղիկներով զարդարված
Հարսանիք կա սրտիս մեջ...

Ե՞րբ է ասավածն աներև
Զարկել իմ մեջ իր վրան.
— Ի՞նչ են կապել Հարսանի
Կանաչ, կարմիր ծիածան...

Ո՞վ է յարաբ, սևավոր
Ագում արտում սրտիս մեջ...
— Մահն է իրուր ամեն օր
Բաղում անում սրտիս մեջ...

Գալարում են ինձ անվերջ
Հար հարսանիք, կռիվ ու զարթ,
Եվ մահ, և լույս սրտիս մեջ.
— Երա՞գ է սա, թե՞ ցնորք...

* * *

Կյանքի լույսով լեփ-լեցուն է իմ հոգին,
Անմահության բարձր տուն է իմ հոգին.
Քանի կուզե փորձանքն ու վիշտ մեզ մաշեն,
— Կյանքն ու աշխարհ իր մեջ ունի իմ հոգին:

Երկնքի լույս և աստղերի սուրբ լեզուն,
Ծաղիկ ու բույս, սեր ու արև, նուրբ գարուն,
Օր ու գիշեր, փառք և հուշեր, մահ-արյուն —
— Հավերժաբար իր մեջ ունի իմ հոգին...

Դրսի կյանքում թող միշտ գործի հրճվանքը սուտ, անխնա
Եվ նյութական խենթ աշխարհը իր արարքով արբենա.
Քանի կուզե կյանքը անմիտ խաղ դառնա...
— Այս աշխարհի միակ տերը նա է,— արթուն իմ հոգին ..

* * *

Արևներին և աստղերին միշտ կանչում է իմ հոգին...
Հավերժության զանգերի պես զողանջում է իմ հոգին...
Ոչ ոք չասի, հասկանում է այս աշխարհի վերուդիր;
— Տիեզերական շարժումները ներշնչում է իմ հոգին...
Երազումս ես տեսնում եմ մեր էության անհաս և խակ մի
բնույթ,
Իսկը այնպես, ինչպես որ կա, և ոչ խարող երևույթ.

522—3

— Ինչ որ տեսար և ապրեցիր, անցավոր է, դո՞ւր և սա՞տ
Բնության ողջ անցուդարձը ներշնչում է իմ հոգին...
Ինձ կանչում են անհայտ աշխարհ, ուր չի հասում ժամանակը
երերուն.
Այնտեղ չկան տարածության ձևերը սուտ և դժդուն.
— Անդրաշխարհի կարոտն է սուրբ սիրտս լցնում միշտ
անհան.
— Հոգեպատակ աշխարհների ժպիտներով ճանաչվում է իմ
հոգին...
Աշխարհը սուտ. նորա ունայն իրագործը երևույթ.
Ինչ որ տեսար և ապրեցիր, երազի պես շտապով կանցնի, դուր.
անփույթ.
Լսիր միայն սրտիդ ներքին ասավածների կանչերին,—
— Հավերժության զանգերի պես զողանջում է իմ հոգին...

* * *

Քանի կուզե վայրենաբար թող ինձ սանջի իմ ցավը.
Խեղճ իմ ուղին թշնամաբար թող հալածի սև դավը.
Փորձանքն ու վիշտ, մրրիկը միշտ թող գալարվեն իմ գլխին.
— Կովի դաշտում ոչ մի դեպքում չի նահանջի իմ նավը...
Մի անգամ եմ միայն ծնվել ես իմ մորից.
Երբ մայրս մտնի իմ արևը, էլ ետ չեմ դա ես նորից.
Էլ ինչո՞ւ զուր ես սարսափեմ այս աշխարհի ժխորից,
— Կյանքի կռվում ոչ մի դեպքում չի նահանջի իմ նավը...

Քանի անհուն խորհուրդ անեն աստղերը խոր երկնքում,
Քանի գարուն, սեր ու ծաղիկ նոր կյանք շողան իմ սրտում.
Քանի միաքս արևի պես լուսավորի բարձունքում —
— Կովի դաշտում երբեք, բնավ չի նահանջի իմ նավը...

* * *

Կայծակը ինձ հետ՝
Անհունը հոգիս —
Աստղերը պսակ
Ազատ ճակատիս՝

— Կյանքիս կապանքը
Փշրեմ ու երթամ
Կայծակը ինձ թև
Երկինք սլանամ...

Իմ երգն է զոդանջ
Անհունի հզոր.
Աստված դառնալու
Կիրքն իմ ահավոր...

Հեռու երկնքում
Մաքերս ցրիմ.
— Աստղերի ցանցում
Նոր կուռք որոնիմ...

ՄԻՏՔԸ

Տխուր և լուռ՝
Աչքերդ խուսափ,
Մարերդ հուր
Միշտ ալեծուփ.

Ինչպես ալիք
Հուզվում են հար.
Ինչպես մրրիկ
Շաչում համառ...

Ո՞ր ծովերի
Ալիքն է այդ.
Ո՞ր աշխարհի
Զորքն է անհայտ...

Կամ ե՞րբ և ո՞վ
Ի՞նչ արարքով —
Մրրիկն անշեջ
Թաղեց իմ մեջ...

* * *

Լուռ գնում եմ իմ ճամբեն —
Անհայտ ու մութ իմ ճամբեն.
— Ի՞նչ պիտ ասեն իմ մասին
Երբ վերջանա իմ ճամբեն:

Աստղերն էլի կշողան,
Արևն էլի կփայլի.
Ծառ ու ծաղիկ կմնան,
— Կվերանա իմ ճամբեն...

Ի՞նչ կարող եմ, որ տանեմ
Վայելքներից աշխարհի...
Իմ մուրադին կհասնե՞մ,
Երբ վերջանա իմ ճամբեն...

— Թշնամիներ, յաղ ու ծանոթ,
Եկեք, սիրաս ձեզ բանամ...
Դեթ չմնամ ձեզ կարոտ,
Երբ վերջանա իմ ճամբեն...

* * *

Ամպ ու զամպ է իմ շուրջ կողմ,
Լույս ու արև քողարկված.
— Ո՞վ է կանչում.

— Հողմն է փչում,
Խենթ ու խավար, անմիտ հողմ...

Ամպ ու դամպ է իմ հոգին,
Միրտ լույսերն հալածված...
Ո՞վ է ճչում.
— Ո՞ւր է կանչում
Անհայտ ուղին դառնագին...

Ամպ ու դամպ է իմ շորս կողմ.
Չկան խորհուրդ և ասուված...
Ո՞ւմ սերն է զուր
Ողբում տխուր
Օր ու գիշեր անդութ հողմն...

* * *

Գարուն է վառ և մայիս,
Ասողներն ելա՞ն երկնքիս։
Կարոտն առե՞ք արևից,
— Ի՞նչ եք նստել ու լալիս...

Կանաչ կարմիր ես, ալայծառ,
Կայտառ ու ժիր ես, արդար...
— Մեզ չես թողնի սպալից,
Մեր ասուվածն ես ու հանճար...

Երկինքն է քեզ թև տվել,
Որ կյանք շողաս, լույս ու սեր.
— Անդրաշխարհից, եթերից
Մեր սրտերին ողջո՞ւյն բեր...

Բարով գարուն ու մայիս.
Սեր կշողաս ասողերիս.
— Չէ՞ որ միայն եթերից —
Արևներից ես գալիս.

* * *

Ճախրում հեռուն, ծովը անհուն —
Նավակիս մեջ համարձակ.
Միտքս ինձ հետ, սիրտս դարուն՝
Վերև երկինք կապուտակ...

Նավս հեռու ինձ կտանի —
Ցավի հզոր պայթարում...
Միտքս երկինք ինձ կհանի,
Հոգիս մենակ մնած կռվում...

Պողպատի պես ձեռքեր ունիմ,
Կայծակն ու շանթ սրտիս մեջ...
— Տա՜ր ինձ նավակ հավատարիմ —
Դեպ հեռուները անվերջ...

Աշխարհը լայն, արևն անմեռ,
Տիեզերքն է ինձ ողջունում.
— Հավերժությունն ու նուրբ եթեր
Նայում են ինձ ու ժպտում...

ԻՆՁ ԱՐԵՎՆ ԷՐ ԿԱՆՉՈՒՄ

Գյուղի մեջ հասարակ մի տնակ —
Անպաճույճ կացության մի անկյուն.
— Ես ծնվել եմ հեռու ու մենակ
Եվ սնվել արևով կախարդուն...
Բնության լույսերին միշտ կարոտ՝
Դեպի վեր էր ձգտում իմ հոգին...
— Ինձ միշտ խորթ էր ծանոթ, անծանոթ,
Ես լսում էի միշտ աստղերին.—
Ձոխ լեզուն անվախճան տիեզերքի
Ես լսում էի միշտ ու միայն
Երգի մեջն հողմերի, ալիքի,
Ցոլքի մեջ արևի ու դարնան...
— Ո՞վ կարող էր մեկնել անհայտի
Խորհուրդները հզոր ու անհաս,
Որոնել մութը ուղին ճշմարտի,
— Եթե ոչ մեղմ աղոթքն ու երազ...
Ես մանուկ հասակից անդադար
Աղոթում էի միշտ աստղերին,
Աղոթում էի ճիշտ, մեղմաբար
Բույսերին, լույսերին, արևին..
— Աղոթում էի խոր, որ մի օր
Իր խորհուրդը աշխարհն ինձ խոսի...
Որ կայծակը, մրրիկն ահավոր
Իրերի իսկությունն ինձ ասի...

Եվ արևը վաղուց է անվերջ ինձ կանչում.
Հորդ աղբյուրը, բամին ու անտառ
Բնության սուրբ խորհուրդն են հնչում,
Իսկ աստղերը սաղմոս են ասում ինձ համար...
Շատ վաղուց է վսեմ աստղերի շողքի մեջ
Ես կարդում եմ իմ ուխտը, գարուն.
— Եթերում, արևի լույսի մեջ
Ինձ կանչում է խորհուրդը անհուն...

ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ

Մոռացա իմ օրերը անհաշտ
Եվ անցա դեպի վեր, դեպի դաշտ.
Հարց արի ես քարին ու սարին —
Միշտ հեռու և օտար ասողերին.
— Ասեք, ո՞ւր է, ավա՜ղ, իմ երազը փայլուն,
Իմ աղատը անհուն ու զարուն...
Եվ նա՝ ժիր, երկնածիր իմ ասաված —
Իր մասին սրտապին այս երգերը ասաց...

— Ես շղարշ ամպերի ծովերից
Ձեփյուռներ եմ հյուսում.
Մրմնջուն ալիքի լաղուրից
Շիթ ու շող եմ կորզում,
Որ շոյեմ սիրասուն ալվարդին
Ու հնչեմ եղեմի մեղեդին...
Իսկ երբ լուռ են դաշտերը, արտ, արտոր դժվեմ,
Եվ անտառն է ախուր սասավում.
Արևի լույսն ու սերը վառեմ
Շատ հաճախ այս երկրին եմ բերում,
Ուր ծաղկում է զարուն կախարդուն, .
Ու վառվում են հույսերը անհուն...

Երբ լուսինը թախծոտ ու խոկուն
Ցնորքներ է ցանում դյութական.

Եվ լսում է համայն բնությանն
Զառանցումը նրա կուսական...
Երբ ալիքն է խառում՝ հար հուզված.
Ցավը երգ է տալիս, հոգմը հարց է տալիս.
Երբ լեռներն են տխուր ադոթում՝
Միշտ անհայտ խորհրդով համակված...
— Այդ ամենը իմ խոր, հին կարոտն են լալիս:

Երբ հեռուն, լեռների կատարին —
Երկնքի խոր, հզոր եթերում
Միշտ ալծիվն է ճախրում քաջարի —
— Այն իմ սերն է անմահ ու արի,
Որ թևեր է տալիս միշտ նրան
Սավառնել հազիվ, հպարտ ու միայն
Ու ցրել եթերում իմ մտքերն ու զեղում...
Երբ ամպերն են հուզված, խճճուն,
Եվ զորքերը նրանց սևաթույր
Ճանրանում, կաշկանդում են աշխարհ,
Ու նետում կայծակներ, և կրակ ու որոտ,
Իսկ երկինքը՝ ասես կատաղած՝
Ջեռին շանթ, հրազենք ահավոր,
Պայքարի է կանչում բնությունն...
— Ես եմ այն,— իմ տենչանքն ու կարոտ,—
Որ եռանդ ու զայրույթ եմ տալիս աշխարհին
— Մրրիկներ է ծնում երկնահաս իմ հոգին...

Երբ խոհուն երկնքի անդունդից
Ձեզ արևը նոր կյանք է շողում.
Երբ քարվանը անհուն ասաղների
Ուխտավոր իր ճամբին անհատանում
Ճոխ երգ է ցանում ու գնում...
Ես եմ այն,— բովանդակ աշխարհի
Ճշմարիտ իսկությունն ու հոգի...
Այն իմ շողքն է, ժպիտն հարազատ
Վեհարար արշալույսը փնջել.

Այն իմ գեսքն է, իմ լույսը ապառ
Արեւին տեր ու կյանք նեբշնչել...
— Խոհուն մարդ, կյանքի տեր, իմաստուն.
Եկ. ասեմ իմ գաղտնիքը, խորհուրդը անհուն.
— Ես եմ միտքը հզոր. ես հոգի եմ անմահ,
Իսկ արեւն ու երկիրը իմ շենքն են, իմ գահ...

ՃԱԽԱՊԱԿ

Մանիր, մանիր իմ ճախարակ
ժիր ժամանակ.
Զաբ և բարու մալանշներից
Մանիր գարեր, և օր, և կյանք.
Կենսակծիկ սև գարերից
Մանիր անցյալն — մահացուցակ...
Ականջներդ թույն եմ ածել,
Որ միշտ շարժվես ու միշտ մանես.
Անեծքն է քեզ աշխարհ բերել,
— Մահ ու տանջանք որ միշտ ծնես...

Անիվ ունիս կայծակաթև,
Ճաղեր ունիս, շանթեն լիսեռ.
Առնակ ունիս կեղծիք ու սև,
— Ունես հրեղեն խայթոց, բևեռ...
Անհոգաս ուժեր քեզ դեկավար,
Տիեզերքը ողջ քեզ օթևան —
Պտտվում ես անհագ, համառ,
Ծնում շարժում տիեզերական...
Մանի՛ր, մանի՛ր իմ ճախարակ,
ժիր ժամանակ,
Մանիր ցավեր հատատ ու բարակ...

Քաջ են մարդիկ. կուզեն մոքով
Կյանքին իմաստ ու սեր, գտնել.

Կուզեն երկինք հասնել հոգով,
— Ճշմարտության գահին տիրել...
Զուր ջանքեր են. լալկան ուռին
Իր ճյուղերը առմիշտ թեքված
Անկարող է շիտակել կրկին...
Խղճուկ մարդիկ տենչով լեցված՝
Զուր մտքերի երկունքի մեջ
Անկարող են ինձ ըմբռնել.
Մանի՜ր, մանի՜ր իմ ճախարակ,
Խոր ժամանակ.—
Քուրա-քուրա մանած ու թել,
Կյանքի համար մանիր ցավեր դժբնդակ...

Դեռ առաջի կյանքի օրից
Մարդը ուզեց ինձ ըմբռնել,
Թեզ նյութեցի շար ուժերից —
— Մարի գործը խառնանել...
Եվ այն օրից արագ, համառ
Դու մանածից մարդու համար
Հորինում ես կեղծիք ու սեր...
Քո հորինած կեղծիքի մեջ
Մարդն է սողում գարեր ի վեր.
Քանի դեռ կան մահ և ավեր,
Նա կատնջվի զուր և անվերջ...
Մանիր, մանիր իմ ճախարակ
Ժիր ժամանակ.
Մանիր գժոխք, ցավ ու կրակ...

Միջուկդ լի արյուն ու թույն,
— Պատավում ես դու կույր կամքով.
Դու ես մանել ձմեռ, գարուն,
Արև, երկինքն իր հյուսվածքով,
Անմտության շունչը քո մեջ,
Թեզ տվել են շանթեր թեռեր,
Որ կյանք ու մահ մանես անվերջ —
Եվ մանածիդ քուրանելուց

Զախորդության հյուսես թելեր...
— Կծիկ արա սև մանուծից,
Ելիդ վրա փաթաթիր,
Նավար ու ցավ կյանքին նյութիր...
Թող սլանա միտքը դեպ վեր,
Թող գալարվի և զուր խոկա.
— Զուր են ջանքեր ճշմարտության
Լույսից նորան բաժին չկա...
Կայծակի պես դու թափ ունես
Դեռ շուտ շարժվիր իմ ճախարակ,
ծիր ժամանակ.

Անելիքդ դու լավ դիտես
Մանիր կեղծիք հատու ու բարակ...

Անմիտ մարդիկ. խեղճ ու կրակ
Միշտ ապրում են սուության մեջ.
Միշտ հորինում երազ անհաղ,
Ձիրք ու ձգտում, վայելք անվերջ...
Ազատության ու ճորտության
Տրված անմիտ դաղափարին՝
Բարավորներ սին աշխարհի
Եվ ժողովուրդներ մերկ ու թշվառ
Կռիվներ են մղում համառ —
Զուր կռիվներ անմիտ փառքի...
Բայց ամեն ինչ, փառք ու պարծանք,
Անուշչ և իղձ, զարդ ու գարուն,
Ազատությունն ու սև կապանք
— Խորտակում ես, դարձնում աճյուն...
— Մանիր մանիր իմ ճախարակ,
խոր ժամանակ.

Լիսեռներդ պատիր.
Մանիր դժոխք, մահ ու կրակ.
Մարդու սրտին փաթաթիր...

Անմիտ մարդիկ, խեղճ ու կրակ
Միշտ ապրում են սուության մեջ.

Միշտ հարինում երաշ անհաշ,
Ջիրք ու ձգում, վայելք անվերջ...
Աղատության, բարիության
Տրված անմիտ գաղափարին,
Թագավորներ սին աշխարհի —
Եվ ժողովուրդ մերկ ու թշվառ
Կռիվներ են մղում համառ —
Զուր կռիվներ անմիտ փառքի...
Բայց ամեն ինչ. փառք ու պարծանք,
Անուրջ և իզձ, զարդ ու դարուն,
Աղատությունն ու ժանտ կապանք —
— Խորտակում ես, դարձնում աճյուն
Մանի՞ր, մանի՞ր իմ ճոխարակ
Խոր ժամանակ.
Լիսեռներդդ պատիր.
Մանի՞ր դժոխք, մահ ու կրակ.
Մարդու սրտին փաթաթիր...

* * *

Շատ է երկար այս ճանապարհը կյանքիս,
— Մեկ է ծնունդը իրերի բնության.
Ահա՝ կծիկը բյուրավոր օրերիս,
Եվ նրա մեջ աշխարհը կա անսահման...

Արևների, ասպերի հետ միասին
Հավիտյանս եղել եմ ես երթևեռում.
Հազար անգամ Հարազատին իմ մասին
Հոգս է արել իր անբաժան դնդերում...

Մասունքը իմ, իբրև մի հուր անհատի,
Կյանք է վարել արևի մեջ ջերմապին.
Ես իբրև լույս ճառագայթում թափանցիկ
Շրջել եմ միշտ տիեզերքի մեջ անմեկին...

Արևներից նոր նետեցին ինձ այստեղ.
Երկիրը ինձ նոր հազարդեց գիրք ու ձև.
Տերևներից նոր դուրս եկա ես անմեղ,
— Ինձ դեռ երեկ մայրս ծնեց հեքիաթ...

Եվ երբ աշխարհ նա ինձ բերեց երկանքով,—
Մի ահարեկ ճիչ արձակեց իր սրտից,

Որ ամենքին իմաց անի խնամքով.
Ո՞ւր եմ գալիս, ո՞ւր կգնամ ես նորից...

Օրս կգա, բայց ու ընկերս անգին
Ինձ կտանեն դեպի խոնավ գերեզման...
Լացը վերջին իսկը կասի իմ մասին.
— Ինչո՞ւ եկա, ո՞ւր եմ գնում անդյուման...

Աչքս դրան՝ միայն եմ անում ամեն օր.
Ճանապարհիս չնչին մի մասը այստեղ.
— Իմ մոր ձի՞չը, վերջին լացը անսովոր
Թող ձեզ ասեն անցուդարձը իմ տեղ...

Շա՞տ է երկար ճանապարհը իմ կյանքի.
— Մեկ է ծնունդը աշխարհի անխտիր.
Տիեզերքի մեջ ես՝ անվախճան մի հոգի,
Միշտ եղել եմ, միշտ կլինեմ բնադիր...

* * *

Քո սրտի մեջ կարող ու վեհ մի օրենք.
Տիեզերական օրենքի պես անխորտակ.
Քո մեջ հզոր ամրոցներ կան, բերդ ու զենք,
Որ անում են քո գործերը ներդաշնակ...

Երկնքի պես միշտ հստակաստան և արի,
Դու քնում ես իրադարձը հավերժի.
— Ոչ փոթորիկ, ոչ զորքը սև խավարի
Քեզ բնավին դիրքերիդ մեջ չեն շարժի...

Եթերի բյուր շարժումների միակ տեր՝
Դու ես հակիչը գոյության անաղարտ.
Միայդ հզոր սավառնում է անվեհեր,
— Զո՞ւր չէ, որ միշտ անվանում են քեզի մարդ...

* * *

Տիեզերքի խոր կենտրոնի մեջ ես իմ վրանը դարկեմ.
Ժամանակի ակունքի մոտ կյանքը վանեմ խնկարկեմ.
Այն, ինչ եղավ, կամ ինչ որ կա և ինչ լինի այսուհետ,
Սրտիս խորքում ոսկի ատաղձ ես մի առ մի թելարկեմ...
Տեսնեմ ընթացքը այն օրի, երբ նոր ծագեց կյանքը մեր.
Գտնեմ գնացքը անցքերի, ուր նոր ծնվեց ջանքը մեր.
— Բազմությունները բազմությանց մարքիս թեռվը գրկեմ,
Տեսնեմ, ինչպե՞ս գրուխ եկավ սրտի հարուստ հանքը մեր...
Եվ տիեզերքի հաղար ու բյուր անցքերի մեջը ապրում
Ես իսկապես տեսնեմ կապը աշխարհների ու մարդու.
— Միաքս հասնի իսկ իրերի հավերժական աղբյուրին,
Տեսնեմ, ի՞նչ է հար ու համատ կյանքում գործող ես և դու...

* * *

Ասի, մայրիկ, ասա ինձ համար մի քնար.
— Ես էլ կուզեմ երգ նվագել սիրահար:
Աշխարհը,— տես — երգ է ասում գառնագին,
Ես էլ կուզեմ երգս ասեմ սրբարար:
Ասաց. «Որդյա՛կ, քնարը կա քո սրտում.
Նա երգում է հաղարաձայն ու սրտում:
Զարկ քնարին, որ երկնային երգ ասե,—
Բոլոր ձայները աշխարհի քո սրտում»:
Ասի, քույրիկ, տուր ինձ մի գիրք, որ կարդամ,
Տեսնեմ, ի՞նչ են գարունները այս վարքում.
Ի՞նչ են ասում ասաղ ու արև և լուսին,—
Մարդուն ով է իրար տանջում ամեն ժամ...
Ասաց. «Նրբայր, գիրքն ու հանճար սրտիդ մեջ,
Տիեզերական գրադարանը քո մեջ.
Գիրքն ու գիրը քո սրտից են դուրս գալիս,
Իմաստությունը աշխարհի սրտիդ մեջ»:
Ասի, եղբայր, ե՛կ մի ցույց տուր կյանքը խոր,
Տեսնեմ, ի՞նչ է շուրջս լինում ամեն օր.
Ո՞վ է բերում, ո՞վ է կրում վիշտ ու ցավ.

Ո՞վ է գծել պատկերը այս անտուվար...
Ասաց. «Եղբայր, կյանքը անմար քո սրտում.
Անցուդարձը իսկ իրերի քո սրտում.
— Կյանքի գեսը քո սրտից է գալիս.
Եղած-չեղածը ամբարած քո սրտում»...

* * *

Զանգը զնգում է զանգատան —
Կյանքը կանչում աղջիկի.
— Սիրաս խնկում է Հավիտյան
Եվ խոր տենչում գարունքի:
Ո՞վ է անվերջ զանգը բաշում,
Որ արթնանան խոր քնից.

— Ո՞վ է անվերջ սիրաս տաշում,
Որ ինձ պոկի իմ քնից:
Աշխարհն, ասես, մի զանգատան —
Սիրաս զանգ է նրա մեջ.
Ու զնգում է սիրաս անհան,
Շուրջը նրա ելևէջ...

* * *

Ժամանակի ու գոյության կապն եմ ես,
Աշխարհների միակ հզոր շա՜փն եմ ես.
Կյանքն ու մահը պայքարում են միշտ իմ մեջ,
— Անդրաշխարհի միշտ երազուն ափն եմ ես:..

Ասաղ ու արև հոլովում է միտքը իմ,
Հարդագողին բարևում է ձիրքը իմ.
— Իսկ իրերի երթը միայն սրտիս մեջ,
Գարուններին արևում է դիրքը իմ...

Ես եմ միայն ճիշտ օրենքը սիեղերքին,
Ասավածներ է միշտ հարինում իմ հոգին.

— Սուտ է, չկա մահ ու վախճան կյանքի մեջ,
Ստվերը իսկ հախտանձում են իմ շենքին...

Ժամանակի անբակաբի կապն եմ ես,
Աշխարհների կախարդական շուրն եմ ես.
Կյանքն ու մահը պայքարում են իսկ իմ մեջ.
— Տիեզերական կարգը ես եմ՝ ու հանդես...

* * *

Ինչո՞ւ այսպես ծանր եմ զգում ես ինձի,
Չէ՞ որ իմ մեջ հանքը չկա պղնձի.
Ես մի հոգի՝ լույսերի պես թափանցող,
— Ո՞վ է իմ մեջ թաղել պահնաբ դանձի...
Ցավերի պես խորն է սերը իմ արտում,
Ինձ աշխարհի գաղափարն է միշտ զրկում.
Միտքը գարուն է հորինում իմ բերդում,
— Ինչու այսպես մոնր եմ զգում ես ինձի...
Կյանքում թաղած բոլոր հանքերը իմ մեջ,
Տիեզերական հզոր ջանքերը իմ մեջ,
Ինձ այրում է կյանքի կրակը անվերջ...
— Ասեք, ինչո՞ւ ծանր եմ զգում ես ինձի...

* * *

Բյուր բերքերով պարարտ հողը միշտ հզի՝
Բողբոջում են պտուղները իմ թաղի...
— Ոչ որ չասաց.— ի՞նչ է բանում արտիս մեջ.
Բերքը ես եմ երաշխիքով լի հողի...

Հունձը կգա, բերքը շտապով կհասնի.
Աչքը հազար ծաղ ու ծաղիկ կտեսնի.
Իմ պարտեզում անմահ գարուն կբուսնի,—
— Միշտ պտղաբեր ես այդին եմ այս թաղի...

Աշխարհը լի, արդասավոր մի այգի.
Տիեզերքի մեջ կյանքն է հոսում մի կարգի...
Եղած-չեղածը արդյունք է մի ջանքի,
— Բերքը ես եմ հավերժական այս Բաղի...

* * *

Տիեզերքի մեջ ես ընկերներ շա՜տ ունեմ.
Կրակի մեջ ես իմ սրտի՝ անհուն եմ...
Եթերի մեջ արևի պես միտքս ժիր,
— Ես մի հանդես, աստղերի պես, կանգուն եմ...

Ամեն մի մարդ մի հատարակ տուն ունի.
Մայր հողի մեջ ամեն էակ բուն ունի.
— Բայց իմ տունը ոչ այստեղ է, ոչ այնտեղ.
Ես ապրում եմ տաճարի մեջ Անհունի...

Չեմ հավատում մահ ու կյանքի օրենքին.
Ինձ չեն դյութում գորք ու գենքը ձեր մթին...
— Օրենք չկա, սահման չկա իմ սրտին...
Ես ապրում եմ տաճարի մեջ Անհունի...

* * *

Օր ու գիշեր աչքս ճամբին կսպասեմ.
Երբ կհասնի ժամը վերջին տխրագեմ...
Ես մի անցորդ՝ վերջին նավին կսպասեմ.
— Աշխարհը ճոխ, մեզի ոչի՞նչ չի մնա...

Արտերի մեջ բույս ու ծաղիկ կբսնի,
Արտերի՝ մեջ բերք ու բարիք կհասնի.
— Ով կա այսօր, վաղը անդոր կմեկնի.
Աշխարհը ճոխ, մեզի ոչի՞նչ չի մնա...

Փորձդ արի, գործդ բարի՝ աշխատիր.
Օրդ վերջին հասնելու է անխուսափ.
Սրտիդ կասկածը բնավին փարատիր.
— Աշխարհը ճոխ, մեղի ոչինչ չի մնա...

* * *

Քեզ չսիրել ես չեմ կարող, ով արարիչ բնության,—
— Չէ՞ որ մայր ես դու ինձ համար դիտառատ.
Քեզ չսիրել ես չեմ կարող արև, աստղեր և անհուն.
— Չէ՞ որ հայր եք դուք ինձ համար անարատ...
Քեզ հետ եմ ես, միշտ եղբոր պես, իմ հայրենի սեգ լեռներ,
Քեզ պես ինձ էլ այս աշխարհի կիրքն է ծնել,— կիրքը հին:
Քեզ չսիրել ես չեմ կարող՝ ծով ու ջրվեժ, հորդ ջրեր,—
Դուք երգում եք կյանքի մասին, իսկ իմ երգը ձեր մասին...
Դուք սեղ ունիք իմ սրտի մեջ, բույս ու ծաղիկ, անասուն.
Եղբոր նման մենք միասին աշխարհ եկանք նոր կյանքի.
— Աշխարհ համայն, իմ մեջ կա սեր. ասես արևը խնդուն,—
Նա վառվում է կրակի մեջ քո անսպառ տանջանքի...
Մարդիկ, յարաբ, կուզեք տեսնել, ինչ է սերը հավիտյան,—
Կուրծքը ճեղքեք իմ վառվուն,— նա ձեզ կասի ամեն բան...

* * *

Ո՞վ է լեցրել կյանքը ցավով, ո՞վ է բերել այսքան վիշտ,
— Ամեն կողմից և ամեն ժամ սուգն ու սեն է ձեն տալիս.
Ծաղիկ ու վարդ և անասուն տանջանքի մեջ ամբարիշտ,—
— Անթիվ զոհեր, անմեղ զոհեր, ձեզ է սիրաս միշտ լալիս...
Կյանքը լույս է — մի խոր ողջույն, զուր չի ծաղկում
և դարուն,

— Ինչո՞ւ այսպես ամեն կողմից դառնության ձայն է գալիս.
Այս լուսեղեն պարտեզի մեջ ո՞վ է սերմել դառնություն,
— Անթիվ զոհեր, անմեղ զոհեր. ձեզ է սիրաս միշտ լալիս...
Թողնեմ այս մութ իմ անկյունը, անցնեմ հեռուն, սար ու ձոր,

Տեսնեմ, ո՞վ է կյանքի մասին զուր ու սխալ ձայն տալիս...
Ո՞վ է հիմնել այս բերդի մեջ կարգն ու սարքը ահավոր,—
— Անթիվ գոհեր, անմեղ զոհեր, ձեզ է սիրտս միշտ լալիս...

* * *

Ինչո՞ւ այսպես ման եմ գալիս, ես մի սխալ սնապանդ,
Ինչո՞ւ այսպես ցան եմ տալիս ես իմ կյանքը ու եռանդ...
Մի՞թե չկա ինձ մի անկյուն, մի սրտալի ապավեն.
— Չէ՞ որ սառղերը իմ վերև ինձ են միայն հնազանդ...
Ամենից շատ և հարազատ ես եմ հարազատը իմ մեջ.
Ամենից շատ և հարազատ լույս ու կրակ կա իմ մեջ...
— Հավերժական սերը համայն անջնջելի կա իմ մեջ,—
— Ինչո՞ւ, ասե՛ք, ման եմ գալիս, կյանքի տաճարը մոռացած...

Ինչո՞ւ այսպես ման եմ գալիս՝ կյանքի կարասը մոռացած,
Ինչո՞ւ այսպես ցան եմ տալիս իմ առավոտը բացված...
— Մի՞թե չկան իմ պարտեզում ծաղիկ ու բույս, վարդ ու
լույս,
Չէ՞ որ իմ մեջն է վեհարանը զորքերի փառապանծ։
Ամենից շատ և հարազատ բերքեր ունի արտը իմ
Ամենից շատ և հարազատ երգեր ունի սիրտը իմ.
Ամենից շատ և հարազատ զորքեր ունի բերդը իմ,—
— Ինչո՞ւ, ասե՛ք, ման եմ գալիս, կյանքի տաճարը մոռացած...

Ինչո՞ւ այսպես ման եմ գալիս դատարկ ու սին և անմեղ.
Մի՞թե չկա այս աշխարհում ինձ մի անկյուն և մի տեղ...
Ինչո՞ւ այսպես ցան եմ տալիս իմ եռանդը և իմ սեր,
— Մի՞թե օտար կամ խորթ եմ ես տիեզերքի մեջ փառահեղ...
Ծովը հաճախ ինձ է ասում իր խորհուրդը անսովոր,
Հողմը հաճախ ինձ է բերում իր հազուրդը դարավոր,
Կյանքը հաճախ ինձ է խոսում իր աճուրդը ահավոր...
— Ինչո՞ւ այսպես ման եմ գալիս միշտ անընկեր ու անմեղ...

Ինչո՞ւ այսպես մոռ եմ գալիս ես տարակույս ու անճար,
Մի՞թե չկա երկնքի տակ հավես ու լույս ինձ համար...
Ինչու այսպես ցան եմ տալիս դանձը սրտիս, բեռ ու բյուր, —
Չէ՞ որ հաճախ ինձ է գալիս գարունը ճոխ, լույս ու վառ...
Հավերժությունը կատարում է իմ սրտում նոր հանդես,
Խոր խկությունը իրերի կա իմ սրտում վեհ ու վեհ.
Տիեզերքն է միշտ իմ մեջ պահում իր գենքն ու գորբը անտես,
— Ինչո՞ւ այսպես մոռ եմ գալիս ես անընկեր ու անճար...

* * *

Մրրի՛կ, մրրի՛կ և լուս շարիք, դուք իմ սրտի սուրբ կարիք,
Դուք եք բերել իմ օրերին գարուն ու լույս և բարիք...
Սև ամպերից և ծովերից անցել եք դուք իմ սիրտը,
— Ամենից շատ և հարազատ ձե՞զ եմ միայն ես տալիս...
Ո՞հ, ոմերիմ իմ թշնամիք, ամենից շատ ձեզ եմ պարտ. —
Դուք եք ցանել իմ սրտի մեջ քաղցր վիշտը ու սև դարդ.
Թե չլինեք ձեր սև գործը, էլ չէր լինի իմ փորձը,
— Ամենից շատ և հարազատ ձեզ է միայն սիրտս պարտ...

Ասաղ ու արև, ոստ ու տերև, գարունների սուրբ կարոտ,
Դուք եք բերել ցնորք ու սեր և զվարթուն առավոտ...
Դուք եք ծնել մարին թևեր, միշտ նոր թռիչք ու ձևեր,
— Ձեր հետևից՝ ճեղքել եմ ես սուրբ հեռուները ապտ...
Ո՞հ, աննման և մոռերիմ իմ ընկերներ, դուք անցա՞ք,
Բայց իմ սրտում հավերժության կրակ ու լույսը գարձար...
Ձեզ է կանչում սիրտս հաճախ, ձեզ է տենչում նա անվախ,
— Ու՞ր եք, ասե՛ք, ձեզ է միայն սիրտս երգում համարձակ...

Եվ դո՞ւ, և դո՞ւ, իմ հայրենի քաղցր երկիր, լեռ ու ստր,
Ջրվեժ ու ջուր, գաշտ ու բլուր, մելամաղձոտ ո՞վ անտառ...
Ձեր երգն էր միշտ թնդում իմ մեջ սրտի պես և անհագ,
Ձեր բերքն էր միշտ խնդում իմ մեջ արևի պես ու պայծառ...
Ուր որ գնամ, չեմ մոռանա ձեզ, հայրենի սեգ լեռներ,
— Աղգ իմ, աղգ իմ, չեմ մոռանա քո վիշտը խոր և բեռներ...
Դեռ շատ անգամ սիրտս բախեմ օտարության սև գոներ,
— Բայց քեզ երբեք ես չեմ մոռնա, ո՞վ հայրենիք սակեմատ...

* * *

Կամքը հզոր, որ կա սովոր իմ սրտում,
— Դուք ի՞նչ գիտեք, նա տիեզերքի կամքը չի.
Ջանքը հզոր, որ կա տյուսոր իմ բերդում,
— Դուք ի՞նչ գիտեք, հավերժության ջանքը չի...

Արևի մեջ, աստղերի մեջ, երկնքում
Հավերժական ու անկործան մի կամք կա.
Իրերի մեջ, անցքերի մեջ անհերքում
Միշտ կենտրոն, միշտ գենիտար մի ջանք կա...

Գործս անող, փորձս ստանող կամքն ուրի —
Մի՞թե անմահ, իրերի դահ — կամքը չի...
Դուք ինչ գիտեք, կյանքը ներքին աշխարհի
Տիեզերական անջնջելի կամքը չի...

* * *

Հազար հազարը անցան,
Փոշու նման ցիր ու ցան.
Սրտի կարոտը դարձան, —
— Մեկը չասաց, ինչ է սա...

Գործ ու փորձը անելիքում,
Շուրջս լեցուն ծառ ու ճյուղ,
Բայց դեռ չկա մի պտուղ, —
— Ես մուրացի չհասա...

Տիեզերքը մեծ և անհուն,
Մեկ է աղբյուրը խոսուն,
— Իսկ ես նրա նուրբ լեզուն, —
— Տերը ո՞վ է, — չտեսա...

* * *

Ինչո՞ւ այսպես խառն է այսօր հանքը իմ,
Աշնան նման սառն է այսօր կյանքը իմ,
— Չէ՞ որ մի հոծ կրակ ու բոց կա իմ մեջ,
Ինչո՞ւ այսօր դառն է այսպես կյանքը իմ...

Աստղերի պես խոր ու պայծառ իմ հոգին,
Արևի պես կրակ ու վառ իմ հոգին,
— Հավերժության լույսը անմար միշտ իմ մեջ...
Ինչո՞ւ այսպես սառն է այսօր իմ հոգին...

Շիշտ իրերի սահման ու կապը իմ մեջ,
Միշտ արդարի ասյան ու չափը իմ մեջ,
Դարբնոցների զնգան ու թափը իմ մեջ,
— Ինչո՞ւ այսպես դառն է այսօր իմ հոգին...

Մխոքս կարում է գաղափար նոր կյանքի,
Ձիրքս շարում է նոր առաջար տիեզերքի,
Հանձն բերում է ձեզ պարզար նոր բերքի, —
— Ինչո՞ւ, ասեք, դառն է այսօր իմ հոգին...

* * *

Վարի՛ր ասու, խոսի՛ր ասու.
— Հանդիսարք քեզ չի սպի...
Հասիր ասու, հոսիր հեռու,
— Ծովն է, որ քեզ կսպասի...

Զուրգ պայծառ ու հարազատ,
Համբույր կտաս տիեզերին.
Լոր ու ժպիտ և խոսք ազատ
Տանում ես դու ծովերին...

Ես էլ քո պես ծովն եմ գնում,
Համբույր կտամ տիեզերիս.
Օր ու գիշեր միտք եմ անում,
— Երբ կհասնեմ մուրազիս...

* * *

Եթե գնամ, իսկի չասեք, նա գնաց.
— Իմ երգն այստեղ, իմ բերքն այստեղ կմնա...
Թե հեռանամ, թող չլինի ողբ ու լաց,
— Ով կա այստեղ, երբե՞ք էլ ետ չի դառնա...

Եթե գնամ, միայն տեղս կփոխեմ.
— Միտքս այստեղ, խոսքս այստեղ կմնա...
Ես հողմերի, բուսերի մեջ կշրջեմ —
Իրեն մի զոր անջնջելի, անխնա...

Եթե տեսնեք, գարունը գա ու ծաղկի,
— Արտն ու արտա երկնատեսիլ գեսքի մեջ.
Անվերջ կարտա սիրուն սոխակը երգի,
Ես միշտ ես կամ ու կլինեմ նրանց մեջ...

Երբ անտառը հողմի առաջ մրմնջա.
Ծովը հզոր աղմուկ անի բարկաճայթ, —
Մրրիկը շար կյանքի վրա արտնջա, —.
— Լա՞վ իմացեք, — իմ անտառան խոսքն է այդ...

Թե ընդհանուր տիեզերքի խոր շարժումին
Մի օր արի մարդու միտքը տիրանա.
— Իրեն մի լույս՝ անջնջելի իմ հոգին
Միշտ կգտնի և նրա մեջ կմնա...

Եթե մի օր կյանքի հզոր հովտի մեջ
Սերը ծաղկի ու ձեզ բերի նոր գարուն.
— Իմ սիրտը կա անջնջելի նրա մեջ.
— Իմ արտը ձեզ բերք կբերի գարթուն...

Ինձնից հետո զուր մի ասեք, — նա գնաց.
Իմ երգն այստեղ, իմ բերքն այստեղ հավիտյան,
— Ինձնից հետո թող չլինի ողբ ու լաց.
— Ես այստեղ եմ և կմնամ անմահաբան...

* * *

Ի՞նչ ես ասում, անգութ հողմ,
Եվ փող փչում ահավոր.
Ի՞նչ ես շրջում ամեն կողմ,
Ո՞ւմն ես կանչում անսովոր...

Ամպերը խիտ երկնքից
Ցրում ես դու անդադար.
Ծովերը խոր հատակից
Շարժում ես դու բաջարար...

Նավերը լի բերքերով
Նետում ես դու ափերին.
Ցավերը լի կրքերով
Թողում անդունդը խորին...

Դու վիթխարի անտառին
Ահ ու սարսափ ես ազդում,
Եվ նա՝ դողը իր սրտին,
Քեզ իր հուշերն է կարդում...

Ո՞վ է, ասա, բեզ ծնել,
Ո՞ր աշխարհից ես գալիս.
Ո՞վ է կյանքի քեզ հանել,
— Ո՞ւմ պատվերն ես դու տալիս...

Յարաբ հզոր փողը չե՞ս,
Որ կանչում է նոր կյանքի,
— Յարաբ այն խոր դողը չե՞ս,
Որ կա խորքում բերկրանքի...

* * *

Դու իմ վառակ, սիրուն գեղակ, խոխաջում ես միշտ անհագ,
Սարերի մեջ, ձորերի մեջ շրջում ես դու համարձակ.
Մինչև հիմա մեկը չեղավ, որ քո խոսքը հասկանար,
Ո՞ւր ես գնում, ի՞նչ ես ասում այդքան արի ու շիտակ...

Ջուրդ վճիտ, հաղարաձայն ու հնչուն,
— Անհայտ երկրից երգ ես բերում խոխոչուն.
Մեկը չեղավ, որ սուրբ երգդ հասկանար,
— Ի՞նչ կա գաղանի ջրերիդ մեջ կարկաչուն...

Դու, իմ վտակ, սիրուն գեղակ մատցիր —
— Մոտդ նստեմ, երգդ լսեմ ուշադիր.
Ի՞նչ ես խակում, ի՞նչ ես զարկում ափերիդ,
Ասա, ի՞նչ կա խորհուրդներում բնադիր...

Ջուրդ գալիս է հեռավոր վայրերից,
Լսել ես դու խոսքը խորին եթերից.
Մոտդ նստեմ ու քեզ լսեմ ուշադիր, —
— Ի՞նչ ես բերել անհայտ ու խոր ափերից...

* * *

Անդադարակ, զուր չես եկել դու աշխարհ,
Անժամանակ հյուր չես եկել խնճույքի.
Հազար տեսակ գործ կա բարի քեզ համար,
— Չէ՞ որ անհագ ուխտ ես եկել գարունքի...
Տե՛ս, քո դիմաց երկար ու բաց ուղիներ,
Դաշտար խոպան, հողը անբան կնապատի.
Իրրև հաճար, քեզ վիճակված տարիներ
Գործերդ տես, որ շատ դիտաս նոր դասի...

Քո ճամբերին հազար ու մի ճահիճ կա,
Որ կարոտ է վսեմական սուրբ գործի.
Քո սրտի մեջ հազար ու մի դահիճ կա,
Որ քաշում է քեզ անկումի ու փորձի...
Իսկ երբ հաղթես փորձանքը չար սրտիդ մեջ,
— Արժան լինես անմահական քո բերքին.
— Ժամանակն իսկ կդադարի սրտիդ մեջ,
Դու կը հասնես հավերժացած բաղձանքին։

* * *

Դու, իմ լճա՜կ, կապույտ լճակ, ջուրդ ցայտուն ու վճիտ.
Դու՝ էլ մենակ, ես էլ մենակ, ընկեր ենք միշտ՝ ես և դու.
Ինձ էլ քեզ պես, հոգին է հուզում, հոգին անդուր ու կապիտ,
— Ցավերի մեջ բախտի ձեռքը ընկել ենք միշտ՝ ես և դու...
Զորս ափի մեջ՝ շուրջդ ժայռեր՝ — աղմկում ես ու լալիս.
Քեզ պես իմ մեջ կյանքը անվերջ իր խոր հորձանքն է տալիս.
— Քեզ պես ես էլ սպասում եմ — վերջին օրս չի գալիս, —
Այս լուսնի տակ բախտի ձեռքը ընկել ենք միշտ՝ ես և դու...

Մերթ արևի լույսերի մեջ շողում ես դու կյանք ու սեր,
Միրուս հաճախ հույսերի մեջ՝ քո պես երազ է փնջում...
Մրրիկների հետ միասին մերթ ծեծում ես քո ափեր.
— Չէ՞ որ հաճախ իմ մեջ նաև մրրիկներ են շառաչում...
Դու լուսե ժամին կարդում ես մերթ ազատ գիրքը աստղերի,
Չէ՞, որ ես էլ կարդում եմ մերթ անհայտ գիրքը աշխարհի...
— Դու, իմ լճա՜կ, ես էլ մենակ, ընկեր ենք միշտ ես և դու,
— Ժայռերի մեջ բախտի ձեռքը ընկել ենք միշտ ես և դու...

* * *

Արի՛, արի՛, իմ հեռավոր, մեր ափերին երգ ասա.
Հոգմերը դուր շրջում են խուլ և անդադար հառաչում,
Ամպը վերև իր թշնամուց է փախչում.
Տերևները թափվում են ցած ու կորչում.
— Արի՛, արի՛, հոգին մեզի անհայտ խոսքեր կխոսա...
Դիշերը խոր մեզ հյուր կգա, բյուր աչքերը ճակատին, —
Երթերի մեջ աստղերը հուր մեզ խոր-աղջույնը կտան.
Ծովը ահա երգի մեջ՝ խոսք է խոսում անհման,
— Տես, բնությունը կանչում է մի նոր կյանքի ու գարնան,
— Արի՛, արի՛, իմ հեռավոր, խոսքդ ասա իմ սրտին...

* * *

Դեռ ճիշտ է, ես ինձ համար չեմ,
Սրտիս միակ պաշտողը չեմ, —
Այսուհետ, ասեր, էլ ի՞նչ եմ ես.

— Երբվ սրտիս ինչպես հնչեմ...
Թե լույսը իմ միայն իմ մեջ,
Եվ ես միայն ինձ եմ տեսնում,
Թե սիրտը իմ իր ցավի մեջ
Դրսի ցավին չի հասնում, —
— Չար ու անճար օտարի պես՝
Էլ այս ճամբին ի՞նչ եմ ես...

* * *

Թե կա աստված, — նա ինձանից բարձր չէ.
— Չէ՞ որ նրա գահը միայն իմ մեջ է.
Մարդն է իր մեջ կանգնել պիվանը նրա,
— Աստա մի՛ ասեք, նա սրեկերքի տերը չէ...

Իրրև միջոց՝ կարգավորող բարքը իր՝
Մարդն է նրան միշտ հարմնել ինքնագիր.
Իրերի մեջ նա հիմք չունի, տեղ չունի,
— Թե կա աստված, մեր մեջն է նա օրենագիր...

Կարիք չկա և չի եղել բնավին,
Որ նա լինի իրերի մեջ, սրեկերքում.
— Երբեք նրանց միջտ անխուսափ ու խորին.
— Մեր մեջն է լոկ ծնվել աստվածն հին երգում:

ԴԱՐԵՀ

Ես եմ, Դարեհ մեծ թագավորն աշխարհի
Իմ կամքի դեմ անծայրածիր սիեկերքը այս դղրդաց.
Աշխարհն ամբողջ ես բռնեցի ձեռքերիս մեջ փառապանծ.
Ես գրում եմ գործս ահա ժայռի վրա վիթխարի,
Իմ գործերը ես հանձնում եմ ժայռին այս լուռ և անկոչ,
— Դեռ շատ երկարատև կը մնա, իսկ ես՝ ոչ:

Ես եմ, Դարեհ, իշխանավոր Շահնշահ.
Մեծ Վիշտասպի հզոր որդին, քաջ Արշամի անհաղթ թոռն.
Օվկիանոսը և երկինքը ինձ միշտ եղան սրատաշահ.
Ահռելամազդն էր այս աշխարհն արել միայն ինձ սթոռ:
Իմ մեծագործ ճանապարհին ես չը տեսա ոչ մի խոչ.
— Գործս գրեմ ես այս ժայռին, — նա կմնա, իսկ ես՝ ոչ:

Ես եմ, Դարեհ, երկնահաչակ մեծ արքա.
Յեղս ամբողջ արքաներից, իմ պատերը թագալարդ,
Ամեն մի խոսքն իմ դեսպանից՝ կյանքին դարձավ մի կախարդ,
Բեղուստանի հսկա ժայռին գրվեց գործս երկնագոչ, —
— Ժայռին անճառ և անիմաստ,— նա կմնա, իսկ ես՝ ոչ...

Ես եմ Դարեհ, ասավածազոր կյանքի տեր,
Ես ջարդեցի աշխարհակալ մեծ Հավամաթ շար մոգին,
Նաթիթամբին ջար նետեցի Բաբելոնին տաքնթեր,
Բաբելոնը նվաճեցի, որ ներքոդի իմ կամքին,

Ահուրն օգնեց ինձ ամեն տեղ, ինչպես ընկերն ընկերոջ,
— Ես գրում եմ գործս ժայռին,— նա կմնա, իսկ ես՝ ոչ...

Ես եմ Դարեհ, աշխարհակալ, ինչպես հրաշք երկնածին.
Եգիպտոսը նվաճեցի,— Նեղոսն ու ծով միացան.
Հունաստանը ես սանձեցի, ինչպես քաջն է սանձում ձին,
Իմ զայրույթից բյուր բյուրերը այստեղ եղան մահացան.
— Սա է գիրքը իմ պատմության, ժայռը այս լուռ, ինքնակոչ-
Չէ՞ որ հավերժ նա կը մնա, իսկ ես՝ ոչ...

Ես եմ, Դարեհ, ասիական հավասար.
Նվաճեցի ես բառասուն անպարտելի շեն երկիր.
— Թագավորներն ու անմահներն ինձ միշտ եղան կարեկիր.
Հավաքեցի ես իմ ձեռքում զանձն աշխարհի ոսկեսար.
Բյուր մեծ գործեր կատարեցի, ինքս՝ արև միշտ անխոնջ,—
— Եվ բոլորը ժայռի վրա թող միշտ մնա,— իսկ ես՝ ոչ:

Ես եմ, Դարեհ, գլուխս վեր, մինչ ասողեր.
Բառասուն անգամ կատարեցի հաղթանակով պատերազմ,
Հազար և մեկ մեծ թագավոր ես հաղթեցի անվեհեր,
Ամեն վայելք ես իմացա այս աշխարհում նյութական,
Եվ ժայռը այս Բեղուստանի՝ գիրքն է կյանքիս քաղցրաձայն,
— Այս ապառաժ ժայռը հզոր՝— նա կը մնա, իսկ ես՝ ոչ...

Կանգնի՛ր անցորդ. այս հովիտում Ահուրմազդը օգնեց ինձ.
Տես, գրված է ժայռի վրա կյանքը Դարեհ Վիշտասպի...
Դժգույն մի քար, միշտ անբզդա, ոչ ոսկի է, ոչ պղինձ,
Բայց ամեն ինչ քեզ կը խոսի, որ փառքերը իմ զոսի...
— Ես եմ Դարեհ, մեծ թագավոր, արարչի պես երկնագոչ,
Իմ գործերն են ժայռի վրա,— նա կը մնա, իսկ ես՝ ոչ...

ԿՅՈՒՐՈՍ

Թագավորն եմ ես մեծ Կյուրոս, արքան հզոր Թինթիրի,
Եվ Կամբիզի հերոս որդին,— սթռատեիսան իմ Անշան.
Տերն եմ անմահ ես Ակկադի, իշխողն անհուն Թումիրի,
— Արևելքը և Արևմուտքն եղան փառքիս մեծ նշան։
Արևի պես բախտ ունեցա,— Ահուրմազդին ես ստեղիկ,
Բյուր ազգերը իմ ձեռքի տակ՝ սարկացած ընտանիք.
Բայց գնում եմ ես աշխարհից փոր ու փոշման և մոլոր՝
— Այնպես, ինչպես աշխարհ եկա մերկ ու մենակ ու տկլոր։

Մայրս՝ Մանդան,— քույրն Աստիագի,— ինձ, կործանել
կամեցան.
— Նախարարն ինձ լեռներ տարավ — հրամանովն արքայի,
Որ ձորերի անդունդի մեջ ինձ անի զոհ մահացան.
— Բայց բախտը ինձ ձեռքը դրեց մի երկնային վկայի։
Ես տպրեցի հովվի տանը, շունը եղավ ինձ ծծմայր,
Իսկ Ահուրը նախախնամ դարձավ սիրող կնքահայր...
Ես զորացա այդպես շատով և տիրեցի աշխարհին,
— Բայց գնում եմ ես աշխարհից,— ավա՜ղ փառաց
անցվորին։

Ես Կյուրոսն եմ,— ամենամեծ թագավորը դարերի,
Ժամանակը իմ ձեռքի տակ դարձավ հրու հպատակ.
Երբ որ անցավ մանկությունն իմ ձորերի մեջ սարերի։
— Ես Աստիագին բախտի կամքով կործանեցի դժնդակ,

Ու միացան իմ ձեռքի տակ անթիվ, անծայր երկիրներ,
Իմ հաշակը տիեզերքի մեջ տարածեցին արևներն.
Ես, Ահուրի մեծ տանիքը՝ անվամբ հզոր, փառքս դու,—
— Բայց գնում եմ այս հավիտից թշվառի պես դիմակոր...

Աշխարհատեղծ Տիգրանը մեծ՝ — թագավորը Հայկազյան,—
Որի անունն այս լուսնի տակ դեռ կը հնչեն բյուր անգամ,
Դարձավ սրտիս մեծ մտերիմ և հոգեմայր բարեկամ:
— Իմ գորությամբ բյուր բյուրերը մատան տխուր գերեզման.
Խարույկի մեջ Կրեզոսին ես այրեցի անխնա,
— Նրան, որ հաղթ փառքերի մեջ համարվում էր երջանիկ,
Իմ ճանապարհն այս աշխարհում անջնջելի կը մնա,
Բայց գնում եմ ես այս կյանքից ինչպես վերջի՜ն մի
մարդիկ:

Կյուրոսն եմ ես ասիական.— երկինքն, երկիր՝ ինձ
պարծանք.
Ջուրը ծովի այնքան շատի կաթիլներ,
Ջյունն հյուսիսի այնքան շատի փաթիլներ,
— Որքան այսպես վատատեսի ես փառք, պատիվ,
մեծարանք:
Իմ անունը դարերի մեջ միշտ կը հիշի մեծ Մասիսն,
Իմ ավյունը ճիշտ կիսոսի ինձ բարեկամ և Տիգրիսն.
— Ծեր մարգարիտյան, միշտ քեզ համար ես շարժեցի սուր
երկաթ.
Բայց գնում եմ այս աշխարհից ինչպես վերջին մի ադամ՜...

ԳՈՐՏԵՐԸ

(Հնդկական: Ռիգ-Վեդայի մոտիվներից)

Ինչպես բրահման երգումի մեջ, գորտերն էին տիղմի մեջ.
Բայց երբ երկինքը անձրևեց, գորտերը դիլ ճչացին:
Երբ երկնավոր հեղուկները ծործորացին հողի մեջ,
Գորտերն, ասես, վերակենդան, վանմ երգը հնչեցին:
Լճակի մեջ բյուր բյուրերով պառկած էին իրար մոտ,
Բայց անձրևից՝ ողմկեցին արագ. ոգաս, լուսաշո՞ղ.
— Ինչպես կովերն ու հորթերը միմյանց հանդեպ
բառաչող,—
Ինչպես հայրը և զավակներ միմյանց տենչող ու կարոտ...

Վաղուց էին նրանք, կարծես, այրված դաղանի պապակից.
Տիղմերի մեջ նոր զովարար բերք էին խիստ սպասում...
— Գորտե՞ր էին բյուր բյուրավոր՝ խարհրդավոր փափագից
Տանջանքի մեջ ողոթքի խոր խոսքեր միմյանց փսփսում...
Երբ զովարար տեղաց անձրևն, իրրև վերուստ մի բարև,
Նրանք իսկույն խոր խնդացին տարափի մեջ սրտագին.
Կոկռացին մի նոր համերգ,— ամպն էր ավել նոր պարգև,—
— «Կրո-կրո, Սրբ-խրլ», խնդաց այդպես նրանց սիրտը և
հոգին...

Անձրևի թարմ, կաթիլներով պերճ ու պարկեշտ զարդարված —
Կարծես պայծառ ադամանդի հատիկներով հարդարված,
Թռչում էին նրանք ասա-անդ, կպչում էին նրանք միմյանց,
— Խնճույք էր այդ երկնային.— նրա սիրով էին տարված...

Կակռոցով կանաչ գորաք շիկագույնին ձոնեց համբույր,
Շիկագույնը գորշին, սեին խիստ խայտուրախ գույգուրեց...
Եվ բոլորի կակռոցը կազմեց համերգն այդ ընդհանուր,
— Իսկ այս մեկը, գլխավորը, հանդեսը սուրբ հարգարեց...

Ինչպես հաճախ աշակերտներն ուսուցչի հետ միասին
Դաս են սերտում, արտասանում, խոսքեր խոսում խմբական.
Գորտերն այդպես խորհրդավոր սերտում էին դասը հին
Եվ թնդում էր կակռոցը համերգի պես դյութական...
Մեկը, կարծես այն կանաչը,— բառաչում էր, ինչպես կով,
Իսկ այս մյուսը, շիկագույնը, մայում էր ճիշտ ինչպես այծ.
Գորշն էր հզոր, իբրև դպիր, գեմքին նույնիսկ փայլուն կայծ,
— Կակռոցն էր տարբեր ու ջոկ, բարձր անվան տակ
ինքնագով...

Լիճը պատած շուրջանակի, երգը հնչեք քաջ գորտեր,
Զոհաբերող Բրահմանի պես գրվատեցեք օրը այս.
Անձրևն եկավ, ձեզ ազատեց: Դուք սարուկ չեք կամ ճորտեր,
Նա՝ Սոմային, իսկ դուք միայն օրհնեք կյանքի նորը այս...
Նա օրենքով և ծեսի մեջ մեծ Սոմային ազոթեց,
Եվ դուրս եկավ խոր տաճարից, հոգին լեցրած հույսերով,
Իսկ դո՞ւք, գորտեր, հրճվեք միայն նոր փրկության
լույսերով,
Ձեզ անձրևը, երկնաշնորհ հորդ անձրևը, ազատեց...

Բրահմանն է խիստ ծիսակատար ասուրածային խորհրդի
Նա խոսում է երկնքի հետ գենման բաժակը ձեռին.
— Գուցե և դո՞ւք, փայլուն գորտեր, ծեսեր ունեք հազարդի,
Գուցե այդպես դուք հայտնում եք ձեր խորհուրդը Անմեռին:
Կանաչ և գորշ, փայլուն գորտեր, դո՞ւք, շիկագույն,
գլխավո՞ր,
Կայթե՞ք խաղեր, սիրտ շոգեր, — հանդեսն է ձեր մեծաշուք
Թե կարող եք, մեզ լուր բերեք, կամ ափսոսանք ամեն օր,
— Մենք էլ ձեզ պես ազոթում ենք, բայց միշտ ունենք
սրամաշուկ...

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ

(Նրա ծննդյան որսուճամյակի առթիվ)

Գնում էինք մենք միասին դեպի հեռուն, դեպի լույս,
Դու առջևից, իսկ ես միայն քո հետքերովն ինքնաբույս։
Եվ սիրտդ բա՞ց, գոչում էիր,— ձայնդ հզոր, ինքնակի.
— «Օն անդր հասա՞ջ — դեպի խարույաշն, դեպի Ամենոծր — Շամաշ.
Նա ոչ միայն լույսն է կյանքի, այլև հոգի տիեզերքի»։
Հեռուն շվոդ, ողջույն ավոդ զառ հավքերին վեր ու վեր
Հարցում արիր. «Ի՞նչ են խոսում Արարածը և Մանթաշ»։

Գնում էինք մենք միասին. մինչ դու եկար, տեղն հասար.
Սակայն ես շա՞տ եմ մնացի, և դու ցավոք այդ տեսար։
Քեզ ես՝ հաճախ հարցնում էի. «արդյոք հասար Շամաշին,
Թե՞ կյանքն էլի արված է լի՞ հին հրեշին և նաշին»։
Մեր ճանապարհն էր լուսնի տակ, գնում էինք շա՞տ հեռուն.
Կարոտներով էինք անհագ, տենչում էինք նո՞ր զարուն.
Հավերժության ճանապարհին տեսնում էինք ապացույց,
Որ կյանքն ունի կատարյալի՞, անմահ սիրտ հայանության...

Դու լա՞վ գիտես, լի՞ կարոտով գնում էինք միասին,
Իսկ երկնքում աստղերն էին զարմանի խոսում մեր մասին.
Մեկ նայելիս ծովն ու ցամաք, մարդ, անասուն, ամեն ինչ

Հարցնում էին. «ծի՞շտ է, որ դուք դիմում եք մեր
Անահատին»:
Գնում էինք մենք միասին, Մասիսը ուխտ մեր դարձին:
Բայց դու հիմա տեղն ես հասել ու բազմել ես բազմոցին.
Էլ չե՞ս լսում, ինչպես տնտ արտասուացայտ ու ցասկոտ
Մեր Սևանը դարի է տալիս քո սրտի սեպ ամրոցին...

Գիտեմ, գիտե՞մ, որ աշխարհի բոլոր երգերը երգեցիր,
Ուշի ուշով այս գոյությունն իսոր գրքերը կարդացիր.
Հավատարիմ քո Անուրջին, հատար սիրո կամուրջին,
— Ասի, «վարպետ, տե՛ս անդունդը այս տհեղի և
անցի՞ր»:
Հոգիդ պայծառ, սիրտդ հանճար,— անդունդները դու անցար,
Անուրջների, կամուրջների սուրբ շինարարը դարձար...
Ծաղիկ, շոգիկ, թռչուն, ողջույն, ամեն հնչյուն սրտիդ մեջ,
Դու տիեզերքի միշտ ստեղծի հեռուներով հիացար:

Վեր վարդեցիր, սեր երգեցիր, տեսար իմաստն Անցյալի,
Էլ աշխարհում բան չմնաց, որ չապրեիր սրտալի.
Անգամ Ջիննաթը աչքիդ դեմ, սրտումդ միշտ նո՞ր եղեմ,
Սերդ անծիր, դու երգեցիր կարոտները Բինգյոլի:
Եվ այժմ արդեն դու հասել ես հմայքների գագաթին
Ու կարող ես սիրտդ դնել հավերժության ճակատին:
Ի՞նչ կարող եմ ես քեզ բերել, թե ոչ սիրո սուրբ ողջույն
Անմահական կարոտներով ոգեշնչված պոետին...

ԾՈՎ

Ծով ծովացող ու երկնագով,
Որ շողում ես հավերժացած և անկործան ամբոցի մեջ...
Ո՞վ է այդպես քեզ օրորում այդ անիմաց օրրոցի մեջ...
Քեզ նայում են ասող ու երկինքը, կախարդված քո հմայքով։
Բյուր բյուրավոր ալիքներիդ խորհրդավոր համերգին
Ջայնակցում են նախաբասեղծ արմատները գոյության.
Իսկ ափերիդ դեռ չիմացված, ստեղծագործ դեր-հոգին
Անլսելի մրմնջում է հուզմունքիդ մեջ հավիտյան։
Ո՞վ կը հաշվի բյուր դարերը մշտամրմունջ քո հասակի,
Ո՞վ չի թաշվի հմայքներիդ զմրուխտափունջ քո պսակի...
Դո՞ւ ես, որ կաս փառքն անպակաս այս բնության։
Դեթ իմանամ, ծո՞վ, քո մասին, որ համազոր ես անհասին.—
— Դո՞ւ ես արդյոք հավերժ շողում ժամանակի գրկի մեջ,
Թե՞ ինքն է նա հոսում, խոսում քո հեղհեղուկ գրքի մեջ...
Ափերիդ մոտ երգն է թնդում, լի՞ խորհրդով հավերժակյաց,
Որ քո մեջն է սկիզբ առել բույս, անասուն, մարդն ու ասված։
— Երգդ հնչի՞ր, հավերժացող մրմունջով լի՞, անվախճան
ծով,
Քեզ նայելով սիրան է զգում, տրտունջով լի՞, նոր սգու սո՞վ...

Շա՞տ է ճգնել քեզ հասկանալ մարդը ճարպիկ իր ճամբին,
Բյուր սրբավայր ու տաճարներ կերտել է նա քո ափին.
Նրա մտքի ու հանճարի փայլենազարդ կերտվածքից
Հանդես եկան բյուր ասվածներ՝ քո զորության մրցակից...

Պոսիդոնը երկրագդորդ, լծած ձիերն ասավածագոր,
Կառքի վրա իր ոսկեկերտ ակոսում էր քո կուրծքը խոր —
Եվ փորձում էր սանձահարել քո գոռ գայրույթն ու կորով...
Իսկ ծեր Նեյլեոն իր դիցուհի, գերնագելի, դստերիններով
Երաշխիքն էր խաղաղ կյանքի քո խորքերումն
անդնդային...
— Այդ ամենը դու լա՞վ դիտես իբրև մարի փորձը սին։

Արդո նավը մի ժամանակ, ունենալով սեր ու երազանք,
Սլանում էր մեջքիդ վրա, լի կարոտով ոսկեղեղմի,—
Ու փնտրում էր հայելուդ մեջ կախարդական նոր նպատակ.
Հոմերոսը բյուր բաջերին ասավածագլուա պատերազմի
Սևակուց նավերի մեջ քո թիկունքով տարավ Տրոյ,
Որ նվաճի դեռ լսված գեղեցկությունը երկնագույն։
Քանի՞, քանի՞ ջանք թափեցին Աթենք, Հռոմ և Կարթագեն,
Որ կաշկանդեն քո տարերքը, քո կորովի գայրույթն ու քեն։
Մինչ բոլորը անհետացան, առմիշտ կորած են, էլ չկան.
Իսկ դու դեռ կա՞ս, ծո՞վ անկործան, և կը մնաս հավիտյան։

Ինչե՞ր ասես քո մեջ չկան.
Այն ամենը, որ հատուկ է կենդանության ու կյանքին,
Շողշողում է ջրերիդ մեջ և կրծքիդ տակ գերատեսիճան.
Հուզմունք և սեր, կիրք ու կռիվ, ստեղծագործ նաև ոգին —
Սուրբ ծնունդն են քո էության։
Խնդության ծով և սիրտ սով, երգ ու խնճույք, պարահանդես,
Կորովալիր հմա՞յք, հաճույք, խա՞ղ ու քրքիջ հայնիրժական,
— Քո մեջն են միշտ կյանքի բոլոր բաղձանքները.
անմերժական...
Ալիքներդ շարան-շարան ափն են թակում զորքերի պես...
Աշխարհը ողջ, տիեզերքն համայն շարժվում, հուզվում է
օրենքով,
Մինչ դու, կարծես, բացառիկ ես... Ո՞րն է, ասա, օրենքը քո.
Եվ կա՞ արդյոք մեկը քեզ պես յուրահատուկ և ինքնագոր.
— Այդ չէ՞ պատճառն, որ ասուղերն են քեզ միշտ նայում
հիացմունքով։

Եվ կա՞ արդյոք բնության մեջ այլ էության մի կարգի,
Որի սրտում ծնվի, ծաղի արևն արդար և լուսավառ,
Որի կրծքում լուս կատարվի մայրամուտը արևի՞...
— Դու, ես միայն ծով անկարծան, կենդանության ամենամայր,
Դո՞ւ, որ ծնունդն ու մայրամուտն ես հարինում արևի՞ն...
Լուսարացին քո ջրերին նա տալիս է ժպիտները շողշողան.
Մայրամուտին քեզ պատում է ժապավենով կարմրագույն.
Եվ կարմրում է հեռատանդ, իբր արյունով ներկված թախիծ.
Ու հեծում ես դու դառնագին.
— Ամոթն է դա այս գոյության... կյանքն է կարմրում
ամաթից...
Ծով բյուրագո՞ւ.— միլիարդ, միլիարդ արիածնների
ծննդավայր,
Դու բյուրավոր և լուսազարդ զանգվածների հին ճեմարան.
Հերիաթի պես ծնված, կորած ատավածների ծեր նախամայր.
— Դեռ չծնված և չը լսված գալիքների պերճ թանգարան...
Միլիարդ հրեշ ե՞ բյուր վիշապ, ատգնապի մեջ ու միաձայն
Ո՞չ, չեն կարող քեզ պես հզոր և ահարկու մարնչալ.
Հազար հազար հսկա, կարիճ և նույնիսկ բյուր ձենով Օհան
Անկարող են քեզ պես հուժկու ազազակել ու ճչալ:
Հե՞յ ալիքներ, փրփուր հագած. դուք նման եք նախիրներին.
Որոնց կովերն արագ վազում են դեպ փարախ և բառաչում.
Դուք գալիս եք հեռուներից, բառաչում եք ու կանչում...
Ի՞նչ կա ձեր մեջ, որ ջանում եք դուք հազորդել աշխարհին...
Ջա՞ն ալիքնե՛ր փրփուր հագած, որ գալիս եք հեռատանից,
Փոթորիկներն ու մրրիկներն են համարձակ ձեզ խոսակից...
Ափին զարկվող, ժայռեր կրծող հզոր ալիքնե՞ր, ոչո՞ւմն ձեզ.
Հասե՞ք, հուզե՛ք բյուր գալիքներ.— կյանքն է համայն ձեզ
ասպարեզ:

ԽԵՂՃ ՈՒ ԿՐԱԿ ՀԱՄԱՉԱՍՊ

(Լեոնի մանվան առթիվ)

Տե՞ս, կործանված է երկնահաս քո աշտարակն, խե՞ղճ ու կրակ
Համաղասպ,
Տապալված է ծաղկափթիթ քո պերճ պսակն, վի՞շտ ու վարակ
Համաղասպ,
— Եվ գանձը այն երանության, որ ձիրքն էր քո էության,
Կորավ ընդմի՛շտ, էլ հա չի գա, ո՜հ, ցավերով անօրինակ
Համաղասպ։

Երբեմն պես քո երկնքում ժպտում էր նա անմահության
հավետով.
Բարեմն պես դրդում էր քեզ նա դեպի վեր, դեպի բարձունք
մեծագով.
Հանց ծաղիկը սիրտ այդում, շողշողում էր երանության նոր
հույսով,
— Բայց կորավ նա, այլես երբե՛ք հա չի գառնա,— դու միշտ
մենա՜կ Համաղասպ։

Սիրտ բարեն այս աշխարհին երգում են միշտ սոխակները
սիրասուն.
Մինչ քո վերն պատչա եկան սև ագռավները դժգույն,—
Տե՞ս, բոլորի պարտեզներն են պերճ զարդարված ծաղիկներով
երկնամույն
— Բայց քո պարտեզն հողմերի տակ շուտ թառամեց, միշտ
հառաբա՜կ Համաղասպ։

Ամեն մի մարդ, ամեն էակ, որ անցնում է այս լուսնի տակ իր ուղին,
Ունի հեռու մի նպատակ, ինչպես սերն է միշտ որոնում սիրուհին.
Դու ես միայն միշտ հպատակ ձախորդության շար խաղին,—
Ոչ աշխարհի ցավն է պարփակ քո սրտի մեջ, վշտի ճարա՞կ Համազասպ.

Ծաղիկները խնդության մեջ հեռանում են անմահացող երազին,
Ամեն էակ գոյության մեջ ապրում է իր հեռավոր մուրազին.
Մինչ դու այստեղ — միշտ սիրատենչ — ո՞ւմ ես բախտի տենչին,—
— Դու սև կապած ու սևավոր, բայց աշխարհին միշտ հակառա՞կ Համազասպ:

Ի՞նչ կարող է երկիրն անել, երբ լուսաշող արևն հանկարծ խավարի.
Կյանքն է միայն մի պատուհաս, եթե սիրով սրտում բարևն խակ մարի.
— Ի՞նչ կանես դու, երբ էլ չի կա Լուսնը քո, կանանը քո տաճարի,—
Դեհ, լա՞ց եղիր, հոգեհանձար սե՛ր մանող դու ճախարա՞կ, Համազասպ.

Էլ ի՞նչ ես դու լուս թափառում երկրե-երկիր անընդդա.
Էլ ո՞ւմն ես դու զուր սպասում,— խորհանձար քո սիրելին ես չի գա.
— Կորած է միշտ Լուսնը քո,— և սրբության կրոնը քո էլ չի կա՞,
Վա՞յ քեզ, վա՞յ քեզ սիրեցերի շատ վիշտ կա քո մեջ,— խե՞ղճ ու կրակ Համազասպ:

* * *

Բար է ընկած ճանապարհին, պիրկ մի բար.
Արդյոք չը կա՞ և նրա մեջ սեր ու հավես և բանբար.
Էլ ինչո՞ւ են ասպերը վառ նայում խստիվ և նրան,
Չէ՞ որ և նա ստեղծված է կյանքումն իբրև մի նկար...

Եթե բարը իր մեջ ունի իմաստը խոր գոյության,
Ինչպե՞ս եղավ, որ կործանվեց այն ատաճարը մեծասքանչ.
Ուր ապրում էր սուրբ հանճարը քո երկնավոր ինքնության.
Ինչպե՞ս մեկնել քո անկումի ահեղ փաստը չարաստանջ:

Բարը, ահա, իր գոյության բոլոր ձևերը ունի.
— Ինչո՞ւ, ասա քո աչյունը կյանքի թևերը չունի...
Էլ ո՞ւր կորավ այն հանճարը, որ արևն էր քո կյանքի.
Չէ՞ որ և դու մի մասն էիր,— ընտիր մասը տիեզերքի:

ԱԿԵՐԱԿՆԵՐԻ ՄԵՋ

Շուրջս լի հնության ալեոր բեկորներ.
— Անցյալի՞ սավերնե՛ր, ի՞նչ եք դուք մեզ գալիս։
Այն, ինչ կա՞ր, էլ չկա... անցյալի՛ հատորներ,
Ի՞նչ է լուռ ձեր վիճակը անմիտ ցույց տալիս։
Այսաեղ կյա՞նք կար մի օր և ազնվակ բնդհանուր.
— Իրավո՞ւնքն, հզոր կամքն իշխողի, կամ կուրքեր.
Ե՛վ զուրա՞մ, և՛ գալում. աշխատա՞նք ու բարքե՞ր...
— Ասացե՞ք. ո՞ւր եք, ո՞ւր...

Եվ գուցե այսաեղ իսկ լուսնկա մի գիշեր
Միրահարն էր գալիս սուրբ սիրս տեսության...
Կամ գուցե հենց այսաեղ սուրբ տաճար է եղել,
Աղոթքի՞ կամ մարի՞, արվեստի ճեմարա՞ն...
Ինչ որ կա՛ր կենդանի,
Ինչ որ կա՞ր անվանի,
Կործանված է տամիշտ և թաղված հողի տակ...
Հետքն անգամ էլ չկա,
Կամ արթուն մի վկա՞,
Որ պատմի միտամի անցյալի ճոխ վիճակն։
Միայն միտքն է տխո՞ւր
Սավառնում և անցնում Անցյալի օրերին...
Միայն միտքն է իզուր հարց տնում դատնապին.
— Ո՞ւր եք, ո՞ւր...

* * *

Ես կանգնած եմ այստեղ մատաղանջ ու մենակ.
— Շուրջս լո՞ւռ և տխո՞ւր է աշխարհ.
Իսկ հեռո՞ւն, մեզի մեջ, սարի տակ
Հովիվները վառել են կրակ...
Եվ առվակը տխուր սաղմոսներ երգելով
Ջուր լալիս, ինչ որ հարց է տալիս.
Դաշտ արտերը անբույր, հեռատեսանը խառվ,
— Հողմը ինչ է կորցրել, ի՞նչ է նա մեն գալիս։
Մի սև ամպ՝ ասես նոր մի նավակ ծովի մեջ,
Ջուր սահում, հեռանում է լուսնին.
Լուռ աստղերը անվերջ՝ կարոտով երկնակչ
Հեռանում են, կարծես, իրենց նուրբ երազին։
Ես կանգնած եմ այդպես մատաղանջ ու մենակ.
Շուրջս լուռ և տխուր է աշխարհ.
— Իսկ հեռուն, մեզի մեջ, կա մի լո՞ւյս, մի կրա՞կ.
— Արդյոք շո՞ւտ կը ծագի առավո՞տն, արեգակ...

* * *

Ես չեմ կարող դնալ ճամբեն ձեր սիրած.
— Ձեր նպատակն օտա՞ր է միշտ ինձ համար։
Ես չեմ կարող կարդալ գիրքը ձեր գրած,
— Ձեր սիրտը չա՞ր, իսկ ձեր կյանքը սոսկ-բաղա՞ր...
Ձեզ միատեղ ես չեմ քաշի կյանքի լուծն.
— Դուք աշխարհից շա՞հ եք ուզում փոքրոգի՞
Մեր գործերը բաժանված են շա՞տ վաղուց,
Օտա՞ր է ձեզ կյանքը սիրտ և երգի՞։
Ձեր կուռքերին երկրպագել չեմ կարող.
— Դուք սովոր եք խարազանին և բռունցքին նողկալի՞.
Իսկ իմ հոգին կարոտ է միշտ բարձունքների լուսաշող.
Ես չեմ գնա ուղիներով դատապարտված Անցյալի՞...
Թո՞ղ որ լինեմ ես իմ ճամբին միշտ միայն,
Թո՞ղ որ բախտը երկրե երկիր ինձ նետի։
— Բայց հետո՞ւ չէ. մի օր կը գա դատաստան.
Եվ վատն ու լավը իրարից կը դատի՞...

* * *

Ծո՛վ է սիրտս մի աննման,
Խոր հուզմունք կա նրա մեջ.
Ձյուն ու կարկուտ, բուք ու բորան
Թափվում են միշտ նրա մեջ...
Նա անսասան բերդ է կարծես —
Թշնամու դեմը կանգնած.
Եվ տեղում են կարկուտի պես
Սրտիս վրա բյուր հարված։
— Ո՞վ է դրել հիմքը բերդի,
Ո՞վ է տերը հաղթական...
Ո՞վ է ջանում բերդը զավթի...
— Նա չիմացա՜ ոչ մի բան...

* * *

Սիրտս, կարծես, ավեր մի տուն,
— Շենքն ու շնորհքը վերա՞ն.
Կյանքը, ասես, անվերջ մի քո՞ն,
— Նա՞ է հիմքը գոյության։
Տունս մնաց աճյունի տակ,
Աղյուսն ու փայտը տարա՞ն.
Ձիրք ու ձգտումը ավերա՞կ,
— Գարուններս ո՞ւր կորան։
Մեր վիշտը միշտ քուն է բերում.
— Քո՞ւնն է կյանքը հավիտյան...
Ո՞վ է անվերջ սիրտս փորում,
— Ո՞մն այս խոր դերեզմանն...

* * *

Զո՜ւր եք լալիս Անցյալի փառքը հզոր.
Զո՜ւր ափսոսում գարունը անց, լուսավոր.
Զո՜ւր սպասում գալիքը նո՜ր, անսովոր, ·
— Կյանքը մե՜կ է, աշխարհը մե՜կ, գործը մե՜կ...
Եղածը կա և կը մնա նա անվերջ.
Մե՜կ է գործը հավերժության ծովի մեջ.
Եվ ոչ մի մաղ ավել-պակաս նրա մեջ...
— Կյանքը մե՜կ է, աշխարհը մե՜կ, գործը մե՜կ...
Ժամանակի արարքը սո՜ւտ, երևո՜ւյթ.
Անցյալը սուտ, գալիքը սուտ և անփույթ.
Աշխարհն ամբողջ ունի միայն մե՜կ բնույթ...
— Կյանքը մե՜կ է, աշխարհը մե՜կ, գործը մե՜կ...

* * *

Կյանքս, կարծես, արագահոս մի վտակ.
Խոխոջեցին ջրերը զո՞ւր և անցա՞ն։
Տիղմը պատել է վտակի խոր հատակն.
— Ջուրը անգո՞ւր, ջուրը փրփուր և դաժա՞ն...

Նա չի տեսնում իր ակունքը բնավին,
Նա չի՞ գնում նպատակի՞, մուրազի՞.
Տիղմի վրա հոսում է միշտ լալագին,
— Որ անորոշ իր ասելիքը ասի՞...

Օրերը իմ արագահոս մի առու —
Ջրերի պես խոխոջեցին ու անցա՞ն.
Տիղմով պատած ճանապարհը իմ հետո՞ւ,
— Սե՞ր ու կարոտ, լույս ու դարունը անցա՞ն...

ԻՄ ՈՐԴՈՒՆ, ՎԻԿՏՈՐԻՆ

Արտիս վերին բերքն ես դու, սրտիս խորին երգն ես դու.
Քո մեջն է լոկ երկունքը իմ, դու ապրում ես վերքը իմ.
Միրտդ անհագ, մեջը կրակ, որն այրում է խորքը իմ,—
Ինչ կա իմ մեջ, կա և քո մեջ, գործդ հզոր և ազդու,
— Դու, իմ որդյա՜կ, այս աշխարհում կարդում ես միշտ
գիրքը իմ.

Արևների և աստղերի հավերժական մասն ենք մենք.
Անդրաշխարհի և Արդարի անջնջելի դասն ենք մենք.
Այս կաճառի և հանճարի դեռ չը լսված սաղն ենք մենք,
— Դու ինձանից, ես քեզանից, ճանապարհը մեր հեռո՜ւ,
Ես մի աղբյուր, դու մեջը ջո՜ւր, նոր խոհերի դասն ենք մենք։

Երբ հոգածին այս տունը իմ քանդվի մի օր և վերանա,
Եվ սիրտը իմ թեավորված՝ աստղերի հետ միանա,
Գործս ավյուն, փորձս անհուն — զուր, անպտուղ չի մնա,
Այլ քո սրտում միշտ անտրտում արևի պես կը շողա.
— Անդրաշխարհի և Արդարի դեռ չլսված սաղն ենք մենք։

Աստղերի պես միշտ վե՜ր ու վեռ՝ ես քո մեջն եմ, դու իմ
մեջ.
Իմ հոգևոր հուզմունքն է խոր, որ պիտ այրի քեզ անվերջ.
Միտքդ հզոր և անսովոր՝ սավառնում է դեպ աստղեր.

Սրտիս վերի ակունքների միակ հույսն ես լուսաբեր՝
Մեր սիրտը հե՞ք, մեր ջանքը մե՞կ, ես քո մեջն եմ, դու՝ իմ մեջ։

Տիեզերքն ամբողջ, կյանքը բոզբոշ՝ միայն մարդիկ առարկա,
Սիրտդ մի ծով, ինքդ կորով, արևն, աստղեր քեզ վկա.
Ժամանակի գնացքի մեջ քո թռիչքին, քո մտքերին վերջ չի կա.
— Աշխարհն ամբողջ քո սրտի մեջ, բերքդ համայն ու հսկա,—
— Մենք անբաժան միշտ իրարից, ես քո՞ մեջն եմ, դու՝ իմ մեջ...

* * *

Բոլոր գետերը հոսում են դեպի ծով
— Ջուրը անշատի, իսկ նա անատի,— չի լեցվում։
Բոլոր դատերը բերում են սրտին հով,
— Իսկ նա ծարա՞վ, խոր կարոտից չի բացվում։
Հողմը անվերջ ամպ է քշում երկնքից,
Բայց ամպը կա՞, ծովին վկա չի պակասում...
Մահը անվերջ կյանք է առնում մեր բնից,
— Բայց զարունը սրտումը կա՞, չի՞ պակասում։
Բոլոր վեհերը այս կյանքի դեպի ինձ,
Բոլոր գետերը ափերքի դեպի ինձ.
— Եղած, չեղածը հոսում է սրտիս մեջ,
Իսկ նա, անհագ, հա՞ցց է տալիս էլի ինձ։
Անցքերը բյուր ապրում է լուռ իմ հոգին,
Երկինքը խա՞ր, արևը հա՞ր՝ իմ հոգին.
— Ցուրտն ու ձմեռ, զարունն ու սա՞ր նրա մեջ,
Բայց էլի ճիշտ ծարա՞վ է միշտ իմ հոգին...

* * *

Միրաս պարտեզ մի երկնատես,
Մեջը անթի՜վ ծաղիկներ։
Միրաս, կարծես, մի մե՜ծ հանդես,
— Մեջը խնճույք, խունկ ու սեր։
Պարտեզի մեջ ջուր է հոսում.
Ծաղիկները կը շողան.
— Իմ բնջարած բերքն է բաղում,
Տերև ու թուփ կը խաղա՜ն։
Հանդեսի մեջ՝ բարձր ամբիոնից
Միտքս քարո՜զ է ասում.
Մեջլիսի մեջ՝ դարուններից
Միրաս հեքիա՜թ է լսում։

* * *

Երազումս Գանդեռ գետի ափն հասա,
Դեքիրների հոգեզրույցը տեսա։
Երբ նրանցից մեկն ինձ այնտեղ մոտեցավ,
— Ասի.— «Կարդա՛ ճակտիս գիրը և ասա՛»։
Խոր հայացքը նա սևեռեց աչքիս մեջ.
Ժի՜ր ու հզոր նա գեղերից սրտիս մեջ,
Ապա կամաց նա ինձ ասաց սրտացավ.
— «Աշխարհը ողջ գրված է քո սրտի մեջ»։
Նրա հնչյուններից կախարդված,
Ես նայեցի սրտիս ներսը զարդարված.
— Եղած-չեղածը՝ տիեզերքում տարածված,
Մեր ու ԵՄԵՐ, անմահ երա՜ղ ու ասուված
Լույսի նման գրված տեսա սրտիս մեջ։
— Ինչ կա՜, չը կա մեր շուրջը չար և բարի,
Ինչ եղել է և կը լինի կյանքի մեջ,
Գրված է միշտ, գրված է ճիշտ հոդուս մեջ...
— Սրտումս կա ողջ պատմությունն աշխարհի...

* * *

Երկու ծանր լուծ են դրել իմ վզին,
Երկու տարբեր ցեղեր են արել իմ արյան,
— Ամենօրյա հոգսը ունեցն և անդո՞ւր,
Եվ հոգեկան պաշտոնը իմ երկնային։
Ես մի կողմից դարձ եմ անում ու ջանում,
Որ շեն մնա այս տունը իմ նյութական։
Իսկ մյուս կողմից սիրուս հաշիվ է անում,
Որ իր պարտքը տա կոչումյան վարչության։
— Ի՞նչ են կցել երկու պաշտոնն իրար հետ.
Գեթ նրանցից մեկը լիներ իմ ուսին.
Այս նյութական հոգսերը զուր ու չնչին.
— Ո՞վ կեր մեկն պարտքը սիրո՞ արքության։

* * *

Նայի՞ր. ծաղիկը մարենու զգում է իր բողբոջը.
Կարմիր շողիկը վարդենու դիտի սիրո սուրբ կոչը.
Բույս ու ծաղիկ, լույս ու հովիկ լցված են խո՞ր կարոտով,
Աղմկարար վտակը իսկ զգում է իր խոխոջը:
Ողջ բնությունը միշտ հգի՝ շեն ու շողուն գարունքին
Հաղար նազով, հաղար սազով սպասո՞ւմ է իր բերքին:
Ցավերի մեջ սիրտը անվերջ կարո՞տ է միշտ իր երգին,
— Ո՞վ ստեղծեց այս անսովոր կյանքի հզոր բողբոջը...

Մութ գիշերին իր հուշերին հոգմը կարո՞տ է խոսում,
Իսկ անմեկին իր փշերին վարդը հեքիա՞թ է ասում...
Ասող ու արև, սեր ու բարև մեկ աղբյուրից են գալիս,
— Եթերի մեջ մեկը անվերջ իր սարքն ու կարգն է դասում,
Իմ սրտի մեջ խոր ապրումի հաղար ու մի աղբյո՞ւր կա,
Իմ գլխից դուրս կյանքի գաղանիքը գտնելու ճա՞ր չկա,
— Չէ՞ որ հոգին է բնության անցուդարձին վեհ վկա...
Կյանքի սաղմոսն է սրտիս մեջ,— միշտ ասում են ու
խոսում...

ՀԱՆԴԵՍ

Քաշ են տրել ջահերը հին
Առաստաղից տիեզերքի,
Եվ նայում է տերը վերին
Անցուդարձին խնճույքի։
Հանդեսի մեջ երկիրը մեր
Իր տեղն ունի պատվավոր
Եվ թնդում է անթիվ դարեր
Հանդեսը այդ անսովոր։

Գետն է հոսում ափալ-թափալ,
Ալմբիկում է նա անհամբեր և վազում.
— Ո՞ւմ կարոտն է իր մեջ անվերջ
Ջուրը այդպես խո՞ր փոփոխում։
Ծովն իր ծեսում դերզմայլ
Սալմոսներ է կարծես կարդում բարձրաձայն.
— Ո՞վ է հանձնել ավետարանը նրան,
Որ կարդում է այդքան արագ ու խոսում։

Ամպը թամբ է մրրիկներին ահավոր,
Որ կոնչում են ահեղ կռվի զորքը հին.
Եվ անցնում են բանակները երկնավոր
Մարտադաշտը երկնքի մեջ ահագին։
Սև զորքի մեջ զրահակիր ամպերի
Ջորապե՞տն է հանդես գալիս դայրացած.

Շանթը ձեռին, դուրս է քաշում սուրը թրի
Ու նետում է ահեղ կայծակ ու հարված։

Անտառը վեհ և վիթխարի,
Կուրծքը բանած աշխարհի,
Միտք է անում, խորհրդի մեջ խորասույզ.
— Ո՞ւմն է բերքը այսքան հզո՞ր ու բարի...
Եվ լսում ենք օր ու գիշեր ինքնաբույս
Բարբառը խոր և անսկիզբ բնության,
Բայց չգիտենք, ո՞վ է սարքել քաջարի
Հանդեսը մեծ, որ տեսում է հավիտյան...

* * *

Չէ՞ որ մի օր հոգուս բարձրեն դու անցար -
Իբրև մի ձայն հեռուների դյութական.
Սրտիս համար անհաս երազ դու դարձար,
— Մի նուրբ հեքիաթ կարոտների՞ ու դարնան։

Չէ՞ որ մի օր սրտիս գաղտնի խորանից
Իմ խնկաբույր բուրվառները հանեցիր։
Իսկ ասողներս իմ մաքերի երկնքից
Զո՞ւր, անպտո՞ւղ, այս աշխարհին ցրեցի՞ր...

Ինչպե՞ս եղավ... երազներս ո՞ւր կորան,
Ո՞ւր են, դո՛ւ, ձա՞յն հեռուների, դարունքի։
Ո՞ւր են ցրված իմ ասողները ինքնության,—
— Ա՜խ, գերված եմ ես այս բանտում, փոքրոգի՞...

ԽՈՐՔԵՐ ԵՎ ՆՈՐՔԵՐ

(ՈՒԹՆՅԱԿՆԵՐ)

522—7

* * *

Հաղար տարի նստեմ, գրեմ.
Հաղար տեսակ բանվոր բերեմ.
— Ինչ կա իմ մեջ՝ դուրս չեմ գրի,
Թեկուզ հազար ուսում ճարեմ...
Ինչ որ եղավ՝ աչքս տեսավ,
Եվ ինչ սրտիս խորքը հասավ,
— Հավերժաբար ծովը ընկավ,—
Ինչպե՞ս պիտի ծովը գրեմ...

* * *

Դուլլը ձեռին ծովի ափին ջրկիրը թող ջուր հանի.
Թող մեկի տեղ հազարը գա, ջուրը տանի ու ցանի...
— Անձրևն ու ձյունն, դեռևրն տնհուն միշտ էլ
Նրան կեր կտան,
Ծովը էլի ծով կմնա, վերջը երբեք չի հասնի...
Գիրը ձեռիս, բաց է հոգիս,— մեջը մաքեր ու երազ.
Օր ու գիշեր դուրս եմ գրում սրտիս ծովը երկնահաս:
— Անձրև ու ձյուն, դեռևրն տնհուն հա գալիս են
անպակաս,—
Քանի գրեմ, լիք կլինի, վերջը երբեք չի հասնի...

* * *

Կավից շինած մի կճուճ, ինքը թեթև անպառուչ
Կրակ կա մեջ մի անշեջ.— ի՞նչ կլինի նորա վերջ...
Կավից շինած մի մարմին, արյուն ու միս հոպածին,
— Մեջը կրակ մի անհագ, վառվում է միշտ մեր հոգին...
— Ի՞նչ ես արել, բնությունն. կճուճի մեջ ապարդյուն
Լցրել ես զուր անշեջ հուր, որ անակն իր այրի,
Մոխիր անի, կործանի միսն ու արյուն զգայուն,—
Ասե՛ք, անմիտ այս գործում ի՞նչ կա ապնիվ ու բարի...

* * *

Քանի հյուր ես այս աշխարհի գործի մեջ,
— Խնճույք ու սեր ուզածիդ պես վայելիր...
Կյանքի նամակը լա՞վ կարդա մինչև վերջ,
Իսկ հետո Թո՛ղ և սուս ու փուս հեռացիր...
Կռիվ, աղմուկ այստեղ բնավ միտք չունի.
Քո մեջ պահիր դու նամակի վատն ու լավ.
— Մե՛կ է, նրա հեղինակին չես դանի,—
Եվ չես կարող փոխել գրածը բնավ...

* * *

Թե հիրավի՝ հիշա է ասած,
— Աշխարհն ու մարդը բանական
Կավից կրից են շինված,
— Ո՞ւր է ապա բրուտը այն...
Թե ամեն ինչ նա է ծեփել
Միայն կավից ու կրից,
Ո՞վ կարող է կավը խառնել՝
Եվ աշխարհը կերտել նորից...

* * *

Մի սո՞ւրբ անուրջ, մի նո՞ւրբ երազ,—
Ինչպես անհայտ երկրի հեքիաթ,
Ինձ կախարդեց երգը անհաս —
— Սերն աստղերի հարազատ....
Մի նո՞ւրբ հոգի, մի սո՞ւրբ հոգի —
Դեպ վեր, երկինք սլանում...
Ասող ու արև, անմահ փառքի,—
— Ձեր բարձունքին տիրանա՞մ...

* * *

Ջրան է գալիս մեղմ ու լուռ,
Սիրտս է լալիս սեղմ ու դուռ...
Ո՞վ է ցանում երկնքից
Մերությունը այս անդուր։
Ի՞նչ են անիվն ու երկանք
Այդպես ազում ու մաղում.
Ո՞վ է գործում մեզ պատանք
Անգութ ու սուտ այս խաղում...

* * *

Սուտ մի՛ ասեք. ես ջահել չեմ ու անփորձ.
Նոր չեմ եկել այս աշխարհը աննման.
Նոր չէ կյանքս իբրև ձեռնարկ, իբրև գործ
— Ես եղել եմ գետերի մեջ բնության...
Եվ բյուր անգամ ես անցել եմ այս ուղին,
Ես եղել եմ արևի մեջ, աստղերի հետ միաժամ.
Անվախճա՞ն է, հավերժական իմ հոգին,—
— Ես եկել եմ, նորից կերթամ ու կգամ...

* * *

Չե՞ս տեսնում դու, որ ոչխարդ
Եկած ես մի խնճույքի.
— Հրճվանք ու սեր փառահեղ,
Ասող ու արև երկնքի...
Քանի հյուր ես, վայելի՛ր
Աշխարհի ճոխ սեղանից.
— Շուտով կասեն. «Հեռացի՛ր
Հարսանիքի դահլիճից»...

* * *

Մեկը նստեր իմ կողքին,
Պատմեր անվերջ հեքիաթներ.
Անցուդարձը մարդու հին,
Նրա անթիվ կարոտներ...
Հեքիաթներով լի հոգիս
Նոր ուղիներ մեկ դծեր.
— Անմահության ավետիս
Վառ աստղերին տարածե՛ր...

* * *

Վատ է շինած իմ բունը.
Հոգիս մեջը չի սթրում...
Կավ ու կէր է իմ տունը,
Արտիս բնավ չի տաղում...
Ձեռքիս լիներ մի միջոց՝
Կհիմնեի մատչիր —
Արտիս համար նոր ամրոց,
— Ինչի՞ են պետք կավն ու կիր։

* * *

Իմ վաղեմի ծանոթներից այսօր տեսա ես մեկին.
Կուչ էր եկած իր բեռի տակ և հեծում էր դառնագին.
— Ի՞նչ ես այդպես խոր տառապում, ախպե՜ր ջան.
— Ո՞ւր է նախկին եռանդը քո, ո՞ւր ես գնում անդյուսման...
«Տաշեղի պես քշում է ինձ վարար գետը էս կյանքի.
Ինչ կար, չկար, ես թաղեցի ջրերի մեջ հոգնակի....
Տես, գնում եմ դեպի ծովը՝, աշխարհն անհայտ և ահեղ»...
— Գնաս բարի, ես էլ կգամ... կտեսնվենք մենք այնտեղ...

* * *

Ո՞վ է անում ամեն օր
Ժամերգությունն աշխարհի
Մեզ կարդում են անսովոր
Գիրքը բարու և չարի...
Ասպետներն լուռ և լուսին
Ժամերգու են պարտադիր,
— Ինչ կա գրած մեր մասին
Սաղմոսներում բնագիր...

* * *

Արտումս կար մի քնար
Լարը ոսկի և հնչուն...
Ինչպես եղավ, մի հիմար
Թելը կտրեց դողդոջուն...
Էլ չեմ գտնում մի վարպետ,
Որ քնարս նորոգի...
— Ի՞նչ անեմ քեզ, ո՞վ տգետ,
Կտրեցիր թելն իմ կյանքի...

* * *

Սիրան իմ կռիվ անհանգիստ՝
Ճախրում է միշտ հեռուներ.
Մարեր ունեմ խենթ ու խիստ,
— Նյութում են նոր գարուններ...
Սահման չկա իմ սրտին,
Դոհ չէ բնավ աշխարհից.
Միշտ որոնող իմ հոգին
Բոլշևիկ է էն գլխից...

* * *

Այսօրն՝ իբրև մի տերև
Մառիցս ընկավ ու կորավ.
— Սի՛րտ իմ, սի՛րտ իմ խենթ ու խելվ,
Ի՞նչ ես փնտրում վատ ու լավ...
Օրդ, գ օրդ շուտ կանցնի—
Էլ չեն տեսնի դու արև.
Ով քեզ բերեց, կտանի...
— Ի՞նչ ես ճչում խենթ ու խելվ...

* * *

Կյանքը ունի մի գաղտնիք.
Նա գրված է մեր սրտում,
Ու չեն տեսնում խեղճ մարդիկ,
— Ի՞նչ կա հլոր այս քանում...
Գիրը գրված անծանոթ՝
Խորն է գրված սրտի մեջ.
Զարմանալի մի անոթ.
— Ինչե՞ր չկան նրա մեջ...

* * *

Հարուստ ու շեն տուն ունիմ՝
Մեջը ոսկի և բեհեզ.
Զգուշ անցիր, ոխերիմ,
Տունս իզուր չքանդես...
Միրաս տուն է խոր ու շեն,
Մեջը լույսեր ու խնդում.
— Դու սրտումս՝ անօրեն՝—
Իմ ցաւերն ես միշտ վառում...

* * *

Սուտ մի՛ ասեք. նյութը ունի սիրտ ու սեր.
— Հողմի առաջ միշտ խոսում են տերևներ,
Միշտ լսում է ծովը արթուն աստղերին,
Լեռները մերթ ապրում են սրտագին...
Սուտ մի՛ ասեք. կյանքը ունի խոր գաղտնիք,
Որ խոսում են անտառ ու բույս և ծաղիկ...
— Դիր հողմի դեմ դատարկ մի կուժ ու նայիր,
— Տե՛ս, թե ի՞նչ է նա հառաչում անխտիր...

* * *

Այսօր եկա քո թաղը,
— Ասի՝ դռնովդ անցնեմ.
Այսօր մտա քո բաղը,
— Ասի՝ սրտովդ անցնեմ...
Այստ, ո՞ւր է էն խաղը,
Որ դու ինձի խոստացար,
— Ո՞վ կմոռնա էս դաղը,
Որ խրեցիր ու անցար...

* * *

Աբիսներից դուրս նետեցին մեզ այս ափը դառնալի.
Կրակներից դուրս բռնեցին ախուր շափը աշխարհի.
Բայց մնացորդը կրակի դեռ կա մեր մեջ, մեր սրտում,
— Անցնում ենք մենք մի նոր աշխարհ, դեռ չլսված ու բարի:
Նյութերի մեջ դեռ չկերտված եռանդ էինք մենք մի օր,
Բույսերի մեջ դեռ չհարթված ավանդ էինք մի անդոր.
Վերջը դատվեց մութ աշխարհից մեր ճանապարհը սովոր,—
— Կենդանական շարժումի մեջ է գոյությունն հանճարի:

* * *

Դու սրտի՛ս սրտի մեջ, բույր իմ, միշտ տեղ ունես,
Իմ սրտի բերդի մեջ ցավից խոր գեղ ունես.
Երբ սոխակը երգի և իր վարդը գրկի,
— Դու սրտիս սրտի մեջ նոր կրակ կցանես...
Միշտ իբրև մի ոգի, իբրև լույս երկնքի,
Դու, իմ բույր, իմ կարոտը երգիր,
Դու ինձ հետ ես անվերջ, դու խոսում ես իմ մեջ,
— Դու սրտի՛ս սրտի մեջ՝ վարդ ու զարդ գարունքի...

* * *

Դու, անասուն, և դու, ով մարդ, ձեր մանկության օրերին
Եղբոր նման դնում էիք անհայտ, հեռու մեկ ուղի.
Միշտ հարազատ, միշտ իրար հետ, միշտ համակիր, անմեկին,
— Դուք հավասար ընկեր էիք ծառերի տակ այս թաղի...
Ինչպես եղավ, ձեր ուղիները հեռացան իրարից,
Մեկը ձեզնից մնաց իր հին դիրքերի մեջ անխոտան,
— Մյուս դարձավ բնության տեր, անցքերին տեր ու հսկիչ.
— Ինչո՞ւ հիմա էլ չեք հիշում օրերը ձեր մանկության...

* * *

Կանգնած էի գետի ափին, աչքս ընկավ էն կողմը,
Ճահիճներում կար մի շարժում... փչում, կանչում էր հողմը.
— Գոմեշն էր խեղճ կյանքը թողնում տանջանքի մեջ ահավոր,
Մինչև կոկորդ և դառնալի նրան պատել էր տիղմը...
Նայում էր ինձ գոմեշը հեզ ու բարի,
Եվ օգնության խոսք էր ուզում նա արի.
— Կարեկցություն, հասիր ցավին տկարի...
Գոմեշը խեղճ ու մահամերձ... փչում, կանչում էր հողմը...

* * *

Դու, իմ թոչո՞ւն, կապույտ թոչո՞ւն, ուր որ գնաս, ես քեզ հետ,
Ո՞վ իմ գարուն, վերին գարուն, դու միշտ անհաս,— ես քեզ հետ.
Ինչ որ կուզեն, թող ինձ ասեն, ես գնում եմ գեղի վեր,
Իմ գմայել ոսկի տեսիլ և լույս հավետ,— ես քեզ հետ...
Կանչում եմ միշտ. հա՞վ ու գարո՞ն... շրջում եմ միշտ սար ու ձոր,
Անցնում եմ. ես երկրի երկիր. հոգսեր չունեմ անցավոր:
Ասողները ինձ լուռ պահապան՝ ուղիներս անտավոր,—
— Դու, իմ թոչո՞ւն, ոսկի թոչո՞ւն, ուր որ գնաս, ես քեզ հետ...

* * *

Այսօր մոտ ծաղկոցը իմ, ինձ հետ եկար նաև դու,
Ասի՝ փնջեմ վարդերը իմ, ինձ հետ եկար նաև դու.
— Ծաղիկն ու վարդը թոշնեցին և իմ ձեռքում չորացան,
Այրեց նրանց քո երկնային հայացքը խոր ու ապդու...
Ասի՝ վերցնեմ քնարը իմ դյութական,
Քույր իմ, քեզի մի երգ հնչեմ անմոան...
— Իմ քնարին աչք արեցիր դու ապդու,
Եվ նա պայթեց, էլ նա չասաց ոչ մի բան...

* * *

Գիշերս անքուն, օրերս մռայլ,
— Մրրիկն է անվերջ սրտումս շրջում...
Երկիր Հայրենի, հեռավոր աշխարհ,
Ձեր խորքն է իմ մեջ հավիտյան հնչում...
Հեռու ասպերի ժպիտը անհուն,
Լռված երգի կարոտը իմ մեջ,
Ես չունեմ այստեղ ոչ ընկեր, ոչ տուն,—
— Դո՞ւ ես, նոր գարուն ինձ կանչում անվերջ...

* * *

Հասում են, խոսում են հողմերը հեռվից,
Թշում են, քաշում են ամպերը վերից...
Դաշտի մեջ, արտի մեջ սավերն է վազում,
— Սրտումս հին երգը հնչում է նորից...
Բադերը խոսում են, ջրերը ընկած,
Սողում է մրջյունը, իր սրտը գրկած,—
— Ընկեր իմ, աշխարհը, տե՛ս, լույս է լցված,
— Ընկեր իմ, եկ գարս գանք անմիտ այս ձորից...

* * *

Դու, հին կախարդ և միշտ ապատ բամբասանքս հզոր ծով,
— Միակ վկան դու ես երկրի՝ այն հեռավոր օրերից,
Երբ նա իբրև մի հրաբունդ՝ արևի պես անվրդով,
Կույս էր, մաքուր և բոցավառ՝ լույս էր ցրում իր միջից...
Իսկ երբ հիմա նա է՛լ չունի լույս ու կրակը վերին,
— Դու ես թակում ափունք երկրի, դու ես կանչում աստղերին,
— Դու ես հիշում օրերը վառ՝ լույսերի մեջ նորածին,
Ի՞նչ ես անվերջ դու ապմկում և միշտ հանում հառաչից...

* * *

Մեկը սրտիս ձայն է տալիս,— դու ես, դու,
— Ի՞նչ է հոգիս անվերջ լալիս,— դու ես, դու.
Բախտս խոսավ՝ ես չի գալիս, ինչ անեմ,
Ցավ ու անտառ վիշտ են լալիս.— դու ես, դու...
Մեկը ահա երգ է, երգում. խնկարկում,
— Ի՞նչ են կարդում այս հին կարդում ու բերքում,
Իրերի մեջ խորհուրդը կա անհերքում,—
— Ամեն մի բան ձայն է տալիս.— դու ես, դու...

* * *

Եղիր անշարժ. աչքերդ խուփ, լեզուդ փակ,
— Տե՞ս, նման չես դու հասարակ մի մարմնի,
Որ միշտ անխոս ընկած է քո ոտքի տակ,
Եվ քեզ իր միտքը ասելու ճար չունի...
Եթե քո մեջ՝ դռնեդդ փակ, կյանքը կա,
Թե սիրտդ իսկ այդ վիճակում կխոսկա,
— Դու ի՞նչ գիտես,— երկրի մեջ, քարի մեջ
Կամ թե ամեն մի բանի մեջ կյանք չկա...

* * *

Դուք ի՞նչ գիտեք,— ես վերևից չեմ եկած,
Դուք ի՞նչ գիտեք, ես արևից չեմ պոկած,
— Ինչո՞ւ սիրտս ճգտում է միշտ դեպի վեր
— Ես մի հոգի՝ նյութեն հաղուստ եմ հագած...
Երբ ժամը կա, մաշվի հագուստս նյութի,
Եվ մերկանա աղբյուրը իմ կարոտի.
Ես ձեզ կասեմ, ի՞նչ կա խորքը իմ սրտի...
— Դուք ի՞նչ գիտեք, ես նթերից չեմ եկած...

* * *

Մարդը եկած է վերևից մի ուխտի,
Միրաբ ընկած է արևից մի բախտի.
— Իմ մեջ անվերջ կա մի կրակ, մի կռիվ,
Միայն կրակն է, որ ցավին կհաղթի...
Խարույկի պես, որ վառվում է ու հանգչում,
Պատրույգի պես, որ այրվում է ու կորչում.
Կյանքը կրակ է մարդու մեջ մի անրավ,
— Նա մոմի պես վառվում է միշտ ու հանգչում...

* * *

Ի՞նչ ես կանգնել դու, ուխտավոր, քո ճամբին.
Տե՛ս, հավքերը խոսք ասացին ու անցան.
Գետերը հորդ համբույր տվին ափերին
Ու հեռացան դեպի ծովը անսահման...
Ի՞նչ ես կանգնել, խոսքդ ասա, հեռացի՛ր,
Հեռու է շատ քո ճանապարհը մթին...
Չրերի պես համբույրդ տուր և անցի՛ր.
— Քեզ հեռուները կոչանեն սրտագին...

* * *

Ինչի՞ս է ձեր հարստությունը ունայն.
Ինչի՞ս է ձեր խնձույքն ու ձեր կամ գարուն.
— Հուզում է ինձ հավերժությունը միայն,
Գնում եմ ես իմ ճանապարհը անհուն...
Ինչի՞ս է պետք ձեր լաց ու կոծը անմիտ,
— Կյանքը իմ մեջ իր խորհուրդն է միշտ մտնում.
Ինչի՞ս է պետք այս վերուզիրը կոպիտ.—
— Նոր գոյության մեջն է սիրտս անց կենում...

* * *

Կանգնած եմ ես անցվորի պես աշխարհների կամուրջին.
— Խոր երթերից ձայն է գալիս իմ նրբաբար ականջին...
Ողջ բնությունը մի համերգ՝ հավերժական կարգի մեջ,
— Որ հավիտյան թև է տալիս իմ երկնավոր անուրջին...
Արարչի պես, տեսնում եմ ես, կյանքը մեկ է տիեզերքում.
Եվ ինքնատես՝ կարդում եմ ես սաղմոսը հին այս գրքում.
— Ճշմարտությունը հոսում է իրերի մեջ անհերքում.
Նա հավիտյան թև է տալիս իմ չլսված անուրջին..

* * *

Այդպեսանը չի հասկանում միայը ընտիր իր բերքի.
— Թե հասկանար, էլ չէր լինի դաղանիքը խոր այս կյանքի...
Գիտնականը չի հասկանում ամենապոր փարձը իր,—
— Թե հասկանար, էլ չէր լինի գործը անմիտ բերմունքի...
Եվ ոչ մի մարդ ես չտեսա, որ իր կարոտը տանի,
Եվ ոչ մի վարդ ես չտեսա, որ այս հովտում զուր լինի.
Եվ ոչ մի տեղ ես չհասա, որ բնավին լույս լինի,—
— Չէ՞, երդիչը չի՛ հասկանում միայը հզոր իր երգի...

* * *

Տեսե՛ք, ահա զնդանը կա՝ դարբնոցի մեջ գործ անող,
Տեսե՛ք, ահա գրքանը կա իր բնի մեջ թռչուն անող...
— Դուք չգիտե՛ք, վաթանը կա ասպզերի մեջ մեզ համար,—
Տեսե՛ք, ահա, դուքանը կա սրաների մեջ վար անող...
Ով չտեսնի զնդանը հուր՝ գործը նրա միշտ խափան,
Ով չտեսնի դուքանը իր՝ սրաը նրա միշտ խոպան...
— Ով չտեսնի վաթանը յուր, նա չի տեսնի ոչ մի բան,
— Տեսե՛ք, վերին դուքանը կա իմ սրտի մեջ վար անող..

* * *

Այս դիշեր ես, ասես, մի թռչուն՝
Ճախրեցի դեպի վեր, — երկնքով.
Իսկ հեռվից ձայներ ու հնչյուն
Ինձ կանչում էին նուրբ արինգով...
— Այս դիշեր ես հեռուն ճախրեցի:
Արևից, աստղերից էլ այն կողմ.
Եվ մի ձայն խնդության ու անցյալ
Ինձ կանչում էր անվերջ դեպ իր կողմ...

* * *

Ես չեմ կարող շհավատալ արևին.
Քանի նա է կյանքը պատում համակիր.
Ես չեմ կարող դրախ չտալ աստղերին,
— Քանի նրանք ծնել են հոխ այս երկիր...
Բայց թե ինչ կա արևի մեջ, աստղերում,
Ով է կարդել նրանց դիրքը անսասան.
Ով է տերը շարժումներին երկնքում,—
— Մինչև այսօր ես չիմացա ոչ մի բան...

* * *

Զուր մի կանգնի վարար գետի կամուրջին,
Զուրը ոչինչ քեզ իր մասին չի ասի
Տրված կյանքի խորհրդավոր անուրջին՝
— Նա ոչ մի բան իր գործերից չի խոսի...
Զուր մի կանգնի ծովի ափին խորիմաց,
Նա գործ ունի,— դիրք է գաղանի նա կարդում...
Քանի կուզես, աղերս արա արտաքաց,
— Քեզ չի ասի, ինչ կա հղոր իր սրտում...

* * *

Դեռ շատ անգամ պիտի դնաս, էլի դաս,
Դեռ շատ անգամ անհայտը քեզ կտանջի.
Վերջը էլի կյանքին կարոտ կմնաս,
Նրա կարոտը սրտի մեջ չի հանգչի...
Դեռ շատ անգամ աստղերը քեզ կժպտան,
Հեռուներից հողմը քեզ լուր կբերի.
Հավքերը քեզ հարցում կտան ու կերթան...
— Բայց կարոտը քո սրտի մեջ չի մարի...

* * *

Իրերը, տես, ուր են գնում, շուտ հասիր.
Ճամբիդ մասին հարցում արա և խոսիր...
Ժամանակը, տես, իր գործում չի կանգնի,
— Մի դանդաղիր, առ բեռներդ ու վազիր...
Անցքերը, տես, խուր են գնում անդադար,
Մոքերդ զուր խորթ են մնում և օտար,
Քեզ հատկապես էլ ընդունող չի լինի,
— Հասիր շուտով, դեթ մի ճար տես քեզ համար...

* * *

Լավ ու վատի ընդհարումը լալիս ես դու.
Անիրավին միշտ ներումը տալիս ես դու.
— Երկնային սե՞ր, սրտի բոլոր սև օրերին
Նրբոր նման միշտ օգնության գալիս ես դո՞ւ...
Դո՛ւ ես զգում իրերի երթն անխափեր,
Դո՛ւ ես սգում մահու անմիտ վերուդիր,—
Կյանքի բոլոր դավառներում անտրտում
Մեր սրտերին դու ես միակ համակիր...

522—8

* * *

Գիշերն եկավ, գիշերը խոր, վայրենի.
— Հաղար ու մի մութ ու մոլի շշուկով,
— Հաղար ու մի գաղանի ձևով, արարքով,
Նա ներս խուժեց իմ սրտի մեջ թալանի...
Եվ զայրացած, և զարմացած այս բանից՝
Սիրտս դիմեց իր լուսավոր աստղերին,
Սիրտս վառեց իր հին ջահերը կրկին,
— Որ հարամին բան չտանի իմ տանից...

* * *

Հեռվից մի խոր ձայն է գալիս, դո՞ւ ես, դո՞ւ,
Կյանքը, տեսնք, լայն է գալիս, դո՞ւ ես, դո՞ւ.
— Ճշմարտություն, թե չլիներ զործդ ժիր,
Աշխարհն այսպես չէր ընթանա լուսատու...
Լուռ աստղերից լույս է գալիս, դո՞ւ ես, դո՞ւ,
Խոր եթերից բույս է գալիս, դո՞ւ ես, դո՞ւ.
— Գեղեցկություն, թե չլիներ փարձդ ժիր,
Աշխարհն այսպես չէր ընթանա կենսատու...

* * *

Դեռ չծաղկած՝ բայց լի բերք է իմ այգին,
Դեռ չլսված մի համերգ է իմ հոգին.
— Երգը մեկ է և ծաղկանց մեջ, և իմ մեջ,
Կեղծ և սուտ են հաղուստներն այս իմ հոգին...
Իմ պարտեզում ծաղիկներս նրբածամ
Մերթ խոսում են իրենց երազը փարթամ,
Ինձ է հասնում նրանց խոսքը ամեն ժամ...
— Խոսքը մեկ է և նրանց մեջ, և իմ մեջ...

* * *

Ասա, կախարդ և անաղարտ՝ բազմալեզու օվկիանոս,
Դու լա՞վ դիտես, ինչ է անցել երկրի վրա դարեդար,
Ինչ կա պահած քո սրտի մեջ՝ անդունդներումդ անխոս
— Չէ՞ որ քեզ հետ, աշխարհդ առաջ կյանքն է ծնվել
բազմալար...
Ինչ ես անվերջ զայրույթի մեջ՝ ձեռքերդ վեր կարկառած
Միշտ աղմկում, հորձանք նետում դեպի երկինք ու աստված.
Ո՞վ է, ասա, քեզ խոր հուզում, ումն ես կանչում դառնացած,
Ո՞վ էր, ասա, այս գոյության հիմքը դրեց քաջաբար

* * *

Անթիվ բերքի երկու այգի ես ունեմ,
— Մեկը դրսև, մեկը իմ մեջ ես ունեմ.
Դրսի այգին ծաղիկներով է լցված,
Ներսի այգին միշտ երկնաչք ես ունեմ...
Օր ու գիշեր երկու այգին իրար կից
Խոսք են խոսում կախարդական ու անբիծ.
Երկուսն էլ խոր, խորհրդավոր մի երկրից...
— Մեկը ներկա, մյուսը գալիք ես ունեմ։

* * *

Ես իմ ամեն քայլափոխին հարց եմ տալիս ինձ ու ինձ.
— Ինչու այսքան տոկուն եմ ես,— ոչ երկաթ եմ, ոչ պղինձ...
Ո՞վ է քաշում ինձ աջ ու ձախ, ո՞վ է մաշում լիցքը լախ,
Ի՞նչ են զգում այս վիճակում ծառ ու ծաղիկ, սունկ ու սինձ։
Եվ ամեն մի քայլափոխին ցավ է գալիս իմ գլխին.
Քանի այսպես հարկ պիտի տամ էս աշխարհին ու խալխին,
Կա՞ իմ սրտում մի ինքնություն, թե՞ կամք ազատ ես չունիմ
Գուցե անմիտ մի պարտք է սա, որ տալիս եմ ես բախտին.

* * *

Միայն այսօր աչքիս առաջ մի սրիկա ինքնահաճ
Սուր տապարի մեկ հարվածով կտրեց վիզը մի կովի.
Խեղճը անղոր ու զառնադեմ դեռին ընկավ շարատանջ.
Նա թավալված՝ ճիչ արձակեց — ճիչը անհուն իր ցավի...
Ես մոտեցա. արյունաքամ ինձ էր նայում նա տխուր,
Նրա մարած աչքերի մեջ կար թախանձանք մի խորին.
— «Ի՞նչ արեցի, որ կտրեցիք իմ կյանքի թելը իղուր,
Եվ ո՞վ կը տա իմ արյունի պատասխանը աշխարհին».

* * *

Վարդը տարան, արտը խոպան,— ի՞նչ ունիս դու անելիք,
Ջարդը տարան, սիրտը յաման — ի՞նչ ունիս դու անելիք.
— Լավ և վատի պայքարն հղոր, սևի — խևի տոմարը խոր,—
Քարվանն եկավ և շուտ անցավ, ի՞նչ ունիս դու անելիք։
Ձեռքեր ունես, մեկնիր ու տես, ի՞նչ կը տանես այստեղից,
Թերքեր ունես, ճգնիր ու տես, ի՞նչ կը հանես այս բաղից
Աչքեր ունես, նայիր ու տես, քեզ ինչ կը տան այս թաղից...
— Շուրջդ ապրյուր, տրտունջն իղուր,— ի՞նչ ունիս դու
անելիք։

* * *

Աստղերի մեջ, արևի մեջ մահ չը կա,
— Էլ ո՞րտեղից բուն է դրել նա իմ մեջ.
Թթերի մեջ, նյութերի մեջ ահ չը կա,
— Էլ ո՞րտեղից տուն է դրել նա իմ մեջ...
Երկինք, չէ՞ որ տերը դու ես այս բանի.
Թե չը լիներ սերը իմ մեջ կենդանի,
Թե չը բաներ հույսը վերին դիվանի,
— Զուր չէր լինի նաև մահը սրտի մեջ...

* * *

Ամեն անգամ այս աշխարհի կիրքը իմ դեմ ելնելիս՝
Ես նայում եմ հավերժության լույսերով լի երկնքին.
Ամեն անգամ այս բաղարի բարքը դժխեմ դիտելիս՝
Ես նայում եմ լույս արևին, և խնդում է իմ հոգին...
Տիեզերք, չէ՞ որ հզոր ես դու, ինչպես մահ.
Դու ես վերև կանգնել արև, հավերժության իրրև գահ.
Անհուն ես դու և անողոք, մահվան նման և ագահ,—
— Նոր գոյության նոր ճամփեքին կանչում է քեզ իմ հոգին...

* * *

Հազար-հազար հարցեր ունիմ, և ոչ մեկին խոր պատասխան
դեռ չկա.
Հազար-հազար փորձեր ունիմ, և ոչ մեկին նոր դատաստան
. դեռ չկա.
Եվ հարց ու փորձ, և պաշտամունք խոր կարոտից են գալիս
— Հազար հազար գործեր ունիմ, և ոչ մեկին նուրբ
հասկացող դեռ չկա...
Քանի իմ խոր ուղեղի մեջ վառվում է սուրբ մի կրակ,
Քանի սրտիս կանթեղի մեջ այրվում է նուրբ մի ճրագ.
Քանի այստեղ դեռ չի տարել կյանքը վերջին հաղթանակ.
— Հարցերը կան, փորձերը կան,— բայց պատասխան
դեռ չկա...

* * *

Կես դիշերին իմ հուշերին ձայն եմ տալիս,— ե՛ս եկեք,
Եթերի մեջ լուռ աստղերին հարց եմ տալիս ես անվերջ.
Եվ զարթնում են անհուն քնից հուշերը իմ սրտարեկ,
Եվ նայում են աստղերը ինձ և խոսք ասում իրար մեջ,—
— «Սա՞ է միթե անդրանիկը արարչության գործերում,
Սա՞ է միթե երջանիկը ճշմարտության փորձերում,
Էլ ինչո՞ւ է հարցեր տալիս մեզ մեր վերին բարձրերում»—
Եվ աստղերի խոսքը խորին թնդում է իմ սրտի մեջ...

* * *

Սովը, տեսեք, սահման ունի — մի հեռավոր աղոտ ափ,
Սովը չէ՝ որ դարման ունի և անսովոր ու խոր շափ.
Հովը նաև պայման ունի — հեռուն քաշող հզոր կապ,—
— Իսկ իմ սիրտը սահման չունի, պայման չունի,— չունի
շափ...
Եթե սիրտս ծովը ընկնի, ծովը հոգի կը դառնա,
Եթե սիրտս սովը ընկնի, սովը ճամբեն կը մոռնա,
Եթե սիրտս հովը ընկնի, հովը ոգի կդառնա,—
— Ա՜խ, իմ սիրտը պայման չունի, դարման չունի,— չունի
ափ...

* * *

Սիրտը չէ՝ որ անմահության գիրք է միայն մարդի մեջ.
— Թե կարող ես, կարդա ու տես, ի՞նչ կա շարած նրա մեջ։
Սիրտը չէ՝ որ աղատության գիրք է միայն արտի մեջ...
— Թե կարող ես, անցիր ու տես, ի՞նչ է բուսնում նրա մեջ.
Ոչ մի արև, ոչ մի բարև զարդը չունի իմ սրտի,
Ոչ մի հանդես, ոչ մի պարտեզ վարդը չունի իմ սրտի.
Ոչ մի հավես, հասրաթի պես, դարդը չունի իմ սրտի,—
— Սիրտը չէ՞ որ նոր հայտնության բերք է միայն մարդի
մեջ...

* * *

Չէ՞ որ հոգիս մի լուսարար և սրբարար փեղկ ունի...
Եվ շատ անգամ բա՜ց եմ անում, որ ներս նայեմ ես այնտեղ.
Ավա՜ղ, հոգիս հաղար-հաղար ծանր ու ծավալ մեղք ունի.
Ես շատ անգամ լաց եմ անում, որ ճար գտնեմ,— դեթ մի
դեղ։
Իսկ խիղճը իմ տես վայրի մի գազան,
Ճանկեր ունի, և կրծում է ներսը իմ.
Թակարդի պես, կախարդի պես — իմ սրտի մեջ անտասան,—
Նա գործում է և սանձում է մեղքերով լի ետը իմ...

* * *

Անգամ քարը, երկաթն ու սուր ձայն ունեն,
Անգամ սարը, ջրվեժն ու ջուր ձայն ունեն։
Իսկը ձայն է շարժումի մեջ, խոսքը ձայն է և իմ մեջ,
— Ասես լքում, իրենց խորքում իրերը միշտ ձայն ունեն...
Գործը ձայն է, որ հնչում է կյանքի խորին երկունքից,
Փորձը ձայն է, որ կանչում է իրերի հին բերմունքից.
— Իսկության մեջ իրերն ունեն միշտ անվախճան ձև ու ձայն,
Ձայնը գալիս է բնության անջնջելի ակունքից։

* * *

Ես խոսք ունիմ,— նրա աղբյուրը անհատակ է իմ մեջ,
Ես սոսկում եմ,— սիրո սև թուրը անխորտակ է իմ մեջ։
Եվ խոսքը իմ, և սոսկումն իմ — մեկ արմատից, մեկ բնից,
— Ո՞վ է այսպես իմ սրտի մեջ կապել ոսկի ելևէջ...
Եվ իմ խոսքը ձայն է միայն, ինչպես ձայները նյութի,
Եվ սոսկումն իմ ձայն է միայն մի հեռավոր հասույթի.
Ձայնս հնչյուն, խոսքս ողջույն մի անծանոթ իսկության՝
— Ես եկել եմ խոսքը ասեմ հավերժական բնույթի։

* * *

Դու ամեն օր, ասես վկա, ման ես գալիս, այ լուսին,
Եվ մեր թաղում, ինչ կա, չկա, դու տեսնում ես անխտիր.—
— Մեղք ու կրակ, ցավ ու ճարակ, արյուն, ավեր և ոճիր...
Ինչո՞ւ երբեք չես բողոքում երկնքի դեմ մեր մասին...
Եթե իրավ քեզ չի հուզում ախուր բախտը քո եղբոր,
Էլ ինչո՞ւ ես համբի նման դու ման գալիս մեր գլխին,
Ո՞ւր է, ասա, քո խոր խիղճը, քո նամուսը ինքնազոր.
— Թե հարց լինի երկրի մասին, ի՞նչ պիտ ասես դու խալխին...

* * *

Երազումս՝ օձն ու գառը և առյուծ
Դեմս ելան և ցույց արին ինձ անսովոր մի հանդույց,—
Օձը ասաց. բաց քո կուրծքը, ներս մտնիմ,
Քո սրտումն է բունը իմ։
Գառը ասաց. ես միշտ քո մեջ դուրս ունիմ,
Քո կրծքումն է տունը իմ...
Առյուծն ասաց. ես քո սիրտը լավ գիտեմ,
Միշտ այնտեղ է բունը իմ...

* * *

Ծովի ափին, ավազի մեջ շոր գլուխս վեր դնիմ
Եվ ջրերի աղմուկի հետ գուրգուրեմ սուրբ երազնե՛ր.
Թող դա հողմը շշնջալեն և խոսք ասի իմ սրտին,
Եվ շորս կողմս՝ մութ դիշերին թող զիլ կանչեն հովազներ...
Երազի մեջ, ծովի առջև — մեկ բուռ ավազ իմ ձեռքին
Ես կը նայեմ դեպ արևելք, ես կը դառնամ երկնքին,
Եվ կը տեսնի, և կը տեսնի թևավորված իմ հոգին,
— Որ նրանց պես ես էլ ունիմ հավերժ ու նո՛ր երազներ...

* * *

Երազիս մեջ, լի կարոտով, կանչում էի քեզ հեռվից,
Եվ դու եկար ինձ ասելու խոսքը հեռու աշխարհի.
Եվ քո դեմքին ամպ էր խաղում,— դառնության ամպ և թախիծ,
— Ես լսեցի քո տրտունջը, ասես աղոթքը հեռավոր հանճարի...
Դու ասացիր.— արհամարհիր աշխարհի վիշտը սովոր,
Նայիր անվախ, մահվան դահիճ աչքերին,
Երբ խայթի քեզ օձը կյանքի թունավոր,
Դու մահացիր ծիծաղի մեջ՝— ժպիտը վառ քո դեմքին...

* * *

Տես, թռչում են կարապները, կարապները իմ վերև,
Եվ իմ սիրտը թռչուն է ոսկ,— նա էլ ունի մի արև...
Տես, հնչում են կարապները նոր աշխարհի երգ ու սեր,
— Սիրտ իմ, նայիր, քեզ են տալիս աստղերի սերն ու բարև...
Պտույտ արեք գլխիս վերև, ճերմակ ու վառ թռչուններ,
Եվ դուք բերեք դուք իմ սրտին և նոր սիրո հնչյուններ...
Եվ թող իմ մեջ միշտ որոտան անհայտ կյանքի ողջույններ...
Կարապնե՞ր, կարապնե՞ր երգում են սեր ու արև...

* * *

Բաց եմ անում ես վառարանը վառված,
Եվ նրա մեջ կրակն ասես նոր ոսկի...
Բաց եմ անում սրտիս խորանը լարված,
Ցնորքն ու սերը նրա մեջ հուզում են ծովը խոսքի...
Չէ՞ որ հույս է ոսկի կրակը հմայուն աշխարհին.
Լույս է միայն խոսքի որակը լվարթուն տաճարին.
Երբ կա կրակ, կա և ավյուն,— խոսքն է պակաս հանճարին,
Իսկ աշխարհը կարոտ է միշտ հանճարամիտ նոր խոսքի...

* * *

Քուն մտնելիս ես գլխիս տակ բարձ ունիմ,
Տուն մտնելիս՝ միշտ իմ առջև դարձ ունիմ,
Արևը վառ, կյանքն է պայծառ իմ շուրջը,
Բայց էլի միշտ միտք անելիս՝ ես իմ սրտում հարց ունիմ,—
— Ե՞րբ կլինի դերս այստեղ անպայման,
Երբ կը բանի սիրտս այստեղ անգյուման.
Թող վերանա կյանքի կասկածը դաժան,—
— Միշտ իմ սրտում կյանքի հեռու Արշալույսի հարցն ունեմ։

* * *

Փողոցները, փողոցները քար ու քաֆուր քաղաքի
Ման եմ գալիս և ինձ ու ինձ միտք անում,
— Սղոցնե՞ր, սղոցնե՞ր իմ սրտի մեջ հոգնակի
Զայն են տալիս, կարծես օձերը բնում...
Ի՞նչ են այսպես փողոցները ձգված տեղին ու տաղտուկ,
Իսկ նրանց մեջ դողոցները կյանք են մաշում խելագարկ.
Ո՞վ է այսպես նեղուցները շարել մեր դեմը հատուկ.
— Խիղճ իմ, դու ես սղոցներով իմ մեջ այդպես գործ
անում...

* * *

Ծաղիկն ու վարդ մեղմ ու զվարթ կանչում են քեզ, շո՞ւտ արի.
Լեռները սեգ, աղբյուրը հեգ հնչում են, տե՛ս, շուտ արի։
Քարերն անգամ խորհուրդ ունեն, սպասում են անհամբեր,
Ջրերն անգամ հապուրդ ունեն, շնչում են վեհ ու բարի։
Թե սիրտ ունիս և սիրում ես փարթամ ու լայն այս աշխարհ,
Թե, երգ ունիս ու երգում ես աստղ ու արևը պայծառ,
Տե՛ս, ամեն ինչ այս հարկի տակ կյանք է շնչում անսպառ,
Անտառ ու ծով լի կարոտով կանչում են քեզ, շո՞ւտ արի...

* * *

Մի՛ մոռնա, մի՛ մոռնա, այստեղ միայն հյուր ես դու,
Մի՛ դառնա, շատ անելիք ունես դու...
Տեսածիդ, լսածիդ երբեք դերի չը մնաս,
— Արևի՞ն, աստղերի՞ն դեռ ասելիք ունես դու...
Մի՛ հուզվիր, մի՛ սուզվիր մաքերի մեջ հուսահատ,
Տե՛ս, ծաղիկն ու հովիկ քեզ են տալիս ամանաթ.
Ե՛վ թռչուն, և՛ մրջյուն չունեն հոգսեր ու գանգատ...
— Աստղերի՞ն, արևի՞ն դեռ ասելիք ունես դու...

* * *

Մահը սուտ է, ահը փուչ է,— նրանց առջև չը դողաս
Բահը բութ է, դահը սուտ է, նրանց առջև չը սողաս.
Սերը երաշ, խերը տնաշ, նոր ճանապարհ չես դտնի,
Ոսկին ցեց է — ծովը մեծ է, մեջը իղուր չը լողաս...
Այգի ունես, բեջարը տես,— երկրե երկիր մի շրջի,
Հոգի ունես, տաճարդ տես, զուր անխտիր մի կանչի.
Օրդ կը գա, քո դրածը բախտը բնավ կը ջնջի,—
Սի՜րտ ոսկեշող, հագուրդդ թող, թե նոր դարուն կտենչաս։

* * *

Զանգերն են կանչում հեռու տաճարի բարձր գմբեթից.
Դանգերն են տենչում այն նոր աշխարհի կյանքը կախարդուն.
Սրտերն են խորշում մեղքի, ավերի անմիտ աղեռից,
— Այս ո՞վ է դարշում... և ոմն է հիշում դիշերը արթուն...
Զանգերը քաշե՜ք, դանգերը մաշեք, որ կյանքը դառնա
Դեպ եթերանիստ աստղերը պայծառ.
Ձանքերը հիշե՛ք, հանքերը նշեք սիրո ու դարնան,
— Որ բացվի դուռը, ճշմարտի լուրը, փրկության համար...

* * *

Ինչպես անցնում են դեպի ծով վարար ջրերը գետի,
— Կանցնի մի օր և խանդավառ բորբոքումը քո սրտի,
Եվ կնայես դու քո շուրջը, և կը հիշես սրտացավ,
Որ ամեն բան սպասում է միշտ անխուսափ մեկ հերթի.
Եվ կտեսնես, ինչպես իղուր քո արևը շուտ անցավ,
Ինչպես կյանքը քո սրտի մեջ խոր դառնությամբ թանձրացավ,
Եվ կը կանչես դու այն օրը, որ քեզ խնդաց ու անցավ,—
— Դու կը տեսնես, որ ամեն ինչ սպասում է մեկ հերթի...

Մի՞թե խենթ է, կամ ցնորված ջրվեժը.
Ի՞նչ է այդպես նա վշվշում, ժայռը տաշում և խոսում.
Ո՞վ է թաղել նրա սրտում այդքան զայրույթ ու ցասում,
Ի՞նչ է այդպես աշխարհի դեմ թափում իր խոր վրեժը...
Լուսնոտ է նա, թե ընկնավոր, որ փրփուրը իր բերնին,
Թափվում է վայր, շփվում է հար, ճչում է խիստ ու նորից
Հարվածում է լուռ ժայռերին, գոռում, գոչում է ուժգին...
— Ասա, ջրվե՛ժ,— ինչ ես խոսում, ինչ ես ուզում աշխարհից։

* * *

Ձյուն է գալիս, ձյուն է գալիս հողմահար,—
— Ո՞վ է լալիս,— վիշտը վայիս և օտար։
Ճերմակ ու նոր և ալևոր ձյունը մաղում է տարտամ
Ո՞վ է տալիս դառնությունը մեր սրտերին տարաժամ...
Տե՛ս, վերևից ձյուն է մաղում.—ումն են թաղում,— չգիտեմ,
Մերությունը, թերությունը ցավ է ցանում կյանքի դեմ.
Փաթիլները, փաթիլները, տե՛ս նայում են և շոյում են միշտ իրար.
— Արդյոք մահվան դաղտնիքը չէ՞,— որ խոսում են մեզ համար....

* * *

Տե՛ս, տե՛ս.
Ո՞վ է այդպես վարում դրսևը հանդես.
Չէ՞ որ վերև
Իմ կտուրին թափով թափվում է անձրև...
Եվ խոսում են կաթիլները իրար հետ.
Ո՞վ է այստեղ կյանքը թաղել առհավետ.
Ո՞վ է տերը այս գործերին մոլորված...
— Եվ պարում են կաթիլները սրընթաց։

* * *

Դու, դու
Վառիր կրակը ազդու.
Խարույկները թող միշտ մնան բոցավառ, —
— Չէ՞ որ փայլուն ածուխները խոսք են ասում միշտ իրար...
Փուքսը փչի՛ր, փուքսը փչի՛ր դու վարպետ,
Կրակն է միշտ, կրակն է միշտ մեր սրտերին դորապետ...
— Կարմիր ու շեկ, կարմիր ու շեկ ածուխներ,
Ի՞նչ եք այդպես դուք փսփսում իրար հետ...

* * *

Ոչինչ չկա ավելի նոր և ինքնությամբ դերազանց,
Քան կյանքը մեր համատարած և նրա դործը վերին:
Ոչինչ չը կա ավելի խոր և էությամբ անթափանց,
Քան դերդմայլ ճշմարտության սիրով հարբած իմ հոդին...
Չէ՞ որ կյանքը էլ առավել ունի իմաստ մի համայն,
Քան անկոպար երկինքը այս՝ բյուր աստղերով կախարդուն.
Չէ՞ որ միտքը, որ սոսկ արևն է վշտահար դոյության,
Էլ առավել խորհուրդ ունի, քան իսկ տիեզերքը անհուն...

* * *

Այսօր հանկարծ ես տեսա ինձ և ահավոր իմ եսը.
Սիրտս բացվեց, և նրա մեջ տեսա իմ նոր երեսը.—
— Մի շար դաղան և թունավոր մի սև օձ
Կրքերի մեջ վարում էին մեղքերով լի հանդեսը...
Բայց դրան կից մի այլ պատկեր բացվեց հանկարծ բերդիս մեջ,—
— Հզոր մի ղորք շղթայում էր շար դաղանին սրտիս մեջ,
Եվ նրա հետ՝ իմացումը՝ ճշմարտության փորձի մեջ...
— Այսօր տեսա ես իմ եսը և նրա խոր հանդեսը...

* * *

Մարալ եղը, մարալ եղը և մեր դամբը միջան
Երազումս եկած էին իմ տեսության կարոտով.
— «Հիշո՞ւմ ես դու, հիշո՞ւմ ես դու, քո ձեռքի տակ, ախպեր
ջան,
Դաշտերի մեջ մենք միասին գործում էինք ամոթով»...
— Հիշում եմ ձեզ, իմ անլեզու հավատարիմ ընկերներ,
Մենք միասին գործ ենք արել մեր մանկության օրերին։
Հիշում եմ ձեզ, ձեր տանջանքը, ձեր վաստակը ու բեռներ,
Եվ ձեզ երբեք չի մոռանա ցավերով լի իմ հոգին...

* * *

Քառասուն սիրուն ու կախարդուն հուրի փերի, ըղձանուշ.
Զար թշնամուց փախան մի օր դեպի բարձր լեռները։
Եվ գրկաբաց ու սրտալի — կույսերի դեմը աշխույժ
Բարձր սարերը բաց արին իրենց փայլուն դռները...
Եվ ներս մտան լեռանց կուրծքը կույսերը վառ ու անբիծ.
Բայց փակվեցին նրանց առջև դռները միշտ անտարբեր...
Եվ կույսերը արտասվեցին սուրբ արևի կարոտից,
— Եվ հոսեցին իմ հայրենի քառասուն ընտիր աղբյուրներ։

* * *

Չե՞ս տեսնում, ինչպես չքնաղ է դիշերն,
Երբ նա նիրհում է ծովի խոր ափին,
Ինչպես քնած են սրտումը հուշեր,
Երբ աղոթքի պես պայծառ է հոգին...
Չե՞ս տեսնում, ինչպես աստղերն են սիրում,
Երբ կարոտագին նայում են իրար,
— Ինչպես իմ սրտի պայծառ տաճարում
Վառվում է սերը աշխարհի համար...

* * *

Ամեն անգամ ես նայում եմ վառարանիս կրակին,
Ածուխները դուրս են սփռում իրենց լույսը և ոսկին.
Եվ խոսում են բոցերը բարկ ու հաճախ,
Եվ հոսում են նրանք արագ, աջ ու ձախ։
Մերթ նայում են ածուխները իրար դեմքին սրտագին.
— Ի՞նչ են այդպես ածուխները խոսում իրար ականջին...
Գուցե մի օր ես էլ այդպես դառնամ ածուխ ու վառվեմ,
Գուցե ա՞յդ է, որ խոսում են ածուխները իմ մասին...

* * *

Հիսուն տարի ման եմ գալիս դատարկյուն,
Հիսուն տարի հարց եմ տալիս ամենքին.
— Ինչո՞ւ չը կա սրտիս համար մի անկյուն,
Ո՞ւր կորավ նա, որ կախարդեց իմ հոգին...
Հիսուն տարի հարց եմ անում, բայց չը կա.
Ինչո՞ւ այսպես մարեց լույսը իմ ճամբին,
Ա՜խ, թե լիներ իմ տեսածին մի վկա...
Բայց ուշ է, ուշ... գալիս է օրը վերջին...

* * *

Իմ հայրենի վառ ու վճիտ աղբյուրներ,
Սիրտ արցունքն է ձեզ քամում ժայռերից.
Դուք հայրենի ընտիր և ժիր զեփյուռներ,
Սիրտ բարձունքն է ձեզ բերում հեռու և նոր աշխարհից...
Քառասուն աղբյուր՝ մարգարտահոս ջրերի,
Ձեր սուրբ երգը, ձեր համերգը սիրտս երբեք չի մոռնա։
Իսկ դու, զեփյո՜ւռ, որ գալիս ես հանդեսներից աստղերի,—
— Միայն քեզ հետ և քո սիրով կյանքս գարուն կը դառնա։

* * *

Ես ծնվել եմ դիշեր, ես սիրում եմ հուշեր,
Եվ նայում եմ անվերջ դեպ աղոտ արևելք,
Չէ՞ որ վիշտն է նշել իմ սրտումը փշեր,
— Ինձ օտար են և խորթ բիրտ աղմուկն ու վայելք...
Դուք, անհայտ հեռուներ, չը լսված ավյուններ,
Իմ կորած առավոտ,— ես կարոտ եմ միշտ ձեզ,
Ո՞հ, չեղած աշխարհներ, անսկիզբ դարուններ,
Դուք եք ինձ միշտ կանչում դեպի վեհ ասպարեզ։

* * *

Դեռ չլսված, դեռ չը հյուսված գեղեցկության ով տաճար,
Կամ դու, կամ դու, մեռյալների նո՞ր հարության գաղափար.
Մենք ձեզ համար ժխտում ենք միշտ սերն անսահման և
օրենք,
Իսկ հեռավոր աստղերի մեջ տեսնում ենք նոր ճանապարհ...
Անդունդների վրա ձգված մի կամուրջ,
Սերունդների սրտերում չի մի տրտունջ,
Իբրև զավակ խոր անցյալի կամ նշավակ աշխարհի՝
Կերտո՞ղ ենք մենք այս ճամբեքին, թե՞ փրկության վառ
անուրջ...

* * *

Դու շատ վաղիր և տեղ հասիր, քանի հերթը չի անցել.
Գործերդ տես, խոսքդ խոսիր, քանի մահը չի սանձել.
Քո ճանապարհն է շատ հեռու, և իսկ տաճարը դեռ փակ.
— Ներսդ նայիր.— չէ՞ որ սիրտդ դեռ արևներ չի դանձել
Տրտունջը թող, սիրտը վերք է, դեղ չը կա.
Եվ ոչ աստված, և ոչ կասկած,— կյանքը բերք է,— տեղ չը
կա...
Ջո՞ւր են երազ և կամ մուրազ,— անցած օրը նա չի դա,—
— Արադ վաղիր ու տեղ հասիր, քանի նավդ չի անցել...

* * *

Հոգ չէ, եթե անտուն ես դու,
Տես, դու ունես տիեզերքի պես խոր ու խրոխտ օթևան.
Հոգ չէ, եթե գիտուն ես դու,
Չէ՞, որ այստեղ քո գիտցածը բեզ չի տալու ոչ մի բան:
Հոգ չէ, եթե խաթուն ես դու,
Մեկ է, ոչինչ դու այս թաղից չես տանի,
Հոգ չէ, եթե անքուն ես դու,
— Չէ՞ որ վերև աստղերը կան կենդանի...

* * *

Ամեն անգամ իմ ականջին ինչ որ մի ձայն հնչում է,
Ամեն անգամ այս կամուրջին մեկը անվերջ կանչում է...
Ես ինձ ու ինձ միտք եմ անում. ինչ են ուզում ինձանից,
— Ամեն անգամ, ասես, վերջին զանգը հեռվից հնչում է...
Ինչպե՞ս անեմ, որ ազատեմ ես իմ սիրտը այս բանից,
Ինչպե՞ս է միշտ ձայնը գալիս,— ձայնը հեռու գիվանից,
Ասեք, ինչո՞ւ բախտը անգութ ձեռք չի քաշում ինձանից,
Ամեն անգամ այս կամուրջին մեկը հեռվից կանչում է...

* * *

Ամեն անգամ իմ սրտի մեջ խնճույք ու լույս վառելիս՝
Մեկը տխուր այս աշխարհի վերքերն է միշտ ցույց տալիս...
Խնճույքի մեջ մեկը հանկարծ դուրս է գալիս համարձակ,
Եվ անպտուղ ճանապարհի փշերն է ինձ ցույց տալիս...
Երբ իմ սրտում կա սև երգում՝ և լաց ու կոծ, և զուլում,
— Մեկը հանկարծ դուրն է գալիս, լույսի մասին է խոսում.
Խավարի մեջ, ավերի մեջ գարուն ու սեր է հնչում,
— Միշտ իմ սրտում կյանքն է խաղում, մահու բոթը լսելիս...

* * *

Քանի նայում ես իրերին, այնքան խորն է տեսքը նրանց,
Քանի նայում այս աշխարհին, գետն է անչափ ու անանց.
Ես ծովերի խորքը տեսա,— խոր է և խիստ խոսքը նրանց,
Ես իմ սիրտը լուռ իմացա, խորհուրդը միշտ անթափանց,
Նայում եմ ես իմ կարոտին,— ասողների պես միշտ հեռուն.
Հույս եմ տալիս ես իմ սրտին,— իզձն է նրա կախարդուն.
— Իմ մեջ սեր կա, իմ մեջ սեր կա, ասողների պես անմոան,
Աշխարհը մի՞շտ, իրերը ճի՞շտ խորհուրդ անին հավիտյան...

* * *

Ես շա՞տ սենեմ այսպես հաշիվ, իմ գեմ ճամբերը անթիվ,
Տե՛ս, անիրավ շուկայի մեջ ցավերն են խոր ու խստիվ,—
Այս անիրավ ներկայի մեջ մահ ու կորուստը անվերջ,
— Ո՞ր խոկամ, ո՞ր հոգամ,— սիրտս զարկում է հաղիվ...
Խոսքդ ասա, դու արարիչ, եթե դու կաս վերևն արդար,
Ի՞նչ ես ցանել այս արտի մեջ դործերը չար և անհար...
— Իսկ դու, իզձուկ, ի՞նչ ես արել կյանքդ անմիտ մի
բաղար,—
— Տե՛ս, գալիս է՝ օրը վերջին, ո՞ւմ պիտի ասես դու հաշիվ...

* * *

Ոչ մի գլխիր ես չտեսա, որ իր գիրքը հասկանար,
Ոչ մի գպրոց ես չտեսա, որ իր ճամբովը գնար....
Տեր ու գլխիր, գպրոց ու դիր հարինովի ու կոպիտ,
Ոչ մի ձեռնարկ ես չտեսա, որ աշխարհում միշտ մնար...
Անհասը խոր և բարմությունն կամ իմաստուն ու բանվոր
Անց են կենում և չեն տեսնում, ո՞ւմն է բերդը այս հզոր.
Այցի եկողը անծանոթ, փորձի եկողը անզոր,
— Ոչ մի գլխիր ես չտեսա, որ իր գործը հասկանար...

* * *

Գիշերն ահա իր առագաստը զարկեց
Երկրի մոլոր և անցավոր ափերին.
Եվ իր հուշերը պահապան նա կարգեց,
Որ հետևեն կյանքի տխուր օրերին...
Եվ անաչառ խիստ աչքերով՝ իր գահից
Հարց է տալիս նա դառնացած իմ սրտին.
— Քեզ ի՞նչ մնաց օրվա անթիվ անցքերից,
— Ի՞նչ պիտ անես էգուց՝ անհայտ քո համբին...

* * *

Զարկ թմբուկին նաղարաշի ու կանչի.
— Իմաստությունը աշխարհի դրա մեջ.
Թեմի վրա միշտ քեզ արա, քյամանչի,
— Կյանքի վերին գաղափարը դրա մեջ...
Քանի կուզի միտքը բանի ու մանի,
Իր գործի մեջ թող նա հանդես միշտ անի,
Եվ տիեզերքին նա հետամուտ թող լինի,—
— Չէ՞ որ կյանքը խաղի մեջն է,— լսիմանի...

* * *

Նա մոտեցա իմ ընկերոջ, իսկ նա արդեն հանդել էր,
Աչքերը խոր, դեմքերը պինդ փակել էր.
Ասի. «Եղբայր, դեռ սպասիր, քեզ բան ունիմ ասելիք»,
— Բայց դրոշակը նա արդեն պոկել էր...
Ասի. «Կանգնիր, քանի մոտ ես, քեզ ամանաթս հանձնեմ,
Այն աշխարհից մինչև հիմա ոչ մի խաբար ես չունեմ,—
Թե գնում ես, տա այս նամակը և տար»...
— Բայց նա արդեն դեմքերը իր փակել էր...

* * *

Տես, գարունը էլի չկա, ծաղիկն ու վարդը կորավ,
Անդութ աշունը գաշտերից սեր ու երազը տարավ.
— Երգը սիրուն, կյանքը խնդուն էլ չկան,
— Սիրտս էլի կարոտի մեջ՝ երազների է ծարավ...
Դու, անցավոր, տես երամները Հավքերի հեռացան,
Ուխտավորները քարվանով հեռվից եկան ու անցան.
Քո մանկության օրերի պես լույս ու շողիկը կորան...
— Սիրտդ էլի կարոտի մեջ՝ երազների է ծարավ...

* * *

Դու, փոթորիկ, ես քեզ գիտեմ շատ վաղուց.
Դու ես ծովը ալեկոծում հատակից,
Դու ես ժայռը պոկում իր խոր արմատից,
— Դու իմ սրտում աղմկում ես դեռ մանկուց...
Դու ես շարժում անտառի մեջ խոր զարդանոց,
Դու ես վառում ամպերի մեջ կռվի ծարավ ու հանդ,
— Երկինք, երկիր քեզ են հլու, հնազանդ.
— Դու իմ սրտում դարձ ես անում շատ վաղուց...

* * *

Դուք չեք լսում, ինչ է ասում հոգիս անհայտ իր ճամբին,
— Ով է անվերջ պատվեր տալիս վառ տատղերի մեծ խմբին.
Ի՞նչ են խոսում ծաղիկ ու բույս, ինչու մռայլ է անտառս...
— Դուք չեք տեսնում, ո՞ւր է գնում քարվանը այս տհաղին...
— Չէ՞ որ ես էլ քարվանի մեջ ուխտ եմ գնում հեռավոր,
Իրերը ինձ խոսք են ասում,— խոսքը խորին ու հզոր,
Բնության մեջ կա մի խորհուրդ, որ կանչում է դեպի խոր ..
— Դուք չեք լսում, ի՞նչ է ասում հոգիս անհայտ իր ճամբին...

* * *

Երազումս ծանոթ, ընկեր եկած էին ինձ այցի,
Շուրջս պատած՝ խոսում էին ճանապարհները դարձի.
— «Արև, գարուն այնտեղ չկա, կյանքը այնտեղ մուտք չունի,
— Խավարի մեջ խնդում չկա,— չկան կրքերը փարձի»...
Երազումս ծանոթ, ընկեր, մոտս նստած ապավոր,—
Հարցում տրի այն աշխարհից, մեզ միշտ անհայտ,
հեռավոր,—
Եվ ինձ նրանք մի զարհուրած խոսք ասացին ահավոր.
— Անէության կողմն է տանում ճանապարհը քո դարձի...

* * *

Դուք թողե՛ք ինձ, ինչ կա իմ մեջ, պետք չէ ձեզ.
— Ոսկի, պղինձ, բերք ու բարիք ես չունեմ:
Հուզում է ինձ մի հոգեոր ասպարեզ,—
— Հավերժական կարոտների ես բուն եմ...
Դուք թողե՛ք ինձ. ձեր երգը ես չեմ երգի,
Ձեր խայտառակ սրբատեղին չեմ հարգի.
— Սիրտս վերին գործի համար կղարկի,—
Ոսկի, պղինձ, բերք ու բարիք ես չունեմ...

* * *

Թե լիք չքամ բերանը փակ՝ երկաթի
Կաթսան մնա հնոցի մեջը երկար,
— Նա եռալուց, շոգիներից կպայթի...
— Չէ՞ որ չկա կրակի դեմ ոչ մի ճար...
Սիրտս վաղուց կրակի մեջ է անվերջ.
Եռում է նա, ալեկոծվում ինքն իր մեջ.
— Չկա նրան ոչ մի դարման, ոչ մի ճար,
Նա էլ մի օր պայթելու է ցավի մեջ...

* * *

Չկա մի ծով, որ արտիս պես լինի խոր,
Որ ունենա այնքա՜ն շարժում ու ալմուկ,
Ինչպես սիրտս ալեկոծված և հզոր,
Ինչքան իմ մեջ կան մրրիկներ, ցուրտ ու բուք...
Աչքերս խուսի՝ նայում եմ ես իմ ծովին.
— Ահա շրջում է նրա մեջ խոլ քամին,
— Ահա կորչում է նրա մեջ զորքը հին...
Իմ մեջ հնչում են փոթորիկ և ալմուկ...

* * *

Լաց մի՛ լինի, կուրծքդ իզուր մի թակի,
— Քո ցանկությամբ կյանքի դարձը չի գնա.
Բաց մի՛ անի վերքերդ հուր, հոգնակի,
— Միշտ անպատուշ արտիդ փորձը կմնա...
Ինչ կա այսօր, ինչ կլինի և էզուց,
Դու չես կարող նրան փոխել մաղաչափ.
Այս ծովի մեջ դու՝ անկարող մի հանդուցյց,
— Քեզ բշում են, բեզ բաշում են անխուսափ...

* * *

Ծնված օրից բոլոր բայլերդ հաշված,
— Քո վերուզիրը բեզանից չի կախված...
Գիրքը կյանքի, որ դու այսաեղ կկարդաս,
— Քեզնից հեռու, անհայտ ձեռքով է գրված...
Անհայտ է միշտ զարձդ գնում օրեցօր,
Ուրիշն է ճիշտ փորձդ անում անսովոր,
— Մեկը կարծես բշում է բեզ ահավոր...
Ասեք, ինչպե՞ս, երբ է կարդը այս գրված...

* * *

Ոչ որ չասի՝ հարուստ է և փող ունի,
Գանձ ու գոհար, բերք ու բարիք անվանի.
— Եվ փող, և հող, ոսկի, արծաթ թո՛ղ, անցիր,
Քանի սիրող մահու առաջ դող ունի...
Արարիդ ծովը ընկած լույսերը վառիր,
Աբեղների աստղ խորհուրդին միշտ հասիր,
Ասողների հետ կյանքի մասին ճիշտ խոսիր,
— Եվ էլ քո մեջ մահը արտունչ չի հանի...

* * *

Բույսերի մեջ կա հզոր կամք և խոր եռանդ՝ հիմքը միայն
դո՛ւ ես, դո՛ւ...
— Կա հարատևիք, ամուսնություն, սեր ու ավանդ, հիմքը
միայն դո՛ւ ես, դո՛ւ.
Հավք ու թռչուն, վայրի գազան կյանք են ապրում աննման.
Լույսերի մեջ կա զորություն հավիտյան, հիմքը միայն
դո՛ւ ես, դո՛ւ...
Անտառ ու սար օր ու գիշեր միտք են անում, երազում,
Ծովը ահա ալոթքն է իր խորհրդալի միշտ ասում.
Հողմը, կարծես մի պահապան, երկրե երկիր է վազում...
— Հավերժություն անջնջելի, այս խոր կյանքի հիմքը միայն
դո՛ւ ես, դո՛ւ...

* * *

Եթերի մեջ հազար ու բյուր շարժումներ կան, Հիմքը միայն
դո՜ւ ես, դո՜ւ.
Աստղերը վառ ուխտ են գնում միշտ անդադար, Հիմքը միայն
դո՜ւ ես. դո՜ւ.
— Արևը, տես, միշտ կենարար լույս է սփռում ամեն տեղ,
Այս հոյակապ և անխուսափ իրադարձի Հիմքը միայն
դո՜ւ ես; դո՜ւ.
Միայը մարդու արևի պես լույս է սփռում իրա շուրջ.
Նրա սրտում՝ կրակի պես կա կիրք ու ջանք և անուրջ.
Եվ գոյության անդունդներին. մարդն է միայն մի կամուրջ,—
— Հավերժությո՜ւն, անջնջելի այս խոր կյանքի Հիմքը միայն
դո՜ւ ես, դո՜ւ.

* * *

Քո՜ւյր իմ, երգիր վերջին երգդ ու անցիր.
Այս գիշերը էլ ես չի գա, մոռացի՜ր.
Ինչ կար այստեղ, այս այգու մեջ անմահ,
Անցնելու է երազի պես,— հեռացի՜ր...
Տես, լույսը վառ, որ կա այսօր քո սրտում,
Բույսը գալար, որ կա այսօր քո սրտում,
Կթառամեն, կվերանան անհերքում,
— Քո՜ւյր իմ, երգիր երգդ վերջին ու անցի՜ր...

* * *

Ինչո՜ւ մարեց ճրագը իմ վառվուն...
— Հողմը փչեց, հողմը արեց ամեն բան։
Ինչո՜ւ թոշնեց իմ վառ ծաղիկը սիրուն.
— Աշունն եկավ, աշունը ցուրտ ու դաժան...
Ինչո՜ւ առվակը չի խոսում, ազմկում.—
— Չէ՞ որ դեմը քար է ընկած անդգա...
Դու, իմ քնար, ինչո՜ւ երգդ չես երգում.
— Խորն է վիշտը, ո՜հ, երգելու ճար չկա...

* * *

Ինչպե՞ս փնջեմ ծաղիկները և ինչպես տամ նրանց քեզ,
— Քո սրտի մեջ, քույր իմ, քույր իմ, ծաղիկ ու վարդը բաղում.
Ինչպե՞ս երգեմ երգերը իմ, ինչ նվագեմ վեհ ու վեհ,
Երբ երկնային դեռ չլսված երգն է միայն քեզ սազում..
Գարուն ու շող փարթամ ու հոխ բացված են միշտ քո դեմքին,
Աչքերիդ մեջ վեհ ու կարող ծովն է շողում անմեկին.
— Քո՞ւյր իմ, քո՞ւյր իմ, դու ես ողբյուրը երազի սրտապին,
Քեզ ինչ երգեմ, երբ քեզ միայն աստղերի երգն է սազում...

* * *

Լուռ կաց, սիրտ իմ, ժամանակը թող գա, գնա անխնա,
Եվ ոչ մի գործ, և ոչ մի փորձ հավերժական չի դառնա.
— Լո՞ւռ կաց, սիրտ իմ, վերջին ժամը վրահաս,
Վերջը մեկ է, այս աշխարհից մեզի ոչինչ չի մնա...
Թող երգդ սուրբ սիրելիների մեջ լինի վկա քո փորձին.
— Հավերժության տաճարի մեջ և ոչ մի մաղ չի կորչի.
Լո՞ւռ կաց, սիրտ իմ, վախճանը սուրբ իմաստ կտա քո գործին...
— Ճշմարտության ձայնը քո մեջ երբե՞ք, երբեք չի հանդչի...

* * *

Եթե տան քեզ աշխարհը այս անպակաս,
— Դու մի խնդա, ոչինչ է դա քեզ համար,
Եթե մի օր աշխարհը ողջ տանուլ տաս,
— Դու մի խոկա, ոչինչ է դա քեզ համար...
Կյանքը երազ, սիրտը պակաս ու կարոտ,
Իր ուղածին նա բնավին չի հասնի...
Օտար են մեզ իրերը վեհ, անծանոթ,—
— Իր մարմնը մարդը երբեք չի տեսնի...

* * *

Գեսը հոսում է վազուց,
Մեջը ինչ որ գաղտնիք կա,
— Ո՞վ է կապել այս հանգույց,—
Ոչ մի խաբար մեզ չկա...
Դասը դասում է դարեր,
Ինչե՞ր չկան նորա դեմ.
Ո՞վ է փորձը մեզ բերել
Եվ ումն է նա,— չգիտեմ...

* * *

Ոչ ոք չասաց, ինչ է ուզում սիրտը այստեղ չարաչար.
Ոչ ոք չասաց, ինչ կա իմ մեջ այսպես տհեղ ու անճար.
Ո՞հ, մարդկություն, քո ցավը խոր մինչև վերջը չիմանամ,—
Դեռ կխոկա սիրտս անճար, ծովերի պես հողմահար...
Ոչ ոք չասաց, ի՞նչ է խոսում աղբյուրը իր ափերին,
Ոչ ոք չասաց, ի՞նչ է ասում հողմը տխուր թփերին.
— Դու, ծեր աշխարհ, մինչև որ վառ արշալույսդ չծագի,
Ջուրը ափին, հողմը թփին միշտ կխոսի անպատար...

* * *

Ոչ ոք չասաց, ո՞ւր է գնում մայր մանելիս արևը,
Վերջալույսը իր խորանում ումն է տալիս բարևը.
Ոչ ոք չասաց, ի՞նչ է զգում ծաղիկը լուռ դիշերին,
Ի՞նչ է խոսում հողմի առաջ անտառը իր հուշերին...
Միտք իմ, միտք իմ, թևերդ լայն, զորքերդ հան դու մեյդան,
— Գեթ արևի հետքը բռնած՝ նրա գնացքը տեսնե՞մ...
Ո՞ւր է գնում, մայր մանելիս, նա, մեր տերը անվախճան,—
— Ի՞նչ են տալիս ծաղիկին ու բույս,— նրանց գործին գեթ հասնեմ...

* * *

Եկան, եկան, հավքերն եկան հեռու, անհայտ վայրերից,
— Քարվանի պես զորքերն եկան սրտիս հեռու ծայրերից...
Հավք ու թռչուն, դուք թև ունեք և ճախրում եք հեռուներ,
— Միայն իմ, միայն իմ, դու թև ունես, բայց չես ելնում
քո բնից...
Երբ գա աշունը ցրտաբեր, հողմը հնչի մահագույժ,
Հավք ու թռչուն նա կդառնան դեպ հեռուները աշխույժ,
Իսկ իմ մտքերը միշտ իմ մեջ,— ցրտի առաջ, հողմի դեմ,—
— Դեպ նոր աշխարհ, դեպ նոր գարուն ինձ տանում են
մեծաշխույժ:

* * *

Երբ անտառն է նիրհում լեռների ուսերին,
— Իսկ ծովակը նրան նուրբ օրոր է ասում.
Երբ մրրիկը քնած՝ չի զարնում ամպերին,
Իսկ ալիքը ափին իր հեքիաթն է խոսում,—
— Դուրս եկ շուտ քո բնից, տես ինչե՞ր կան այնտեղ՝
Բնության խորիմաց և անմահ գործի մեջ...
Տես, ինչպե՞ս հավերժի գենք ու զորքը ահեղ
Անմահ սեր է տպրում իր անտես սրտի մեջ...

* * *

Ես շատ անգամ միայնք եմ անում անվերջով
Եվ տիեզերքի, և իմ մտսին խորիմա՞ց.
— Ո՞րն է մեծը մեր երկուսիցն հասակով,
Կամ ո՞րն է իսկ շինարարը և ասաված՝
Ես եմ ծնված տիեզերքի խոր արգանդից,
Թե՞ նա է լոկ ծնված իրոք իմ մտքում:
Եվ այս երկու հավերժական գործերից
Ո՞րն է բարի և միշտ արի իր կյանքում...

* * *

Այսօրն իրրև մի տերն
Ծառից ընկավ ու կորավ...
— Մի՛ բա իմ, սիրա իմ խենթի ու խե,
Ի՞նչ ես փնտրում վատ ու լավ։
Օրը, գիշեր շատ կանցնի,
Էլ չես տեսնի դու արի.
Ով քեզ բերեց, կը տանի՞,
— Ի՞նչ ես հչում խենթի ու խե...

* * *

Կյանքդ կարճ է և անձուկ.
— Թո՛ղ այդ երգումն ու ցասում
Սուգն ու սերը արտաշուկ
Հարատևիքին չեն տալում։
Չէ՞ որ հյուր ես մի անգամ.
Տե՛ս հաշիվը մատյանիդ.
Տերդ քեզի ամեն ժամ
Սպասում է, հարամիս։

* * *

Երկու գիրք կա աչքիս առաջ, իմ գիմաց.
— Մեկն ամեն օր բաց եմ անում ու կարդում.
Կյանքիս բոլոր ուղիները նկարված
Տեսնում եմ միշտ նրա փայլուն էջերում։
Իսկ երկրորդ գիրքը կարդալու հնար չկա.
— Գրված է նա անհա՛յտ լեզվով ու խրթին...
Այն աշխարհից չկա ոչ լուր, ոչ վկա,—
Կարդալու չէ կյանքի գիրքը բնավին...

* * *

Չե՞ս տեսնում դու, որ այսպես
Եկած ես մի խնճույքի,
— Հրճվանք ու սեր փառահեղ,
Ասող ու սրեն երկնքի՞...
Քանի հյուր ես վայելի՛ր.
Աշխարհի ճոխ սեղանից.
Շուտո՞վ կասեն.— «Հեռացի՛ր
Հարսանիքի դահլիճից»...

* * *

Ի՞նչ ես անվերջ ու անմիտ
Պտույտ անում, ճախարակ.
— Ասա՛, վարպե՛տ, մանածիդ
Ո՞ր մասն է լավ ու հստակ:
Թե գործվածքդ անարատ
Իմաստ ունի ու պարծանք,
— Ի՞նչ ես խառնել լավն ու վատ,
Լույսն ու խավար, մահ և կյանք...

* * *

Զոնը մի խոկա դո՛ւ, իմ սիրտ.
Ինչ կորած է, չե՞ս գտնի:
Վարար գետ է կյանքը բիրտ,
Ինչ որ գցես, կը տանի:
— Ո՞ւր է հոսում գիտը դուր,
Ոչ ոք չասաց այդ մասին:
Ջրի վրա մի փրփուր —
— Դու էլ կանցնես քո ուղին:

* * *

Ես ոչ մի բան աշխարհում
Չեմ հասկանում այնքա՞ն խոր,
Ինչպես կատուն իմ սիրուն,
— Նրա հոգին անասվոր...
Աչքերն անմեղ և կարեկից,
Ինչպես մի բաց լուսամուտ,
Յուլց են տալիս սրտի խորքից
Անմար կրակ, սեր և դուխ:

* * *

Կարծես լույս, երազի համայրով
Մութ գիշեր իմ ճամբին դու եկար.
— Ա՜խ, իմ քույր, հոգուդ սուրբ շողերով
Նոր երկինք ցոլացիր ինձ համար:
Սերն անբիծ և թարմիծ քո դիմքին,—
Շողացին անուրջնե՛ր ու գարուն:
— Գեթ նայեմ՝ քո անմահ աչքերին,
Որ հիշեմ իմ ատաղերն, իմ երկի՛նքը անհուն:

* * *

Շատ ուղիներ շարված էին իմ առաջ.
— Միայն մեկը ես ընտրեցի նրանցից.
Ու տանում է այդ մեկն այժմ ինձ ձախ ու աջ,
Մինչև հիմա ես լուր չունեմ մյուսներից:
Այս մեկ ուղին լավ ու վատով, կոշտ ու հեզ
Տանում է ինձ դեպ հայրենի հեռուներ
— Ասա՛, սեր իմ. ինչո՞ւ համար մեկի տեղ
Գծել ես դուր հարար ու բյուր ուղիներ:

* * *

Նկարիչ ես, ներկեր ունես դույնզգույն,
Ձեռքիդ բռնած արարչական քո վրձին,
Գծել ես դու աշխարհ, արև ու գարուն,
— Հավերժական կյանք ես տվել կտավին...
Ի՞նչն էր պակաս քո կտավին ու ներկին,
Որ դարձդ դուր պակաս-պռատ դուրս եկավ.
— Արև ու սե՞ր, գարուն ու լույս երկնային,
Բայց նրանց կից՝ մահու կսկիծ, չոռ ու ցա՜վ...

* * *

Այս հայակապ դահլիճի մեջ կա ամեն բան գեղանի —
— Վարդի բուրմունք, գարուն ու սեր, երգ ու երաղ և գինի...
Տե՛ս ամեն ինչ առա՞ռ ու լի: Խնճույք է սա բերկրալի:
— Բայց ինչի՞ս է, երբ որ չը կա տերը նրա անվանի:
Քեֆն անիրա՜վ. կերուխումը մի անծանոթ հարկի տակ.
Բացակա է քեֆի սարքողը, և հայտնի չէ նպատակն...
Միայն գինին և վարդ ու սեր ոչինչ անել չեն կարող,
— Երբ որ չկա խնճույքի տերն, երբ անհայտ է նպատակն...

* * *

Վառ աստղե՛ր, ձեր լույսերն ու ձեր սերն
Ո՞վ է ձեզ շնորհել գորավոր:
— Զայն տուր մեզ, տիեզերքի անհայտ տեր,
Դեպի ո՞ւր ես տանում մեզ մոլոր:
Եվ անցնում են աստղերն անմեկին,
Պատասխան իմ հարցին չեն տալիս.
Տիեզերքի անհայտ տերը վերին
Թաքնված է և դուրս չի՞ գալիս:

ԱՐԵՎԱՄՈՒՏ
ԿԱՄ ԿԱՐԱՊԻ ԵՐԳԵՐԻՑ

523—10

* * *

Ինձ ասացին՝ չարժե՞ր ծնվել և աշխարհ գալ —
Որպեսզի միշտ սրտումը վիշտ՝ զուր տրտմվել ու խոկալ.
— Արժեր ծնվել,— ես ասացի,— որ ճանապարհն այս անցնելիս
Հրճվանքով լի տեսնել միայն հավերժական մեր Մասիսն:

Ամեն քայլին, ամեն փայլին մի ձայն հնչեց իմ ականջին,
— Ի՞նչ իմաստ կա տեսնել աշխարհն այս առաջին ու վերջին:
Եվ սիրտը իմ, մորմոքելով, այսպես խոսեց, այդ լսելիս,
Տե՛ս, թե որքա՞ն բարձր է փառքը հայրենիքիս՝ վեհ Մասիսն:

Ոչ մի տրտունջ, ոչ մի մրմունջ,— արժե՞ր, այս, ծնվել ու գալ
Անէության ակունքներից, որ այս հովտում դեթ մի անգամ
Տեսնել աշխարհը այս փարթամ,— արևն, ասողները անթառամ.
— Տեսնել Մասիսն հայրենիքիս—հավերժացա՞ծ, ինքնակալ...

* * *

Ա՜խ ու վախով մեն եմ գալիս՝
Իմ օրերը, վառ օրերս հիշելով.
Մաղ ու շաղով ցա՞ն եմ տալիս
Իմ մարերը, սիրտս իզուր մաշելով:

Ուր որ եկա, իրրև վկա,—
Չար ու չարիք, կեղտ ու կարիքը տեսա —
Ցավն ու սովը, դավը առկա,—
— Սե՞ր ու կարոտ, ձեր բարձունքին չհասա։

Մայր ու եղբայր, յաղ ու ծանոթ
Ձեր մուրազը, սիրտ սազը չմոռցա...
— Ո՞վ ստեղծեց կյանքումն ամոթ,
Ո՞ր դորձերին, ինչո՞ւ համար, — չիմացա...

* * *

Չգիտեմ, որտեղի՞ց և ինչպե՞ս այս աշխարհ, ես եկա.
— Շրջեցի, տուժեցի ես անվերջ... ինձ ոչ ո՞ք չիմացավ.
Ա՞խ, անմիտ այս գորձին, իմ փորձին, որ փայլեց ու անցավ,
Այս ճամբին ոչ մի մարդ չդարձավ սրտակից ու վկա։

Ես եկա և անցնում եմ անմիտ ճանապարհ.
— Ինձ ոչ ո՞ք չիմացավ — ոչ մի մարդ, ոչ որդի, ոչ եղբայր։
Ոչ թռչուն, ոչ դազան, ոչ աստղեր, ոչ լուսին —
— Ա՞խ երբեք չիմացան և հարցմունք չարեցին իմ մասին։

Այս հովիտն անծանոթ, վեր ու դիրն անամոթ,
Երբ բնավ չիմացավ ինձ աշխարհն այս փոքրամ...
Իմ խեղճ սիրտն ու հոգին
Չիմացավ ոչ եղբայր, ոչ որդին։—

Մութ դիշեր և հուշեր... ոչ աղմուկ, ոչ շշուկ,
Ես կերթամ... իմ մտքերն են ինձ հետ սրտմաշո՞ւկ...

Ա.Վ. ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ

Հիշիր խոսքը Համազասպի,—
— Գիտե՛ս, սիրտն իր նա չի ղսպի.
— Հազար տարին քո վեհ երգին
Բավական չի, Ավետիք.
Դարեր են պետք, որ քո ոգին
Փառաբանեն միշտ մարդիկ...

* * *

Ես չգիտեմ ոչ մի էակ, որի ծնունդն
Անհայտ լինի ժամանակի դիվանի մեջ.
Ես չգիտեմ ոչ մի ծնող, որի սերունդն
Անհայտ լինի հավերժության մատյանի մեջ:

Դու ես միայն, ողորմելի դու խեղճ երկիր,
Որ շրջում ես տիեզերքի մեջ անհամակիր.
— Անհայտ են քո և ծնունդը, և վախճանն...
Ո՞ւմ կամքով ես դատապարտված այդպես դաժան,

* * *

Հե՜յ, Համապասպ. արագ շարժիր քայլերը քո,
— Հաշիվդ տե՛ս, գիրքը փակիր աշխարհի.
Արևն արդեն պատրաստում է քեզ երեկո,
— Պիտի մեկնես, լի՜ կարոտով ասողերի:

* * *

Աշխարհի մեծ մի իմաստուն
Եվ նրա դեմ հիմարն հզոր.
Ո՜հ, կա արդյոք տարբերություն
Քաջերի մեջ այդ փառավոր...

* * *

Արտումս հուր, վշտերս սուր՝
— Ո՞ւմն եմ կարոտ, չգիտեմ.
Մտքերս կույր, հետքերս կուր,
— Ո՞վ կա ծանոթ,— չգիտեմ

Անուրջն հիմար, շուրջը խավար,
— Ո՞ւր պիտ գնամ, — չգիտեմ.
Կամուրջն օտար, տրտունջը շար,
Որտե՞ղ մնամ,— չգիտեմ։

* * *

Քար ձգեցի, — նա վզվալով վայր ընկավ,
Մոմ վառեցի, — նա փլթփլթաց ու հանգավ,
— Ի՞նչ տարբերակ երկուսի մեջ,
Երբ և հոգին է կիր ու կավ...

ԹՈՌՆԻԿԻՍ

Լսիր, ջանիկ. այս օրն ուրախ
Նոր գարուն է մեր սրտերում.
Բայց իմացիր,— բերկրանքն հաճախ
Արցունքի մեջ է շողշողում։

Անցավ արդեն քո տաս տարին.
Ապրես դու միշտ,— բայց ոչ այնպես
Ինչպես շատերն այս ափերին...
— Վսեմն արա քեզ ասպարեզ։

Սերը սիրիր,— լույսը մտքի,
Որ լավ ապրես և լուսաշող.
Վսեմությամբ թող որ ծաղկի
Կյանքիդ այդին փարթամ ու ճոխ...

* *
*

Վսվրսալով ջուրն է հոսում.
Փրսփսալով միտքն է խոսում.
— Ի՞նչ տարբերակ երկուսի մեջ,—
Երբ ողջ կյանքը նույնն է ասում...

* *
*

(Նմանություն)

Ոչ որոտն երկնային ամպերից,
Ոչ էլ այլ մի հնչյուն, որ կյանքում կը լսենք,
Թեկուզ նա ծործորա քաղցրագույն շրթերից,
— Հավասար չէ ույժով սուրբ խոսքին «Հայրենիք»։

* *
*

Անծերական և միայնակ՝ անտեր մի գունդ.
Պտտվում է աստղերի մեջ անտարագիր.
— Բեռներ ունի.—.հավերժական սեր ու սերունդ.
Ո՞ւմ բաղձանքն է, որոնում ես դու, երկիր...

* *
*

Հավերժության զանգերի պես զողանջում է իմ հոգին
Հին մարդկության վանքերի պես մրմնջում է իմ հոգին.
— Որքան տեսաք և զգացիք — սրտիս խորունկ, մութ
խորքերում
Անհայտ թաղված հանքերի պես տրտնջում է իմ հոգին։

* * *

Փայլենազարդ արևի դեմ
— Էլ ավելի փայլուն մի կայծ.
Բյուր իմաստուն և բյուր սիրտեմ
Այնքան չարժեն, որքան մի «բայց»։

* * *

Հազար տիեզերք և բյուր արև
Այնքան չարժեն, որքան բարեն
Զքնաղ կույսի՝ սիրտ պահին,
— Երբ շողում է վարդը դահին։

Միայն, միայն մի ակնթարթ,
Մի հուր հայացք՝ ժպիտը վարդ —
Բյուր-բյուր անգամ բարձր են, բարի,
Քան գոյությունն բյուր դարերի։

* * *

Աննախընթաց՝ բայց ժրաժիր
Մի սոսկ շողյուն կյանքի ընծա.
Տիեզերքի մեջ անծայրածիր
Շողշողացի և անցա։

* * *

Երազումս դու եկար —
Անրջային մի նկար...
— Ոչ մի տալիք, ոչ մի ալիք-փոթորիկ —
Մրրկալի ոչինչ չը կար։

«Ախ, ես ինչպես քեզ նայում,—
Եղեմական սրբությամբ
Շամամ ծծերդ շոյում...
Չնաշխարհիկ նրբությամբ
Անմահ դծերդ դողում».

Անուրջ էր դա, թե նուրբ երազ էր միայն,
Որ դու եկար ինձ այցի...
Ո՞ւր է... արդյոք կա դատաստան
Հավերժացող նոր հայցի...

* * *

Հեռվից ազոտ կանչում էիր դու միշտ ինձ.
Բայց ես ճամբին լույս չունեի, որ քեզ գամ.
— Հնչում էիր, շնչում էիր դու նոր իրձ,
Բայց հույս չկար, ոչ էլ մի բույս անթառամ...

Աստղի նման շողշողացիր ու անցար,
Երազի պես սրտիս կարոտը դարձար.
Քո կարոտով երկրե-երկիր շրջեցի...
— Ինչո՞ւ, ավա՜ղ, ինձ թողեցիր դու անճար։

ՀԱՅՐԵՆԻՔ

Ինչ կա այստեղ, այս լուսնի տակ
Ավելի վեհ, ավելի վառ ու պայծառ,
Քան մեր սրտի փափագն անհագ,
Քան մեր հոգու լույսը անմար.—

Նրա սերն է հավերժական մի գաղտնիք.
Նրա ձայնն է, որ հնչում է դարերից.
— Դու ես լույսը մեր գոյության, Հայրենի՜ք,
Քո ողջույնը գալիս է մեզ աստղերից...

Եվ աստղերը ունեն հավերժ մի գաղտնիք.
Նաև նրանց լույսերի մեջ կա երջանիկ
Ու անվախճան մի որոնում... նաև նրանք
Փափագում են անմահ ու շեն մի Հայրենիք...

Հեռվից հեռու աստղը աստղին ձայն է տալիս.
Ծիրկաթին է, Հայրենիքի հարկը տալիս.
Հավերժության ճանապարհին չնաշխարհիկ —
Քո կարոտներն են, Հայրենիք, միշտ մեզ գալիս...

* * *

Ա՜խ, չը գիտեմ ու չեմ տեսել ես մի վկա.
Որ ինձ ասի, ինչո՞ւ, ավա՜ղ, այս հովիտը ես ընկա...

Սիրտը կրակ, իղձս անհագ ու անվերջ,
Կյանքը դարձավ կարոտների ելևէջ.
— Ոչ մի հնար, ոչ մի քնար էլ չկա,
Որ դեթ պատմի սիրտը այրող հուրն անշեջ...

* * *

Դարերն անցան... նրանց դանդաղ քայլվածքի մեջ
Սպասեցինք մեր կարոտած արշալույսին.
Վեր դասեցինք՝ կյանքի հմայք, աստղ ու լուսին,
Սեր փնտրեցինք հավերժության նայվածքի մեջ,
Որ իմանանք, ինչպե՞ս հասնել անհասին...
Եվ օրն եկավ... արշալույսը շողշողաց.
Վերջին անգամ մթին խավարը դողդողաց.
Բարբառեցին ծաղիկն ու բույսը մեր մասին...
Անմահ կյանքը անեղծ ու շեն տիեզերքի մեջ
Ողջունեցին արևն, աստղերը միասին...

* * *

Ճամփեդ երկար, ինքդդ տկար,
Ինչու համար աշխարհ եկար
Խելքի խրատ, խոսքով առատ Համազա՛սպ.
Կարոտներդդ անծերական,
Փափագներդդ երազական...
Սրբ քո ձեռքին հնար չը կար,
— Ի՞նչն էր պատճառ, աշխարհ եկար
Խոսքով արի, սիրտդդ բարի Համազա՛սպ:
Մտքեր ունես՝ բոց ու կրակ,
Հետքեր ունես միշտ հասարակ...
Հավքերն եկան և աշխարհին
Ողջույն տվին և շուտ անցան
— Ովքե՞ր էին, որ քո սրտին երազ դարձան —
Մինչ դու տկար, ճամփեդ երկար
Խելքի իկար, խալխի նոքար Համազա՛սպ...

ԻՄ ԿԱՏՈՒՆ

Կատուն երդեց իր սիրուհու թաշնակին,
Իսկ Հորացիոն գովքը արեց թութակին.
Մինչ գերագանց է իմ կատուն սիրատուն,
Եվ միթե՞ նա արժանի չէ իմ երգին:
Բայց ի՞նչ երգեմ, ի՞նչ ասեմ քեզ, իմ կատու.
Դու իմ սրտին միշտ սիրելի լուսատու:
Տխուր ժամին, հոգսերի մեջ դառնության
Ինձ կարեկից և սրտակից դո՞ւ ես, դո՞ւ:
Նայում էի զմրուխտ ու վառ աչքերիդ. —
— Զուցդ ասացերին.— վառ կրակ կար նրանց մեջ.
Տեսնում էի այնտեղ հոգուս ելևէջն...
— Ի՞նչ կար խորքում խորհրդավոր հայացքիդ...
Եվ դու հիմա չկա՞ս, ավա՜ղ, էլ չկաս.
Կարծես համայն աշխարհն է այժմ ինձ պակաս:
Զարգարածք մեզ բաժանեց դժնաբար
— Դաժան գործին գատ ու պատիժ կա՞ արդար:

ԴԻՔ ԵՎ ԴՅՈՒՑԱԶՈՒՆՔ
ՀԱՅՈՑ

ԴՈՎԻ ՀԱՅՐԵՆՅԱՑ

Ս.

Հպարտ ու վսեմ երկնքի պես խորհրդալի հայրենիք,
— Ինչպե՞ս անեմ, դովքդ ասեմ աշխարհին.
Քո սրբարար կրծքումը կա հավերժական մի գաղտնիք,
— Ինչպե՞ս ասեմ սիրաարժան ես քո խոսքը օտարին։
Քո լեռները, սեգ լեռները,— անմահացած վիհ բարձունք,
Եթերի մեջ վառ աստղերին հավերժի դովքն են ասում,
Քո ջրվեժներն ու աղբյուրներն,— անմեղության ջինջ արցունք,—
Դեռ շլսված գեղեցկության կարոտներն են միշտ խոսում։
Իմ հայրենի՜ք, քո ճակատին կա հաղթության մրցանակ,
Որ նշան է ճշմարտագործ, հավերժական մի փորձի.
Ասես կնիքն աստվածության, մի վերելքի նոր կոչնակ,
Քո մեջ կա սեր նոր կերտումի և հոգևոր նոր գանձի։
Ո՞վ կարող է քո դեմն ելնել,— քո հաղթ ընթացքը շեղել.
Ո՞վ կարող է արևի դեմ անմտաբար մարտ մղել.
Քո վերքի պես երկնքի տակ դեռ ոչ մի վերք չի եղել,
— Օ՜րը կը դա,— պայծառ օրը, քո երկնագոր մեծ անձի։
Քանի՞ անգամ կույր ու կոպիտ ազգերն եկան չարակամ
Եվ խորախոր ձորերը քո արյուն լցրին ու անցան.
Քանի՞ անգամ քաջերը քո դաշտերիդ մեջ անթառամ
Հավերժարար գաղափարի, ճշմարտության, զոհ դարձան...
Հողմերը չար հեգնանք արին քո երկնավոր անուրջին,

Մրրիկներում՝ մահվան բոթը թնդաց քո սուրբ ականջին
Բյուր բյուրերին դու զոհեցիր ազատության կամուրջին,
— Բայց Մասիսը կանգնած է՝ քեզ իբրև անեղծ հուշարձան
Անջնջելի եռանդով լի, քո սուրբ երազը դեռ կա.
Հավերժացող դու տենչ ունիս, Արարածը քեզ վկա.
Տե՛ս, կանչում է քեզ քո ասողը դեպ փառավոր մի բարձունք.
— Քո տանջանքին, քո տենչանքին — սահման չը կա, չափ չը կա:
Քեզ պետք են բյուր երգ ու երգիչ, բյուր գրքություն, բյուր ուսմունք,
Որ միշտ հնչեն գործերը քո իբր հավերժի մի զեղմունք:—
Ա՛խ, ես գիտեմ քո սուրբ ուղին, դեպի ասողերը ուղղված.
Տե՛ս, քո բաղձանքն է իմ սրտում դարձել անմահ մի ասված,
— Իմ հայրենի՛ք,— սիրո երկինք, քեզ պես քաղցր բան չը կա:

Բ

Տեսնում եմ ձեզ, իմ հայրենի զմրուխտ սարեր, ջա՛ն սարեր,
— Ձեր վեհությունը կապված է իմ հոգևոր ցավի հետ.
Գիտե՛ք արդյոք, դուք դառնալի պանդուխտ օրեր, ջան սարեր.
— Ձեր լռությունը չափված է իմ երերուն նավի հետ:
Ձեր լանջերը՝ եղեմական ծաղիկներով զարդարված,—
Ընտանեբարեկիկ գորգերի պես շողշողում են լույսի տակ:
Ա՛խ, իմ սիրտը, որը ձեզ հետ և ձեզանից է ծնված,
Նոր երազի, նոր մուրազի է միշտ կարոտ լուսնի տակ:

Կանգնած եք դուք, ինչպես կյանքի պահապաններ վիթխարի
Եվ նայում եք լուռ ու հպարտ՝ իրադարձին աշխարհի:
Եվ ինչ որ կա, ինչ եղել է, կամ անցել է այստեղից,
Դուք տեսել եք,— դուք լավ գիտեք գործերը վատ և բարի...
Դուք լսել եք և լավ գիտեք բյուր աղգերի հին ուղին,
— Հեռաքրքիր միշտ նայում եք վե՛ր, ասողերի լուռ թաղին
Հեռևում եք դուք մեր բախտի արարքներին ու խաղին.
— Դուք լա՛վ գիտեք, ուր է ձգված ճանապարհը արդարի:—

Իմ պապերը ման են եկել ձեր լանջերին աննման,
Իմ կապերը ձեր սրտի հետ անքակտելի կը մնան.
— Այս երգերը երանավետ ձոնում եմ ձեզ, ջա՜ն սարեր,
Իմ վերքերը՝ խունկ են միայն ձեր անսովոր սրբության:
Օտար է ձեզ այն ամենը, որ տկար է, անցավո՜ր.
Ինչպես կայծեր դարեր առաջ, շողշողում եք և այսօր:
Ա՜խ, իմ կյանքի բյուր բերքերը նվիրող են ձեզ, ջա՜ն սարեր,
— Դուք կանգնած եք հավերժության պատվարի պես միշտ հզոր:
Երկին, երկի՜ն կանչում եմ ձեզ, երանավետ իմ պապեր.
Ձեզ հիշելիս՝ արթնանում են գոյության բյուր նոր կապեր...
Ես էլ ձեզ պես միտք եմ ուղում այս ալեկոծ աշխարհից,
Ես էլ ձեզ պես սրոնում եմ միշտ երազած նոր ափեր...
Ձեր գործը սուրբ ես հիշում եմ իմ մանկության օրերից,
Ձեր ջինջ հոգին ես զգում եմ սարից, ջրից, քարերից:
— Եվ ջրվեժը, որ ճրչում է ու ցած նետվում ժայռերից,
Խոսում է ինձ ձեր սրբության լույսը պայծա՜ռ, բարեբեր...
Ես էլ ձեզ պես մոռնում եմ, ահա, վերջին սահմանին.
Ես էլ ձեզ պես լույս եմ ուղում, հավատարիմ պայմանին:
— Հապա՜ր, հապա՜ր ճամբեք անցա, տեսա անապը բախտի,
Հապիվ հասա ճշմարտության լուսաշողիկ դիվանին...
Աչքիս առջև կարծես անցան կապո՜ւյտ, կապո՜ւյտ թռչուններ,
Ամենուրեք ես լսում եմ հեռվից անհայտ հնչյուններ.
— Որքան էլ ես երգեր ասեմ, ծովը սրտիս չի պակսի,
Բայց էլի ձեզ, իմ խնդձ պապեր, տալիս եմ նո՜ր ողջույններ:

Գ

Ես շատ անգամ նայում եմ խիստ խոր աչքերին լռության.
— Նա է գուցե պահել իր մեջ պայմանը այս գառնության.
Ինչ է ուզում խավարն անմիտ՝ սրտիս խորքը թափանցող,
— Երազներ են իմ մտքին պետք՝ նոր արևներ խոստացող...
Մեղքեր ունեմ ես լուանի տակ, վերքեր ունեմ անդարման,
Որ դրել են իմ սրտի մեջ նոր գոյության նոր պայման:
— Ո՜ւր ես գալիս դու դեպի մեզ, ով նոզկանքի չար դուման,—
Տեսեք, ինչպես ինձ հուզում է անուրջը վեր բարձրացող...

Աչքս ձգած չինչ արևին, աչքս ձգած միշտ վերև,
Բախտն եմ ուզում ես աշխարհին,— բախտն է սակայն անները.
Ես չեմ մենակ, որ խեղդվում եմ իմ կարոտի ծովի մեջ,
— Մեզ պես բախտի կարոտ են միշտ նաև ծաղիկն ու տերև
Բախտն է, տեսեք, կարծես մի ամպ՝ երկրի վրա ծարավի՝
Եվ ո՞վ գիտի, որտեղ պիտի նա կանգ առնի, անձրևի...
Նա ծնված է, որ երկնքից նոր գոյության բարևի,—
— Բախտը կը գա,— քանզի արդեն շողշողում է նո՛ր արև...
Գետնին պառկած մերթ գնում եմ իմ տկանջը ես հողին,
Որ լավ լսեմ— Ո՞վ է հեռվից խորհրդավոր ձայն տալիս.
— Գուցե այդպես բույսն ու ծաղիկն է մրմնջում իր շողին,
Գուցե իմ հին երազներն են դեպ այս նոր կյանքը գալիս...
Ես ամեն օր սպասում եմ... այսօր — էգուց՝ սիրարժան
Կյանքի տերը կը խափանի դաղանանոցը դաժան...
— Երբ կը լինենք մենք հավիտյան ասպետների պես
անբաժան,
Տեսե՞ք, ահա օր ու գիշեր այդ է, որտեղ հույս տալիս...

Դ

Երբ ես այսօր խնկարկեցի իմ բաղբաջան պարտեզին.
Աչքս ընկավ պատին կախված մեծ, ընդհանուր քարտեզին.
— Ով էր խենթը, որ թանաքի սև բծերով, գծերով
Ձև է տվել կյանքի հզոր ու փառավոր հանդեսին:
Ամենուրեք՝ լույսերով լի շեն քաղաքներ ու գյուղեր,
— Կյանքի ծառը՝ հավերժության տարածել է իր ճյուղեր...
Իսկ դու, պանդո՞ւր, որ գծել ես անմիտ ու խիտ այս տողերն,
Միթե՞ այդպես ես հարկ տվել բանաստեղծի հավեսին...

Տես, քարտեզի խուլ անկյունում ապուշը այդ երջանիկ,
Գիծ է քաշել, չնչին մի գիծ, ինչպես փոքրիկ մի հավկիթ,
Ուր կարդում եմ քո անունը, իմ աննման հայրենի՞ք,
— Քո անունը՝ փրկության տեր, արքության տեր ու վճիռ:
Քեզ, որ դարե՞ր, անթի՞վ դարեր, փորձն ես արել վերելքի,
Քեզ, որ այսանց հավերժարար ցույցն են արել նոր խելքի,—

— Քեզ, իմ անուշ, նարգիլ ու նուշ Հայաստան,
Նկարել են ինչպես անմիտ, գժդուլն մի գիծ թանաքի...

Ես չե՞մ կարող, ես չե՞մ կարող աչքիս անգամ հավատալ.
— Ո՞վ էր իրենը, որ հանդգնեց քեզ այս անմիտ ձեր տալ...
Ես նայում եմ այս քարտեզին և իմ սիրտ պարտեզին՝
Եվ չը գիտեմ,— ողբը անել այդ խենթության, թե խնդալ։
Դու ես այստեղ միշտ անվանի, իմ հայրենի պերճ երկիր,
Եվ քեզ, որին ասողները իսկ, նայում են միշտ համակիր,—
Քեզ, որ միայն հավերժության փորձն ես արել անխափեր,—
— Ես չեմ կարող այս անիմաստ սև գծերով կարդալ...

Ե

Եվ եթե կա ընթերակա հավերժության խորհրդին՝
Քո լեռներն են, իմ հայրենիք,— քո լեռները երկնաձիգ։
Եվ եթե կա անմահ վկա ասողների վեհ բնույթին,
— Դու ես միայն սիրտ կնիք՝ երանության հարսանիք...
Քո կրծքից է բարձրանում վեր Մասիս սարը անվեհեր,
Որի գլխով անց են լայնել ժամանակի ալիքներն,
— Նա, որ իր մեջ պահած ունի գոյության խոր գաղանիքներն,
— Հասկանո՞ւմ եք,— նա որ գիտի հեռու և նոր դալիքներն։

Եթե կյանքը հավերժի հետ կնքած ունի մի պայման,
— Դու ես նրա կնքավորը՝ արքայանիստ ո՞վ Մասիս.
Քո գագաթը՝ արևներին, մրրիկներին մի սահման,
Քո ճակատը օրհնում էին Բել ու Ադրա և Խասիս։
Ժամանակի երատանը քո ձեռքին է, ո՞վ արքա.
Քեզ ուրացող երկրի վերա ոչ եղել է, և ոչ կա.
Քարվաններն արևելքի՝ երկրե երկիր մեկնելիս՝
Օրհնում էին քո անունը, որ բախտին է նախադահ...

Դու ես, դու ես հանդիսավոր և ինքնահաճ մայր-Արաքս,
Որ բնության վճարում ես անմահության՝ սիրտ մաքս...
Կախարդի պես մրմնջալով երանության հեքիաթներ,
Դու զընգում ես ինչպես բարձր ճենապակի,— չին ու սաքս...

Ինչպես գեմբը հայելու մեջ՝ քո ջրերից այդ հնչուն
Շողշողում են բյուր անցքերը հազար-հազար դարերի.
Ինչպես տեսքը նայվածքի մեջ՝ քո ափերին խոխոջուն
Դողդողում են ծաղիկները — իրրև հմայքն արդարի:

Ա՜խ, թողեք ինձ,— ես ուզում եմ գովքը անել Արաքսի,
Նրա նման հեռուներին բարև տանել կարոտով,
Նրա նման իմ ափերը զուգել զարդով միտաքսի,
— Թող իմ սրտից նրա նման կարոտն հնչի՝ որոտով:
Դու շփում ես, դու ծփում ես Այրարատի դաշտերի մեջ,
Դու խաղա՜ղ ես, ինչպես ծովը հավերժության տաշտի մեջ,
Քո գյուքական կոհակները, տես, փարվում են ափերին,
Ինչպես անհագթ զինվորները հաղթանակող վաշտի մեջ...

Տե՛ս, քո կողքին կանգնած է միշտ՝ իրրև բարձր դատավոր,
Եվ հսկում է քո վայելքին Մասիս սարը զորավոր.
Դու կռվում ես՝ ճահիճների, դահիճների դեմ ելած,
Իսկ աստղերը նայում են քեզ, տես սիրո կընքավոր:
Արա՜քս, Արա՜քս, դու սահում ես դեպի ծովը խայտալով,
Կյանքի մասին հին զրքերը, հին վերքերը կարդալով.
— Դու խոհում ես և զոհում ես քո օրերը բարձրության,
Դու շփում ես քո արցունքը՝ մեր սրտերին վա՜յ տալով:

Ինչպես կուրծքը նարահարսի՝ ադամանդով զարդարված,
Բյուր դարերը քեզ զուգել են դոհարաղարդ քարերով.
— Այս ափերի, այս վայրերի, իշխողն ես դու և աստված,
Տե՛ս, խաղում ես և շողում ես կախարդական շարերով:
Երբ գալիս են սրատարոի հովիվները քեզ այցի,
Սրբության տեղ ադոթում են քո լուսատու ափերին...
Պերճ հոտերը բյուր, ոսկեղեղում ոչխարների և այծի՝
Իբր ապավեն՝ դիմում են քեզ շոգ և կիզիչ օրերին...

...

Արա՜քս, Արա՜քս, դու ջանում ես և տանում են դեպի ծով
Իմ սիրասուն հայրենիքի խոր արցունքի հոծ գումարն:
Անդրադարձող երկնքի պես, հայելուդ մեջ անխառով
Նկարված է հավերժացած մեր բարձունքի սուրբ տոմարն:

Դու լավ գիտես և տեսնում ես երթը հղոր այն ազգի,
Որ կարող է անմահության՝ շարունակված դեռ խոսքի...
Շնիր Արարատ քո ափերին նոր գոյության նոր ոսկի,—
Որով կերտվի քո փառքերին գյուքակախարդ վեհ կամար։

9

Իսկ քեզ, իսկ քեզ ինչպես պիտի ես մոռանամ, իմ Սևան,
Անուրջների, տրտունջների, դու անհման օթևան...
Ո՞վ կարող է ստեղծագործ քո լույսերը մոռանալ.
— Դու, աստղերի և արևի խորախորհուրդ հարևան...
Հազար-հազա՜ր դարեր առաջ հսկաները լաց եղան,
Սիրո համար ջինջ արցունքի բյուր-ակները բա՜ց եղան.
— Արցունքից ես, բարձունքից ես, դու հավաքել քո ջրերն.
Եվ քո կողքին լսում է քեզ միշտ կախարդված Երևանն.
Միայն արցունք,— միայն արցունքը կարող էր ծնել քեզ.
Միայն բարձունք,— միայն բարձունքը կարող էր սնել քեզ։
Քո ջրերը զմրուխտ ու լալ, կյանքի գաղտնիքը քո մեջ,
Սեղ լեռներից նայում են քեզ ծաղիկները սիրակեզ։
Ինչպես հաճախ հողմի շնչից խիստ օրորվում են հասկեր
Քո ափերին օրորվում են խորհուրդ փնտրող բյուր աղջեր,
Չէ՞ որ նրանք ոգևորված արևների կարոտով,—
Քեզ են հանձնել, որ դու հնչես նոր գոյության սուրբ խոսքեր։

Տիեզերքումն այնքան չը կա լալ ու գոհար և ալմաս,
Որքան ունես դու քո կրծքին ադամանդներ խոր ու խաս.
Ողջ աշխարհը չունի այնքան վառ մեղեդի և նվագ,
Որքան ունի քնարը քո՝ խորհրդավոր երգ ու սազ։
Քո ափերին կարոտներն են,— կարոտները ման դալիս.
Իսկ լեռները՝ շրջապատ բռնած, կազմել են նոր մի մեջլիս.
Ու լսում են քո երգերը և նայում են քո դեմքին.
Որ դու հնչես նրանց սրտին գոյության նո՜ր ավետիս...

Սևա՜ն, Սևա՜ն, իմ պապերը՝ կանաչազարդ քո ափին
Կարոտով լի և սրտագին աղոթել են անխարին.

Ինչպես անվերջ իր մուրազին սպասում է ուխտավորն,
— Սպասել են նաև նրանք ճշմարտության նոր շափին...
Սևա՜ն, Սևա՜ն, քո վեհությամբ, քո բարձրությամբ առանցիկ
Դու հեգնում ես նույնիսկ փառքը օվկիանոսի անքննին.
Լուռ գիշերին քո մարգարիտ ջրերի մեջ թափանցիկ
Լող է տալիս, շող է տալիս բյուրաստղանի Ծիրկաթին...

Կարապները, որ սահում են երազի պես քո վերև,
Մակույկները, որ լողում են անհասի պես քո միջև,—
Արթնացնում են խոր ու խորունկ իմ հուշերը անցյալի,
Երբ քո ափին արքայական կյանքին շողում էր արև...
Աղբյուրները մարգարտահոս, որ շիթվում են քո կրծքին,
Ջրվեժները արագախոս, որ թափվում են քո մեջքին.
Ձեփյուռները քաղցր ու քնքույշ, որ դգվում են քո աչքին,—
— Քեզ խոսում են հին դարերի վառ հեքիաթը ու բարև...
Այդ հեքիաթն է, որ հնչում է քո ափերին լուսադեմ...

Սևա՜ն, Սևա՜ն. դու չես մենակ, որ դողում ես իմ սրտում.
Տե՜ս, վառվում է հեռվից ճերմակ, հզոր ճակատը նրա,
Որն աշխարհին մայր է եղել,— mater mundi անժխտում,—
— Նա է հրսկում երկրի վերա, նա է կյանքին ուսհվիրա։
Մասիս, Մասիս. երբ նայում եմ քո աննման ճակատին,
Բյուր-անցքերն են իմ հայրենի խորունկ փարվում իմ սրտին.
— Անի-Քամա և Արտաշատ, Անի քաղաք և Դվին —
Բյուր փարձերով, հուր գործերով արշավում են ինձ վրա...

ՀԱՅԿՆ ՈՒ ԲԵԼԸ

Ամենակալ աստվածներից — Բելն, Աշուրի թագավորն
Երբ որ հասավ հավերժացող իր փառքերի գագաթին
Կանչեց իր մոտ վզրուկ, գզրուկ, իշխան, տուրտան, նենդավոր
Եվ ասմբրկեց, հզորության վառ պսակը ճակատին:
— «Իմ տերն աստված, հզորն Աշուր կարդել է ինձ
աշխարհատեր
Արդ՝ Աշուրի անմահ կամքովն ես եմ աստվածն իշխանավոր.
Հնազանդ են իմ հաղթ կամքին անթիվ, անծայր երկիրներ
Եվ իմ առաջ սողսողում են բյուր ազգերի մեծամեծներն:

Ամենազոր իշխողն եմ ես ողջ աշխարհին բովանդակ.
Գլուխն եմ ես անմահների, ձեռքումս միշտ հաղթանակ.
Ինձ են նայում,— կամքիս հլու ասող ու արև լուսաձեմ.
Մարդուկն եմ ես, և ողջ տիեզերքն — իմ գործերին միայն
բեմ:
Եվ արևելքն, և արևմուտքն հպատակ են իմ գենքին.
Բյուր ազգերը ազոթում են, ինձ մաղթելով սե՛ր, համ՛ բ.
Մարդուկն եմ ես — Սահմանադիրն հավերժական օրենքին.
— Ո՞ւր է, ասեք, Նայիրի տերն — ապստամբվածն՝ հայոց
Հայկն»:

Այն ժամանակ վզրուկ, գզրուկ, իշխան, տուրտան մեծերից
մեկն
Մեծ Աշուրի աստված Բելին այսպես հնչեց ահաբեկ.

— «Տեր իմ, արքայդ հզորագույն, Աշուրածին անմահ Մարդուկ
Հրամայիր, քեզ կարող եմ ես հայտ անել, իրրև սարուկ։
Նայիրի տերն — իշխանավոր և ապստամբ Հայկ բաջազունն
Բելնից անջատ՝ Այրարատյան դաշտն է ընտրել իրեն տուն։
Եվ պահում է նա իր հզոր իշխանության այժմ ներքո
Երկիրները բարձր Ուրարտու, աշխարհն ամբողջ Նայիրի,—

Երնիվանի և Բարանյա, Զինդուն, Լուբա, Պահիթերի.
Քիմմե, Ութքա, Կիլբու, Սալվա, Նալիպարի, Մաշդունը քո
Նաև հարուստ բազմաբազում շեն քաղաքներ անվանի
— Թեյշեբ, Թուլիբ, և Անիշե, հզոր Տուշպի կամ Տոսպիտիս,
Եվ Արզաշկուն արքայանիստ,— իշխող սրտին ավետիս,—
Որոնք, իրավ, անմահ Մարդուկ, իմ տիրոջն են արժանի։
— Անպարտելի, աշխարհակալ իմ թագավոր, տուր հրաման,
Եվ դարձը քո կը խորտակի ապստամբին ամբարտավան»։

Բել Մարդուկը հայնժամ ընտրեց պատգամավոր մեծանձանց
Եվ առաքեց դեպի Հայկը, որ հայտ անեն կամքը իր.
Ապա հնչեց պատգամն հզոր, հանձնեց բազում զոհար ու
դանձ.
— «Արդ՝ խոսում է ամենակալ, աստվածազոր տերն Աշուր.
Բաբելոնում է աստվածների մեծ աստվածը՝ Բելն արքա,
Որի գահն է հավիրժական, կամքն է անեղծ, գերակա։
Գնացեք հասցնեք դեպ Նայիրյան երկիրը այն լեռնային,
Եվ իմ կողմից այսպես ասեք Թորգոմյան մեծ զավակին։

«Դու, քաջազուն և մեծ հաջորդ աստվածասեր Թորգոմի,
Ինչո՞ւ փախար և ապրում ես սառնամանի ցրտերում։
Բուրն ու բորան քեզ կը դնեն ճանապարհին անկումի,
Մինչ խանդավառ կյանքն է հոսում իմ ծաղկաբույր
աշխարհում։
Վերադարձիր, ապրիր այնտեղ, ուր կյանքդ աս երկրիս մեջ.
Թող ջերմանան ցուրտը տարած քո մարմինը, քո հոգին.
Տե՛ս, երջանիկ իմ ձեռքի տակ անթիվ ազգերն են թերկրում,
— Մի՞թե իրոք հակառակ ես դու արարիչ իմ կամքին»...

Ճամբա ընկան պատգամավոր մեծ քաջերը շտապուլյի.
Եկան, հասան Թորգոմածին ասավածազարմ հերոսին.
Եվ Մասիսյան գաշտավայրում՝ երկնքի տակ իսկ կապույտ
Ձիլ հնչեցին կամքը Բելի՝ ճշմարտության փարոսին։ —

— «Ա՜յդ է միայն երկնաշնորհ կամքը հզոր տիտանի» —
Բացականչեց Հայկը անվախ,— ինչպես արևն է անկախ,—
«Գնացեք, ասեք դուք ձեր տիրոջ, թող միշտ լինի
խաղաղությամբ,—
Կամքը նրա իմ տան համար չի թվում ինձ պիտանի...
Արևաշատ իր երկրի մեջ թող ինքն ապրի ջերմագին,
Թող բյուր ազգեր նրա կամքին իրավ լինեն հնազանդ.
Իսկ ես կապրեմ միայն այստեղ,— Մեծ Մասիսը իմ կողքին,
— Ցուրտն է ոչինչ, երբ վեհության՝ մարդը ունի նպատակ...

Ճոխ հարավի հովիտներում կամքն Աշուրի թող ծաղկի,—
Իսկ Թորգոմյան նոր օրենքը՝ իմ տանը միշտ ախտարակ.
— Գնացե՛ք, ասե՛ք.— լավ է ցուրտը, քան մեծ փառքը
դժոխքի,
Ես ընտրել եմ մեծ Մասիսը մեր գոյությանն Աշտարակ»։
Վերադարձան փոր ու փոշման քաջերն, ինչպես ժիր մոգեր,
Ու պատմեցին հզոր Բելին պատասխանը մեծ Հայկի։
Խիստ զայրացավ տերն աշխարհի, շողքը կորավ հմայքի.
Եվ ամպրոպի ազազակից, հնչեց ահեղ իր խոսքերն.

— «Բարբառում է ինքը ասավածն ամենակալ Աշուրի,
Նրա հաջորդ աշխարհակալ Բել-ասուուծն կամքն է այս.—
Տիեզերատեր մեծ արքայի, արդարադույն թագավորի,
— Իշխանությամբ անմահացող գերիշխանի խոսքն անհաս.
Նա է խոսում, որին նմանն ոչ եղել է, ոչ էլ կա,
Որը տիրում է Աշուրի հաղար ու բյուր երկիրներին գերակա
Մարդուկն է սա,— Բել ասավածը, հավերժակյացն
ամենազոր,
Որ քաջազն տուրտաններին, իշխաններին փառավոր

Աստվածական պատվերը իր հայանաբերում է այսպես.—
— Կանչել խիստուն զորքերս բյուր և հանդես դալ ասպարեզ
Հանց իրիկվա դաժան մի թուխպ, սելավի պես, իբր հեղեղ։
Այրարատյան դաշտը զորքով ներս կը խուժեմ ես ահեղ,
Կը խորտակեմ այդ ողջ երկիրն և ապստամբ ժանտ Հայկին
Շղթայակապ ասա կը բերեմ իբրև գերի, իմ կրքին,
Քանզի այդ է Բել-Մարդուկի աստվածային կամքն անշեղ...

Պետք է շտապով ամբարտավան այդ վեհությանը վերջ տալ.
Ոչնչացնել շար ըմբոստին իր սերընդով խելագարի,
Եվ հիմնովին քանդել նույնիսկ մեծ Մասիսը,— բախտին
տարք,
Որ չը ճրդնի ապրստամբին պանդուխտ դասերը կարդալ»։
Այդպես Աշուր թագավորը կռվի գնդերը կազմեց.
— Հալալ-հալալ զենք ու զինվոր՝ խառնիճաղանճ մի ժխոր—
Ներհակ ուժեր, խառվ խուժեր, կամ ամբոխներ հորձախոր՝
Եվ հետևակ այդ զորքերով ճամբա ընկավ Բելը մեծ։

Եվ շարժվեցին ամբոխները՝ խելագարվա՜ծ, կատաղի՝
Ինչպես անցնում են հարդատաս հեղեղները զառիվայր,—
Առանց սիրտ դաղափարի, միայն ուժով մեռաղի։—
— Գաղանները ճրդնում էին երկրին տիրել ծայրիծայր...
Բելն շտապեց երկիրը այն, ուր ապրում էր Հայկը քաջ—
Նեմրութ սարի շրջակայքը, ուր Տոսպիտիս կա մեծ լիճ,
Որ կազմել էր ալիքների շընաշխարհիկ մի դահլիճ,—
— Ուր Նայիրյան հողմերն էին սուլում, սահում ձախ ու աջ...

Եկավ, կանգնեց գլխի վրա կանաչազգեստ բլուրի
Եվ խուժադուժ զորքերը բյուր նա տարածեց շուրջը իր.
Աստվածն այդ Բել.— Մարդուկը՝ խել,— հզոր արքայն
Աշուրի՝
Մեծ Նայիրի գլխի վրա թափահարեց մուրճը իր։

Ահա, Հայկը աստվածային դանդուրներով և արի.
Արագավազ ու բարձրաձայն, ստեղծագործ, վիթխարի,—
Նա, որ եղավ ազգին՝ ուրույն նախահայրը գերազույն,
Նա, որ կանգնեց հզոր պատվար նոցի զորքի դեմն օտարի։

Հայկը այդպես՝ արարչական խորհուրդները իր սրտում՝
— Վայելչակազմ, քաջահասակ, գանգուր մազերը ոսկի,
Հավերժության խորությունն իր հայացքի մեջ անտրտում,—
Արարիչը նոր հայանության, վերին քերթողը խոսքի,—

Զորքը կանչեց,— երեք հարյուր մեծ քաջերից, ազնվավոր,՝
Եվ դուրս եկավ թշնամու դեմ քաջամարտիկ ու կորով։
— Երեք հարյուր ընտիր հերոս՝ ճշմարտության ջատագով,
Երեք հարյուր հույսի փարոս՝ անդեղվուն և հզոր։
Հայկը կարդաց, ինչպես ասված, խոր ու խոհեմ և ուշիմ,
— Աչքերի մեջ անջնջելի երկու պայծառ արեգակ,—
Ոգևորված դիմեց զորքին,— համոզմունքով մաքրիմ,—
Եվ քաջության արձագանքը թնդաց ասես նոր կոչնակ.—

— «Թորգոմածին մեծ ազգածներ, մենք գնում ենք կռվելու.
Բայց իմացեք. ճշմարտության կռիվն է սա վեհագույն։
Բյուրապատիկ է թշնամին ամբոխներով իր գրժգույն,—
— Նա ձի՞ր չունի փառքի համար կրակի պես վառվելու։
Մինչ արդարի մեկ դիմվորը՝ հազարներին պատասխան,
Մեկ ճառագայթը արևի՝ խավարի դեմ անսահման.
Հաղթանակը մեզ կը կերտի ճշմարտության նոր կոթող,
— Քաջ և արի մենք հարձակվենք,— փառքը մերն է ոսկեշող։

Նայե՞ք. այնտեղ՝ մեծ բլուրի բարձրավանդակ ուսերին
Ամբոխի մեջ՝ իր քաջերով կանգնած է նա,— Բել հրսկան.
Շանթի նման պետք է խուժել զորքի միջով դեպ արքայն,
Եվ նրա մոտ կռիվը տալ թշնամության սուսերին։
Եթե, իրավ, կարողանանք զորքի գլուխը բռնել,
Զորքը ամբողջ ցրիվ կը գա,— ամբոխը խուժ կը փախչի...
Հիշե՛ք միայն.— պետք է տպրել մարդավարի, կամ մեռնել.
— Մեր արյունը հանուն փառքի երբեք իզուր չի կորչի։

Կամ կը մեռնե՞նք,— շեշտեց նորից նա իր որդոց ականջին,
Եվ ճորտության մեջ կը մնա սերունդը մեր հավիտյան,
Կամ կը հաղթենք, և ազգը մեր, տրված սիրո անուրջին,—
Կը բարձրանա կատարները երանելի վեհության»։

Եվ հարձակվեց Հայկը խմբով Բելի վրա այն ահեղ,
Որ եկած էր մեր երկիրը հրով-սրով գերելու։
Կայծակի պես նա ներս խուժեց թշնամու խորքը՝ այնտեղ,—
Ուր կանգնած էր հրսկա Բելը՝ կռվին միայն նայելու...

Ճշմարտությունը շանթածիր՝ հաղթություն է միշտ անշեղ.
Ի՞նչ կարող էր Բել-Մարդուկը նրան լինել դիմադիր։
Կարծես կայծակը փաթաթվեց նրա վրդին՝ տեղնուտեղ.
— Հայկը բռնեց և շամփուրեց նրան սրով իր ընտիր։
Այնքան ուժգին նրա կրծքին սուրը վարեց երկսայրի,
Որ այնտեղից սուրն հանելիս՝ թոքը նրա դուրս պրծավ։
Տապալվելով՝ Բել-Մարդուկը ճիչ արձակեց մի վայրի,
— Կուրծքը նրա բացվեց ինչպես մի մթագույն քարանձավ։

Ոգևորված՝ առյուծասիրտ մյուս քաջերը Հայկազյան
Հարձակվեցին կարկուտի պես,— գործը հանձնած եռանդին։—
— Տեսե՞ք, իրոք այդպես միայն արան է հնձում գերանդին...
Թշնամի զորքն ահաբեկվեց, կարծես խրտնած մի գազան,—
Խառնիճաղանճ զորքը իսկույն ցրիվ եկավ ու փախավ,—
Բայց բլուրին նա պահ ավեց երկու հաղար դիակներ։
Քաջարությունն հանդես բերեց այնպիսի մեծ սարսափներ,—
Որ բլուրի կողքին իսկույն մի նոր հրաշք դուրս եկավ.—

Մեծ քարվանը Մարդուկ Բելի ահաբեկեց ցավագար,
Վարիչների և ուղտերի սրտում սարսափը թնդաց,—
— Եվ քար կարեց քարվանն իսկույն, տեղն ու տեղը դարձավ
քար,—
Մինչև այսօր կանգնած են դեռ ուղտերը այդ քարացած։
Գործի անցավ Հայկը, ինչպես հաղթանակող մի աստված,
— Մեծ մարմինը սատկած Բելի, այլև քառասուն դի մթին —
Իր զորքերով նա վեր հանեց Նեմրութ սարի գագաթին,
Եվ կատարեց փորձը, ինչպես հավերժության նոր հաստված։

Փորել ավեց սարի գլխին լայն ու խորունկ մի թոնիր.
Եվ նրա մեջ Մարդուկ-Բելին՝ ընկերներովն իր այրեց։

Երբ հորի մեջ կրակին հանդիպեց, նա ջերմ ողջույն կատարեց.—
— «Աստվածների հզոր աստված, այս նոր փոշին երկրի
վրա մի՛ ցանիր»։
Իրրև հրաշք՝ մեկ վայրկյանում կրակ-փոշին դարձավ ջուր,
Եվ լճակը մինչև հիմա Նեմրութ սարի գլխին կա.
— Պայծառատես մի ավազան, ալիքներով միշտ անլուռ,—
Մրմնջում է նա դեպքը դեռ՝ Հայկի գործին միշտ վկա...

Հրաշքն այդպես քաջ կատարեց հանճարը մեծ Նայիրի՝
Մեր Մասիսը սարբեց սիրո նոր տեսարան հմայիչ։
Էլ ավելի կախարդաբար երգը հնչեց Աղի-լիճն.
— Եվ վաստակեց Հայկը այդպես մեծարանքը աստղերի։
Ժամանակը պատույտ եկավ։ Դարերն անցան խառնիխուռն՝
Նեմրութ սարի գլխին լիճը հնչում է դեռ հեքիաթն իր.
Իսկ քարացած այն քարվանը՝ բլուրի մոտ՝ լիաբուռն՝
Պատմում է դեռ Հայկին ձոնած, հրաշքով լի արարն իր...

Քեզ, որ եղար աղատության ապավենը ինքնագեղ,
Քեզ, որ ազգը երկինք հանեց քո քաջարի գործի հետ,
Եվ իսկ այնտեղ՝ բազմատաղության կազմել ես դու մի
խմբակ,
Եվ շողում ես Օրիոնի հանդեսին մեջ առհավետ.
Գլուխն ես դու, Հայկ Մեծարի՝ մեր ազգային տոմարի.
Դու կազմեցիր ժամանակի թվարկության նոր շրջան.
Դու կանգնեցիր նոր սյունները հավերժական կամարի
— Դու մեր մեջն ես, ինչպես սիրո երանատես աստիճան։

ԳԵՂԵՑԻԿՆ ԱՐԱ ԵՎ ՇԱՄԻՐԱՄ

Ա.

Երկիրն է այն անծայրածիր, մեծահուչակ, անխրշուր,
Որին կերտեց ինքն՝ երկինքն անմահության ապարանք.
Թագավորն էր նրա գահին ասավածազարմ մեծ Աշուր,
Որ բերել էր ջինջ եթերից կյանքի բարձր զարդարանք։
Ասաված էր նա ամենակալ, անմահների խոր ցեղից.
Համակիր էր նրա գործին ինքը Շամաշը հավերժ։
— Նրա հզոր կարողության իրավունքն էր անշեղից,
Ասողները իսկ դարձան վկա փառքին նրա միշտ անմերժ։

Աշո՜ւր, Աշո՜ւր. աշխարհն ամբոխ քո ձեռքերը դրկեցին
Արևելքից մինչ արևմուտք քո զանգերը հնչեցին։
Հապա՜ր-հապա՜ր ասաված, հերոս, դյուցազարքիկ քաջազունք
Սալմանասար մեծ արքայի մեծ փառքերը երգեցին։
Անդ քո կրծքից հրաշքի պես ծնունդ առավ նաև նա,
Որի սիրտը աղավնի էր, շուրջը այդի անթառամ,—
— Անվերադարձ, ինչպես երազ, բայց մեծակարծ Շամիրամ,
Որ Նայիրին մեծմասիսյան տիրել ուզեց անխնա։

Մեծ էր նաև հզոր Նինոսն,— երկիրը նա շեն արեց.
Հյուսիս, հարավ և արևելք՝ իրավունքին իր բերեց։
Նինվե քաղաքը նա կերտեց, մեջը ոսկի և զոհար.
Աշուրի մեջ հաղար տեսակ նա հրաշքներ կատարեց։

Մեծ էր նրա զորավարը՝ աստվածազոր պարթևն Օն.
— Կինն էր նրա Շամմուրամաթ՝ դյուցակախարդ՝ սիրո ձոն,—
Շամիրամն էր՝ սիրան արբենա,— Շամիրամը՝ կրքի հուր,—
Աստվածուհին արևաբարդ — սերն իր սրտի նոր կրոն...

Նա Օնի հետ՝ զորքերի մեջ կռիվ մղեց քաջասիրտ,
Զար թշնամուց նա գրավեց բերդը հզոր, անառիկ։
Նայեց նրան Նինոսն հանկարծ արփանքի մեջ իր անկիրթ,
Եվ իր սրտում կիրքը վառեց — մի շլված փոթորիկ...
Եվ արդ մի օր Նինոսն հանկարծ հրամայեց Օն քաջին.
— «Թագավորն է կորովագույն, աշխարհակալն Աշուրի,
Արքայն անթիվ երկիրների, իշխանը իսկ Նայիրի,
Բել-Մարդուկի հավերժացող լիությունը աստվածածին.

Նինոսն է մեծ,— ինքը աստված,— փառքով անմահ, մեծարի,
Պատվեր տալիս իր մեծագործ Օն զորավար դյուցազնին.
— Լսիր, այսօր, երեկոյան ես կունենամ վառ խնջույք.
Իմ ջերմաջերմ հյուրն ես դու մեծ,— քեզ կսպասեմ ես սրտանց.
Խնջույքի մեջ մենք կը հիշենք մեր հաղթության օրերն անց,
Մեր սրտերին երդն ու գինին հմայք կը տան և հաճույք»։

Երեկոյան՝ փարթամաճոխ՝ խնջույքի մեջ նենգավոր՝
Նինոսն հզոր Օնին ասաց.— «Պատմիր, իմ մեծ զորավար,
Քո դիցուհի Շամիրամի պատմությունը խանդավառ.
Իսկ ես ուրախ քեզ կը լսեմ, իբր Աշուրի թագավոր»։
Եվ Օնն իսկույն պայծառաշունչ երգերի մեջ, վառ պատմեց.
Լսում էին զորավարներն հեքիաթն ինչպես մի երազ.
Եվ շողշողաց, աստղերի պես, Շամիրամի փառքը մեծ,
— Զընաշխարհիկ զրո՞ւյց էր այդ, թե՞ նոր հեքիաթ մի անհաս։

— «Երդը հնչեք, քաջ երգիչներ, իմ դիցուհու գովեստին.
Շամմուրամաթ կամ Շամիրամ զավակն է մեծ Դերքեթի,
Որ զորավոր աստվածուհին էր ծովերի և դեսի,—
Հանճարը իսկ բարձր սիրո և փրկության արվեստի։

Աստվածուհին՝ Ասքալոնում՝ իր տաճարի պատի տակ
Մենակ մի օր Շամիրամին՝ արարչության նոր կամքով...
Աղավնիները հոգնաթիվ՝ երկնաշնորհ խնամքով
Նոր ծնվածին զարձան դայակ,— ծծմայր սիրող ու դիտակ

Եվ մեծացավ Շամիրամը դաշտերի մեջ զվարթուն,—
Աղավնատանն, աղավնաձև, արտով նույնիսկ աղավնի:
Հովիվները նրան գտան, երբ սեր էր նա կախարդուն.
Եվ հանձնեցին քաջ Սիմմասին, իբրև պարգև երանի...
— Ջարկ քնարին, սիրող երգիչ Շամիրամի երգն է սա.
Ես կը պատմեմ ձեզ մի առ մի իմ դիցուհու փառքը լույս.
Իսկ դու, երգիչ, անմահության նոր հանձարի զովքն ասա.
— Մեծ արքային աստվածները թող միշտ անեն մեծահույս...

Իմ թագավորն ապրատա կինա: Անցնում էի ես մի օր
Մեծահրաշակ, քաջ Սիմմասի ապարանքի կողմերից,
Եվ հանկարծուստ տեսա այնտեղ Շամիրամին երկնագոր.—
Սիրարս իսկույն ձգեկոծվեց անուրջների հողմերից:
Շամիրամը նույնպես նայեց ինձ խնդության ափերով,
— Նայեց խորունկ իր հայացքով՝— կենդանության ներշնչող.
Այդ օրվանից սրտերը մեր՝— կրքերի հետ մարաբնչող,—
Միշտ միացան հավերժական անթափանցիկ կապերով:

Երկար չանցավ ժամանակը իր անհման այդ սեղից,
Եվ դիցուհին աղավնատիրա մեծ Սիմմասից անցավ ինձ:
Ապրատա լինիս, ով մեծ արքա, լավ հասկացար իմ վիպից.
— Մեծ Իշտարի շնկ ասնիին է Շամիրամը՝— սիրս խինձ:
Վեհափառ տեր. հավատարիմ աստվածազոր քո խոսքին՝
Ես կարող եմ ազնիվ ու ճիշտ պատմություն ավարտել...
Քո սերն է պետք միայն Օնին, և ոչ դանձը կամ ոսկին.
— Իմ դիցուհին իր թշնամուն կարող է իսկ կախարդել...

Իսկ մեր զորքը Բերդի խորքը երեկ միայն գրավեց —
Դյուցազարթև, դյուցակախարդ Շամիրամի շնորհիվ:
Ով Աշուրի մեծ թագավոր, երբ քեզ բախտը բարևեց, —
Իմ դիցուհին է՞լ առավել կը վաստակի քեզ պատիվ»:

Ինը պատմեց իր փառքը մեծ՝ սրտում ներ ու դարձնք.
Բայց չը գիտեր, որ խնջույքն է խարդավանաք մի սուր.
Նինոսի կամքն էր դավաճան,— շուրջը կանգնած էր շարույր.
— Օրը Ինի շատ սեւացավ, գործը գնաց շատ խոսոր...

Երբ նա վերջին խոսքը հրնչեց, դահիճն հանկարծ եաեից
Սուր սուսերի մեկ հարվածով նրա գլուխը պոկեց.
— Բռավ գլուխը պատմիչի, աչքերը բաց, զենքնկեց.
Չէ՞ որ Նինոան այդ էր ուզում դայթակղիչ իր գեվից...
Ինը չը կար,— արյունը կար խնջույքի մեծ սեղանին,
Նրա երդի արձագանքը դեռ լսվում էր օդի մեջ:
Ելավ, տեսավ կատարվածը ասսվածուհի դեղանին.
— Դրժոխքից ես դո՞ւ, խնդությունն, արյունալի բոթի մեջ...

Մինչ մեսաղը,— լինի ազնիվ թե անազնիվ տեսակի,
Կրակի մեջ կարող է միշտ լինել դյուրին մի զոհիչ.
Երբ շար կիրքն է արժանանում արքայական պրսակի,
— Ամեն մի քայլ շարագործին և առիթ է և զոհիչ:
Եվ Իշտարը, Շամիրամի հաղուստի մեջ պրճնաղարդ,
Այդ օրվանից ասսվածածին մեծ Նինոսին դարձավ կին:
Օրերն անցան, իսկ երբ Նինոսը ավանդեց իր հոգին,
Շամիրամը Աշուրի մեջ դարձավ արքա ու կախարդ:

Այդպես բաղմած Աշուրական հզոր գահին՝ Շամիրամն
Հաղար տեսակ մեծապրսակ գործեց հրաշք անթառամ:
Ասսվածն էր նա պատերազմի, ասսվածն էր նա և սիրույն,
Նրա փառքին չէր պակասում ոչ արեգակ, ոչ դարուն:
Նա հորինեց քաղաքը մեծ՝ հրաշակերտ Բաբելոն,
— Նրա վրա երկնասարած և օդային ամրոցներ.
Նախանձում էր նրա փառքին նույնիսկ հզորն Ապոլլոն,—
— Տրփանքի մեջ, նա որոնեց կրքի քաղցր դպրոցներ...

Բաղմաբաղում ապարանքներ, մեջը ոսկի և հակինթ.
Երկնքի դեմ հրաշք դարձած պերճ այդիներն օդակախ...
Ճակատին պսակ, գլխին մեծ թագ, իսկ իր սրտում կիրք և խինդ.
— Շամիրամը իր գործերով դարձավ նույնիսկ ասսղաքաղ...

Պըշրանքի մեջ բարդավաճեց բունն Աշուրի՝ Բուրատատան,
— Կրքի, սիրո սավերներով նա ասաղերին մրցակից.
Սարսափեցին բյուր ազգերը նաև նրա սուր զենքից.
— Ջորքը նրա փորձեց նույնիսկ հեռու, հզոր Հընդկաստանն։

Բ

Երբ հասել էր Շամիրամը իր փառքերի գագաթին,
Լսեց հանկարծ, որ Նայիրյան աշխարհում նոր արև կա.
Նախանձում էր թեպետ նրան և հավերժի Միրիամին,
Բայց նա ուզեց Այրարատից սիրո բարձր առարկա։
Դու ես միայն մեծ Արամյան, դու ես, Արա Գեղեցիկ,
Ասավածուհի Շամիրամի երազների հորդ աղբյուրն.
— Անդրաշխարհյան գեղեցկություն՝ հանճարի մեջ առանցքի՝
Դու կարող ես տիեզերքը ողջ հալթ նվաճել, սիրո հուր։

Եթե նույնիսկ ընարեին քեզ արարչության նախագահ՝
Եթե նույնիսկ դու դառնայիր հավերժության անօրեն,
Եվ քո առջև միշտ խոնարհվեր վսեմ արևն հրեղեն,—
— Քեզ աղոթող իմ սուրբ հոգին այնքան զարմանք չէր զգա,
Որքան հիմա ես զգում եմ կախարդանքի փառքը քո,
Գոյության մեջ միշտ կը մնա զարդարանքի բարքը քո.
— Անթիվ ազգեր եկան անցան երազի մեջ, անդյուման,
Բայց երկիրը չի մոռացել երանության կարգը քո։

Դու վեհության նոր կաղապար՝ նոր փրկության ճանապարհ,
Ասպարեզն էր քո ասաղերի՝ երկնքի պես անկոպար.
Հմայքը քո երանավետ,— անվերադարձ խորության,—
Չի հորինի ոչ մի անուրջ, ոչ մի փայլուն գաղափար։
Եթե նույնիսկ քեզ ասաղերի հովանավոր կարգեին,—
Այդ չէր լինի անմահության այնքան բյուրեղ ապացույց.
Որքան խորն էր և մեծաշուք իրողությունն անմատույց,
Որով նույնիսկ Պըղատոնը անմահ դառավ քո հոգին։

Չէ՞ որ նա խիստ երկրպագեց քո հարության հանճարին՝
— Խոնարհվեցեք ծով և ցամաք։ Արմանք, զարմանք
աշխարհին։
Դեռ ոչ մի մարդ այս հովիտից այն ափերը չի անցել.
Ոչ-ոք դեռ չի արժանացել անմահության տաճարին.
Դու ես միայն, որ իրորին մուտք ունեցար դեպի նա.
— Ախ, դու տեսար նոր գոյությունն քո աչքերովն անխընա.
Դո՞ւ ես միայն, որ անկրև վերադարձար այնտեղից,
Եվ հանձնեցիր մեզ նամակը անկրեուցի անշեղից։

Դրա համար հզորների մեծ հզորը՝— Բաբելոնն
Քո փառքի դեմ լուսապլսակ՝ իր գլուխը խոնարհեց.
— Դու, հարություն գաղափարի, նոր վեհության սուրբ կանոն,
Քեզ աշխարհը անմահության վերին ասողը շնորհեց։
Եվ լրսում է Շամիրամը հեքիաթի պես զրույցներ —
Փառքի մասին վայելչակազմ մեծ Արայի գեղեցիկ։
Նվաստացան նրա աչքում հրաշակերտ կառույցներ,
— Պետք է դիմել նոր միջոցի, նոր փրկությանն առանցիկ...

Արա — արև,— նոր արքության նոր մարմնացում երկրի վրա.
Վսեմափայլ արեգակն էր անձնավորված իբր հանճար,—
Որպես աղբյուր նոր գոյության մեծ-Հայկազյան երկրի
համար.
— Հավերժության վառ ժպիտն էր արքա դարձել իբր Արա
Անմահության շնաշխարհիկ գաղափարին հանդունակ,
Ժամանակի մատյանի մեջ, անկրկնելի վեհ տիպար
Նրաղներում ծնունդ առած կատարյալի գաղափար —
— Մի գերհրաշք, որին միայն հայոց ազգն էր ընդունակ։

Երկրի վրա դեռ չի ծնվել մի այդպիսի չքնաղ դեմք.
Նրա բյուրեղ հայացքի մեջ անմահության կար շողյուն.
Գովքը նրա հնչում էին երգիչները համայն,
Նա ծնվել էր, որ ցույց տնի հավերժության մի նոր շեմք։
Անզուգական չքնաղն Արա — թագավորն է Նայիրի,
Իմաստության ասողների մեջ շողշողում է գահը իր.
Նրա երկիրն շողյունի մեջ հավերժական լույսերի՝
Ծագում էր հանց գավակության փարթամաճոխ մի աղբյուր

Եվ մաշվում է Շամիրամը կրքերի մեջ վավաշում.
Նրա մարմինն ամբողջովին դարձավ դրդիռ ու մռռաչ:
— Աստվածուհի քո մեծ հոգին խոց է դարձել մի փշռա,—
Ի՞նչ ես քաշում դիշեր ցերեկ դու, «ախ ու վախ» և հառաչ:
— «Գնթ մի անգամ տեսնեմ նրան, գնթ մի համբույր
ճաշակեմ»:
Նրա գլխում երազների, մուրազների,— անցուգարձ...
— «Ա՜խ, երանի նոր փորձության ճանապարհն ես մշակեմ».
Հասիր, Արա, թե կարող ես,— և տուր նրան կրքի վարձ...
Ջուր մի տանջվիր, խնդձ Շամիրամ, գնթ Շամաշին աղաչիր.
— Նա հզոր է, քո ցավերին նա սիրտանք գուցե տա...
Կամ մեծամեծ ավազներին քեզ օգնության դու կանչիր,—
— Ինչպե՞ս կապեց քաջն Հայկազյան քո մեջ սիրո նոր
բութա...
— «Ես կը փորձեմ բերել նրան... ավաղ, եթե նա չը գա.
Ես, Աշուրի աստվածուհին, ես ոսկեհատ մի արքա.—
Ի՞նչ միտք ունին այսքան պչրանք, փառքն ու պատիվը
պայծառ,
Երբ մարմինս կրքերի մեջ դալարվում է բոցավառ»...

Եվ հիրավի. երբ հիշում էր Շամիրամը Գեղեցկին,
Նրա մարմինն ամբողջովին դառնում էր դող ու մռռաչ:
— Դիմիր շուտով քո գոյության աստվածապյուտ
առանցքին,—
Քաջն Հայկազյան գուցե և դա քո կրքերին ընդառաջ...
Եվ Շամիրամն այդպես հանկարծ իր ուժերը հավաքեց,
— Դեպի Նայիր՝ մեծ Արային պատգամավոր առաքեց...
Պատգամավորն — ահա գնաց աստվածների անունից,
Եվ Մասիսյան մեծ արքային՝ փառքը սիրով սրակեց...

Հեքիա՞թ է խենթ, թե՞ ցնորք.— հանդրդնում է ճահիճը
Վառ երկնքից շող արևը իր մոլության հյուր կանչել...
Դիտե՞ք, ինչ է շվայտ շնորհքն, — երբ նոզկանքի մահիճը
Ճիգ է անում — սրբությունը կրքի կավատ ճանաչել...

Սառույցն և հուր — ժայռը և ջուրն, կամ բթությունն ու
հանճարն
Այնքան միմյանց հակադիր չեն, որքան ճահիճն ու տաճար,
Որքան կիրքը և սրբությունն, մոլի կյանքը և վեհ լույսն...
— Գոնե այսուհետ, արարչություն, դու լինեիր անաչառ...

— Զարթնի՛ր, ո՞ւր ես, արմանք-զարմանք և աշխարհը
հեղեղիր.
Ումն է ուզում Շամիրամը որսալ մոլի իր կըրքով...
Մեծ Արամի մեծ զավակին — հավերժական իր դիրքով.
— Երկինք, շռռով մարդկանց գլխին վերուստ կրակ դու
մաղիր.
Անմահ Արամ,— որ հաղթեցիր ամենազոր Նյուքարին,—
Եվ քո ձեռքով աշտարակի բարձր ծայրին դամեցիր,—
Որ Բարշամի տպավորիչ արյունը իսկ քամեցիր,—
— Վկա ես դու քո մեծ որդու նոր փորձության քանքարին...

Եվ Նայիրյան երկնքի տակ՝ ներկայությամբ Մասիսի՝
Շամիրամի դեսպանները բարբառեցին մեծազոչ,—
Մեծ-Հայկազյան թագավորին՝— հասկանո՞ւմ եք դուք թե ոչ.
— «Հնչում է նա, Բել-Մարդուկը, գերաստվածն այդ
Խասիսի.
Նրա հզոր և վերհրաշ մեծ թագուհին Աշուրի —
Շամմուրամատ աստվածուհին, տերն անսահման աշխարհի.
Նա — տնօրենը տիեզերքի, իշխանությամբ գերագույն.
Առաքել է քեզ, Նայիրյան թագավորիդ, ջերմ ողջույն...
Ցնծա հավերժ, որ Աշուրին քեզ կարկառեց ձեռքը յուր.
Նա, որ տեր է ողջ աշխարհին,— աստվածուհին վեհափառ:
Նա, որ դարձել է լուսնի տակ նոր գոյության նոր աղբյուր,
Նա, որ արդար դյութակախարդ հանճար ունի իր սրտում,—
— Սքանչագործ վեհ Շամիրամն հայ արքային անարտում
Առաքել է ողջույն և սեր, ոսկի, հակինթ և գոհար...

Շամիրամին նախանձում են բյուր աստղերը վերևից,
Շամիրամին թախանձում են ծով ու ցամաքն ճորտի պես.
Թագավորներն առջև նրա սողսողում են որդի պես,

Աղերսելով ձեռքը նրա ինչպես շողքը արևից:
Շամիրամի հրաշքներն են տիեզերքի մեջ անդրանիկ.
— Եթե ցանկա, կը կախարդի նա և աստղերն, և արև.
Եթե ցանկա, կը բարձրանա Սիրիուսի պես նա վերև...
Բյուր օգակախ այդի ունի, ապարանքներ ոսկեձույլ,—
— Նրան նույնիսկ աստվածները տենչում են միշտ լինել
ցույ,—
— Ե՞կ Աշուրի, և քեզ կրզրաս դու նրա հետ երջանիկ...

Առաջարկն է Շամիրամի մեծ հայկազյան Գեղեցկին.
— Դալ Աշուրի և մեծ գահին աշխարհակալ լինել տեր.
Երկնահռչակ աստվածուհին քեզ թագուհի և տիկին,—
Շամիրամը քո վեհ սրտին հավերժական կը տա տեր...
Իսկ եթե դու չես ուզում այդ,— այցելության գնթ արի.
Մեծ դիցուհու վեհ փառքերը դու քո աչքով դոնե տես...
Լա՞վ մտածիր, արքա Արա, մեր գալուստն է քեզ բարի.—
Տե՞ս, հարավում քեզ կըսպասի արևազարդ մեծ հանդես»։

Նայեց Արա Գեղեցիկը պատգամավոր թինոսին
Նայեց նաև նա արևին և միտք արեց ինքն իրան.
— «Արարիչն է ինձ ուղարկել այս խենթ ու խև միմոսին,
Մի՞թե պետք է ես իմ կյանքը անեմ կրքի վարժարան»...
Եվ նա քաջին պատգամախոս այսպես ասաց մեծարան.
— «Խոսում է նա, կարողագույն տերն աշխարհի Այրարատ.
Փարթամաճոխ քաղաքների արքան հզոր և ազատ.
Աստվածադյուտ իշխանավորն երկիրների Բիայնա,
Նա, որ իրոք իր կոչումով լույս է միայն, լույսի աղբյուր.
Եվ էությամբ դեպի արև վեր բարձրանալ կը ջանա։
Խոսում է նա, մեծ Հայաստի արքա Արա լուսատիրուհ.
— Դեսպան ես դու,— Շամմուրամատ աստվածուհու
կամակատար,
Առ պատասխանն իմ հարազատ և քո տիրոջն իսկույն տուր.
— Դնա, հայտնիր դու քո տիրոջ կամքն արքայի նայիրյան.
Կիրքը չը կա և չի եղել երակի մեջ իմ արյան.
— Սրբությունը ես չեմ փոխի փառքերի հետ բարբարոս...

Բավական է և երկիրն այս Արամորդու խնամքին,
Ոչ Նայիրին, ոչ Մասիսը կարիք չունեն նոր փառքի։
Իմ ճանապարհն համաձայն է ասավածության մեծ կամքին,
— Իսկ խանդավառ Շամիրամը թող ուրիշին խրնկարկի...
Մեծհայկազյան ազգն է կանգնած երանության կամուրջին.
Արամազարմն անմահության միտք է փնտռում և ոչ կիրք։
Ձեր Թագուհին թող սիրաը տա իր հաճույքի անուրջին,—
— Իսկ ինձ բնավ իմ պապերը չեն ներշնչել տրրփող ձիրք...

Հայտնիր նաև քո Թագուհուն.— իմ աչքերը կարոտ չեն
Նրա հղոր հրաշքներին, պաճուճանքին նրա կունդ.
Թորգոմածին մեծ ազգերը չար արփանքով բորոտ չեն,
— Նրանք միայն լույս են տենչում,— հավերժական և
սընունդ...
Վերադարձե՛ք, քաջ դեսպաններ, ձեր լիառատ դանձերով,
Իմ պապերին ես չեմ կարող լինել բնավ դավաճան.
Ոչ ադամանդ և ոչ ոսկին չեն գրավի մեր հոգին.
Շամիրամը երկնահուշակ թող այդպիսի տանձերով
Խելքի բերի իր կրքերը և իր խանդը մոլեգին,
Կամ թող գտնի մի այլ մարդու իր արփանքին ճակատան»...

Դեսպանները վերադարձան, հույսերն իրենց ցիրուցան,
Եվ պատմեցին Շամիրամին պատասխանը Գեղեցկի,
— Այն Գեղեցկի, որի համար միայն արևն է արձան,
Որ կոչումն էր այս գոյության հոգեշնորհ առանցքի...
Չը մոռացան պատմել նաև հմայքը այն վեհարար,
Որն զգացին, ասավածատուր գեղեցկության նայելով։
Ալեկոծվեց Շամիրամը կրակի մեջ բոցավառ,
Եվ բռնկվեց նրա սրտում կիրքը իր նոր վայելով։

Քառասուն գիշեր և քառասուն օր հոդեվարքի մեջ էր նա։
— Կրակ դրած կաթսայի մեջ ջուրը այնպես չի եռում,
Ինչպես կիրքն էր և մառաչը նրան խածում և այրում...
— Քառասուն գիշեր և քառասուն օր դրժնաբարքի մեջ էր նա։
Քառասուն պայծառ երազ տեսավ.— Գեղեցիկն էր նրա մոտ.
Ամոքում էր նրա վիշտը, կրքին տալով եկամուտ։

Կամ պատռելով իր երեսից խրդճի շղարշն ու ամոթ,
Թռչկոտում էր փողոցներով՝ վերքերի մեջ ժանտաժուտ։

Քառասուն անգամ գառանցանքի դեզը բռնեց նրան խիստ.
— Ցնորում էր նա անդադար՝ ոտքի վրա, մահիճում...
— Մարդի՞կ, տեսեք, աստվածուհին խենթ է մի թեթև,
անհանգիստ.
Ծառագայթը սուրբ արևի արոնում է ճահիճում...
Վերջը նորից պատդամավոր նա ուղարկեց՝ Նայիրին.
— Ավելի ճիշտ՝— նա ճիգ թափեց նոր կաշառք տալ
աստղերին...
Խոստում, երդում, ոսկի, գոհար — նա դուրս թափեց անխնա
Արամորդուն նա ցույց ավեց ցոփ կրքերի հայելին,
Բյուր դյութական քայլեր արեց, եղավ նույնիսկ արբենա,—
— Բայց նույնն եղավ հետևանքը,— լույսը խավար չի դառնա։

Ձենում արեց, զոհեր բերեց աստվածներին անաղարտ
Մեհյաններում դարձավ վհուկ, աղոթքն հնչեց իր կախարդ,
Հազար անգամ երկրպագեց նա Շամաշին, Մարդուկին,
Խոստումներով գրավ դրեց իր տրփածու վառ հոգին,
Հազար անգամ ժողով կանչեց իշխաններին մեծամեծ,
Բյուր բյուրավոր դյութակախարդ հնարքների նա դիմեց,—
Բայց նայիրյան արքան հզոր անխախտ էր միշտ,— անդեղն.
Նա տրփանքին չնվիրեց նույնիսկ ժպիտ մի թեթև։

Եվ մտածեց Շամիրամը՝ միտքը շինած նոր կշիռ.
— «Մի՞թե դու ես իմ փերիկիչը, արյունարուշտ պատերազմ.
Մի՞թե ճիշտ են ասել վաղուց. «սահմանք քաջաց՝ զենք
յուրյանց»...
Պետք է գերի վերցնել նրան, այդ է վերջին իմ վճիռն։
Վեր կաց Աշուր։ Քաջ տուրտաններ զորքը կանչի՛ք մեծակալմ.
Կռվի դաշտում թող որոշվի այս խնդիրը գերազանց»։
Եվ անհամար զորքը իսկույն դիցուհու շուրջ գումարվեց։
— Փառքն էր պակաս այս աշխարհին, թե կրքերն են
վրդովիչ...

Շամիրամը հպեց Այրարատ հերոսի պես արշավեց.
— Նա տենչում էր իր կրքերին զենքը շինել նոր ձևիչ...

Եկան, հասան։ Կռվից առաջ Շամիրամը նախատես
Քաջակորով իր քաջերից կազմեց վերին մի ժողով.
— Խորհուրդ էր այդ, թե արքային կիրք հավաքող մի կողով..
Եվ պատվիրեց ավագներին տերն աշխարհի մեծապես.—
— «Արդ՝ չը լինեմ և չիմանամ,— թե վնասեք Գեղեցիկին.
Պետք է նրան գերի վերցնել, կռվին իբրև արդասի.
Տեսեք.— եթե նրա գլխից նույնիսկ մի մազ պակասի,
Ձեզ՝ բոլորիդ ես կը հանձնեմ ոչնչացնող կրակին...

Այո՛, միայն գերի վերցնել, բայց կենդանի, անվնաս,
Եվ ինձ բերել Մեծամասիսյան արևազարդ արքային,
Որ ես տեսնեմ.— նորի՞ց կանի իմ տենչանքին նա տնազ,
— Թե ծընկաչոք պիտ աղերսի հավերժության վկային»։
Եվ սկըսվեց կռիվն իսկույն,— զորքը թնդաց Հայկազյան,
Իսկ առաջին շարքերի մեջ Գեղեցիկն էր՝ Մեծն Արա,—
— Ճշմարտության և արդարի գեռ չիմացված ռահվիրա,
Սեր վաստակող կռիվն է այդ, որ մղում՝ ես արքային...

Ճշմարիտը ընդունակ է՝ հաճախ դառնալ անհաղթ զորք.
Գեղեցիկը փառունակ է, երբ շարժում է զենքը յուր.
Իսկ երկուսը՝ մեկ ձևի մեջ՝ սեր են միայն, սիրո նորք։
— Հանճար էր նա՝ հզորն Արա, երանելի շենքը յուր։
Ոչընչացնող կրակի մեջ, կռվի ծանր իսկ մառում
Գեղեցիկը, շանթը ձեռին, կոտորում էր աջ ու ձախ.
Մինչ թշնամին հրահանգված նրան զարկել չէր ուզում.—
— Հաղարներին նա տապալեց, սուրը ձեռին և անվախ...

Նախճիրն ահեղ՝ մարտադաշտում բողոքն արեց անհասին.
Գետի նման հոսեց արյունը Նայիրի երեսին
Մահը ժպտաց բախտի կապած կործանումի դրաշին...
Ա՜խ, ճըգնեցին զորավարներն ու զինվորներն Աշուրի
Բռնել մի կերպ մեծ Արային, հասնել մի կերպ երազին...

Բայց երազն է միշտ խաբուսիկ.— նրան ոչ-ոք չի բռնի.
Քո մուրազն է մեծ ըղրոսիկ, ողորմելի Շամիրամ.
Դեղեցիկը քաջամարտիկ՝ պատվի սիրոյն կը մեռնի,
— Սակայն երբեք քեզ անձնատուր նա չի լինի անթառամ...

Բայց չէր կարող այդ կատաղի խաղմը տեսել անսահման.
Պետք է ծընվեր և արդյունքը կործանումի երկունքից։
Երբ կռիվն էր վիշապաձայն, արերի ծովը դաժան,
— Մեկը հանկարծ մեծ Արային սրով զարկեց թիկունքից...
Ընկավ, ավա՜ղ, մեծ հերոսը, վերքն էր նրա մահացու.
Իրարանցում և նոր ղըժոխք... հասեք, հարայ, քաջն ընկավ։
Ողբա և դու, մեծ Շամիրամ, էլ չես գտնի արիածու.
Եվ քեզ, և քեզ չարաբաստիկ բախտի վճիռը եկավ...
Եվ մահն հաճախ իմաստ ունի, հասկանում եք դուք թե ոչ
— Թե չը հասնի նա իր որսին, չարքն է լույսին մի նոր խոչ...

Եթե մահը մեծ Արային կյանքից հանկարծ չը զրկեր,
Գուցե կիրքը Շամիրամի սրտին նրա միշտ զարկեր...
Լուրը հասավ Շամիրամին։ Հաղուստը իր նա պատռեց,—
Կործանված էր նպատակը արյունքուշտ այդ կռվի.
Ոտից գլուխ նա սև հագավ. քաջի տեղը նա փընտռեց,
— Այնպիսի մեծ նա սուգ արեց, որից սիրտը կը ջարդվի։
Հրամայեց՝ խսկույն և եթ ահեղ մարտն այդ ընդհատել,
Իսկ Հայկազյան զորքի առջև նա խոնարհվեց իր գլխով։
Նոր հաշտության հույսերի մեջ նա միտք արեց փարատել
Վերքը սրտի,— որն հասել էր իր վարակիչ թարախով։

Նա Թորդոմյան մեծ քաջերին և ջոջերին զորավար
Երդումի մեջ՝ խիստ սրտառուչ հայտարարեց նախաժամ.
— «Սուգ մի՛ անեք մեծ իշխաններ, վերքը իմն է վշտահար.
Ձեր արքային աստվածատես նոր հարություն ես կը տամ.
Ձեր կորուստը բյուրապատիկ կը վճարի Աշուրին,
Ձեր երկիրը ես կը դարձնեմ աստվածաղա՜րդ, բարդավա՜ճ.
Կը շողշողա բերկրանքի մեջ երկնաշնորհ Նայիրին.
— Այսուհետև այս հողը սուրբ պետք է լինի աննվաճ»։

Կանչեց խիստն Շամիրամը դյութակախարդ մեծ վհուկ.
Հարյուր ընտիր, վեհ, քըրմապետ, դիակապուտ և մոգեր,
Եվ բոլորին հրամայեց. «Աղոթքի մեջ սրամաշուկ
Գործի կանչել խոր երկնքից հարալեղներ օդակեր»...
Երբ դիակը մեծ Արայի վեր հանեցին վերնատուն,
Քըրմապետներն ու մոգերը գործ հընչեցին կախարդուն.
Ինչպես շունը, լուսնի վրա հուսակրտուր ոռնացող,
Ոռնում էին երկու դիշեր արտասրացող ու արթուն։

Եվ երկնքից հանկարծ իջան քառասուն խոսուն հարալեղ —
Մարդու նման, բայց իրապես շնակառուց մեծ դևեր,—
Որ ունեին թռչունի պես սև, սպիտակ և թևեր,—
— Թորդոմածինն նրանց գործին դարձավ մի նոր ասպարեզ...
Եվ դևերը սկսեցին մեծ դիակը հար լիզել։
Վերնատանը ոչ-ոք չը կար՝ էլ ոչ մի մարդ, ոչ վկա։
— Իրրև ծանոթ,— ասավածուհի Շամիրամն էր նախադահ,—
Քըրմապետները՝ դուրս եկած, սկսեցին երգել...

Մեծ ծեսն այդպես շարունակվեց քանի դիշեր, քանի օր.
Եվ վերջապես բազմության մեջ աղմուկն հզոր որոտաց.
Շամիրամը վերնատնից հայտարարեց մեծազոր.
— «Խոսում է նա, մեծ Աշուրի ասավածական թագուհին,
Նա, որ արդար արժանի է երկնաշնորհ իր գահին.
Ուրախացե՛ք, կենդանացավ Գեղեցիկը դարձընթաց»։—
Հրա՜շք, հրա՜շք, սըրտի սերն ես, կյանքի տերն ես, թե՞ ասաված.
Տե՛ս, Մասիսը, մեծ Մասիսը լուռ խոնարհվեց քո առջև։
Անմահության անճառելի՜, երանավե՜տ դու հասաված,
— Այս գոյության միակ զարդն ես, վերջին արդն ես ու պարգև...

Անմահությո՜ւն. բնության մեջ դու եղել ես իսկապես.
— Մարդը ինչո՞ւ իր աչքերով քեզ չի տեսնում բնավին.
Հավերժությո՜ւն, դու ես ծնել ստեղծագործ հարալեղ, —
Որ մերթակի անդրաշխարհի երգը հընչի մեր նավին...

Հարալեղնե՞ր.— դուցե նրանք լոկ երազ են ու ցնորք,
Որ գոյության մեծ գործերին տան ավելի մեծ շնորհք...
Անմահությո՞ւն, բնության մեջ,— ես զգում եմ,— դու միշտ
կաս,
Այդ է պատճառն, որ դու մեր մեջ միշտ շողում ես
անպակաս...
Կյանքն, օրինակ, անմահ է միշտ, ոչնչանալ չի կարող,
— Հավերժության կա մի գործոն,— նորան լինենք ուղիղ։

Սուտ են, գիտեմ, հարալեղներ,— բայց հեքիաթն է վառավոր
Հեքիաթների աղբյուրի մեջ մեծության կա հոգևոր.
Գեղեցիկն էր միշտ արժանի անմահության վիճակին,
Եվ «հարությունն» ստացավ նա իբրև մի ձոն անսովոր...
Արդ՝ մեծ արքայն, կենդանացած, բաղմության մեջ դուրս
եկավ։
Բաղմապատկեց վառ արևը ճառագայթը իր լույսի.
Ուրախաբերի մեծ ամբոխը նոր խնդության շոր հագավ,
— Եվ թնդացին ողջույնները անմահարար նոր հույսի։

Բայց չի կարող անմահության գաղափարը միշտ մնալ —
Այս անկատար իրադարձի ժխորատես հովիտում։
— Երանությո՞ւն, դու սիրում ես հեռու և վեր թարձրանալ,
Որ այնտեղից երդդ հնչես անհայտ, օտար գավիթում...
Եվ մեծ Արա-Գեղեցիկը ապրեց միայն մեկ ամիս,—
Անվերադարձ երազների վառ հմայքով համակված.
Պատույտ եկավ նա այս ձորում, վառ կարոտից միշտ այրված
— Ոչինչ էին նրա աչքին և՛ աշխարհը, և՛ Մասիս...

Նա շատ անդամ համբ էր կարծես. լեզուն պատույտ չէր դալիս.
Բայց շատերին հատուկտոր պատմեց սերը հավերժի.
Շամիրամն էր նրան անվերջ գուրգուրանքի սեր տալիս,
— Թեթև էր նա և անմարմին,— իբրև երազն Անմերժի...
Եվ նա շրջեց մեկ ողջ ամիս անկերակուր և օտար,
— Վառ երազին հարկավոր չեն ոչ գարդարանք, ոչ
կերմունք.—

Չէ՞ որ միայն երազ էր այդ, խոր կարոտի մի բերմունք,—
Որ Նայիրյան լույս աշխարհին երբեմն եղավ մխիթար...

Եվ երազը օտար և լուռ պատույտ եկավ լուսնի տակ,
Նրա շուրջը պատույտ եկավ և Աշուրի դիցուհին...
Հազար անգամ Շամիրամը,— իր շամշուքյանն հպատակ,—
Փորձեր արեց, որ նա տեսնի իր նոր սիրո սրբուհին:
Պատույտ եկան զույգ ուրվական,— մեկը մարմին, մյուսն՝ հոգի.
Շամիրամը՝ սավերի պես, Գեղեցիկը՝ լույսի պես:
Մանրամասը մյուս աշխարհի էլ նա չասաց ոչ որի.
— Ինչ կարող է երազն ասել, եթե նրան դու հասնես.
Ցնորք էիր արքա Արա չընաշխարհիկ բույսի պես:

Եվ շատ անգամ արքա Արան իր ապարանքը մտավ.
Նայեց երկար արդ ու զարդին, պաճուճանքին մեծաշուք.
Իսկ նրա հետ, Շամիրամը՝ թախանձանքով սրտմաշուկ —
Նրա դեմքին անհայտ երկրի կարոտն ու սերը գտավ:
Մի օր նույնիսկ Գեղեցիկը Մասիս սարը բարձրացավ,
Շուրջը նայեց լի կարոտով նա ամպաչու գագաթից,
Վերջին անգամ իր Նայիրին նա ողջունեց սրտացավ..
Եվ մրմնջաց խոր հառաչանքն այս գոյության արմատից...

Հաճախ Տոսպի ալիքներին,— որ նետում էր ծովը — լիճ,
Նա հնչում էր իր գաղտնիքը երանության ափերից.
Եվ զգում էր Շամիրամը նրա դեմքի շափերից
Այն աշխարհը, ուր խնդության հավերժական կա դահլիճ:
Եվ թափառեց երազն այդպես դաշտերի մեջ Նայիրյան.
Իսկ Աշուրի մեծ թագուհին նրան անշեղ արբանյակ՝
— Զույգ ուրվական.— մեկը նյութից, իսկ մյուսը նուրբ և բուրյան,
Եվ նրանց շուրջ երազները կապմել էին վառ մանյակ:

Եվ վերջապես Շամիրամը չոքեց մի օր նրա դեմ.
Ու դառնասիրտ, ջերմ աղոթեց՝ արցունքի մեջ և վհատ.
— «Ասա միայն՝ մարդ ես դու իրավ, թե՞ երազ ես դու անթեմ.

Ընդունա՞կ ես դու սիրելու, թե՞ անուրջ ես, ամանաթ։
Դիցուհին եմ ես Աշուրի, դահը թողած իմ անտեր,
Օր ու գիշեր աղերսում եմ, քո սուրբ սերը հայցելով.
Ասա միայն.— այս լուսնի տակ զգո՞ւմ ես դու դուխ կամ
սեր,—
Թե՞ ցնորք ես և շրջում ես, մեր սրտերը խանձելով»։

Նայեց նրան արքա Արան ու մրմնջաց-քաղցրաձայն.
— «Քո շամշության կրքերը թո՛ղ. դարձիր թռչուն կամ
ողջույն.
Քո կրքերն են, քո զարդերը՝ ունայնության մի ոստայն,
Կա ավելի մի նուրբ աշխարհ,— սո՛ւրբ երգերի կա հնչյուն»...
Ասաց,— հանկարծ ինչպես երազ, անհետացավ ու կորավ.
Շուրջը նայեց Շամիրամը — հետքը չը կար Արայի.
— «Ո՞ւր է Արա Գեղեցիկը. մի՞թե նորից նա մեռավ».—
Թեպետ շատերն որոնեցին դաղտնիքը բիրտ ներկայի,—
Բայց զարմանքի տեղիք չը կար.— նա երազ էր, ոչ արկած.
— Մինչ երազը պետք է մի օր անհետանար անկասկած...

Այդ օրվանից փոխվեց նույնիսկ Շամիրամը հիմնովին.
Շողիացան նրա սրտից կիրքն ու խանդը վայրենի։
Հոգի դարձավ նա էությամբ, վեհը ընտրեց կամովին,
Եվ կյանքն ամբողջ նա նվիրեց անուրջներին հայրենի...
Գանձ ու գոհար, ոսկի և գենք՝ հարստությունն երկրային
Բերել տվեց նա Աշուրից շեն աշխարհին Նայիրի.
Ուր ստեղծվեց բյուր ձեռնարկներ, տաղարանքներ ու ջրանցք
Եվ հոգնաթիվ հանճարագյուտ վսեմ դրծեր ու կերտվածք։
Այդպես սիրո հրաշքներով արձան կանգնեց Արային
Ու վաստակեց փառքը փառաց այս բովանդակ աշխարհի...

Հետո հանկարծ Շամիրամը թռչուն դարձավ, երանի՞...
— Աղավնի էր նա ծնունդով, դարձավ նորից աղավնի։
Երբ գալիս են երամներով թռչունները այցելու,
Նրանց մեջն է Շամիրամը իր կարոտով կենդանի...
Մինչև այսօր Շամիրամը դեռ գալիս է մեզ այցի.
Նա իջնում է թռչունի պես Վանա լճի ափերին...

— Աղավնիներ, ձեր դալուստը ոչ-ոք հեքիաթ չի կարծի.
— Շամիրամն է ողջույն տալիս անվերադարձ օրերին...

Տե՛ս, թակում է իր ափերը մելամաղձոտ Տոսպի ծովն.
Մեծ Արայի երանավետ դաղտնիքն է նա հընչում մեզ.
Չէ որ նրան երազ-Արան սերը հընչեց նոր դրծով.
Ալիքները կարծես դիտեն սիրո անհայտ մի հանդես...
Տե՛ս, աղավնի Շամիրամը երգ է հընչում ծովափին.
— Ցնծա, աշխարհ Մեծմասիսյան, դու աստղերին հավասար,
Ոչ մի երկիր և ոչ մի միտք էլ չի հասնի քո չափին.
Անմահության սուրբ խորհուրդը չէ՞ որ միայն դու տեսար...
Եվ կանչում է ծովի ափին Շամիրամը աղավնի.—
— Ախ «օրերին անվերադարձ հազար-հազա՞ր երանի»...

ԱՐՏԱՎԱԶԴ

(Քաղվածք «Արտաշես և Արտավազդ» վիպերգությունից)

Երբ մոտեցավ Արտաշեսի վերջին օրը գոյության,
Նա այդ ժամին Բակուրակերտ քաղաքումն էր Մարանաի։
Պետք է թողներ նա ձևերը իր նյութական ինքնության,
— Նրա գլխին մահն էր կանգնած, ձեռքին դաժան դերանդի։
Բայց իր աչքը դեռ չփակած, նա հառաչանք արձակեց.
«Ախ, երանի տեսնիմ նորից մեծ Մասիսը զվարթուն,
Նավասարդի առավոտը, երբն այծամի կախարդուն.—
Խնջույքն ու սեր, գարնան լույսեր, իշխան, ընկեր ու գրկից...
Տեսնե՞մ կրկին ծուխն երդիկի, խոր խրճիթը շինական,
Սրդն ու թմբուկն արվեստների, բամբիռն ու գովքը քաջաց...
Մեծ Մասիսի աչքի առջև՝ շռինգ, շարժում զինական»...
Մահվան ժամին վերջին անգամ արքայն այդպես մրմնջաց...

Բակուրակերտ քաղաքի մեջ վերջին ժամն էր հանճարի,
Վերջին անգամ հավերժության քաջն էր շնչում օդը այս,
Նա գնում էր, իսկ աստղերը անմահության կաճառի
Կանգնած էին, որ սրդի մեջ լրսեն անմիտ բոթը այս...
Արտաշեսը, այս լուսնի տակ անջնջելի փառքի տեր.
Արտաշեսը, որ հասել էր վեհ վիճակին հզորի.
Վերջին անգամ աղաղակեց. «Ավաղ փառաց անցվորի»—
Եվ հեռացավ, որ որոնի անհայտ ափին մի նոր սեր...

Նվիրական Բակուրակերտ — ուխտի, սիրո սրբավայր.
Երջանիկ ես, ինչպես մանուկն հավերժության գրկի մեջ.
— Քո մեջ փչեց վերջին շունչը՝ Արտաշեսը՝ փառքի հայր,
Սերունդները միշտ կը հիշեն քեզ արքայի երգի մեջ...
Իր ոսկեհատ դապաղի մեջ Արտաշեսն էր փառաբան,
Ոսկի, պսակ, անհաշիվ գանձ այնօր դարձավ նրան զոհ.
Հաղարներով մարդիկ եղան նրա պատվին անձնասպան։
— Մինչ սրբատաշները դրան դրժկամ ու դրժգոհ..

— «Դու հեռացար, հայր իմ արքա, հետդ տարար ամեն ինչ —
Փառք և պատիվ, գանձ ու գոհար, հաղարներով և մարդիկ...
Երկիրն ամբոխ ավերված է, իմ աչքի դեմ բնաջինջ,
Եվ վաղեմի շեն վիճակից գեթ չը մնաց մի փերթիկ...
— Ասա, արքա էլ այսուհետ ինչի՞ վրա ես իշխեմ»...
Երբ այդ ասաց,— դապաղի մոտ հրաշքն եկավ նախընտիր.
Եվ Արտաշեսն մահվան գրկից ասաց որդուն իր դրժխեմ.—
— «Քեզ մնում է, իմ շար ժառանգ, միայն անեծքս պատիր..

Եթե եկնես, նրժույգ նրստած, դեպի Մասիս դու որսի,
Թող քեզ որսան մեծ քաջքերը, թող տանեն քեզ քաջքաձոր.
Որ Մասիսյան անդունդներում շղթայակապ ու անզոր
Դու հավիտյան մնաս մենակ առանց սիրո և լույսի»...
Արտաշեսը արդեն չը կար, բայց երգը կար բարկացայտ.
— «Առավոտյան նավասարդի՝ երբ նախիրը դուրս եկնի,
Երբ եզջերուն սարի լանջին ճանապարհը իր բռնի,
Թող դաղարեն տաղն ու թրմբուկ,— մեծ արքայի օրն է այդ»...

Արտաշեսը արդեն չը կար, Արտավազդն էր թագավոր.
Մեծ արքայի անեծքը կար, և փրկության զորքն էր նա։
Եթե, իրավ, այդ չը լիներ, վիշապը շար, նենգավոր
Կը խորտակեր աշխարհն ամբողջ,— կործանումի նորք էր նա։
Օրերն անցան, փոթաթվելով ժամանակի իլիկին.
Մինչ հանդիսա էր Արտավազդը և չէր նայում դալիքին։
— Նրժույգ բերեք, թող նա նրստի, որ շուտ գնա նա որսի,
Ի՞նչ կարիք կա վիրը ծրռել այս աշխարհի տալիքին։

Նըժույգն եկավ արքայական, Արտավազդը նստեց քաջ.
Նա գնում է Մասիս սարը՝ որսալու կինճ, վայրի էշ.
Իբրև վիշապ, դևը իր մեջ՝ նա վախկոտ չէ և ոչ դեշ.
Տե՛ս, ալացավ հերոսի պես նա աջ ու ձախ և առաջ...
Երբ նա հասավ սրլաքի պես Արտաշատի կամուրջին.
Ուր բըղխում էր ջինջ աղբյուրը մեղր ու դինի քաղցրահամ,
Մեկը հանկարծ խոր անդունդից աղաղակեց տարաժամ.
— «Իսկ անեծքը մեծ արքայի... հո չե՞ս հանձնել անուրջին»...

Ապշոպն ընկավ սիրտը նրա,— հեռվից նայեց և Մասիս.
Մեծ արքայի խոսքը հիշեց, աչքերի մեջ մըթընտաց...
Մի՞թե նաև դևի համար անդեղեուն կա անսիղ.
Եվ նըժույգին ասպանդակեց, որ նա անցնի սրբընթաց։
Եվ նժույգը ցատկեց ուժգին, նա խրբխընջաց ահավոր,
Բայց սարսափից ցնորված էր տերը նրա անխրատ...
Նորից ցատկեց... բայց այս անգամ գահավիժեց ձիավորն
Դեպի անդունդ, դեպի մթին, հավերժական խորխորատ...

Գահավիժեց... իսկ անեծքը ինչ էր ասում այդ մասին.
Արդյոք իրոք այդ անկումից ոչընչացավ նա, թե՞ ոչ...
Ես այդ մասին հարցում արի ամենատես Մասիսին,
Եվ ամեն ինչ մտերմի պես նա ինձ պատմեց մեծագոչ.—
Խորխորատի անդունդի մեջ քաջքերն իսկույն բըռնեցին
Արտավազդին՝ արագ դեպի սարը հզոր քարշ տալով.
Նրան այնտեղ պիրկ շղթայով ժայռերի տակ կապեցին,
— Մինչև այսօր այնտեղ է նա, իր կապանքը կըրծելով...

Կրծոտում է շղթաները, որ հանդես դա դեթ մի օր
Եվ աշխարհը, ողջ աշխարհը վթեժխնդիր խորտակի...
Իսկ աչքերից նրա վայրագ արյան շիթը ծորիծոր
Կաթկըթում է նրա առջև՝ դաժան բերքը վաստակի...
Կրծոտում է իր կապանքը, որ հերթը դա տիտանին —
Եվ դազազած վիշապի պես դանդը ջարդի ներկայի...
Բայց նետում են դարբինները կռաններով ընդդանին,
— Էլ առավել ամրանում են շղթաները արքայի...

Զարկ զնդանին հաղթ կռանով, ստեղծագործ իմ դարբին,
— Թող ամրանան շղթաները հավերժական կապանքի.
Թող եռանդ տա վառ կրակը միշտ ոգեշունչ քո դարբին,
— Դու ես միայն, որ վերջ կը տաս կործանումին տրփանքի...
Մասիս սարի ժայռերի տակ Արտավազդն է անխնա,
Նա չի կարող լույս աշխարհ գալ, — երբե՞ք, երբե՞ք չի կարող
Կա նոր փրկիչ այս աշխարհին,— նրա սերը դուրդուրող.
— Զարկ զնդանին, թող արքայի սև կապանքը ամրանա...

ԴԱՎԻԹ ԴՅՈՒՅԱԶՆ*

Ա. ՆԱԽԵՐԳԱՆՔ

Իմ հայրենի մարգարտահոս աղբյուրները քառսուն-քառսուն,
Հայոց երկրի աստվածախոս հրաշքները միշտ երազուն —
Հավերժության ակունքներից խոսում են վեպ հեքիաթներ,
— Ուր հնչում են մեր մեծարոս հսկաները դյուցազուն։
Անդնդախոր ձորերի մեջ մեր երկնահաս լեռների,
Փեշերի տակ հավերժացած և լուսազարդ Մասիսի,
Որն իբրև մեծ մի դատավոր դիրքն է կարդում դարերի,
Միշտ հնչում են տեսիլները չնաշխարհիկ երազի...
Հեքիաթները, որ հոսում են հավերժության ակունքից,
Հրաշքները, որ խոսում են ծեր աղբերի երկունքից,
— Իմ հայրենյաց հավերժախոս դովքն են ասում սիրասուն,
Որ դու թնդաս, որ դու խնդաս քաջարության մայր Սասուն։
Հարկավոր էր երկաթ հագած բյուր-բյուրավոր դյուցազուն,
Հարկավոր էր ճակատը բաց անթիվ հսկա երկնասուն,
Որ բարձրանար մինչև երկինք փառքերի մեջ և հղոր —
Բերկրանքով լի, անպարտելի մեծ Սասունն։

Եթե նույնիսկ հավերժակյաց ու գերհրաշ բյուր աստված
Եվ զորավոր ու երկնափորձ բյուր հրաշքներն անխնա
Հանդես գային ու գործեին,— Սասունն էլի չէր ստանա
Հավերժության մատյանի մեջ մի այսպիսի վառ հոդված։

---

* «Սասունցի Դավիթ» վիպերգության առաջին գլուխն է այս։

Հազար հազար ասուածազարմ դյուցազների գործի չափ՝
Բյուր բյուրավոր երկնատեսիլ հրաշքների փորձի չափ
Միայն, միայն մեծ Դավիթը գլուխ բերեց Սասնա մեջ.
— Գերմարդ էր նա, որի սրտում ոչ երկյուղ կար, ոչ խուճապ։
Զուր չեն հնչում մինչև այսօր փառքը նրա մեծազոր
Հրաշատես Ծծմակ սարից մինչ երկնահաս Սեղան-սարն.
Դավի՜թ, Դավիթ ստեղծագործ,— գգո՞ւմ էիր դու այնօր,
Որ քո փառքը, քո հրաշքը տիեզերքին է հավասար...

Բ. ԴԱՎԹԻ ԾՆՈՒՆԴԸ

Հայրը նրա՝ Մըհերն-Առյուծ, երկնահռչակ դյուցազուն,
Քառասուն տարի իր ձեռքի տակ պահեց հզոր մեծ Սասունն։
Քանի տերը նա էր երկրի, Սասունն եղավ մի դրախտ —
— Աղատ, անկախ և բարգավաճ, հույսերով լի և խոսուն։
Զենքով ահեղ, շենքով շքեղ՝ հրսկա էր նա վիթխարի.
Օձն իր պորտով, դուշն իր թևով Սասնա վրա չէր գալիս.
Փառքն էր նրա համատարած։ Արքաներին աշխարհի
«Առյուծ-Մըհեր» հաղթ անունը ահ և սարսափ էր տալիս...

Իսկ հրաշակը նրա գործի.— հրաշակ ասեմ,— ճիշտ արեգ.
Բարիքներով երկիրն առատ,— լի եղջյուրից ամալթի.—
Հոսում էին մեղր ու գինի աղբյուրներից արծաթի,
— Աղդի կերը՝ ոսկի-ցորեն և ոչ միայն մի կորեկ...
Մհերն այդպես՝ եղեմատես երկրին իշխեց անթառամ.
Անզավակ էր, թեպետ ծեր էր, և հասակով շորս քսան...
Երբ մահը գա, ով կը բռնի տեղը նրա անսասան.
Մերթ այդ մասին միտք էր անում Մըհերը ծեր ու զառամ.

Որտեղ միտքը, կամ հնարքը մարդուն օգնել չի կարող,
Նրա համար կա և հրաշք որ հանդես գա իր փառքով։
Մըհերն-Առյուծ շատ միտք արեց, բախտի հանդեպն
համբերող.
— Ութսուն տարին երբ լրացավ, հրաշքն եկավ իր ոտքով։
Կինը նրա հանկարծ ծնեց հրաշագործ մի մանուկ,
Եվ երկիրը խնդության մեջ հրճվեց ինչպես երազում։

Սասնա սարերը թնդացին ծաղկափթիթ տարազում,—
Եվ նորածինն իսկ ստացավ «Դավիթ» անունը բանուկ...

Բախտը չէ որ ամպոտ է միշտ, ունի գծեր կեռ ու կոր.
— Առյուծ-Մրհեր ժառանգի տեր՝ բայց նա չապրեց էլ
ավել...
Այնօր ծնվեց Դավիթը մեծ, էգուց մեռավ քաջ Մրհերն.
Եվ թնդացին ափսոսանքից Սասնա սարեր դեր ու դոռ:
Իսկ Սասունը օրենք ուներ.— հո չէ՞ր մնա նա անտեր.
Առյուծ-Մրհերն եղբայր ուներ՝ Զենով-Օհան հուրհրան.
Ցռան-Վերդի, վիզը թեքի, և մեծամեծ շատ իշխան...
— Եվ իշխեցին դրանք այդպես երկրին տալով սիրտ ու սեր...

Գ. ԴԱՎԹԻ ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ

Երբ իմացավ Մլսրա-Մելիքն,— յոթ գլխանի չար վիշապն,
Որ էլ չը կա Մրհերն-Առյուծ՝ տերը հզոր Սասունի,
Եկավ զորքով իր վայրենի, երկրին ցրեց խոր խուճապ,
Եվ Սասունը դարձավ դերի՝ առանց սիրտ և դարունի:
Տարավ այդպես տարեցտարի նա Սասունից բերքը շատ,
Ոսկի և դանձ, գոհար ու զարդ իբրև փոռքին բեկար,
Ոսկե հատիկ ցորեն, դարի, ջահել աղջիկ արեշատ.
— Եվ կեղեքից երկիրն ամբողջ դիվոտ Մելիքը անկար...

Իշխանները՝ Զենով Օհան, Ցռան-Վերդի և Թորոս
Երկրաշրջան ուխտ կապեցին՝ լուծն օտարի հանդուրժել,
Շեն Սասունի բարիքներով սիրտը շահել բարբարոս,
— Ինչ որ ուզի Մլսրա-Մելիքն, տալ և բնավ չը մերժել...

Մինչ այդպես էր Սասնա գործը, զորանում էր քաջ Դավիթն.
Երբ լրացավ երեք տարին՝ որբը եղավ մի պարթև.
Բարձունքը սար, շարժումի մեջ՝ արծիվի պես սրաթև,
— Դեմքը ցայտուն, քաջագոտի. թիկունքը լայն հանց հովիտ:
— «Բավակա՞ն է, Զենով-Օհան, պարապ-սարապ սա մնա, —
Ասաց մի օր Ցռան-Վերդին, Դավթի վրա ցույց տալով,—
Թեպետ հիմա մանուկ է դեռ բայց ջանավար իր հալով.
Լավ է, եթե մեր քաղաքին նոր դառնարած սա դառնա»...

— «Ցռան-Վերգո, հաղթանդամ է, բայց մի հուրհեր երեխա.
Խելքը ոչինչ դեռ չի կարում, լավն ու վատը չը գիտի.
Փորձանքի մեջ,— կասկած չը կա,— փետուրի պես կը դողա,
Գործի դնես, Սասնա գլխին ցավ ու կրակ կը կիտի»...

— «Որ այդպես է, եկ մանուկի խելքը փորձենք փորձերով,—
Ասաց ճաղատ Ցրռան-Վերգոն,— երկու սինի մեջ բերեք.
Մեկը լինի կրակով լիք,— մյուսին ոսկի լավ շարեք,—
Թե խելք չունի, նա վեր կառնի միայն կրակն իր ձեռով»։
Ելան, բերին երկու սինի. մինը ոսկի, մին կրակ
Բերին, դրին երկու սինին Դավթի առջևն անճարակ...
Եվ Կորյունը երեք տարվա ձեռքը ձգեց կրակին,
Եվ մի փշուր վառ կրակից տարավ բերանն ախտարակ...

Բախտը հալբաթ այդ էր գրել մեծ մանուկի ճակատին. —
— Կրակն այրեց խեղճի լեզուն և բերանի մեջ փըլթփըլթաց,
Կարծես մի քիչ նա լալկըվեց, թեպետ իսկույն նա խնդաց.
— Այդ օրվանից թլոր-մանուկ անվանեցին Դավիթին։
— «Տեսար, — ասաց Ջենովն-Օհան, — խելքը ոչինչ չի
կըտրում.
Դեռ սպասենք երկու տարի. բախտը և խելք կը բերի»։
Սպասեցին երկու տարի, Դավիթն եղավ վիթխարի,
Դաշտը վազեց քաջի նման, շրջեց իր հոր արտերում։

Հինգ տարեկան, բայց դուրեկան, և քաջընտիր մի հըսկա.
Երբ նա այդպես ման էր գալիս շուտաշրջիկ շողի մեջ.
Թաղվում էին ծանրությունից ոտքերը իր հողի մեջ...
— Սասո՜ւն, Սասո՜ւն, քեզ գալիս է հարաշրջիկ մի արքա...
Գնաց, բերեց Ջենովն-Օհան մեծ մանուկին ոտնաման.
Մեկ զույգ ամուր երկաթի սոլ, և պողպատի մի մեծ կոռ։
Սոլերն հագավ քաջ մանուկը, կոռը կապեց մեջքին գոռ,
Եվ քաղաքին դարձավ նվաստ նա գառնարած աննման...

Հինգ տարեկան դու փըղաքաղ, հինգ տարեկան դու կորյուն՝
Դու կարող ես և բազմաշուրջ ասաղերը իսկ բերել ցած.

Քո սրտի մեջ Արտաշեսի և Տիգրանի կա արյուն,
— Դու կարող ես քո մեծ ազգը անմահացնել իբր ասված։
Գառնարած ես դու առկայծող, արարած ես նորընծա։
Բայց ավելի հրաշագործ և հրաշալի, քան հեքիաթ,
— Գնա, կանգնիր սեղ սարերին, հնչիր սրինգդ Հուդրաթ, —
Աշխարհը քո, Սասունը քո լույսերի մեջ կը ցընծա...

Հրսկա թլոր, անմահ Դավիթ — գառները տար դեպի սար.
Կյանքը բոլոր քեզ մի գավիթ,— հրաշքն արա կյանքին դուք...
Եվ նա քշեց գառները իր՝ հանց երազի քաղվածուք, —
— Բարձրապատիվ ձեզ մի հովիվ՝ բայց արևին հավասար...
Բեռները իր անծիր ու ցիր, գառները իր ոսկեգեղմ —
Քշեց, տարավ բարձր սարեր՝ գորգերի մեջ ծաղկավառ.
Եվ փրավեցին գառները բյուր սարի լանջին մունջ ու մեղմ.
Իսկ Դավիթը՝ ժայռին կանգնած, սրինգն հնչեց քաղցրաբար...

«Հե՜յ, ջան սարեր, բարձր սարեր, իմ գառներին կեր ավեք.
Ես էլ գառ եմ, գառան նման, ձեր ուսերին ուխտ եկած.
Սանտա սարեր, զրմրուխտ սարեր։ Դավիթն է ձեզ սիրում սեղ.
— Չէ՞ որ միայն կյանքի համար վարդ ու ծաղիկ եք հագած...
Մարալ, խաղալ. սարի այծյամ.— դուք էլ սրտանց եղեք գառ.
Գայլ ու գազան, հավք ու թռչուն, եղնիկ, աղվես, նապաստակ
Գառների պես մարդու սրտին եղեք և դուք նոր վաստակ,
— Կազմե՞ք շուտով ինձ նո՞ր սուրբ դուք և՛ հզոր, և սկար»...

Այդպես ասաց Դավիթը քաջ, և լեռները թնդացին։
Երկաթ սոլերը իր հագին, պողպատի կուռ մեջքին,
Շրջեց շուտով նա սար ու ձոր՝ կախարդի պես իր հոգին
— Ժայռ ու հովիտ, ջրվեժն ու դեռ նրան սիրով խնդացին...
Հավերժությունն հայտնաբերեց նրա առջև գանձը իր.
— Մի զարմանաք. նա ինքն էր իսկ հավերժության խոր
աղբյուր.
Կյանքի բոլոր էակները, և շնչավոր, և անշունչ,
Դյութակախարդ կամքով նրա հավաքվեցին անմրուռնչ...
Եվ բոլորին նա տեր շինեց ստեղծարար անձը իր։

Քառասուն-քառասուն նո՞ր, պատանի, մարալ-ջեյրան, եղջերու,
Քառասուն-քառասուն նոր կենդանի եղնիկ, աղվես, նապաստակ.
Քառասուն-քառասուն պախրա ու կինճ,— եղան նրան նոր
վաստակ:
— Գայլ ու հովազ և վայրի էշ կազմեցին նոր մի սուրու։
Բնավ կատակ դուք չը կարծեք,— հավերժության գործ էր դա.
— Դավիթն էր դա, որ երկնքին արևի պես միշտ խընդա...
Եվ բոլորը՝ խելքի եկած, դառների պես հնազանդ,
Եվ բոլորը կամքի բերված, Դավթի դիմաց կանգնեցին...
Խառնեց նրանց իր դառներին, — մեծ հովիվը տիրավանդ՝ —
— Եվ դեպի ցած, դեպի քաղաք քըշեց հոտը նորածին...

Փըռվեց սուրուն դաշտի վրա քառասուն հազար գլխանի.
Սարի լանջից մինչև քաղաք,— անծայրածիր մի կենաթ.
— Հավերժությունն իր զորքերը՝ Դավթին տվեց ամանաթ,
Որ նա բերի և իր ազգին սիրո նվեր բաժանի...
Քըշեց, լեցրեց քաղաքի մեջ, քաղաքի շուրջ, ամենուր,
Կանգնեց պատին ու ձիլ կանչեց.— «ելեք, բացեք դռմի դուռ.
Ով մինն ուներ, տասն եմ բերել, և հարյուրը տասնի տեղ.
Դավթի ձեռքով ձեր քաղաքի բախտն է այսօր շատ կուր....՝
Ոտքի ելեք, գանձ եմ բերել,— գանձը առեք, բաժանեք.
Այնքան է շատ խալաթը նոր, թեկուզ շորս կողմը ցանեք»...
Դուրս վազեցին քաղքցիներ, գանձը տեսան առանցիկ.
Հրճվանքով լի ընդունեցին երկնաշնորհ նվերն այդ.
Կյանքը խնդաց. և հորինեց նոր գոյության վավերն այդ
Հավերժության մատյանի մեջ Դավթի հաշիվն ընթացիկ:

Դ. ԴԱՎԹԻ ՈՐՍՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ

Կանգնեց, ասաց Դավիթն հզոր Ջենով-Օհան իր ջոջին՝
— «Հորոխպեր ջան, իմ հորոխպեր. տես, մաշված են իմ
սոլերն.
Թեպետ տակն էր սրանց երկաթ՝ ինչպես վայել է քաջին,
Բայց տես արդեն կըտրված են.—ինչպե՞ս շրջեմ ես չոլերն»:
Պատասխանեց Ջենովն-Օհան.—«Ի՞նչ ես եղել, արնաքանդ.
Ջանավար ես դու իսկապես, թե հասարակ միայն մարդ.

Դեռ չի անցել երկու շաբաթ, որ բերեցի սոլեր քեզ.
Տակը երկաթ ու ամրակուռ, հաստությունը թիզ ու կես...
Թե քայլերդ էդպես զոռես, — էլ խոսք չը կա տըրտունջի.
Մեր Սասունի երկաթն ամբողջ քո սոլերին հերի՞ք չի»...

Զենով Օհանն այդպես ասաց և դուրս եկավ տանից շուտ
Նա նոր սոլեր բերեց Դավթին, ամբողջ պողպատ, քիթը բիզ.
Ըքնաղ սոլեր — տակը պողպատ, հաստությունը ինը թիզ.
Եթե կուզեք, ասեմ նաև,— ծանրությունը քառասուն փութ.
Եվ Դավթին տալով սոլերն, Զենով-Օհանը գոռաց.
— «Ա՛ռ քեզ սոլեր, հագիր, ահա, բայց իմացիր, չար տղա.
Որ այդպիսի կոշիկ չունի և Բարմանան իսկ Բուզա...
Ասում եմ քեզ. տես վկա է արար-աշխարհն և աստված,
Պետք է հագնես մի սաղ տարի, թեկուզ լինես հարամի.
— Նորը կառնեմ, երբ որ միայն ամբողջ տարին թամամի»...

Դավթին հագավ սոլերն իսկույն, հանց գերապույն մի տիտան.
Եվ վազվզեց այս կողմ, այն կողմ, ինչպես ծովի արագ հողմ.
Հետո կրկին վերադարձավ դեպ հորեղբայրն իր Օհան,
Եվ սրտագին, ջերմ աղերսանք արեց նրան՝ մեծողորմ. —
— «Հորոխպե՞ր ջան, իմ հորոխպեր,—թույլ տուր գնամ ես
որսի.
Մի զայրանա,— տեղիք չը կա կըշտամբանքի կամ հերսի.
Շատ են հարմար էս սոլերը մեծ նախճիրի քաջաղեն.
Տե՛ս, կը գնամ հիմա որսի, կա՞մ քըզդ հայտնիր, տնաշեն»...
Օհանն ասաց.— «կուզես գնա, պանդույրի մեկ. բայց զգո՞ւյշ,
Գեթ չը բերես դու մեր գլխին մի նոր փորձանք չարագույժ»...

Եվ դուրս գնաց Դավթին անհաղթ, պողպատ սոլերը հագած.
Տիտան էր նա աստվածազարմ, դյուցազն էր նա անկասկած.
Երբ նա քայլեց, նրա ներքև երկիրն ամբողջ օրորվեց,
— Ի՞նչ եք կարծում. հեշտ բան հո չէ՞ր. թե ցանկանար
Ծրծմակ սարը խոր արմատից կարող էր քաշը պոկել,
Ու դաշտերով հոլի նման հեռուն նետել, կամ ձըդել...
Դավթ-մանուկն այդպես վազեց, արտը մտավ մի բողբոջ
Եվ տրորեց իր սոլերով ծաղիկ հասկերը ամբողջ...

Ի՞նչ ես անում, այ տնաշեն, նորաբողբոջ արտի մեջ.
Չէ՞ որ այդպես վիշտ ես ցանում սրա տիրոջ սրտի մեջ.
— Որս է անում շեք իմանում, Դավիթը քաջ ու թլոր,
Տես, արտի մեջ որոնում է նա չաղ թռչուն և կամ լոր։
Այդպես մանուկն այդ ժժդրհա արտը արեց ոտնակոխ։
Առաջ եկավ խեղճ պառավը՝ արտի տերը՝ սիրտը դող.
— «Ի՞նչ ես անում, դու օձի փուշ վարում թալուկ, չա՞ր
ղավակ,
Տըրտնեցիր կորեկն ամբողջ, որ ապրուստն է իմ միակ...
Դրող տանի քեզ երանի... որս ես ուզում կամ նախճիր,
Քո՞ հոր սարը դնա տրսի, զենքդդ էնտեղ դու ճոճիր.
Թե մարդ ես դու,— մարդավարի մարալ, խաղալ բռնի՛ր բեր,
Ատինքն հալալ թող քեզ դառնա և նոր ապրուստ, և նոր կեր».

Դավիթն իսկույն, տեղն ու տեղը պառավի դեմ կանգ առավ,
Եվ արտառուչ փոր ու փոշման նրան դարձավ աղեցավ. —
— «Ա՜խ, նանի ջան. վատ վարվեցի. մեղավոր եմ, ների՞ր
ինձ,
Արտը իզուր տրտրեցի,—քո կորեկը, հասկ ու սինձ.
Մանո՜վ եմ դեռ. բայց զղում եմ. իմ արարքն է անօրեն,
Իսկ դու, նանի, անհոգ եղիր, կը վճարեմ փոխարեն.
Միայն ասա. ո՞րն է սարը իմ հայրական նեճիրի.
Որ ես դնամ իմ հոր հետքով՝ նոր գոյության բեջարի»։
— «Դու տեր ունես և տիրական՝ Զենով-Օհանն հորոխպեր.
Հարցրու նրան,— դնա Սեհրան, որտդ արա և տուն բեր»...

Լըսեց թե չէ խոսքերը այդ՝ Դավիթն իսկույն վազեց տուն,
Եվ աղերսեց նա սրտալի ջոջ-Օհանին իմաստուն.
— «Հորոխպե՞ր ջան, իմ հորոխպե՛ր. դու հայր ես ինձ և հոր
տեղ.
Ես եթիմ եմ, ես անտեր եմ, դու լույս ես ինձ ու կանթեղ...
Խնամել ես դու ինձ սրտանց, խնամում ես աննախանձ.
Քո զավակն եմ, քո ավագն եմ, շնորհապարտ դերազանց...
Իմ խնդիրը, իմ աղերսը ոչ հեքիաթ է, ոչ անուրջ.
— Ո՞րն է սարը, — դու ինձ ասա՛, իմ հայրական նեճիրի,

Ուր որսում էր մեծ Մըհերը մարալ, խազալ և ջեյրան.
Սարերը սեղ և ամեհի, ժայռերը շուրջ՝ Բալաք-բուրջ.
Ես գնում եմ իմ հոր հետքով՝ նոր գոյության բեջարի.
Ասա միայն, հորոխպե՛ր ջան. տե՛ս, գնում եմ ես սեյրան»:

— «Ի՞նչ ես էդպես, փուչ կենդանի՝ գլխիցդ զուր դուրս
տալիս,
Ես զգում եմ քո գործերից մեկ մեծ փորձանք է գալիս...
Ի՞նչ որսի սար, կամ ինչ նախճիր. մեղք է դա քեզ կամ ոճիր.
Հինգ տարեկան դեռ երեխա, բայց անիծված մի զուրյաթ,
Գործ ես ուզում մեծերի պես, կյանքը կանես մեր հեքիաթ:
Երեխա ես, քեզ համեմատ գործեր միայն պահանջիր...
Որսի սարը Մեծ-Մըհերի Մըսրա-Մելիքն է զավթել:
Նա է գալիս ամեն տարի մարալ, խազալ որսալու.
— Մըսրա-Մելիք, մեծ թագավոր բյուր բյուրերին է հաղթել.

Ո՞վ ուժ ունի նրա հանդեպ անգամ մի խոսք խոսելու...
Կամ ո՞վ էր այն հիմարը մեծ, որ քեզ հիշեց «Բալաք-բուրջ»,
Անմատույց է նա բնավին, անդոնդներ կան նրա շուրջ.
Տեղդ նստիր, դու չար ժառնագ,—դա գործը չէ քո խելքի.
Էլ չի փայլի վառ արևը Մեծ-Մըհերյան վայելքի:
Խելացնոր մըտքեր են այդ, կամ խենթության խազալիք,
— Թե իմանա Մըսրա-Մելիքն մահ կը բերի մեզ գալիք»...

Այդպես թնդաց Զենովն-Օհան. բայց Դավիթն էր անսասան.
Էլ առավել նա աղերսեց, ալմուկ հանեց ու գոռաց.
— «Ես ուզում եմ իմ հայրական սարը տեսնել անմոռաց,
Թե ցույց չը տաս, ես կգտնեմ այլ միջոցներ բազմազան...
Ցույց տուր սարը մեծ Մըհերի, հորոխպե՛ր ջան, հորեղբայր.
Եվ խնամիր ինձ իբրև մարդ, և ոչ իբրև սողուն որդ:
Մեծ Մըհերի զավակն եմ ես, և ոչ եսիր, կամ մի ճորտ,
Ցո՛ւյց տուր: Եթե ե՛ս գտնեմ այն, վատ կը լինի քեզ համար»:
Այդպես գոռաց Դավիթն անհաղթ, ոտքը զարկեց հատակին,
Եվ դղրդաց աշխարհն ամբողջ,— սարսափն հասավ
դրժոխքին.,

Ցնցվեց հիմքից տունը ամբող, կարծես թընդաց երկրաշարժ.
Եվ Օհանը խոսքերի մեջ իսկույն դարձավ մեղմ ու վարժ. —
— «Աստվածհանգույն Մրհերի ճեռ. մի՛ զայրանա, հանդիստ
կաց.
Մենք երկուսով սար կը գնանք, բայց ոչ էգուց, այլ մյուս օր.
Քիզ ցույց կը տամ ես նախճիրի լյառն այնտեղ փառավոր.
Միայն պետք է հանդիստ լինես, գործը չանես նոր արկած»:

Անցավ մի օր: Էն մյուս օրը Դավիթն անհաղթ սար գնաց.
Հետն էր նաև Զենովն-Օհան, իբր առաջնորդ մեծիմաց:
Երբ նախճիրի սարը հասան, նրա ուսերը տեսան,
Իսկ Դավիթը շուրջը նայեց. — լեռները սեղ, անսասան. —
— Զենով-Օհանն իսկույն ասաց.— «Սա է, ահա, Մանուկ-
Դավիթ.
Մեծ Մրհերի սարը որսի, իբր Անհասի մեծ դավիթ:
Շուրջը սրա քաշված կային առաջ պարիսպ ու բաղան,
Մինչդեռ հիմա քանդել է այն Մըսրա-Մելիքն անպիտան.
Նա է գալիս ամեն տարի այս սարերը մեծ որսի,
Բռնում, տանում է նա անթիվ մարալ, ջեյրան, որ մարսի:

Եվ Դավիթը, որ հանճարն էր սրտանց՝ հայոց աշխարհի,
Խոր ախ քաշեց, այդ լսելով... զգացմունքն էր վիթխարի
Թեպետ մանուկ, բայց զգում էր ավելի խոր բյուր անգամ,
Քան Օհանը, կամ մյուսները՝ բախտի առջև դյուրակամ:
Եվ նա ասաց.— «Հորոխպեր ջան, էս վիճակին մի անտա.
Բռնությանը վերջ պիտի տամ, — բռնություն է չէ՞ որ սա»...
Եվ շրջեցին այնուհետև մինչ երեկո միասին.
Զենով-Օհանն ու Դավիթը սեղ սարերի լայն ուսին...
Երբ վառեցին երկնքի մեջ աստղերն հավերժ՝ բյուր հուշեր,
Եվ տարածեց ամենուրեք իր խոհերը մութ գիշեր, —
Զենով-Օհանն ու Դավիթը սարի լանջին քուն մտան.
Իսկ հողմն հնչեց, հեռվից եկած. — «Սեղ սարերն են ինձ
վաթան»:

Քընած էին երկու հողով՝ սարի լանջին ժայռի քով.
Հողմն էր անուշ իր սրինգով համբույր տալիս նրանց մեղմ.

Ծաղիկները կազմել էին շուրջը պըսակ ոսկեգեղմ.
Իսկ աստղերը խոր եթերից նայում էին դղվանքով։
Ջինջ աղբյուրը մըրմնջում էր շեղած հույսի մեղեդին.
— Նա գողում էր, նա շողում էր հավերժության կարոտին, —
Մեծ Մանուկի դովքն էր կարծես աղբյուրն հնչում սիրակեզ.
Ողջ բնության համերդն էր ձոն միայն Դավթին վեհ ու վեհ...
Եվ լուսինն էր վերևն հիշում միշտ տարագիր իր վիճակ,
— Հավերժության պատմուճանին նա մի զարդ էր թե՞ կոճակ,
Եվ կարո՞ղ էր, այդ դրության իբրև վկա,
Հանդես չը գալ խորախորհուրդ ու երազուն մի հրաշք։

Մեծ Մըհերի նախճիրի սար, — մարալ, ջեյրան բյուր հազար.
— Իսկ Դավիթը եկած էր ճիշտ իր հոր անմահ բեջարին.
Կարո՞ղ էին մարալ, խաղալ այցի չը գալ հանճարին,
Կամ կարո՞ղ էր բնությունը ցույցեր չանել ոսկեսար...
Եվ երբ այնտեղ բնած էին Դավիթն անհաղթ և Օհան,
— Ինչ եք կարծում այդ բարձրաբերձ սարի լանջին ի՞նչ
եղավ.
Ելան, եկան հեռուներից քառասուն մարալ և ջեյրան
Եվ Դավիթի շուրջը բըռնած, դարձան սիրո նոր համբավ։
Քառասուն խաղալ ու գեղ ջեյրան,— հասկանո՞ւմ եք դուք,
թե ոչ,
Կապել էին Դավթի շուրջը չընաշխարհիկ մի մանյակ։
Դա հեքիաթ չէր և ոչ ցնորք.— թովչանքն էր այդ երկնագոչ.
— Հավերժությունը կերտել էր դովքն հանճարի՝ հմայակ...

Իսկ Դավիթը ջինջ երազում, հավերժացած իբր անուրջ,
Ահա, տեսավ, ինչպես հասավ իղձը սիրո աղբյուրին.
Բացվեց իսկույն նրա առջև խորհրդավոր անհայտ դուռ,
Ու ներս մտավ Դավիթն այնտեղ շուրջը կամար ոսկեկուռ.
Իսկ լուսեղեն այդ շենքի մեջ, այս գոյության իբրև ուխտ,
Կար ադամանդ, ոսկի արծաթ, դանձ ու գոհար և ղըմբուխտ,
Պատին կախված, իբրև նոր ցույց, շողշողում էր վառ ոսկի.
— Հրա՞շք էր այդ դեռ չիմացված շուրջը Դավթի ձախ և աջ։
Մանուկն անհաղթ պարկը լեցրեց ադամանդը և ոսկին.
Շողշող խաչը ձեռքը վերցրեց ու մըրմընջաց նա համեստ.

«Պառավի դեմ պետք է լինեմ հավատարիմ իմ խոսքին» ...
Եվ դուրս գալով, ճամբա ընկավ, դարձն էր փառքի նոր
դռվեան։

Եկավ հասավ նա Օհանին, որ քնած էր խորխոր,
Կանգնեց գլխին ու կանչ արեց կոչնակի պես մեծաղոր.
— «Վեր կաց շուտով հորխոպեր ջան, հորխոպեր.
Արշալույսն է արդեն շողում հուսաբեր։
Վեր կաց ու տես. նոր հրաշք եմ գտել ես,
— Ինձ Մբհերի Ծովասարն էր ասպարեզ...
Նեճիրի սարն՝ հավերժության նոր աղբյուր.
— Վեր կաց ու տես. նոր գոյության նոր համբույր»...

Նա գնում էր սարի լանջով դեպ Թովչալի «Բալաք-բուրջ»,
Իսկ հետևից քառասուն եղնորդ՝ ասես նավորդ գիսյուռին...
Մի նո՞ր էր այդ երազի մեջ, թե՞ իսկ տեսել մի անհաս,—
Լուռ գիշերի բյուր հուշերի հանդուցյի մեջն այն հրատակ։—
Երազ էր այդ, երազ ու կյանք,— թե՞ կյանքն էր իսկ մի
երազ։—
Դա տեսնում էր քաջ Դավիթը հավերժության փեշի տակ...
Մինչ երազը երկար չեղավ և մանուկը վեր թռավ,
Մարալները իր հետևից՝ գնաց դեպի նա հարավ...

Կես գիշերին՝ սարի լանջին՝ լուսնի շողքը վերևից.
Քառասուն-քառասուն մարալ, ջեյրան ուղորդ նրա հետևից, —
Եթերի մեջ սուղված անթիվ բույլ աստղերի աչքի դեմ
Դավիթն էր այն — դեպ նոպատակ քայլում արագ, սիդաճեմ...
Եվ նա հանկարծ տեսավ հեռվից մի բոցավառ, ցայտուն լույս,
Ցնո՞ր էր այդ, թե՞ իսկություն, նորաբողբոջ կյանքի հույս...
Մանուկն հերոս վազեց արագ, հասավ անհագ լույսին այդ.
Նրա առջև, կարծես նկար, մարմար մի քար հրացայտ,—
Մարմար մեծ քար... Դավիթն իսկույն ձեռքը մեկնեց
մարմարին,—
Քարը շարժվեց, դեն գլորվեց՝ հրլու մանուկ հանճարին...
Դավիթն իսկույն պարկը լցրեց ոսկի, գոհար և ադամանդ,
Ու լիք պարկը շալակն առած, իր մեծ մտքին հնազանդ,

522—14

Արագ քայլեց ու նա եկավ, կանգնեց դլխին իր հարեղբար
Եվ կանչն արեց իր նորագյուտ, կանչեց այդպես նա քաջագոր.
— «Վե՛ր կաց շուտով, հորեղբայր ջան, հորեղբայր.
Ես հայր չունեմ, դու ես ինձ հայր և ծնող.
Ես տեր չունեմ, ինձ խնամող, դու ես իմ տեր.
Իմ ճամբեքը դու ես միայն լույս անող...
Տե՛ս, գիշերով ես գնացի Բալաք-բուրջ,
Մեծ շենք էր այն՝ չընաշխարհիկ մի անո՛ւրջ.
Դեմը դրած մարմարի քար մեստամեստ,
Շուրջը շաղշող լուսապակի մի արվեստ:
Ես ներս մտա,— քարը շարժվեց հնազանդ.
— Տես, բերել եմ ոսկի, գոհար, ադամանդ»:
Եվ վեր կացավ Զենովն-Օհան, դանձը տեսավ բյուր-բյուրակ
Միրաը խնդաց բերկրանքով լի, Դավիթին ասաց բազձալի.
— «Այսուհետև քեզ կը շինեմ դյուղին նախարար՝ ախտարակ.
Որ սարերում գտնես այդպես արսկան ոսկու, մարալի»:
Եվ տուն դարձան Դավիթն, Օհան,— առաք-փառաք եկան
դյուղ.
Մանուկն անհագթ, դարձավ սակայն անմահության մի նոր
ճյուղ...

Իսկ ի՞նչ եղավ դանձն ու ոսկին: Ի՞նչ կասեք դուք այս խոսքին:
Անձնատուր չէր Դավիթն-անհագթ հարբասության
սրդոսկին.
Պարկը վերցրեց, որ Օհանին կերտի կյանքի մի նոր թեմ.
Կեսը թափեց նրա առջև՝ նրա սրտին նոր եղեմ...
Իսկ մյուս կեսը պարկում պահած, պարկը առավ, դուրս
թռավ,
Արագ, արագ, ինչպես հերոս գնաց դեպի իր պատանին.
— «Տե՛ս, բերել եմ, ա՛յ նանի ջան. քեզ շատ ոսկի ու մրջան.
Սարը նեճրի ես բարձրացա և շրջեցի ժրաջան...
Մոմասարը Մեծ Մրհերի, ասես հրաշք, տեսա իսկ.
Ուխտատեղերն իմ հոր սիրած՝ «Բալաք-բուրջը» հատա իսկ...
Եվ այս ոսկին, ադամանդը այնտեղից են ու նորյեկ,
Բերքն են սրանք քո այն արտի, որ ցանած էր լավ կորեկ»...
Եթե այդպես կյանքի արտը կորեկի տեղ ոսկի տա, —

Այս գոյության կարքը, իրավ, նոր ասպարեզով կը խնդա...
Մի կասկածեք. հանճարի դեմ տիեզերքն է ողջ հնազանդ,
— Աղբը նույնիսկ նրա առջև դառնալու է ոգամանդ...

Ե. ԴԱՎԻԹԸ ՆԱԽՐՈՐԴ, ՍԱՀՄԱՆԱՊԱՀ ԵՎ ՆՈՐՈԳԻՉ

Սասունն ամբողջ խոր հրճվանքով Դավթի գործը ընդունեց.
Եվ հնչեցին նրա փառքը քառասուն գիշեր, քառասուն օր:
— Կյանքի գեսը հասելու չէ միշտ ավազակ, կամ պղտոր.
Զենով-Օհանն էլ ավելի ուրախառիթ ձայն հանեց:
— «Ի՞նչ եք ասում — Ցուան Վերդո, կամ դու, Թորոս
բարկացար.
Թե զառնարած, որսկան, Դավթին այդքան բերեց մեզ օգուտ.
Երբև նախարարդ էլ ավելի նա կը լինի բարեգութ»:
— «Թող այդպես էլ գործը լինի»,— որոշեցին ջոջերն այդ:

Դավթին եղավ այդ օրվանից արդեն նախարարդ, հարթարած.
— Քիչ բան հո՞ չի,— մեծ քաղաքի նախիրներին նոր արքա.
Եվ կա՞ արդյոք երկրի վրա մի բախտավոր արարած,
Որին փառքը մեր Դավթին,— գրախտի պես դուր չը գա...
Եվ շարունակ օրաբ ասրի Դավթին եղավ քաջ նախարարդ. —
Նա քշում էր իր նախիրը դեպի Մարաթ, Սեղնասար.
Ծրծմակ ասրի լայն ուսերին նա գործում էր՝ հանց որսորդ.
Նա հովիվ էր և պատիվ էր իր քաղաքին ոսկեսար:

Զեմ հավատում, որ տիեզերքում իրոք լինի արարիչ.
— Եթե նա կա, — նախարարդն է նա այս գոյության գործերին
Հասկանո՞ւմ-եք, ինչ ասել է արարչության մեկ վարիչ.—
— Դավթին — հովիվ արարիչ էր կյանքի բոլոր փորձերին:
— Դավթին ուներ և օգնական — պարտաճանաչ Ջար-Նազար.
Տիրոջ կամքն էր նա կատարում, ինչպես բարձրի մի պատգամ:
Մի օր նրան Դավթին ասաց.— «Նստիր էստեղ էս անգամ.
Ես կը գնամ, ճաշ կը բերեմ, որ վայելենք հավասար».
Եվ Դավթը թռչունի պես՝ թռավ, գնաց մի քաղաք.
Եվ ի՞նչ տեսավ.— հանդիսական ու բազմամարդ մեռելոց...

Մեջտեղն հսկա մի մեծ դաղան քառասուն կանթով, տակը բոց,
Մեջը անմահ մի կերակուր,— շուրջը՝ ժխոր, աղաղակ...
Դավիթն խսկույն կաթսան վերցրեց, ուսին դրեց ու փախավ։
— «Տարա՛վ, տարա՛վ,— հավար, հասեք», աղաղակեց
ամբոխն իսկ։
— «Ա՛խ, սո՛ւս կացեք,— վրա բերեց մեռելոցի իշխողն իսկ.
Քաջ Դավիթն է. ետ կը դառնա, կը կոտորի մեզ իրավ»...
Կաթսան ուսին՝ եկավ հասավ Դավիթը իր ընկերոջ,
Եվ ի՞նչ տեսավ.— ադի, լեղի լաց էր լինում Զար-Նազարն։

— «Ի՞նչ պատահեց, այ անաշեն, ճաշ եմ բերել քեզ հազար,
Իսկ դու նստած լաց ես լինում. գործը պատմիր քո տիրոջ»։

Եվ կըմկըմաց Զար-Նազարը արցունքի մեջ հար ու հորդ.
— «Վրա ավին ավազակներն, ա՛խ, հարամի քառասուն դև,
Եվ քշեցին մեր նախիրից քառասուն արջառ, քառասուն հորթ.
Էս կոզմ տարան, դեպի հյուսիս,— արծիվի պես սրաթև»։
Դավիթն ասաց.— «Նստիր էստեղ և ճաշդ կեր դու հանգիստ.
Ես կը գնամ և մեր մալը ետ կը բերեմ թշնամուց»։
Եվ նա թռավ, հետքը բռնած, ձեռքին չոմախ՝ դուրգը խիստ,—
— Թռավ քաջը, թեեր առած մրրիկներից ու քամուց...

Երկար թռավ, հեռուն թռավ. վերջը հասավ մի ժայռի,—
— Հավերժական և ամեհի, սարսափ ազդող հսկա քար.
Գլուխը իր երկինք հասած,— եղջյուրի պես երկսայրի.
Իսկ առջևից՝ մեկ ուրիշ ժայռ.— դուռն էր, կարծես,— դա որ
կար։
Թլոր-Դավիթ, կյանքի դավիթ,— ժայռը քո դեմ ի՞նչ կանի...
Եվ նա նետեց իր դուրգը մեծ. ժայռը թռավ՝ դալարված,—
Մինչև հիմա դեռ գնում է, գլորվում է դեռ նա ցած...
Ու բաց եղավ քաջի առջև սրբարը մեծ դարանի։

Երբ մեծ պալը, ֆրռֆրռալով հեռուն թռավ հոլի պես.
Վիշապները և դևերը խրժվրժացին այրի մեջ.
Մրթմրթացին կենդարն ու դև հավերժանիստ ժայռի մեջ,—
Եվ մի առ մի դուրս վազեցին խելացնոր խոլի պես։

Բայց Դավիթը շեմքի մոտն էր, գուրզը ձեռքին ու կարող.
Վիշապները դուրս վազեցին,— նա կոտորեց մեկ առ մեկ.
— Դժոխակուր շար զավակներ,— ձեր կյանքը սև, սիրտը մեգ,—
Դուք չտեսաք, որ եկել է ձեր գոյության նոր դրող։

Քառասուն վիշապ նա կոտորեց,— Քառասուն կենդար նողկ ու նեռ.
Գլուխները մեկ-մեկ կտրեց, ժայռի վրա նա ջարդեց.
Եվ այլանդակ քառասուն դիակ շարեց նա ճիշտ զուգահեռ,
Սուրը քաշեց և բոլորին լեսան արեց ու բրդեց։
Բերեց, դրեց նա մեծ մի սալ,— դործին օգնող մի ձեռնարկ.
Ձեռքը առավ քարից շինած, բայց բնական, մի մեծ թակ.
Վիշապների միսն ու ոսկոր սալին դրեց՝ թակի տակ,
Եվ սկսեց ժուռիպատը սրդկել, աղալ.— ղա՞րկ, հա՞ զարկ...

Ո՞վ է տեսել կարմիր խմոր վիշապների արյունից։
Եվ նա ծեփեց այդ խմորը ժայռի կրծքին ամեհի։
— Ո՞վ չի լսել մեծ հրաշքը առյուծածին կորյունի.
Ծրծմակ սարի մեջքին դեռ կա կարմիր հետքը այդ ահի։
Դավիթն հետո այրը մտավ, և ի՞նչ տեսավ. մի զարմանք.
Նրա աչքին բացվեց հանկարծ մի մեծ դահլիճ հոյակապ —
— Այդ դիվական տաճարի մեջ կար այնպիսի հանդամանք,
Որի մասին չի երազել ոչ մի էակ ինքնախաբ...

Գաղտաշուրջը լիք զամբյուղներ՝— բարձր դորձի մի դովեստ.
Անթիվ ու մեծ պարկերի մեջ — ոսկի, արծաթ, գանձ ու զարդ.
Ամբարներով ցորեն, գարի, բյուր արձաններ մեծարվեստ,
— Խայտառամոլ հարբստության դոմարն էր այդ անաղարտ։
— «Առյուծ-Մըհեր քո վաստակած ոսկին է սա բազմազոր,
Իմ քա՞ջ պապեր, ձեր աշխատած գանձն է այստեղ կենդանի.
Մարդը դատի, վիշա՞պն ուտի,— խեղճն աշխատի,— նա՞ տանի...
Հիստ անիրավ արարք է դա, որ տեսնում ենք մինչ այսօր»...

Եվ նեռս մտավ մեծ հերոսը՝ նեռսի սենյակն ահագին,—
— Կապված էին այնտեղ պատրաստ քառասուն ջորի, քառասուն էշ.
Քառասուն մեծ ուղտ և քառասուն ձի, նաև քառասուն սև գոմեշ,—
Եվ բոլորը բնտիր-բնտիր, և բոլորը թանկագին:
— Թլոր Դավիթի վիշապներից դու հանեցիր ոմն ու մին.
Գանձը հիմա տար քո ազգին՝ հազար-հազար կենդինար,
Որ էլ չուտեն այսուհետև ցամաք կորեկ ու քաշկին,
— Երկնաշնորհ վայելչների դուել ես դու նոր հնար...

Եվ դուրս բերեց նա ուղտ և ձի, գոմեշներին, էշերին.
Հեշտ բան հո չի՞, այ անաշեն,— երեք հարյուր բեռնակիր:
Երկնավայել հերոսի պես բարձեց բոլոր թեժերին,
— Ոսկին, արծաթ, գանձն ու գոհար կապմեցին նոր ծրագիր:
Եղած-չեղածն իսկույն կապեց դրասուների նա մեջքին,
Գոմից հանեց դեռ չը դինված քառասուն արջառ, քառասուն հորթ,
Նրանց մեջքին նույնպես դրեց բեռներից այդ մեծագին,—
— Եվ քարվանը հարյուրների հընչեց աղմուկն ու դղրդդ...

Քարավանն այդպես եկավ, հասավ հեռու, հպարտ
Սեղանասար
— Նրա առջև քարվանասեր ու շարվադար՝ Դավիթն էր...
Մեծ ավտանը,— սիրտը սրի անմահության դավիթն էր,—
Եկա՞վ, հասա՞վ լերան լանջին, ուր կըսպասեր Զար-Նազարն:
— «Բարով, անգին իմ օդնական. արդյոք կերա՞ր կարդին ճաշ.
Քառասուն արջառն և քառասուն հորթ ե՛ս եմ բերել,— նայիր տես,
Եվ նրանց հետ այս ոսկեկիր մեծ քարվանը քեզ հանդես...
— Էլ այսուհետ չեն հանդըգնի դուրս գալ գևերը թերմաշ»...

Քըշեց Դավիթն իր նախիրը արագ, ալաա գեղի տուն.
Իսկ հետևից մեծ քարվանն էր գնում կարող, կախարդուն...
Սեգ սարերը ողջույններով նայում էին հերոսին,
— Սասո՞ւն. Սասո՞ւն. տես քո տիրան է շարժվում այդպես իմաստուն...

Եկավ, հասավ նա քաղաքին, ձայնը հընչեց հրեղեն.
— «Ո՞ւր, ելեք, քաղաքացիք, փառք եմ բերել առանցիկ.
Ոսկին ու զարդ, արծաթն ու դանձ, հազար տեսակ ակնեղեն.—
Ձեր բախտն է այդ, բաժանեցեք, բայց հավասար, աղդեցիկ։
Բա՞վ է, որքան խեղճ մնացիք,— կորեկ կերաք ու քաշտակ.
Բա՞վ է, որքան թառամեցիք — կարիքի մեջ բաղմանձուկ.
Ձեզ զարեղար հերիք կանի գառածը իմ մեծաշուք,
— Ձեր սրտերից մուժը հեռու.— էլ չի՛ նեղի ձեզ խոշտակն»...
Դուրս վազեցին ամբոխները ու բաշխեցին գանձն անթիվ.
Ոսկին տեղաց ազգի վրա, լույսը շողաց վերևից.
Քաջն էր միայն՝— ոչինչ չուզեց. նրան մնաց լոկ պատիվ.
— «Իմ հաշիվը,— Դավիթն ասաց,— ես կրստանամ արևից»։

Ժամանակը պտույտ եկավ, կյանքի զեկը իր ձեռքին,
Եվ Սասունի լավ օրերը իլկի վրա փաթաթեց...
Իսկ Դավիթը դեռ նախորդ էր,— փառքը հզոր նախորդին,
— Նա նախորդ էր, բայց ազգի մեջ սեր ու հրաշակ
հայթայթեց...
Զենովն-Օհան, Ցռան Վերդոն, Արոս-Թորոս միասին
Ազգի գործը, կյանքի փորձը դրին մի օր խորհրդի.
— «Մեր Դավիթը, քաջ Դավիթը, տղամարդ է արդեն իսկ.
Օխտը տարի քաջ կատարեց նա պաշտոնն իր՝ նախորդի...

Մեծ նախիրը նա քըշում է Ծրծմակ սարից Սեղանսար.
Արևելքից մինչ արևմուտք, կամ հյուսիսից մինչ հարավ.
Ձորերի մեջ մեծ Մարութի, դաղաթներին անդրավ,—
Օգնական է նրա գործին պարտաճանաչ Ջար-Նազարն...
— Լավ չի՞ լինի, քաջ Դավիթին մենք միևնույն ժամանակ
Մեր Սասունի սահմանների պաշտպանության գործը տանք»...

Այդ ասացին, որոշեցին։ Խոսեց նաև խրդճմբատանք,
— Դավիթն եղավ սահմանապահ՝ սերը գործին հաղթանակ...

Արծիվն այնքա՞ն սավառնող չէ,— ամենատես, երկնաթիռ,
Բազեն այնքա՞ն ղրվռնող չէ,— եթերի մեջ տիրակալ.
Ինչպես հզոր մեծ Դավիթն էր վեր սավառնում անխտիր,
— Սասնա շուրջը պտույտ գալիս՝ նոր գործի մեջ ինքնակալ...

Արշալույսին հանդիպում էր նա սարերի լանջերին,
Վերջալույսին հրաժեշտը սահմանի մոտ էր տալիս.
Երջում էր նա օր և գիշեր, հզորազոր մանչ դալիս,
Եվ ականջը մերթ դնում էր գիլ հողմերի կանչերին...

Տեսավ Դավիթն իր սուր աչքով ավերակներ բերդերի.
Հիմնահատակ և քարուքանդ վանքերն էին վաղեմի.—
Հետքը չը կար նրանց փայլուն, բազմահարուստ զարդերի.
— Քաշան էր միայն նրանց վերև երգը հընչում դրժխեմի:
Գործը տեսավ նա դառնագետ և ոգին արեց սրտագին.
— «Իմ խե՛ղճ պապեր,— Առյուծ-Մրհեր՝ աշխարհների տեր-արքա.
Բազմաբաղում, անեղրական Սասունի մեջ վանք չը կա,—
Ուր հընչում էր աղոթքի մեջ սեր որոնող ձեր հոգին...

Ավերակ են բերդերը մեծ, որ կանգնել եք ձեր ձեռքով —
Վաղընջական թշնամու դեմ, սուրբ Սասունին հանց պատնեշ.
Խորտակված են ձեր փառքերը աշխարհավեր մի զորքով,
— Ո՞վ է, յարաբ, այս կատարել ինչպես վայրագ մի հրեշ...
Ա՜խ, կարող է ձեր ժառանգը սրանց նայել սառնասիրտ.
Կուրծքդս, տեսե՛ք, բորբոքված հուր, և իմ հոգին մուժ ու մեգ...
Ձեր Դավիթը թող էլ չապրի էս աշխարհում բութ և բիրտ,
Մինչև կրկին չը նորոգի ձեր փառքերը մեկ առ մեկ»:

Եվ Դավիթը ողբանվագ դիմեց Ջենով-Օհանին.
— «Ասա միայն ինձ շուտափույթ, հորոխպե՞ր ջան, հորողբայր —
Ես հայր չունեմ: Չէ՞ որ դու ես ինձ պահապան Մրհեր-հայր.—
Ո՞վ է ծեփել սև անեծքը Սասունի մեծ վահանին...
Մեր բերդերը, մեր վանքերը ավերակ են և անտեր.
Նրանց գլխին պլտրտվում են ագռավները ու քաշտեր.
Մհերի ճետ՝ ձեր Դավիթը էլ քաջ Դավիթ չի լինի,
Եթե նրանց չը նորոգի, եթե չը տա նրանց սեր»:

Եվ մրմնջաց Զենովն-Օհան — խիստ բազմաշար, սիրտը դող.
— «Ի՞նչ ես ասում, Թլոր Դավիթ. անկարելի գործ է դա։
Երբ որ մեռավ Մեծ Մրհերը,— Մրսրա-Մելիքը հաղթող՝
Եկավ տիրեց մեր երկիրը,— նրա ղենքի փորձն է դա...
Ասենք, նույնիսկ նորոգեցիր դու մեր բերդերն ու վանքեր.
Այդ արարքը երկրե երկիր հնչելու են, հանց զանգեր...
Մրսրա-Մելիքն այդ կիմանա, նորից կը դա մեր վրա,
Եվ բնաջինջ կը կործանի մեր գոյությունն ու ջանքեր։

Տս անիրավ, խեղուկ Դավիթ. հեշտ բան հո չի՞ ձեռնարկն այդ.
Հարկավոր են դրա համար ոսկի, արծաթ, ժամանակ.
Հար աշխատանք, անվերջ քրտինք... Հան քո գլխից միտքը,
այդ.—
Նա չի բերի մեր Սասունին ոչ մի դեպքում հաղթանակ.
Տս, հասկացի՞ր.— ի՞նչ է, կուզես չարքի՞ն լինենք
անձնատուր»...
Դավիթն ասաց.— «Հորոխպե՞ր ջան. դու մեծ մա՞րդ ես, թե՞
սլանդույր.
Ինչ է խոսքդ.— ոսկի՞ կուզես... որքան ուզես, քեզ կը տամ.
Ամեն հնար ես կը գտնեմ, զոռ տուր դու լոկ արծաթին.
Շորթ Մելիքը նորից կը դա... թքված նրա ճակատին.
— Եթե նա դա,— էլ ես ինչ եմ էստեղ կանգնած
հաղթանդամ»...

Այդպես ասաց ու հեռացավ։ Զանցավ նույնիսկ երեք օր.
Եվ Դավիթը մեծ քարվանով կանգնեց նորից շեմքի մոտ.
— «Դուրս եկ շուտով, Զենով-Օհան, ոսկին եկավ մեծաղոր.
Բավ է, որքան ապրը կրեց սև նախատինք և ամոթ.
Տես, գնացի ես Զինմաչին. — թագավորից այնտեղի
Գրավեցի արծաթ, ոսկի քառասուն ընտիր ուղտի բեռ.
Քեզ եմ բերել, որ լիանաս ու չը լինես երկնահեռ...
— Պետք է միայն գլուխ բերել շուտով գործը Անշեղի»...

Անկարող էր Օհանն արդեն ընդդեմ գնալ Դավիթին.
Ի՞նչ կարող էր վախկոտ սիրտը այդտեղ անել, երբ արդեն

Բաջ Հովիվը մոռենում էր անմահության գավիթին...
— Եթե չաներ, հանդես կը դար զորքը իսկույն մեծագին։
Զենով-Օհան, Յռան-Վերդան, Արտա-Թորոսը՝ միաձեղ
Որոշեցին ոտքի կանգնել գործի համար այդ արդար։
— Կայծը անգամ մթության մեջ դառնում է մերթ մի կանթեղ.
Էլ ի՞նչ ասել Դավթի ուժին, որ և լույս էր և հանճար։

Երկու օրում զումարեցին քառասուն հազար քաջ բանվոր,
Ավագ ու փայտ, քար ու երկաթ, քառասուն հարյուր մեծ
վարպետ...
Քառասուն ընտիր ճարտարապետ — իմաստալի, ինքնագետ,
Եվ ակնավեց այն գործը մեծ, որ հրաշք էր երկնազոր.—
Բաջ Դավթին էր հանճարատես գործին գլուխ, գործին աչք.
Արծիվի պես նստանում էր նա երկրի մեջ, ծայրեծար,—
Մինչ ավելի մեծ ուժ էր նա, քան թե քառասուն հազար քաջք,—
Եվ ոչինչ են խոշն ու արդելք, երբ հանճարն է գործին հայր...

Զանցավ նույնիսկ մեկ-Կարճ ամիս.— աշխատանքը հրաժին
Ոտքի հանեց մարդավայել քառասուն ամրոց, քառասուն վանք.
Եվ բոլորը վերանորոգ, փառքի վկա, նորաժին,
Եվ բոլորը ազատության, երանության նոր ժառանգ...
Ամրոցներից ամեն մեկում զենք ու զրահ, թաքուստներ,
Կամ նորագյուտ բյուր հնարքներ թշնամու դեմ կարկառած.
— Դավթին էր այդ երկրին տալիս հավերժության
հազուստներ,
Նա էր հիմա ազատության նոր կոչնակը՝ անմոռաց։

Իսկ վանքերը վերանորոգ Ասվարածին, Զարիատան.
Շատերը իսկ խիստ փառունակ՝ Շեկ-ավետրան, Տիրամայր...
Եվ նրանից ամեն մեկում ահեղ, զորեղ պահապան.
Քառասուն ընտիր եպիսկոպոս, քառասուն ծերուկ նախահայր,—
— Գործ եմ ասում, և ոչ կատակ. հասկանում եք դուք թե ոչ.
Ամեն վանքին քառասուն գլխիր, քառասուն կենտ, սարկավագ.
Քառասուն խոսուն մեծ քահանա ու ոսկեբատ նոր նվագ,
Եվ հընչեցին երկաթագիր մեր զրքերը երկնագոչ...

Փորձը այդպես գլուխ եկավ,— հավատո՞ւմ եք դուք, թե՞ ոչ.
Եվ ուղղեցին մեծ Սասունին ողջույնների սուրբ նամակ —
Սեղան սարը՝ միշտ խանդավառ, Մարութ սարը և Ծրծմակ,—
— Դավիթն էր այդ. նրա փառքը դրվատո՞ւմ եք դուք, թե ոչ...
Բայց Դավիթը հովիվ մնաց: Նախորդն էր նա աշխարհի.
Ինչ կա այստեղ ավելի լավ, քան հովիվը սարերում.
Եվ քշում էր իր նախիրը մեծագործը վիթխարի,
Մինչ հնչեցին նրա փառքը երկրի բոլոր վայրերում:

Ջ. ԴԱՎԻԹՆ ԱՆՀԱՂԹ ԵՎ ՄԸՍՐԱ ՄԵԼԻՔ

Եվ հրաշակը Աղբայելի երկրե երկիր սրոտաց.
Բերնից-բերան, հազար բերան,— մինչ Դավիթն էր մեծ
տիտան.
Խոսքը գնաց, Մրսրը հասավ, — Մելիքն եղավ անկենդան. —
Որտե՞ղ ասես Դավթի փառքը մեծամպրոպի չը թնդաց...
Եվ հնչեցին գիշեր-ցերեկ բլռնակալի ականջին.
— «Հը. ինչպես ես, Մրսրա Մելիք. լավ դդում ես քո գալիքն.
Դո՞ւ ես այստեղ մի խաղալիք, թե աշխարհն է քեզ տալիք, —
— Դավիթն էդուց դեմ կը լինի նաև բաժի պահանջին...

Տե՞ս, ավադիկ, հոր ամրոցներն, վանքերը նա նորոգեց.
Տեր է դարձել նա Սասունին, — ամենազոր մեծ իշխան:
Օխտը տարվա խարջն անվճար... քեզ քո վարկից նա ձրդեց.
— Եթե մերժի, ինչպես պիտի նրան դու տաս պատասխան...
Մրսրա-Մելիք. թե խելք ունես, դու շուտափույթ գործը տես.
Հեշտ բան հո չի՞. օխտը տարվա խարջը մեջտեղ կը կորչի՝
Մրհերն-Առյուծ թեպետ չը կա, բայց Դավիթն է քաջի պես,
— Ձենքդ զողիր, քանի շուտ է, թե ոչ հուրը կը հանդչի»...

Կատղեց Մելիքը մահահոտ, կատղեց, ինչպես փոթորիկ.
Հուզվեց, կարծես ծովի ալիք, զարկեց ափին ու դոռաց.
— «Շուտով, շուտով բազմաբազում զորքը կանչեք անտուիկ.
Բյուր զորքերով, ղերդ պատուհաս, մտեք Սասունն անմոռաց...
Ձեզ, Կոզբադին ու մեծ Բաղին թող լինի զորքն հնազանդ.
Իսկ դուք, Սուդին և Ջարխադին, գործին եղեք հրահանգ...

Շուտ ներս խուժեք դուռ Սասնա մեջ, երկիրն արեք բարուքանգ.
Օխտը տարվա խարջը բերեք, կամքըս լինի ահաղանգ...

Խարջը լինի բազմապատիկ, և խարջի հետ՝ բյուր բարիք.
Կույս ու կարմիր քառասուն աղջիկ ինձ կը բերեք սիրուն հարճ.
Մատաղ-սատաղ քառասուն խաթուն, որոի համար հեղհամբույր.
Քառասուն-քառասուն իշխանի կին, քառասուն տիկին իբրև խարջ.
Իսկ հասարակ գործի համար քառասուն կնիկ արմաղան.
Քառասուն կնիկ կարճ ու կարիճ, որ երկանքը միշտ ապան.
Եվ բոյով կին՝ էլ քառասուն ջան, որ ուղտերին բեռ բառնան.
Բաղցր սոյով քառասուն հոգի, — իբրև ծառա՝ շողշողան...

Ջահել կանայք քառասուն քառասուն, հարյուր քառասուն բեռ ոսկի,
Եվ գանձ ու կայք այնքան, որքան մարդ չի տեսել իր յաշին,
Թող իմանա Դավիթը քաջ՝ զարբը հզոր իմ խոսքի
Ունեցողից ոսկի քաշեք, չունեցողից՝ իր կաշին...
— Ձարկեք, ջնջեք, որ միշտ հիշեն վանքի կառույցն հայ
ազգի»։
— «Գլխիս վրա, հզոր արքա», պատասխանեց Կողբադին.
Եվ զորքն առավ ու արշավեց դեպի բարձր մեր Սասուն.
Եկավ մտավ Սասնա կուրծքը, հույսը դրած Հալբաթին.
Համբավն ընկավ երկրի միջև, և բարձրացավ վայնասուն...

Լուրը հասավ և Օհանին. լեզուն ընկավ փորի մեջ.
Յոան-Վերգուն և Թորոսին կանչեց նա շուտ խորհրդի.
— «Հայցով, թացով պետք է դիմենք մենք Կողբադնին
քաջորդի,
Եվ վճարենք, ինչ կամենա, թե ոչ կընկնենք հորի մեջ...
Պետք է սակայն այնպես անել, որ Դավիթը չիմանա,
Աստված չանի, եթե գործը հասնի նրա ականջին, —
— Նա գըժի պես դեմ կը կանգնի մեծ Մելիքի — պահանջին,
Եվ փորձանքի մեջ կը մտնի, — մահն է այնժամ անխընա»...

Ջենովն-Օհան այս գործերում խիստ հըմուտ էր, նաև քաջ.
Նա կարող էր նույնիսկ սողալ, որ չը լինի գահընկեց։
Առավոտյան նա Դավիթին սարը՝ հեռուն ուղարկեց,

Իսկ ինքն անցավ ազ ու հացով մեծ Կողբադին ընդառաջ։
— «Ինչ որ կուզես, դլխիս վրա, մեկին երկու քեղ կը տամ,
Բայց խնայիր կյանքը ազգի, մի կոտորիր, խիղճ արա.
Մենք լավ գիտենք. օխտը տարվա խարջ կա դիրված մեր
վրա, —
Կը վճարենք, ինչ որ իրավ դու ցանկանաս, բարեկա՜մ...
Մարդ ենք մենք էլ մարդավայել քեղ ճանապարհ կը դնենք.
Սաղ Սասունը քո ոտքի տակ. վերև ասված, ներքև դու.
Ե՜ս իմ արև. Մեծ Մելիքի կամքն է անխա՜խտ մեզ օրենք. —
Երկիրը քեղ, մենք՝ դլխապարտ.— հարկապահանջդ ազգոս»։
Եվ թվարկեց մեծ Կողբադին պահանջանքը միառմի.
Իսկ Օհանը, ընդունելով նոր տանջանքը հայ ազգի,
Հայտնեց նրան ջերմ երախտիքն ահարեկված մտերմի.
— Եվ դնացին, որ միասին շտիեն ապրանքն ու ոսկի...

Դուրս քաշվեցին հայ տներից շարան-շարան հայ կանայք.
Կույս աղջիկներ, ջահել տիկնայք — դեղեցկության նոր հմայք.
Կանգնեց, ջոկեց շար Կողբադին, ջոկեց, ընտրեց, հանց
ապրանք, —
— Քանդվե՜ս աշխարհ... մոռացե՞լ ես, որ պապն էր քո հզորն
Հայկ։
Գժվել ես դու, Ջենով-Օհան, թե՞ քո սրտում շար դև կա.
Մեր-Սասունի սուրբ նամուսը դու տալիս ես թշնամուն.
Լա՜վ մտածիր, մեծ Դավիթը սարից շուտով տուն կըգա,
Եվ մոմմինըդ ահից, դողից ճիշտ կը դառնա միայն մուն...

Եվ կենդանի ապրանքն էդպես եկավ, անցավ մեջտեղից.
Ընտիր կանայք, բարձր հմայք, սրբության սեր և պըշրանք.
— Հայոց երկրի, հայ-գոյության սրբատնվեր զարդարանք,
Շար Կողբադին, նողկը ճակատին լույսը զատեց կանթեղից։
Քառասուն խաթուն և կախարդուն, քառասուն սադաղ-մատաղ
կույս.
Քառասուն աշխույժ՝ իշխանի կին, քառասուն ծաղիկ՝ սրտին
հույս.
Քառասուն աղջիկ կարճ ու կորիճ, քառասուն կնիկ աղմաղան —
— Ջոկեց, լեցրեց մարագի մեջ, դուռը կնքեց տնաբույս...

Հերթը հասավ հետո դանձին. զուր ասեց նա սանձին.
Ո՞ւր ես, չը կաս, աղյուծ Մըհեր... ամոթ սարուկ թախանձին
Դուռը բացվեց մեծ պահեստի,— գեղին ոսկին թեղ դարձավ.
Շուրջը նայեց չար Կոզբադին, փառքը կարդաց իր անձին...
Մեջտեղ եկան պարկերն ու կոտ, կշեռք ու քար և սնար,
Սկսեցին չափել ոսկին, գեղին ոսկին կենդինար...
Եվ չափում են, անվերջ չափում,—հարյուր քառասուն ուզտի բեռ
— Ճամբին կարիր, դուրս եկ Դավիթ, տես, վիճակին է
անհրնար:

Եվ Դավիթը բախտի բերմամբ սարից դարձավ գեղի տուն.
Քաղաքի մոտ՝ նրա առջև կանգնեց ծանոթն իր պառավ.
— «Դավիթ, հասիր. քո հոր ոսկին չարքը չափեց ու տարավ.
Բեղնամ լինես՝ պատի՞վ չէ քեզ, մեծ Մըհերի քաջ որդուն»...
— «Ի՞նչ ես ասում. ինչ ոսկի է. ո՞վ է տանում, այ նանի»։
— «Դեռ չը դիտես, ա՜յ տնաշեն,— Մըսրա-Մելիքն է ճամբել.
Բոզ-Կոզբադին, խոզ-Չարխադին, վիշապի պես,— վայրենի՝
Կուզեն քանդել երկիրն ամբողջ, կուզեն կյանքը մեր լափել...

Քառասուն-քառասուն մատաղ-սադաղ՝ ջահել աղջիկ ու կանայք
Քառասուն-քառասուն իշխանի կին, զարդերի մեջ վառ
տիկնայք, —
Տես, ջոկել է և փակել է մարդի մեջ իրրև հարճ.
Տես, տանում է հազար հազարն իրրև խարաջ, հարկ ու խարջ
Եվ չափում է, ահա, ոսկին, դեմքին ժպիտ ու հմայք...
Դավի՜թ, Դավի՜թ. դու Մհերի հզոր որդին չես լինի,
Արժանավոր փառք ու պատիվ դու ճշմարտին չես լինի,
Եթե թույլ տաս մեր նամուսը մեր երեսից պոկեն միշտ.
Որ Սասունը երկնքի տակ բեղնամ դառնա, ամբարիշտ»...

Եվ Դավիթը վազեց իսկույն. թռավ, ասես, մի թռչուն.
Կայծակնափայլ նա շողշողաց և Օհանի տուն մտավ...
— Առականքի դաժան պատկեր, — Դավիթն էր քեզ նոր
դատավ...
Գոռ Կոզբադին, չար Չարխադին, իսկ Օհանը՝ մի մրրջյուն
Նստած գեղին ոսկու թեղին՝ լավ չափում են. հա չափում,

Կոտը լեցնում ոսկու թեղից, ջվալի մեջն են թափում...
— Դահիճնե՞րն են մարդու կաշին քերթում այդպես
անասելած,
Թե՞ գայլերն են զոհը այդպես չար հոշոտում ու լափում...

Եվ մոտեցավ քաջ Դավիթը աղջի մոտ այն հանդեսին.
— «Ի՞նչ ես անում, Զենով Օհան. ոսկին էդպես չեն չափի.
Դեռ չը գիտես կոտը բռնել,— ոսկին կոտից կը թափի...
Տուր չափը ինձ, ես կը չափեմ Կողբադնի հետ միասին»:
Կոտը առավ և շուռ տվեց, հետո պարարքը նա թվեց.
Դատարկ կոտը նա հեգնանքով ջվալ կոխեց ու մռայց.
— «Էս մեկը քե՞զ, քա՛ջ Կողբադին, սա էլ Մելքին
անմոռաց.—
Ապրասա լինի քո մեծ արքան, որ Սասունը գրավեց»...

Նորից, նորից՝ կոտը դատարկ ջվալի մեջ նա կոխեց.
— «Իսկ էս մեկը՝ ձեր պապերին, և էս մեկը ձեր բախտին»:
Այդ որ տեսավ, խիստ այլայլվեց ու կատաղեց Կողբադին.
— «Զենով-Օհան, լուրջ գո՞րծ է սա, թե վայրենի մի անպ.
Եվ որտեղի՞ց դուրս հանեցիր դու այս պանդուխտ մեծ գժին.
Խարջն ու խարաջ կը տա՞ս թե ոչ. — տես, Մելիքին հայտ
կանեմ,
— Նա որ էկավ, ձեզ կը ջարդի, կյանքը կանի անբաժին,
Սասունն ամբողջ իր հաղթ ձեռքով մահվան կը տա նա
դըժխեմ»:

Դավիթն ասաց.— «Քա՛ջ Կողբադին, քո կարծիքով դի՞ժ եմ
ես».
— «Այո, իրոք դիժ ես և խենթ. ինչ բան էր սա, որ տեսա»:
Դավիթն խսկույն ոտքի կանգնեց և հոխորտաց.— «Դե՛հ, լա՛վ
տես,
Սասնա գիժը քեզ ինչ տեսակ ընծա կըտա ոսկեսար»:
Ասաց և կոտն այն երկաթի զարկեց ուժգին նա պատին.
Պատը քանդվեց. կոտը դնաց և դնում է հիմա դեռ. ...
— «Իսկ դու չոքիր ոտքերիս մոտ. դու, Կողբադին, դու,
Բագին.

Որ սովորեք մեծ Սասունի բերքը լափել այդպես նեռ»։
Ասպա սրով նա կտրատեց շորթ-շրթունքը Կողբադին.
Թելի վրա մանյակի պես նրա վզին կախեց նա.
Ատամները նրա քաշեց,— ատամները վայրենի,
Ասպա մուրճով նրանց մեկ-մեկ ճակատին մեխեց անխնա։
— «Դնա,— ասաց,— և Մելիքին պատմիր գործը ցասումի.
Որքան կուզի, թող զորք բերի, ես էստեղ եմ, նրա դեմ.
Նա էր ուզում, իրավ, քաշել ատամները Սասունի,
Մինչ կատարվեց գործը այսպես։ Դնա, շրջիր սիրտաճե՛մ»...

Հետո ձեռքերն հետև կապած, վզին տալով դուրս քշեց,
Իսկ պարկերը՝ դատարկ ու սին զլխին զարկեց հեգնելով...
Բաղին, Այուդին և Կողբադին, փոսքի բեմից մեկնելով,
Զորքերն առան և դուրս փախան։ Սասունն ամբողջ շունչ
քաշեց։
Երբ գնում էր լուռ ու մոլոր դաշտի միջով Կողբադին,
Վարդ աղջիկներ երգում էին նրա հաղթին ու բախտին. —
— «Տեսե՛ք, տարավ քաջ Կողբադին քառասուն տիկին, քառասուն
կույս,
Տարավ ոսկին, բայց ճակատին ատամներ կան ինքնաբույս...
Տեսե՛ք, էսիկ Կողբադինն է, Սասուն էկավ նա զբոսը.
Որ հավաքի խարջ-խարաջը՝ կույս աղջիկներ, կոլոտ կին,
Քառասուն-քառասուն ջահել կանայք՝ խաս ու զառբաբը հագին.
Բայց ջարդված է քիթն ու մրուռթ, ե՞տ է դառնում նա Մրոբը։
Դաշտերի մեջ ծաղիկն է շատ, մեր այդու մեջ միշտ ընկույզ.
Մեր խաղողն է արդեն հասած, մրջյունի պես է ողկույզն.
Բայց Կողբադին պռունգ չունի, պռաշները վզից կախ.
— Ինչու, Բաղին, զուր չը տարար քառասուն տիկին, քառասուն
կույս»։

Երբ հեռացան բիրտ Կողբադին, Այուդին, Բաղին, Զարխադին,
Հերթը հասավ հավերժացող զորահզոր անհատին.
Դավիթն էր այդ Սասունի մեջ, նա էր շարժվում հանց Մասիս,
Որ հաղորդ տա իր մեծ ազգի անմահարար կարոտին...
Դավիթն խնդալն գնաց մարագ, դուռը կոտրեց այն զաղիր.
Եվ դուրս հանեց նա կույսերին, տիկիններին փառահեղ.

— «Աղատ եք այժմ. տուն գնացեք, գործը տեսեք դուք այնտեղ.
Քանի ես կամ, ձեր պատիվը միշտ կը մնա անբասիր»։

Երբ տուն դարձավ Աղբայկը, ասաց Զենով-Օհանին.
«Ջան — հորոխպեր. ոսկի՛ ունես, տուր տանջահար մեր խալխին,
Թե գենք ունես, ձեռքիդ պահիր և թշնամու տո՛ւր գլխին.
Մի՛ հանդուրժիր, որ գեները թրքեն Սասնա վահանին»։
Անցքը անցավ, ժամանակը իլկի վրա բուրդ մանեց,
Իսկ Դավիթը հովիվ էր քաջ. սարն էր գնում ամեն օր.
Օրերն անցան, Սասունի մեջ ոչ մի արկած չը կար նոր.
Հետո հանկարծ՝ չար պատուհասն երկրի ներսը ժամանեց...

Երբ Կողբադին, Սյուդին, Բադին և Զարխադին տեղ հասան,
Աղբյուրի մոտ՝ նրանց Մըսրա խաթուն-խանումը տեսան,
Եվ կարծեցին, թե Կողբադին ծիծաղում է բերան բաց,
Բայց երբ նրանց նա մոտեցավ, հեգնանքն հնչեց բյուր կանանց.
— «Հեյ Կողբադին, շուն Կողբադին, Սասուն գնացիր լերան, լերան,
Ո՞ւր են ապա ատամներդ, ո՞վ է ջարդել քո բերան.
Դու խոստացար, որ կը բերես ոսկի, արծաթ հազար բեռ
Ետ ես գալիս մերկ ու դատարկ. խարջը ո՞ւր է շորորան...

Հե՜յ, Կողբադին վատաբերան, գնացիր Սասուն դու թալան.
Ո՞ւր են քառասուն կոլոտ կանայք, որ մեզ ապան միշտ երկանք,
Քառասուն-քառասուն բարձր տիկնայք, որ ուզտ բառնան անվտանգ.
Չար Կողբադին, տե՛ս, քո մեջքին ո՞վ է դրել նոր վալան...
Մի լավ նայեք, ազերը, աղջիկ. Կողբադինն է ալան-սալան,
Գնացել էր, որ Սասունից Մըսրը բերի մեծ թալան.
Բայց գալիս է առանց ատամ, քիթն ու մրուքը ջարդված.
Հե՜յ անիրավ, ո՞ւր է ապա քո վարժ լեզուն կըլկըլան»...

Եվ Կողբադին կանանց ասաց,— «Դեհ սուս կացեք, շան քածեր.
Ես իմ կյանքում դեռ չեմ տեսել էսքան դժար մեծ գործեր...

522—15

Միայն խոպան,— հասկանում եք,— դաշտ կարծեցի ես
Սասուն.
Անեզրական մի մեծ մեյդան, կամ մի աշխարհ անպաշտպան.
Մինչ Սասունը լիքն է եղել բյուր քաջերով դյուցազուն.
Դաշտ չի եղել նա մի անտեր, այլ ահավոր քար-կապան,
Կարիճները գազանական, գերանները ձեռքերին.
— Ո՞վ կարող է ձեռք տալ Սասնա պերճ և հարուստ
բերքերին»:

Ի՞նչ ես ասում յոթ-գլխանի Մըսրա-Մելիք հիմա դու —
Դեռ չե՞ս լսել վառ զեկույցը, որ քեզ բերեց Կոզբադին.
Դեռ չե՞ս տեսել շար հանգույցը, որ կապեցին քո բախտին
Մեծ Սասունի քաջ նախորդից քեզ նոր նվեր երկնատու...
Դու արքա ես, երկրի տեր ես, զարհուրելի մեծ վիշապ.
Նա հովիվ է և պատիվ է այս դողդոջուն լուսնի տակ.
Դու քո շուրջը միշտ ցանում ես ահ ու սարսափ և խուճապ,
— Նա համեստ է և գովելի է՝ անմահության նպատակ...

Մըսրա Մելիքն այլանդակվեց իր գայլույթից գժնդակ.
— «Լի՜ր Կոզբադին. դու կաղատվես իմ կործանիչ մեսապից.
Ինչպե՞ս եղավ, որ ես դարձար այդ վիճակում խայտառակ,
Մինչ խոստացար բազմապատիկ խարշն հավաքել
խարդախից»
Եվ թյուրաշուրթ քաջ Կոզբադին զուր կրմկրմաց. ճակատին
վերք.
— «Հզոր արքա. Մեծ Սասունը ես կարծեցի դարան դաշտ.
Ժողովուրդը նրա միջին ես կարծեցի խեղճ-ու հաշտ.
Ես կամեցա քեզ խարշ բերել, և բյուր կանայք, ոսկի բերք...
Բայց Սասունը,— ճիշտ որ ճիշտ է,— իսկ եղել է քար —
կապան.
Ժողովուրդը,— սա մեծ վիշտ է,— իսկ եղել է չարխափան.
Ո՞վ կարող է մոտիկ գնալ,— կատղած է նա և կարիճ.
— Սասնա ծռերն առյուծներ են, և ոչ միայն լեզվարան...
Կայծակնափայլ ու վիթխարի,— մեջքը հովիտ՝ մեծ Դավիթ.
Աչքերն արև, հարվածը շանթ, ձեռքերը հաստ ու բանուկ,
Անպարտելի մի քաջ է նա, գործն ու խոսքը ուղղամիտ...

Եթե զարկեց, ժայռը նույնիսկ կլդառնա ճիշտ մի լեռան.
Թե կամենա, սարը հրսկա իր արմատից պոկ կը դա.
Դավիթն է իսկ մի նոր աստված,— տես, երկինքն է ինձ վկա,—
Ճիշտ են ասում. անմահների փառքերին է նա հասած...

Սպրասա կենաս, իմ մեծ արքա. ինչ կարող եմ ես անել..
Քիչ էր մնում, որ բոլորիս քաջ Դավիթը կոտորի.
— «Թույլ չեմ տա ես, որ Մելիքը Սասնա սիրտը
պըղտորի»,—
— Այդպես գոռաց և կամեցավ մեզ բնաջինջ կործանել...

Մենք ուղտաքաղ՝ կամ ձիավոր՝ հաղիվ ելանք ու փախանք.
Փոթորիկ է մեծ Դավիթը, Սասունի մեջ խելաշուրջ.
— Ո՞վ կարող է այնտեղ անել հարկահավաք կամ
քաղհանք,—
Մըսրա-Մելիք. թե կարող ես, մի ճար գտիր աչալուրջ»:
Քիչ միտք արեց մեծ Մելիքը, ապա գոռաց ժանտաժանտ,
— «Զորահավաք բյուրաբաղում,— զորքը կանչեք բաղմաղան..
Թող Սասունը լավ իմանա,— ի՞նչ է օրենք կամ ավանդ.
Թող Դավիթի գլխին փորձենք մի նոր ընտրած խարազան...

Կանչե՞ք շուտով քառասուն հարյուր նոր-պատանի քաջ զինվոր.
Քառասուն հարյուր երիտասարդ, քառասուն հարյուր քաջ մանուկ.
Քառասուն հարյուր զինված ջահել. կռվին ծանոթ ու բանվոր.
Քառասուն հարյուր հասուն, ահել. կյանքին հմուտ ու բանուկ.
Քառասուն հարյուր կանչեք նաև անբեղ մարդիկ, անմիրուք.
Քառասուն հարյուր իսկ շափահաս, գանգուրներով շիկահեր:
Քառասուն հարյուր թախտից ընկած, բախտից ընկած և
ծերուկ.
— Քառասուն հարյուր և զորապետ՝ վիշապի պես անվեհեր.:.

Թող շուտ թնդա ողջ աշխարհում ահել ու գոռ մարտակոչ.
Քառասուն հարյուր թըմբուկ զարկող, քառասուն հարյուր փող
փըչող.
Թող անդադար հնչեն կռիվ՝ և փառքը իմ ճանաչող.—
— «Դո՞ւ ես տերը մեծ Սասունի՝ Մըսրա-Մելիք երկնագոչ»:

Այդ քի՛չ է դեռ. թող դան ձմեռն և փոթորիկ խորտակիչ.
Բուք ու բորան և ահ ու մահ, դժոխածին և սարսափ...
Ես գնում եմ Դավթի վրա՝ գուրզը ձեռքին իմ հսկիչ,
Որ հեղեղեմ Սասունն ամբողջ, քանդեմ, բերեմ անխուսափ»։

Այդպես ահեղ, այդպես զորեղ Մըսրա-Մելիքն արշավեց,—
Բյուր բյուրավոր իր զորքերով եկավ բռնեց նա Սասուն.
Բանակ դարկեց դաշտերի մեջ, հովիտն ու սար գրավեց,
Ու երկրի մեջ ամենուրեք ընկավ հանկարծ վայնասո՛ւն...
Յոթգլխանի Մելիքն էր սա, վիշապի պես մի հսկա.
Թիվ կա նույնիսկ բյուր աստղերին, նրա զորքին թիվ չը կա.
Վրանները նրա ճերմակ դաշտը այնպես պատեցին,
Որ կարծես թե ձյուն է եկել, գետին ծածկել անընդդա...

Հեռվից եկած զորքը անթիվ ջուրը գետից երբ խըմեց.
Մինչև վերջին իր կաթիլը ցամաքեց ջուրն Բաթմանի.
— Սասո՛ւն, Սասո՛ւն, չար վիշապն է նոր փորձություն քեզ ներել
Ոտքի՛ կանգնիր, թե կարող ես. և ճար արա դարմանի...
— «Վա՜յ մեզ,— կանչեց Զենովն-Օհան,— վայ Սասունի մեծ աղդին.
Այնքան չը կան վերև աստղեր, որքան զորք կա էդ վաշտում.
Թագավորն է Մըսրա եկել, բանակ դարկել մեր դաշտում...
Վա՜յ մեր բախտին, մեր արևին. զուր չը տվինք մեր ոսկին...

Մարդիկ, ելե՛ք, ոսկի տանենք, կույս ու կանայք, դանձ ու դարդ,
Տանենք, շոքենք նրա առջև,— գնթ պաղատանք մի անենք...
Գուցե ների, եթե դառնանք նրա համար հոդեպարա,—
— Թե չէ ոչինչ մեզ չի օգնի,— ոչ Դավիթը և ոչ զենք»։
Եվ Դավիթը պատասխանեց հաստատակամ, անվրդով.
— «Հանդի՛ստ եղիր, Զենով-Օհան, քանի սաղ է դեռ Դավիթ,—
Գնա՛ քնիր, վեր կաց նստի՛ր, կամ գործերդ դրրատիր.
Ես կը գնամ ու կը մաքրեմ դաշտերը մեր և հովիտ.
— Պատասխանը ես եմ տալու, զրահն ու ձին պատրաստի՛ր...

Միայն լսի՛ր, հորոխպեր ջան. ինձ պետք է տաս զենքերը վառ։
Մեծ-Մըհերի զենքն ու զրահ, որ պահել ես թաքուստով...
Եվ նըժույգը կայծակնաթև, պետք է հանես անպատճառ,
— Պետք է հեծնեմ ես Քուռիկը՝ նրա փայլուն հաղուստով»...
— «Ի՞նչ զենք-զրահ, թլոր Դավիթ, կամ ի՞նչ նժույգ, ա՜յ խելուն.
Ո՞վ քո գլխին փչեց քամին՝ ձախորդության էս ժամին...
Մահն է կանգնած մեր աչքի դեմ, տես դաշտումն է թշնամին.
Իսկ դու էստեղ զենք ես ուզում, որ մեզ բերես սև ու սուգ»...

— «Զենով-Օհան. ինձ չե՛ս խաբի. ես ամեն ինչ լավ գիտեմ.
Սաղ երկինքը դու չես շափի քո մատներով կարճ ու կոր.—
Մինչև էսօր այդ առիթով խոսք չեմ ասել ես քո դեմ,
— Հիմա պետք է հանես ու տաս , երբ փորձանքն է եկել դռա...
Մըհերն ուներ հրեղեն ձի,— երկնասըլաց մի նըժույգ,
Հեքիաթի պես, Հուդրաթի պես բարձրիկ Քուռիկ Ջալալին.
Մըհերն ուներ թուր կայծակին, ոսկի քամար երկու զույգ.
Մըհերն ուներ խաչ-պատարագին — քաջալերքը իր հալին...
Էլ ո՞րն ասեմ, կամ ինչ խոսեմ. դու ամեն բան լավ գիտես.
Մըհերն ուներ ոսկի վահան և ոսկեձույլ սաղավարտ.
Մըհերն ուներ և վարպան՝ հակընթակապ, երկնատես.
Մըհերն ուներ մի հոյակապ նաև կապա ոսկեղարդ...
Ի՞նչ ես պահում դու Դավիթից հուր-հրեղեն հրաշքն այդ.
Ես Մըհերի մեծ զավակն եմ, նրա միակ և ժառանգն,
Գնա և բեր։ Եթե չը տաս, զորով կառնեմ քաշկը այդ,
Երբ Սասունն է փորձության մեջ,— դուրս բեր զենքդ ահագանգ»,

Խիստ զարմացավ Զենովն-Օհան և մըրթմըրթաց քթի տակ,
Բայց ի՞նչ աներ.— Դավթի ահից դողը ընկավ սրտի մեջ...
— «Գնա, ասաց.— զենքը վերցրու մեծ սընդուկից անհատակ,
Իսկ Ջալալին գոմի մեջն է փակված, ինչպես բերդի մեջ...

Մեծ Մըհերի մահից հետո դուրս չեմ հանել Քուռիկ ձին.
— Եթե հանես, նա դուլյունով երկիրն ամբողջ կը քանդի.
Նրա շարժից, կամ խրրխունչից մահ է փըչում զարդանդի.
— Իսկ զենքերը՝ առիթ ավին արքաների նախանձին...

Կարո՞ղ ես դու, ա՜յ անաշեն, զենքը կրել այդ ահավոր.
Կարո՞ղ ես դու նըժույգ նստել կայծակի պես երկնաթիռ.
— Եթե իրավ կարողանաս, քեզ կանվանեմ մեծ զորավոր.—
Ինքդդ դուրս բեր և նըժույգը և զենքերը քաջընտիր»։
Դավիթն անվախ, Դավիթն ուրախ՝ թեավորված մտավ ներս,
Եվ դուրս բերեց զենք ու զրահն — արևաղարդ բարձր շենք։
Հետո գոմից նա դուրս բաշեց հրեղեն ձին՝ սիրտը հերմ,
Հերոսի պես նըժույգն հեծավ, քաջի նման հագավ զենքն...

Հե՜յ, երդիչներ նոր աշխարհի.— ունե՞ք այնքան դերասվեստ,
Որ Դավիթի փառքը հնչեք՝ արևի պես պըճնապարդ.
Դուք, գոյության նոզկ արքաներ, կյանքի ցավին մեղապարտ՝
Նայե՞ք Դավթին, որ կկազմի հավերժության նոր գովեստ...
Վիշապ ու դև յոթ գլխանի, հազար, հազար զորքերով՝
Կարո՞ղ եք դուք ճըշմարտության կայծակներին դիմանալ...
Դըժնի ու ժանտ կամ բռնակալ իշխանության բարքերով
Կարո՞ղ եք դուք Դավթի ահից ձեր դիրքերում միշտ մնալ...

Դավիթն հեծավ հրեղեն ձին, բարձրիկ Քուռիկ Ջալալին.
Թուրը ձեռին հուր կայծակի, մեջքին քամարը ոսկի.
Գլխին դրեց սաղավարտը, թևին խաչը պատրագի,—
Հեծավ, ասաց.— «Հազար ափսոս Մեծ Մըհերի անցյալին»։
Կըրծքին կապած վարագանը, ձեռքին ոսկի և վահան,
Հագավ կապեն իր ոսկեշուրջ, որ շողն ուներ բյուր ջահերի.
Շանթի նման նա շողշողաց։ Եվ Օհանը ասաց նրան.
— «Դավի՜թ, Դավիթ. հազա՜ր ափսոս վառ անցյալին
Մըհերի...
Մեկ էլ ափսո՜ս, հազա՜ր ափսոս չքնաղ Քուռիկ Ջալալին,
Ախ, աննման, հալա — Քուռիկ Ջալալին...
Նորից ափսո՜ս, հազար ափսո՜ս սաղավարտին ոսկեզոծ,
Ա՜խ, սաղավարտին, ինչպես արև, ինչպես բոց...

Ախտո՞ս, ախտո՞ս, և բյուր ախտոս թուր-կայծակին երկնածին,
Ախ, հալա թուր կայծակին.
Հաղար ախտոս կարոտագին վոտ քամարին ոսկեձույլ,
Հավերժ ու շող այն քամարին ոսկեհուռ.
Լսե՞ք, նորից, հազա՞ր ախտոս նալ-պողպատին սրմբակի,
Նալ-պողպատին հալա Քուռիկ նրժույգի.
Հաղար ախտո՞ս սանձը կերտող սաթ-գոհարին, սադաֆին,
Հալա ախտոս Մեծ Մրհերի մեծ ցավին»...
Այդ որ լսեց, վիրավորվեց Դավիթը մեծ, դերադույն,
Թուրը քաշեց, որ Օհանի վիզը կլտրի նա իսկույն.
Բայց Օհանը խոսքը փոխեց, իսկույն հնչեց մի նոր երգ.
— «Ախ, բյո՞ւր ախտոս մեծ Դավիթին, թառլան ու հաղթ Դավիթին,
Ա՜խ, նոր ախտոս քաջ Դավիթին, որ գնում է մեր բախտին,
Քաջ Դավիթին, որ կը բերի մեզ նոր բերք»...
Դավիթն ասաց.— «Թե չասեիր դու այդ խոսքը, հորոխպեր,
Վիզդ իսկույն կը կլտրեի ես իմ ձեռքով անհամբեր»...

Զարկեց Դավիթն հաղթ Ջալալին ասպանդակով ոսկեհուռ.
Բոցը ելավ արևի պես և աշխարհը հեղեղեց:
Իսկ երբ շողաց նրա ձեռին կայծակի պես նաև թուրն,
— Լույս արևը երկնքի մեջ ճանապարհը իր շեղեց...
Ահեղաշունչ շեկ ձին այդպես ցատկեց, հասավ ամպերին,
Հետո իջավ շանթի նման, նորից կանգնեց իր դրան.
— Թե կամենաս, կը հասցնեմ քեզ՝ անցյալի խմբերին» —
Ասաց Քուռիկն և խրրխընջաց լույսի նման հուրհրան...

Երբ Դավիթը շեկ ձին քշեց՝ լի լույսերով համասփյուռ,
Նոր հետևից Օհանն ասաց. «Հեյ, Մրհերի քաջ զավակ.
Երբ բարձրանաս դու դեպի սար, կը հանդիպես մի աղբյուր,
— Մեր կենարար կաթնաղբյուրն է, հրաշքներով միշտ ավագ. —
Մեծ Մրհերն էր կաթնաղբյուրի ջուրը խմում զվարթուն, —
— Ջուրն էր տալիս նրա սրտին զորությունն իր կախարդուն:
Երբ որ հասնես, ջրից խմիր, հանդբսատցիր դու սրտանց,
Եվ կը դառնա հուանդը քո բյուրապատի՜կ, իմաստո՜ւն...

Հետո հեծիր հոգի նըժույգը, քշիր առաջ, դեպի աջ.
Եվ կը տեսնես պողպատի սյուն՝ մինչև երկինքը հասած։
— Հավերժության մեծ սյունն է այն,— կյանքի սկիզբը տեսած, —
Հենց որ հասնես, սուր՝ կայծակով դու զա՛րկ նրան մեծաքաջ...
Եթե կըարեց ու խորտակեց թուր-կայծակին սյունը այն,
Քըշիր առաջ, գնա կռիվ.— անպարտելի՞ կը լինես...
Իսկ եթե ոչ,— վերադարձիր, տանը եղիր պահապան.
— Զախորդական կռվի դաշտում ինչո՞ւ իզուր դու ընկնես»...

Դարձավ Դավիթն իր քաղաքին, ձայնը հնչեց սիրահար.
— «Հե՞յ Սասունի ջահել կանայք, հաց թխելիս ինձ հիշեք.
Ծանոթ, ընկեր, փոքր ու ահել. խնջույքի մեջ խանդավառ
Մի մոռանաք ձեր Դավիթին, կամ նժույգը նրա շե՞կ...
Սասնա նախի՞ր, բարձր սարեր. ինձ մի՞շտ հիշեք,— ձերն եմ ես.
Առյուծ Մըհեր, գարնան լույսեր, ձեր սիրո՞ւն եմ ես դալիս.
Մեծ Սասունի արև ու բախտ, ձեզ եմ կյանքըս ես տալիս, —
Հիշիր և դու, մեր մեծ օջախ, քո սրբության սերն եմ ես»։

Այդպես ասաց, ասպանդակեց նա նըժույգին ոսկեհուր.
Երկու թռիչք միայն գործեց շեկ ձին, կարծես կախարդված.
Մեկ թռիչքով դաշտը հասավ, իսկ երկրորդը՝ մինչ աղբյուր,—
— Կայծակնացոլ երկու թռիչք,— երկու կրակ վերընթաց։
Աղբյուրի մոտ կանգնեց իսկույն անմահասեր Քուռիկ ձին.
Նոր դոյության բախտը մեկնեց փրկության-տեր աստղիկ ձին։
Քաջ Դավիթը այդտեղ իջավ, կաթնաղբյուրից ջուր խըմեց.
— Անմահացավ նրա հոգին,— փառքն ու սերը թնդացին...

Նորից դրեց ոտն ասպանդակ. բայց չը նստած դեռ թամբում,
Շեկ ձին թռավ կայծակի պես, սյունին հասավ պողպատի.
Սյունը՝ հզոր աշտարակն էր հավերժական ապատի,
Լայն արմատը երկրի խորքում, իսկ գագաթը երկինքում...
Քաջ Դավիթը սուրը քաշեց, թուր կայծակին իր մեկնած,
Եվ ահռելի զարրով զարկեց, սյունը կտրեց նա կեսից.
Գետնի վերա կեսը ընկավ, կեսը մնաց դեռ կանգնած, —

— Քուռիկն իսկույն խոր խրրխընջաց արևաչափ հանդեսից...
Սիրտը խնդաց մեծ հերոսի, խնդաց նաև Ջալալին.
Մի մարդ՝ մի ձի,— երկու հոգի՝ մեկ նպատակ հավերժի...
— Հաղթանակը պատկանում է անմահարար Հալալին.
Թռի՞ր, Դավիթ. բախտը երբեք քեզ կռվի մեջ չի մերժի...
Ըշի՞ր շուտով, Մըհերածին. կռվի կարոտ է Քուռիկն:
Եվ նա քշեց: Հրեղեն ձին մի նոր թռիչք կատարեց, —
Քաջը դարձավ կայծակ ու շանթ, իսկ Քուռիկը մի մըրրիկ.
Եվ երկուսի լույս հանճարը դալիք մեծ գործն հարդարեց...

Եվ այնտեղից քաջ Դավիթը աչքը ձրգեց դեպի դաշտ.
— Զարհուրելի մի պատկեր էր Մըսրա Մելիքը գըծել.
Անծայրածիր դաշտը ամբողջ կարծես բամբակ էր դարձել,
Իսկ բամբակը ոչ այլ ինչ էր, թե ոչ զորքը դիվապաշտ...
Դավիթն ասաց ու տատանվեց.— «Տե՛ր, արարիչ աշխարհի.
Եթե բամբակ է այս ամենն,— իսկ ես միայն մի ճրագ,
Ինչպե՞ս պետք է մեկ ճրագը այդքան բամբակը այրի...
Քեզ եմ կանչում Աստուած Մըհեր. եթե ճիշտ որ դաշտը այս
Ծածկել են խիտ ձյունի նման այսքան ճերմակ դառ ու այծ.
Եվ ես մենակ դալլ եմ միայն, իսկ իմ առջև վաշտը այս, —
— Կարո՞ղ եմ ես ոչընչացնել այդ բոլորին մըշտահայց». —
Երբ Դավիթը զուր տրտնջաց,— լեզու առավ Քուռիկ ձին, —
Մարդու նման լեզու առավ, մարդու նման ճիշտ խոսուն.
— «Քաջ զավակն ես դու Մըհերի, մի տրտնջա, երկնածին.
Տարակուսանքն ամենևին չի ազատի մեծ Սասուն...

Դու չես միայն կռվի դաշտում՝ քաջագոտի իրանով,
Քեզ հետ եմ ես.— դու կոտորիր հրով, սրով, շանթի պես,
Ես կը ջարդեմ իմ պիրկ պոչով, սրմրակներով, բերանով.
— Զորքը մեր դեմ կը տապալվի, կը սարսափ խենթի պես...
Պոկիր նաև դու իմ բաշից քեզ մի տասնյակ փայլուն մազ, —
Եթե բախտը կռվի ժամին նեղ վիճակի քեզ ձրդի,
Մազերը այդ դու տրորիր ափամեջում քո ձեռքի,
Եվ փորձանքից դու կազատվես դյութակախարդ, անվնաս»...
Քաջալերված՝ կանդնեց Դավիթն մեծ բլուրի գագաթին,
Եվ միտք արեց.— «Հյուր ենք այստեղ և գոյության ամանաթ.
Իսկ հարձակվել ես չեմ կարող խալխի վրա մուխաննաթ. —

Ո՞վ կարող է միշտ անխախտ իրավունք տալ երկրին...
Եթե հանկարծ ես վրա տամ,— պետք է արդար միշտ ասեն.
«Գողի նման եկավ զարկեց և հեռացավ դաղտագող» —
— Իմաց կը տամ. թող իմ մասին վատը երբեք չը խոսեն»...

Այդպես ասաց և դիլ ճըչաց.— «Հե՞յ հաղարներ մեծաղեն,
Թե քնած եք, արթուն եղեք, թե զարթուն եք, զենք հագեք.
Թե կանգնած եք, ձի թամբեցեք և պայքարի դուրս եկեք.
Դավիթն է մեծ Մըհերածին ձեր դեմ դալիս երկնաշեն...
Հաղար-հաղար մահկանացու, կամ Մելիքին ծաղրածու,
Ականջ արեք դուք Դավիթին. փող եմ փչում ձեզ կանխավ.
Զգաստ եղե՛ք, պատրաստ կացեք բախտի ձեռքին միշտ
կըծու...
Հետո չասեք.— Գողի նման եկա՞վ, զարկե՞ց ու փախավ»...

Դավիթն ասաց, ասպանդակեց: Կարծես հաղար փոթորիկ —
Մեկ ամպրոպով, մեկ գումարի՝ բրբընկվեցին մի վայրկյան.
Դաշտը ծածկեց կայծակների, որոտների հուր-օվկիանն.
Եվ պըտրավեց մարդկանց գլխին, ասես կրակ, աղորիք...
Թափվեց կարկուտ: Բայց ոչ կարկուտ սովորական, այլ կրակ,
Երկինքն անդուր՝ անծայրածիր, կրակները մեկ արած,
Անվերջ մաղեց մարդկանց գլխին, ինչպես թույնի՝ մի թառակ.
— Իսկ բոցերը դարձան հեղեղ, դաշտը ամբողջ բոլորած:
Դավիթն էր այդ և Քուռիկը: Մըսրա անթիվ զորքի մեջ —
Կայծակներով, կրակներով կոտորեցին աջ ու ձախ:
Եթե կարեն բյուր խիտ անտառ, չի գոյանա այնքան ցախ,
Որքան ընկան բյուր դիակներ արյան ծովի խորքի մեջ...
Եթե այդքան զորքերի տեղ ժայռեր միայն լիներին,
Նույնիսկ նրանք արմատախիլ կը ջարդվեին շանթերից.
Եթե այդքան խիստ հարվածներ երկնքի դեմ բռնեին, —
— Երկինքը իսկ կը կործանվեր ցասումնալի խանդերից...

Եվ հնձում էր քաջ Դավիթի թուր կայծակին վայրաշուրջ,
Կոտորում էր և Քուռիկը,— մահն ընդունած հանց վճիռ.
Առավոտից մինչև կեսօր շարունակվեց մի նախճիր,
Որի մասին չի գոյացել դեռ ոչ հեքիաթ, ոչ անուրջ...

Ախ, արյունից հոգդ վազեցին. կարմիր ու մուգ հեղեղներ,
Իսկ նրանց մեջ հազար-հազար բախտին տրված դիակներ...
Հազիվ զորքի փրկված մասը ցրվեց, փախավ խուճապով,
Մնաց միայն Մրսրա-Մելիքն, առջևը իր վրաններն...

Դավիթն հասավ, որ կոտորի զորքը նաև այդ փախչող.
Բայց ալևոր մի ծերունի դեմը քաջի կանգնեց շուտ.
— «Դավի՜թ, Դավի՜թ, ի՞նչ ես անում. թուրդ կտուր ու
հաջող.
Էլ ինչո՞ւ ես անմեղ մարդկանց զուր կոտորում դու անփույթ...
Նայիր սրանց.— խեղճ ու կրակ մարդիկ են իսկ,
Աղքատ ու մերկ ժողովրդի որդիքն են իսկ.
Ամեն մեկը՝ մի մոր որդի, մեկ տան պահող, մեկուճար,
Ամեն մեկը՝ գոհ է բախտի, կյանքում անկար ու նաչար.
— Ի՞նչ են արել խեղճերն այդ քեզ, որ դու նրանց կոտորես.
Մինչ բոլորին բռնի կերպով դուրս են հանել դեպի մարտ.
Առանց ուժի՝ սրանք բնավ դուրս չէին գա ասպարեզ...
Քո դեմ միայն Մրսրա-Մելիքն է մեղավոր՝ գլխապարտ.
Նա՛ է տերը այս բռնության,— նա՛ է նյութել ապետն այս.
— Թե կարող ես, զարկ Մելիքին. թող նա՛ դառնա պատուհաս։
Ահա նրա վրանը վես,— դու նրա հետ գործդ տես»...

Է. ՄԵՆԱՄԱՐՏ

Եվ Դավիթը իր ձին քշեց դեպ կայանը Մելիքի.
— «Սա՜ղ ես, Մելիք, թե՞ էլ չը կաս։ Տե՛ս, եկել եմ քո
հաշվին.
Թե մահ չունես,— մահ եմ բերել. ես եկել եմ քո կաշվին։
Զորքդ կորավ, իսկ դու դեռ կա՞ս։ Ժամն է արդեն գալիքի...
Վե՛ր կաց շուտով, եթե կուզես կռվի կանգնել օրենքով,
Թե ոչ իսկույն քեզ կը բերեմ, քամու կը տամ թողի պես։
— Զորքդ ամբողջ կոտորված է, իսկ դու պառկած՝ բողի
պես...
Դո՜ւրս եկ շուտով. սասունցին է գլխիդ կանգնել իր զենքով»։

Եվ վրանից մայրը դուրս՝ յոթ դլխանի-վիշապի.
— «Քիչ սպասի՛ր. դեռ քնած է մեծ Մելիքը շորերով.
Ոչ իր զորքի կոտորածով, ոչ համբավից խուճապի
Նա չի զարթնի.— և քնում է առհասարակ օխտ օրով»...
— «Արթնացրեք շուտով դևին, թե ոչ իսկույն կը զարկեմ.
Երկաթ-գերան, խոփ ու ձևիշ բերեք շուտով և դաղեք.
Թե ոչ իսկույն ձեր քնածին արյունի մեջ կը ներկեմ»...
— Պառավն եղավ ափիրերան և գունատվից անազեկ.

Իսկույն եկան և վառեցին մի մեծ խարույկ անճոռնի.
Մեջը դրին, որ տաքանան, օխտը ձևիշ, օխտը խոփ.
Եվ բոլորը կրակ դարձան,— կրակն ասես գեհենի։
Արդ, շիկացած, կրակ դարձած գործիքներն այդ շուտափույթ
Տարան դրին ոտների տակ մեծ Մելիքի անապշոպ...
Քըզքըզացին կրակները, ծուխը բռնեց ողջ երկինք.
Իսկ վիշապը հաղիվ զարթնեց և մըրթմըրթաց ինքն իրեն.
— «Ա՜խ, անիծած էս լվերը՝ թույլ չը տվին, որ քնեմ
Մարմնիս վրա երևում է, կարծես, ինչ որ մի քրտինք»...

— «Ես եմ էստեղ, Մըսրա-Մելիք. գրողի պես քո դլխին.
Քրտինք-մրտինք ես չը դիտեմ. դուրս եկ կռվի սրտաթափ.
Մահն է եկել խոր դժոխքից. ժամն է վերջին հրատապ,
— Բա՜վ է, որքան, դաժան վիշապ, կեղեքեցիր դու խալխին...
Զորքդ ամբողջ կոտորված է, իսկ դու էստեղ մըրթմըրթա՜ն,
Կանչում է քեզ մենամարտի Թլոր-Դավիթն՝ սասունցի.
Դուրս եկ շուտով, սպասում է նոր գերանդին նոր հունձի.
Բա՜վ է, որքան շար դևերը կյանքը արին մահացան»...

— «Դու՛ ես, Դավիթ. մի չարանա. մենամարտը իր կարգին.
Զորքս կորավ... վնա՜ս չունի. ինքըս կառնեմ ձեր հոգին...
Մըսրա-Մելիքն, հաղար-հաղար վիշապի չափ մի հըսկա,
Կարող է լավ պատասխան տալ լիրը Սասունի արարքին»։
Այդպես ասաց և փրուրշտաց.— փրչեց իսկույն մի մրրիկ.
Փրռշտալով ուզեց Դավթին մեռնել ինչպես մի փեսուր.
Մինչ Դավիթը դեմը կանգնեց, ձեռին կայծակ ու կոտուր.
Ահեղաշունչ խոր խրրխընջաց նաև անմահն իր Քուռիկ...

Տեսավ Մելիքն ու զարմացավ. դիմեց իսկույն, ենդուբյան.
— «Հզոր Դավիթ. ձիուց իջիր. հանդիստացիր վրանում.
Առաջ հանդիստ, հետո կռիվ։ Հերթը կը դա դերուբյան։
Մի վախենա.— մեծ Մելիքը շարքեր չունի դարանում»...
Դավիթն իջավ. իսկ ձին գնաց, որ սարերում խրրխընջա։
Մինչ Մելիքը փորած ուներ հաղար դալի մի մեծ հոր,
Նրա բերանին փռած ուներ մի աննման խալիչա...
— «Նստի՛ր, Դավիթ. փեշքե՞շ է քեզ իմ վրանը փառավոր»...
Եվ Դավիթը,— նստեց թե ոչ, դահավիժեց խորխորատ...
Մելիքն ասաց.— «Մնա այդտեղ քառասուն տարի, քառասուն դար.
Մինչև կարդամ Սասնա դլխին ես խելամուտ մի խրատ.
Որ էլ չանեն այսուհետև իմ մեծ կամքը անկատար»...
Նա մրրթմրրթաց, գնաց, բերեց քառասուն մեծ քար ջաղացի.
Բերեց, փակեց այդ քարերով նա վիրապի բերանը.
Իսկ Դավիթը մնաց ներքև, վիճակի մեջ կորածի,
— Կարո՞ղ էր նա ոչընչացնել դրժոխածին դարանը...

Դիշերն եկավ իր խոհերով. աստղերը վառ ժպտացին.
Իսկ Դավիթը խորխորատում միտք էր անում ինքն իրեն...
Զենով-Օհանն իր քնի մեջ երազ տեսավ անօրեն.
Ու վեր թռավ իր մահիճից, աղաղակեց առանձին. —
— «Վե՞ր կաց կնիկ, ճրագ արա. շարագուշակ մի բան կա.
Երազումս Սասնա աստղը մարեց հանկարծ երկնքում.
Իսկ նրա տեղ փայլեց այլը,— Մըսրա բախտն էր այդ ներկա.
— Վե՞ր կաց շուտով. մեր Դավիթն է ձախորդալի՝
փորձանքում»...

Զենով-Օհանն իսկույն գնաց, սև ձին քաշեց ախոռից
Նրան հեծավ և սլացավ թռչունի պես դեպի վեր...
Կես դիշերին սարի վրա իջավ ձիուց նա նորից
Եվ ահավոր իր մեծ ձայնով աղաղակեց անվեհեր...
Զենովն-Օհան կրծքին ուներ քառասուն դոմշի հաստ կաշի.
— Այնպես դոռաց նա ահռելի, այնպես թնդաց խոլական,
Որ վրայից քառասուն կաշին պատռվեցին, ցած ընկան. —
— Արձագանքը գնաց հեռուն, — որ ժայռերը դուրս քաշի...

— «Ո՞ւր ես Դավիթ, ա՜յ տնաքանդ. խաչ պատրաստին ձեռքդ
զարկ.
Դավի՜թ, Դավի՜թ, սուրբ Մարութա ասավածածինն լավ հիշիր.
Լավ արորիր մազը ձիու, թուր-կայծակին դուրս քաշիր,
Մըհերածին. զգո՜ւյշ եղիր, բախտը չանի քեզ անարդ»...
Խոր խըրխընջաց շեկ Քուռիկը բարձր սարի այդ լանջին.
Տեսավ Օհանն ու միտք արեց.«Սպանված ես դու, Դավիթ»:
Աղաղակից մեծ Օհանի թնդում էին սար, հովիտ.
— Զընդգընդալով ձայնը հասավ և Դավիթի ականջին...

— «Զենով-Օհանն է ինձ կանչում», Դավիթն ասաց հորի մեջ,
Ձեռքը զարկեց խաչ-պատրաստին, թուրը քաշեց կայծակին.
Ափիկ-խուփիկ նա արորեց մազը ձիու՝ ձեռի մեջ.
Եվ հարվածեց հորի տակից.— թող սիրտը շանթ արձակի.
Հրաշքի պես զարհուրելի մի երկրաշարժ զըզըրդաց.
Ջաղացի հատա քառասուն քարերն փետուրի պես վեր թռան.
Թռչունի պես քաջ Դավիթը մութ վիրապից խորընթաց
Վեր բարձրացավ, դեմը կանգնեց Մըսրա-Մելքի մրոմրուան...

Վրանից դուրս նա շուտ վազեց, մազը ձիու արորեց,
— Խըրխընջալով, մըրմընջալով՝ Քուռիկն եկավ Ջալալին.
Դավիթն իսկույն եղբոր նման նրա աչքերն համբուրեց.
— Ընժույգ չէր դա, այլ մի հրաշք, նման նրաց մարալին.
Դավիթն հեծավ իր ընժույգը և հոխորտաց Մելիքին.
— «Ո՞ւր ես, Մելիք, դուրս եկ շուտով. ենեղը չը կա այս
անգամ.
Ժամանակը հաս է, արդեն քո մահացու ասլիքին.
Դո՜ւրս եկ մեյդան. ես քո գլխին կարդալու եմ նոր պատգամ»:

— «Նայի՛ր, Դավիթ. Մըսրա Մելիքն է քո առջև, ոչ թե ճիժ.
— Մի ներս արի. ճաշ վայելենք. հետո դիմենք մեր մարտին.
Դավիթն ես դու իմաստասեր, թե՞ կապելու միայն դիժ.
Պետք է ճաշել, հանդիստ առնել, որ հերթը դա ճըշմարտին»:
Բայց Դավիթը պատասխանեց,— «Դու, տարտարոս և դըժոխք,
Մըսրա-Մելիք, խալխին տալիք, էլ այս անգամ չես խաբի...

Արդեն դիտեմ և հասկացա քարքին վայել սիրաբ նողկ.
— Դուրս եկ շուտով, թե ոչ իսկույն գլխիդ կրակ կը թափի»:

Եվ Մելիքը ասաց իսկույն.—«կռիվն ինչպես սկսենք.
Դու հարգո՞ւմ ես կարգ ու կանոն, թե՞ զոռով է ամեն բան.
Մեծը ես եմ, և առաջին զարկը իմն է անխափան...
Դիտես գոնե, որ այդ է իսկ մենամարտի սուրբ օրենք»:
— «Համաձա՞յն եմ. զարկն առաջին ես տալիս եմ ահա քեզ.
Զարկ զորավոր, թե կարող ես, ես կը կանգնեմ քո առջև...
Մենամարտը հրսկանների օրենք ունի յուրաձև,
— Զարկ առաջինն, որ առավել քաղցր լինի ողջակեզ»...

Կանգնեց Դավիթը դաշտի մեջ և իր բախտին ակնարկեց.
— Հրսկա սար էր նա անհարիր, Մասիսը ձեզ օրինակ:
Մելիքն ասաց.— «Մանզիլ քաշեմ, որ դամ դեպի հաղթանակ»:
Քաշեց Հալեր, և այնտեղից թափով եկավ ու զարկեց...
Երբ որ զարկեց նա իր գուրզով հազար-հազար փթանի,
Խոր տատանվեց երկրագունդը, աշխարհն ամբողջ դղրդաց...
Ու բարձրացավ ահեղ փոշին դու հարվածից տիտանի,
Փոշին ծածկեց երկինք-գետին՝ ամպի նման վերընթաց:

Սարսափն ընկավ աշխարհի մեջ: Հնչեց դրժոխքը կակաղ.
«Մրընչացին անդունդները, վե՞րջն է միթե աշխարհի»:
— «Մահերածին,— Մելիքն ասաց,— մեռա՞ծ ես դու, թե դեռ
կաս»:
Գոռաց Դավիթն ամպի տակից.— Կենդանի եմ, նոր արի»:
Իսկ այս անգամ մեծ Մելիքը քշեց, հասավ Հընդկաստան.
Եվ այնտեղից փոթորկի պես թափով եկավ ու զարկեց.
Բուք ու բորան, կյանքը վերան... ողջ տիեզերքն աղմկեց...
— «Գնա՞ց Դավիթն, էլ չեն տեսնի Սասնա սարեր բուրաստան:
— «Կենդանի եմ, Մրսրա-Մելիք. զարկն է հիմա քո
վերջին». —
Դավիթն հնչեց, ինչպես փողը Զիննաթի մեծ կամուրջին...
Եվ մրթմրթաց չար վիշապը.— «Մանզիլդս կարճ ես բռնեցի.
Սրան անշուշտ կը կործանեմ, եթե քշեմ Զիննաշին»:

Եվ այս անգամ, երրորդ անգամ, նա իր ձիուն մըտրակեց,
Գնաց, հասավ շեն Ջինմաշին և այնտեղից եռ դարձավ.
Բայց եռ դարձավ բյուր-բյուրավոր փոթորկի պես սրարշավ,
— Դեվի նման թափով եկավ և գուրգը խիստ նա զարկեց։

Ի՞նչ կը լինի, եթե պայթեն բյուր փոթորիկ միասին. —
Եվ խառնվեցին ջուրն ու ցամաք, փոշի, կրակ, մութ և լույս...
Անմատչելի և նախաստեղծ առաջ եկավ մի քառս,
Եվ դոյությունն հնչեց միայն իր աղերսանքն Անհասին...
Բայց քառսը ոչինչ է իսկ ճըշմարտության գահի մոտ, —
Քառսն անցավ, և շողշողաց ավելի ջինջ առավոտ. —
Դավիթն ասաց. — «կենդանի է՛. Սասնա հոգին մահ չունի.
Հերթը իմն է, կանգնիր հիմա, Մըսրա Մելիք անամո՛թ»։

Մելքի ջանը սարսափ ընկավ. չեկավ ճանը իր ալշու
Նա զարմացած նայեց Դավթին և նըժույգին նրա վառ. —
— Դավիթն արև, կյանքին բարև, հոգին նրա երկնաշու, —
Եվ Մելիքը աղաղակեց, տերևի պես հողմահար. —
— «Ես չեմ կանգնի դաշտի միջև, այլ կը մտնեմ քարի տակ.
Թե կարող ես, այդպես միայն գնա, արի և ինձ զա՛րկ»։
Դավիթն ասաց.—«կուզես մտիր անդունդի մեջ անհատակ,
— Ուր որ լինես, թուր կայծակին քեզ կը հասնի խնամարկ։

Դավիթն, իրավ, կարիք չունի հեռուները գնալ, գալ.
Վառ Ջալալին ինձ օգնական, ինձ արևը հյուրընկալ...
Մտիր շուտով, ուր որ կուզես, թեկուզ դըժոխքը խորունկ, —
— Կարո՞ղ ես դու մեծ Սասունի հզոր գործերը հոգալ»։
Մըսրա-Մելիքն ահարեկված՝ փախավ, մտավ փոսի մեջ.
Վրան դրին հարյուր քառսուն ջաղացի քար բնածին.
Իսկ վերևից հարյուր քառսուն դոմշի կաշի փըռեցին.
— «Հզոր Դավիթ, թե կարող ես, արի և զարկ փոսի մեջ»։

— «Ոչ քարերը և ոչ կաշին քեզ չեն փրկի, պոսպոսող»
Բաջը ասաց, թուր կայծակին քաշեց հասավ, որ զարկի.
Բայց մեջ ընկավ Մելքի մայրը, շար վիճակին սպասող,
Ու թախանձեց անմահ քաջին, պաշտոնի մեջ կանխարկի.

— «Դավի՜թ, Դավի՜թ, ցավը դ առնեմ, հարվածը այդ բաշխիր
ինձ»։
— «Աչքիս վրա. էս մեկը քեզ։ Հանդիստ եղիր, ա՜յ նանի»։
Երկրորդ անգամ սուրը քաշեց, որ վիշապին կործանի,—
Բայց այս անգամ Մելքի քույրը նրա առջև բռնեց խինձ.

— «Դավի՜թ, Դավի՜թ. չարդ տանեմ. ինձ խնայիր էս
անգամ»։
— «Գլխիս վերա. էս էլ թող քեզ լինի զուրբան, իմ քույրիկ»...
Իսկ երբ քաշեց թուր-կայծակին երրորդ անգամ դիվակամ,
Եվ կատաղած ցատկեց առաջ կայծակնափայլ իսկ Քուռիկ,—
Ողջ երկիրը պտույտ եկավ, ինչպես թեթև մի ճրլորդ.
Շփոթվեցին փոթորիկներ, օվկիանոսը նախանձեց.—
Նորից վազեց մայրը Մելքի, բախտը տեսած իր ձախորդ.
— «Դավի՜թ, Դավի՜թ. մեզ խնայի՛ր. տե՛ս, մայրը քեզ
թախանձեց»։

Բայց Դավիթը խիստ զայրացավ, աղաղակեց ահագոչ.
— «Հազար անգամ քեզ չեն ների, գնա, կորի, կայփա՛ դեզ
Այդ դերի մեջ Սասունն ամբողջ դուք կարող եք և քանդել.
Թե այդպես էր քո դև որդին ինչո՞ւ հնչեց մարտակոչ»։
Այդպես ասաց, թուր կայծակին շարժեց կրկին ու զարկեց.
Եվ տիեզերքը միանգամից մեծամպրոպի դղրդաց.
Քաջին արևն անմահության ճանապարհը ակնարկեց.
Իսկ դրժոխքում սանդարամետն՝ ինքը իրան հոխորտաց...

Հազթ հարվածը փրշրեց իսկույն հարյուր քառասուն ջաղացքար,
Կարեց, այրեց այն հաստաբեստ հարյուր քառասուն
գոմշի-կաշին,
Եվ վիրապում նենգ-Մելիքին պարկեց այնպես գլխագար,
Որ նա դարձավ հազար-հազար մանր փերթիկ ու փոշի»։
Միսն ու ոսկորն մեծ Մելիքի՝ լեսածի հետ քարերի՝
Անդ կազմեցին կարմիր մի տիղմ, արյունալի մի զանգված։
Դավիթն ասաց.— «Կենդանի ես, Մըսրա-Մելիք դարշելի.
— Թե՞ քո բախտը հաշվի դնաց, սև դժոխքին կարոտած»։

Դավիթն այդպես կանգնած մնաց՝ շեկ ձին տակին՝ Ջալալին.
Իսկ Մելիքի բեկորներից ոչ մի ծրպտուն դուրս չեկավ...
— Սասո՜ւն, Սասո՜ւն. քեզ նա դատավ քո փրկության
բանալին.
Եվ Մելիքը, որ վիշապ էր,— ոչնչության գիրկն ընկավ։
Այնքա՜ն քաղցր էր, այնքա՜ն բարձր էր այդ նոր օրը
Սասունին։
Որ արևը նույնիսկ օխտ օր մայր չը մտավ շարունակ.
Ճառագայթը նրա օխտ օր ոսկի ցանեց փառունակ,
Աղատության ծաղիկներով նոր զարդարված Հասունին...

Մինչև այսօր Դավթյան դրծի հետքը դեռ կա Սասնա մեջ.
— Արդյոք գիտե՞ք, կամ խորհե՞լ եք երբևիցե այդ մասին.
Ինչպես քաջը պարտքը տվեց մեր նահապետ Մասիսին.
Ինչպես հնչեց երկրի վերա փառքը նրա երկնաէջ...
Մինչև հիմա դեռ մնում է Սասունի մեջ ճահիճն այդ
— Կյանքի դահիճ, քո արյունից կազմվեց կարմիր մահիճն
այդ.
Անցեք Սասուն.— ճահիճը կա մեծ բլուրի թիկունքին,
Ուր զարկել էր իր բանակը մեծ վիշապը հրացայտ...

Այնքա՜ն քաղցր էր, այնքան բա՜րձր էր մեծ Դավիթը՝
քաջորդին.
Որ երկիրը նրան ձոնեց քառասուն գիշեր, քառասուն օր,—
Անմահության երաղներով լուսավորված նախորդին։
— Դավի՜թ, Դավի՜թ. քեզ Սասունը երկրրպագեց երկնապոր...
Իսկ դու քո մեջ ունե՞ս արդյոք, հավերժական Միրկաթին.
Մի վառ ասարդ, Դավթի նման ջինջ ու շողշող և ազդու.
Ես նայում եմ, միշտ նայում եմ վառ եթերի ճակատին,—
— Ա՜խ, դու չունես և չես տեսնի Դավթի նման լուսատու։

Աղատություն. ես երգում եմ քո հանճարը լուսնի տակ,—
Հավերժարար մեծ հերոսին,— հասկանում եք դուք թե ոչ.
Անմահության ճանապարհը նրան եղավ նպատակ,
Աղգի ոգին, աղգի շունչն էր նա, որ հնչեց մարտակոչ։

ԵՐԳՆ ԱՇԽԱՐՀԻ ՎԵՐՔՆ ԱԶԳԵՐԻ

(ՀԱՏՎԱԾՆԵՐ «ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԴՅՈՒՑԱԶՆԵՐԳՈՒԹՅՈՒՆ» ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆԻՑ)

Ա. ՆԱԽԵՐԴԱՆՔ

ԴԵՊԻ ՀԵՌՈՒՆԵՐ

Դուք չգիտեք, ի՞նչ են խոսում ծաղիկն ու բույսը դաշտի.
Դուք չգիտեք, ի՞նչ են ասում մրրիկն ու լույսը սրտի.
— Թե լավ լսեք, ինչ են ասում բաղերը միշտ ծովի մոտ,
Դուք կիմանաք, ուր են հոսում դեռերը ճիշտ այս հովտի...
Չեզ պես ես էլ անփույթ էի իմ ճամբեքին մանկության,
Չեզ պես ես էլ անգութ էի վարք ու բարքին բնության.
Իսկ երբ թնդաց սիրաս երդով եթերական սրբության,
— Նոր ղղացիս ուր են հոսում դեռերը խոր ճշմարտի...

Չեզ ով կասի, ի՞նչ է խոսում բուրմունքը հին պարտեզի,
Չեզ ով կասի, ո՞ւր է հոսում զորքը վերին մեջլիսի.
— Ո՞վ է տերը և տիրական այս անվախճան արարքի,
Չեզ ո՞վ կասի իմաստը հին եթերական այս դասի...
Քանի այսպես օտար է ձեզ կյանքը իբրև մի հանդես,
Եվ քանի ձեզ, կույրերի պես, անհայտ է սուրբ ասպարեզ,
Քանի մնաք եթերական սարք ու կարգին դուք անտես,
— Չեզ չեն ասի խորհուրդը խոր հավերժական այս դասի...

Գեթ լսեիք, ի՞նչ են ասում բաղերը բյուր ծովի մեջ,
Գեթ լսեիք, ի՞նչ են խոսում դատերը հուր սրտի մեջ,
— Ի՞նչ է անվերջ խոսում իր մեջ փողը տխուր հողմերի,
Չեզ կասեին, ուր են հոսում դեռերը խոր կյանքի մեջ...
Ես էլ ձեզ պես՝ ճանապարհին իմ հեռացած օրերի
Անփույթ էի դեպ անսովոր խորհուրդը խոր աշխարհի...

Իսկ երբ թնդաց երգը իմ մեջ վեհ ու հզոր աստղերի,
— Սիրաս զգաց, ուր են հոսում գետերը խոր կյանքի մեջ...

Գեղջուկ մանուկ՝ մի հորթարած, դաշտերի մեջ, լեռներում
Հազար անգամ լսել եմ ես կյանքի երգը հողմերում.
Մութ գիշերը՝ աստղերը վառ,— իմ հուշերը անսպառ,
Հազար անգամ ինձ ասել են, ո՞վ է տերը աշխարհում...
Մրրիկների ահեղ ժամին, ծովի ափին ցրտահար՝
Հազար անգամ տեսել եմ ես կյանքի երկունքը խավար,
Որ անողոք լեցնում էր միշտ սրտիս խորքերը անբառ,
— Ինձ ասել են, ուր են հոսում խոր գետերը մեր ձորում...

Ծովը հզոր, մրրկահար, ձեռքերը վեր կարկառած,
Երկնքի հետ իր կռիվը վարել է մերթ իմ դիմաց.
Ծովը անհաղթ ու բարկաճայթ, նետվելով իր ափերին,
— Միշտ իր սրտի խոսքն էր խոսում շրջապատին զարմացած.
Խոսք էր խոսում, ինչպես մի օր արևի հետ անբաժան՝
Կրակ էր նա, անմահ կրակ, միշտ բոցավառ, աննման,
Ինչպես մի օր սուրբ արևից անջատեց բախտը նրան,
Ծովը ինձ հետ խոսք էր խոսում, ձեռքերը վեր կարկառած...

Դուք չգիտեք, ի՞նչ է ծովը խորհրդավոր ժամերին,
Ի՞նչ է ասում և փսփսում նա անցավոր հողմերին.
Ի՞նչ է հանում, շուրջը ցանում անդունդներից իր անտակ,
— Ինչպե՞ս է նա ողջույն տալիս հավերժական աստղերին...
Հազար անգամ լսել եմ ես նրա երգը հողմահար,
Հազար անգամ տեսել եմ ես նրա վերքը ցավագար,
Հազար անգամ խոսել է ինձ նա իր ախուր ճանապարհն
— Դուք չգիտեք, ի՞նչ է ծովը անվերջ խոսում հողմերին...

Բբրև գեղջուկ խեղճ մի մանուկ՝ անտառի մեջ կուսական
Միշտ լսել եմ ես բնության ահ ու զայրույթը դաժան.
Երբ հողմը խիստ մռնչում էր վիշապի պես ահավոր,
Իսկ անտառը խոր կանչում էր զորքերի պես ժրաջան.
— Մերկ ու մենակ, թփերի տակ լսում էի անդադար,
Ի՞նչ է ասում, ո՞ւր է հոսում կյանքի գետը միշտ վարար,
Ո՞վ է խոսում նորա խոսքը, ասես մի հին հուշարար,
— Ինչ է ասում բնությունը շարժումի մեջ անկործան...

Սիրաս հաճախ ձգտում էր վեր, միտքս շողում անթառամ,
— Ինչպես անեմ, հավերժական կյանքի գիրքը ես կարդամ.
Երբ դեռ մանուկ դեղջուկ էի, երկրն երկիր ես անցա,
Որ մարքի վեհ տաճարի մեջ կյանքի հիմքը հասկանա՞մ...
Քանի՞, քանի իմաստասեր կրոն, ուսմունք ու դպրոց,
Քանի՞, քանի նոր տեսություն, գաղափարի խոր հնոց
Տասնյակ տարի հեղ ու բարի միտքս փորձեց ու անցավ.
— Բայց նրանցից մեկը չասաց, ո՞ւր է հոսում կյանքը հոծ...

Հազար դպրոց, հազար հնոց անցա ծարավ ու անվերջ,
Գործերի մեջ, փորձերի մեջ սիրտս դարձավ մի զուր վեճ,
Երկրն երկիր ես շրջեցի, գիրքն ու դպիրը անթիվ,
Բայց չգտա գիրքը դրոց՝ իրերի միտքը իր մեջ...
Մարդու համար մի սուրբ տաճար հորինեցի երազում,
— Կյանքի համար նոր ճանապարհ լույս աստղերի խոր դասում.
Բայց գործը իմ հավատարիմ հոգ չդրավ կյանքի մեջ,
— Ես չգտա գիրքը դրոց, նրա՞ իմաստը բազում...

Սիրաս ծարավ, ուխտ գնացի ուխտատեղերը բոլոր,
Միտքս դրավ, լուռ կարդացի բոլոր գրքերը սովոր.
Ճար ու տաճար, գիր ու դպիր էլ չմնաց անծանոթ,
Փորձի գրի հավատ ու դատ, կյանքի կուռքերը հզոր...
Բայց ոչ մեկը ինձ, իմ հարցին, կյանքի գաղտնիքը չասաց,
— Կյանքի գեկը ով է վարում, չար բերմո՞ւնքը, թե՞ Աստված...
Իմ մուրազին ես չհասա՝ երազներիս միշտ կարոտ,
Գիրքը դրոց էլ չտեսա, իրերը միշտ քողարկված...

ԵԳԻՊՏՈՍ, ԲԱԲԵԼՈՆ

Եվ պաղատու ափերի մոտ աստվածարար Նեղոսի
Ես կարդացի վերնագիրը կյանքի վերին դարբասի.
Փարավոնը զորք էր հանում թշնամու դեմ ոխերիմ,
Բազմությունը ծունկ էր չոքում կուռքերի դեմ Անհասի.

Արքայական բուրգերի մոտ գրքերը հին կարդացի,
Քառասներկու եգիպտական աստվածներին կանչեցի...
Եվ դուրս եկան նրանք հզոր երազի պես ու աղոտ,
Ու պատմեցին ինձ միառմի փորձը դալիք և անցի...

Իմ դեմ հզոր ու ինքնազոր՝ աստվածներին ստեղծող՝
Եթերանիստ, հուր ու հանդիստ՝ խեփերը քաջ ու կարող
Հանդես եկավ և ցույց արեց իր դահը հին երկնքում,
— Հին աղգերի անցած ուղին, կյանքը նրանց ոտնակոխ.
Նրա կողքին և անմեկին՝ նավի վրա լուսածին՝
Աստվածների Հուր-Արարիչ, Ռա աստվածը վերին.
Որ դավաղանը Արդարի հուր ու հզոր իր ձեռքում—
Հազար անգամ ասաց պատգամը աշխարհի իր մասին...

Նրանց դիմաց՝ լուսավորված, երկնավայել մի հերթով,—
Երազի պես հանդես եկան ոսկի տեսքով ու զարդով,—
Նոթը արի և թագուհի երկնածավալ ծովերի,
Մաաթը քաջ և միշտ առաջ՝ դեղեցկության կարոտով,
Թոթը, իբրև տեր արվեստի և գիտության անժխտում,
Հերուն անհուն՝ կախարդական գաղտնիքների մարմնացում,
Եվ Օսիրիսը՝ աշխարհին բերք ու բարիքը ծնող,—
— Եվ միառմի ինձ ասացին կյանքի խորհուրդը բացում...

Եվ աստվածները դուրս եկան՝ շար ու բարի, բազմաթիվ,
Ինձ ասացին հին աղգերի արյան կորուստն ու կռիվ.
Պատգամը մեծ և Բացատող՝ կյանքի սաղմոսը ձեռին,
Կարդաց օրենքը իրերի՝ բարոյական ու ազնիվ...
Աչքիս առաջ անցավ ուղին եգիպտական մեծ աղգի,
Հազար ու բյուր կռիվների, փարթամության, տանջանքի,—
— Բերք ու բարիք, արքայական փառքն ու կրոն և պատիվ,
Ո՜հ, այդ ամենը անցել է առանց փայլուն մի հետքի...

Ահա և նա, Բաբելոնը.— կրքի կրակ և հագուրդ,
Արշավանքի վենք ու զրահ, բարքերի խոր մի խառնուրդ,
Կուռքերի մոտ երկրպագու բազմալեզու ժողովուրդ,—
— Որ անմեկին աղոթում էր հաղթանակին հերոսի...

Իսկ Ասուրի աստվածը մեծ և Իդդուբար, Բելը շար,
Եվ Շար-Քիշատ, և շատ ու շատ հերոս ու քաջ կռվարար,
Նրանցի պես նույնը ու աղոտ հանդես եկան իմ առաջ;—
— Եվ խոսեցին նրանք իրենց կյանքի մասին անաչառ...

— Ես եմ, ահա, քաջ ու կարող Սարգոնը մեծ և արի,
Կամքը Բելի միշտ կատարող, քուրմը հզոր Ասուրի.
Կարդել են մեզ երկինք. արև, աստվածը հին մեր ազգի,
Հանձնել են մեզ արքայական գահը Նաբու ու Միրրի...
Մեր ձեռքումը կար աշխարհի խոր, ահավոր, նվաճում,
Երկրն երկիր՝ միշտ համակիր — մեր գենքը փառք էր հնչում.
Իսկ մեր ահից մեր թշնամիք դողում էին ու կորչում,—
— Անու և Բել մեզ հավիտյան կարգել են տեր աշխարհի...

— Ես եմ, ահա, արքա Նաբու-Կոդոնոսոր երկնատես,
Որ կարդեցի այս աշխարհում կյանքի վերին մի հանդես.
Շեն քաղաքներ ես հիմնեցի բարձրատեսիլ, հոյակապ,
— Տեսե՞ք, Բաբելիա ու Բաբելոն՝ շենք ու շնորհքը իմ վեհ...
Ես եմ, ահա, Ասուր-Նազիր, աշխարհակալ և արի,
Ինձի Շամաշը խնամեց, քաջ դատավորն աշխարհի,
Իմ արշավանքը նվաճեց Սուրրու, Արամ, Արուրի,
Տերն էինք մենք աշխարհների,— մեր կյանքը միշտ
լուսատես...

— Դուք, որ ահեղ կրքերի մեջ՝ մինչև կոկորդը ջինված.
Ձեր թշնամուն հալածեցիք մինչև դաղաթը լերանց,
Եվ այս կյանքի փորձանքի դեմ,— իրրև վերջին ապավեն,
Ձեր աշտարակը հիմնեցիք, գլխով երկինքը հասած...
— Ո՞ւր են, ասեք, այն ահավոր փառքերը ձեր, և կրքեր,
Ո՞ւր մնացին դանձ ու ոսկին, շեն ու քաղաք և կուռքեր...
Ո՞ւր է, չկա կիրք ու կրակ և համարձակ ձեր լեզուն,
Կամ ի՞նչ եղավ աստվածը ձեր, աղոթքը ձեր հաղթաբեր...

Ինչո՞ւ համար այս ձորի մեջ դուք զարկեցիք ձեր վրան,
Ինչո՞ւ համար ձեր արտի մեջ բերքը արիք ցիր ու ցան.

Եվ ո՞ւմ համար դուք կավեցիք,— ո՞վ էր ձեզ հետ ուխտ
կապել,
Որ դաք իղուր աղմուկ անեք և հեռանաք անդյուման...
Ձեր աղմուկից ու պայքարից, ձեր վայելքից անպակաս,
Այլև չկա և ոչ մի հետք, ոչ մի հնչյուն, ոչ մի մաղ...
Ձեր կուռքերի, ձեր վայելքի տեղը, տեսեք, ավերակ,
Ուր հողմը շար խոսում է միշտ, խոսք է ասում ու անապ...

ՆԱՉԻՔԵՏԱՍ, ՍԱԿԻՆ-ՄՈՒՆԻ

Իմ երազի հետևն ընկած, բոլոր կողմերը անցա,
Իսկ իրերի հետքը բռնած՝ բոլոր տոհմերը անցա,
Եվ աշխարհի շար ու բարի բոլոր հողմերը իմ մեջ,—
Ազգերի մեծ ճանապարհին կյանքի Հոմերը դարձա...
Եվ Գանգեսի ափերի մոտ,— դաշտ ու հովիտ բերրի,—
Ես լսեցի օրորոցի երգն անդրանիկ ազգերի.
Հնդիկ ու չին ինձ ասացին գաղտնիքը բյուր դարերի,
— Ես ազգերի ճանապարհին կյանքի Հոմերը դարձա...

Դուք, բարձրաբերձ և երկնահաս Հիմալայի սեգ լեռներ,
— Կյանքի անհայտ ճանապարհին կանգնած եք միշտ
անվեհեր.
Քանի՞ անգամ երազումս շրջել եմ ձեր ուսերին,
— Ո՞ւր եք տանում քարվանի պես այդքան ապրանք ու
բեռներ
Քանի՞ անգամ ձեր գագաթին դիտել եմ ես վերջալույս,
Քանի՞ անգամ աղոթելիս տեսել եմ ձեզ կոր ու կույս,
— Ձեր լուռ ճամբին լսել եմ հին կյանքի պատգամը անհույս,
— Ասե՞ք, լեռներ, ո՞վ է փակել կյանքի մուտքը ու դռներ...

Նաչիքետաս, Նաչիքետաս, ճանապարհը քո անհաս,
Քո սրտումը հավերժության խորհուրդը կար անպակաս,
— Կյանքի վերջին ափը տեսար, մահու երկիրը հասար,
— Քանի՞ անգամ երազի պես ինձի այցի պիտի գաս...

Նաշիքեւաս, դու ես քուրմը սրտիս վերին տաճարում,
Նաշիքեւա՜ս, դու ես սիրտ բերքերը բյուր բեջարում.
— Ինչպես եղավ, հյուր գնացիր մահու երկիրը տխուր,
— Ասա, ի՞նչ կար, ինչե՞ր տեսար նորա անհուն
կաճառում...

Դուրս եկ հզոր և շլված կյանքի հեքիաթը ասա,—
Խոսքդ արի, գովքդ բարի,— ես քո պատգամը տեսա.
— Վերջին օրը ահեղ դատին դու կլինես մեզ վկա,
Տե՜ս, քեզի պես շրջում եմ ես, տես, քո բարձունքը հասա...
Դու ես վերջին փայլուն ասողը մեր դառնացած երկնքում,
Քո սուրբ ոգեսար մեր սրտերում հնչում է դեռ անհերքում.
Ոչ մի հանճար քեզ չի խախտի երկնավայել քո դիրքում,—
— Նաշիքեւաս, դուրս եկ հզոր, կյանքի պատգամը ասա...

Եվ դուրս եկավ արևի պես՝ ամպի շղարշը դեմքին,
Նաշիքեւաս, հայրը նրա՝ Վաչաս-Ռավասը վերին.
Եվ դուրս եկավ երազի պես՝ դեմս կանգնեց քաջարի,
Անհայտ խորհուրդը ինձ ասաց կյանքի մասին, իր մասին,—
Ինչպես բոլոր մեկնողների նա՝ ճանապարհը տեսավ,
Եվ աշխարհի չար ու բարի գործերի խորքը հասավ.
Անէության ու գոյության սահմանի մեջը բարի
Անուրջի պես, մրմունջի պես ինչպես գարունը տեսավ...

Ինչպե՞ս եղավ, նա դուրս եկավ իր հոր տնից, իր բնից,
Ինչպե՞ս նրա ուղին տարավ դեպի հեռուն դառնալից.
Տանջանքի խոր նավի վրա, գրկանքի հուր ծովի մեջ
— Ինչպե՞ս հասավ, ինչպե՞ս տեսավ մահու երկիրը անրիծ...
Անէության և էության սահմանի մեջը հզոր՝
Նա էր միայն,— մահը տեսավ,— մահը անհո՞ւն, երկնավո՞ր.
Որ իրը ասաված, նրան ասաց կյանքի խորհուրդը խորին.
— Նա էր միայն. իսկ իրերի երթը տեսավ անսովոր...

Նաշիքեւաս, Նաշիքեւաս, Վաչաս-Ռավաս մեծ որդի,
Քո խոսքի մեջ, ոգոսկի մեջ դարմանը կա իմ դարդի.
Արևների և աստղերի աղբյուրը սուրբ քո սրտում,
— Ո՞վ էր, ասա, հիմնադիրը հավերժական այս բերդի...

Նաշիքեւաս, Նաշիքեւաս, մտքերը քո երկնահաս,
Այս աշխարհի զուր հոգսերի մերժումը խոր դու կտաս.
Տանջանքի սուրբ նավի վրա նուրբ իմացում կհոգաս,
— Ո՞վ էր, ասա, ամենազոր ցանքսարարը էս Արտի...

Նաշիքեւաս, Նաշիքեւաս, կյանքի բևեռը տեսած,
Զրկանքի սուրբ ծովերի մեջ մահվան ձմեռը տեսած,
Մեր ինքնության աշխարհատես արծիվը միշտ քո սրտում,
— Դու իրերի նախամայրի տիեզերներին իսկ հասած...
Գիտակցություն տանջանքի մեջ՝ տերը նա է այս կյանքի,
Խոր իմացում զրկանքի մեջ՝ մայրը նա է այս բերքի,
— Լոկ ինքնությունը ինքնատես՝ հիմքը նա է այս կարգի,
— Անձի խորին ինքնության մեջ կա լույս արև ու աստված...

Նաշիքեւաս, երբ գնացիր ճշմարտության դու այցի,
Դու մերժեցիր վայելքն ու վարք. անմիտ արժեքը գանձի.—
— Կիրքն իշխողի, կյանքն արևշատ, սերունդների
բազմություն,—
Եվ ուխտը քո եղավ միայն նոր ճանապարհը Դարձի...
Բազմանձնության մեջը միայն դու միությունը գտար,
Ծնունդ ու մահն իրար կցող մեծ կամուրջը դու տեսար,
Աշխարհի շատ հոգսերի մեջ կյանքի դագաթը հասար.—
— Սրտի անտես կրակի մեջ կա ինքնությունը Անձի...

Դու նայեցիր սրտիդ ներսը, կրակի մեջ կենդանի,
— Հրաշք է նա, ով իր ներսում ճշմարտության ձիրք ունի։
Անհաս է նա, ով իր սրտի խոսքն է լսում խորության,—
Անմահ է նա, ով կատարի ճանապարհը Անհունի...
Դու ասացիր, Նաշիքեւաս, քո բերքը միշտ անխնա,
— Կիրք ու հոգսեր, վայելք ու սեր մեզի երբեք չեն մնա...
Դուք կորեցիր վերջին սահմանը հանցավոր ցանկության,
— Դու, միայն դու, այս գոյության հիմքը տեսար կենդանի...

Նաշիքեւաս, դու իմ երազ,— կրակը խոր, լուսաբեր
Իմացումիդ տաճարի մեջ երրորդության դեմք ուներ։
Աշխարհատես երրորդության միացումը քո սրտում

Ճախրում էր միշտ իբրև հոգի՝ ծնունդից վեր, մահից վեր...
Դու՝ երկնաթև, լուսածնունդ, կյանքի ծնողը թողած՝
Իրերի նուրբ իսկության մեջ կյանքը տեսար երկնադարձ.
Այս աշխարհում, վերջին ժամին մահու կապանքը կտրած՝
— Երազի պես վսեմ ու վեհ դու սլացար դեպի վեր...

Ո՜հ, միայն դու, Նաչիքեթաս, վերջը տեսար, տեսար մահ,
Եվ ասացիր.— խոր երկնքում չկա երկյուղ, չկա ահ,
— Իսկ իրերի հիմքը կրակ,— հավերժական մի կրակ,
Որ մարդու մեջ անջնջելի կերտած ունի մի սուրբ դահ...
Դու ասացիր,— սրտում կրակ՝ դեպի երկինքը տանող,
Կյանքն իմացող սրտում ճրագ՝ ճանապարհները բացող,
— Իմացության կրակի մեջ կյանքը հոսում է անհագ,
Ինքնահաստատ իմացության մեջը ասված կա կարող...

Սկիզբների սկիզբը մեծ քո մեջ դատար դու միայն,
Աղբյուրների աղբյուրը մեծ քո մեջ տեսար դու համայն.
Եվ երկրային մերժելով՝ դու սրբությունը սրբոց
Հաստատեցիր քո սրտի մեջ, իբրև վերին մի դիվան...
Կյանքի բոլոր հուզումներին, միշտ բացավառ քո սրտում
Դու կարգեցիր արևի պես կախարդական լծորդում,
Դու, անցավորը ժխտելով՝ կյանքը դատար անտրտում,
— Քո մեջ տեսար հավերժության օրենքը խոր ու համայն...

Քո հոգևոր լույսի առաջ՝ հուր կրակում քո սրտի՝
Կրքից անկախ, շարից անվախ՝ բացվեց դուռը Անանցի.
Դու ներս մտար տաճարի մեջ, ուր ինքնությունը Անձի
Թագավորում է ինքնակալ, իբրև ասված Ճշմարտի:
Սրտի վերին տաճարից դուրս,— ուր ինքնության դահը կա,
— Հավերժություն, կամ իսկություն, սեր ու ասված էլ չկա...
Եվ ինքնության դահի առաջ, իբրև աղնիվ մի վկա,
Դու կարդացիր այս աշխարհին անխախտ օրենքը սրտի...

Ու հնչեցիր պատգամը քո.— սրտի ներսը փակվեցեք,
Աներևույթ և անվախճան կրակներին հակվեցեք.

Հավերժ անկախ անցավորից և արտաքինը թողած,
Արևի պես, սրտի խորքում, հուր-կրակով վառվեցե՞ք...
Տիեզերքը ողջ, կյանքը դողդոջ կա անպակաս սրտի մեջ,
Ո՞հ, ինքնության կրակի մեջ միայն եղիր դու անշեջ,
— Այնտեղ է լոկ կյանքը չեզոք,— ճշմարիտն ու էությունն.
Դու ասացիր.— սրտի խորին կրակի մեջ վառվեցե՞ք...

Նաշիքետաս ճշմարտատես, ո՞ւր ես, ասա իմաստուն,
— Ո՞ւր է հոգին քո լուսածին.— աստղերի՞ մեջ, թե՞ մեր մեջ:
Արդյոք գտար հավերժությունը սրտիդ մեջ վեհագույն
Ո՞ւր է կարոտը քո վերին, թռիչքը սուրբ երկնաէջ...
Գեթ իմանամ, Նաշիքետաս, քեզ աշխարհի բերմունքից
Փրկե՞ց արդյոք ուսմունքը քո երկնավայել ու անրիծ,
Թե՞ մոռացված՝ իբրև աճյուն միշտ հեռացար այս կյանքից...
— Ասա.— դու կա՞ս, թե կորած ես մահու տխուր գործի
մեջ...

Եթե դեռ կաս ու կյանք ունես հավերժության սահմանում,
Եթե քո սիրտը անպակաս՝ լուսե սերմեր է ցանում,—
— Ինչո՞ւ ապա մեզ մոռացար և էլ այցի չես գալիս,
Ինչո՞ւ այլև քո երկնավոր դարբնոցը դուռ չի բանում...
Իսկ եթե քեզ, աճյունի պես, հողմը արեց ցիրուցան,
Եվ միտքը քո իզուր կորավ, անհետացավ հավիտյան,
— Ի՞նչ միտք ուներ կյանքի խորին ուսմունքը քո աննման.
— Չէ՞ որ քեզ էլ անհայտ մնաց, ո՞ւր է ուղին այս տանում...

Նաշիքետաս իմաստալի, դու, իմ երազ լուսադեմ,
Դեռ կաց մի քիչ. առարկելու քեզ ասելիք ես ունեմ.
— Որ ժխտեցիր այս նյութական աշխարհի կարգը ընտիր,
Ի՞նչ ես ասում արևներին, դարուններին սիգաճեմ...
Ինչի՞ համար, կամ ո՞ւմ համար ծաղիկն ունի խոր բուրմունք,
Ինչի՞ համար, կամ ո՞ւմ համար ծովը ունի խոր հուզմունք,
Ի՞նչ է ասում հողմը անվերջ խորհրդավոր և խորունկ.
— Ասա, ինչպե՞ս սիրտը ժխտի աշխարհի կարգը վսեմ...

Ո՞հ, իմաստուն, դեռ կաց մի քիչ. ես քեզ ունեմ ասելիք.
Դեմդ, ահա, Սակիա-Մունին, անհուն սիրով սիրտը լիք,

Նա, որ հիմնեց չորս օրենքը համայնության ու կյանքի,
— Սիրտը, ասաց, միշտ աշխարհին պարտավոր է և տալիք...
Իր երազած բարիքը խոր նա ավանդեց ամենքին,
Ցրեց նրան լույսի նման այս նյութական աշխարհին։
— Ամեն մի կյանք, ամեն էակ կիրք ու կարոտ է ապրում,
— Ինչպե՞ս, ասա, սիրտը ժխտի գարուն, արև ու զատիկ...

Դու կաց մի քիչ, դու, իմ երազ՝ Նաշիքեւաս անվանի.
Քեզ՝ դեմ առ դեմ ես կկանչեմ հանճարը մեծ Իրանի,—
Թող Զըրադաշտը լուսադեմ երգերովն իր հանդես գա,
Թող իր հզոր սրտի խորքից նա իր կրակը հանի...
Իսկ նրա հետ ժիր ու կարող՝ հին աստվածները բազում
Հանդես թող գան՝ թեավորված՝ անջնջելի խոր դասում.
Եվ աշխարհի կարգը ասեն այս նյութական իր սաղում։
— Ասա՛, ինչպե՞ս սիրտը ժխտի աշխարհն ու լույսն
անհունի...

Ես կկանչեմ աստվածներին, հարցում կանեմ անխափիր,
Ես կոչ կանեմ անցածներին, երդում կտամ բնադիր.
— Թող գան, ասեն մեր սրտերին ճշմարտությունը վերին,
Միթե ոչինչ է նյութական աշխարհը խո՞ր և ընտիր...
Ես կը կոչեմ պատմիչներին, կյանքի երգը թող ասեն,
Նոր կանչ կանեմ երգիչներին,— սրտի վերքը թող խոսեն,
— Քերթողը քաջ և իմաստուն մտքի բերքը թող դասեն,
— Մի՞թե ոչինչ է նյութական աշխարհը խոր և ընտիր...

Սո՞ւտ է,— հոգին ինքը իր մեջ փակվել երբե՞ք չի կարող,
Արևի պես՝ նա լույս է վեռ, իր ճառագայթը ցրող.
Քանի կուզի, կյանքը հոսի, սրտումը վերք ակոսի,
Սո՞ւտ է, հոգին ինքը իր մեջ փակված մնալ չի կարող...
Գարունը կա և կմնա սեր ու գովքի միշտ կարոտ,
Խոր արշալույսը սրտերին բերում է նոր առավոտ,
— Ավյունը կա իմ սրտի մեջ,— ես խիղճ ունեմ և ամոթ,—
— Սո՞ւտ է,— հոգին ինքը իր մեջ փակված մնալ չի կարող...

Դու, իմ երազ, Նաշիքեւաս, լսի՞ր, լսի՞ր խոսքը նուրբ,
Քեզ ես կասեմ սրտի հզոր ու անսովոր հայցն ու հույս.

— Մի՞թե երբեք քեզ չեն հուզել գարուն ու սեր, երգ ու լույս,
Տես, անխափան ի՞նչ է ասում հեռուների խոսքը սուրբ։
Երբ դու կայիր իրեն երազ՝ ազդիդ հզոր սրտի մեջ,
Չէ՞ որ քեզ էլ կախարդում էր կյանքի բերկրանքը անվերջ.
Չէ՞ որ քեզ էլ թև էր տալիս սիրո շողքը երկնաէջ,
— Ինչպե՞ս, ասա, սիրաբ ժխտի գարունների բերքը նոր։

Տես, քո դիմաց կանգնած է ժիր կյանքի ընտիր թարգմանը,
Դեռ այս աշխարհը չի ծնել նորա սրտի նմանը.
— Սակիա-Մունի, Սակիա-Մունի,— արարիչը գորավոր,—
Չէ՞ որ նա էլ քննեց կյանքը, նրա վերին դիվանը...
Ի՞նչ էր նա մեզ միշտ ավանդում, ի՞նչ էր իր մեջ միշտ
քանդում,
— Սիրան էր նրա էության մեջ ահագնակի միշտ թնդում։
Զուր նա ուզեց կրակը այդ ոչնչացնել իր բանում, —
Կրակը կա՞ և դեռ այրում է մեր սրտի դիվանը։

Սիրա իմ, լո՞ւռ կաց. շա՞տ ես փնտրել, բայց չի անցել քո
հավեան
Դեռ շատերին հարցում կանեմ կյանքի մասին լավատես.
Թող անցյալից մեծերը դան կյանքի երգը քեզ ասեն,
— Ինչու եկան, ինչպես անցան այս անսովոր ասպարեզն...
Սիրա իմ, լուռ կաց. քո որոնած դանձը վերին ես դիտեմ,
Քեզ համար է, որ աշխարհի անցուդարձը կդատեմ.
— Ահա ես քեզ ճշմարտության հեքիաթի մեջ կպատեմ,
Թող անցյալի մեծերը դան,— ո՞ւմն է, ասեն, բերքը վեհ...

Երազիս մեջ մեկն էլ անցավ,— Նաշիքետասն էլ չկա,
Թող նրա տեղ ուրիշը դա, կյանքի ցավերը հոգա.
— Ես կշրջեմ երկրե երկիր, դեռ կհնչեմ երգը խոր,
Քանի չկա ճիշտ աշխարհից արթուն և դեռ մի վկա...
Քեզ չի՞ հուզում ազմուկը սին, կիրքը իր սև երեսին,—
Դու չես կանգնի այս կամուրջին, նա չի սաղում անուրջին...
— Թող դեռ կարդամ գիրքը գրոց կյանքի մասին, իմ մասին,
Մինչև դանեմ ճիշտ աշխարհից դրուստ ու ճիշտ մի վկա...

Ո՞ւր ես տաս, դու երկնքի ու մեծ ազգի իմաստուն,—
Դու քո ավանդը մեզ բերիր, կյանքը արիր կախարդուն.
— Ուր է, չկա քո Հայրենի Կապիտալաստ քաղաքը,
Չկան հզոր քո նախնիքը, նրանց գործը և անուն...
Չկան Սակկի թագավորները անվանի և հզոր,
— Նրանց կարող զենքն ու զորքը, բերքն ու բարիք
երկնավոր...
Աստ, ինչպե՞ս կորավ Մանու օրինագեսը խոշոր.
— Ո՞ւր է, չկա և չի հնչում փառքը նրանց զվարթուն...

Ո՞ւր ես, աստ, քաջ Ասիաս, դու հնության մեծ դուշակ,
Որ ծննդյան օրը նույն իսկ տեսար հանճարը անհագ.
Չէ՞ որ նրա մարմնի վրա դու հեռատես հայացքով
Նախատեսար անմահ կյանքի հաղար ու մի նշանակ...
— Սակիա-Մունի. քեզ մարդարեն տվեց Բուդդա անունը,
Նա խոստացավ կյանքի ճամբին քեզ կատարյալ Անհունը.
Դու մարդկության պիտի տայիր չտեսնված դարունը,
— Սակիա-Մունի, վե՞ր կաց ու տես ցավերը մեր
անհատակ...

Նստուն տարի դու տպրեցիր բարձունքներում քաջարի,
Նստուն տարի կյանքը տեսար վայելքի մեջ աշխարհի.
Խնճույք ու սեր, երգ ու լույսեր դեռ չլված խնդություն
Կյանքում տեսար, բայց չհասար կարոտներին քո բարի...
Ինչպես եղավ, որ մի գիշեր դու ամեն ինչ ժխտեցիր,
Արքայական փառքն ու պատիվ քո մարդերին զոհեցիր.
Եվ մեն-մենակ, սրտով անհագ. Ճանապի հետ համարձակ
Դու անապատը հեռացար՝ գեպի խորքը աշխարհի...

Ջարն ու բարին այս աշխարհի դու հասկանալ կամեցար.
Այստեղ, իրավ, ոչինչ հաստատ ու հարազատ չտեսար.
Միշտ ամեն ինչ փոփոխական, միշտ երերուն, վերացող,
— Կյանքը անմիտ ու անիմաց շարժումի մեջը պտար...
Ճիշտ ասացիր, բարդը մի օր ցրիվ կգա և կընկնի,
Ծնվածը իսկ՝ մի օր անշուշտ կվերանա, կմեռնի.

Ինչ կա այսօր տեսանելի, էգուց այլև չի լինի,—
— Գալիքն ու անց, ներկան ու դանձ կվերանան հողմահար...

Հարուստ, աղքատ, իշխան ու տեր և իմաստունը արի
Այստեղ միայն զոհ են դառնում մահվան ախուր փոքձերի.
Անջնջելի տանջանքի մեջ չկա մի ճար, մի միջոց.
— Նույն իսկ մահը մեզ չի փրկում կրակներից աշխարհի...
Վերածնունդ մշտապատույտ անիվն է նա հավերժի,
Մեկ վիճակից դեպի մյուսը մարդուն անվերջ կշարժի.
— Չէ՞ որ նա է, որ գոյության վերջին փայլը կպրժի,—
Շարժումի մեջ հուրը անշեջ կյանքն է լափում աշխարհի...

Գեսը հոսեց և զուր անցավ,— նա էլ կրկին նա չի դա,
Փոփոխության դառն օրենքին՝ արևը իսկ ենթակա.
Մեկ վիճակից դեպի մյուսն անցնում ենք մենք անընդհատ,
— Իսկ անցյալը նա բերելու ոչ մի հնար էլ չկա...
Մահն է տերը այս աշխարհի,— իշխում է նա անխուսափ,
Տիեզերքի մեջ չկա մի տեղ, գեթ մի անկյուն, մի լույս ափ,
Ուր չլիներ գործը նրա, ուր չցաներ նա խուճապ.
— Դու ասացիր,— նրա ձեռքից ազատվելու ճար չկա...

Անապատի ու փորձության քո երկունքի ծովի մեջ՝
Նրաղների կամարի տակ՝ կրակի սուրբ բովի մեջ,
Դու մեզ դատ, Սակիա-Մունի, փրկության նոր մի միջոց,
Դու հիմնեցիր քո դաղափարը խոկության — Նիրվանա...
Այս աշխարհին միակ միջոցը փրկության կատ նա,
Մեզ տանջանքի անհուն ծովից փրկում է նա՝ անխոնա,
Կյանքը լափող կրակի դեմ փրկիչն է լոկ Նիրվանա, —
Տիեզերքի մեջ նա միակ ճանապարհը փրկության:

Ո՞ւր ես, ասա, Սակիա-Մունի, ով իմաստուն անվանի,
Ոչնչացումը օրենքի,— տիեզերքի մեջ կենդանի,—
Դու կամեցար տեսնել միայն մոռացության տաճարում,
Եվ հիմնեցիր դատարկ ու սին դաղափարը Նիրվանի...
Դու կամեցար ոչնչացումը գոյության բաղմապան,
Ոչնչացումը շարժումի, և ցանկության, և արյան,

Ոչնչացումը կրքերի տաճարի մեջ մոռացման,—
— Գիտակցության խորտակումին դու կարդացիր «երանի».

Ասա, հսկա՛, ի՞նչ կտա մեզ.քո չորս պատգամը ընտիր.
— Ճիշտ որ կյանքը, ծնունդ ու մահն տանջանք է խոր,
անխտի՞ր,

Նրա հիմքում մեր գոյության ծարավը կա անապառ,
Նա է դրդում մեկ վիճակից դեպի մյուսը տարագիր...
Ծարավն է այդ հավերժական կրակի մեջ մեզ նետում,
Նա է կրքի ու ցանկության անջնջելի եռանդում—
Կյանքը դարձնում տանջանքի ծով՝ անպատնալի իր
հերթում,—
— Եվ դրանց դեմ միակ փրկիչ՝ դու Նիրվանա կարդացիր...

Տե՛ս,— գոյության խոր ծարավի ոչնչացումը՝ երազ,
Տիեզերքի խոր օրենքների ոչնչացումը անհաս.
Մեր ցանկության ու կրքերի մերժումդ իսկ անհնար,
— Շարժումը կա, եռանդն ու կիրք միշտ կլինին
անպակաս...
Հավատը գո՞ւր, վճիռը սո՞ւտ՝ մեր կամքը միշտ անկարող,
Ո՛չ մի փորձով, ո՛չ մի գործով կյանքը մերժել չենք կարող...
Զգում, դրդում միշտ կլինին շարժումի մեջ դերիշխող,
— Հուզմունքից դուրս, պայքարից դուրս մեր ճանաչումը
անհաս.

Տրված խորին երազներին, Սակիա-Մունի երանի՞,
Դու չիմացար որ շարժումը սահման չունի, ոտ չունի...
Ջանքն ու դրդում այս աշխարհում կյանք է վարում
անկործան,
Հուզմունքի մեջ տիեզերական օրենքը միշտ կրանի...
— Ինչպե՞ս ասա զլուխ կդա երկրի վրա Նիրվանա,
Քանի հուզմունք պետք է լինի տիեզերքի մեջ անխնա.
Չէ՞ որ նա էլ շարժումի մեջ հավերժաբար կմնա...
Չէ՞ որ ջանքը նրա մեջ խոր նյութը գործի կհանի...

Ինչպե՞ս եղավ, որ չտեսար, կախարդական ո՞վ հանճար,
Ո՞ւր կտանի մեր էության ոչնչացումը խավար:

Չէ՞ որ նա մեզ վերին դասից ձգելու է դեպի ցած,
— Իմացության սուրբ տաճարից դեպի անդունդը անճար...
Եվ այդ խավար անդունդի մեջ՝ ուր միտքը մեր բացակա,
Հավերժության կարոտներին սեր ու պատիվ, տեղ չկա.
Սիրտը այնտեղ էլ չի՞ տենդի ոչ կարեկից, ոչ վկա,—
— Քո երազածը տանում է դեպի վիճակը խավար...

Իսկ այդ խավար վիճակի մեջ, ուր էլ չկա մեր հոգին,
Լոկ նյութական շարժումը հին միշտ կմնա անմեկին.
Գարուն, արև, կարոտ ու սեր հավերժության սուրբ երազ
Պիտ վերանան անդառնալի, տեղի տալով կույր ուժին...
Միայն անմիտ շարժումի մեջ՝ միշտ անիմաց նյութերի—
Իր բանական կյանքը փոխած անվերջ ու խուլ խավարի,—
Ճշմարտության գովքը ասող միտքը հավերժ կմարի,—
— Ա՞յդ էր, ասա, քո ավանդած բերքն ու բարիքը վերին...

Դու կամեցար դանել կյանքը երանավետ ու անդորր,
Որ հանդցնի սիրտը այրող ծարավը մեր խիստ ու խոր,
Որ կործանի և վերջ դնի շղթաներին մեր սրտի,—
— Բայց քո երազածը տանում է դեպի խավարն ահավոր...
Դու, խորհրդաց Սակիա-Մունի, դու երկնատես ով Բուդդա,
Քո պատգամը մեր սրտերին սիրով երբեք չի խնդա...
Քո երգը խոր մեր ականջին կարոտագին չի թնդա,—
— Ո՞չ,— խնկարկել ես չեմ կարող քո կուռքերին անսովոր...

ԻՄԱՆ

Լուռ կաց, սիրտ իմ, երկրի երկիր դեռ կշրջեմ ես տխուր,
— Արծվի՞ պես, արծվի՞ պես թևերդ դուր թափ մի տուր...
Անցումի մեջ, հարցումի մեջ դուցե դանեմ քեզ մի ճար,
— Սի՞րտ իմ, սի՞րտ իմ, արծվի պես թևերդ դուր թափ մի տուր...
Քանի՞ անգամ կյանքը փարթամ կանչել է քեզ խնճույքի,
Քանի՞ անգամ բլբուլը քեզ երգ է երգել հաճույքի.
Իսկ դու կարոտ՝ այս աշխարհից բերք ես ուզում դարունքի,
— Սի՞րտ իմ, սի՞րտ իմ, արծվի պես թևերդ դուր թափ մի տուր.

Իրան, Իրան, կրծքիդ վրա վարդերը կան նազելի,
Երազի մեջ բլբուլը քեզ երգ է ասում հաճելի.
Գյուլիստանի երգիչը մեծ կարոտն ու սերը երգեց,
Իսկ Ֆրդոսին քո փառքը հին կարդաց արի, սրտալի...
Օմար-Խայամը հանձարեղ՝ սրտի ճրագը ձեռին,
Որոնում էր հավերժության գործն ու գաղտնիքը վերին,—
— Նա, որ կարող ըմբոստի պես անարգում էր արարչին,
Իմաստության խոսքը բերեց մեր սրտերին բաղձալի...

Դու պաղաբեր և լի երկիր, և դու խաղաղ ժողովուրդ,
— Ինչո՞ւ, ասա, սրտումդ կա վշտի անհուն մի խառնուրդ.
Չէ՞ որ հողդ լի ու պարարտ, ջուրդ զվարթ ու արև,
Պարզևի պես ավել են քեզ երազ ու սեր և հաղորդ...
Էլ որտեղից սիրդը առավ թախիծը այս դառնալի,
Որ հնչում է դարեր ի վեր քո երգի մեջ սրտալի...
— Ով հորինեց չարդեահը խոր, քո մահուրին անձկալի,
— Իրա՞ն, ասա, ի՞նչ է այդպես ողբում քո հին ժողովուրդ...

Եվ հին փառքով պակաս չես դու քո հարևան ազգերից,
Քո հին կարդով պակաս չես դու մեր հոգևոր բերքերից.
Քո երազի խոր աշխարհում անուրջը կա անպակաս,
— Ինչո՞ւ, ասա, ետ ես մնում քարվանի մյուս խմբերից...
Ասավածներդ քաջ ու արի սրտումդ բուն շինեցին,
Արևապաշտ, կյանքի հետ հաշտ՝ քեզ սրբություն հիմնեցին.
Անթիվ դարեր վկա ես դու կյանքի փորձին ու անցին,
— Ինչո՞ւ, Իրան, ետ ես մնում վեր բարձրացող ազգերից...

Չէ՞ որ միայն քո սրտի մեջ Ահուրամազդը բարի
Ստեղծեց լույս, օր և գիշեր, հանդեսը բյուրավ աստղերի,
Շարժումը բյուր՝ սիրեղերական անջնջելի զորության,—
Որ նախաժամ խավարի մեջ գործ էր վարում աշխարհի...
Հոգին պատուղ նա շնորհեց առատ ու լի իր ձեռքով,
Նա աներկյուղ հորինեց այս գարունը խոր իր երգով...
Սերը նրա վայելում են մարդ, անասուն, բույս ու ծով
— Նա էր միայն, որ մեզ բերեց կարոտը սուրբ աստղերի...

Եվ երազած քո բարձունքին՝ ասուածային ու բարի
Զրադաշտը առաջնորդն էր այս նյութական աշխարհի.
Նա էր տերը և արարիչ քո նախնական օրենքին,
Եվ իմաստունը դերազույն, ինքնաճանաչ և արի...
Նրան լսեց Ահուրամազդը իր վերին դահի մոտ,
Նրան խոսեց պատգամը իր իբրև կյանքի առավոտ.
Նրան ավեց թռիչը ու թև, հաղթության սեր ու կարոտ,
— Իբրև ասուած՝ նա բաժանեց գործերը շար ու բարի...

Իրա՜ն, Իրան, ահա իմ դեմ,— այն կռվադաշտը արձակ,
Ուր դուրս եկան հայր ու որդի մենամարտի համարձակ.
Ահա և նա, Զոհրարը քաջ, իր երկնային ուժի մեջ՝
Զուր աղերսում է իր հորը՝ սրտով արի ու շիտակ.—
— Տե՜ս, հաղթական իմ ծերունի, որքան քաղցր է առավոտ,
Լեռները, տես, շողշողում են լույսերի մեջ ու կարոտ.
Վարդն ու ծաղիկ սեր է շողում, թռչուն ու բույս երգի մեջ.
— Տես, անծանոթ իմ ծերունի, շուրջը կյանք է ու կարոտ...

Հոսում, խոսում է հորդ առուն, ափերը վառ ու փայլուն,
Կանաչը, տես, շաղերի մեջ, կյանքը հեռուն կախարդուն,
— Արդյոք վայե՜լ է աշխարհի այս անմման խնճույքը
Զոհել միայն սպանության... ե՜կ, ինձ լսիր, իմաստուն,—
Ե՜կ, նվիրենք այս առավոտը բերկրության ու կյանքին,
Զենքերը մեր մի կողմ դրած՝ նստենք այստեղ միասին.
Ես կբերեմ սաղ ու երգիչ, խնճույք ու խաղ և գինին,—
Եվ մենք միասին կը ողջունենք խնդուն գարունը անհուն...

Ահա՝ իմ դեմ Ռուստամը քաջ՝ իր անողոք դիրքի մեջ,
Մերժում, դրժում է անծանոթ որդու աղերսը անվերջ.
Եվ կատաղած՝ հայր ու որդի՝ ասես հարվածը շանթի,
Նետվում են քաջ իրար առաջ, ասես վագրը կռվի մեջ...
Ո՜հ Ֆրդոսի, դու կերտեցիր կռիվը քաջ հերոսի,
Քո երգի մեջ Հայր ու Որդին, ասես հրաշքն անհասի,
Գործը տեսան արյունալի և ողբերգու դրապի...
— Դու, Ֆրդոսի, միշտ կմնաս մեր սրտերում երկնամէջ...

Իրա՜ն, Իրա՜ն, մինչև հիմա դեռ կանգնած ես կամուրջին,
Ու չես գտել պատասխանը քո վեր ու խոր տրտունջին...
Քո սրտի մեջ հին աստվածներ եկան, անցան երկնատես,
Բայց դու, տխո՜ւր, դեռ չես հասել քո լուսավոր անուրջին...
Ոչ Զրադաշտը երկնային, պատգամը իր աստղերից,
Ոչ Ցրդոսին՝ իր երգերով դիցաղնական աշխարհից,
Ոչ Սասդին, ոչ էլ Խայեամ,— և ոչ մեկը դրանցից—
— Քեզ չտվեց պատասխանը քո երկնավոր տրտունջին...

Օմար-Խայեա՜մ, Օմար-Խայեամ, դու ամեն օր, ամեն ժամ
Ինձ ես դալիս երազի մեջ, ձայն ես տալիս դարերից...
Ինձ հնչում է ամեն անգամ քո երգը խոր, անթառամ,
— Ինձ կանչում է երազի մեջ քո խոսքը խոր աշխարհից...
Կախարդական ասես հանճար, հեքիաթի պես դու անցար,
Իմաստության երգի համար կյանքի քննիչը դարձար...
— Քո խորախոր ճանապարհին մեկը չեղավ, քեզ հասներ,
Էս աշխարհի գործը տեսար, փոր ու փոշման դու անցար...

Օմար-Խայեամ, քո կրծքի տակ ծով կար անշեջ կրակի,
Օմար-Խայեամ, քո հարկի տակ բով կար փառքի ու մտքի.
— Մեկը չեղավ, որ քեզ հասներ սրտի անհուն թռիչքով,
Օմար-Խայեամ միշտ անթառա՜մ, սով կար քո մեջ
դարունքի...
Տես իմաստուն, քեզ միշտ այրող կրակը կա և իմ մեջ,
Տես, դու, արթուն, քո ցավը խոր կա և այսօր կյանքի մեջ.
Տես ով անհուն, քո պես տոկուն հարց եմ տալիս աշխարհին,
Իսկ աշխարհը, ասես գաղտնիք, անհայտ և մութ է իր մեջ...

Հաղարների դու հարց արիր,— հաղարները լուռ անցան,
Նոր տաճարի դու փորձ արիր, իզուր փորձերը անցան.
Երկնքի դեմ դատ ու բողոք,— ոտքի ելար անողոք,
Աշխարհն էլի անհայտ ու մութ, քո գործերը զուր անցան...
Քեզ պես շատերը սրտագին՝ սիրո բերքը հնձեցին,
Բաբա-Թահեր և Սասդին անմահ երգը հնչեցին.
Հաղարները ասող ու արև մեզ օգնության կանչեցին,
Աշխարհն էլի անհայտ ու մութ, հարց ու փորձը զուր
անցան...

Հաֆիզ, Հաֆիզ, չէ՞ որ դու ես սիրտ վսեմ ավետիս.
Քեզ շատ անգամ դեռ կհիշեմ, երկրե երկիր շրջելիս.
Դեռ շատ անգամ ձեզ կկանչե՞մ, վեհ ու վերին երգիչներ,
— Սիրտս ձեզ հետ միշտ կլինի, սեր ու գարուն երգելիս...
Ո՞ւր եք, եկեք, նոր խոսք ասեք նիրհող սրտին Իրանի,
Նրա հին փառքը անցյալից դուք հետ կանչեք երանի,
Թող երգը սուրբ նրան նորից դեպի բարձունքը հանի,—
— Անթիվ քաջեր, ուրի՞ եկեք, կյանքը ունի ավետիս...

ԱԹԵՆՔ, ՀՈՄԵՐՈՍ ԵՎ ՊՂԱՏՈՆ

Ընկած անհաղ մարմիս հետև՝ սրտիս կրակը վառած՝
Ես եմ կանչում բյուր մեծերին մեր միդապատ անցյալից.
— Դո՞ւք, արևներ մեր հանճարի, ուրի՞ եկեք իմ դիմաց,
Ձեզ՝ դալիս եմ ես հարցումի կյանքի մասին դառնալից...
Իմացության նուրբ թևերին՝ պայծառատես ու հզոր,—
Արշավեցիք դեպի երկինք՝ ճշմարտության կարոտ.
Եվ դաղափարը աշխարհի, իսկ իրերի երթը խոր
Երկնատեսիլ ձեր սրտի մեջ շողաց կյանքի առավո՞տ...

Աթենքի մոտ՝ միտքս կարոտ խոր ալեոր հնության,
Ես լսեցի գործը արի միշտ ահավոր բնության,
Եվ Սոկրատես իմաստունը, աստվածատես Պղատոն
Նոր հնչեցին երգը բարի հին աղդերի վեհության...
Տեսիլներով կախարդական քաջերը հին զարթնեցին,
Աստվածները Օլիմպոսի սուրբ ուսերին բաղմեցին,
Եվ պատմության սուրբ էջերը ինձ միատամի կարդացին,—
— Ինձ ասացին, ո՞ւր է հոսում վարար դեսը բնության...

Եվ դուրս եկավ, կարծես երազ, Հոմերոսը իմ դիմաց,
Կարող ձեռքով զարկեց ընտիր իր քնարին խորիմաց.
Երգը հնչեց կախարդական, ինքը կանչեց քաջարի,
Եվ դուրս եկան հանդեսի մեջ բոլոր քաջերն ու աստված...
Եվ խոսեցին Հունաստանի գործերը հին միատամի,
Եվ արշավանք, և հաղթություն, վիճակը սև անկումի,
Իշխանության կարոտը վառ, վիշտը վերջին դրժումի,
— Երգը հնչեց քաջ հերոսի,— Հոմերոսի իմ դիմաց...

Դուք չգիտեք, ի՞նչ էր ասում Հոմերոսը աշխարհին,
Ինչպե՞ս էր նա միր բաժանում լավն ու վատը և բարին.
— Նա էր հանճարը՝ մարմնացած երգերի մեջ իր ազգի,
Նա՞ էր,— տաճարը նոր կյանքի, որ լույս բերեց սրտերին...
Նա հորինեց կյանքի վերին հանդիսարանը իր մեջ,
Միայն իր մեջ նա տեղ ճարեց աստվածներին երկնային...
Օլիմպոսը նրա սրտում, քաոսը իսկ նրա մեջ,—
Եվ աստվածները նրա հետ կարդում էին գործը հին...

Տե՛ս, ով երգիչ, քո աստվածները կան այսօր և իմ մեջ,
Անհուն գործով, խոհուն փորձով, միայն տարբեր ձևի մեջ.
Ապրուստը այլ, հագուստը այլ, բնույթը ջոկ, կիրքը ջոկ,—
— Ահա նրանք դուրս են գալիս, ձայն են տալիս և իմ մեջ...
Քո մեջ նրանք գործ ունեին քո նախնիքի ձևերով,
Հեքիաթի պես, դահի վրա, հազար ու բյուր թևերով,
Խնճույքի մեջ, կռվի դաշտում, կրքի անթիվ խաղերով,—
— Իսկ իմ սրտում տարբեր է խիստ նրանց վարքը
երկնային...

Տե՛ս, նրանք են իմ մեջ վարում դատը վերին քննության,
Նրանք են միշտ կրակ վառում մեր սրտերում վեհության,
Նրանք են միշտ շարժում դնացքը իմ կյանքի աջ ու ձախ,
— Տես, նրանք են իմ մեջ խոսում մտքի գործը աննման...
Ախ, իմ քերթող, քեզնից հետո անցան դարերը փորձի,
Եվ այդ է լոկ արդյունքը մեր որոնումի ու գործի.
Բայց մեր առաջ դեռ կա արև, դեռ կա Հույսը նոր հունձի,
— Մեղ նա մի օր լույս կբերի,— լույսը վերջին
հաղթության...

Քեզ եմ կանչում, ով Պղատոն, դուրս եկ, ասա, երկնավոր.
— Ինչպե՞ս մրրիկը ներս խուժեց քո սրտի մեջ ահավոր...
Երբ քո առաջ քո սիրելին՝ քո սիրտը սուրբ զոհ գնաց,
Ինչպե՞ս կյանքը քո մեջ դարձավ կրակ ու փորձ հանցավոր...
Եվ դու աշխարհը այս մերժած՝ երազեցիր մի նոր կյանք,
Ուր կատարյալ է ամեն բան, ուր անհուն է և բերկրանք,
Ուր էլ չկա ժխորը սև, կիրք ու կռիվ և տանջանք, —
Ուր գեղեցիկն ու ճշմարիտը ապրում են համապոր...

Չէ՞ որ միայն այս աշխարհից խառվ ու խոր դառնացած,
Դու հղացար հավերժության նոր կացություն վեհապանծ,
Ուր ճշմարիտը հավիտյան, գործերը կան միշտ բարի,—
Եվ հեռացար դու մեղանից՝ արտով երկինքը դարձած...
Կյանքը թվաց քեզի մի բանտ, անմիտ մի այր խավարի,
Ուր ճառագայթը արևի արտացոլում է թերի...
Ուր մարդը կա շղթայակապ, փորձանքի մեջ ու դերի,
— Կյանքն է սավեր նուրբ իրերի, որ կան վերև երազած...

Արտամդ վերք, կարոտ ու երգ, հուսակուր և վհատ,
Դու քեզ համար մեկ ճանապարհ գտար միայն հարազատ.
— Երկի՞նք, երկի՞նք... միայն այնտեղ իրերը կան ճշմարիտ,
Եվ իմացումը երկնքի տեսար վսեմ ու ազատ...
Եվ իրական տանջանքն ու վիշտ, երգում, դրժում ու ցավեր
Դու, երկնատես, որակեցիր իրրև ձգտում դեպի վեր...
— Անմահական կա սուրբ մի սեր, մի նուրբ կարոտ
լուսաբեր,
Որ միշտ քաշում է մեզ հեռուն,— դեպի վայրերը ազատ...

Երբ քո արտում մեծ կորուստի հետքը անցավ, թուլացավ,
Եվ ուրվականը հալածող քեզի թողեց ու անցավ,—
Դորձի ծարավը քեզ նորից կրակի պես պաշարեց,
Քո միտքը խոր ու երկնավոր կրկին աշխարհը դարձավ...
Դու հիմնեցիր կյանքի համար մի նոր օրենք, մի նոր կարգ,
Եվ հղացար ասուվածային նոր պետության վարը ու բարը.
Կախարդի պես դու կերտեցիր իրավունքի նուրբ արարը,
— Քո խոսքը սուրբ նոր պետության խոր հիմնաքարը
դարձավ...

Ո՞ւր ես, վե՞ր կաց, դու, Պղատոն, ասուվածազոր ու
փայլուն.
Դու կյանքը այս համարեցիր մի երևույթ անկայուն,
Եվ հիմնեցիր դաղափարի ու իսկության նուրբ աշխարհ,—
Մտքիդ առաջ հանդես եկան իրերը իսկ, զվարթուն...
Ո՞ւր ես հիմա. արդյոք հասա՞ր քո երազած աշխարհին,
Արդյոք գտա՞ր դաղափարի իսկությունը երկնային,

Արդյոք տեսա՞ր քո փայփայած երանակներ վերին...
— Էս աշխարհից ո՞ւր հեռացավ, ասա, սիրտը քո անհուն...

Թե հիրավի, դու, իմ երազ, ասումածահաս մեծ հոգի,
Մահից հետո մտար սահմանը իսկության ու կյանքի,
Եթե տեսար արդարացի իրերը նուրբ ու պայծառ,—
— Էլ ինչո՞ւ մեզ մի լուր չեկավ այն աշխարհից
բերկրանքի...
Դու, որ գիտես ողբերգությունը չարաչար մեր սրտում,
Դու, որ գիտես լավ ու վատի պայքարը չար այս բերդում,
— Եթե ճիշտ է, հասել ես դու իսկության նուրբ
աշխարհին,—
Էլ ինչո՞ւ մեզ լուր չես տալիս իսկ իրերից անտրտում...

Թե արդարև մինչև հիմա դու կաս այնտեղ անխորտակ՝
— Գաղավարի ու սրբության վեհ ու վսեմ հարկի տակ,
Եվ սիրտը քո հիշում է դեռ կյանքի ժխորը անմիտ,
— Ի՞նչ ես լռում, մի բան ասա մեր սրտերին համարձակ...
Դու երկնավոր վարպետի պես կյանքը դատար Անհասի,
Իրերը միշտ բաժանեցիր երկու տարբեր մեծ դասի.
— Երևույթները անկատար և իսկության նոր աշխարհ,—
Ասա, ի՞նչ կա իսկ իրերում, որ այս կյանքին չի սազի...

Մինչև որ մեզ լուր չբերես այն աշխարհից նրբաշող,
Եվ ոչ մի մարդ, ոչ մի էակ քեզ հավատալ չի կարող...
Մինչև չգաս, հաշիվ չտաս մեզ երանի աշխարհից,
Եվ ոչ մի սիրտ չի խնկարկի քո երազին երկնաշող...
Ո՞վ կարող է զուր հեռանել վառ ցնորքին եթերի,
Ո՞վ կարող է իզուր թվել բերքը չեղած արտերի.
Չէ՞ որ միայն փատտ է ուզում կարոտը խոր սրտերի,—
—Քանի չկաս, և ոչ մի սիրտ քեզ խնկարկել չի կարող...

Վաղուց է մենք կասկած ունենք քո ուսմունքի, քո մասին.
— Սիրտը ինչպե՞ս պետք է հասնի երանական այն դասին.
Անթիվ դարեր կյանք է հոսում, աստղերը ժիր ու բազում.
— Չկա մի գործ, չկա մի փորձ, որ մեզ բերի քո սազին...

Չէ՞ որ միայն վհատ սրտից ծնվեց քո երգը անբիծ.—
Դեռ չի եղել ոչ մի վկա գաղափարի աշխարհից,
Ուր ամեն բան երանական և կատարյալ է հիմքից...
— Ո՞վ կարող է իր կյանքը տալ վառ ու պայծառ երազին...

Ասումածը միշտ քո սրտի մեջ, բա՛ միարը ճիշտ դերապանց,
— Կյանքը երբեք չի մոռանա կերտվածքը քո վեհապանծ.
Մեկը չկա, որ ուրանա ավյունը քո՝ ծովի պես,
— Դու հզայար հավերժական սերը հզոր ու սրտանց...
Ո՞վ կարող է միշտ հետևել քո երազին փառավոր,
Խորթ է մեզի գաղափարի աշխարհը քո անսովոր...
Եթե դու կաս, եկ ու մեկնիր մեզ այս ուղին անցավոր,
Որ անպատուղ էլ չմնան քո գործերը դերապանց...

Կրկի՞ն, կրկի՞ն քեզ եմ կանչում, կարոտագին իմաստուն,
Խոսքդ վերին էլ չի հնչում կյանքի համար կախարդուն.
— Ո՞ւր է, ասա, քո ուսուցիչը երկնավոր ու կարող,
Նա, որի մեջ ասումածը միշտ խոսք էր ասում զվարթուն...
Ո՞ւր է, ասա, քո աննման՝ մեծ աշակերտը — հանճար,
— Որ ճշմարիտ իմացության հիմքը դարձավ մեզ համար....
Կամ ո՞ւր է նա — մեծի մեծը, որ աշխարհը նվաճեց,—
Մի՞թե բոլորդ վերացաք, կարար իզուր և անճար...
Քանի՞ անգամ երազիս մեջ կանգնել ես դու իմ դիմաց,
Ու սիրաս խոր կրակի մեջ՝ լսել եմ քեզ գառնացած.
Քանի՞ անգամ քո անթառամ սերը այստեղ հիշելիս՝
Լսել եմ ես կյանքի մասին քո սուրբ խոսքը խորիմաց...
Ամեն անգամ դեպի երկինք վառ աստղերին նայելիս,
Նրանց ճամբին մեր բախտը հին լուռ ու տխուր դիտելիս՝
— Հիշում եմ քեզ, ով երկնատես, և քո վերքը միշտ լալիս...
— Տե՛ս, մեր վիճակն է գառնացած, մեր հորիզոնը մթնած...

Ո՞ւր է, ասա, քո հայրենի քաղաքը հին ու հարուստ,
Ուր գեղեցիկը հոսում էր, հանց վեհության խոր ապրուստ.
Աթենական ծերակույտը, նրա կարգը և վեհ,
Եվ շատ շատեր, որ ապրեցին կյանքի բերքը ու կորուստ...

Ո՞ւր է օրենքը երկնավոր, որ հզաստար բաղձալի,
Ո՞ւր է հզոր պետությունը քո երազած իդեալի.
Ո՞ւր է սերը անմահական, որ զդացիր բերկրալի...
Վեր կաց ու տես, կյանքը, տես, երկունքի մեջ է դրուստ...

Դու ինձ լսիր, ով իմ հզոր և անսովոր իմաստուն.
Կյանքի երգը մեզ երգեցիր երկնքի պես երաղուն.
— Բայց մեր ցավին քո երգի մեջ ես պատասխան չգտա,
— Ո՞վ կարող է, կյանքը թողած, հոգալ երկինքը անհուն...
Կյանքը իբրև անդուլ կռիվ, իբրև մի փաստ ահավոր,
Մաշում է մեզ, հուզում է մեր սիրտը զգաստ ու մոլոր.
— Թող մեզ տեն նրա խորհուրդը կենդանի, անսովոր...
— Ո՞վ կարող է, կյանքը թողած, հոգալ երկինքը անհուն...

Դու երկնահաս, իմ վա՜ռ երաղ, խոսքը լսիր իմ վերջին.
Երբ դու երկինք սավառնեցիր՝ հլու քո ժիր անուրջին,
— Դու չտեսար, որ ամեն բան տիեզերքի մեջ է միայն,
Եվ կյանքը մեր անց է կենում նրա հզոր կամուրջին...
Տիեզերքից դուրս չկա ոչինչ, ոչ գոյության վրաններ,
Ոչ գաղափար և իսկություն, ոչ փրկության նոր գաղեր.
Նրա մեջ է կյանքը համայն,— նրա ուղին ու բեռներ, —
— Եվ քո դատած երկինքը իսկ կա աշխարհի կամուրջին...

ՀՌՈՄ, ԿԵՍԱՐ

Հռո՜մ, Հռո՜մ... տես, իմ դիմաց ուրվականները բաղում
Զորքի նման հանդես եկան անքակտելի մի դատում.
Եվ իմաստուն, աշխարհակալ, և Կիկերոն, և Կեսար,
Խոր խոսեցին անցքերը բյուր քո դիրքերում, քո սաղում...
— Ո՞վ էր վարպետ երկնային իրավունքի ու կարգի,
Ո՞վ հզաստավ ատավածներին իբրև հսկիչ իր բարքի,
Ի՞նչ միտք ուներ դյուցազնության հանդեսը բյուր արարքի,
— Եվ խոսեցին անցքերը հին, ուրվականները բաղում...

Դու անտահման արարչության ու խնճույքի մեծ քաղաք,
Փառքերդ հուր, կարդերդ բյուր դարձել են դուր ավերակ...

Քանի՞ անգամ լուռ ու տխուր ես եկել եմ քեզ այցի, —
— Վեր կաց ու տես, ինչե՞ր արեց քեզ անխնա ժամանակ։...
Ոչ մի քաղաք դեռ չի հասել քո զորության բարձունքին,
Ոչ մի քաղաք չի հեռուել քո անկումի արցունքին,
Դու համարձակ գործ արեցիր, հասար կյանքի ակունքին,
— Տե՞ս, ոչ որին քո վիճակին դեռ չի բերել ժամանակ...

Վե՛ր կաց արի, ցույց տուր բարի դարբնոցը այն երկնավոր,
Ուր կերտեցին իրավունքի քո ճանապարհը հզոր.
Նրա կրակը կենդանի՝ — քեզ վիճակից վայրենի
Կախարդական լույսի նման երկինք հանեց անսովոր...
Դարբնոցը այն գործում էր լայն ազգիդ հզոր սրտի մեջ,
Ուր աշխարհի բերքն ու բարիք զոդում էր ժիր ու անվերջ...
Նա ծավալեց երկրի վրա փառք ու զենքը քո հզոր.
— Ո՞ւր է,— ասա, քո կարգերի վարպետը խոր ու խոշոր...

Քո պատմիչները անվանի՝ գործերը քո դիվանի
Մեկնում են միշտ ազգեցությամբ հազար ու մի գործանի.
— Սուտ և կոպիտ մեկնություն կա նրանց անմիտ խոսքի մեջ.
Դու բարձրացար և վայր ընկար արարքովը այլ բանի...
Ոչ հերոսները քո կյանքի, ոչ մեծերի սերն ու գութ,
Ոչ պատահարը պատմության, ոչ երկնքի կամքը սուտ,
Եվ ոչ անթիվ անցք ու կռիվ, սև ու պատիր բախտը բութ, —
— Ծնող լինել քո գործերին չէին կարող արժանի...

Չէ՞ որ բույսի փարթամ գեսքի հիմքը միայն նրա մեջ,
Եթե պակսի հյութը հասկի, նա չի շողա արտի մեջ...
Ո՞հ մարդկություն, քո գործերին կա արժանի մի դրդիչ, —
Ոգին է մեր, որ դեպի վեր մեզ միշտ տանում է անվերջ.
Ոգին է հուր՝ և կորովը մեր հոգևոր զորության,
Որ զոդում է կյանքի գործը, նրա փորձը հավիտյան...
— Հառամ, Հառամ, հզոր ազգիդ անմահ ոգին էր միայն,
Որ սահեցնց վեր սավառնող իրավունքը լուսաթջ...

Ինչպես նավը ծովի վրա տանում է միշտ անցորդին,
Եվ իր ցավը հայտնում է միշտ նա հեռատես նավորդին.

— Դու էլ անցորդ ծովի վրա, շուրջդ հողմեր ու մրրիկ,
Նավդ արի ծովի վրա՝ տանում էր քեզ սրտագին...
Հողմի առաջ պետք է լինել խիստ հեռատես ու զգաստ,
Նավը ամուր, կայուն ու ժիր՝— կայմ ու ղեկը, առագաստ,
Նավավարը խելքը գլխին, միշտ վրահաս ու պատրաստ,
— Որ նավը ճիշտ դեպի ափը տանի բեռը, նավորդին...

Չէ՞ որ դու էլ անցորդ էիր Լատինական ցեղերից,
— Չէ՞ որ դու մեծ գործ ունէիր Տիբերիսի ափերից...
Ծովի վրա տանում էր քեզ նավը վերին ու անդին,
— Իրավունքը հանում էր քեզ դեպի ափը բերկրալից...
Կույր է մարդը և չի տեսնում վերջին ափը կախարդուն,
Ծույլ է մարդը և չի հասնում նավահանգիստը հեռուն.
Հողմ ու մրրիկ, ցուրտ ու ալիք, ցավ ու արգելքը անհուն.
— Ո՜հ, իրավունք, դու ես նավը՝ ծովերի մեջ դառնալից...

Դու, հին քաղաք հավերժական, քո վիճակից նախնական, —
Որը երգեց Վիրգիլիոսը իր քնարով նրբաձայն, —
— Քեզ քո նավը տարավ հեռու, դեպի ափունքը փայլուն, —
— Ծովի վրա սահում էր նա,— երթը նրա անհման...
Դու քո ձեռքը զուր մեկնեցիր, որ ողջ աշխարհը բռնես,
Դու քո բերքը զուր ցանեցիր,— բյուր ազգերին տեր լինես...
— Բեռը չէ՞ որ պետք է լինի բռնավորին համեմատ, —
Իսկ դու, ավա՜ղ, զուր ճգնեցիր,— քո մեջ աշխարհը լցնես...

Արդյոք տեսա՞ր, ինչե՞ր եղան նավիդ վրա քաջարի, —
— Կայմ ու ղեկը միշտ անխնամ, իսկ առագաստը թերի.
Բառնալ տվիր նրա վրա ապրանք ու բեռը անթիվ,
Խենթի նման ղեկը նրա դրիր ձեռքը տկարի...
Դու անճոռնի գազանի պես՝ անհեռատես ու անմիտ
Քո սահմանները մեկնեցիր ազգերի մեջ անխտիր.
Քանի տեսակ երկիր ու ցեղ նավիդ վրա խմբեցիր,
— Եվ նավավարը քո մոլի— կրքերի մեջ ապարի...

Քե՛ղ արժանի իրավունքի գալրացի մեջ՝ երկնարեր —
Ներս խուժեցին Եգիպտոսի և Ասիայի բնիկներ.

Անթիվ ցեղերը վայրենի և լուսավոր ազգը հին
Մի տեղ նստան դպրոցի մեջ՝ ասես հալալ դասընկեր...
Լավ է, եթե դասարանում կա զորավոր դասախոսակ,
Որ կարող է նուրբն ու բիրտը՝ կրթել մի լայն հարկի տակ...
Չէ՞ որ վերջը հանդես կգան ուժերը խորթ ու ներհակ, —
Լավն ու վատը մի հարկի տակ միշտ չեն մնա դասընկեր...

Դու, հին քաղաք, ահա փայլուն պատկերի պես իմ առջև
Հոսում է հար կյանքդ վարար՝ գետերի պես ինքնաձև.
Նավդ ահա ջրերի մեջ՝ հողմերի դեմ կռվարար
Շողում է քեզ, լոգում է վեհ գեղի ափը անեղև...
Քանի չկար նրա վրա կիրքն ու կռիվ վայրենի,
Քանի չէիր բարձել նրան բեռները բյուր թալանի,
Քանի չէիր դեռ տարածել քո սահմանները բռնի, —
— Նավդ անշեղ՝ զործդ շքեղ տանում էր քեզ միշտ վերև...

Իսկ երբ մի օր նրա վրա կյանքը դարձավ մոլեգին,
Կարգն ու կարիք, բերքն ու բարիք տեղի տվին վաճառքին.
Իշխողը չար և հպատակ շփոթվեցին կրքի մեջ, —
Երբ թուլացան կայմ ու դեկը,— նավդ թեքվեց իր կողքին...
Քո սրտի մեջ՝ նավիդ վրա Սոդոմ-Գոմորը թնդաց,
Սերն ու արդարը ոտնակոխ,— անզուսպ խավարը խնդաց...
Հողմերի տակ՝ ծովը ահեղ՝ ափին էր թակում դայլայլած, —
— Ավա՜ղ, ընկավ, կորավ նավդ կռվի ժամին դառնագին...

Եվ դու, Հռոմ, և շատերը թող հասկանան, որ այստեղ
Անցորդ ենք միշտ ու գնում ենք դեպի երկինք համառաստեղ.
Մեզ վեր տանողն է մեր հոգին, զորքերով իր ընդհանուր, —
— Սրտի անտես օրենքը հուր, տիեզերքի պես փառահեղ...
Աստղերի պես գործը նրա կատարվում է անխուսափ,
Նրա խախտումը բերում է կյանքին տխուր մի խուճապ, —
— Եվ դու, Հռոմ, և շատ շատերը քո նման վայր ընկան,
Երբ ուրացան բարոյական մեծ օրենքը երկնաչափ...

Եվ ես ահա կանգնած քո դեմ, ո՜վ հինավուրց մեծ քաղաք,
Ասում եմ քեզ և բոլորին կյանքի ծարավը անհագ,

Մարդը, եթե անասնական աշխարհից է դուրս եկած,
Անշեղ գնում է գեղի վեր, դեպի աստված, արեգակ...
Այս բիրտ կյանքի ու երկնքի աստվածության մեջը լուրջ, —
Միշտ խորհրդաց կա կառուցված վեհ ու բարի մի կամուրջ...
— Օրենքը վեհ, աստղերի պես, շողում է մեզ անարատունջ,
Ով որ քանդի գործը սրտի, կկորչի միշտ ու խորտակ...

Տես, Տիրերիսը սրտագին ի՞նչ է խոսում քո կողքին.
Դարեր ի վեր վկա էր նա քո գործերին, քո փառքին.
Քո հիմնադիրը՝ դեռ մանուկ, պատույտ եկավ նրա մեջ,
— Չէ՞ որ նա էր միշտ ունկնդիր քո խնճույքին ու երգին...
Ես կնստեմ Տիբերիսի մշտադալար ափի մոտ,
Նա ինձ կասի քո անցքերը, քո օրը մեծ, առավո՛տ.
Ինչպե՞ս անցավ վայելը ու սեր և հաղթությա՞ն սուրբ կարոտ,
Չէ՞ որ նա էր միայն վկա ազգերի բյուր արարքին...

Ո՞հ, Տիբերիս, ինչե՞ր ասես, քո ափերին չեն անցել,
Քանի՞ անգամ կյանքը այստեղ սեր ու արև է դանձել,
Քանի՞ անգամ մահը անժամ քո դալարուն ափի մոտ
Քո մեծ ազգի պարտեզի մեջ բերք ու բարիք է հնձել...
Ահա գործը Կիկերոնի, նրա փորձը Վերրոսի,
Որ իր խոսքի ավյունի մեջ ափը հասավ Անհասի,
Եվ Հաննիբալը հանճարեղ, և Պոմպեոսը անհաղթ,
Որ հեռուներ արշավեցին, հիմքը դրին մեծ դասի...

Քեզ եմ ասում, քեզ եմ ասում, անպարտելի դու Կեսար,
Մաքի թևով, կյանքի ձևով դու խոր երկինքը հասար,
— Քո սրտի մեջ արևը վառ, քո բերդի մեջ հանքը շատ,
Աստղերի պես վսեմ ու վեհ դու ճանապարհը անցար...
Տե՞ս, քո օրով և քո զորով ազգդ արի ո՞ւր ճախրեց,
— Գաղղիա, Պոնտոս ու Եգիպտոս քո հանճարը պաշարեց,
Քո սիրտը մեծ այս աշխարհին անթառամ բերքը բերեց,
— Վերջը դու էլ քո անկումի սև ճանապարհը անցար...

Հիշո՞ւմ ես դու այն օրը սև, երբ թշնամու դաշույնը
Քո սրտի մեջ օձի նման սփռեց ահեղ իր թույնը.
Չէ՞ որ այն օր կանգնած էիր դու բարձունքի կատարին,
Չէ՞ որ այն օր սահման չուներ քո սրտի խոր ավյունը...

Քո հաղթական հանդեսի մեջ՝ ազգդ արի, կախարդված,
Քեզ էր անվերջ երկրպագում, իբրև հերոս ու աստված,
Քո սուրբ գնացքը դեպի վեր, դեպի երկինքն էր ուղղված,
— Երբ խոր ցցվեց քո սրտի մեջ թշնամու շար դաշույնը...

Դու լավ գիտես, ինչպե՞ս եղավ այդ ահարկու սև գործը,
Ինչի՞ համար խոհուն Բրուտը կատարեց իր փորձը,
Ինչպե՞ս եղավ, որ թշնամին դավը նյութեց նենգավոր,
— Ո՞վ կարատեց մարդուն զավթող սանձն ու հզոր հանդույցը:
Դու չիմացար, որ պետության գործը այն օր հզի էր,

Եվ անկումի անդունդի մոտ՝ ներսը նրա լեղի էր.
Ասես վառող՝ կրակի մոտ՝ բռնկումի տեղի էր,
— Երբ որոտաց ամպը վերից, օդը ցնդեց իր գործը...

Դու չտեսար, անմահ Կեսար, մոտ էր արդեն վտանգը,
Իր սահմանից դուրս էր եկած պետության խոր երկանքը,
Նրա ներսում վխտում էին հազար ու մի սև ուժեր...
Եվ մոտալուտ քո անկումը հնչեց տխուր իր զանգը...
Տե՞ս, այն օրից մինչև հիմա տասնյակ դարեր են անցել,
Բայց այսօր իսկ տեսնում եմ ես պատկերի պես տեսիլներ,
Որ երկինքը, իբրև նշան, քեզ ցույց տվեց ահարեր,
— Իսկ դու, ավա՜ղ, չհասկացար շուրջը հնչող սև զանգը...

Եվ Տիբերիսը՝ կատաղի հորձանքի մեջ, բարկաճայթ,
Խոր ազմկում, խոսք էր ասում չարադուշակ և անհայտ,
Լեռների պես զարկում էր նա իր ալիքը ափերին,
Որ ցույց տա քեզ քո դեմ սարքած դավը, ցավը, սրոգայթ...
Կռիվը կար նաև վերև,— կռիվ, ասես կյանքի սով,
— Ջորքը ահեղ կարատում էր երկնքի սիրտը սրով.
Եվ զինվորները կրակի, խիստ ահավոր ու խռով,
Ամպերի մեջ, արյունի մեջ կռվում էին բարկաճայթ...

Երկնքի մեջ զորք էր հոսում, զորքը անհուն ամպերի,
Որ կարատում, կործանում էր շենքը ընտիր աշխարհի,
Եվ թնդում էր կռիվը խոր, ասես որոտ ու սև բոթ,
Ու տեղում էր անձրևի տեղ, արյունը բյուր զոհերի...

Երկրի վրա խիստ ահավոր՝ գերեզմանները բացված՝
Իրենց խորքից մեռածներին նետում էին ցիր ու ցան,
Եվ մրրիկը, սև մրրիկը, գևերի փեշը բռնած,
Մոնչում էր խոր ու հզոր, կանչում մահը անարժան...

Ողջակեզն իսկ ասուածներին խորթ էր այն օր և օտար,
Քուրմը ասաց, որ նրա մեջ երակն ու սիրտը չկար.
Շուրջդ կանգնած զինվորների ձեռ ու ոտը բոցի մեջ,
Իսկ դու, ավա՜ղ, այդ ամենը, իբրև նշան, չտեսար...
Բնությունը՝ ոտքի ելած, խոսք էր ասում վտանգի,
Մարդկությունը, ասես հարբած, գործ էր դասում փորձանքի,
Քո աղգի մեջ շեղված էր խիստ անիվը մեծ երկանքի, —
— Ժանտախտն եկավ ու վարակեց քեզ, ով Կեսար, և
աշխարհ...

Վայրի, հոսիր, երգդ ընտիր, արևաշատ Տիբերիս,
Դու խոսք ունիս, սղոսկ ունիս, ինչպես դեսը մտքերիս.
Քո ափերին գործ արեցին թագավորներ ու հերոս,
— Դու մի՞շտ կայիր ժողովրդի ահեղ կամքը հնչելիս...
Դու լավ գիտես, ով էր կրում ճշմարտության լուծը խոր,
Ո՞վ էր ցրում իր անձնական վայելքը բուն և ստոր.
Ո՞վ էր թափում անմեղների արյունը զուր, հանցավոր, —
— Դու խոսք ունիս, սղոսկ ունիս, ինչպես դեսը մտքերիս...

Քո ափերին մարդուն ավին կյանքի ղեկը, իբրև փորձ.
Նա իր ճամբին լավ ու վատից ուզեց կազմել մի նոր գործ, —
Նա իր սրտում և իր համար ասուած ու կուռք հորինեց,
— Արարքը բուն, հնարքը սուտ,— գործը եղավ անմիտ
փորձ...

Քո մեծ աղգի բյուր արարքին, իբրև հզոր հատուցում,
Մի այլ հանճար իր դատաստանը հորինեց իր սրտում...
Եվ թեպետ նա շատ ուշ մտավ ժամանակի խաղի մեջ, —
Բայց հորինեց օրենքը խոր սրտի համար անժխտում...

ՀԱՏՎԱԾՆԵՐ ՀՈՒՆԱԿԱՆ ԴՅՈՒՅԱԶՆԵՐԳՈՒԹՅՈՒՆԻՑ

ԱՌԱՍՊԵԼՆԵՐ

1. ԹԻՐՈ

Երկիր Սլիդ, հավերժացող դու գահ ունես և տաճար.
Սալմոնևսն էր քո գահի տերն — հարուստն հզոր, մեծափառ
Դուստրն էր նրա չքնաղ ու հեզ, սերն ու սիրտը մեկուճար
Շողշողում էր լույսի նման ինչպես արև լուսավառ:
Չքնաղ Թիրո — ձյունը այստեղ երբեք այնքան ճերմակ չի.
Որքան ճերմակ համայք ունի քո լուսավոր պերճ մարմինն.
Իրաղարձը քո գոյության լոկ անցավոր նամակ չի,
Որ հետևի մոռացության ընդմիշտ կորած երամին:

Թիրո, դու մերթ ման ես գալիս էնիպ գետի ափերին,
Եվ խանդավառ գովքն ես տալիս ալիքների ծափերին:
— Ինչո՞ւ հաճախ քո հայացքը մեխված է խոր գետի մեջ,
Սե՞րն է գուցե հաշիվ տալիս սրտիդ խորունկ կապերին:
Էնիպ գետը ասուված ունի, Թավիշ ու թարմ մի ասուված.
Նրան ես դու միշտ որոնում, նրա սրտին նվիրված:
Նայի՞ր, ահա հորդ ջրերից նա՝ կախարդիչ, դուրս եկավ,
Եվ քեզ ավեց իր համբույրը, ասես սիրո նոր հասուված...

Արդ՝ համբուրեց գետ ասուածը քեզ սիրաշատ ու սրտանց,
Եվ քեզ այրեց համբույրը այն կրակի պես խորախանձ.
Ու քեզ ասաց ասուածն էնիպ «Շատ չի անցնի այս օրից —
Դու կծնես մի անգամից երկու զավակ գերազանց»:
Օրերն անցան: Գետն էր հոսում քո ցավերին համակիր, —
Նրա ափին դու ծնեցիր երկու զավակ տարադիր...

Եվ ամոթից զամբյուղի մեջ նրանց իսկույն փակեցիր,
Ու նետելով խորքը գետի, ալիքներին հանձնեցիր...

Քեզ նայելով ալիքները երկա՜ր, երկա՜ր լաց արին,
Քո անմման որդոց համար իրենց կուրծքը բաց արին։
Երբ նետեցիր զամբյուղը քո, նրանք, կարծես, ցավակից,
Արցունքի մեջ քո դառնագի՝ ճոխ ափերը թաց արին...
Թիրա, Թիրա, դու նետեցիր ալիքներին քո որդոց,
Որ ցույց չտաս ամոթը քո թշնամասեր չար մարդոց, —
Մանուկներին, թռչնակներին ընդունեցին ալիքներն,
Եվ քո սրտում դու զգացիր ցավերի նոր գրգռոց...

Թիրա՜, Թիրա՜, նայիր ու տես պատուղները քո սրտի
Իրենց մեջքին առան, տարան ալիքները խայտալով.
— Ո՞վ կարող է հորդ ջրերին պարսավ անել ամարդի,
Տես, գնում են ալիքները՝ քո ցավերը կարդալով...
Դու տուն դարձար աղեկտուր, արցունքի մեջ դառնագին,
Բայց քո տխուր գործի մասին ոչ ոք ոչինչ չիմացավ.
Իսկ զամբյուղը, իր մեջ եղած պատուղներով նորածին, —
Հովիվները գտան, տարան տունը իրենց սրտացավ...

Ասա, Թիրա,— զամբյո՞ւղ էր այն շարաբաստիկ, թե՞ մի տաշտ.
Ուր խցկեցիր դու քո ձեռքով թռչնակներին քո անմեղ...
Իսկ երբ հիմա դուրս ես գալիս դու շրջելու դեպի դաշտ,
Նա է միայն բախտի նման քեզ հետևում ամեն տեղ։
Տե՛ս, ամեն օր շրջում ես դու խեղճ ու կրակ և մենակ,
Եվ ջրերի հայելու մեջ տեսնում ես դու քեզ հաճախ։
Տեսնում ես դու պատիվը քո կարծես ընկած ոտքի տակ.
Որ բախտի պես խիստ ու խավար քշում է քեզ աջ ու ձախ...

Կյանքն էլ, կարծես, տաշտ է անմիտ, իսկ էնիպը կիրք է շար.
Սերը հզոր վաշտ է կոպիտ— միշտ անպատուշ և անճար...
— Մի վախենա դառնության մեջ լավ է տեսնում մեր
հոգին, —
Օրը կգա, քեզ կրերի նոր խնդություն ահագին։
Ա՜խ, դու թշվառ, — դեռ չգիտես ձագուկները քո սիրուն
Ազատված են և ապրում են հովիվների խնամքով.

Գոմերի մեջ, ծոմերի մեջ, օտարի մոտ և հեռուն
Բողբոջում է քեզ նոր մի կյանք անհայտ ու խոր մի կամքով...

Եվ մեծացան զավակներդ, և զորացան սիրատենչ
Հավիտենների խնամքի տակ անծայրածիր դաշտի մեջ.
Մեկը դարձավ բախտախնդիր սեր որոնող մեծ Փելևս,
Մյուսը եղավ՝ արտավ ընտիր, բայց երազող քաջ Նելևս:
Ժամանակի կատարի տակ անցան օրերն ու տարիք,
Որ բերում են կյանքի համար միայն ցավեր ու չարիք,
Դու տպրեցիր դառնության մեջ, խե՜ղճ ու կրակ իմ Թիրս,
— Չէ՞ որ հաճախ ճախորդությունը ծնում է և բարիք...

Սալմոնեսը, երբ քո մայրը հիվանդացավ ու մեռավ,
Հավատարիմ իր կրքերին, նոր գեսահաս կին առավ.
Արի և խիստ, երկաթ սիրող — երկաթ էր իսկ անունով, —
— Միդերոնն էր դա դառնաշունչ, դաժանության միշտ ծարավ:
Ո՞վ չգիտի, ինչ ասել է այս ճամբեքին խորթ աղջիկ.
Չար Միդերոնն քեզ էլ արեց իր կրքերին խաղալիք:
Ծորտի նման, ճորտի դերում — գիշեր ցերեկ աշխատող, —
— Վա՜յ լսեցին, վա՜յ ասացին օրերը քո ընթացիկ:

Ամեն անգամ տեսնում էիր դու քո աչքով բացահայտ,
Ինչպես օձը սող է տալիս մարդու անմիտ գործերում.
Միդերոնի չար ձեռքերից օձն ու կարիճ խատաղայթ —
Դուրս են գալիս, որ քեզ խայթեն կյանքի բոլոր հարցերում...
Բայց չար գործին չի վայելում միշտ խնդության հապճանակ, —
Անցան օրերն, և շուտ եկավ դատաստանի ժամանակն.
— Թիրս, Թիրս, — ասա քո կուժը, աղբյուր գնա դու ջրի,
Որ քո աչքով տեսնես այնտեղ արդարության մրցանակ...

Չէ՞, որ Թիրսն ճորտ էր միայն Միդերոնի հաճույքին.
— Գավը առավ, աղբյուր գնաց, որ ջուր բերի խնջույքին:
Հրա՜շք, հրա՜շք, դու ես դրել կյանքի հիմքը երկնաէջ.
— Չկա բնավ տարբերություն իրողության և քո մեջ:
Աղբյուրի մոտ, վեփյուռի մոտ՝ բազմության մեջ շատեր կան.
Իսկ նրանց հետ երկու հսկա և ամրահաս պատվական:

Իրենց ձեռքին բռնած ունեն զամբյուղի պես մի հին տաշտ, —
Եվ նայում են շրջապատին հսկաները բարեպաշտ։

Ի՞նչ ես նայում զարմանքով լի քո աչքերով, ա՜յ աղջիկ,
Ո՞ւր ես նեռում դու բազմության քո հայացքը հեռաձիգ.
— Մի՞թե, մի՞թե տաշտը այն հին քո սրտի մեջ շուտ եկավ,
Եվ փոթորիկ առաջ բերեց մտքերիդ մեջ ընթացիկ...
Եվ բազմության մեջ մտնելով՝ խենթի նման իմ Թիրոն.
Տաշտը բռնեց, տաշտը քաշեց, ասես սիրտ նոր կրոն.
— «Որտեղի՞ց եք դուք ստացել տաշտը այս հին, —
ասացե՛ք, —
— Ի՞մն է, իմն է դա, հիրավի — վկա է սուրբ Կիթերոնն»...

— «Ի՞նչ ես դլխից ափեղ-ցփեղ դու դուրս տալիս, ա՜յ հիմար,
«Այս հատարակ տաշտը որ կա, սրբությո՞ւն է մեզ համար.
Խիստ զոռացին հսկաները, ձեռք զարկելով զենքերին.
«Աչքի լույսն է, սա մեր կյանքի, մեր խնդությունը անմար։
«Ուր որ գնանք, ուր էլ լինենք, մեզ հետ է նա անմեկին,
«Մեր մանկության, մեր փրկության օրորոցն է թանկագին...
«Ինչպե՞ս եղավ, որ քո դլխում ծնվեց հիմար միտքը այդ, —
— «Դե՜հ, վա՛ղն արի շուտով մեզնից, հո չես ցնդել, դու,
ա՜յ կին»

Էլ ավելի խիստ բարախեց սիրտը նրա կրծքի տակ,
Որոտներով, որոտներով թնդաց նրա խոր հոգին.
Արյունն եկավ նրա դլուխ, կրակ փայլեց աչքի տակ...
— Կարոտներո՞վ, կարոտներո՞վ խնդաց նրա նոր ուղին...
Էլ ավելի սերտ մոտեցավ Թիրոն նրանց համարձակ —
Եվ իր ձեռքով տաշտը բռնած աղաղակեց սրտաշարժ.
— «Թե մարդ եք դուք և հարգում եք աստվածներին լուսեղ
տակ,
— «Ասեք, ինչպե՞ս և ո՞վ տվեց ձեզ տաշտը այս հնամաշ»...

Խղճահարված եղբայրները իսկույն միմյանց նայեցին.
Նաև նրանք իրենց սրտում ինչ որ մի բան զգացին։
— Դժար ժամին մարդու հոգին տեսնում է պարզ ամեն ինչ.—
Եվ սրտառուչ Փելիսն, Նելիսն իրենց բախտը պատմեցին...

Արև՜, այնքան չես արձակում դու քո շուրջը ճառագայթ,
Իր ափերին չի աղմկում ծովը այնքան բացահայտ.
Որքան արև, որքան բարև Թիրոս — քո մեջ խնդացին,
Որքան այդօր ապմուկ հանեց մայրը սիրով սրտաճայթ...

Ես չեմ տեսել եղեմական նոր խնդության ծաղիկներ,
Ինձ չեն հասել երանության դեռ չը լսված շողիկներ.
Բայց իմ հոգին լավ տեսնում է ամեն քայլում, ամեն օր,
— Խնդությունը բողբոջում է արցունքի մեջ անսովոր...
Արցունքի մեջ և ճչալով վրա վազեց խեղճ Թիրոն,
Եվ փաթաթվեց նա իր որդոց համբույրների կրակով.
— Լացն ու ժպիտ, սերն ու հառաչ՝ չը երազած որակով
Այդտեղ իսկույն խառնեց իրար ամենաղորն Ապոլլոն...

Ով չդիտի խնդության մեջ սիրտ նման լաց լինել,
Նա չի կարող կյանքի առաջ իր ցավերով բաց լինել.
Ա՜խ, արցունքի և խնդության ալեկոծում կենդանի,
— Միայն քո մեջ մեր սուրբ հոգին իր արևը բաց կանի...
Հեքիա՜թ, հեքիա՜թ, թեև չկա քո ասածը լուսնի տակ,
Բայց դու բարձր ես, բայց դու քաղցր ես կյանքի բոլոր
երգերից.
Հեքիաթի պես մայրը պատմեց իր նոր որդոցն համարձակ
Այն ամենը, որ անցել էր նրա խորունկ վերքերից...

— «Ինչպե՜ս եղավ, ասա մայրիկ, խիստ խոսեցին քաջ որդիք.
«Որ թշնամին քեզ ճորտ արեց՝ — իր հաճույքին խաղալիք»...
— «Իմ խորթ մայրը՝ — չար Սիդերոնն, — նա է միայն մեղքի
տեր»:
Եվ դիմեցին մայր ու որդիք գեպի վերին արքունիքն...
Էլ դալիքը շատ չքաշեց. անցավ միայն մի դիշեր,
Եվ Սիդերոնն հանկարծ զգաց խղճմտանքի չար փշեր.
Վրեժխնդիր Փելեան, Նելեան ներս խուժեցին նրա մոտ,
Եվ Սիդերոնն հիշեց անցյալն, անց օրերին իր կարոտ:

— «Թիրո՜, Թիրո՜. դու մեր մայրն ես, դու մեր սիրան ես և
հոգին.
Կանգնիր ու տես այս աշխարհի դատաստանը իր կարգին»:

Այդ ասելով՝ ներս խուժեցին նրանք խորքը պալատի,
Դուրս բերեցին դաժան կնոջ, սիրան իր ձուլված երկաթի:
Ու բարձրացավ Միդերոնի գլխին սուրը շողշողան,
Ինչպես կայծակն ամպերի մեջ ոչնչացնող ու դաժան
Ինչո՞ւ է միշտ արյունի մեջ և արյունով ծարավի
Հավերժությունը կատարում մարդու համար չար դիվան...

— «Սպասեցի՛ք, — աղաղակեց գթությամբ լի իմ Թիրոն, —
Թող վերանա վրեժն անմիտ, ոխն ասելի և ագահ.
Կյանքն է կարոտ կարեկցության, կարեկցամի սերն անմահ»:
Եվ դուրս թռչեց մահվան բերնից այդպես փրկված Միդերոն:
Այնուհետև եկան, անցան շատ ծաղկավետ գարուններ,
Իսկ Փիլեսը դարձավ մի օր Էլիդի մեծ գահին տեր:
Եվ քե՞զ, քե՞զ, չքնաղ Թիրոս, պայծառ աստղը նոր ժպտաց.
Նոր արքայի պալատի մեջ դու շահեցիր սիրո տեր:
Ա՜խ, թե լիներ կյանքի ծանրը խորհուրդներին մի թարգման
Որ դար և տար
Նոր ավետիս մեր սրտերին վշտական:

2. ՆԻՈԲԵ

— «Փայլուկական թագավորի աղջիկն եմ ես գեղատես,
Մայրս վսե՜մ, — հայրս՝ հզոր Զեսի նման ինքնակալ.
Ասող ու արև իմ սրտի մեջ կատարում են պերճ հանդես,
Ո՞վ չի լսել իմ հոր մասին, — նրա անունն է Տանտալ:
Ամուսինս անպարտելի արքաների մեծ արքա, —
Անմահ է նա՝ — Ամֆիոնը —. գահի վրա Թեբական.
Թագուհին եմ ես աշխարհի — իմ ճակատին վառ պսակ,
Ասողները իսկ նախանձում են իմ փառքերին մոգական...

Ով կարող է, թող դա ասի. — ի՞նչ է պակաս ինձ այստեղ.
Երբ ցավ չկա, — չեն որոնի բնավ դարման և կամ դեղ:
Գեղեցկության ծաղիկները երանության լույսերով
Զարդարում են, դուրդուրում են կյանքս փարթամ ու շքեղ:
Հսկայի պես և ամրահաս յոթը որդի ես ունեմ,
Աշխարհաղոր քաջության տեր ամեն մեկը նրանցից.
Եվ յոթ աղջիկ հավերժահարս, արտով սիրող, մտերիմ,
— Ով կարող է լինել բարձր և գերազանց ինձանից...

Հարստություն, ոսկի, գոհար, բյուր բյուրավոր ես ունեմ.
Եվ ադամանդ, և սեր ու խանդ միշտ անսովոր — ես ունեմ,
Ոչ երգն ու սազ և ոչ մուրազն ինձ այս ճամբին չեն պակսի,
Աշխարհի դեմ իմ մեծ փառքը մրցանակի կը հանեմ...
Տեսե՞ք, ահա կուռքի նման կանգնած եմ ես ոսկեզարդ.
Իմ փառքերը չեն թվարկի ոչ դուշակը, ոչ կախարդ,

Դարեր կգան, կյանքի համար ցավ կը բերեն ու կանցնեն,
Բայց կը մնամ դարերի մեջ ես անսասան ու հպարտ...

Իսկ այս կապիտ ամբոխն անմիտ աչքեր չունի, որ տեսնի, —
Թե ում պետք է երկրպագել, ո՞վ է պատվի արժանի...
Նա կամք չունի, նա խելք չունի և հասկանալ չի կարող,
Որ իմ փառքին անմահներից ոչ որ բնավ չի հասնի:
Իբր օրինակ՝ ես կը բերեմ մորը թեկուզ — Ապոլլոնի.
Հաղարները նրան պիտին երկրպագել անձնուրաց.
Բայց թող ասեն,— իմ համեմատ նա փառահեղ ի՞նչ ունի,
Կարո՞ղ է նա զուրս գալ իմ դեմ ճիշտ մրցության բացեաց:

Իր արգանդից ծնել է նա միայն հզոր մի որդի...
Ի՞նչ է մեկը ինձնից եղած յոթ քաջերի համեմատ: —
Կա և մի բան. երբ որ հասավ վերջին ժամը ծնունդի,
Երկրի վրա տեղ չգտավ Լաթոնն իրրև կին արմատ: —
Երկրե երկիր թափառելով՝ հազիվ գտան մի անկյուն,
Ուր և ծնեց.— թեպետ նրան տեսնող չեղավ և ոչ որ:
Մինչ նա հետո դարձավ ասված — (Հարցը այդ է
գերագույն) —
Իսկ կույրն ամբոխ նրա առջև սող է տալիս ծնկաչոք:

Ասում եմ ձեզ, շեն աշխարհի ողամարդիկ և կանայք.
Լաթոնը ձեզ չի կարող տալ ոչ փրկություն, ոչ հմայք.
Զուր եք նրան զոհեր բերում, զուր եք նրան մեծարում
Չէ՞ որ այդպես զուր կվատնեք զուր ձեր գանձը և ձեր կյանքն...
Թե կա մեկը, որին պետք է երկրպագել,— ես եմ այդ.
Իմ հմայքը, սիրո փառքը ձեր առջևն է բացահայտ.
Երկրպագե՛ք զուր միայն ինձ,— կամքը այդ է երկնքի,
Իսկ Լաթոնը խաղք է միայն և խաբուսիկ որոգայթ»...

Մեծ քաղաքի բազմության դեմ, ծեսերի մեջ անապարտ. —
Այդպես խոսեց շար Նիոբեն — ամբարտավան և հպարտ:
Ձեռքը մեկնած Ապոլլոնի վեհ ու վսեմ տաճարին —
Նա զուրս հանեց իր սև սրտից իր նախանձը մեղապարտ...

Երբ հնչեցին խոսքերը չար, բազմությունը դղրդվեց,
Հաղա՞ր, հաղա՞ր սրտերի մեջ սհ ու կասկած ծավալվեց.
Ա՜խ, Նիոբե, տես կանգնած են քո յոթ որդին քո կողքին
Եվ նրանց մեջ քո գովեստը խորունկ սիրով թավալվեց...

Հրաշքի պես փառքերը քո հենց այդտեղ էլ վերացան.
Կյանքի գործում կա դատաստան, ձեռքին սհեղ մահացան.
Եվ դու տեսար արդարադատ նրա ձեռքը քո վերև,
Նրա կամքով քեզ քո փառքը, քո կրքերը ուրացան:
Երբ ասացիր դու խոսքը քո, անցավ միայն մի վայրկյան,
Երկնակամարը պատեցին ամպերը սև ու դաժան:
Իսկ այնտեղից կայծակն ու շանթը կատաղի դարկեցին
— Աչքիդ առաջ և շանթահար քո յոթ որդին վայր ընկան...

Դու լավ դիտես Ապոլլոնի ամենազոր ձեռքն էր այդ.
Այս դայության ու փրկության խոր ու խորունկ վերքն էր այդ,
Եվ մոտեցավ մեկը այդտեղ քեզ փորձարար հարցումի.
— «Չե՞ս ընդունում, որ դու այսօր մեղք արեցիր
բացահայտ»...
— «Երբեք, երբեք չեմ փոշմանի,—փառքերն են իմ ճշմարիտ,
Շուրջս անթիվ դանձ ու գոհար, կրծքիս վրա մարգարիտ.
Թեպետ կորան իմ յոթ որդին, բայց կան դեռ իմ յոթն աղջիկ,
Ինձ չեն հասնի ոչ Լաթոնը, ոչ իսկ բախտը, ճշգրիտ»...
Եվ այս անգամ էլ ավելի զորքը զարկեց անողոք,
Բազմության մեջ ճիչ բարձրացավ, հնչեց նույնիսկ խուլ
բողոք.
Ապոլլոնի ձեռքերի մեջ շեկ շանթերը շողացին,
Գետնի վերա և մահամերձ յոթ սիրեճ դստերք դողացին:
Ամբարտավան կինը տեսավ կյանքի օրենքն ու հարված,
Կայծակնահար տասնչորս դիակ— դառողության զոհ բերված...
Էլ չէր կարող Նիոբեի սիրտը դրան դիմանալ, —
Լեռնթի նման նա հեռացավ, վշտերի մեջ այլայլված...

Նա կարտասեց ու դեն թափեց հագուստը իր պանծալի,
Եվ դրվատեց աստվածներին՝ փախուստը իր դառնալի՞...
Տե՞ս, կարկտած ձեռքերը իր դեպի երկինք, դեպի վեր

Ձեռմ աղերսից մի նոր ներում իր մեղքերին սոսկալի։
Նստած էր նա ծովի ափին արցունքի մեջ և ակար,
Սպասելով անմահներից նոր ապավեն իր համար...
Երկա՜ր, երկա՜ր, այդպես մնաց, մինչև Ձևսը սահմանեց,
Որ նա այդտեղ ժայռի վրա արցունքի մեջ դառնա քար...

Ոչ նախանձը, ոչ անսանձը այստեղ չունեն ապավեն.
Եվ քար դարձավ ծովի ափին ժայռի վրա Նիոբեն...
Քո արցունքի աղբյուրի մեջ հեռուն նայող դու արձան —
Միշտ քար եղիր,— որ նույն արցունքն ուրիշները մերթ
Թափեն...
Եվ լսվում է խուլ համերգը ափը թակող հորձանքի.
Ծովն է միայն որ լալիս է դառնությունը փորձանքի...
— «Թե չտեսաք այստեղ իմաստ, անցեք շուտով ծովի ափ, —
Ուր Նիոբեն ցույց է տալիս ժանտ հանապարհն իր կյանքի»...

3. Ա Թ Ա Մ Ա Ն Թ

Կար մի այդի ժամանակի անծայրածիր դաշտի մեջ,
Կար մի հոգի հին համայնքի վրեժխնդիր վաշտի մեջ.
Եվ դու էիր այդ ճոխ այդու այդեպանը, Աթամանթ, —
Այս գոյության նոր բանակի տերը — նրա հաշտի մեջ։
Դու երկնքին վեսա դարձար և անդրանիկ խնամի.
Քո ճամբեքին քեզ չը հաղթեց և ոչ մի ձեռք թշնամի.
Իբրև վեսա Օլիմպոսի, իբրև անմահ փառքի տեր՝
Խոսում արիր հեռու մնալ դու արարքից դժկամի։

Քեզ, Աթամանթ, Օրքոմենի միշտ անվանի թագավոր,
Բախտը չէ որ հանել էր իր բարձրունքների դագաթին.
Քո ցանծալի ամուսնության պայծառ վկա և քավոր —
Աստվածները նույնիսկ եղան՝ հլու սիրո երախտին։
Իսկ թագուհին՝ — քո ամուսին Նեփելը խոր ու խումար
Ամպի նման նուրբ էր ու նոր, — ամպ էր ինքը զովարար.
— Զգույշ եղիր, — ամպից հաճախ գուրս է ցոլում և կայծակ,
Այնպես արա, որ չդառնա ամպը պատիժ քեզ համար։

Այդեպան ես փարթամ այդու, պտուղները լավ պահիր.
Սրտիդ խորքում եղած դանձը կյանքի համար լավ շահիր.
Եվ ամեն բան, որ երկինքը ավել է քեզ պատատ,
Կյանքում երբեք վայրենասեր քո հաճույքին մի զոհիր...
Տե՛ս, Նեփելը սիրում է քեզ անմահական յուր սիրով.
Նա անմեղ է, նա շքեղ է, գերդ գիցուհին հեքիաթի,

Նա պատրաստ է քեզ ծառայել կյանքի բոլոր ձևերով,
Եվ անցնում է քեզ հետ ճամբա, ձեռքին լույսը վեցրաթի...

Նայի՛ր, ինչպես հանձնել է քեզ քո Նեփելը անմահ
Իր վառվռուն և վեհագույն սիրուը՝ սիրո ճեմարան.
Նրան քեզնից չի բաժանի ոչ պաշտույնը, ոչ մեռապ, —
Տես, խոսում է «Ա՜խ, Աթամանթ, քո արևի՞ն ես մատաղ»։
Քանի՞ անգամ նա փրկարար քեզ դուրս հանեց փորձանքից,
Քանի՞ անգամ ամպի նման քո արտերին անձրևեց.
— Զգո՞ւյշ եղիր, փորձանք կգա սիրո հզոր հորձանքից...
Հրաշք էր նա, որ քո սրտին կախարդի պես բարևեց...

Նեփելն ահա քեզ պարգևեց չնաշխարհիկ զավակներ —
Շնորհքի մեջ, ցնորքի մեջ միշտ անդրանիկ ավագներ...
Եվ ծաղկեցին Ֆրիքսն, Հելլեն,— ինչպես ասաց մարգարեն,—
Որ սլանան ծովերի մեջ՝ երկու ընտիր նավակներ։
Ցնծության մեջ, փառքերի մեջ անցավ քանի նոր տարի,
Քո ընտանիքը երջանիկ աչքը ծակեց օտարի։
Մինչ քո կյանքը երանության ծաղիկներով պատակեց
Բախտի նման քեզ վիճակված ձեռքը անմահ Արգարի...

Ա՜խ, մեր հոգին սավառնելիս այս գոյության ճամբերով.
Ինքն է իր մեջ սկիզբ դնում իր անկումի աղբյուրին.
Եվ այնտեղից, ուր մեր ուղին փակ է բախտի կողպեքով,—
Մենք ջանում ենք հասնել անմիտ և արգելված համբույրին...
Եվ դո՛ւ, և դո՛ւ, խեղճ Աթամանթ, նույն ճամբերով ընթացար.
Երբ գնալ հեռուն, անհայտ երկիր սիրտ քամին քեզ
տարավ, —
Մեծ Կադմոսին հյուր գնացիր, նրա ցավը իմացար, —
Անդ քո բախտը թռչունի պես քեզնից թռավ ու կորավ...

Կադմոսի մոտ, նրա տանը դու աչքերդ փակեցիր,
Եվ քո սիրտը նրա դատեր,— Ինոյի հետ կապեցիր։
Ճշմարտության և երախտի լույսերը քեզ բա՜վ չեղան,
Եվ քեզ, մոլի կրքի համար, դու խայտառակ խարեցիր։

Ոչ Նեփելը, ոչ զավակներդ քեզ այն օր ցավ չեղան,
Ոչ շրջապատն և ոչ մարդիկ քեզ խրատով լավ չեղան,
Մոռացության դու մատնեցիր դանձը վերին երկնքի
Բայց և անմիտ քո կրքերը էլ փրկարար քեզ չեղան...

Ինոյի հետ դու ուն դարձար: Ի՞նչ էր մնում քեզ անել,
Երբ սերմը կա խարդախության, պետք է նաև այն ցանել:
Եվ ցանեցիր սերմերը շար ընտանիքիդ սրտի մեջ: —
Ի՞նչ էր մնում խեղճ Նեփելին, թե ոչ տանից դուրս վանել...
Ա՜խ, Նեփելը ամպ էր միայն, ամպի նման հով ու դով.
Եվ հեռացավ նա դեպի վեր իր երկնային մուրազով...
Ամպը շողաց ու բարձրացավ կամարներով երկնքի,
Ամպը դողաց ու վերացավ սիրո վերջին հավիտով:

Նեփե՜լ, Նեփե՜լ, դու, որ գիտես սերը սիրել և չափել,
Դու կարող ես մեղքի տիրոջ թակարդի մեջ միշտ կապել:
Դու կարող ես նրա գլխին թափել կրակ ու վրեժ.
— Կրակի մեջ հանցավորին մոխիր անել ու եփել...
Երազների նուրբ թևերին շարված էիք դուք, ամպեր,
Մուրազների սուրբ ձևերին փարված էիք, դուք ամպեր,
Եվ Նեփելը ձեզ հավաքեց,— հովիվը ձեր նախիրի, —
Չէ՞ որ և դուք նրա ցավով լարված էիք, ջան ամպեր...

Եվ բարձրացաք Նեփելի հետ այնքան վերև ու հեռու,
Որ երկիրը երկար մնաց առանց շաղի, անձրևի:
Երաշտի տակ ցամաքեցին աղբյուր ու գետ և առու,
— Այրեց, խանձեց աշխարհն ամբողջ ճառագայթը արևի:
Արդ՝ երբ անցար դու դեպի դաշտ, ողորմելի Աթամանթ,
Իսկույն տեսար և զգացիր ցավի, սոսի մի զարդանդ.
Եվ տեսնելով երաշտի մեջ բյուր արտերը քո այրված
Ա՜խ քաշեցիր դու դաշտի մեջ. «Ա՜խ քեզ բախտի և հարված»...
Զախորդություն, տեսնում եմ քեզ միշտ նենդավոր և անհաշտ,
Քո ձեռքի տակ, տես, գործում են շոռն ու շարիք և երաշտ:
Տե՜ս, այրված են, տոչորված են արտն ու այգի ամայի,
Պտուղ ու բերք էլ չեն տալիս ոչ հովիտը և ոչ դաշտ...

Խե՜ղճ Աթամանթ. որքա՜ն ախուր և վատ գնաց քո բանը,
Քո կրքերից հրդեհն ընկավ շեն ու շքեղ քո տանը.
Գլուխ չունե՞ս, աչքեր չունե՞ս.— նայիր ու տես, թե ինչպե՞ս
Քո ձեռքերից կործանարար կրակն ընկավ քո ջանը...

Ճարը կտրած, հույսը դրած միայն փրկիչ հրաշքին,
Եվ զոհ տալով հուսակտուր իր մարքերին, իր ուշքին.
Խիստ անհապաղ կանչում է նա պատգամավոր ու դեսպան,
Որ շուտ գնան, հարցում անեն Դելփյան հզոր դուշակին։ —
— «Տեսե՞ք, ինչպե՞ս տառապում է մեր երկիրը ցավի մեջ,
«Շուտ գնացեք և իմ կողմից հարցում արեք դուշակին.
— Էլ ի՞նչ է պետք, որ նավորդը ապատ գնա նավի մեջ...

Տեսե՞ք, ահա մահն է գալիս այս անողոք երաշտից.
Չէ՞ որ արդեն պակասում է հացը առատ մեր դաշտից։
Ոչ մի հնար և ոչ մի ճար էլ չի մնում մեր ձեռքին —
Ձախորդությունն է ահ տալիս կործանումի չար վաշտից»։
Հենց որ դեսպանն ու լիազոր պատրաստվեցին, որ գնան,
Նրանց կանչեց իր սենյակը խոսքի համար չար Ինոն։
— «Դուք գնում եք դեպի տաճարն Ապոլլոնյան ու Դելփյան,
Բայց ի՞նձ լսեք,— այդ մեծ գործին ես պիտի տամ ձեզ
կանոն —
Իսկ փոխարենն դանձ ու գոհար դուք կստանաք անհամար։

Ես լավ գիտեմ վերջին խոսքը խորհրդավոր դուշակի,
Տուրք են ուզում տասվածները,— տուրքը բարձր թոշակի.
Թե զոհ բերի Աթամանթը՝ Ոլիմպոսին իր որդոց,
Կը վերանան և՛ երաշտը, և՛ արարքը խորշակի...
Ես իրեն տեր և թագուհի, սատատում եմ ձեզ սրանով.
Ճանապարհի կեսը չանցած՝ վերադարձեք դուք այստեղ,
Եվ հայտնեցեք Աթամանթին դուշակի չար բերանով.
— «Քո զույգ որդոց զոհ պիտի տաս տասվածներին
փառահեղ» ...
Կատարեցեք դուք պատվերն այս,— ձեզ պարգև կա
անպակաս»։

Այդպես խոսեց: Եվ հեռացան դեսպանները դավադիր...
Գործերիդ մեջ զգո՞ւյշ եղիր, բախտախնդիր շար Ինո.
Դու չես եղել այս գոյության սարք ու կարգին հիմնադիր,
Եվ չգիտես, որ կյանքը այս ոչ կատակ է, ոչ կինո:
Մեկ շաբաթ իսկ դեռ չէր անցել շար դավանքից կանացի, —
Եվ Օրքեմեն վերադարձան պատգամավոր ու դեսպան.
Նրանց իսկույն Աթամանթը կանչեց իր մոտ զեկույցի, —
Եվ պատմեցին նրանք նրան խոսքը կնոջ մարդասպան...

Թեպետ խիղճն է սրտի գործում սուր ձևիշը կամ խարտոց,
Բայց որոշեց Աթամանթը զոհել անմեղ իր որդոց:
Երբ սեր չկա մեր մեջ իրրև հավերժացող մի օրենք,
— Ինչ է հոգին թե ոչ միայն շար կրքերի մի բարդոց...
Դուրս վազեցին ծառաները, որ տուն բերեն զոհերին,
Բայց կար մի ձեռք, որ արգելք էր այդ հանցավոր խոհերին.
— Չէ՞ որ երբեք չի ծառայի այս տիեզերքը հոյակապ
Գազանացած մարդու ստոր, մարդու շվայտ, շահերին...

Ո՞ւր եք հիմա, ի՞նչ եք անում խեղճ մանուկներ սիրասուն.
Դուք չեք տեսել և չգիտեք, ինչ ասել է վայնասուն:
Գառների հետ, դուք էլ ասես գառների պես դաշտի մեջ
Խաղ եք անում, շաղ եք անում, թռչունի պես վազվզում...
— Ցրի՞ք, Հելլե՛ն. չէ՞ որ սիրուն ձեր հոտի մեջ մի խոյ
կա, —
Ջեյրանի պես, հեյրանի պես — ձեզ դուրդուրող և սիրող.
Մի շեկ ոչխար, որ եղել է ձեր խնդության միշտ վկա,
— Նա թույլ չի տա, որ մոտենա ձեզ թշնամին, շար գրոսն:
Երբ մոտեցան դահիճները, որ ձեզ տանեն դեպի մահ,
Լեզու առավ շեկ ոչխարը և խոսքն ասաց շուտափույթ.
— «Դուք, մանկության իմ ընկերներ, ձեր բախտով եմ ես
ագահ,
«Ահա եկավ, որ ձեզ տանի ձեր թշնամին ժանտաժուտ.

«Իսկ ձեր հայրը հորինել է ձեզ մահացու մի կորուստ,
«Ձեզ կաղատի միայն մի բան, — խիստ անհապաղ մի
փախուստ:

«Ես մայր եմ ձեզ, մայրախնամ մի կենդանի՛, մի չեյրա՞ն.
«Որքեր ունեմ ես զորավոր, հոգիս գեղմ կա մի հարուստ.
«Եկե՞ք, սիրուն իմ մանուկներ, ելե՞ք, նստեք իմ մեջքին,
«Ես կատանեմ ձեզ շատ հեռու, քանի լույս կա իմ աչքին:
«Ծովերի մեջ, հովերի մեջ ես լող կը տամ անդադար,
«Եվ մահն այլևս ձեզ չի հասնի,— ձեզ և իմ սուր թռիչքին»·

Եվ նստեցին Ցրիքան, Հելլենն խոյի վրա սկսեմաղ,
Եվ նա սահեց ծովերի մեջ դեպի հեռուն դեպ Կոլկաս:
Ցրի՞քա, Հելլե՞ն. ի՞նչ կար արդյոք ձեր սրտի մեջ այն ժամին,
Երբ տանում էր ձեզ աշխարը դեպ անծանոթ մի մուրազ...
— Տե՞ս, Աթամանթ, դառնուկներդ նոր թև առան ու թռան,
Նրանց տարավ դեպի հեռուն իր խավ մեջքին շեկ մարին
Իսկ քեզ համար նրանք առմիշտ և հեռացան, և կորան,
— Ի՞նչպես եղավ, որ ուրացավ որդու սերը քո հոգին...

Եվ պատան մանուկները խորունկ ծովի նեղուցով. —
Բայց վայր ընկավ խեղճ Հելլենը ջրերի մեջ խորթ ու հորդ
Եվ նեղուցը այնուհետև կոչվեց միայն Հելլեսպոնտ,
Իսկ Ցրիքան արցունքի մեջ, սրտի խորին զղջալով
Նրան հանձնեց ալիքներին, ինքը սահեց դեպ հեռուն.
Ապա նայեց դալիքներին Կոլկիդի մեջ վառվռուն,...
Այդպես անցան շատ տարիներ, ժամանակը իր հերթին
Կյանքում ծնեց անթիվ ցավեր, կիրք ու կարիք դալարուն...

Ա՜խ, Աթամանթ, անցքերի հետ հերթը հասավ նաև քեզ,
Զե՞ որ վերին կա դատաստան... Քեզ անպատիժ չի թողնի —
Աստվածածին ժիր Նեփելը, սրտով արի, սիրակեզ,
Քո վիճակը նա իր ձեռքով բախտի առջև կիսառնի...
Իրոք, եկավ օրը վերջին արդարադատ հատուցման,
Աստվածները քեզ բռնեցին և զոհ տարան անդյուման:
Ձևսի հզոր տաճարի մեջ կը դլխատեն քեզ անշուշտ,
Եվ քո սրտի արյունի մեջ դու կը կորչես հավիտյան...

Ձևսի պայծառ տաճարի մոտ հավաքված էր բազմությունն, —
Որ եկած էր մահվան առջև իր աղոթքը կարդալու,

Սուրբ արդեն դուրս էր եկել իր պատյանից ժանտագույն,
Երբ շղթայված Աթամանթին մոտ քաշեցին մորթելու...
Այդ միջոցին հանկարծ մի մարդ կանգնեց հանկարծ ղահի մոտ
Եվ դառնալով ամբոխներին աղաղակեց անծանոթ...
— «Ես եկել եմ հեռուներից, ուր միտքը ձեր չի հասնի,
«Ես ջոկել եմ արյուններից ձեզ նոր պատիվ ու կարոտ...

«Ասում եմ ձեզ, սուրը նորից պատյանի մեջ թող մտնի.
«Աթամանթը նորից սիրո աղաղություն թող գտնի.
«Սա տաճարն է կարող Զևսի, իսկ ես նրա մեծ որդին,
«Լսե՛ք, ահա Հերակլեսը ձեր սրտերին խոսք ունի...
«Ձեր Ցրիքսը կենդանի՞ է, ապրում է նա Կորկիդում,
«Թե կամենա Զևսը վերին, նա միշտ կապրի մեր սրտում...
«Ի՞նչ միտք ունի արյուն թափել, երբ այդ Զևսի կամքը չի.
«Թողե՛ք աղատ Աթամանթին, ինչպես սերն է ազոթում»...

Ձայնը թնդաց Հերակլեսի, կուրծքը շարժվեց հանդեսի
Բազմությունը ալեկոծվեց, ինչպես ծովը հողմի տակ...
Սուրը կրկին պատյան մտավ ձեռքերի մեջ Անտեսի,
Եվ տուն դարձավ Աթամանթը, մահն հիշելով շարունակ...
Այսօր աղատ, էդուց նորից ցավը պիտի քեզ այրի.
Խեղճ Աթամանթ, քանի թակարդ բախտը քո դեմ կը շարի...
Լա՛վ մտածիր. քանի՞-քանի՞ մեղքեր ունի քո հոգին.
— Ինչեր ասես, որ այս կյանքը մարդու վզին չի կարի...

Ա՜խ, Աթամանթ, ինչո՞ւ եղար դու Կադմոսին զուր փնտա.
Գնա, նստիր ու մեղքերդ մեկ-մեկ հիշիր և տես։
— Ինո՛, Ինո՛, դու չես միթե դժբախտությանն այս աղբյուրն.
Թե բախտը քեզ փորձի դնի, ո՞վ պիտի քեզ ափսոսա...
Մի լավ հիշիր. բացի քեզնից Կադմոսի տանն էլ ո՞վ կար.
Ինչպե՞ս եղավ, որ Զևսը մեծ քո քրոջը համբուրեց։
— Քո քրոջը, որ Սեմելն էր, գեղեցկության նոր նկար, —
Եվ համբույրից ատավածային մի նոր զավակ նա բերեց...

Դու մորաքույրն էիր նրա — այդ նորածին զավակին.
Զևսը քո մոտ բերեց նրան և հանձնեց քո խնամքին։

Այդպես ասրեց քո ձեռքի տակ վառ մանուկը՝ Դիոնիս.
Որ և դարձավ Նիս լեռների սուրբ սանիկը անմեկին:
Ինո, Ինո, այդ վիճակում ո՞վ կարող էր քեզ հույս տալ...
Չար Հերայի չար խանդերից չէիր կարող դու խույս տալ...
Եվ կամեցավ նա երկնքում, իբրև Զևսի ամուսին, —
Քո կատարած գործի համար իր դայրույթը քեզ ցույց տալ...

Ահա եկավ օձի նման անհերևույթ չար Հերան —
Եվ թույն թափեց Աթամանթի սրտի խորքը և ներսան.
Եվ դուրս վազեց՝ Աթամանթը խելագարված ու վայրագ,
— Չէ՞ որ թույնը կործանիչ էր և խենթության նոր մերան...
Եվ շրջում էր դաշտերի մեջ Աթամանթը խենթաբար,
Նա ձախո՞ղ էր... Նա որսորդ էր իրան կարծում.— մի հոկա...
Իսկ դու, Ինո, մանուկներիդ ձեռքը բռնած դուրս եկար,
Որ նա կանչեց Աթամանթին, սերը բռնած քեզ վկա...

Մի՛ մոռնա, մի՛ մոռնա Աթամանթին խելագար.
— Ցնորված է, խենթացել է նա թույներից ցավագար...
Զգո՞ւշ, Ինո. վերադ կդա և քեզ կանի բնաջինջ,
Խելքը կորած այդ վիճակում դեռ կմնա նա երկար:
Ավա՜ղ, իզուր դու մոռեցար, մանուկներով բոլորված.
Աթամանթը քեզ նայելով, ինքը իր մեջ մտածեց. —
«Որսորդ եմ ես. իսկ սա չէ՞ որ առյուծ է իսկ իմ դիմաց»
Քեզ, իր կնոջ, նա վայրենի առյուծի տեղ ընդունեց...

Եվ նետեր իր նա արձակեց, նշան բռնած դեպի ձեզ,
Եվ գլորվեց գետնի վրա Լեվարքը քո լուսատես:
Միայն այդտեղ դու իմացար, — ինչ ասել է որդու սեր.
Տես, Լեվարքը արյունի մեջ, — մահն է նրան միայն տեր:
Ոչ քո ճիչը, ոչ աղաղակն էլ չեն օգնի քեզ այդտեղ.
Սարսափի մեջ մարդու հոգին խավարում է՝ շատ հաճախ:
Եվ դու, և դու, դժբախտ Ինո, խիստ խելագարվի և ահեղ
Մելիկերտի հետ միասին վազվզեցիք աջ ու ձախ:
Ախ, վազեցիր դու այլայլված, դեմքդ խոժոռ ու վայրագ,
Քո աչքերից դուրս էր նայում նոր կատաղած մի դազան.

Իսկ Մելակերտը, քո որդին, փեշդ բռնած ու արտդ —
Քարշ էր գալիս քո հետևից սիրտանվեր, անբաժան,
Ասա, Ինս, ի՞նչ մեղք ունի Մելակերտը քո առաջ.
Ի՞նչ ես այդպես խենթի նման քաշում նրան ձախ ու աջ. —
Տե՛ս, լալիս է նա արտավեր, նա կանչում է օգնության.
— Մի՞թե բնավ դու չես լսում նրա ձայնը և հառաչն...

Մայր ու որդի եկան հասան սև ժայռերին ծովափի,
Եվ կանգնեցին անդունդի մոտ, կրծքի վրա քարափի:
Մայրը նայեց ժայռը թակող ալիքներին ահարկու,
Եվ նրանց հետ երդեց մի երգ, կարծես երգը կարոտի. —
Հետո հանկարծ ձեռքը առավ Մելակերտին դողդողջուն, —
Եվ իր կրծքին նրան սեղմեց իբրև սիրո մի ողջույն,
Եվ որդու հետ ու միասին ծովի անդունդը նետվեց.
— Ծովը ծփաց և արձակեց աղեկոտոր մի հնչյուն...

Ո՞ւր մնացիր, դու, Աթամանթ, ուր է հիմա որսը քո.
Չե՞ս էլ հիշում, ինչպես կորան մանուկները — չորսը քո:
Առաջ վազիր ու փութաթափիր քո անմոռաց Լեվարքին, —
Չէ՞ որ որդին անց է կացել խելացնոր հերոսը քո...
Խելքի եկած Աթամանթը վազեց, տեսավ իր որդուն.
Վազեց ընկավ նրա վրա ողբանվագ ու դժգույն:
Երբ վեր կացավ,— մեջքին դրեց սառ դիակը Լեվարքի, —
Ու հեռացավ դեպի ծովը, որ հուզված էր և արթուն...

Ո՞վ է նստած ժայռի վրա, կողքին դրած նոր դիակ,
Ո՞վ է լալիս աղեկոտոր՝ կեռ դիշերին լուսնի տակ, —
Տե՛ս, խոսում են հորդ ջրերը գոյության խոր ցավերից,
Եվ բերում են լուռ ափերին Աթամանթին նոր պատակ:
Ծովի հեռու անդունդներից, հավերժ անհայտ խորքերից
Դուրս են գալիս լեռների պես ծեր ու ճերմակ ալիքներ.
Նրանց հանդեպ Աթամանթի անբուժելի վերքերից
Դուրս են ցայտում հորդ արցունքի, խղճի անհայտ ալիքներ...

Այնքան նստեց Աթամանթը ժայռերի չոր ուսերին,
Այնքան խոսեց նա իր սիրտը, հլու մնացած հույսերին,

Որ վերջապես ինքն էլ մի օր դարձավ մի քար մարդաձև,
Որ նայում է ժայռի գլխից ծովի պայծառ լույսերին։
Անդ նայում է նա բարացած, գուցե մի օր խոր ծովից
Դուրս գա Ինոն և նրա հետ Մելիկերտը սրտագին...
Ու երգում են ալիքները կյանքի ցավը ու թախիծ,
— Տես, նստած է ժայռի ուսին Աթամանթի անմեկին։

4. ՀՐԱՇԱԿԵՐՏ ՄԱՆՅԱԿԸ

Ա.

Գիրքն է մարդուն գաղան դարձնում.— կիրքը վայրագ ու դաժան.
Նրա վառած հրդեհն է միշտ մեր սրտերից անբաժան:
Էթևոկլես և Պոլինիկ,— կորավ հայրը ձեր հզոր,
Ինչո՞ւ արդյոք կռիվ ծագեց ձեր մեջ դժնի, անարժան:
— Իշխանությո՞ւն, փառքի՞ պատիվ, պատիժ եք դուք այս հովանում:
Ժանտ իրավունք, դու ես հաճախ սիրտ նավերը վառում:
— Ձեր դավերով, ձեր սրերով եղբայրները հարազատ
Արյունահեղ կռվի ելան գոյության հին այս դավթում:

Էթևոկլես, դու բարձրացար ու բազմեցիր Էդիպ կայսեր մեծ դահին.
Եվ այդպիսով դու բաց արիր դուռը ահին և մահին:
Ելավ գնաց Պոլինիկը դեպի Արգոս լեռնապատ.
— Նա միտք ուներ զորք հավաքել իր եղբոր դեմ հարազատ:
Արգոսի մեջ նա համոզեց յոթը հսկա քաջերին —
— Դուրս գալ արագ նվաճելու Թեբե քաղաքն անհավատ:
Յոթ քաջերի գլուխն անցար Թշնամատեր դու Ադրաստ.
— Դու կարող ես, զորք սիրող ես, սրտով արի և զգաստ:
Հաղթությունը,— կասկած չկա,— քեզ կը մնա կռվի մեջ,
— Եթե բախտը դավաճանի,—նոր փորձի ես դու պատրաստ...
Եվ կանչում է Ադրաստը մեծ զորահավաք մի արի.
Արդ՝ գալիս են մեծն ու ավագ,— բոլոր քաջերը երկրի:

Զարթի գլուխն անցան ահա յոթ քաջերը, յոթ հոկա,
— Իսկ նրանց հետ Ամփիարը ինչու չեկավ և չկա...
Ամոթ չէ՞ քեզ, անվախ Ադրաստա, լավ մտածիր և ասա.
Ամփիարին, այդ արքային դուք չես արել դու փնտա,
Բոլորն եկան քեզ հետազանգ, բոլորն եկան քո կամքով,
Իսկ նա չկա... ամոթ չէ՞ սա... գործերդ տես, մի՛ անտա։

Ադրաստան այդպես կանչեց իր մոտ Ամփիարին վախեվախ.
«Ի՞նչ ես դու ինձ... մի դավաճան, թե թշնամի մի խարդախ...
Դու արքա ես, և վկա ես այս աշխարհի գործերին,
Չե՞ս ամաչում ստամածներից, թե՞ չի ծնել քեզ Ինտխն...
Դու քրոջն իմ, Էրիփելին,— քեզ կին առար աննման,
Որ ամեն տեղ իրեն փնտա, դու ինձ լինես օգնական։
Ես կանչեցի արշավանքի, դու դուրս չեկար քո տնից,
Իսկ Արդոսի բոլոր քաջերն ոտքի եկան ու եկան...

Տես, Ամփիար, քո աչքերից երևում է քո հոգին,
Ճի՞շտ է,— ունես արքայական դու դարդերը քո հոգին.
Բայց չես ուզում դու միանալ այս ձեռնարկին մեծագործ, —
— Թե այդպես է,— գատավոր կա, խղճի սուրը իր ձեռքին։
Տե՞ս, սխ չը կա իմ սրտի մեջ,— բայց կա սիրտ մի երդում.
Կա՝ մի պայման, որին հոժար պետք է լինես անժխտում. —
— Էրիփելը պիտ որոշի մեր մեջ ծագող վեճը միշտ, —
— Թող նա խոսի, նրա խոսքը կը կատարես անտրտում»...

Խե՞ղճ Ամփիար, դու ասն եկար, գնմբդ գունատ ու մռայլ.
Ո՞վ ներս խուժեց քո սրտի մեջ,— օձը թունոտ, թե՞ մի գայլ։
— Ինքդ դուշակ և մարգարե,— օրը գալիք լավ գիտես,
Անապակ ես, քննել գիտես ամեն մի գործ, ամեն քայլ...
Թե պարտք ունես դու քո վզին, շուտ վճարիր Անհասին։
Պայման ունես.— տե՞ս, ինչ կասի Էրիփելը քո մասին,
Դու լավ գիտես,— եթե գնաս արշավանքի, ետ չե՞ս գա, —
— Հանդիսատ նատիր և միտք արա քո խղճի հետ միասին։

Գատավորն է Էրիփելը,— ենթադավոր է նա անշուշտ,
Չէ՞ որ կեղտոտ գատավորը կյանքը կանի փայ ու փուշտ...

Պոլինիկը այդ լավ գիտի,— նա շնորհքն իր ցույց կտա —
Վատ մանողի՝ դատ անողի կրքերին չար և անկուշտ...
Ա՜խ, Պոլինիկ, քո ձեռքին կա խորհրդավոր մի միջոց.
Հափշտակել դու կարող ես Ամփիարին և կնոջն...
— Տեսեք, ահա գլխու ընկավ Պոլինիկը աչքաբաց
Եվ շտապեց մեծ արքունիքն Ամփիարի նա անկոչ:

Աստվածների ձեռքով հյուսված կար մարգարիտ մի մանյակ
— Նա փայլում էր աստղերի պես,— նա հրաշք էր, հմայակ,
Աստվածների կամքով հատած արքաներին թերական,
Պոլինիկի ձեռքն էր ընկել, նրա կամքին անտեղյակ...
— «Առ քեզ շքեղ և փառահեղ վզնոցը այս, Էրիֆիլ,
Օլիմպոսի աստվածներն են նրան շարել ու կապել.
Սա կախարդ է, անգին զարդ է, քեզ լույս կտա ամեն տեղ,
Թող հանդես գա Ամփիարը, ինչպես քաջի՜ն է վայել»...

Եվ արձակեց յուր վճիռը Էրիֆիլը, իբրև փորձ,
— «Ամփիարը արշավանքի պետք է գնա անխուսափ» —
Ա՜խ, վատ աշխարհ, տես վզնոցը ինչպես վարեց դժնի դործ,
— Պատրաստ եղիր խեղճ Ամփիար, սրտումդ մահ ու
սարսափ...
Օրը հասավ: Յոթ քաջերը ճամբա ելան զորքի հետ,
Պատրաստ էր և Ամփիարը. նա էլ կերթա առհավետ...
Ահա կանչեց նա իր որդուն, որ խոսք ասի խրատի,
Եվ հեռանա հանգիստ սրտով, թեկուզ լինի և ապետ...

— «Գույքն ու գանձը ես, Ալքմեոն, թողնում եմ քեզ, իմ
որդի.
Բայց դու երդվիր, որ կամքը իմ դու չես խախտի ամարդի.
Ես գնում եմ և լավ գիտեմ, որ էլ երբե՜ք ետ չեմ դա,
Վերջին օրս հեռու ճամբին մահը միայն կավարտի:
Բայց իմացի՜ր, իմ կորուստին մայրդ եղավ զուր պատճառ, —
Երկնքի դեմ, Զևսի առջև դու խոսք տուր ինձ անաչառ, —
Ուր որ լինես, իմ վրեժը պիտի առնես քո մորից»...
Որդին երդվեց այդ կատարել: Հայրը ընկավ ճանապարհ...

Եվ պացան յոթ քաջերը՝ իսկ նրանց հետ զորքը մեծ:
Զորքը շուտով տեղը հասավ, Թեբե քաղաք պաշարեց:
Կռի՞վ, կռի՞վ արյունահեղ:— Տես դժոխք է, ամեն տեղ,
Հեղեղի պես հորդ արյունից երկինքը իսկ կարմրեց:
Ինչպես հեղեղն է լեռներից արագ հոսում դեպի ցած,
Ինչպես ալեղն է գալարվում ոռնի վրա մոլորված,
Ինչպես պայթում է փոթորիկ ծովերի մեջ վիհադույն,—
— Այդպես ահեղ հարվածեցին յոթ քաջերը թշնամուն:

Երբ հեղեղի դեմը կանգնի մի այլ շղթա լեռների,
Նա չի կարող փակը հանել հավերժական դռների,
Անառիկ է Թեբե քաղաքն,— ունի անթիվ նա պաշտպան, —
— Հրաշքն ու զորք ձեռքերի մեջ իր ժողահա թռների:
Դուք չեք տեսել ծովի ափին ժայռերը դու անսասան,
Որ տալիս են կայծակներին արժանավոր պատասխան.
Դարեր ի վեր շանթ է տեղում նրանց վրա անխնա,
— Բայց կանգնած են մինչև հիմա ժայռերը այն անկործան:

Թեբե քաղքի պարիսպները թույլ լեզվի պես կակազ չեն,
Չէ՞ որ նրանք Երիքոնի պարիսպներից պակաս չեն:
— Հե՞յ, Արգոսի անհաղթ քաջեր, ո՞ւմն եք զարկում անվեհեր,
Չէ՞ որ Թեբեն քաջեր ունի, որոնք սրտով նվազ չեն:
Արհամարհանք նրանք կտան ձեր գրոհին և ահին.
Հայրենիքի պատերի տակ հեղնանք կտան և մահին:
Կան տոմվածներ և նրանց մեջ,— եռանդ ու սեր ներշնչող:
— Ով չի պատրաստ փառքի համար զոհեր բերել անմահին...

Մրրիկն այնքան չէ ահռելի, դժոխքն այնքան ահեղ չի.
Մահը այնքան չէ սոսկալի, կայծակն այնքան անշեղ չի,
Որքան ահեղ և դառնալի կռիվն անցավ այդ գործում,—
Զգո՞ւշ եղեք,— Թեբե քաղաքն ձեր գայրույթի տեղը չի:
Հաղար անգամ յոթ քաջերը գրոհ տվին հերոսի,
Հաղար անգամ Թեբե քաղաքն հարվածն առավ ծուղակին.
Կռվի մեջը մեկ մեկ ընկան հսկաները Արգոսի,
— Ցրիվ եկավ զորքը մի օր, փառքը մնաց քաղաքին:

Չէ՞ որ և դու վերադարձար սարսափի մեջ, Ամփիսար,
Ահը քո մեջ, մահը քո մեջ, դեմքդ դժգույն և նիհար։
Ի՞նչ պատահեց ճանապարհին, քեզ ի՞նչ ասաց բախտը քո,
Դու կանգնեցիր մի ժայռի մոտ, սիրտդ զարկեց վշտահար։
Արևն արդեն մայր էր մտնում,— սիրտը ցավեր էր ցանում, —
Տերևն արդեն վայր էր ընկնում, սիրտը հոգոց էր հանում,—
Ժայռը հանկարծ պատուռ եկավ, դու ներս ընկար նրա տակ...
— Մինչև հիմա ժայռի տակն է Ամփիսարը միտք անում...

Ա՜խ, երանի մեկը լիներ այնտեղ կանգնած քո վերև,
Որ քեզ ձայն տար, խեղճ Ամփիսար, հնչեր սիրտ քեզ բարև.
Երբ հողմերը լուր բերեին քո հայրենի աշխարհից,
Նա քեզ պատմեր,— ինչպե՞ս կորավ Էրիփելը անարև...
Քեզնից հետո շատ բան եղավ, ծովը հեքիաթ շատ խոսեց,
Հավերժության աղբյուրներից ցավ ու դեցրաթ շատ հոսեց.
Սերունդները եկան, անցան, Էրիփելը էլ չը կար,—
— Մարդկությունը կարոտներով քո մուրազը շատ լսեց...

Բ

Թեև անցան երազի պես տասը տարին այն օրից,
Ու բաղմացավ ավազի պես ցավը սրտում ու նորից,
Բայց Արգոսում չը մոռացան յոթը հզոր քաջերին,
Ասողները իսկ նրանց մասին խոսք խոսեցին եթերից։
Հավաքվեցին Արգոսի մեջ յոթ քաջերի զավակները,
Եվ նրանց հետ տղաների պես, մեծ մեծերի ավագները,
— «Ամոթ է մեզ երկնքի դեմ, ամոթ և մեծ նախատինք,
Թե մոռանանք մեր հայրերի սրտի բարձր նվագները...

Եթե չառնենք սուրբ վրեժը մեր քաջագործ հայրերի,
Չէ՞ որ երբեք ասավածները այդ մեղքը մեզ չեն ների.
Ոտքի ելեք մեծ Արգոսի առյուծասիրտ հերոսներ,
Այս մեծ գործը մեր սրտերին փառք ու պատիվ կբերի»։
Հավաքվեցին մեծ քաջերը և կազմեցին մեծ բանակ.
Եվ բոլորի սրտերի մեջ սերը խոսեց հանդգնակ.
Եվ կանչեցին նրանք դեսպան, գնա և տես գուշակին.
Ինչ կասի նա երկնապարզև այս քաջության մշակին...

Սպասեցին քաջերն այդպես։ Զանցավ նույնիսկ երկու, օր.
Դեսպանն եկավ և հարցակից խոսքը բերեց ինքնազոր.
— «Հաղթությունը ձեզ կմնա, ո՜վ Արգոսի մեծ քաջեր,
Եթե միայն Ալքմեոնը ձեզ առաջնորդ լինի նոր»։
Եվ թնդացին նոր երգերը Արգոսի բյուր բերանից,
Եվ խնդացին հին վերքերը սրտի բարձր խորանից.
— Ո՞ւր ես, հասիր, մեծ Ալքմեոն,— դարձիր զորքին առաջնորդ,
Քեզ ասողերը բարեսում են հավերժության վրանից»...
Եվ հավաքվեց ոգևորված բազմությունը նրա շուրջ, —
— Բազմությունը, որին անշափ այրում էր նոր մի անուրջ.
Եվ Ամփիլոքն և՛ Թեղանդերն,— Պոլինիկի մեծ որդին.
Եվ շատ շատեր,— ինչպես դիտերն,— որ հոսում են լայն ու լուրջ։
— «Դուրս եկ շտապով — մեկ պետք ես դու, նոր փառքի տեր Ալքմեոն
Չէ՞ որ քո մեջ գործում է դեռ ասավածային սուրբ կանոն.
Մեր պապերի հետն էր նաև քո խեղճ հայրը՝ Ամփիարն,—
Թե մոռանաս նրա դատը, քեզ ինչ կասի Ապոլլոն»...

Եվ դուրս եկավ բազմության դեմ Ալքմեոնը սրտացավ.
Նրա հոգու հորիզոնից մի խորտակիչ սուր անցավ...
Եվ նա հիշեց իր խեղճ հորը՝ Ամփիարին տարադիր,
Նրան մաշեց այն սև օրը, երբ նա տնից հեռացավ։
Ինչո՞ւ — այդպես, մեծ Ալքմեոն դառն է դեմքը քո ապրում,
Օ՞ձը շարժվեց քո սրտի մեջ, թե՞ քեզ փերեց մի ջադու...
Դու չես կարող բազմության հետ նոր քաջության որոնել,
Չէ՞ որ վերին ասավածներին պարտք պիտի տաս նաև դու...

Եվ արցունքով պատասխանեց Ալքմեոնը ամբոխին.
— «Հզոր քաջեր, ձեր գալուստը այս իմ աչքին ու գլխին.
Քաջ գործերից իմ փոխուստը ցավ կլինի և ամոթ.
Բայց վճիռս ես ձեզ կասեմ միայն էգուց առավոտ»...
Եվ շարժվեցին նրա սրտում օձը թունոտ և կարիճ.
Ո՞վ կարող է միշտ մարդ մնալ, բայց չլինել և դահիճ.
Կարո՞ղ ես դու ճանապարհն այս անցնել ազատ ու անմեղ.
Երբ վիրում են քո շորս կողմը ավեր, ցավեր և ճահիճ...

Հայրդ գնաց... այնուհետև անց է կացել տաս տարի.
Թե ոչ որդին, էլ ո՞վ պիտի նրա կամքը կատարի...
Հիշիր միայն, մեծ Ալքմեոն, ինչպես այնժամ երդվեցիր —
— Վրեժն առնել հանցավորից,— պահանջը սուրբ արդարի:
Իսկ ո՞վ է այդ հանցավորը. ո՞վ է մահվան մեղքի տերն.
Ա՜խ, քո մա՞յրը,— չար վգնո՞ցը. թե՞ վգնոցի անգութ սերն...
Եվ շարունակ տասը տարի տատանվում էր քո հոգին —
Եվ քեզ համար ժամանակը ելք էր փնտռում հուսաբեր:

Նորից հիշիր և լավ հիշիր, ով Ալքմեոն վիրավոր
— Զեսի տաճաչ դու երդվեցիր — վրեժն առնել քո խեղճ հոր.
Գուցե քո մեջ լույս է տեսել բարձր սիրո նոր օրենք,—
Նա է գուցե այդքան երկար կամքդ կապել անտվոր:
Եղեռնությո՞ւն, քեզ ով ծնեց երկրի վրա սրբապիղծ,
Գործիք ես դու երանության, թե չարության միայն իզձ...
Եվ կա՞ արդյոք այս լուսնի տակ մի գառնություն, մի չարիք,
Որի հիմքում կին չը լինի,— կինը մոլի և անխիղճ...

Վերջին օրն է, վերջին գիշերն — Ալքմեոնը լավ գիտի.
Ինչ որ չեղավ տասը տարի, այս գիշերը կը լինի...
Հարբածի պես վեր է կենում, մտն է գալիս վայրենի,
Տրփածի պես ճիգ է անում, որ ինքն իրան աղատի...
Ներս է գալիս իր աղջիկը՝ գեղեցիկ Դալմանտան,—
— «Ի՞նչ եղավ քեզ, հայրի՛կ, ասա,— ով պատճառեց քեզ վնաս.
Տե՛ս,— Արգոսը ծայրե ի ծայր կարծես կռիվ է շնչում.
Բայց պակաս չես դու ոչ սրից,— դու էլ կռիվ կդնաս...

Տե՛ս, վշշում են հորդ ջրերը միշտ 'ալեկարդ Ինախի,
Եվ խոսում են մեր պապերի վեհ ու վսեմ գործերից.
Մեր քաջերը գենք ու զրահով,— հագուստն հագած մեռածի —
Փառքի համար նա չեն մնա ասուածային փորձերից...
Թող մարերդ խաան ու շիտթ, մեծ քաջերը քեզ նախորդ.
Մեծ Արգոսի անպարտելի զորքին եկի՛ր առաջնորդ.
Քեզ է միայն երկնանվեր հաղթությունը վիճակված,

— Գնա շատով, եմ կդառնաս, ձախորդությանն
անհաղորդ»...
— «Ախ, չգիտես դու Դալմանաս,— իմ աննման միանուագար,
Ծանր է լուծը, որ դրել են ատամածները իմ վզին.
Դալման կապեց, երբ հեռացավ, իմ խեղճ հայրը
Ամփիարն, —
— «Առ իմ կամքը: Ուր որ գնաս, նախ մոտածիր իմ
մասին»...
Ինչպես պատմեմ քեզ իմ ցավը, դու իմ չքնաղ Դալմանաս.
Արյունալի իմ վերքերը միայն հետս կիմանաս...
Մեկը կարծես իմ սրտի մեջ սուր է, շարժում անողոք,
Մեկը կարծես իմ ետևից կարդում է ինձ խոր անաղ...

Գնա, աղջի՛կ, էրիփելին ասա, թող շուտ ինձ մոտ դա.
Իմ անելիքը ես գիտեմ, խիղճն է միայն ինձ վկա...
Զարմանքի մեջ, ախ ու վախով Դալմանասը դուրս գնաց:
Ժամանակը կանգ էր առել... Ինչո՞ւ ցավին վերջ չկա»...
Ալքմեոնը միայն էր անում, աչքը ձգած պատերին:
— Իմ հոր վրեժը ես կառնեմ, այդ է ուզածս միակ երդն,
Ուր որ գնամ, ինձ չեն օգնի—հարազատ, հյուսիս, արևելք...
Երդում, խոստում,— օրենք է այդ անմահներից
հաստատված,
— Երդմնազա՞նց,— քեզ չեն օգնի ոչ երկինքը և ոչ խելքն...

Ա՜խ, հարազատ մայր է նա ինձ, բայց իր դեմքին խոր
հանցանք,
Իսկությա՞ն ես դու, շա՞ր աշխարհ, թե՞ հիմարի
զառանցանք...
Շատով կգա և իր վզին վզնոցը այն մարգարիտ,
Որ տալիս է Ամփիարի տխուր ձայնին արձագանք...
Չեմ դանդաղի;— կամքն է միայն վերջին տերը այս
դարձում,—
Չէ՞ որ սրան ասաց տարի խնայել եմ շարունակ.
Ես կը զարկեմ,— իմ հարվածը, իբրև մեղքի հատուցում,
Թող ոճրագործ նրա սրտին կարդա վերջին հանդանակ...

Լո՞ւս կաց, սիրա իմ. հարկավոր է միայն հաջող մի հարված,
Եվ վայր կընկնի նա հատակին՝ արյունի մեջ թավալված։
Իսկ վնասո՞ցը... շատ վնասոցը ես կբոկեմ նրանից,
Որ միշտ մնա իրա հիշատակ, կրծքիս վրա նա կապված։

Տե՞ս,— թե ինչ է բեկ հարկավոր, որ հարդ արյուն դու
թափես.
Եվ ճեղքելով մարդ կուրծքը, քո ցավերը փարատես։
Բայց հարց է դեռ. կը փարատես դու այդպիսով քո ցավը,
Թե՞ նոր բանի շղթաներով քո խեղճ հոգին կը կապես...

Տե՞ս, այս ձեռքը պիտ բարձրանա իր մոր վրա համարձակ,
Իսկ եթե նա աղաղակի,—«Ինչ ես անում դու, որդի»...
— Ի՞նչ եք խառնել, ով ասավածներ, մեր սրտի մեջ ամեն
բան,
Չար ու բարին, սեր և վրեժ, բյուր կրքերի և ոհմակ»...
Երբ խոսում էր Ալքմեոնը այդքան հուզված ինքն իրան,
Քայլը լավեց, դուռը բացվեց, Էրիփելը ներս մտավ։
— Կանչե՞լ ես ինձ. ինչո՞վ կրտաս սրտիս սերը
խնդության,
Ես այստեղ եմ և կը լսեմ, ինչ որ կասես դու իրավ»։

— «Ո՞ւր է, ասա, վնասոցը այն, որ քեզ բերեց Պոլինիկն»...
— «Քո ի՞նչ գործն է այդ հարցը տալ, դո՛ւ, իմ որդի
անդրանիկ»...
— «Եթե մայրն ես, պետք է ասես,— ո՞ւր է մանյակն այն
շքեղ.
Պետք է ասես և բաց անես նրա գործը և գաղանիքն»...
«Սա սպառնալի՞ք է խելագար, թե՞ դավադիր միայն գործ,
Գուցե այստեղ դու միտք ունես կատարելու մահափորձ»...
— «Այո, կանգնիր և չը շարժվես,— կյանքը ունի
դատաստան
Եվ գործում է նա հենց այսպես, ինչպես վայրի՞ մի
գաղան»...
Եվ վայրենի գաղանի պես, սուրը ձեռքին ու գունատ
Նա հարձակվեց իր մոր վրա և հարվածեց անընդհատ։

Մայրը ընկավ։ Շուրջը շողաց սաթ արյունի մի լճակ,
Մայրասպանը կուրծքը ճեղքեց իր ծնողի դիմաստա.
Հետո արագ, խենթի նման կուրծքը նրա արձակեց
Եվ արյունոտ շար վզնոցը իր ձեռքերով նա պոկեց։
— «Մնա՞ս բարի... էլ չես լինի դու Արգոսում Հավիտյան»...
Մայրը նայեց արդու վրա և աչքերը միշտ փակեց։

Եվ ո՞ւմ իրոք, թաջ Ալքմեոն, ապանեցիր դու այդպես,—
Միայն նրա՞ն, Էրիֆիլին. թե՞ նրա հետ նաև քեզ.
Ինչպես պիտի պատասխանես կյանքի առաջ քո մասին։
— Զգույշ եղիր, որ նույն սուրը դու քո կրծքին չը զարկես...
— «Գնամ, գնամ, Ինձ դեմին պատմեմ գործը անողոք,
Թող լվանա այս արյունը ջուրը նրա դիմաստա.
Հետո անվերջ ասավածների սուրբ տաճարին՝ ծնկաչոք—
Սրտանց ու չերմ ես կաղերսեմ մեղքիս ներում և խաղաղ»...

Գ.

Եվ կատարեց արշավանքը, Ալքմեոնը առաջնորդ։
Մեծ Արգոսի մեծ թաջերը Թեբե քաղաքն հաղթեցին.
Պատկերին արժանացած, փառքերի մեջ անհաղթող
Հերոսները զորքերի հետ դեպ հայրենիք դիմեցին։
Միայն այդպես դու զգացիր, թաջ Ալքմեոն ինքնարժան,
Ինչ ասել է երկրի վրա շար և դաժան մայրասպան։
— Միայն այդպես, լեռների մեջ,— հեռու օտար ճամբերին
Էրիններն հետևեցին քեզ անողոք, անբաժան...

Թուրը, թուրը քո մայրասպան կախված էր դեռ քո կողքին,
Էրիֆիլը սավերի պես չէր հեռանում քո աչքից...
Խրոնճն էր կապել էրիններն իմբերը խենթ ու խավար,
Քեզ քշելու դուրս են գալիս նրանք ցավոտ քո կրծքից...
Չէիր կարող դու դեռ ձգել թուրը անմիտ, արյունոտ,
— Նա՝ ոսկեզօծ պատյան ունի, ադամանդից սիրուն կոթ.
Եվ քո կրծքին կախված է դեռ վզնոցը այն մարդարիտ,
Դու շրջում ես խենթի նման լեռների մեջ անծանոթ...

Էրինները, Էրինները, շարքերի պես ու խստիվ
Հալածում են քեզ անդադար, պահանջում են նոր պատիվ.
Տե՞ս, գալիս են Էրինները քո հետևից շարունակ —
— Թե կարող ես, դարձիր, նրանց պատասխան տուր և
հաշիվ...

Եվ գնում է հոգմերի մեջ նա գազազած ու երկմիտ.
Ա՜խ, անծանոթ կոգմերի մեջ հասնում է նա Ֆանիգ.
Ասա նրան, Արկադական ծաղկափթիթ շեն աշխարհ,
Կարող ես դու հյուր ընդունել, գութը վառել ճշմարիտ...

Ես չգիտեմ Արկադիայի բարը ու վարքը, կարգը կիրթ.
Բայց Պեդևոսն քեզ ընդունեց իբրև արքա լայնասիրտ.
Իր տաճարը նա քեզ տարավ աղոթելու ծնկաչոք,
Դու պատմեցիր աստվածներին մեղքերը քո բարդ ու բիրտ:
Այգաղեղ, կարծես, անմոհներր ներում տվին քեզ խոպառ,
Իսկ Պեդևոսն իր հարկի տակ քեզ խնայեց գիշերատար.
Նրա դուստրը Ալֆիսերը—միշտ խանդավառ ու պայծառ
Հավատարիմ ու սիրաշատ քեզ կին դարձավ անարատ...

Դու սիրեցիր Ալֆիսերին, ինչպես սիրո — նոր բարև,
Եվ կախեցիր նրա կրծքին վզնոցը այն ինքնաձև.
Զքնաղ ու հեզ Ալֆիսերը վառվռուն է լույսի պես,
Նրազում է նա խնդությունն, և սեր ու բախտ հարատև...
Բայց կարո՞ղ էր բախտը երկար ժպիտներով շոյել ձեզ.
կամ կարո՞ղ էր խնդության մեջ խիղճը հանդիստ
նայել ձեզ,—
— Ո՞վ կարող է տպրել խաղաղ, եթե թույն կա սրտի մեջ,
Ա՜խ, մեղքի մեջ խիղճը երբեք ազատություն չի տա մեզ...

Ալֆիսերը նայում է քեզ, ինչպես արտը ամբուլին,
Ալֆիսերը շոյում է քեզ, ինչպես վարդը բլբուլին,—
— Սերը չէ՞ որ և՛ կրակ է, և երակ է ճշմարտի,
Ի՞նչ կարող ես պատասխանել նրա քաղցր համբույրին...
Դու երկմիտ ես, դու ներհակ ես. կռվի մեջ է քո հոգին,
Սուր փշեր կան, դուր հուշեր կան քո սրտումը դառնագին:
Ալֆիսերը սիրող սրտով քեզ նվիրեց նոր զավակ,
Եվ ուզում է տեղյակ լինել քո ցավերին, քո վերքին...

Ճակատագի՛ր, եթե իրավ մեր օրերում դու չը կաս,
Դու չկայիր նաև այն օր, երբ ապրում էր Ալքմեոնն...
Միայն վանա արբուքյունն է մեր սրտերին միշտ պակաս,
Նա է գնում միշտ մեր առջև անժխտելի և կանոն։
Կյանքի համբան չէ մախմուրից և ոչ պայծառ խճուղի.
Քայլում ենք մենք հաճախ մոլի և հաճախ իսկ զարտուղի,
Իսկ մեր հոգին դրա համար տենչում է դատ ու վրեժ,
— Այդ ենք հաճախ «ճակատագիր» մենք անվանում
անտեղի...

Ես չգիտեմ, ի՞նչ էր ուզում բախտից նրա ընտանիքն,—
Քանի տարի այդպես ապրեց Ալքմեոնը երջանիկ...
Օրը հասավ,— նա այդտեղից պիտ հեռանար անխուսափ,
— Վճիռն էր այդ աստվածների, վրան տեղ մի կնիք...
Խեղճ Փսեվիդ, ո՞վ խանդարեց կենցաղը քո հաստատակ.
Քեզ էլ հասավ փորձանքը սև, սովն ու ավեր և ճարակ,—
Որոնք հանկարծ տարածվեցին քո երկրի մեջ անարդել...
Ի՞նչ ես արել,— ինչո՞ւ է քեզ բախտը այդպես հակառակ...

Երկիրը ողջ ապեսի մեջ,—ցավն ու մահը վիսացին
Եվ գուշակին շատ շատերը խեղճ ու կրակ դիմեցին...
Գուշակն ասաց.— «Սովն ու ճարակ չեն հեռանա այս երկրից,
Քանի այստեղ կյանք է վարում մայրասպանը տակավին»։
Լավ լսեցի՞ր, խեղճ Ալքմեոն, խոսքերը խիստ գուշակի.
Տե՛ս, բոլորը քեզ են նայում. դո՞ւ ես միթե դավադիր,—
Գուցե քեզնից տուրք են ուզում օրհասական թոշակի,—
Կարո՞ղ ես դու չար ամբոխի կամքին լինել դիմադիր...

Դու չես կարող դիմադրել. հնարք ու դեղ էլ չկա,
Ով կարող է դիմադրել երկրաշարժին ահռելի.
Անգութ խիղճը քեզ չի թողել նոր բաղձանքի առարկա,
Կյանքը նույնիսկ այս լուսնի տակ քեզ թվում է տանելի։
Եվ վեր կացավ մի մութ գիշեր Ալքմեոնը ու թռավ,
Երազի պես ու անխնա գլուխն առավ ու կորավ...
Դուք, Պեկևոս և Ալկիմեոնը էլ չիմացաք գործը այդ.—
— Քամի՞ էր այդ, թե՞ մի հրաշք նրան բռնեց ու տարավ...

Եվ աննշմար Ալքմեոնը՝ խղճի առջև դողդոջուն,
Ինչպես ձայնի հետևն կորչող վերջի՛ն, վերջին մի հնչյուն,
Ինչպես տերևն է թոշկոտում հողմի առաջ ցավագար՝
Անցավ ահա սար ու հովիտ, որ սրոնի մի ողջույն...
Ալքմեոնը անցավ, հասավ Ապոլլոնի տաճարին,
Որ սրտալի աղերս անի աստվածային հանճարին...
Մեղքերի մեջ, խաղքերի մեջ լի արցունքով, ծնկաչոք—
Ազեկաուր նա աղերսեց նոր թողություն անճարին:
Եվ տաճարում հանկարծ թնդաց մահագուշակ մի խոր ձայն.
— «Գնա անվերջ և թափառիր երկրի վրա լերկ ու լայն.
Եթե գտնես դու մի անկյուն, որ չիմանա,— ո՞վ ես դու,
Նոր քո բախտը հանգստություն այնտեղ կտա քեզ միայն»:
Եվ, հանդիսաբ աշխարհի մեջ,— բայց սրտից դուրս
կարծելով—
Նա թափառեց երկրե երկիր, անտուն, անտեր ու երկար.
Ա՜խ, նա գնաց, իր հնարքը երկնքի տակ փորձելով,
Որ վերջը գա քեզ գտնելու, ով հզոր դեռ Աքելով...

Ինչո՞ւ, արդյոք հորդ Աքելով, ընդունեցիր դու նրան.
Դու աստված ես, վարար դեռ ես, թե մեղքերի քավարան...
Կարո՞ղ ես դու նրա սրտին ներշնչել նոր մի հանդիստ,
Մինթե՞ գիտեն քո ջրերը՝ ի՞նչ է սիրտ և խորան...
Ա՜խ, դու այստեղ, ուր բացքերան ներս ես թափվում
ծովի մեջ,
Կղզի ունես մի Ալերեր, ինչպես բերդը նավի մեջ.
Եթե կուզես, դու ընդունել նրան այնտեղ իբրև հյուր,
Լավ իմացիր,— կը կեռծանվի նա իր հոգու սովի մեջ...

Տե՜ս, աշխարհը արդեն գիտի այդ մայրասպան գործը վատ,
Իսկ նրա դեմ ծովն ու ցամաք բողոքում են անհասին,
Ո՞վ կարող է հանցագործին խնամք անել ու հավատ,
Ինչպե՞ս է, որ դու չես լսել և չգիտես այդ մասին...
Տե՜ս, հոսում են քո ջրերը միշտ անապակ ու անտիլ—
Եվ խոսում են սիրտ երդը անմահության բերանով...
Ի՞նչ ես կարծում.— հարկավոր է թույնի միայն մի կաթիլ,
Որ վարակվեն քո ջրերը և ծովը իսկ նրանով...

Բայց չնայեց Աբելովը բնության խոր սրտունջին—
Ականջ չարեց նա հոգմերի, բյուր կոգմերի, մրմունջին.
Նրան իր մոտ նա ընդունեց իբրև փեսա, իբրև հյուր,
Եվ տեղ տվեց կղզու վրա հանցավորի անուրջին...
Կղզու վրա Ալքմեոնը ապրեց երկար ու անբավ.
Նրան սիրեց Աբելովի մեծ աղջիկը՝ Կալլիրավ—
Եվ մեծ գեսի բերանի մեջ, կղզու վրա մեկուսի—
Մեծ հարսանիք կատարեցին,— Հիմքը թեպետ անիրավ...

Ինչպես ես այժմ, մեծ Ալքմեոն, երջանիկ ես քեզ զգում.
Ինչպես է քեզ Կալլիրավը նայում, շոյում ու գրկում...
Նոր կղզի ես դու քեզ գտել, նոր թուխսի ես դու նստել,
Տես, ինչպես է քո կրծքի տակ սիրտդ խոկում ու զարկում...
Թուրը նորից կախած ունես դու քո կողքին, անտարանոց,
Հա չի՞ լեցրել նոր պատուղով Կալլիրավը իր արգանդն.
Եթե բախտը նորից գարկի իր դաշույնը քո վզին,
Քեզ փորձանքից էլ չի փրկի այդ նոր կղզին, իբրև բանտ...

Բազմապատիկ անցան օրեր, սեր երգեցին և ջրերն,
Ալքմեոնին Կալլիրավը բաշխեց սիրուն զավակներ:
Ինչպես լույս է կյանքը գարնան,— բարձր հույս է
Աբարնան,
Եվ դու, և դու, նոր ծաղիկ ես սիրո խաթեր Ամփոթեր...
Եվ հայր ու մայր,— երկու զավակ՝ մեծ ծովի մեջ մի
նավակ,
— Զախորդությո՞ւն, թե՞ խնդություն,— սրն է այստեղ միշտ
ավագն...
Եվ անցկացավ կղզու վրա ժամանակը ծանրաքայլ,
Բախտը նորից այցի եկավ, ասես մի ցոփ հարկհավաք...

—«Ես չեմ կարող, ես չեմ կարող քեզ հավատալ, Ալքմեոն.
Ես քո կինն եմ,— Կալլիրավը, դու վարվում ես անկանոն,—
Ստ՞ատ է, ստ՞ատ է քո երդումը,— դու կին ունիս մի այլ տեղ,
Նրա կրծքին կախել ես դու մի վառ վզնոց, իբրև ձոն...
Ես չեմ կարող քեզ նվիրել իմ սիրտը այս խանդավառ,
Քանի դեռ կա երկնքի տակ այլ սիրուհի քեզ համար...

Եթե ճիշտ են քո խոսքերը, և սիրում ես դու անկեղծ,
Գնա շտապով և ինձ համար վզնոցը բեր սիրաշար»...

Սեղմ Ալբմեն, խոր ջրի մեջ լուցկի վառել չես կարող.
Հարյուրամյա կաղնին ծռել, դիմադրել չես կարող.
Բախտի փեշը այդպես բռնած, շոր գլուխդ ուր դնես,
Կալլիրոյի աչքի առաջ սիրող փռել չես կարող...
Մարդու համար կա՞ ավելի մի պատուհաս, քան կինը.
Ի՞նչ կարող է նրա նման հաճախ փոխել իր գինը...
Եղիր նրան հավատարիմ, հարթիր սիրո և ճամբեն,
Ինչ որ կուզես, արա նրան,—նա չի մոռնա իր քենը...

Կարո՞ղ ես դու, խեղճ Ալբմեն, նրա կամքը հանդուրժել.
Պատրաստ է նա քո գոյության հիմքը քանդել բնավին:
Եվ քանի դեռ քո էության իրավունքը չի մերժել—
Շատ հեռացիր.—քանի քո մեջ սիրտը դեռ կա տակավին:—
Բախտը նորից իր ձեռքերով բռնել է պիրկ քո յախից.
Կուզես գնա, կուզես մնա,— նա պիտի գա քո հախից:
— Ախ, զոհությունն ահ ուզիներ,— կրկին, կրկին դեպի ձեզ—
Քանի վերքը չի լափացել իր գազրելի թարախից...

Քեզ դեռ ոչ ոք չի բանտարկել, բայց բանտ է միշտ քո հոգին.
Քեզ դեռ ոչ ոք չի շղթայել, բայց խիստ ես դու շղթայված.
Շուրջդ մրրիկ չկա բնավ,— շանթ է նետվում քո կրծքին,
Վեր կաց գնա, քանի գլխիդ չի ծանրացել դեռ հարվածն:
Եվ նա գնաց: Սարեր, ձորեր,— լեղու չունեք, որ խոսեք.
Ճանապարհին թափված քարեր,— ինչ եք լռում իրազեկ.
Նորից ահա շրջմոլիկը ձեր խնամքին նվիրվեց,—
— Խեղճ Ալփիսեր.— տես, դեպի քեզ գալիս է նա ահաբեկ...

— «Գնամ շտապով և վզնոցը Ալփիսերից նա վերցնեմ...
Ալփիսերից... ինչպես, ավա՞ղ, նրա սիրտը ես կորցնեմ.
Չէ՞ որ նա է իմ գոյության վերջին լարը սրբաձայն,
Թեկուզ հասնեմ նրա տեսքին,— ես ինչ ասեմ ու հարցնեմ...

Կատ. վզնոցը նրա վզին ես եմ կախել իմ ձեռքով,
Միրտ բոցը նրա սրտում ես եմ վառել իմ երդով.
Ինչպե՞ս, ցարար, ես ետ առնեմ պարգևս սուրբ նրանից»...
Ալքմեոնն էր այդպես խորհում, սիրտը լեցված խոր
վերքով...

Եվ հերոսը եկավ Հասավ, Ալփիսերին նա տեսավ,
Բայց չլսեց նրա բերանից ոչ կշտամբանք, ոչ պարսավ։
Ալփիսերը և Պեդևոսն ողջունեցին նոր հյուրին,
Բաղցր ու սրտանց ընդունեցին, իբրև սիրտ նոր դրախտ։
— «Ուր էիր դու, ա՛յ անաշեն.— այսքան տարի ո՞ւր
կորար,—
— Օր և գիշեր դառնության մեջ լալիս էի քեզ համար...
Տես արցունքից արցունքալի աչքիս լույսը սևացավ,
Աչքս ճամբին, բայց չտեսա քեզանից ուրախ մի համբավ»...
— «Ախ, իմ պայծառ դու Ալփիսեր,— շրջում եմ ես այն
օրից,
Էրինները, շարքերի պես, հալածում են ինձ նորից.
Աշխարհն անցա ես տարագիր, բայց ինձ հանգիստ չդատա,
Դժբախտ եմ ես և երերուն, ծնված դաժան իմ մորից...
Եվ տե՞ս, հիմա աղատության կա մեկ միայն ճանապարհ.—
Վզնոցը այն պիտի տանեմ Ապոլլոնի սուրբ տաճարն—
Գուշակն ասաց.— պիտի ձոնեմ աստվածներին իբրև տուրք,
Որ ինձանից միշտ հեռանան էրինները չարաշար»։
— «Ես քեզ համար չեմ խնայի կյանքս անգամ, Ալքմեոն,—
Առ վզնոցը, տար տաճարին, թող ընդունի Ապոլլոն,
Ինձ սեր է պետք, սիրտ համբույր և ոչ վզնոցը այդ սին,
Տուր տաճարին, թող նա լինի քո փրկության նոր կանոն...
Եվ դուրս եկավ Ալքմեոնը, չար վզնոցը իր ձեռքին...
Ախ, դու անմիտ, սուտը կրկին թունավորեց քո հոգին...
Բայց լավ նայիր դու քո շուրջը. դատաստան կա ամեն տեղ.
— Թուրը, թուրը քո մայրատան դեռ կախված է քո
կողքին...

— Խաբեց, խաբեց նա ննջարար ձեզ, Պեդևոս, Ալփիսեր
Կայլիրոեին նա կը տանի ձեզանից կորցած այդ պարգևն։

Եվ Պեգասն այդ իմացավ։ Ո՞վ էր հայտնել այդ նրան
Ճշմարտախոս օտար մարդի՞կ, թե՞, Ալքմեոն, քո ծառան։
— «Հասեք, որդիք,— բացականչեց Պեգասը զայրացած,
Նա, իմ փեսան, որբապղծեց իմ օջախը դարավոր,—
Հավա՞ր, հասե՞ք, շուտով բռնեք հանցագործին անիծված,
Մեր պատիվը թող որոշի սուրը միայն փառավոր»...

Դարան մտած սպասում են Պեգասի քաջ որդիք,
Որ գա, անցնի, ճանապարհով դաղն իր որսով անդրանիկ.
Նենգավորը նենգության մեջ կը խորտակվի անխուսափ.
Եվ վայել է նրան միայն մահը դաժան ու սարսափ...
Տես, անցնում է Ալքմեոնը արա՞գ, արա՞գ քայլերով.
Ո՞ւր ես վազում. քեզ բշո՞ղ կա սհմանների գայլերով...
Կանգնի՞ր հերոս։ Ինչո՞ւ այդպես սիրթնած է քո դեմքը.
Եղջի սուրը դու չես տեսել հավերժական փայլերով...

Պեգասի հզոր որդիք դուրս վազեցին դարանից,
Ինչպես շանթը դուրս է թռչում որսանների բերանից...
Ալքմեոնին անակնկալ նրանք իսկույն բռնեցին,
Եվ նետելով նրան գետին, շորթեցին թուրն իրանից...
— Թուրը, թուրը,— որը մի օր կուրծքը պատռեց քո խեղճ մոր,
Լավ դիմացիր,— նա կպատռի հիմա կուրծքը քո անզոր...
Պեգասի վայրագ որդիք նրան այնպես մորթեցին,
Ինչպես մորթում են հավերին այս լուսնի տակ հանցավոր.

— Ո՞ւր ես, հասիր, խեղճ Ալփիսեբ. քո սիրելին էլ չկա,
Ընկած է նա արյունի մեջ՝ վրեժների առարկա...
Տեսե՞ք, եկավ Ալփիսեբը, ողբերգության տեղն հասավ,
Ա՜խ, Ալքմեոն, քո արյունին նա էլ եղավ խեղճ վկա,
Էլ չգիտեմ,— ինչպե՞ս անցավ այնուհետև գործը չար,
Բայց լսել եմ.— Ալփիսեբը իր վշտերից խելագար —
Եղբայրներին նույն այդ գիշեր այդ նույն սրով կոտորեց,
Իսկ վզնոցը նա տարավ Ապոլլոնի սուրբ տաճարն...

5. ՏԵՉԵՎԱ

ՏԵՉՎԱՆ ՈՒ ԱՐԻԱԴՆԵՐ

Տեղիս հղար։ Ամավածագոր բաշարիյան թե ու թիկունք,
Սիրս արեն, որոնք բարեն միշտ անելու բեզ ուսմունք...
Երազի մեջ, մուրազի մեջ ցնորամիտ ազգերի
Դու էլ եկար, դու էլ անցար, ինչպես բախտի մի բերմունք...
Ժամանակը անծայրածիր եթե լիներ մի երկինք—
Նա իր պայծառ կամարներում քեզ փառավոր տեղ կը տար.
Թե տիեզերքը ունի իր մեջ հավերժական նախատինք—
Նրան միայն քո անունը կենդանարար գեղ կը տար...

Երեսս կդդին մեծ Մինոսի աշխարհակալ ձեռքի տակ—
Իսկ թագուհին՝ Պասիֆոնի ներշնչումով խայտառակ՝
Էլ կրքերով՝ սիրահարված ցուլ եզան հետ վայելեն՝
Մի ջանավա՞ր, մի մարդաեզ արդի ծնեց այլանդակ։
Եվ արձակեց Մինոսն հայնժամ մի սհավոր հրաման.
— «Նոր շենք շինել մեր այլանդակ այդ ժառանգին օթևան»...
Եվ Դեդալոս ճարտարապետն կանգնեց անեղծ լաբիրինթ՝
Իսկ նրա մեջ մարդաեզը փակվեց,— հրաշքն իր նման...

Մինոսն եկավ արշավանքով և Աթենքը նվաճեց,
Իբրև հաղթող հարկ որոշեց,— սահման քաջաց զենք իրենց։
— Աթենացիք պետք է տային՝ ինը տարին մի անգամ
Ինը աղջիկ, ինը տղա կազմ ու կարող հաղթանդամ...
Ինը տղա, ինը աղջիկ միշտ նավելի թագոր ու հեզ
Ստանում էր ամեն անգամ հրեշը այն մարդաեզ։

Տեղե՞ս, իրոք այս գործը շար քո աչքերով դու տեսար,
— Օրը եկավ, դաժան տարրի հերթը հասավ նաև քեզ...

Բայց դու, Տեղես, կապված էիր անբակտելի կապերով,
Բարձրության հետ, սրբության հետ քո Հայրենի քաղաքի.
Մեծ ազգը քո սիրում էիր դու երկնային շափերով,
Ինչպես այսպես սիրել դիտի միայն սերը սոխակի:
Եվ դուրս եկար դու բաջի պես ճշմարտության ջատագով.
Սերն էր միայն, սերը վերին ազատության կրակով.
Թեոդորում քեզ բաջարի դեպի արև ու երկինք,
Որ խորտակես շար վիշապին ատամածայուտ խնամքով...

Բախտին տրված ջահելների՝ խեղճերի հետ միասին
Նավի վրա դու սպասար դեպի Կրետա,— այն կղզին,—
Ուր դյուցազան միջոցներով, դեռ շլված հնարքով—
Տաղալեցիր Մարդաեղին, որ ծագը էր քո նամուսին...
Հաղթանակի պատկերներից փառքդ ատար, եռ եկար,
Որ խնդության ծաղիկներից կազմես սիրո նոր նկար.
— Բայց կորած էր քո սիրելին բախտի անմիտ
թակարդում,—
Դու եռ եկար սիրո համար, բայց նա, ավաղ, էլ չկար...

* * *

Տեղես, ահա քաջամարտից եռ ես դառնում դեպի տուն,
Մարդանը դու հաղթեցիր, ազգիդ գտար փրկություն.
Ինչպես, ասա, լաբիրինթից կարողացար դու դուրս գալ,
— Քո հանճարն էր քեզ ոգնողը, թե՞ մի հրաշք զվարթուն:
Հիշում ես դու Աբիագնին, որ գտարիկն էր Մինոսի.
Ինչպե՞ս եղավ կովի հարցում քո պայմանը նրա հետ.
— Նրան քեզ հետ հո չե՞ս կապել խոստումներով էրոսի,
Հաղթանակը ննդության մեջ ցավ է միայն և ազատ...
Տե՞ս, քո նավը սլանում է դեպ հայրենի իր ափունք,
Զգույշ եղիր, հաղթանակը քեզ կբերի շատ արցունք:
Մի խարդախիր. ճշմարտության կա անողոք դատաստան—
Նա քննում է և՛ գործը քո, և՛ իսկ բախտի արարմունքն:

Եվ Տեղևար հանկարծ ընկավ մարերի խոր ծովի մեջ.
Ի՞նչ կարող է քաջը անել արդարության սովի մեջ.
Կյանքն է այդպես անօրինած,— արարն իշխում է օրենքն,
Մերթ հանցանքը մեզ այրում է իր կրակի բովի մեջ։

Եվ սահում է նավը առաջ, որ ասեն ասանի նոր խուրանք,
Ալիքներն են նրա շուրջը կապել փայլուն մի գոտինդ.
Հողմը հնչում է մեղմաբար, ծովը տալիս է հոբձանք,—
— Շարժուն ջրեր, հաղթության դեմ ի՞նչ եք երգում դուք
անմիտ։
Ծովը սահ շարժեց հակա իր հագուստը խշշիշան,
Իսկ փրփուրը, ասես կաճուկ, ծածկեց նրան պարզերես.
Հորդ ջրերի խնճույքի մեջ բախտը կապեց նոր նշան,
— Կայթե՞ք ալիք պարահանդես, սերն է ձեզ նոր
սապարեզ...

Նավի ներքև, ծովի վրա պայծառ և նոր հագուստով,—
Տե՞ս, կապել են ալիքները խորախորհուրդ մի կայթիք.
Նավի վրա Տեղևի մեջ—նրա բախտի փոխուստով
Սև մարերը շարաբաստիկ բռնել են խոր մի պայթիք...
Ծովը ներքև երկրի վրա,— ծովը վերև մարդու մեջ,—
Հովն է փչում ծովի վրա,—սովն է հնչում սրտի մեջ.
— Ալեկոծում ջրերի մեջ,— կոիվ հաշիվը հոգու,
— Մեկ չեն արդյոք այդ երկուսը գոյության խոր բերդի մեջ...

Երբ սահում էր նավը առաջ, առագաստը բաց արած,
Միտք էր անում խեղճ Տեղևը ցավերի մեջ խորասույզ.
— Մեծ մարդ եմ ես՝ հաշակի տեր, թե՞ մի սոսր արարած,
Որ վարվեցի այդքան անգութ իմ բախտի հետ նորաբույս...
Ոչ գաղանը, ոչ Խարբարոսն, ոչ իսկ վայրի ավազակն,
Երբե՞ք, երբե՞ք երախտի տեղ այդպես վարվել չէր կարող.
Ա՞խ, ես մարդ չեմ, թող կուրծքը իմ սուրը պատռի, կամ
նիզակ.
Թող իմ գլխին կրակ թափվի,— նեռվեմ հանդես՝
կարգաթող...

Ա՜խ, թե իրոք Արիադնը կղզու վրա չը լիներ,
Մարդաբեղը լաբիրինթում կարո՞ղ էի ես հաղթել.
Կամ եթե նա Թալիսմանը իմ ձեռքի մեջ չդներ,
Հեղալոսի ամբուխյունից կարող էի ես գաղթել...
Արիադնը ինձ հավատաց դյութիչ թելի մի կծիկ,
Լաբիրինթում թելը դարձավ ինձ փրկարար ուղեցույց,
Առանց նրան զուր կկորչեր իմ հաշվածը հեռաձիգ,
Եվ կդառնար լաբիրինթը ինձ կորուստի մի հանդույց...

Եվ փոխարեն, ավա՜ղ, ինչպես ես վարվեցի նրա հետ.
Նրան ես սեր. փառքերով լի տարբ խնդություն խոստացա,
Ցրտանց նրան ես երդվեցի,— չմոռանալ առհավետ,—
— Նրա առջև շահիս համար սիրտը կեղծող ես դարձա...
Ախ, անմեղ կույս. բարձր կյանքի երազներով կախարդված,
Հավատացիր դու վաճառու իմ նենգ ու ցոփ խոստումին.
Իսկ ես, ավա՜ղ, քո նվիրած հաղթանակով մոլորված,
Քեզ խաբեցի և թքեցի իմ սրբության երդումին...

Երբ մեկնումի ժամը հասավ, քեզ հետ միասեղ, անձկալի,
Նավը նստած մենք հեռացանք Կրետա կղզու ափերից.
Իմ գրկի մեջ քեզ պատեցին տանջանքները բազմալի, —
Իսկ ես փրկել ինձ կամեցա սիրույդ այդ նոր կապերից...
Նավը սահեց դեպի հեռուն, սիրտը քաշեց խոր ափսոս,
Նավը հասավ Նաքսոս կղզին միշտ ամայի և ապատ.
— Լավ չէ՞ր լինի, որ երկիրը քեզ չծներ, ով Նաքսոս,
Որ Տեզևսը սա չդներ քո ափերին շարարմատ...

Նավը կանգնեց ժայռերի մոտ, ափը իջան նավատիրք,
Մութ գիշեր էր, իսկ լուսինը դեռ չէր զարթնել իր քնից.
Մովը ուժգին մռնչում էր, սուլում էր հողմը սաստիկ,
— Գաղտնի իսկ սհաթեկված դուրս չէր գալիս իր բնից:
Մեզ ապաստան այրը եղավ—խոր քթի տակ մեծ լերան.
Ձեռքը բռնած Արիադնի—այրը մտա ես անվախ,
Բախտի բերմամբ այրը դարձավ սիրո քաղցր ննջարան,
Որ գգվանքի գնով այդպես դարձ կատարվի մի խարդախ...

Երբ մրրիկն էր կործանարար տարտարի ցանում վիթխարի,
Եվ խիստ բռնած հարյուրամյա կաղնիների կոկորդից,
Վայր էր նետում նրանց—խորթում հազարամյա անտառի.
Իսկ շանթերը կորզում էին կյանքը ծովի ալարից,—
Արիադնը իր գրկի մեջ գուրգուրում էր ինձ սիրով.
Նա այդ պահին— այրված սիրտ համբույրների կրակից,
Հարց էր տալիս,— «զղջում ես դու հրաշքը այս և կորամն
Որ բխում է տատվածատուր մրրիկների երակից...

Ա՛խ, այս հզոր մրրիկների դայրույթը տես, սիրելիան,
Նարի՛ց երկվիր, որ ինձ երբեք չես մոռանա լուսնի տակ.
Իսկ եթե ոչ,— անմահները փոթորկի պես հազթական,
Թող քո գլխին մեկրիկ համար թափեն շանթեր ու կրակ»...
Իսկ ես, ավա՜ղ, Արիադնին իմ շար կրծքին սեղմելիս,
Իրրև սիրտ սուրբ պատասխան, կրկնում էի նենգաբար.
— «Դո՜ւ ես միայն այս գոյությյան սերն ու արև ինձ տալիս,
Ուր որ գնամ, ես քանն եմ միշտ, ես ծնված եմ քեզ համար»...

— Երբ իմ լեզուն այդպես սիրտ խոսքն էր խոսում այդ գիշեր,
Իմ կրծքի տակ ծանն էր սողում, խայթը լեցված խոր թույնով,
Գիշերն անցավ գգվանքի մեջ, սիրտը շոյեց հին հուշեր,
Եվ դրկախառն Արիադնը քնեց հանգիստ մի քնով...
Առավոտյան, երբ մրրիկը վերացել էր ու չը կար,
Երբ վաղորդյան հովն էր շաղում ծովի պայծառ երեսին,
Արշալույսը ժպտաց հեռվից, ինչպես սիրտ կամակար.
Ես վեր կացա, որ գործ անեմ իրրև սիրող ամուսին...

— Նավը վազուց ծովի ափին ինձ սպասում էր պատրաստ.
Իսկ ուղեկից հոգին սիրով ծածանում էր առագաստն...
Ես նայեցի Արիադնին. քնած էր նա խորախոր,
Բայց գավազիր տերը նրա գործի մեջ էր և զգաստ...
— «Արժի՞ արդյոք, որ ես սրան հետս տանեմ, իրրև քեռ»...
Ձայնը իմ մեջ այդպես խոսեց, կիրքը նրան գուգահեռ.

Եվ ես, ավա՜ղ, կատարեցի իմ արարքը դավաճան,—
Ա՜խ, թողնելով նրան բնած, ես հեռացա անհամբեր...

— Նավը սահեց և հեռացավ. ալիքները նրա շուրջ —
Մի անսովոր երգ հնչեցին, ալմուկի մեջ կայթելով.
— Ո՞վ է պակաս ձեր շարքերից, նայեք ապա աշխարհ,
Մեկը մնաց ժայռերի մեջ՝ բախտից մուրաղ հայցելով...
Մենք հեռացանք, նավը հանձնած ալիքների քայլերին.
Արիադնը մնաց այնտեղ... դրա՞ն էր նա արժանի...
— Միշտ ամայի կղզու վրա՝ միայն բաժին դայլերին...
Երբ արթնանա, ի՞նչ պիտ ասի իմ արարքին վայրենի...

Երբ հեռացող մթնաշաղը տա արևին ճանապարհ,
Երբ ծրվծրվան թռչունները, իսկ անկողնում նա զարթնի,
Ա՜խ, իր ձեռքը պիտի մեկնի, որ ինձ գրկի սիրավառ,
Եվ ի՞նչ կլինի, երբ իր կողքին նա ինձ բնավ չը գտնի...
Նորից, նորից նա կփորձի ձեռքը մեկնել ու փնտրել,
Եվ անկողնում, և այրի մեջ նա որոնել կսկսի.
Ձայրությի մեջ կարող է իսկ իր հագուստը նա պատռել,
Կամ կաշխատի, որ իր արտից շար կասկածը արտաքսի...

— Ինչպես պիտի ժայռերի մեջ նա վազվզի աջ ու ձախ,
Ինչպես պիտի որոնի նա ինձ ամեն տեղ և տխո՜ւր.
Իսկ երբ տեսնի, որ էլ չկամ ես, դավաղիր ու խարդախ,
Պիտի մագերը իր փետի իր ձեռքերով նա կարկառ,
Հետս արագ խենթի նման դեպի ոտը կվազի.
— «Ուր ես, Տեսևս»— կաղաղակի, «ուր ես, արի, ամուսին»
Ինչպե՞ս պիտի իր սաքերով շատի կուրծքը ավազի.—
Բայց ժայռերը նրան, միայն կարձագանքեն իմ մասին...

— Եվ ամայի ծովի ափին, մենակ, անտեր ու վհատ
Սարսափի մեջ իր շարս կոպմը նա պիտ նայի մոլեգին.
Միայն ծովի ալիքները ժայռերի մոտ անհավատ—
Կը մրմնջան նրա արտին ինչ որ երգեր գառնագին։
Եվ նա նորից ժայռի գլուխ կբարձրանա ցավի մեջ,
Իր հայացքով դեպի ծովի հեռատանը կդառնա.

Եվ անանելով այս ուրացող նավը հեռուն՝ ծովի մեջ,
Նա կկանչի սրտաբուխ, կաղաղակի անխնա...

— «Տեղե՞ս, Տեղե՞ս—կանչում եմ քեզ, ուր ես գնում,
դավաճա՞ն.
Նավիդ վրա մի պակաս կա, շուտ տուր նավը և ե՞ս եկ...
Եթե մարդ ես մի պատվական, թե սիրտ ունես ժրաջան,—
Ես քեզ նավդ ազատարար և ինձ մի թող ահարեկ...
Որդին ես դու Եղեսի, քնքուշ եթերը քեզ մայր,
Թե՞ մի կավատ, կամ վայրենի արարքի տեր բարբարոս.
Ի՞նչ միտք ուներ, որ շրջեցիր դու աշխարհը ծայրեծայր,
Հանցագո՞րծ ես դու դավադիր, թե՞ երկնատեր մի հերոս»...

— Խեղճ Արիադն. մենա՛կ, անհույս և զայրույթից
ուժասպառ
Դու վայր կընկնես ժայռերի մեջ, սև անիծքը քո բերնին...
Իսկ ոչ հեռու կա կուսական և ամեհի մի անտառ,
Ուր դեղերում են առյուծներն կամ դիշատիչ բորենին...
Վերջին անգամ երբ քո խոսքը հնչեն այնտեղ ցավագար,
Հեռու սիրող ծնողներից և ազգերից հայրենի,
Գազանները գուցե հանկարծ վրա հասնեն խելագար
Եվ անողոք քեզ հոշոտեն, ինչպես մի որս վայրենի։

— Ատավածների խոր զայրույթով դու կանիծես Տեղեսին.
Եվ կանվանես դու ինձ խոշոշ կամ դավաճա՞ն, հիրավի.
Եղեսին պիտի մատնես դու նզովքին, նոխազին,
Իմ արյունին դու սրտակալ պիտի դառնաս ծարավի։
Ա՜խ, ամեն բան ինձ տանում դու իրավունք կունենաս,
Ես եմ միայն մեղքի տերը, քո դեմ ես եմ մեղապարտ»...
Տեղեսն այդպես միտք էր անում, սրտում վերքեր ու վնաս,
Իսկ նավակը սլանում էր ծովերի մեջ ալեզարդ...

Նայի՛ր, Տեղես, Արիադնը ժայռերի մեջ տեր դառավ,
Դիոնիսը նրա սրտում նոր ինքնության տեր դառավ.
Եվ զարդարված արևներով երկնաշնորհ գթության
Նա նրա մեջ նոր հանճարի ստեղծագործ կեր դառավ...

Դիոնիսը կրակներով ասուածարար ներշնչված, —
Տես, Նաքասում Արիադնը դարձավ մի նոր դիցուհի.
Մի նոր կյանքի, նոր գոյության կարասների նա կանչված—
Դարձավ միայն հեռուների երգը հնչող քրմուհի:
Մինչ սահում է նավը արագ դեպի ափունքն հայրենի
Եվ խորհում է անիսաունակ Տեզևան հզոր անվանի...
Աչքիդ առաջ պարզ է այսօր և բացահայտ քո ուղին.
Բայց չգիտես, արդյոք էգուց ուր պիտի քեզ նա տանի,
Տեզե՜ս, Տեզե՜ս, նայիր և տես քո խոր նավի ճակատին.
Ծածանվում է հողմերի տակ մի աննման դրոշակ,
Հեռուներից փառքը բերող նավի հպարտ դպաթին
Դու ես կապել դրոշը այդ՝ ձյունի պես վառ և ճերմակ...

Ի՞նչ միտք ունի ծովերի մեջ ճերմակ դույնը դրոշի,
— Մոռացե՞լ ես... քեզ այրում է արարմունքը խոշոշի:
Զարթ կողմ նայիր,— անծայրածիր ծովերն ահա քո առաջ,
Եվ քո բախտին լուռ սպասիր,— գործը երկար չի քաշի...
Երբ քեզ հայրդ Կրետա կղզին ճանապարհեց արցունքով,—
Նա պատվիրեց, որ կատարես նրա պայմանը ընտիր.
— «Որդյա՛կ, եթե վերադառնաս հաղթանակի բարձունքով,
Նավիդ գլխին ձյունի պես վառ ճերմակ դրոշ դու կապիր...

Ծովի ափին, ժայռի վրա ես կապասեմ քո դարձին,
Ինչպես սիրտը սպասում է հավերժական իր վարձին.
Երբ մոտենա նավը ափին, վրան դրոշը ճերմակ,
Ես կիմանամ, որ դու ողջ ես, հույսեր բերած իմ հայցին»...
Եվ դու հիմա նա ես դառնում հեռուներից հաղթարի,
Նավիդ գլխին ծածանվում է ճերմակ դրոշը բարի.
Շտապո՜վ, շտապո՜վ քեզ կընդունեն ափերը քո հայրենի.
Բայց չգիտե՞ս, երբ կհնչի վճիռը քեզ Արդարի...

Հիշար եղեք հո՜րդ ալիքներ, հեռուներից եք գալիս.
Նավը ահա ձեր ուսերին հաղթության լույս է տալիս...
Տեսե՞ք, արդեն հասնում է նա հեռվից շոյող ափերին,
Ուր սպասում է Եգեսան ջերմ աղոթքը կրկնելիս:
Հողմը փչեց հեռվից սաստիկ, ափն է ահա երևում.
— Շարժե՞ք թիերը, ով նավաստիք, Եգեսան է բարևում.

Մի վախենա, առաջ անցիր,— Եղեռան մինուճար,
Եթե չկա ներքևն օրենք,— չէ՞ որ նա կա վերևում...

Հառա՞ջ, հառա՞ջ... նավը արդեն երևում է ափերից.
Իսկ Եղեռան ճիգ է թափում դրոշակին նայելով.
— Հրա՞շք, հրա՞շք... սարսափեցնեք կյանքի ահեղ չափերից,
Ա՜խ, սևացավ դրոշն հանկարծ, հողմի շունչը շոյելով...
Խեղճ Եղեռան նայեց հեռվից, նայեց տեսավ սև դրոշն.
Ասա, անմիտ ճակատագիր, դու ենթդ օ՞ձ ես, թե խոշոշ.
Ծեր Եղեռան աչքի առաջ որդու մահը կարծելով,
Բարձր ժայռից անդունդ նետվեց... ծովը հնչեց մի նոր ճոշ...

Այնուհետև էլ շատ չանցավ. ժայռերն եղան սրատցավ,
Երբ մոտեցան բարձր ափին փրփուր հագած երկու նավ։
— Մեկը, ինչպես դուք լավ գիտեք, պատկանում էր Տեղևին,
— Մյուսը՝ ավա՞ղ, Եղեռան էր անշնչացած և խոնավ։
Ասա, երկիր, որ քո կրծքում հավերժական վերք ունես,
Դու ո՞ր մեկը այդ երկուսից ավելի ջերմ կընդունես.
Տեղե՞ս, Տեղե՞ս, դառն արցունքով քո հոր դիակը քննիր,
Որ Նաքսոսում Արիադնին նոր եռանդով ողջունես...

Զարհուրելի մենամարտի հաղթանակը դու տարար.
Հայրենիքիդ պատիժ եղած Մարդաեղը էլ չկա,
Եվ Աթենքը քեզ կանվանի անմահության նոր հանճար,
— Ավա՞ղ ինչու քո գործերին կիրքը եղավ շար վկա...
Բայց սպասի՛ր, երկար, երկար ճանապարհ կա քո առջև,
Ինչպես պիտի դու համբերես ծանր լուծը քո վզին։
Աստվածները քեզ կաշկանդող ոչ ներքև են, ոչ վերև.
— Նրանք վաղուց վեճ են անում քո սրտի մեջ—քո մասին...

Բ. ՏԵՂԵՎԱՆ ՈՒ ԱՆՏԻՎՈՊԸ

Երբ քաշքշեց ժամանակը շղթան իր հին օրենքի,
Տեղևան արդեն հռչակի տեր թագավորն էր Աթենքի։
Նա դահը այդ ստացել էր իր ծնողից՝ Եղեռանից,
— Բարձր էր շողում նոր արևը նրա փառքի և զենքի...

Պանդիվոնը պատն էր նրա, իսկ Պալլադը՝ հորեղբայրն.
Էգևսի պես, Եթերի պես ուներ հզոր հայր ու մայր.
Բայց իսկությամբ աստվածային արյունից էր նա ծնված.
— Պոսիդոնը նրան ծնեց՝ ձեռքին սուրը կրկնասայր...

Մինչ Պալլադի հզոր որդիք բազմաբազում զորքերով—
Եկան ահա, որ նվաճեն Աթենքը շեն և հայտնի:
Իսկ Տեղևսը իր զորքի հետ աստվածատուր փառքերով
Դուրս արշավեց նրանց հանդեպ, որ թշնամուն կործանի:
Ահեղ կռիվ և պատերազմ. ներկվեց դաշտը արյունով.
Հազար զոհեր, հազար մահեր—սիրտ քաղցր ավյունով...
Եվ ետ դարձավ չար թշնամին, ոտքից գլուխ ջախջախված.
— Չէ՞ որ հայնժամ անհաղթ էր մեր առյուծը իր կորյունով...

Կրկին անցավ շատ ժամանակ: Մինչ Տեղևսը շինարար
Հորինում էր անմահներին դիրք ու տաճար վեհափառ.
Նրա վրա մեծ արշավանք կատարեցին Ամազոնք,
Որի հանդեպ աստվածներն իսկ շփոթվեցին երկնաճառ:
Եվ Տեղևսը սարսափի մեջ ծովի ափը դուրս եկավ,
Ազերս արեց Ոլկիանոսին՝— նրա տիրոջ ինքնակալ.
Անմահության զորքի առջև նա ծնկաչոք վայր ընկավ,
Եվ այցելեց նրան այդտեղ Պոսիդոնը ծովակալ:

— «Ի՞նչ ես ուզում դու ինձանից մեծահռչակ դյուցազուն,
Մեծ Եգևսի որդին ես դու՝ իմ հարազատ արյունից.
Քեզ կարդեցի Աթենքին տեր, որ միշտ մնաս քաջազուն,
Ի՞նչ է, ասա, խնդիրը քո աստվածազոր Անհունից»...
— «Ինչպես Զևսն էր Հերակլեսին քաջության մեջ ծնական,
Թե հայր ես ինձ, տուր զորություն իմ կենարար բազուկին.
Տես, Ամազոնք դուրս են եկել արշավանքով հաղթական.
Ի՞նձ կթողնես դու Աթենքը, թե ձիազոր թշուկին...

Իմ ծնունդին, իբրև պարգև, դու խոստացար երեք ձիր—
Երեք անգամ ցանկությունն իմ պիտ կատարես սրտաբաց.
Ինձ բաղձանքի երեք ընտիր դու իրավունք հանձնեցիր,
— Մեկը արդեն կատարված է,— Մարդանեղն է տապալված:

Իսկ հիմա, ա՜խ, հերթն է հասել արդեն երկրորդ բաղձանքի։
Տա՜ր զորություն, որ կործանեմ արշավանքը այս դաժան...
Թող ձիաձուլ շար կանայքը տեր չը դառնան Աթենքին,
Իսկ ես հարուստ գոհեր կառամ քո մեծազոր բարձրության»...

— «Ա՜յդ է միայն, ով դյուցազուն, ցանկությունը քո
երկրորդ,—
Պոսիդոնը սիրով ասաց, Ովկիանոսը խոր թնդաց, —
Քո թշնամին մեծ Աթենքին միշտ կմնա անհաղորդ,
Միայն դնա և ազնիվ իմ տաճարին անմոռաց։
Տեղևս, իսկույն զորքերդ առ և դուրս արի կռվի դաշտ.
Ես քո կողքին լինք կշարժեմ թշնամու դեմ քո անհաշտ.
Քանի ես կամ,— շեն Աթենքին չեն սիրանա Ամազոնք,
Թեկուզ քշեն նրա վրա հազար բանակ, հազար վաշտ»...
Եվ Տեղևսը թեռավարվեց։ Խոստումն էր այդ հանճարին։
Ինքը հզարա, սիրտը զվարթ ոգևորիչ երդումից,
Փարթամ ու ճոխ զոհեր բերեց անմահների տաճարին
Եվ մեծ զորքով դուրս արշավեց, հուզված վերին դրդումից։
Ինչպես հավերժ անժխտելի և անկործան մի օրենք—
Կանգնած ես դու դարերի մեջ— Արևը քեզ միայն լինք.
Ոչ ահ, ոչ մահ, ոչ Ամազոնք իրրև կյանքի թշնամի,
Այնքան կարող զորք չունեցան որ կործանեն քեզ, Աթենք...

Եվ զարկվեցին զորքերն իրար, վազեց արյան նոր հեղեղ.
Եվ դնդերը մեծ Տեղևսի, և Ամազոնք ձիարշավ—
Կռվում էին խիստ անձնուրաց... մահն էր ազատ և անշեղ...
Իսկ արնախում երկիրը այս կործանումի էր ծարավ...
Նույնիսկ անմահ աստվածները՝ Ոլիմպոսից ցած նկած,
Կռվում էին օր ու գիշեր զորքերի խիստ շարքերում.
Հազարները կռվի դաշտում, արյունի մեջ վայր ընկած.
Տեսնում էին մահն ու դժոխք իրանց անմիտ գիրքերում...

Թնդաց երկիրը ահարեկ, պայթեց որոտ, շանթը շեկ.
Կործանումի այս ժամին Ոլիմպոսն էր իրարեկ.
Վազեց հեղեղը արյունի, ցավն ու հառաչ ծովացան,
— Հավերժությո՜ւն, կյանքի նամին դու ես կապել մահվան
դեկ...

Պոսիդոնը սուրը բաշած կատարում է աջ ու ձախ.
Նրա կողքին բաջ Տեղևսը աղյուծի պես և անվախ
Մրոնչում էր իր զորքի հետ, առաջ նետվում շանթի պես.
— Դաժան երկինք, ումն ես անում այսքան զոհեր ու
մատաղ...

Երբ հասել էր կռիվն արդեն կործանումի դադաթին,
Եվ թիվ չկար որոտախոս կայծակներին ու շանթին.
Կռվադաշտը հանկարծ պատեց արյունթաթախ ծուխը վառ.
Իսկ մահը սև զոլքը կարդաց կորստաբեր երկաթին...
Կռվի բեմից նահանջեցին բյուր ամազոնք ձիազոր,
Կանանց զորքը փախուստի մեջ ցրիվ եկավ սրատորոփ.
Իսկ Տեղևսը նրանց հատավ, հարվածներով անսովոր,
— Նրա ձեռքին դերի ընկավ մեծ թագուհին Անթիվոպ...

Դու էլ այստեղ գժոխքի պես գիրքեր ունես շար խուճապ.
Բատմանելի քո ձեռքերին նույնպես արյուն կա անչափ...
Քո շնչի տակ ձիահալած զորքը փախավ բյուր կանանց.
Ահա, յարաբ որտեղից է քո ծնունդը անխուսափ...
Փախավ, կորավ զորքը կանանց. հեռվից բացվեց հորիզոնն,
Իսկ Տեղևսը հաղթանակով վերադարձավ իր քաղաք:
Բայց դերի կա նրա ձեռքում,— թագուհին է Ամազոն,
Ինչ կսպասի նրան հիմա,— նոր փրկություն՞ն, թե ծուղակ...

Եվ Տեղևսը երկար նայեց: Ա՜խ, ինչ ես դու թագուհի.
Ջնաշխարհիկ դու տեսք ունես, աչքերդ վառ և շիտակ,
Շարժումի մեջ ճիշտ աննման, տես անմահ դիցուհի,
Մերժումի մեջ քնքուշ ես դու, հմայքով իսկ հրեշտակ...
Էլ ինչու զուր երկար խորհել,— ավելորդ է և կասկածն.
Մի շնորհք է, մի ցնորք է խոր երկնքից նոր ընկած...
Բանի շուտ է, Տեղևս նրան դու տեր դարձիր բարեբախտ,
— Կյանքում դեռ շատ դու կունենաս փորձանք ու սեր և
արկած:

Տեսեք, դերի Անթիվոպը կին է արդեն Տեղևսին.
Հարսանիքն էր փարթամ ու ճոխ, նվիրված վառ արևին.
Պոսիդոնը շքախմբով Ոլիմպոսից վեր եկած
Վկա եղավ մեծ հանդեսի այդ նորասեր բարեին:

Վառ կնոջ հետ Տեղեան ապրեց երկար՝ երկար տարիներ.
Յանքսից բարի ամուսնության նա ունեցավ և զավակ.
— Իպպոլիտն էր, որ կերտում էր կատարյալի երազներ,
Իպպոլիտը, երանության պարտեզումն իսկ նոր նվազ...

Բայց թույլ կը տա՞ քեզ քո կիրքը, որ սրբության հարկի տակ
Ընտանիքը դու ջերմ պահես, ինչպես սիրո մի երախտ.
Չար գաղանը, որ մարդու մեջ ապրում է դեռ խայտառակ.
Քո գոյության ամբողջ շենքը չի՞ դարձնի մի ապախտ...
Հիշիր միայն Արիադնին,— թող քեզ լինի այդ մի փորձ.
Մի սլանա, ինչպես առաջ, կրքի անմիտ կառքի մեջ.
Բացի կրքից սերը ունի էլ ավելի վսեմ գործ,
Նայի՛ր միայն քո անցյալին, որ միշտ մնաս փառքի մեջ...

Բայց Տեղեանը այդ ամենը անուշադիր կթողնի,
Նա գնում է ինչպես առաջ, խորթ ու խոպան ճամբեքով.
Մեզ մեր բախտը ցույց է տալիս ինչպես սիրո մատանի.
Որ փակված է թակարդի մեջ անդեղուն կողպեքով:
Անթիվոպը մայր է թեպետ, բայց ձանձրալի է դարձել.
Իսկ Տեղեանը էլ չի կարող կրքերի հետ իր մրցել...
Ա՜խ, բնություն, ի՞նչ ես հոգին շինել քեզ միշտ խաղալիք,
Ինչ ես կիրքը քո վավաշում մեր սրտերում տարածել...

Հայրենիքը Արիադնի, տես, կանչում է քեզ նորից.
Ի՞նչ կարող ես դանել այնտեղ, կրքով հարբած իմ Տեղեա.
Հաշիվ ունիս սատանալիք Արիադնի մեծ հարից,
Թե՞ կախարդում է քեզ միայն կղզու մեծ դիրքը, թերևս
Արիադնը չկա արդեն. դիցուհի է նա վաղուց,
— Մինոսն ունի մի այլ աղջիկ,— Ֆեդերը վառ ու շքնաղ.
Ինչպե՞ս պիտի դու անց կենաս մեղքերով լի մի նեղուց,
Խիղճը մի՞թե քո աչքերին չի տարածի մթընշաղ...
Եթե կառք է մարդու հոգին՝ դեպի երկինք արշավող,
Ասավածներն են նժույգները՝ լծված անխոնջ, միասին:
Եթե կուռք է սերը կյանքին, միայն արցունք վաստակող,
— Գնա՛ մի անգամ, անմիտ Տեղեա, դու միաք արա այդ մասին:

Գոսիդոնը քո մեջն է միշտ, քեզ հետ է նա թռչկոտում,
Խոսքերից նրա ուված երկուսն արդեն ստացար.
Մեկն է միայն հիմա մնում,— այդ է գուցե քեզ դրդում...
— Թող նա մնա քո սեւ օրին, երկար է դեռ ճանապարհն:

Տեղեան էր միշտ հնարագետ, կամքը նրան մի վարպետ.
Կրետ կգդին այդի գնաց նա ինքնակալ Մինոսին:
Մերթ մեղրի մեջ՝ իմացումը լուռ է մնում և անդետ,
Երբ որ խիզճն է կյանքի սանձը գիջում կրքի քարոզին:
Տեղեան հանկարծ մեծ Մինոսին փնտռ դարձավ անվանի,
Եվ աննման Ֆեդերի հետ վերադարձավ նա Աթենք.
Նրան Ֆեդերը թագուհի,— իսկ Անթիվոսն ի՞նչ անի.
— Միթե կյանքում սրա համար չը կա գրված մի օրենք...

Մրցակից է շատ շատերին Անթիվոսը քաջությամբ,
Չի մոռացել նա վաղեմի ազատ կյանքը տակավին.
Բայց կարող է Տեղեսի դեմ դուրս գալ իրրև ապստամբ,
— Իսկ թե չանի, ինչպես պիտի նա դեղ դանի իր ցավին:
Խանդոտ կինը համբերատար երբեք լինել չի կարող,
Իր խեղճ սիրտ դավաճանին նա միշտ տանել չի կարող.
Նրա սրտում հրդեհ կա միշտ, աչքի առջև խայթող օձ,—
— Սիրտը մաշող իր կրակը նա զանց անել չի կարող...

— Արդարացնա Իպպոլիտի նման որդի ես ունեմ.
Որի աչքը ուղղված է միշտ ճշմարտության քայլերին.
Ո՞վ ինձ կօգնի այս ցավի մեջ,— գիշեր, ցերեկ անքուն եմ,
Ներել մի՞թե ես կարող եմ դավաճանին, դայլերին...
Արժի տալել, երբ աչքիս դեմ պահում է նա մի նոր հարձ...
Ինչպե՞ս տանել անարգանքը այս դատնության ծովի մեջ.
Ելքը այստեղ մեկ է միայն,— պետք է կյանքը անել կարճ,
— Կամ ես կամ նա,— թեկուզ էրերն ինձ ընդունի ցավի մեջ:

«Տե՞ս, գլում եմ. իմ ձեռքերից արյունի հոտ է գալիս,
Իսկ ոճիրը իմ կրծքի տակ օձի պես սող է տալիս:
Ես կը նեռվեմ անդունդի մեջ, թեկուզ երկինքն ինձ սատի,
Թեկուզ արդեն իմ սրտի մեջ խիզճն է տհա խիստ լալիս»...

Այսպես երկար միտք էր անում Անթիվոպը հուսահատ,
Լարված կամքով սպասում էր օրհասական նա ժամին—
Եվ մի դիշեր, երբ հանցանքը աչքն էր շռել իր վհատ,
Անթիվոպը, սուրը ձեռին, դիմեց դեպի Թշնամին։

Եվ նա մատավ Տեղեսի մոտ, քնած նրան կարծելով,
Իր սրտի մեջ արյունահեղ դատ ու վրեժ Թրծելով.
Նա միտք ուներ դավաճանին սրի քաշել քնած տեղ,
Իր աչքերում կիրքը վառած, գթության դեմ մրցելով։
Բայց վրիպեց կամքը նրա։ Տեղեսն արդեն այդ դիտեր.
Նա այդ դիշեր սպասում էր օրհասական Հարվածին.
Պասիդոնը նրա հետն էր, նրա գործին հզոր տեր,
— Կարո՞ղ էր նա ասավածների կամքը խախտել
երկնածին...

Երբ Անթիվոպն ուզեց այդպես սուրը շարժել և արագ
Իր հաղորդը շատ սրոնել դավաճանի խոր կրծքում.
Տեղեսն իսկույն սուրը բռնեց, ինչպես ճիպոտն հասարակ.
Եվ զայրույթով ազազակեց,— սուրը արդեն իր ձեռքում.—
— «Ա՜խ, դու Թշվառ, որ դերի ես և իմ տանը միայն ճորտ,
Աթենքի մեծ արքայի դեմ հանդգնում ես շարժել սուր.
Ասավածների խնամքին իսկ Թող ես լինում անհաղորդ,
Եթե մնաս իմ աչքի դեմ դու կենդանի և անդուր»...

Այդ միջոցին ձեռքը նրա, կնոջ վրա բարձրացած,
Ուժ ստացավ իսկականից տասնապատիկ ավելի,—
— Ինչո՞ւ այդպես դուք վարվեցիք, շար Ոլիմպոս, Ջևս
Ասված,
Մի՞թե դարձ էր նա կատարում կյանքի համար դավելի...
Եվ հարվածեց նա անողոք։ Կինը գետին դլորվեց.
Վիզը կտրած հավի նման նա թրթռվեց դառնագին...
— Դու ես միթե այն թագուհին, որին մի օր նա սիրեց,
Որի համար վառում էր նրա սիրտը և հոգին...

Ավաղ այնտեղ ուր Տեղեսը իր նորադյուտ կնոջ հետ—
Բաղցր սիրո և գգվանքի կատարում էր պատարագն,

Դեռևի վրա դուր փռված էր արյունոտի մի ալեհ.
— Թագավորն ես դու Աթենքի, թե՞ վայրենի մի վիրապ...
Եվ նայում էր նա իր անմիտ, անագորույն արարքին.
— «Ի՞նչ արեցի ես իմ ձեռքով,— ո՞վ է արյան մեջ ընկած.
Վայնե՞լ է սա, այս հանցանքը արքայական իմ կարգին,
Իմ ճակատին այս սճիրը բախտի ձեռքով է կնքված»...

Երբ գիակը Անթիվոպի տանում էին այրելու,
Իպպոլիտը հանգիստ արտով նայեց իր հորն և իր մորն.
— «Քո արարքն է, արքա Տեզևս, որ գնում է վառվելու.
Քո ձեռքով իսկ բաժանեցիր մարմինն հոգուց երկնագոր...

ՏԵԶԵՎՍԻ ՄԱՀԸ*

(Էպիլոգ)

Անտիվոպը չը կար վաղուց: Մահացած էր և Ֆեդերը.
Իսկ Իպպոլիտն սպանված է հոր ցանկությամբ ու դաժան.
Նոր մահացած Իպպոլիտի և Ֆեդերի գիակները
Ընկած էին գետնի վրա—մի սհռելի տեսարա՞ն:
Այդ ժամանակ, երբ Տեզևսը սուգ էր անում դառնությամբ,
Պաշարեցին նրա պալատն ամբոխները բազմաղան.
— Ի՞նչ ես անում անմահ Աթենք. դո՞ւրս ես անում
ապստամբ.
Հնդարները դուրս են եկել, որ կատարեն դատաստան...

Քո մեծ փառքը քեզ անվանեց՝ «երկնահռչակ մեծ Տեզևս»,
Բայց վաղուց է, որ Աթենքում ունես դու մեծ թշնամի.
Նարդեսն ու նենգ գործերի տեր՝ քեզ տանել Մենելաթեան.
— Նա է հիմա գլուխն անցել ապստամբած բազմության:

Դու անսովոր սուգ ես անում գիակների հանդեսում,
Իսկ բազմությունն հեղաշրջված դուրս է եկել պայքարի,

---

* Տեքստում բերված են «Տեզևս» տրիլոգիայի միայն I և II մասերը: Իսկ III մասը, որ այստեղ չի բերված, կոչվում է.—«Տեզևսն և Իպպոլիտը»:

Ո՞վ կարող է քեզ ազատել նոր գժոխքի կրկնումից,—
— Հանճար է պետք, որ սոսկալի քո վիճակը նկարի...

Տեղե՞ս, Տեղե՞ս, գործերդ տես, խուժանը քեզ կապառնա,
Վա՜յ քեզ, վա՜յ քեզ, եթե նրա ձեռքը ընկնես հանկարծուստ.
Մեծ կասրը քեզնից միայն դուցե ականջը մնա,—
Մտածե՞լ ես, ի՞նչ ասել է գառնության մեջ սև՛ փախուստ...
Եվ Տեղևը խուճապի մեջ՝ սարսափահար խուժանից —
Տանը թողած դիակները, նույն այդ դիշեր դուրս փախավ.
Էրինները, պահանջելով ճիշտ հաշիվը դաժանից,
Հալածեցին նրան մինչև Ըսկերոսը ծաղկախավ...

Նայի՛ր Տեղևս, էրինները օձազլուխ, օձաձև
Դեռ գալիս են քո հետևից, որ խիստ հաշիվ պահանջեն.
Ուրվականները անցյալի, տեսիլները սառ ու սև
Պար են բռնել աչքիդ առաջ, որ քո ցավերը փնջեն:
Ո՞ւր ես գնում այդպես արագ. քեզ Ըսկիրոսն ի՞նչ կուտա.
Ուրվական է Սիսիֆոսը, Անթիվոսը հերարձակ,
Բզզոցիտը ատամների. պես անմահարա՛ր կը խնդա,—
—Քեզ թշում են տեսիլները հոգմերի պես համարձակ...

Երանության կարոտներից զուրկ չէ նաև Ըսկիրոսն.
Նրա կուրծքը զարդարում են ծաղկափթիթ երազներն.
Հեռվից հեռու ողջունում է նրան պայծառ և էրոսն,
—Նա էլ ունի երկնքի հետ անմահության գրազներ:
Ո՞ւր ես գնում, քեզ տեղ կտա՞ երկիրը այդ պղտավեռ,
Արյունարուշտ հանցագործին ո՞վ բաց կանի դուռը յուր.
Ով իր գլխին ողջ աշխարհի ցավն է կապել առհավետ,
Նրա կյանքը պիտի անցնի միշտ անձկալի՞ և տխուր...

Եվ գնում էր Տեղևն այդպես, միտք անելով ինքն իրան.—
— «Օտար չէ՞ ինձ այս պերճ կղզին, ուր կա սիրո
պաշտամունք—
Հայրենիքը Լիբամեդի,— նրա կյանքի սուրբ օրրան,
Ինձ պետք է տա և փրկարար ժառանգությա՞ն իրավունք...

Լիքամեղը չէ՞ որ ապնիվ իմ ընկերն է վազեմի.
Ինձ ապավեն նա կդառնա և կընդունի սրտաբա՞ց,
Իմ դեմ երբե՞ք չի ունենալ նա կրքերը դժկամի,—
Չի՞ ուրանա նաև հիմա նա սրբության ապն ու հաց»...

Եվ գնում էր Տեղեան այդպես, հույսը սրտին ապավեն,
Բայց չգիտեր, որ վիճակը վաղուց փոխված է արդեն...
Մենեսթիսի խորհուրդներով, նրա կամքին համաձայն—
Լիքամեղը դավաճանի մարեր ուներ անօրեն...
Եկավ, հասավ իմ Տեղեան,— պատրաստ էր և ապատան:
Լիքամեղը նրան խանդոյն ընդունեց ջերմ ու սրտանց...
— Տե՞ր արարիչ, ուր ծաղկում է սիրո բարձր բուրաստան,
Ի՞նչ միտք ուներ—ցանել նաև կիրքն ու կեղծիքն և
նախանձ...

Ընկերոջ հետ Տեղեան ապրեց քանի՞, քանի՞ ամիսներ.
Լիքամեղը նրա ցավին մաղթում էր միշտ մոռացում:
Ժամանակը կյանքի համար հորինեց շատ ուսուցներ,
Դավադիրը իր մտքերին որոնեց նոր մարմնացում...
Լիքամեղը ցույց էր տալիս իր դանձերը Տեղեանին.
Նա շատ հաճախ դուրս էր գալիս զբոսանքի նրա հետ:
Նայի՞ր, անցորդ, հավերժական սեր ունեցող արևին
Եվ թույլ մի՛ տա, որ քո սրտում շարը լինի պտղավետ...

Ավա՞ղ այստեղ մարդու սիրտը երբեք այնպես չեն կազմել,
Որ իր գործում արևի պես նա շողշողա զվարթուն:
Նրա դահին հազար տեսակ ախտ ու շարիք են բազմել,
Մերթ ոչինչ են նրա համար սերն ու զուրբ կախարդուն:
Լիքամեղը Տեղեանի հետ սիրալիր էր արտաքուստ.
Բայց իր հոգին պատրաստում էր նա դավադիր մի գործի:
Ապատեսնե՞ք, դատաստա՞ն կա երկրի վրա և վերուստ,
— Հանցագործը թող կյանքն իրան մենաշնորհ չը կարծի՞...

Տեսեք, ահա ման են գալիս ընկերները թեանցուկ—
Ծովի ափին ժայռի վրա,— ալիքները ժայռի տակ.
Թշվա՞ռ Տեղեա, այդ կողմերում մի՞թե չկար մի հարցուկ,
Որ քեզ ասեր, ինչ է պահել բախտը քեզ իր հարկի տակ...

Եվ հիշում է խեղճ Տեվեսը փառքերը իր անցյալի,
Մեծ պատի՞վը, մեծ գործե՞րը, երկնահաչա՞կ, հաղթական...
Եղևաք հայր, եթերը մայր, իսկ օրերը անձկալի,
— Ա՜խ, եա եկե՛ք դարձան հույսեր, ծաղիկ ու սեր
պատվական...

Երբ Տեվեսը տուրբ էր տալիս իր փառավոր հուշերին,
Լիքոմեդը միտք էր անում, սիրտը օձին բան տալով.
— «Եթե մարդ եմ, ես չեմ դիջի խղճմտանքի փշերին.
Մի՞թե պետք է ես խնայեմ սրան, անվերջ տուն տալով.
Մենելաոսի տաջև մի՞թե պիտի դառնամ ես թարխան.
Շա՜տ շատերին կերել է սա,— հիմա ինքը թող տուժի.
Հարմարագույն տեղը սա է, թեկուզ ընկնեմ կախաղա՞ն...
Լիքոմեդը իր խոսքերը չէ՞ որ երբեք չի դրժի»...

Ո՞ւր է, Տեվես, Պոսիդոնը, քո գործերին ղեկավար,
Եվ փորձանքում և հանցանքում քեզ միշտ կորով ներշնչող.
Եթե նա էր ծովերի մեջ քո մեծ նավին նավավար,
Ո՞ւր է հիմա, երբ թակարդ կա դրված քո դեմը հաջող...
Եվ երբ երկու ընկերները շրջում էին կողք կողքի
Ժայռի գլխին, իսկ ներքևը ծովի անդունդն էր բացված.
Լիքոմեդը, բաց անելով սև գոռները իր մեղքի—
Խեղճ Տեվեսին ծովի անդունդը գլորից անասելված...

Գնա՞ց, գնաց մեծ հերոսը դեպի հատակը ծովի,
Պոսիդոնը, ծովակալը—նրան իր մեջ կպահի.
Ալիքները վշվշացին վերջին երգը բարեի,
Հավերժությո՞ւն, ա՞յդ էր մեթեն վերին փառքը անմահի...
Այն օրվանից մինչև այսօր ալիքները հեղհեղուկ
Ադմկում են ժայռերի տակ գործերի դեմ հավերժի.
Հաղար ու բյուր զոհերի պես անցա՞ր և դու սրամաշուկ,—
— Տե՜ս, քեզանից, հզո՞ր Տեվես, չի մնացել և փոշի...

ՀԱՏՎԱԾՆԵՐ

ԱՓԻԼԼԵՍՆ ԱՍՏՎԱԾԱԶՈՐ ԴՐԱՄԱՏԻԿ ՊՈԵՄԻՑ

«ՄԱՀԸ ՄԻԱՅՆ ՄԱՀ ՉՈՒՆԻ»

(Ամիլլեսի ծնունդն ու կրթությունը)

Ո՞վ էր հայրդ, ո՞վ էր մայրդ դեղդեղափայլ դու Թեդիս,
Արդյոք Ներևե՞ն, որ ապրում էր ծովի խորքում անդնդախոր,
Ե՞ մեծ Քիրոնը բարեգործ, մարդավայել, երկնազոր,
Որ առասպող մարդու ցեղին միշտ տալիս էր ավետիս:
Դու անմահ ես. դու սիրում ես և Քիրոնին Կենտավրոս,
Եվ Ներևին, որ իշխում է հորձանքներին հորդահոս:
Քո հարսանիքն անդ կատարվեց՝ քարանձավում Քիրոնի,
Որ անդնդև հեռևողն էր հավերժական կանոնի:
Քրոնոսն էր հայրը նրա.— Քրոնոսը հաղթանդամ
Սիրով կապվեց փափագատենչ Փլորի հետ մի անգամ,
Եվ այդ սիրուց ծնվեց Քիրոնն իբր երկնային մի հանճար,
— Հզոր բժիշկ, աղնվաբարո ասավածագյուտ դասատիարակ,
Նա էր կրթել Ասկլեպիոսին, Ապոլլոնին մեծափառ,
Դիոսկուրին, Տիրեղիասին, Մարավոնին մեծահռչակ:
Նա էր, որ քեզ ու Պելլեսին ահա բերեց միասին
Թեսալական թագավորի պերճ, հոյաշուք ապարանքն,
Եվ բարեգութ խրատն հնչեց քեզ ապագա կյանքի մասին,
Եւ հեռացավ: Մենակ ես դու պալատի մեջ ընդարձակ:
Դու սիրում ես ծովի ալիքն, ջրի ծփանքը պայծառ,
Կամ լեռները.— գագաթները սեղ լեռների վերամբարձ.
Խիստ անձուկ է, խիստ տխուր է ապարանքը քեզ համար.
— Գրկիր դոնե դու Պելլեսին, նրա սիրով կախարդված:

* * *

Բայց Պելիսին աստվածուհի Թեդիսն էր միշտ անմատույց.
Ամեն անգամ մերձենալիս նրան իբրև ամուսին,—
Փոխվում էր նա.— դառնում էր հուր, դառնում էր ջուր
ծովային.
Դառնում էր օձ ահագնագույն կամ ահռելի մի առյուծ:

Քանի՞ անգամ դիմեց Պելիսն հաղթ Քիրոնի օգնության,
Քանի՞ անգամ աստվածներից խնդրեց վրեժ ու պատիվ,
Դելփիք գնաց, որ անդ լսի պատգամն հզոր դուշակության,
Տաճարները այցի գնաց, մատաղ կարեց բազմաթիվ:
Վերջը մի օր աստվածուհու պերճ մարմինը գրկեց ճկուն,
— Գրկեց, սեղմեց իր քաջագոր և առնական ձեռքերի մեջ,
Գրկեց, դգվեց, և բազմամյա կարոտն առավ քաղցրատենչ:
— Իբր ամուսին, Պելիսն այդպես ընտելացավ դիցուհուն:
Բայց Թեդիսն էր երբեմն իբրև աննյութական մի կորով,
— Նա կարող էր, երբ կամենար, մարմնավորված հանդես
դալ,
Այդպես հաճախ աներևույթ հեռանում էր դեպի ծով,
Եվ այնտեղից նա էր դառնում դեպի Պելիսն անակնկալ:

Եվ գլորվեց ժամանակը անիվներովն անողոք.
Մինչ Թեդիսը իր արգանդում արդեն ուներ մի պտուղ.
Նա հղի էր, բեղմնավորված, ծանրացած էր նա իրոք,—
— Նրա մեջն էր հավերժությունը արձակել մի նոր ճյուղ:
Ժամանակը թմբուկ չունի և սովոր չէ աղաղակի,
— Երբ գալիս է նոր այդեկութ, այդպանը տեսնում է այդ,
Բայց երբ պտուղն է արգանդում հասունացած ինքնակի,
— Տեսնող չը կա, տեղյակ չը կա,— գործը մութ է և
անհայտ:

Ժամանակի գնացքի մեջ անցավ արդեն ինն ամիսն.
Եվ Թեդիսն էր եկունքի մեջ, իսկ Պելիսը անհանգիստ:
Ողջ բնությունն լիզու առած հնչում էր նոր ավետիս,
Իսկ աստվածներն Ոլիմպոսում կազմել էին արդեն նիստ:

Ժողովի մեջ Զևսն արարիչ կամքը հնչեց տիեզերքի,
— «Դուք, մեծարգո Հերա, Թեմիս, դու Արթեմիս, Աթենաս,
Բոլոր շուտով և գացեք դեպ Թեսալիա, դեպ Ֆթիան,
Եվ ներս մտեք ննջարանը արծաթավոտ Թեդիսի,
Աստվածազոր ձեր օգնությամբ գործը վարեք ծննդյան:
Դու, Պոսիդոն, ձեռքդ առած եռաժանին դյութական,
Անդնդախոր և անպտուղ ծովերն արա հնազանդ:
Իսկ դու, Հերմես.— Կամակատար և սիրալիր սուրհանդակ,
Գնա կանչիր և հավաքիր ամեն կարգի աստվածների —
Ու Պելիսի պալատի մոտ կազմիր անմահ պատվի պահակ:
Իսկ ես այստեղ կը կատարեմ հավերժության սուրբ ավանդն.
Որ վայելուչ մենք ողջունենք ծնունդը մեծ հանճարի:

Եվ կատարվեց կամքը Զևսի,— Անդ Պելիսի տան առջև
Աստվածներից կազմվեց իսկույն պատվի պահակ
փառապարգև—
Իսկ մեծազոր դիցուհիներն ննջարանը ներս մտան—
Ժամանակը իր մեծ վազքը սանձահարեց դեռարժան,
Կանգնած էր նա,— ժամ ու վայրկյան, օր և տարի
դարձան մեկ,
— Ծնեց Թեդիսն, և մանկիկի ձայնը հնչեց ահարեկ,
Ծովը լռեց, երկնքի մեջ արևն իսկույն կանգ առավ,
— Աքիլլեսն էր, հավերժության ձեռքերի մեջ աշխարհ եկավ:

Ծննդկանին այցելության եկան բազում աստվածներ.
Գլխավորողն էր բոլորի Օլիմպացի աշխարհատերն,
Նաև հեռու երկրներից արքաները բազմաթիվ
Բերել էին պերճ ընծաներ, պարծանք ու սեր և պատիվ:
Եվ բոլորը երբ որ տեսան սքանչատես մանուկին,
Միաբերան վկայեցին,— «Այս երեխան նորածին,
Տեսեք, բնավ սովորական մանուկ չէ,
Այս աշխարհին, այս գոյությանն նա բնավին հատուկ չէ,
Աչքերն, ասես, հավերժական խորհուրդների խոր աղբյուր,
Իսկ հայացքը անմահական կարոտներով լուսափյուռ.
Բյուր բյուրերի փափագատենչ երազները մարմնացած
Գեղ մանուկի էության մեջ շողշողում են անդրադարձ»:

— «Գերօրինակ այս մանուկի անունն է ճիշտ Աքիլլես» —
Այդ ասելով, անհետացավ Օլիմպացի հզոր Զևսն։
Եվ մանուկը, պերճ մանուկը զորանում էր օր ավուր,
Աստվածուհի մոր փափագին, հոր ցանկությանն ի սրիտուր։

Քաջ Պելիսը երջանիկ էր զգում իրեն շափազանց.
Հարյուրաձեզ նա զոհ բերից աստվածների տաճարին։
Մինչ Թեղիսը միտք էր անում մանկան մասին աննախանձ,—
— Ի՞նչպես խնդրել, ինչպես դիմել Ոլիմպական կառքերին։
— «Անմահ եմ ես, հավերժակյաց, արյուն ունեմ թափանցիկ,
Իսկ իմ որդին մահկանացու—այսօր նա կա, վաղը ոչ։
Ի՞նչ միջոցի պետք է դիմել, ինչ հնար կա առանցիկ,
Որ նաև նա անմահանա, աստծու պես երկնակոչ»։

Միտք էր անում այդպես անվերջ հավերժահարս դեղ Թեղիսն,
Քանի անգամ այդ առիթով նա Ոլիմպոս բարձրացավ,
Հարցում արեց աղերսանքով, ելք որոնեց սրտացավ,—
— «Ախ, օգնեցեք, մեծ աստվածներ, մահկանացու է որդիս,
Մեծ գործ ունի երկրի վրա կատարելու իմ զավակն.
Ուխտ եմ արել,— որ շարությանն խորտակիչը նա դառնա
Սակայն, ավա՜ղ, մահկանացուն ինչպես տանի հաղթանակն,
Երբ շատ շատով պիտ կործանի մահը նրան անխնա»։
Եվ մեկն ասաց աստվածներից,— «Դու չը գիտես տակավին,
Որ իսկապես մահկանացու մարդ է միայն քո որդին։
Մահկանացու մարդն, հիրավի, կանմահանա,
Երբ Ստիքսի հրաբորբոք հորձանքի մեջ լողանա»։

Մի օր Թեղիսն իր պալատում, ջուրը դրած կրակին,
Փորձի համար ուզեց ձգել նման ջուրը զավակին։
Բայց Պելիսը վրա հասավ, արդեպակեց դաժան գործն,
Եվ մանուկին քաջահանձար էլ չհասավ մահվան փորձն։
Եվ Թեղիսը Պելիսի դեմ ծանրացասում զայրացած,
Ուզվեց իսկույն դեպի դժոխք իր զավակին կրծքին սեղմած։
Բյուր արվածներ հանդուրժելով, նա Ստիքսի ափունքն
հասավ։
Եվ հրացայտ ահեղ դեսի հուր հորձանքը աչքով տեսավ։

Մերկ մանուկի նա դարշապարն ձեռքովն բռնած հոգատար՝
Նրա մարմինն երեք անգամ անդ թաթախեց Ստիքսի մեջ,
Երեք անգամ նա կատարեց ահեղ ծեսը սրատաենչ.
Ու միևնույն ճանապարհով վերադարձավ դեպի տուն:
Մինչ մանուկն էր կայտառ ու ժիր, հոգով աշխույժ և
արբույն:
— Սիրուն մանուկ, Ստիքս գետից անմահություն ստացար
Բայց խոցելի, մահկանացու մնաց քո նուրբ դարշապարն:

Օրերն անցան մեկիկ մեկիկ, մեծ Պելիսն էր երջանիկ
Արևն էլի գորովագութ լույս էր տալիս աշխարհին,
Գիշերն էլի խավար և մութ հյուր էր գալիս ամենքին.
Եվ ծաղկում էր պերճ մանուկը՝ ծնողների անդրանիկն.
Գեղադանդուր, սիրատենչիկ հինգ տարեկան մի մանուկ,
Բայց տեսել էր այս գոյության դաժան բևեռները հատուկ:
Կրծքին կպած իր անմահ մոր՝ բարձրացել էր Ոլիմպոս,
Դժոխքն անգամ փորձել էր նա և Ստիքսը հրահուր.
Անմահ մոր հետ աստվածուհի, իբրև հրաշք դեռ չեղած,
Նա եղել էր ծեր պապի մոտ, անդունդներում խոր ծովի,
Նա տեսել էր իր մորաքույր գեղ կույսերին հավերժակյաց
Եվ լսել էր աստվածության գործերն հզոր, կորովի:
Բարձրացել էր Պելիոնի գագաթները ձյունազարդ,
Այց անելով քարանձավին իմաստնագույն Քիրոնի,
Արդեն գիտեր, որ կա աստված, կա անցավոր նաև մարդ,
Գիտակցում էր մարմինն, հոգին, չափն ազդարար բերանի:

Ինչպես ծաղիկ պարտեզի մեջ, բողբոջում էր սրատաենչ.—
Իսկ գոյության ներհակները նրա պայծառ հոգու մեջ—
Բախում էին միմյանց անդուլ, իբր ամեհի մուրճ ու զնդան.
Եվ ծաղկում էր նա օր ավուր: Թեդիսն հանգիստ չէր սակայն:
Միտք էր անում նա անդադար,— չմտածել չէր կարող.
Առեղծված կար նրա սրտում,— անլուծելի առեղծված—
Մահ և կյանքի խնդիրն էր այդ, մահ և կյանքը խրճքված.
— «Անմահ եմ ես,— մինչ իմ որդին,— իմ զավակը
մահացու»...

Իսկ Սոխքսը։ Այդն Սոխքսի մեջն անցավ ապարդյուն։
Աստվածուհին կասկած ունի։ Թող փարատվի կասկածն
ազգու,

«Ես անմահ եմ.— Թափանցիկ է աստվածային իմ արյունն—
Ինչ գույն ունի արյունն արդյոք երակի մեջ իմ որդու»։
Եվ այդ մարի հետևն ընկած՝ հավիրժահարս ծովանուշն
Ուղեց արդեն սուր ասեղով փորձել կյանքի արմատը,
— «Նկ, որդյակ իմ, փուշը հանեմ, փուշ է մտել քո մատը»։
— «Ոչ, իմ մայրիկ, ողջ է մատս, ես չեմ զգում ոչ մի փուշ»
— Ախ, իմ որդյակ, փոքրիկ ես դու և չես տեսնում դեռ
ոչինչ,
Փուշ կա անշուշտ ամեն բանում։ Մատդ բռնիր, տեսնեմ
գեթ»։
Եվ մանուկը մատն իր բռնեց։ Մայրն ասեղով փորփորիչ
Ծայրը մատի ծակեց այնպես, ինչպես բժիշկ խորագետ։
Անմիջապես կարմիր արյան կարմիր կաթիլն ընկավ գետին։
— «Մահկանացու,— գոռաց մայրը,— մահկանացու ես,
որդյակ,
Այլ միջոցի պետք է դիմել։ Ճար կը գտնեմ հմայակ»։
— «Սակայն ինչ է մահկանացուն»,— ճուտիկն ասաց
սրտագին։
— «Մահկանացուն նա է, որդյակ, ով աշխարհում մահ ունի.
Տե՛ս, մեր շուրջը ինչ կա չը կա, վերջ ի վերջո կը մահանա։
Բայց դու պետք է անմահ լինես քո մոր նման, իմ զավա՛կ,
Թեպետ գիտեմ — այս աշխարհում մահը միայն մահ չունի»։
— «Մայրիկ, եթե մահը միայն մահ չունի,
Մի՞թե իրոք դու չես կարող այնպես անել,
Որ մահն էլ իր մահն ունենա, ինչպես բոլոր այլ բաներն»։
— «Եթե մահը մահ ունենա,— մահկանացուն
կանմահանա,—
Բայց դու հիմա փոքրիկ ես դեռ, բան չի կարի խելքը քո»։
Ասաց Թեդիան ու վերջ դրեց այդ վիճմունքին մեծարգո։

Թեդիան ինքը աստվածուհի՝ գիտեր գործը անհասի,
— Աստվածության կերն է միայն անմահարար նեկտար,
նեկտար,

Եվ խմիչքն է անմահներին անմահ անողն՝ ամբրոզի։
Եվ դիցուհին մատհոժար բացականչեց,— «այդ է պատճառն,
Որ արյունն է աստվածների օդի նման թափանցիկ.
Պետք է ոնել և մանկիկին ուռեստներով առանցիկ»։
Ասաց այդպես և կատարեց։ Երեք տարի շարունակ
Խեղճ մանկիկին սնում էր նա ուռեստներով նրբագույն։
Միայն Նեկտարն և Ամբրոզին պետք է տային փրկություն։
Արդ՝ երբ անցավ երեք տարին, Պելիսն հնչեց քաջունակ.
— «Մեր դավակին պետք է դանել հարմարագույն
դաստիարակ,
Ութ տարեկան մանուկ է այժմ, կրթության է նա կարոտ»։
— «Համաձայն եմ, ասաց Թեդիսն.— քաջ Փենիքսը մեր
ծանոթ,
Եվ Քիրոնը աստվածասեր թող որ լինեն ուսուցիչ,
Ավելի լավ և ազնվագույն մենք չենք դտնի այժմ ոչինչ»։

Եվ Աքիլլեսն ութ տարեկան, ներհակով լի իր հոգին,
Քաջ Փենիքսին և Քիրոնին դարձավ այդպես աշակերտ։
Դաստիարակներն աստվածագյուտ—դիտության մեջ միշտ
վարպետ,
Իմաստալի, նուրբ կրթեցին դերաշնորհ մանուկին։
Նա սովորեց բժշկության և անցյալի պատմության
Անլուծելի առեղծվածներն ու խնդիրներ գոյության։
Հաճախակի կրկնում էր նա,— ինքը դեռհաս պատանի,—
«Բնության մեջ ամեն էակ և ամեն բան մահ ունի,
Այս աշխարհում միայն մահը մահ չունի»։

Եվ գլուխը դեռահասի հոլովում էր ողջ տիեզերքն,
«Ո՞րն է խինդը այս գոյության, ո՞րն է նրա դաժան վերքն»։
Մերթ ասում են,— անսահման է անծայրածիր տիեզերքն
այս։
Իսկ եթե նա պտտվում է մեկ գլխի մեջ դեռահաս,—
— Ո՞րն է,— ասեք, ավելի մեծ,— ողջ տիեզերքը, իբրև
հյուսվածք,
Թե՞ մի գլուխ, որի մեջ կա նրա ամբողջ կառուցվածքն։

ԺԱՄԱՆԱԿԸ ԱՌԱԳԱՍՏ՝
ԿԱՏԱՐՅԱԼ ԿՅԱՆՔՆ ԻԲՐԵՎ ՓԱՍՏ

1. ԱՔԻԼԵՍԸ ԵՐԱՋԻ ՄԵՋ

Վաթսուն տարի ես միտք արի կյանքի մասին մեծագով,
Վաթսուն տարի բերքը բարի ես իմ մարով փնտրեցի.
Ես անց կացա այս գոյության բոլոր, բոլոր դաշտերով,
— Եվ խնդություն, և պատերազմ, տանջանքն ու վիշտը փորձի.
— Ո՞ւր է հոսում այս գետը մեծ, արված խորունկ անուրջին,
Ով է ձգել կյանքը մարդու այս երերուն կամուրջին...
Բյուր-բյուրերը եկան անցան ժիր, խանդավառ, կամ փոշման.
Բյուր-բյուրերը կատակ դարձան այս հողմերին անդյուման.
— Կյանքի իմաստն ինձ ասացեք այս աղմուկի այսքան սեղ...

Ինչո՞ւ, յարաբ, անտառը կա բարձր սարի լանջերին,
— Մի՞թե, անցորդ, հեռևում ես անհայտ զանգի կանչերին.
Օվկիանոսը փրփուրի մեջ ալմբկում է անվախճան,
Մինչ նրա մեջ մահ, կործանում, նույնիսկ անմիտ խրախճան,
Իսկ նավերը, անթիվ նավեր ջրերի մեջ նրա հորդ
Պրոբրավում են և սուզվում են ուրախ, կայտառ կամ ձախորդ,
Մեծ Օվկիանոս։ Ինչ միտք ունի Օվկիանոսը անհատակ,
Ուր են սահում բյուր նավերը ժխորի մեջ, հողմի տակ,
— Ուր է գնում հոսանքը գոռ այսքան ճամուկ, այսքան խոր...

Գլուխս լիք այդքան մաքեր և գրանց պես բյուր-բյուրեր.
— Անցորդ ենք մենք ճիշտ անիմաստ, թե եկակոչ զուր հյուրեր...
Հարցերն անվերջ իմ շրթունքին,— իրադարձը անմեկին,
Պառկած էի կարծես մի տեղ,— և աչքերս փակվեցին.
Երազ տեսա պայծառ ու խոր. երազի մեջն իմացա,

Որ այս դեմի,— այս մեծ դեմի այն մյուս ափը ես անցա:
Երազն էր իմ անվերջ, երկար, խայտաճամուկ ու բազբաջ.
— Ավելի վառ, ավելի խոր, քան իսկ կյանքը իմ ամբողջ:
— Սե՞ր է երազ միշտ երփներանգ,— թե՞ երազն է մի նոր
կյանք:

Խորունկ երազ, անհայտ մուրազ.— արմանք-զարմանք ինձ
պատեց,
— Մի հեռավոր, մի անծանոթ վայրում մենք ինձ դիտեց:
Վեր նայեցի և ինչ տեսա.— խոր երթերի մեջն եմ ես...

Ես շարժվեցի և ո՞ւմ տեսա.— իմ ծանոթն էր դա՝ կարծես:
Ես ճանաչեցի, որ լավ հիշեմ.— ով է կանգնած իմ առջև.
Մինչ ավելի և ավելի ինձ մոտեցավ նա թեթև.
— «Ո՞վ ես,— ասա, լուռ հողածին: Որտեղ եմ ես: Ո՞վ
ես դու.
Ինչ որ գաղտնիք ես տեսնում եմ նայվածքիդ մեջ քո ապդու»:
Եվ մրմնջաց տեսիլը այդ խոսքը շիտակ, բացահայտ,—

— «Չե՞ս ճանաչում:— Աբիլլեսն եմ, քո սրտին միշտ
մտերիմ.
Կյանքի հովտից ես հեռացա,— վիշտերին ոխերիմ...
Այն օրվանից անց է կացել ավելի քան հարյուր դար
Մինչև հիմա ես շրջում եմ տիեզերքի մեջ անդադար,
Այս վայրկյանին և դու, և ես գտնվում ենք երթերում,
— Անծայրածիր տարածության կապույտ ու ջինջ շրթերում.
Տես, ասաղերն են այստեղ միայն մեզ սրտացավ հարևան,
Բայց այստեղից երևում է քո Հայրենի և Սեվանն»:

Ուրվականը խոսեց այսպես.— ես հարց տվի ինքնատես.—
— «Ո՞հ, Աբիլլես,— ողջ աշխարհի հանճարատես իմաստուն,
Ողջ երկիրը դղրդում է քո վենքերից կախարդուն.
Մի՞թե իրավ տիեզերքի մեջ մինչև հիմա դու դեռ կաս,
Դեռ ապրում ես լույս խոսքերով, վառ մտքերով անպակաս...
Ինչ իմաստով հիմա դու ինձ ակնարկեցիր «հարյուր դար»,
— Չէ՞ որ այդքան դեռ չի անցել, երբ որ եղար դու վառ:

Ճիշտը պատմիր կյանքի մասին և քո մասին ամեն ինչ.
— Դեռ ապրում են քո մտքերը, թե զարձել են բնաջինջ»:

Պատասխանեց ինձ՝ աշխարհի մեծ հանճարը վիթխարի.—
— «Այն օրվանից, երբ ծնվեցի, և իմ սրտում Ջևան էր միշտ,
Անց է կացել ճիշտ հարյուր տարի, շարն էր թեպետ ամբարիշտ.
Ավելի ճիշտ քեզ թվարկեմ.— քո ծննդյան իրոք ցարդ
Անց է կացել ճիշտ յոթ հազար երկար տարի ասողազարդ:
Մինչև հիմա, ո՞վ հայկազուն, քնած ես դու անդադար.
Պետությունները իսկ վերացան,— միայն է սիրտ ծիածան:
Քո ծնունդից անց է արդեն յոթանասուն սահուն դար,
Մինչ դու, խղճո՞ւկ, քնած ես դեռ և անտեղյակ տակավին:
— Աշխարհն ամբողջ փոխված է խիստ, այլ է կյանքը
բնավին.
Եթե ցանկաս, քեզ ցույց կը տամ բերքը նրա ինքնակամ:
Ես քո հարցին հաղարներով թվարկեցի ժամանակն.
Բայց դու գիտե՞ս, թե ինչ է նա,— քեզ կը պատմեմ, թե
կամենաս,
Լույս արևի պտույտներից ծնվում է նա օղակ-օղակ,
Եվ դառնում է մեր դլխի մեջ մեծ զորություն երկնահաս:

Բայց սպասիր, մենակ չեմ ես: Արյունակից ունեմ, տե՞ս,
— Պղատոն է ինձ հետ ահա,— վեհ Պղատոնն երկնատես.
Նա, որ կյանքում պերճ հորինեց իղձ ու ցնորք, երազանք,
— Անդրաշխարհումն ուզեց տեսնել այս գոյության մեծ
պարծանքն:
Եվ բացի այդ մեզ մեր ճամբին ասա պատահեց, ավագիկ,
Քո լավագույն հայրենակիցն—Բահակյանն Ավետիք,—
Նույնպես նրա ծնված օրից անց է կացել նույնքան դար,
— Նա էլ քեզ պես չի ճանաչում մեզ մոտիկ...
— Ե՞կ, Պղատոն, տես, Ավետիք,— արդ՝ այստեղ է
Համազասպն,
Մեր սրտակից ծանոթն է սա,— ո՛չ թե որպես մի բյուրասպ:

Իմ հարցը սոսկ թողնենք մի կողմ, տես փչում է մի այլ
հոգմ.

Անցյալն էր իսկ սխալ ու կոր, նույնիսկ անչափ անողորմ...
Եթե կուզես, թեզ ցույց կը տամ նոր վիճակը ես արդի.
Խնդիր չը կա հիմա արդեն ոչ խեղճության, ոչ զարդի:
Չուր են մարիրդ հուսահատ,— կյանքն անիմաստ չէր երբեք.
Կատարյալն էր նրա կայանն,— նրա պայծառ հեռատանն,
Որին պարարտ սերմեր ցանեց երկրի վրա միտքը սեղ:
Եվ արդ՝ հիմա անմահության ծաղկում է պերճ բուրաստան:
Մարի բարձր նվաճումով ճանապարհներն են ձգված,
Երկրից մինչև աստղերը լույս կամուրջ, ուղի է կարգված:
Մարդու միտքը, հզոր միտքը տեր է արդեն տիեզերքին,—
— Ա՜խ, այդ բանը երկրի վրա միշտ երազեց մեր հոգին,—
Եթե կուզես, թեզ ցույց կը տամ,— համատարածությունք
ինքս անդամ:

— «Քաջ Աբիլլես, քո ասածն է անմահության մի նոր ձոն.
Երկրի վրա մի՞թե հիմա կատարվում է բարձր ոգն...
Կատարյալ կյանք որոնելիս, մի՞թե կայիր նաև դու.
Ժիր խորհուրդներն հորինելիս մի՞թե խոր բույս էիր դու...
Որտեղ է այժմ մեծն Հոմերոս,— հավերժացած քո ոգին.
Նա, որ նույնպես արև դարձավ այս գոյության ճամբեքին...
Մի՞թե այդքան երկար եմ ես սուզված եղել քնի մեջ,
Որ և կյանքը փոխված է իսկ իր էության բնի մեջ...
Ցույց տուր շատով, թե կարող ես իրադարձը ներկայի,
— Ես կողմնակից եմ եղել քեզ, իբր երկնազոր արքայի»...

— «Ահա եկավ քո նախահայրն, հզոր Արա Գեղեցիկ,
Թող մատնակից լինի և նա մեր զրույցին առանցիկ:
Արդ, Նայիրի ընտիր զավակ, քնել ես դու շատ երկար,
Նայիր, արդեն ինքը հազար թիվն է ուղիդ անցկացել.
Մինչ քո օրից ժամանակը հազար բազար է բացել...
Տե՜ս, լանջերին հավերժության կերտված է նոր մի նկար,—
Եվ կատարյալ կյանքի մեջն էր, նրա էջն էր գերիմաստ:
Բայց կույր էինք մենք լիովին, չէինք տեսնում նրա լույսն.
Այդ լավ գիտե և Պղատոնն, իբրև կյանքի բարձր բույս.
Իսկ գոյության սահմանից դուրս ոչ ըղձանք կա, ոչ
իմաստ,—
Չքնաղ Արա, դու կարող ես հաստատել այս, իսկապես,—

Երկրի վրա հասակակից ընկեր էինք,— դու և ես։
Օրենքն ու դատ, կամ խղճմտանքն անց են կացել շատ
վաղուց,
Այդ ամենը կյանքը նետեց օվկիանոսի խոր նեղուցն։
Հավատ, բերմունքն և իրավունքն, հարար տեսակ ձիրք
ու ծես—
Եվ գիտությունն իր ձևերով, իշխանությունն իր թևերով,
Խիղճն ու խրատ կյանքի արմատն—բնական շար կորովն,—
Այդ ամենը—շղթա էին կիրքը զսպող իրական,—

Եվ կորած են հիմա իսպառ,— նրանց մասին— ոչ մի բառ.
Նորակառույց կյանքն է շողում իրրև սիրո նոր կամար։
Նայիր և տես, կյանքի իմաստն է գերագույն կատարված—
— Աշխարհն հիմա հավերժական իր մտքերովն է տարված.
Գնանք շուտով։ Ձեզ ցույց կը տամ նոր գոյության բերքն
ու բարը.
— Հինը չկա, քենը չըկա... ճշմարտության երգն է զարկ»...
Այդպես թվով մենք հինգ հոգի,— երեքը հայ, երկու-հույն—
Եթերի մեջ մենք միացանք,— նպատակը մեր փայլուն։

Իսկույն և եթ մեծն Աքիլլես, միշտ երկնագոր, լայնալանջ.
Մեզ ուղեկից դարձավ սրտանց,— իրրև ուղորդ եթերի.
Անդուստ արագ և միասին մենք սահեցինք աննահանջ
Դեպի երկիրն, որ փայլում էր շաղյունի մեջ լույսերի...
Սահում էինք մենք շա՜տ արագ. ճանապարհն էր հասարակ.
Ինչի՞ց պետք է վախ զգայինք.— մեր ուղեկիցն ախտարակ...
Շատ շրջաններ վառ աստղերի, մոլորակներ մենք անցանք,
Եթերի մեջ մենք սլացանք.—ոչ արկած կար, ոչ փորձանք։

— Երբ երևաց երկիրն հեռվից, մեծն Աքիլլեսն ասաց ինձ.—
— Տե՜ս, երկիրն է, ինչպես տուաջ, պտույտ գալիս շուրջը իր.
Եվ աստղերին ցույց է տալիս ստեղծագործ մուրճը իր։
Մթնոլորտն է,— նույնիսկ օդը.— մարդու կամքին հնազանդ,
Էլ չի հուզված օվկիանոսը ինչպես մրրիկ կամ զարգանդ։
Եվ ամպերը, և որոտը, նույնիսկ շանթը ու կայծակ,
Ենթարկված են, իրրև գործիք, խաղով կարգի, կանոնի,—

— Երկյուղ չը կա,— մենք կարող ենք իջնել ուղիղ,
Համարձակ.
Ուրախարիթ մեզ կընդունի հյուրընկալը անվանի...
Հարցում արեք, ինչ որ կուզեք. ես կը պատմեմ իրավիկ»:

ՆՈՐ ԳՈՅՈՒԹՅԱՆ ՇԵՄՔԻ ՄՈՏ

Երբ մենք եկանք ու տեղ հասանք, մեծն ուղեկից կանգ
առավ—
Մի բարձրաբերձ սարի վրա և սպասեց մեր հարցին:
— «Հլոր, ասա,— որտեղ է սա, ուր կանգնած ենք մենք
իրավ.
Ծովը այստեղ թիկն է տված, կարծես իշխանն իր բարձին»:
— «Բարձրիկ սարն է սա՝ Էվերեստ, իսկ մեր ներքև շեն
երկիր:
Մեր ժամանակ, թե հիշում ես, կոչվում է սա Հնդկաստան.
Իսկ այժմ այստեղ աճում է ճոխ, անմահարար բուրաստան:
Տես, Գանգեսն է ներքև հոսում, կյանքին անվերջ համակիր:
Բայց մոռացիր խոսքը «Իշխան», եթե կուզեք պատասխան...

Իշխանն ու մեծ, նվաստն, ստոր երկրի վրա էլ չըկան.
— Հավասար են մարդիկ հավերժ,— ինչպես հասկերն արտի
մեջ—
Չքնաղ, անհոգ և ոսկեպատ բյուր հասկերն են դուրեկան.
Ինչպես պայծառ բյուր ֆոսքերը ոդեշնչված սրտի մեջ...
Իշխանություն, կապանք և բանտ, ազգատություն, մեծի
փառք,
Պատիժ-պարգև, վրեժ ու ցավ, դատ ու դավեր,
խղճմտանք,—
Աղքատության բյուր ատելան, մտերմության բյուր
կապեր,—
Երբև հնարք կյանքի ձորում,— դալանապուսալ իբրև չափեր
— Անց են կացել այդ ամենը—իբրև անցյալ դժնաբարք,—
Իսկ փոխարեն,— բույսերի պես, լույսերի պես աշխատանք...
— Կյանքն է այստեղ պայծառ այդի,— պտուղն է սե՛ր
և ոգի:

Նայեք ահա, տարածված է ցեղը մարդու ամենուր.
Չը կան դասեր, չը կա շահեստ, չը կա խարդ կամ ոգահ.
Բարք ու վարքը խաղաղ ու խինդ ծաղկանց նման
ընդհանուր...
Չը կան այլևս մեծ քաղաքներ,— կիրքն ու հոգսը վաղեմի.
Չը կան նույնիսկ մեծ դղյակներ՝ արարքն անդուլ դրժեմի.
— Տեսեք, այստեղ սանձի տակ է, սանձահարված նույնիսկ
մահն:
— Արդ ապրում է ցեղը մարդկանց հանց պարտեզում
ծաղիկներ...
Այստեղ ահա, մեր ժամանակ հնդիկ ազգն էր միշտ ապրում:
— Հառաչանքի և տանջանքի ճանապարհները փորում...
Այլ է արդեն դարձը հիմա,— բուրաստան է ամեն կողմ.
Կյանքը բնավ էլ չի կազմում դաղանացած ցեղերի տոհմ:
— Կատարյալ կյանքը երազած՝ փառա է ահա, կիրառված,
Գոյությունը կատարյալի՝ հավերժությամբ պսակված»:
Ես զարմացա: Խիստ զարմացավ և եղբայրն իմ Ավեսիք
Բայց անտարբեր էր չափազանց ընկերն Արա-Գեղեցիկ:

Եվ մենք այդպես ոգևորված անդ չորս կողմը նայեցինք,
Լրսելով այդ, մեր վաղեմի անուրջները շոյեցինք...
Բնակչությունը մարդկության երկրի մեջքին մեծատես
Տարածված էր ծաղիկների համայնքի պես՝ փունջ ի փունջ:
Հազար ու բյուր խիստ խնկաբույր՝—ծաղկոց, այգի ու
պարտեզ,—
Աճում էին և շողշողում լույսերի պես անարատնջ:
Չը կար կռիվ, բախտի անիվ, մեծ ու փոքրը և պատիվ,
Լիրը ու շվայտ չը կար պայքար,— ցավերի մեջ հեծող
տկար:
Մարդիկ արդեն ապրում էին հանց ծաղիկներ հոգնաթիվ,
Բայց մտածող և սիրասուն,— հանճարի պես և խոսուն...

Ինչպես հողմից ծովի վրա ցայտում են մերթ բյուր վեսեր,
— Մեկ վայրկյանում իմ դլխի մեջ ծագեց հուժկու հազար
հարց.

Եվ ես կրկին մեր ուղեկցին հարցում արի թերակարծ,—
Եվ ցույց տվեց—նա միտումի կյանքում հոսող նոր գետերն,
— «Սա միայն, մեծ Աքիլլես, որ հասկանանք դոնե քեզ,
Կյանքը ինչպե՞ս կարող է ճիշտ աճել, լինել բարգավաճ,
Առանց կարգի, իշխանության, իրավունքի ազդեցիկ,
— Ուր չը կա մեծ, չը կա ասուված, պատիժ, պարգև
առանցիկ,—
— Անկարող է այնտեղ լինել բախտը մարդու բարեհաճ...

Չէ՞ որ դրան անթիվ դարեր դարձան փայլուն օրինակ.
— Իշխանության ըստինքներից կաթն էր բըղխում
կենարար...
Պետություններ եկան անցան,— փառքը գտավ հաղթանակ,
Պատիվ, օրենք և գաղտնատան, երդում, խոստում
խանդավառ,—
— Մի՞թե իրոք իզուր էին այդ ամենը, իբրև ծախք.
Կատա՞ղն էր այդ անմիտ բախտի, թե՞ պատմության դժնի
խաղք...
Ես չեմ կարող պատկերացնել կյանք երջանիկ, բերք ու սեր
Այնտեղ, ուր ճիշտ չը կա օրենք, խըղճմտանքի վեհ լույսեր.
Ուր կարգ չը կա ստեղծագործ, չը կա և կյանք մեծափորձ...

Ինչո՞ւ պետք է կործանվեին դըղյակները երկնագոր.
— Մի՞թե նրանք կյանքի համար պատիժ էին սըրամաշուկ,
Մի՞թե նրանք երկրի վրա իրավ չըկան և այսօր:
Իսկ ազգերը հնդիկ ու չին, հույն ու հռոմ, աշուրի
Լեզուները բազմաբազում, զենք ու կրոն, ամրոցները միշտ
կարի,
Դրանց գործը, դրանց փորձը.— բյուր-բյուրավոր, ինչպես
ծով.—
Դեռ կա՞ արդյոք այս վայրերում նոր գոյության նոր գծով—
— Ի՞նչ է Գանգեսն իր համերգով, Սակիա—Մունին իր
բերքով»:

— «Ո՜հ դու, անփորձ, դեռ չը գիտես, չես հասկացել
կյանքը նոր—
— Ծաղիկները նոր գոյության, իբր ասպղալի նոր շնորհ...

Եվ նման են քո հարցերը այն հնության հարցերին,
Երբ բնությունքը կամ իշխանը թիկն են տալիս բարձերին.
Երբ գնացքին այս գոյության հարկավոր էր զորք ու զենք,
Եվ աշխարհի գործերի մեջ իրավունքն էր կազմել շենք...
Ես էլ քո պես մի ժամանակ էլ առավել խստասիրտ
Կարծում էի օրենքն է միշտ հիմքը կյանքի բարեկիրթ:

Եղե՞լ ես դու երբևիցե պարտեզի մեջ, այգու մեջ, —
— Եղեմական ծաղիկների միշտ աննման բարքի մեջ,—.
Ուր փունջ ի փունջ շաղշաղում են նունուֆարը, մարգարիտ,
Զբնաղ շուշան, կամ մանուշակ, հասմիկ ու վարդ և գոհար.
— Չէ՞ որ բնավ հարկավոր չեն նրանց կյանքին ճշմարիտ
Ոչ օրենքը, ոչ քայլվածքը իշխանության հաղմահար...
Եվ առանց այդ միջոցների բողբոջում են նրանք միշտ.
Հողի վրա աննդաշատ, լույսերի մեջ և անվիշտ...

Ինչի են պետք հոխորտանքը իրավունքի,— զենքն ու զորք,
Կամ խղճմտանքն, ամոթն ու ահ,— պատիժ, պարգև ու
բորբոքն,—
Թե ոչ միայն իրրև միջոց լավն ու վատը ջոկելու.
Վնասն ու բարին միայն կերտող, շարն ու գեղն միշտ
խնդրող—
Կործանարար կրքերի դեմ դռները պիրկ փակելու...
Իսկ երբ չկան այդ կրքերը,—չկա շարիք, չկա գեղ.
Ինչո՞ւ պետք է գործեն նրանց միջոցները սրաթեղ:

Երբե՞ք, երբե՞ք,—ծաղիկներին հարկավոր չեն այդ զարդերն,
— Խղճմտանքի կարիք չունեն ոչ հասմիկը, ոչ վարդերն:
Երբ մարդկային պարտեզի մեջ չը կան շարիքն ու կրքեր,
Լույսն է միայն անդ շաղշաղում, հավերժական նաև սերն:
Երբ որ մարդն էր մի դա՛զան, զենքն էր նրան մի պաշտպան.
Եվ պատերազմ, և պետություն, կապանք ու բանտ, նվաճում,
Խոտում, խրատ, երդում, երախտ՝ գելոցների միայն բեմ.
— Իշխանության հազար տեսակ, հազար ձևի և սիստեմ—
Ծնվում էին լոկ շարադատ կյանքը կերտող պահանջում...
Մինչդեռ հիմա նայն է եկել տիր հասել խանդավառ

Եվ այդ բոլոր միջոցները ծովն է նետել նա ճամբին.
— Հասկանում եք,— ցեղն է մարդու ծաղկանց նման
վիհարար,
Եվ նոսած է հավերժության անմահացած նա թամբին...

Հասկանում եք, ինչպես հարկն է, դուք իմ խոսքը այդ մասին.
— Մարդն է հասել բյուր դարերի երանության երազին.
Ապրում է նա երկրի վրա ստեղծագործ ու բեղուն,
Ինչպես անվիշտ փեթակի մեջ ապրում է ճիշտ և մեղուն:
Մեղուները, որ ապրում են կյանքի բարձր բնազդով,
Դարիք չունեն գելոցների, որոնց երգն ես կրկնում դու.
Նրանց ոգին ստեղծում է լոկ շինարար իմաստով,
— Չը կա օրենք նրանց համար,— որի բերքն ես մեկնում դու.
Մեղուների բարք ու վարքին նման է նոր մարդու հոգին...

Ծաղիկների նման անվիշտ, ինչպես մեղու ժրաջան,
Ճոպիկների նման պարիշտ, մարքի ուժովն անվախճան.
— Բարմունքը խոր, բերմունքը նոր, կամքն ու տենչը
երկնատես.
Նոր ծաղիկներ հանճարի տեր.— այդ է կյանքի նոր
հանդեսն:
Կատարյալը գաղափարի, կատարյալը սրբության—
Որոնց կարոտն էր ինձ հուզում միշտ օրերին իմ վաղանց.
Այդ է, իրավ, որ տեսնում ենք նոր գավիթում գոյության.
— Ծաղիկներն են անմահության կյանքը զուգել
դերազանց.—
Բազմաբարության, ինչպես ծաղկունք, արարչության խոր
ակունք»...

Այն ժամանակ հարցում արեց հզորն Արա Գեղեցիկ.
— «Մեծ Աբիլլես, դու գոյության բարքն հնչեցիր ազդեցիկ:
Ես էլ քեզ պես տիեզերքի մեջ դեգերում եմ սրտատենչ:
Բայց ինձ ասա,— ի՞նչ միտք ուներ արուվական պատերազմն,
Որի հզոր քաջն էիր դու, որի ահեղ կոկորդի մեջ
Ոչնչացան անթիվ ազգեր բարք ու վարքով բյուրամասն:
Ինչ միտք ուներ սերը սրտիդ՝—Բերիդուհին, Հեղինեն.

Ի՞նչ միտք ուներ վեղկեղափայլ հրապույրով Շամիրամն,
— Ծնողի սերն, որով անչափ հարուստ էր իմ հայրն
Արամ,—
Ինչ էր կազմում այն ժամանակ կյանքի բարձր ապավենն»:

Եվ Աքիլլեսն ասավածատես պատասխանեց և ասաց,—
— «Ես դեռ մանուկ լսում էի իմ դիցուհի մոր պատմածքն.
Ես լավ գիտեմ, որ կյանքի մեջ միայն հեքիա՞թ է
ասավածն—
Մարդն է միայն հավերժական բյուր ուժերի մի կերտվածք:
Աստվածներն են կյանքը կերտող տենչանքների ճոխ
ծնունդն:
Օրենքներն են կիրքը զսպող, կյանքը սանձող երասան.
Դարերի մեջ նրանց գործը այն է եղել անսասան,
Որ թույլ չըտան մարդու ցեղին գլորվելու դեպ անդունդ:
Մայրս հաճախ ասում էր ինձ, մարդն իր մարքով
ասավածազան
Օրրոցի մեջ իր էության եղել է բիրտ մի գազան:
Եվ կերտել է մարդու հոգին գազանազուսպ նախագրյալ,
Որ բարձրանա գազանը այդ դեպի կյանքը կատարյալ:

Տրվական պատերազմն էր, որով դյուրված էի ես,
Ելևէջը դեպ կատարյալն ընթացք բռնած գնացքի,
— Նոր գոյության մեջտա կամուրջները հաստատող
օրենքի,—
— Կյանքի շարիքն արմատախիլ անող գործը երկնատես:
Սերը կնոջ, կիրքը սիրտ, ծնողի գութն, սրտի վարույթն—
Բերիզուհին և Հեղինեն, Շամիրամի կրքի հույզն,—
Այդ ամենը բույսեր էին,— մեր հին հոգու այդիկութն,
— Անիվները այն գնացքի, որ սահում են դեպի լույս:
Մինչ գնացքը հասել է այժմ նավակայանն աննման.
Պետք չեն հիմա հին անիվներն հանձարապյուտ նոր կյանքին.
Կատարյալ է այժմ էությամբ, իր բնի մեջ մարդու հոգին:
Պետք չեն բնավ խիղճ կամ մահակ, օրենք ու կիրք,
երասան:

Կարիք չը կա, ո՞վ ընկերներ, երկար խոսել այդ առթիվ,—
Մենք կը շրջենք կյանքի դաշտը,— Ձեզ ցույց կը տամ
նո՞ր հաշիվ»...

Ներկայությամբ Պղատոնի, ինքը նույնպես անվանի
Հարցում արեց այն ժամանակ Ավետիքը քաջունակ.
— «Դու հիշեցիր սիրո մասին.— նոր կյանքն ունի՞ սիրո
սեր,—
Հասկանո՞ւմ են մարդիկ արդյոք հավերժական սիրո
լույսեր...
Եվ բացի այդ քաջ Աքիլլես,— թերակարծ եմ ահա նա.—
Ազատության սուրբ կրակը վառվո՞ւմ է դեռ կյանքի մեջ,
Ապրո՞ւմ է նա իբրև ասենչանք մարդկության նոր գոնդի
մեջ»...

Պատասխանեց մեծն Աքիլլես,— սիրան իր լույսի
ասպարեզ—
— Նոր գոյության կամարի տակ սերն է ծաղկում
անպակաս,
Բայց ոչ այնպես, ինչպես առաջ—կրքերի հետ համակված,
Ծաղկում է սերն,— ինչպես նա կա բույսերի մեջ հանապազ,
Սերը սիրո, ինչպես նա կա ծաղկանց միջև իբրև փաստ,
Ծաղկում է նա իբրև վերին, հավերժության նոր բնազդ.
— Կյանքի խորքում սեր կա սիրո,— անմահության
վարակված...

Լսիր պարկեշտ մեր Ավետիք,— ով հայ ազգի անդրանիկ.
Ազատությունն, իրավ, չը կար հին ազգերի կյանքի մեջ
Նա չէր կարող բնավ լինել, երբ հոգին էր շղթայված.
Նա շողում էր միայն, միայն ազգերի խոր գանգի մեջ—
Իբրև երազ նոր փրկության, իբրև կարոտ երկնատենչ:
Նա չէր կարող բնավ լինել, երբ կար օրենք, իրավունք,
Երբ զսպում էր կյանքը մարդու իշխանության բիրտ
բերմունքն:
Իշխանությունը մեծերի, խղճմտանքի կապանքն հաղթ—
Միշտ կաշկանդել էին հոգին բյուր ձևերով այլանդակ.

Մինչդեռ հիմա կյանքի հովտից վերացել են ուժերն այդ,
— Մարդու հոգին ազատ է այժմ, ինչպես սիրտ սուրբ
բնապ.
Ազատությունը ծաղկում է հանց հավերժի հզոր փաստ:
— Կյանքն է հիմա դարձել միայն իմացության հաղթանակ.
Սակայն լսեք, որ ձեզ պատմեմ իրադարձը միառմի.
Մեծն Աքիլլեսն հարգում է ձեզ, ինչպես սերը մտերմի:

Բյուր գործերը, որ անցել են Դանդեսի լայն ափերին,
Բյուր փորձերը, որ հանձնել են խելքը մարդու շափերին,
— Կորած են միշտ և հավիտյան, էլ ետ չեն գա բնավին:
Տանջանք ու վիշտ, արյուն, արցունք, իշխանության
դսպանակ—
Շարժվել են միշտ, ինչպես գործող ժամացույցի ճոճանակ,—
— Գործը իրենց կատարել են, էլ չեն դառնա նոր նավին...
Կյանքն է եղել երկրի վրա պարարտացող մեծ այդին.—
— Պարարտացման կարիք չկա,— երբ հասած է վերջ.
հոգին...
Ի՞նչ կարող եք ասել դրան—կյանքն է սիրտ վերջարան...

Սակիա-Մանի և նրա պես բյուր բյուրերը բազմածես
Տուրք են եղել ժամանակին,— վերքերի մեջ խորասույզ.
Ալիքները օվկիանոսի նույն այդ երգն են միշտ հնչում,
Խոր մտքերը մեծ Թինոսի նույն մեղեդին է կանչում...
Իսկ երբ չը կա ինքն օվկիանոսն, կամ հորձանքը
հոգմահույզ,—
Չը կան նաև ալիքները, չը կա նույնիսկ և փրփուր,
Երբ սրտի մեջ վերքեր չը կան,— չը կա վշտի և աղբյուր...
— Բյուր ազգերի խոր ինքնության հարցն էր հնում
առեղծված,—
Մինչդեռ հիմա կյանքը մեկ է,— ազգությունները հղկված...

Հաղար ու մեկ բազմալեզու ազգություններ ու ցեղեր
Դարձել էին խեղճ մարդկության մեծ էության կոտորակ.
Լայն հորիզոնն այլանդակող, ինչպես խորշեր կամ շեղեր—
Գոյության մեջ կաղմել էին անտանելի խոտորակ:

— Ամեն մի ազգ ջոկ լեզվի տեր, այդեկուքը իր տարբեր:
Կործանված են վանդակները,— չքկան հիմա կյանքի մեջ.
Վերացված են լեզուները բաժանարար բարքի մեջ.
Մե՞կ մարդկություն և մե՞կ ոգի, մե՞կ հայտնության նոր
կարկաչ.
Մեկ է լեզուն ազգությունների, մեկ է լեզուն ղեկիյուռի.
— Թովքը մեկ է և անսահման եղեմական համբույրի.—
Մեկ է լեզուն և մարդկության, որ ջանո՞ւմ է միշտ առաջ»...

Այդպես մեկնեց մեծն Աքիլլեան,— և մենք սարից իջանք
ցած.
Եվ շրջեցինք ողջ երկիրը նոր բարքերով հիացած:
Եվ մենք տեսանք խոր զարմանքով,— մարդու կյանքն էր
փոխված խիստ.
— Հիմքերն էին նոր գոյության խորունկ, պայծառ ու
հանգիստ:
Մարդու դեմքին կնճիռ չը կար,— չը կար անզոր, կամ
տրկար.
Ճիշտ հավասար էին նրանք և արտաքուստ և ներքուստ,
— Նույնիսկ նրանց մարմնի վրա զարմանալի նուրբ
հագուստ...
Կյանքն էր ամբողջ կարծես իրոք հավերժության նոր նկար.
— Ասես ծաղկոց, կարծես փեթակ կյանքը մեկ էր լուսնի
տակ:

Մեկ էր լեզուն բյուր բյուրերի, կենցաղը մեկ—բարքը մեկ.
Հանրային էր ճիշտ ամեն ինչ. չը կար բնավ «իմ» և «քո».
Սիստ ու կացը պայծառ ու ջինջ, խոր խնդության սարքը մեկ
— Ապրում էին բարձր մարի արարչության միշտ ներքո...
Ոչ սեփական, ոչ ապական, ոչ առանձին ընտանիք,
Ոչ հոգեկան հուզմունք ու կիրք, ոչ բանսարկու, ոչ դաղտնիք.
Չը կար բնավ ոչ մի կարիք,— բարիքները անբաժան,
Անհուն ազգյուր զավակցության, ամեն ինչ լի և բուրյան:

— Չը կար ամբոխ և կամ խուժան, չը կար իշխող կամ
դաժան...
Երգերի մեջ, սրտերի մեջ չը կար ոչ խանդ, ոչ խտիր,

Եվ կնությունն անհատների առասպել էր, կամ հեքիաթ,
— Ամուսնությունն անհատական,— ցնորք էր իսկ
անարմատ...
Այլ այնպես էր գործն ընթանում, ինչպես ծաղկանց
խնջույքում,
Մանուկները միշտ հանրային հոգսերի տակ մեծընթեր,—
Եվ հոսում էր կյանքի գետը հավերժական հաճույքում...
Ուր եդեմի կա բուրաստան, սերը հավե՞րժ, իսկակա՞ն.
Չեն էլ կարող նույնիսկ ծնվել «բռունցք», կանոն կամ
մական.—
— Անմահարար լույսերի մեջ արարչական նկարի—
Ստեղծագործ հանճարը կար գործին լծված մակարի...
— Խորթ ու բորթից բյուր կրքերի—հրդկված հովին
անթերի։

Հրդկված,— այս,— հրդկված, սակայն, աղբահարից ու
կեղտից,
Սոսկ գազանին միայն հատուկ ճանապարհից ու խորթից...
Իսկ վեհարար հանճարի մեջ հոգին հարուստ, բազմերանգ,
— Անջնջելի նոր ձիրքերի, նոր երգերի ստարանք։
Պայման չրկար գոյության մեջ, սահման չրկար վերելքի,
— Արքայություն բանականի, գովքն ու արվեստը խելքի։
Բյուր բյուրերի վարմունքի հիմքն—ճշմարտատես մի
բնազդ,—
Կյանքը իր մեջ դաել էր իսկ հավերժության խոր
պատվաստ...
— Եվ շրջեցինք մենք շատ երկար—հարց ու փորձը
հարթակար։

Ա.ՅՅ ԱՈՒԱՉԻՆ

Մեր աչքի դեմ անդ, ոչ հեռու, կար մի ավան ծաղկաշուրջ
Մենք կամեցանք այնտեղ գնալ, բայց պատահեց մի բնիկ,
Քայլում էր նա մեղմ ու հանդիստ. դեմքը խաղաղ,—ինքը
լուրջ,
Ամբողջ հոգով, ամբողջ մարմնով նա մեզ թվաց երջանիկ։

Եվ Պղատոնն ասաց իսկույն.— «Հարցնենք, տեսնենք,—
ո՞վ է սա—
Իր էության տեսքով, կարծես, երանության ծո՞վ է սա։
Եվ մոտեցավ Մեծն Աքիլլես, հարցումն արեց բարեհույս։

Ժպտաց ընիկն արիասիրտ, կարծես ներքուստ զարմացած.
— Բարեկամնե՛ր, մենք չգիտենք, ինչ ասել է «դյուղացի».
Ինքնության վայրերն են մեր—բոլորը պերճ, ծաղկաղարդ,
Դավակցության երկիրն է սա,— լիության մեջ ամեն մարդ։
Հազար-հազար տարի առաջ եղել են ճիշտ դյուղ, քաղաք,
— Պշրանքի բույն, ազգատության և՛ քավարան, և՛ ծուղակ.
Սակայն հիմա հնքիաթ է այդ,— ես գրքերից գիտեմ այդ։

Մենք ապրում ենք իբրև ծաղիկ, միշտ հավասար,
լուսացայտ,
Եվ չգիտենք ոչ քաղաքներ, ոչ քաղաքի կանոններ.
Չը կան այստեղ արտադրության ժանտ ու ժխոր
կենտրոններ։
Այս բոլանդակ երկրի վրա միայն երկու սուրբ կետ կա,
Որ մենք սրտանց համարում ենք մեր էության լույս
աղբյուր.
Որ տալիս են մեզ գոյության շնորհք ու սեր բյուրաբյուր։
Ստեղծագործ հոգեկանի և անսկիզբ նյութականի
Արարչական միացումն է այժմ ամենքին այստեղ հայտնի։

Մոքի կաճառ, սիրտ տաճար—կենտրոններն են մեր
ներկա,—
Իբր անկոպար այս տիեզերքին իշխող գլուխ, իբրև գանգ,
Շողշողում են փայլենազարդ, կյանքին տալով հրահանգ։
Ես գնում եմ հիմա գործի, հանճարաստեղծ մի փորձի.
Մոքի կաճառն ուղարկել է կիրառումի մի նոր գյուտ.
Պետք է կազմել մարդու նման միտք արծարծող հզոր
նյութ,—
— Զորումն այստեղ աշխատում են ընկերներս դրացի։
Արդ՝ գնացե՛ք այս մեծ ավանն և կիմանաք ամեն բան»։

— Ո՞ւմ մոտ գնանք,— ով կը լինի մեզ հյուրընկալ,—
բարեկա՛մ
Ուրախասիրտ հարցրեց իսկույն մեր Ավետիքն այս անգամ:
— Հյո՞ւր և օտա՛ր կամ հյուրընկալ մենք չգիտենք,
ընկե՛ր ջան.
Ինչ որ այստեղ աչքդ տեսնի,— պատկանում է ամենքին.
Հարմարություն, սենյակ և տուն. ուտեստ, զվարճ,
և ամեն ինչ—
— Արժանի են և՛ քեզ, և՛ ինձ—կենցաղն է մեր նուրբ
ու չինչ:
Բարիքների բաժանումներ չի ընդունում մեր հոգին:
Կանգնեք ահա ճանապարհի ժապավինված եզերքին այդ,—
Նա ինքնաշարժ ձեզ կը տանի Ավանը մեր սիրաշա՛տ»:
Եվ հեռացավ ընկերն իսկույն: Իսկ Աբիլլեսն ասաց մեզ.
— «Դո՛ւք ընկերներ, այժմ խոսում եք հին բարբառով ձեր
հոգու.
Մինչ բառերը, բառարանը մտքերին են փոխարկու:
Այլ է կյանքը այս աշխարհում, և բառերն են այլածին.
Մարդիկ այստեղ չեն հասկանում—հյուր, հյուրընկալ, տեր,
օտար,
Պարտք ու պատիվ, ձիրք ու պարգև, պատիժ, պատվեր
կամ վտար,—
Սրմատները այդ ամենի վերացել են միշտ հոգուց.
— Հավերժությունն ստեղծել է սրտումն այդի նորարո՛ւծ»:

Եվ կանգնեցինք ճանապարհի մենք եզերքին ինքնաշարժ.
— Սլսլալով դեպի ավան նա մեզ տարավ քաջավարժ:
Մենք առաջին տունը մտանք: Առջևը կար մի պարտեզ:
Այդի չէր այդ, այլ երկնաբույր դեղդեղանքի մի հանդես,
Կանգնած էին անդ դարավոր կաղնիները երկնագեղ:
Տերևախիտ ճյուղերն հզոր վեր կարկառած բազմակի.
Բարդիները շնչում էին սոսավյունով մի շքեղ.
Եվ տիրում էր անդ ամենուր կենդանության նո՛ր ոգի:
Շարված էին ընկուզենիք —բյուր ճյուղերին բյուր ընկույզ.
Ժպտում էին նաղանքի մեջ ոսկեխնձոր շատ ծառեր:

Խաղողենին ցույց էր տալիս չնաշխարհիկ իր ողկույզն.
— Եվ հնչում էր այդին, կարծես, անմահական նոր բառեր։
Ծաղկազվարճ երազի մեջ վարդերն էին բյուր տեսակ.
Նրանց վրա սոխակների դայլայլիկն էր սիրատենչ,
Բուշունները կանաչ, կապույտ հրճվում էին բերքի մեջ...

— Այդի՞ չէր այդ, այլ գոյության փարթամաճոխ մի պսակ։
Շատրվաններ բյուրեղակերպ ցայտում էին շեշտ վերև,
Եվ օդի մեջ հյուսում էին կախարդական կամարներ.
Իսկ եթերում լույսն էր ոփոում ճաճանչագեղ պերճ արևն.
— Հավերժությունը հաշվում էր կարոտների դամարներն։
Երազի պես սլանում էր դեպի հեռուն ծառուղին,
Շշնջո՞ւմ էր և կանչո՞ւմ էր անընջողին դեպի խորք։
— Կատարյա՞լ էր անդ ամեն ինչ և սահո՞ւմ էր դեպի
նորք.—
Նա շնչում էր և կանչում էր կյանքի հույսը փնտրողին։

Մենք կանգ առանք այդում անծես, և խոսքն հնչեց Աքիլլես.
— «Իմ պապերը երազել են պերճ կույսերին Հեսպերիդ
Երանավետ կղզիներում սակեխնձոր այդու մեջ,
Ուր երկնաբույր աճում էին պտուղները մարգարիտ—
Այստեղ ահա կիրառված է այդ երազը սրտատենչ»։

Այդին թողած՝ մենք ներս մտանք,— արմանք զարմանք մեզ
պատեց.
Մարմարակուռ, լուսապայծառ և մարրագույն դահլիճ մեծ.
Սեղանի շուրջ բազմոցներին նուրբ նստոտած շատ մարդիկ
Լսում էին մեկի սահուն մեղմ պատմվածքը գեղեցիկ։
Հագած էին բոլորն համեստ, միատեսակ պերճ հագուստ.
Նուրբ գլխարը թափանցիկ էր, թեթևագույն, հանց շղարշ—
Որի տակից երևում էր փայլուն մարմինը ներքուստ։
Շուրջն ամեն ինչ ազդեցիկ էր, տպավորիչ և խիստ պարզ։
Մենք կանգ առանք դահլիճի մեջ, սպասելով հրավերի։
Սակայն մարդիկ անշարժ էին, հրավիրող մեզ չեղավ,
Եվ Աքիլլեսն իսկույն խոսեց, զգացմունքով ինքնասեր.
— «Վա՜վ ընկերներ, հեռուներից եկել ենք մենք սարշավ,

Եվ ուզում ենք ծանոթ լինել ձեր հոյակապ այս կյանքին:
Թույլ կը տա՞ք մեզ նստել այստեղ և ձեզ լսել սրտագին»:

Ու վեր կացավ մեկը խակուն, պատասխանեց մեղմաձայն,—
—«Թույլ տալ, չը տալ մենք չենք կարող: Վսեմական այս դահլիճն
Պատկանում է և՛ ձեզ, և՛ մեզ, և՛ բոլորին, իբր հմայք.
Դուք կարող եք բազմել, լսել նաև խոսել, ով կարիճ:
Ներս մտնելիս պետք է անշուշտ այդ անելիք համարձակ.
Ձեր տունն է սա,— մենք բոլորս ձեզ կը լսենք այս հարկի տակ»:

Եվ փոխարենն Աբիլլեսի հայ ազգի սերն՝ Ավետիք—
Դեմքին ժպիտ՝ այսպես խոսեց ճշմարտացի ու զգոնիկ.
— «Նկվորնե՞ր ենք մենք խակապես, զգացմո՞ւնք կա տոնքի,
Կանգնած այստեղ դահլիճի մեջ, սպասում ենք ծանոթի.
Ինչպե՞ս նստենք առանց սիրտ և բաղդրատենչ հրավերի:
Եվ բացի այդ՝ անհայտ է մեզ ձեր քնքշական կազմն ոգի»:
Բայց նստեցինք բազմոցներին: Ավետիքը իմ կողքին:
Պղատոնը քաջահանձար ոգևորեց իր հոգին.—
— «Ձի՞ր կարելի ձեր զրույցը մի փոքր անել դյուրաբեկ.
Պատասխանե՛ք մեր հարցերին, որ գեթ լինենք իրազեկ»:

Կանգնեց մեկը ու մեզմ ասաց,— «Ձեր հարցերին, ընկերնե՛ր,
Հիշա մեկնություն դուք կըստանաք: Սիրատենդ այս համայնքն
Չի՛ հասկանում,— ի՞նչ է տոնքն, ի՞նչ է իրոք հրավերն,
Ծաղկանց նման, բայց բնական, մենք վարում ենք անդորր կյանք:
Ոչ տոնքի, ոչ կարոտի կարիք չունի այս երկիրն,
Ինչ որ պետք է այս գոյության կատարում ենք անխուսափ,—
— Անծանոթ են մեր սրտերին խիղճն ու երկյուղ, կամ սարսափ:
Մեր դարձերին, մեր փոքձերին բնություն է համակիր:

Մեր վարմունքն է միշտ մեր հոգու՝ և համայնքի սոսկ
պահանջն,
Մենք գործում ենք միշտ ուղղամիտ,— միշտ հաստատուն,
աննահանջ։
Ընկերներիս կազմի մասին ասա հարց եղավ թեակարծ.—
— Սեղանի շուրջ նստած ենք մենք ազամարդիկ և կանայք.
Տարբերություն չը կա մեր մեջ,— կյանքը մեկ է,—
մի հմայք։
Հարցմունքին միշտ կա պատասխան։ Արդյոք ունե՞ք դուք
այլ հարց»։

Եվ Աբիլլեան այն ժամանակ խոսքերն հնչեց քաջունակ.
— «Բարեկամնե՛ր, Պելիսածին Աքիլլեան եմ ես հայտնի,
Ծանոթ եղեք իմ համախոհ ընկերներին անվանի.
Որոնց մասին կարդացել եք դուք գրքերում շարունակ։
Սա—Պղատոնն, իմ իսկական հայրենակիցն, ավագիկ,
Անձնատուր էր մի ժամանակ ցնորամիտ երազանքին։
Սա — Նայիրյան թագավորն է՝ հզորն Արա-Գեղեցիկ.
Երբեմն ընկավ ձեռքը մահվան, բայց հարություն առավ
կրկին—
Իսկ սա՝ զավակն է հայ ազգի Ավետիքը մեծապանծ,
Սա էլ զաթի Համազասպն է, որ խոսում է մերթ անսանձ։
— Մենք ուզում ենք ծանոթանալ նոր աշխարհի
նիստուկացին.
Արդ՝ ո՞վ եք դուք։ Ի՞նչ տեղ է սա։ Պատասխանեք իմ
հարցին»։

Եվ խոսքն ասաց մեկը իսկույն,— գեմքը պայծառ, ինքն
արբուն.
— «Պերճաբանակ, սիրասնունդ ավանն է սա լուսաշող
Գտնվում է նա ձախ ափին Գանգես գետի երկնասուն։
Այս ավանում մենք ապրում ենք հինգ հարյուր մարդ
մեծաճոխ,
Հավասար ենք մենք բոլորքս, թեպետ տարբեր հասակի։
Մեր բարքերն են, մեր զգեստը, մեր սարքը մեկ տեսակի,
Ահա ձեր դեմ ազամարդիկ, նաև կանայք իբրև նմուշ,—

— Մեր բոլորի կյանքը մեկ է, միշտ քաղցրաձայն ու
քնքուշ:
Եվ իմ անունն է Սիրաշունչ,— ընկերներս սրտաուշ»:

— «Համաձա՞յն ենք,— դու մեր միտքն ես, դու մեր
սիրան ես—Սիրաշունչ,—
Մարդկային ցեղն երկրի վրա ինչպես է այժմ ապրում,
ընկեր,
— Հայնժամ ասաց մեծն Աքիլլես,— քանի՞, քանի՞ կան
ազգեր:
Ինչ լեզվով են մարդիկ խոսում: Ո՞ւր է կյանքի գետը
հոսում,
Եվ կա՞ն արդյոք ներհակ բարքեր, կապ ու կռիվ
բազմաբազում»:

Պատասխանեց մեզ Սիրաշունչն, հայացքը խոր ու
հանդարտ.—
— «Երկրի վրա ապրում են այժմ մարդիկ թվով տաս
միլիարդ:
Քաղաք չը կա, կենարոն չկա, ավաններ կան տաս
միլիոն.—
Եվ ապրում են բոլորն անդորր, սերը սրտին իբրև ձոն:

Հասկանո՞ւմ ես,— հավերժության կամքն է գործում
իսկական.
Այս աշխարհում միայն մարդիկ,— տարբե՞ր ազգեր բնավ
չկան:
Գրքերումն ենք մենք կարդացել,— դեռ տաս հազար տարի
առաջ
Երկրի վրա ապրում էին անթիվ ազգեր բարդավաճ:
Մինչ ժամանակն, ձեռքին բռնած հավերժության խարտաղանն,
Իր անսայթաք մեծ դնացքի անիվների արանքով
Ի մի ձուլեց քյուր-քյուր ազգեր, հիմնեց մեկ ազգ երկնագով:
Եվ ապրում են նրանք հիմա,—կյանքն անվրդով, արբազան:

Դու հարցրեցիր լեզվի մասին: Բայց դու գիտե՞ս,—ինչ է
լեզուն,
Մանրասնին արդեն գիտեն գիտնականներն երկնասուն —
—Հոգու հանդեսն է մեր լեզուն,—պարտեցն հոգու
պաղավեստ,
Որ կապում է մարդու կյանքը հավերժության գործի հետ:
Հավերժության դարբնոցի մեջ լեզուները բյուրաբյուր
Միացել են ու կերտել են մեկ պերճ լեզու ընդհանուր:
Այդ լեզուն է, Մեծ Աքիլլես, որ կապում է ինձ ու քեզ,
Մեր այդ լեզուն հասկանում են թռչուններն իսկ երկնածես:
—Մեկ է լեզուն երկրի վրա, մեկ է անմահ փառքը նրա:
Մենք ապրում ենք ավաններում հեզ ու խաղաղ, անվրդով.
—Չը կան կռիվ, կրքերն անթիվ, ոչ կախարդ կա և ոչ թով:

—«Բայց ինչպե՞ս է տեղավորված երկրի վրա տաս
միլիարդն.—
—Բացատրեցեք մեծն Աքիլլեսն,—հողի պակաս չի զգում
մարդն:
Իսկ տաս միլիոն այդ ավաններն արդյոք կապված են իրար
հետ:
Կյանքը ունի՞ կրոն, օրենք կամ աստվածներ երկնագետ:
Կա՞ պետություն երկրի վրա, իշխանության իրավունք,
Ի՞նչն է դրդում դեպ կատարյալն և դեպի վեր մարդու
վարմունքն»:

Պատասխանեց մեզ Սիրաշունչը չափազանց քաջալուրջ.
«Հողի պակաս մենք չենք զգում: Մեծ օվկիանոսն շատ
վաղուց
Խաղցրել ենք, խորացնելով անեզրական իր հատակն.
Մենք այդպիսով ստացել ենք ազատ հողեր բազմաբույծ:

Եվ բացի այդ՝ դաղթ է գնում դեպ հեռավոր մոլորակն:
Միշտ միմյանց հետ կապված են սերտ ավանները
բազմապես
Բյուր թելերով, բյուր կապերով տեսանելի և անտես:
Կատարյալ է մարդկությունը, նրա հոգին անվրդով,
—Ո՛չ մի կրոն, ոչ մի օրենք, ոչ աստվածներ և ոչ թով:

Եվ աճում են մարդիկ խաղաղ,—ինչպես հասկերն արտի մեջ.
Չերդ մեղուները փեթակի, ինչպես ծաղկունք սիրատենչ:
Հարկավոր չեն ծաղիկներին ժանտ իրավունք, պետություն.
Պետք չէ շղթա, երբ հոգին է ինքը իր մեջ զվարթուն»:

—«Իսկ ինչպե՞ս են ազդում կյանքին բնության դառ
եղանակները.
Անձրև, կարկուտ, բուք և բորան, ամառ, ձմեռ և աշուն:
Ունե՞ք արդյոք արտին հորդոր և խանդավառ զվարճանքներ.
Թատրոն, արվեստ, երգ ու նվագ, խաղ ու պարեր խշխշուն:
Իսկ ձեր կանայք,— սիրտ հմայքն,— խանդը նրանց, տրփանքն
ու կիրք.
Վիշտ ու թախիծ, ցավն ու կսկիծ, ստեղծագործ տաղանդն ու
ձիրք
Ամուսնությունն ու հարսանիք, կնոջ երկունքն ու ծնունդն
Վեհ ուսմունքը մանուկների, իբրև սիրտ նոր սերունդ...
Կա՞ վերջապես, ձեր աշխարհում փառատարդև ընտանիք
Որ գոյության հիմքն է վանիմ,—հիմքը սիրտ երջանիկ»:

Եվ սկսեց Սիրաշունչն իր պատասխաններն աշալուրջ.
—«Եղանակները շատ վաղուց հպատակ են մեր կամքին.
Մեր ցանկությամբ պլանի տակ օգտագործվում են նրանք,
Միտքն է հիմա իշխում նրանց, ինչպես քաջն է տանձում
ձին.
—Գարուն, ձմեռ հանդես կդան, եթե միայն կամենանք:
Մեր տները մի հարկանի, մեր հագուստը թեթևագույն,
Մեր դռները առանց փակի,—ձեր գալուստը սիրատուն:
Հին աշխարհում աշխատանքն էր ջանք ու եռանդ խիստ
համառ.
—Սակայն հիմա աշխատանքն է դուտ—զվարճանք մեկ
համար:
Արտադրության գործն է կայուն: Մեքենաներ բյուրաբյուր
Ստեղծում են կարիքների հոդածության հորդ աղբյուր:

Թատրոնն ի՞նչ է,—հոգում բաղխող բյուր ուժերի
եռանդն եռուն.
Հին մարդու մեջ մերթ բռնկվող մրրիկների ասպարեզ:

Բայց փոխված է հիմա հոգին՝ կատարյալին սեւեռուն,
— Մրրիկ չը կա, որ կատարի հոգու խորքում իր հանդեսն։
Անվրդով է մարդու հոգին,— ոչ մի կռիվ, ոչ մի կարոտ...
—Նրա հիմքում կրքեր չը կան,—չը կա հուզմունք ու
վառոդ,—
Կատարյալին հասած սրտում կրքի կորով,—կայծ չըկա,
—Հարկավոր չէ նրան բնավ դրսևորող մի վկա։
Վանականն այս աշխարհից յոթը հազար տարի առաջ
Հեռացել են,—մոռացվել են թատրոնները հոգեկանչ։

Կատարյալի բառարանում չը կան նաև զայրույթ ու քեն,
Տանջա՞նք, ագե՞տ, վիշտ ու թախիծ, ցավի կսկիծն,
ապաքեն։
—Մենք չը գիտենք, հայտնի չէ մեզ,—ի՞նչ է իրոք կանացի
խանդն.
Տրփանքի կիրք, մոլեգնությունն բռնկումը ջերմեռանդ։
Մրրկահույզ շանթերը այդ զարդարանքն են հին հոգու,
Որ գաղանից էր ստացել էությունն իր բանաստեղծ։
Մեր հոգում կան տիեզերական դաղափարի ծնունդներ,
—Սակայն չը կան մրրկածուփ, ալեկոծվող անդունդներ։
Երգն ու նվագ նաև պարեր բերք են սիրտ ներդաշնակ,
—Երգն ու պարը հոգու վսեմ բարձունքներին նշանակ։

Մենք երգում ենք թռչունի պես, ինչպես ասվի խոխոջյուն,
Ինչպես ծառի խորհրդավոր հեռուն կանչող սոսավլուն։
Մեր պարի մեջ կրքեր չըկան,—հին կրքերի անմիտ ցույցն.
Մեր երգի մեջ վերքեր չըկան,—վիշտն է նրան անմատույց։
Կանացի կի՞րք.— բայց կինը չէ՞ բեղմնավորող միայն էգ.
Նա մարդ է նախ,—նոր գոյության հավերժական
հիմքերից մեկն։
Ինչպես և մենք՝ կինն է նաև հոգեհանճար աշխարհաստեղծ,
—Կինը մեր մեջ իր կանացի կրքերով չէ՛ միշտ անեղծ։
Մինչ իբրև էգ բեղմնավորվող՝ պատկանում է նա բոլորին,
Ինչպես նաև ազամարդը պատկանում է բոլոր կանանց.
—Բայց այդ կիրքը ենթարկված է իմացության կոնարոլին.—

Գիտակցությունն է նոր տալիս բաղդությանն այդ
գերագույն,
Մարդու հանճարն, որ սանձել է երկրաշարժը սահարկու,
Որ հեղուցեց ուղիներով մոլորակները հետու,
Որ կարող է այժմ խորտակել ուժը մահվան դժբնդակ,—
—Կանացի կիրքն սանձել է նա և դրել է պլանի տակ:
Ամուսնություն կամ ընտանիք հեքիաթներ են մեզ համար, —
Հին սովորույթ, որի մասին գիտե միայն հին տոմարն:
Մենք կանանց հետ միանում ենք նրբին, ինչպես ծաղիկներն,
—Ինչպես զարնան կարոտների բաղդրատենչիկ շաղիկներ:

Նոր սերունդը՝ մանուկները պատկանում են համայնքին
Եվ կրթվում են բաջահանճար խնամքի տակ տատանձին:
Բարեկամնե՛ր, ձեզ պատմեցի մեր գոյության ես հիմքերն:
Եթե մնաք այս հարկի տակ դուք այս գիշեր,
—Մեր այս կանայք սիրատենչիկ ձեզ կը լինեն կողակից,
Եվ կիմանաք — դուք շատ բաներ հանճարագույտ այս
կյանքից»:
Այդ որ ասաց, Մեծն Աքիլլես, Պղատոնը և Գեղեցիկն
Հետաքրքիր զոհ ժպտացին: Բայց մոայլվեց Ավեսիքն —
Ու վեր կացավ առարկեց,—«Իմ բարեկամ Սիրաշունչ.
Արդ լսեցի ես քո պատմվածքն: Տարտա՞ր է խիստ ձեր նոր
կյանքն,
Ուր չկա վի՛շտ, չը կան վերքե՛ր, չը կա կռիվ կամ տնուրջ.
—Այնտեղ չը կա տեղծագործ, ոգևորիչ նաև ջանք»:

Եվ մենք այնտեղ դիշերեցինք: Վայելեցինք ճոխ ընթրիքն,
Որն ինքնաշարժ հանդես եկավ պերճ սեղանին առանցքի:
Այդ գերհրաշ դահլիճի մեջ, նոր գոյության հարկի տակ՝
Մենք մեզ տեսանք ուր զգացինք, հոգով ազատ, բացարձակ,
Ամենատես դիշերն եկավ: Զբնեց կանանց գրկի մեջ
—Մենք ապրեցինք հավերժացող զգացմունքի ելևջն:

ՆՈՐ ՇՐՋՈՒՄՆԵՐ

Երբ Արշալույսը վարդամատն, ոսկի պսակն իր ճակատին,
Ողջույն ասվեց հանճարապչուտ և նորատաղծ աշխարհին,—
Ընկերներով դաշտերի մեջ անցնում էինք մենք
ճանապարհն,
Իսկ բնությունն բյուր աչքերով մեզ նայում էր քաջաբար։
Դաշտերի մեջ մենք կանգ առանք,—կյանքին մի տեղ
ջատագով.
Տասնյակ մարդիկ կային այնտեղ արտերի մոտ զբաղված.
Կային նաև կենդանիներ,—ոչխար ու ձի, եզ ու կով...
Մենք մոտեցանք և հարց տվինք, աշխատանքով զմայլված.
—«Արար արդեն հասած է խիստ, հասկերը լիք և ոսկի.
Ե՞րբ պիտի դուք հունձք անեք,—օրինակ է սա խոսքի,—
Կամ չքե՞լ եք արար արդյոք, երբ մատաղ էր ու կանաչ.
Անձրևները օգնում են ձեզ,—ձեր վիճակին լավ ճանաչ։...

Կենդանիներ, որ կան անկոչ, օգտակա՞ր են ձեզ թե ոչ...
Ձեզ խմելիք կաթ տալիս են, միս տալիս են ուտելիք.
Արտերից զատ պերճ այդիներ մշակում եք դուք, թե՞ ոչ...
Ա՞նը է արդյոք աշխատանքը, թե իսկ և իսկ խաղալիք։
—Պատասխա՛ն տուք մեր հարցերին,—անցորդ ենք մենք
եկակոչ»։
Այդպես հարցրեց մեծն Աբիլլես։ Եվ մոտեցավ մեկն
իսկույն—
Աշխատավոր այդ մարդկանցից, դեմքը պայծառ, նրբագույն.
Նա սկզբից չը հասկացավ բուն իմաստը հարցմունքի,
—Ի՞նչ է հունձք, ի՞նչ ասել է աշխատանքի ծանրություն։

Իսկ երբ մեկնեց մեծն Աբիլլես,—իսկությունը բերմունքի,
Պատասխանեց նա սրատաց, ինչպես ինքն էր
սրբություն.—
—«Հինձել բնավ մենք չը գիտենք,—մեր արտերը չենք
հնձում.
Արար ինքն է հասունացած իր բերքերը թափում ցած,
Երբ որ բերքն է այդպես գառնում գետնի վրա հավաքված,

Նոր դառնում ենք մենք օդավելու, ինչպես մեղուն իր
փոթում։
Ո՞վ կարող է արար հնձել,—բույսը նույնպես կյանք ունի.
Նա էլ մեզ պես իր կազմի մեջ երանության ջանք ունի...
Իսկ արտերը և հանդերը ջրվում են միշտ ինքնաբար.
—Անձրևներն են կարգավորված մարի խստիվ պլանով,—
Եվ ոչ միայն անձրևները,—մրրիկ, սրատ, հզոր հար,
Ենթարկված են մարդու կամքին խիտ ամպերի փայտանով...

Կովն իր կաթը մեզ է տալիս, երբ ավելորդ է իրեն.
—Կրթել կաթը զոռով, ուժով—սովոր չենք մենք բնավին.
Իսկ միս ուտել մենք չը գիտենք,—դա մի գործ է անօրեն,—
—Ով կարող է այդ անելով, նայել պայծառ արևին...
Կենդանիներն անմեղ ու հեզ, նման են մեզ՝ կամքի տեր,
Նրանք նույնպես հոգի ունեն, տենչանք, զորով նաև սեր...
—Ո՞վ կարող է երկրի վրա լինել դաժան մրտակեր...
Կենդանիներն աշխատում են, խնամքի տակ, բարեսեր,
—Աշխատում են նրանք մեզ հետ միշտ ապահով և հոժար։
Չէ՞ որ նաև նրանք մեզ պես հոգի ունեն և զգացմունք,
Նաև նրանք մեր մեջ ունեն սիրահոժար գրաղմունք։

Ճանրությունը աշխատանքի,—դա մի խոսք է զարմանքի.
— Կամ կարո՞ղ է աշխատանքը ծանր լինել, կամ դրժար,
Կյանքը չէ՞ որ նոր կշեռք է և ոչ նրան նոր նրժար...
Աշխատանքը կատարում ենք մենք խիստ ազատ և դյուրին,
—Ինչպես օդն ենք շնչում ազատ, ինչպես ջուրն ենք
խմում միշտ,
Հոգնածություն մենք չը գիտենք,—ոչ էլ հոգսերը խորին.
—Մենք էլ չէ՞ որ ծաղիկներ ենք,—նրանց պես վառ և
անվիշտ»...

Մենք այդտեղից շուտ հեռացանք։ Միտքը նեռեց նոր
հորձանք.
Եկանք հասանք մի գործարան,—արաչության մի կենտրոն.
—Ճաշկերույթ էր այդ ժամանակ,—կերը կյանքի մի
բաղձանք.
Եվ բաց արեց մեծն Աբիլլես նոր հարցերի նոր ամբիոն.—

—«Ո՞վ է տերը գործարանի, ո՞ւմն է արդյունքը այստեղ.
Ծա՞նր է արդյոք գործը ձեռքի, թե՞ սիսառեմ է սա մտքի,
Շատ է թիվը հիվանդների,— վերքը ունի՞ ընտիր դեղ.
Գո՞հ է արդյոք բանվորությունը պատուղներով իր ջանքի:
Եվ կա՞, իրավ, այստեղ օրենք, իշխանատեր կամ մի զենք...
Կերը ի՞նչ է այս բազմության, բավական է արդյոք նա.
Հա՞շտ են արդյոք միմյանց հանդեպ ազամարդիկ և կանայք.
Հոգսի ատ՞ել են մանուկները, թե ապրում են անխնա...

Լա՞վ են գրված ձեր հանդիսաը, կամ ձեր նիստը և հմայքն.
Արդյոք ունե՞ք ազատ ժամեր ստեղծագործ արվեստի,—
— Փափագո՞ւմ են ձեր սրտերը երկնանվեր գովեստի.
Ձեր՝ վիճակում հո չե՞ք զգում ճնշում, հարված, նեղություն,
—Գուցե կյանքն է ձեր մի թախիծ, շարժումը իսկ
սրդություն...
Թովքը գիտե՞ք սուրբ արևի,—գովքը անմահ բարևի»:...
Եվ սեղանից հացկերույթի հանդես եկավ մեկը վառ,
Ու մեր բոլոր այդ հարցերին պատասխանեց քաջաբար:
—«Զարմանալի հարց եք տալիս, դուք, ա՜յ մարդիկ տնաշեն.
Այդքան հարցե՞ր, անմիտ փորձե՞ր մարդու գլուխ
կը մաշեն...
Տերը ո՞րն է գործարանի,—պատկանում է բոլորին.
Մեզանից են փեթակի տեր, գործը իրենց կերաբերիս.
Ողջ արդյունքն է համայնության, համայնքի սերն հարդարող,
Իսկ մեզանից ամեն մեկը սատանում է ըստ կարողաց,
Մենք ապրում ենք թռչունի պես, հավերժ անհոգ, սրտաբաց:
—Աշխատանքը բնա՞վ, երբե՞ք ծանր լինել չի կարող.—
Նա մեր շունչն է, մեր մրմունջը, մեր գոյության հիմքը
լույս.
—Աշխատում ենք մենք ճիշտ այնպես, ինչպես ծաղիկ, իբրև
բույս...

Գործարանն էլ, որ տեսնում եք, հանճարատես մի սիսառեմ.
Մի մեծ, հզոր կառուցվածքում—հարյուր հազար մեքենա.
—Եթե սեղմես միայն մատով մեկ կոճակին, որ դանա,
—Բոլորն իսկույն պատույտ կը դան և կը գործեն սիգաճեմ...

Եվ բոլորիս կատարածն է մի անհնար գրավումներ,
—Ինչո՞ւ ճրագնել,—երբ մեր ինքն է տալիս լի բերումներ..
Հիմանդ, ակար մեր մեջ չը կա, և չի կարող լինել իսկ.
Իր սերմերը մահը մեր մեջ չի էլ կարող ցանել իսկ.—
Զարված է խիստ գործը մահվան,— միայն նրան հրաման:—
Օրենք, իշխող, զենք ու կանոն անհեթեթ են մեզ համար:
Մենք ապրում ենք բույսերի պես,—շարժվում, ինչպես
շողիկներ.

—Օրենք ու զենք չէ, որ շունեն նաև կայսրաս ծաղիկներ,
Եվ մեր կյանքն է գավակցության արդյունքների մի գումար:
Իսկ մեր կերը բուսական է, պտուղներից լիառատ,
Մեր սրտերը լիության մեջ,— կարիք չը կա շարքը մեր.
Տարօրինակ և տարաժամ հարց ենք տալիս նաև դուք—
—Տղամարդկանց և մեր կանանց գործի մասին այժմ
հատուկ.
Անհեթեթ է բաժանումն այդ,—բոլորս այստեղ մեկ ենք միշտ.
—Կին, տղամարդ, արու և էգ ստեղծագործ զեկ ենք ճիշտ...
Բեղմնավորման գործը մեր մեջ կատարվում է ճիշտ այնպես,
Ինչպես քնքույշ կերտում են այդ բույսերը հեզ ինքնածես.
Մանուկները կամ նոր սերունդն համայնության հոգսի տակ.
Այդ հարցերում—մեր գոյության երկնքի տակ ու ներքո
Բնավ չը կա և չի կարող լինել խրատիր «իմ» ու «քո»:
«Հանգստություն, կամ անհանգիստ»—մենք չը գիտենք,—
ինչ է այդ.
Այդ չը գիտե նաև բույսը, նաև լույսը բացահայտ.
Մինչ կյանքը մեր՝ ամբողջովին հմայք ու սեր է միայն,
—Ամեն շարժում, ամեն բացվածք բերկրանք է խոր ու
համայն.
—«Ոչ-հմայիչ». «ոչ-սիրատուն»—մենք չենք կարող
ըմբռնել,
—Հավերժությունն է մեր կյանքը ձևերի մեջ իր բռնել...
Գոյությունն է ողջ մի արվեստ,—մենք նրա մեջ խոր գովեստ
Ի՞նչ նեղություն, կամ ի՞նչ ճնշում—ահեղերի շեն այս
խորշում,
Արևների և աստղերի ողջույնը միշտ մեկ նվեր.—

Անմահության գուրգուրանքը մեր սրտերին հրավեր.
Ստեղծագործ կյանքի համար ողջ տիեզերքն է մեզ պարգև,—
—Գոյության մեջ հարթ է վսեմ ճանապարհը մեր առջև...
Որտեղի՞ց ես դու դուրս եկել, տարօրինակ հողածին.
Ես կարող եմ լոկ զարմանալ օտարոտի քո հարցին»:...

Եվ շտապեցինք մենք հեռացանք գործարանից այդ հզոր,
—Հետքը նրա իմ սրտի մեջ վառ մնում է դեռ այսօր:
Այնուհետև մենք միասին այցելեցինք շատ տեղեր.
Հազար տեսակ հարցում արինք,—փորձը, գործը անսպառ.
Երջանկության ասողներ տեսանք, հանճարների բյուր թեղեր.
Եվ ամենուր մարդու առջև բաց էր փայլուն ճանապարհ:
Մի տեղ տեսանք հոծ բազմություն և մեծ գնացք թեավոր..
Հարցում արինք,— «ի՞նչ բան է սա,— մեզ ասացեք, ա՜յ
շողեր».
Պատասխանը եղավ այսպես.—«Գնացք է սա ձեավոր,
—Ճանապարհ ենք գնում այսպես դեպի լուսին և աստղեր»:
Եվ գնացքը մեր աչքի դեմ հախրեց վերև սիպաճեմ:

Մեկ ուրիշ տեղ ծովի ափին հոծ բազմություն կար
անսպառ:
Մենք մոտեցանք.—«Ի՞նչ եք անում այստեղ այդպես դուք
զվարթ»:
—«Ծովն ենք ուզում տեղից շարժել, մեքենան է դրած ցած.
Հարկավոր է մեզ հատակը,—պետք է ծովն այս ետ քաշենք.
Անցյալ օրը ամբողջ մի լեռ ետ քաշեցինք մենք հպարտ,...
Եվ մեքենան շարժվեց մեր դեմ, ծովը իսկույն ետ գնաց.
—Ծովը փախավ,—հասկանո՞ւմ եք: Ինչպես մենք այդ
չը հիշենք:...
Մի երրորդ տեղ բազմություն կար,—մի ահագին
բազմություն
Մենք կարծեցինք.—գործ է այդ մեծ և գնում է պատերազմ:
Հարցում արինք,— «Ի՞նչ բան է սա: Ի՞նչ եք դրել ձեր մտքին.
Թե չեք գնում արշավանքի,— ի՞նչ եք սարքել զորակազմ»:

—Ի՞նչ եք ասում, ա՜յ տնաշեն,— ձեզ դարերը եմ բաշեն.
Որտե՞ղ գտաք դուք պատերազմ, որտե՞ղ տեսաք զորակազմ.
Ճիշտ ինն հազար տարի է անց այն օրերից անթափանց.
Երբ աղվերը, կրքերով լի, կռվում էին ուխտապանց.
Պապերը իսկ մեր պապերի այդ բանն հիշել չեն կարող,
—Այդ ամենից ազատ ենք մենք,—ճշմարտությունն հարկարող...
Հավաքվել ենք հինգ հազար մարդ,—պետք է գնանք Փառաղնում*.
Այնտեղ հզոր մի հանդես կա,— անմահության առավոտ:
Երեկ միայն մենք ստացանք հրավերը այնտեղից.
—Մեր եղբայրն է մեզ խնդրի դրել հավերժության կանթեղից:

Մոլորակը Ծկրավորին**,— հասկանո՞ւմ եք արդյոք դուք,
Մեծ, հոյակապ հանդես ունի, ուր կանչված ենք մենք հաստատ.
Եվ հանդեսը պետք է թնդա արեգակին դեմառդեմ.
—Այնտեղ նաև հանճարների միտքն է կազմել մի նոր բեմ...
Երեք հզոր հարց է դրված հանդեսի մեջ իրրև ցույց.
Առաջինը պետք է փարձեն—նոր նյութերից կազմել մարդ,—
—Հանդեսի մեջ բազմության դեմ մարդ ստեղծել ստուգագարդ,
Բնությունն է մեզ ստեղծում,— հետո անում կազմալուծ.
Երկու գործ կա այդ հարցի մեջ, նախ ծնունդը, հետո մահն.
Վաղուց է, որ մահվան ճամբեն խիստ կարել ենք մենք արդեն.
Ոչ այս երկրում և ոչ այնտեղ էլ չի գործում նա ադահ...

Մնում է այժմ մեկը միայն—մարդ կերտելու փորձն համայն.
Եվ տես, հիմա Ծկրավորին կատարում է գործը այդ:
Երկրորդ հարցն է օրակարգի ավելի նոր, հրատապ.—

---

* Մոլորակ—Լուսնթագ:
** Հրատ—Մարս, Արևս:

Պետք է փորձեն երբեն արևի աչքի առջև բազմությանն:
Անցյալ տարի Հանդեսի մեջ Լուսընթացի հարցը կար,
— Մոլորակն այդ մեր աչքի դեմ իր ճամբեքից ետ
դարձավ,—
Եվ իսկապես մարի նշած ճանապարհովը անցավ:
—Հիմա արդեն մեծ արևի հարցն է դրված օգտակար:
Երբորդ կետն է օրակարգի հետաքրքիր նաև ձեզ,—
— Պատերազմի հարցն է իրավ ձեր մարի մեջ դեռ ցցված.
Ինչուն դար է, որ նա կյանքից վտարված է և կորած...
Փառավոր Հանդեսի մեջ պետք է և ա՛յդ ցույց տան մեզ:
Ժամանակն է, ինչպես իլիկ, պտույտ գալիս անարդել.
Բայց անակիզ, մեծահզոր, հավերժական մի իլիկ:
Այս գոյության նա անցքերը փաթաթում է իր մեջքին,
Եվ կրում է նա իր վերա և անցյալը, և գալիքն:
— Բայց իլիկից կըծիկը միշտ կարելի է արձակել:
Իսկ այդ փորձը Հանդեսի մեջ պետք է ցույց տան մեր
աչքին
— Ժամանակի պտույտներից ցույց պիտի տան կյանքը
նորից»:

— «Տեսա՞ր, ասաց Մեծն Աբիլլես, մեզ նայելով գերհրաշ.
Այլ է հիմա մարդու հոգին՝ միանգամայն վերաշեն.
Փոխված է խիստ դահավորումը հոգեկան, հնամաշ:
Եվ բռնել են բեմը հոգու նոր ուժերը ոսկեղեն:
Մարդու հոգին պատկերացրու դու քեզ իբրև մի թատրոն,
Բայց իրական, հրաշակերտ իր արվեստով բեմադիր.
Եվ քեզ «թատրոն» եմ իսկ ասում, և ոչ հեքիաթ, կամ կրոն:
Որի բեմը դուրս են գալիս դերասաններ մեծընտիր,—
— Բյուրապատիկ ավելի բարդ, քան տեսածը մեր անդարան:
Մի ժամանակ, ինչպես դիտես, գործում էր խիստ և հուժկու:

Էսքիլեսի, Սոֆոկլեսի վառ թատրոնը մեծհրաշակ.
Եվ ի՞նչ էր այդ, թե ոչ միայն կատարանքը մեր հոգու—
Արվեստի մեջ դրսևորված, բեմի վրա բացարձակ...
Իսկ հոգու այդ կատարանքը, իրականի զուտ արդյունք՝—
Համայնատես կերտող ոգուի անհերևույթ զբաղմունքն...

Բյուրապատիկ ավելի խոր, ավելի բարդ պիտ հաշվեն
Թատրոնը այդ—մարդու հարատև հոգու խորքում
կատարվող.
Եվ ամեն ինչ, որ կար կյանքում, կոիվ, պատիվ կամ հավեն,
Կատարներն են այդ հանդեսի, մեր աչքի դեմ գալարվող։

— Մարդու հոգին է իրատես,— շեշտեց կրկին Աբիլլեան,—
Միայն մի մասը կացության—անմահության ինկարկող.
Մինչ արևն էր մեկ խոստանում կյանքը բուրյան,
կատարյալ.
Երբ կը դառնա մարդու միտքը ողջ ոիեղերքը ընդգրկող,
— Կամքը նրա լինելու է նոր բնության պոտենցիալ...
Կարող ես լավ պատկերացնել,— երբ ողջ ոիեղերքն այս
դառնա
Մի բովանդակ նվագախումբ,— մարդը նրան անխնա
Նվագապետ մի փառունակ,— ի՞նչ ահռելի գործ է այդ.
— Հավերժության համերժացած անջնջելի փորձ է այդ»։
Շատ չը քաշեց, և մենք հասանք բարձր, բարձր մի սարի.
Երբ կանգնեցինք նրա ուսին, շուրջը բացվեց վիթխարի։

— «Քո Հայրենի Մասիսն է սա, քաջը ասաց ինձ խակուն,—
Երկրի բոլոր մեծ լեռներից սա՞ է, իրավ,— վեհագույն.
Եվ իբրև թե սրա գլխին, ուր կանգնած ենք մենք հիմա,
Կանգնեց մի օր շեղած Նոյի Մեծ տապանը ակամա.
Բայց սա՞տ է այդ, ինչպես սուտ են առասպելները բոլոր...
— Տե՞ս,— հեռք չըկա ոչ տապանի, ոչ այլ բանի
մի մոլոր
Շուրջը ահա.— անծայրածիր, պայծառատես մի երկիր.
Հեռվից նույնիսկ երևում է Սևանը՝ քեզ համակիր։
Քանի՞, քանի մեծ պետություն, հզոր, հպարտ մեծ ազգեր։

Դեռ հոսում են դեպի հարավ ահա Եփրատն ու Տիգրիս,
Երգը նրանց լավ հիշում է սարը նաև այս Մասիս։
Ասուր, Իրան և Բաբելոն, պերճ աշխարհը Նայիրի.
— Եվ փոխարեն այդ բոլորին,— նոր կյանքը սուրբ և արի...
Տեսե՞ք, այստեղ բողբոջում են նոր մարդկության
հատորները,

Բայց անբաժան, միապաղաղ, հավերժատես, ինչպես լույս.
Չը կան այլևս հին գոյության խռովահույզ կատրներ,
— Մեկ է այդին հավերժության,— ցեղը մարդու միակ
բույսն:
Մարդն է աճում սիրով այստեղ, ինչպես արտի շողան հատկ,
— Չը կան այլևս հապար բրոնզ, հապար լեղու,
հապար ազգ.
Չը կա պարսիկ, չը կա Ասուր, չը կան հայեր ձեր նախնիքն,
Մարդկությունն է,— հասկանում եք—կազմել մի վեհ
ընտանիք—
— Ավելի ճիշտ՝ երանատես ծաղիկների նոր պարտեզ»:

— Քո խոսքերից մեծ Աքիլլես, մենք հասկացանք իրապես,
Որ այստեղ իսկ անմահարար այն բարքը կա գոյության,
Որ ծաղկում է և կը ծաղկի երկրի վրա հավիտյան,
Որի համար արմատորեն փոխվում է իսկ մեր հոգին:
Բայց մեկ ասա, ոիտանապետ,— արքաները ո՞ւր կորան.
— Ասուրի մեծ ատամածները յոթանասուն հինգ հապար,
Հին ազգերի կերտվածքները վայելքի մեջ մեծափառ.
Մի՞թե փորձ էր այդ ամենը, կամ անցյալոր ճեմարան.
— Լավ չէ՞ր լինի, որ չը լիներ այդքան կորուստ
անձնվեր»...

— «Տեսե՞լ եք դուք օվկիանոսի ալիքները հողմահույզ.
Աղմկում են և թաչում են նրանք հուժկու և անթիվ.
Ծնվել անհագ, կորչել արագ,— բախտն է նրանց
ջրասույզ,—
Երեկ կային, այսօր չը կան,— ծնունդն ու մահը հեշտիվ...
Ալիքները թեպետ այդպես դալիս անցնում են արագ,
Բայց կան նրանք ջրերի մեջ խրև հեղուկ հատարակ.
— Ոչ մի կաթիլ օվկիանոսից չի պակասի, ո՞չ, երբեք.
Ինչպես նա կար, այնպես էլ կա, իր զորությանն իրավեկ...
— Օվկիանոս է կյանքը խորունկ, անհատները մի
մանրունք:

Եվ արքաներ, և հականեր, ցնորք, շնորհք, առասպել,
Ատամածներն իսկ երկնահոչակ,— որոնց միտքը չէր զսպել.

— Ալիքներն են օվկիանոսի, որ կոչվում է մարդկություն,
Օվկիանոսի, որ անենչում է հավերժացող խոկություն։
Եվ ծագում են ալիքներն այդ, փրփուր հագած,
բարկաձայն,
Ելնում են երկար ու խիստ, ցասկոտ ծեծում են ափունք,
— Հետո կորչում, վերանում են, ասես բախտի մի
բերմունք։
Մինչ գոյական ամբողջի մեջ միշտ կա նրանց ելևէջն»։—
Այդպես ասաց Մեծն Աքիլլես, ու մենք կրկին հեռացանք։

Սավառնելով եթերի մեջ մի տեղ կրկին ցած իջանք։
— «Ոլիմպոսն է սա ձյունաթաղ, բազմաբլուր Ոլիմպոսն,
Իմ հայրենի տարը հակա, որին նման էլ չը կա.
Փառքը սրա դամենից շատ հնչեց հզորն Հոմերոս։
Կար ժամանակ սրա գլխին՝ ապարանքում ոսկեղեն
Ձևան էր ապրում ասպարակիը, ամենակալ և կարող,
Տերը նա էր այս գոյության, բերքը նրա հարդարող։—
— Շուրջը նրա բազմած էին աստվածները ինքնազեն։
Նայե՞ք,— ասին երևում են հեռվից Պանոսն, Հելիկոն,
Որոնք հաճախ տեսնում էին և Մակարը և Մակոնն.

Իսկ այստեղից անմահները, հագած իրենց ահեղ զենքն,
Մեկնում էին դեպի Միքեն, դեպի Սամոս և Աթենք...
Ահա երկիրը այն բուրյան, ուր հորդ գետերը արյան
Ռազմի դաշտից, վիշտ երգելով, հոսել են մերթ դեպի ծով.
Հերակլեսն էր այստեղ հաճախ իր կործանիչ հարվածով
Ոչնչացնում վիշապներին հանուն կյանքի փրկության։
Այստեղ երբեմն հավաքվեցին հազարները իմ ազգի
Եվ կազմեցին մեծ արշավանք դեպի հզոր քաղաքն Իլիոն։
Հայնժամ և ես մասնակցեցի քաջարության ձեռնարկին,
Ես կամեցա կյանքում կերտել հավերժության նոր կանոն։

Ես, մանկամիտ՝ չը հասկացա, որ գործն էր այդ վաղաժամ,
Ինձ հետ էին Ագամեմնոնն, Դիոմեդեսն, Նեստորն, Այաս,—
Եվ բյուր բյուրերն քաջամարտիկ—սերը սրտին անպակաս,
Մենք դիմեցինք դեպ մարտն հզոր, լի տենչանքով
երկնակամ...

Այս վայրերում անցան ահա իմ գոյության գործերն անթիվ.
Այստեղ էինք մենք որոնում փառք ու պատիվ և ոսկի՞,
Այստեղ էին շողում առաղներն անմահական և խոսքի:
Հավերժակա՞ն մենք կարծեցինք մեր որոնած փառքն ու
պատիվ,
Բայց չիմացանք, որ գործը մեր անցական է և անուրջ.—
Այստեղ էին հին ասավածներն—մեր կրքերին հորդորիչ.

Որոնք եղան հեռուն ատնող մեր ճամբերին լայն կամուրջ:
Այստեղ էր մեզ սանձում և Զեսն, հանց գոյության մեծ
վարիչ...
Ահա—հեռվից երևում են Պելոպոնեսն և Սպարտա
Եվ անհամար պերճ կղզիներն, արկածատես և Միբենն:
Բյուր-բյուրերն իսկ հերոս և բաց, փառքի համար
զլխապարտ,
Զուր չիմացան, որ անցական էր փառքը այն, ապարեն...
Ահա Աթենքն,— հորդ ալբյուրն իսկ բյուրաբաղում
արարքի,—
— Թեզևս, Սոլոն և Պերիկլես—հիմնադիրներ նրա փառքի:
Այստեղ անցան նաև օրերն այն հանճարի մարտիրոս,
Որից հետո բեզ, Պղատոն, ցնորքն եղավ սուրբ էրոս»:

— «Կարծես հիմա աչքիս առջև կանգնած է նա, Սոկրատեսն.
Հայացքը լի իմաստությամբ, սիրտը սիրո մեծ հանդես»—
— Բացականչեց Պղատոնը, իբր աշակերտը նրա.—
Չե՞ք ընդունում, որ նա էր իսկ այս գոյությանն ուսվիրա...
Շարունակի՞ր, մեծ Աքիլլես, դու լավ դիտես իմ ճեմարանն,
Որ դարձել էր իմաստասեր դաղափարի լայն բերան...

— «Այո, ասաց քաջն Աքիլլես,— ճեմարանն էր մի տենչանք,
Հավերժության երթը որսող ցնորքների երազանք:
Բաղմաբաղում իմաստուններ վեճ են արել այստեղ շատ.
Բյուր կախարդներ կյանքի սաղում էջ են արել արևշատ.

Տես, Պղատոն, այստեղ էր բեզ Արիստոտելն աշակերտ,
Մակեդոնցի Ալեքսանդրը ասա սկսեց քաջության երթն:

— Ամենաշքեղ, ամենաբարդ անկյունն էր սա գոյության.
Ուր երկնագույն թնդում էին գրոտները փրկության:
Հիմա արդեն այլ է կյանքը: Գնանք այցի, իջնենք ցած,
Իմ սրտին շատ հարազատ են բոլոր գեպքերն այս
վաղանց...
Եվ ցած իջանք մենք հինգ հոգով, անցանք կյանքի ակոսով:
Եվ այս երկրում, որ կազմում էր նախկին հզոր Հունաստան,
Այցելեցինք մենք բլուր ավան, և ստորագրան հազար կետ.
Հավաքեցինք շատ հարց ու փորձ, կազմեցինք մենք նոր
անկետ.—

— Ամենուրեք մեր աչքի դեմ բացվում էր բուրաստան...
Ոչ մի քաղաք մենք չը տեսանք,— ոչ բազմամարդ, ոչ եռուն.
Ոչ մի ծուզակ մենք չը հասանք,— այլ ամենուր վառ
գարուն...
Մարդիկ միայն ապրում էին ծաղկանց նման փունջ ի
փունջ.
Որդիք միայն նոր գոյության խաղաղավետ, անարատունջ:
Ոգևորված միտքը կորով՝—հավերժական հետքերով:
Աբիլլեան էր մեզ զեկավար—անմահության իսկ նկար,—
Մեր ցնծության այդ միջոցին սահման չը կար, վերջ չկար:
Եվ նշում էր մեծ տիտանը մեզ ամեն ինչ, իրրև փաստ—
— «Կատարյալն» էր ոգևորիչ,— իսկ նա մեկնող
մեծիմաստ: —
Ամբողջ երկրում ծայրն ի ծայր ոչ մի անգամ, ոչ մի տեղ
Մենք չը տեսանք ոչ զուր ծիծաղ, ոչ հառաչանք, ոչ
արցունք.
Երբ վերք չը կա մարդու համար, պետք չէ նրան նաև դեղ:
Ինչի՞ են պետք մութ անդունդներն, եթե կյանքն է մի
բարձունք:

Մարդկանց դեմքին, նրանց բարքին՝ մենք, նայելով
իմացանք
— Օրգանիզմը—հառաչանքի կամ հեգնանքի սովոր չէր,
Նա չը գիտեր և չէր ապրում ոչ փոթորիկ, ոչ հորձանք.
— Ծաղիկներն իսկ չունեն տունջանք, հեգնանք և հույզ
խանդ ու խաղ.—

Ի՞նչ են դրանք,—հիդնանք, հառաչ, խոր «ախ ու վախ» կամ
աղմուկ,—
Թե ոչ միայն հուզված հոգու խորթ առապարը ճամուկ։—

Պայքարի մեջ գործ կատարող նեբքին զորքերը հոգու
Ստեղծել են դրանք իրանց արշավանքին — բանաբակու...
Եվ մենք տեսանք,— հեռվի մեջ մարդն էր ծաղկում
առանց այդ.
— Նրա գեմքին միայն գորով, միաքը միայն հրացայտ...
Ավաններում,— բնակության ճաճանչազարդ փնջերում—
Մենք չը տեսանք փակ ու փականք, շղթա, շռինդ
կամ կողպեք.
— Խաղաղ կյանքին այդ ամենը պետք չէ բնավ ու երբե՞ք.
Ավելորդ է գենքը դաժան անմահության լանջերում»...

— «Ահա, ա՜յ մարդ. ո՞վ կա այստեղ, այս երկրին
տեր կամ իշխան,
Ո՞վ է իրոք ձեր գործերին, ձեր գոյության անօրեն.
Ի՞նչ է տալիս ձեզ ձեր կյանքը աշխատանքի փոխարեն»։—
Մենք հարց տվինք այդպես մեկին և ստացանք
պատասխան.
— «Իշխան ու տեր մենք չը գիտենք.— երկիրը մեր
լայն, ազատ
Մենք ապրում ենք նրա կրծքին սիրով լցված, հարազատ...
Ոչ անօրեն, ոչ մարդարեն հարկավոր չեն այս գործին,—
— Ծաղիկները չեն սպասում հրահանգիչ հոգվածին,—
Կյանքն է կերտող մի աշխատանք և ոչ կորուստ ու վտանգ»։
Մեկ ուրիշ տեղ մենք հարց տվինք գործ կատարող մի
մարդու,—
— «Ինչ գյուղ է սա. ի՞նչ ես անում, ո՞ր ազգին ես դու
պատկան»։

— Միլիոնավոր ավաններից լոկ մեկն է սա — միշտ
լուսատու.
Կեր եմ շինում պատուղներից, ընկերներս պիտի դան։
Այս երկրի մեջ ազգեր չկան—տարբեր ու խորթ, շահը ջոկ.

— Մեկ մարդկություն և բյուր գավակ,— մենք ապրում ենք միշտ անհոգ.
Կա մի համայնք և մեկ պարանոց—ծաղիկներով լուսատես...
— Ազգե՞ր ես դու այստեղ փընտրում, թե՞ սրբության ասպարեզ»...
Եվ հեռացանք մենք այնտեղից, լույս հայցելով Անշեղից...
Եվ հնագույն քաղաքներին այցի եկանք ուշադիր.—
Սպարտա, Միլեն, հզոր Աթենք դարձել էին թանգարան,
Իսկ նրանց մեջ հազար-հազար այցելուներ անխոսիր,—

Կարդում էին գարերը հին, կյանքին իրրև քարավան:
— «Նայե՞ք այս կողմ,— բացականչեց հայնժամ հանկարծ Պղատոնն,—
Նայե՞ք ուղիղ այս բլուրին,— բերդ կար այստեղ այն ատեն,
Եվ նրա մեջ մեծ մարդարեն թույնի թասը դատարկեց.
— Նա փրկանքին ու զրկանքին հանձարի պես ատարկեց,—
Դեռ հնչում են իմ ականջին նրա խոսքերը վերջին.
— «Մնա՞ք բարի — ես գնում եմ: Կհեռանամ նաև դուք.
Կյանքը միայն վեր սահելու ճանապարհ է մի հատուկ.
Մենք դեռ միմյանց կը հանդիպենք անմահության կամուրջին»...

Ահա այստեղ տասնյակ տարի հնչեց երգն իմ արդարի.
Տասնյակ տարի ճեմարանումն,— իմ ձեռքերովն հորինած,
Ես հնչեցի՝ միայն սերը, երգի մեջ որոնած,
— Սերը միայն կատարյալի կյանքը պետք է զարդարի...
Արիստոտելն ընտիր և լուրջ երկար լսեց այստեղ ինձ,
Գեղությունն իսկ մեզ բաց արեց իր գործերի պայծառ խորհուրդն:
Այդ ամենը անց է հիմա, կյանքն է արդեն միայն լույս.
Անմահության զանձ է նա միշտ,— սիրան է արդեն սիրտ բույս»:
Եվ երբ ասաց Պղատոնն այդ, փայլեց մեզ նոր ճառագայթ...
Մեր Ավետիքն այն ժամանակ,— սիրան իր բարի՝ փառունակ,
Այսպես ասաց Աբիլլեսին, նրա խոսքին շարունակ.

— «Մի՞թե անցան անվերադարձ բյուր-բյուրերը լավատես,
Նրանք, որոնց հիշում ենք միշտ այնքան հուզիչ ու սրտանց,
Նրանք, որոնք կյանքի բերքը որոնեցին աննախանձ...
Ագամեմնոնն ու Մենելավն, Նեսթորն, Այաս, Դիոմեդ
Արշավանքը Արգոնավի, կռիվը քո Իլիական,
Հաղարները հերոս, հսկա,— ձեռքերին զենք ու մտկան,
Ճշմարտության բարձր թռիչք,— Պյութագորոսն,
Արքիմեդն,—
— Այդ ամենը մի՞թե դարձավ միայն մոխիր, միայն ցավ...
Եվ ես ունեմ իմ հայրենիքն,— Մասիս սարը քեզ վկա:

Ես երգել եմ իմ մեծ ազգի փառքն ու զորքը գերակա,
Մի՞թե իրավ դու չը գիտես, ով դյուցազուն Աքիլլես,
Որ մեր երկրում կային քաջեր—Մեսրոպ Մաշտոց,
Խորենացի,
Դավիթն անհաղթ, Տիգրանն հզոր, և բյուր-բյուրերն
իրավացի,
Հավերժության ճանապարհին կերտած սիրո ասպարեզ...
Մի՞թե կորան նաև նրանք անվերադարձ.
Ո՞րն է —ասա, այս գոյության ճշմարտացյուտ վերջին
վարձն...
Քեզնից հետո բյուրապատիկ ավելի ժամա կռիվներ
Կատարվեցին երկրի վրա,— քեզ— Եվրոպան օրինակ.
Քեզնից հետո եկան, անցան հանճարների անթիվներն,
Որոնք նույնպես ճշմարտություն որոնեցին շարունակ:

Նյուտոն, Լեյբնից, Շեքսպիր, Գյոթե, ասավածակամ
նաև Դանթ.
Գոյության հիմքն ամբակոծողն էմմանուել՝ ինքը Կանտ.—
— Ինչո՞ւ եկան դրանք այստեղ, ո՞ւր գնացին, ի՞նչ եղան.
Մի՞թե կյանքը հանճարներին բարձրացնում է կախաղան...
Ի՞նչ էր միտքը պատերազմի—երկաթազարդ շար կազմի:
Մեր տեսածը,— որ դու այստեղ ցույց տվեցիր մեծաշխույժ,
Մի՞թե իրոք կատարյալի բեղուն այգին է շատույժ.
Որ կորովի ատա հիմնեցին մեծ հանճարներն երկնածին—
Նրանք անվերջ պայքարի մեջ աշխարհի նորքը հիմնեցին»:

Պատասխանեց խոսքն նրան մեծն Աքիլլես երկնագան.
— «Մինթն պետք է մինենույնը հարգար անգամ ձեզ կրկնեմ.
Ահա՝ նորից ես կը պատմեմ, իսկ դուք բացեք սիրտաձեմ.
Որ հասկանաք նոր գոյության նիստ ու կացը անկարծան...
Ժամանակի շարժումի մեջ միտքն է մարդու մի փարոս,—
Ձեզ ասացի, որ անցյալի կյանքն էր իրար օվկիանոս,—
Փոթորկալի և հողմահույզ, ալիքները կայթ ու կազմ,
— Ամեն կոհակ մի մեծ մահակ, ամեն ալիք մի թինոս:
Ալիքների խմբերը իսկ միմյանց զարկող պատերազմ...
Ալիքներից մեծագույնը՝ ձեզ օրինակ — հզոր Կանան,

Մեկ ուրիշը նրա առջև ընդունեցե՞ք իբրև Դանթ,
Մի երրորդը Պլուտարքոս, կամ Արքիմեդը արդս:
Օվկիանոս է մարդությունն իսկ վեր ոլացող և խորունկ:
Բայց նա պլատ՞ը միշտ ջուր ուներ. խարդախաշեն ալիքներ,
Նրա կրծքին գալարվեցին կրքեր, խոցեր և մանրուքներ.
Բյուր նավասանք և բյուր նավեր, որ կերտեցին զալիքներ.
Մարդու միտքն էր օվկիանոսի ամենագոր նավավարն,
Որ հանձարեղ գաղափ կյանքի հավերժասեր ճանապարհն:
Վերացել է օվկիանոսից արդեն պղտոր հոսանքն այն.
Հեռացել են նրա փոսից օձի դիտոր փորձանքն այն.
Ջինջ է հիմա օվկիանոսը, ջրերը սուրբ, գալարուն,
Օրորվում են ալիքները, ասես մարի նոր գարուն...
— Ձեր փնտրածը ամբողջ և ճիշտ օվկիանոսի մեջն է միշտ:
Ես լսել եմ,— դուք երբեմ եք արդեն գնացին այս կյանքի,
Ասել կուզի՝ դուք երբեմ եք օվկիանոսի երթը մեծ,
Բյուր փորձերը հսկաների, կարոտները բազձանքի,
Զար, կործանիչ մրրիկները օվկիանոսի կրծքի մեջ,
Բյուր գոլրոցներն ու գարբնոցներն հին գոյության թուրծքի մեջ:
Արդ՝ բյուրավոր հանճարների ցուցակն հիմա ձեր ձեռքին—
Դեռ հարցնո՞ւմ եք:— ուր է հիմա նրանց գործը կամ հոգին:

— Ի՞նչ է կյանքը իր հասակով,— այդ եք ուզում մի խոսքով...

Ես կարող եմ այդ հարցերին իմ կարական խոսքն ասել.
Կյանքն էր մարդու մեծ օվկիանոս, բյուր անցքերը նրա մեջ.
Օվկիանոսն էր մաքի թինոս, կերտվածքները նրա մեջ.
Օվկիանոսը արդեն հիմա անմահությանն է հասել,
Նրա մեջն է ձեր փնտրածը, ձեր երդածը հիմնովին,
Մեծ անցյալի կուռքերը բյուր նրա մեջն են խմբովին,
Եթե քննեք նոր դոյության ամեն ծաղիկն, ամեն փայլն,
— Անդ կը դտնեք անց օրերի ամեն մի գործն, ամեն քայլն:
Եվ հիրավի կատարյալի պերճ այդին է կյանքն արդի,—
Բայց «կատարյալն» է այդ հոգու, համայնացած բնազդի»:

Ա.ՑՑ ԵՐԿՐՈՐԴ

Այդպես ասաց մեծն Աքիլլես, և բարձրացանք մենք եթեր.
Սահում էինք երկնքի մեջ վառ աստղերին առընթեր:
Գաղափարի նոր դոյության որսորդները՝ հինգ հոգի—
Եթերի մեջ փնտռում էինք արմատները տիեզերքի:
Եվ Ամենքն Աքիլլեսին ասաց հանկարծ,—
— Այդուհանդերձ, Պելիսածին, իմ մաքերն են թերակարծ:
Ես իմ կյանքում երկրի վրա քեզ հիշել եմ բյո՜ւր անգամ.
Անուրջել՝ եմ ես շատ հաճախ քո հաղթական փառքի մասին,
Լեցված հույսով, որ դու կը դաս քո զորությամբն
ասուվածակամ,
Ու կը բերես նոր կատարում մեր դոյության երազին:

Տես, երկինքն է արևի շուրջ և այս տիեզերքն անծայրածիր.
Եվ նույնքան իսկ անսահման է նաև միտքը գլխի մեջ:
Մենք փնտռում ենք հավերժության արմատները բնազդիր,
Բայց դեռ ոչինչ կյանքի մասին մենք չը գիտենք սրտատենչ:
Բյուր-բյուր անգամ ոսկի կառքով այդ է եկել մեզ Արևն
Միլլիարդ անգամ փայլենապարդ արշալույսն է ողջունել մեզ.
— Հավերժությունն է մեզ ձոնել իր խոր խորհուրդն
ու պարզև,—
Բայց չգիտենք,— ի՞նչ է կյանքը, ի՞նչ է մահը դառնածեռ:

Մայր ունեիր դու դիցուհի,— թեպետ աստվածն է առասպել,
— Կյանքի խորունկ արմատների նուրբ երազն է քեզ ծնել.—
Մեկնիր դու մեզ այս գոյության անջնջելի առեղծվածն.—
— Ի՞նչ է կյանքը, ինչո՞ւ համար է մարդն այստեղ ստեղծված:
Անտարբեր է նախահայրն իմ—հզորն Արա Գեղեցիկն,
Մոռացել է երազանքն իր Պղատոնն իսկ աստվածատես.
— Բայց իմ միտքը սրոնում է հիմքն էության առանցիկ:
Քո դուշակած անդորր հոգին վսեմ կյանքի՞ է ծարավ.
— Մինչ իմ սրտում դեռ վխտում է, դեռ մնում է կյանքի ցանկն»:

Պղատոնը և Գեղեցիկն հավանությամբ ժպտացին:
Եվ սրտագին պատասխանեց մեծն Աքիլլես Պելիոնածին,—
— «Ճիշտ ասացիր, պերճ Ավետիք, և երկինքն է քեզ վկա:
Հավերժական մեծ կորովը, որ կա սրտումն Աքիլլեսի,
— Ինչպես ահա տեսնում եմ ես,— քո հոգու մեջ նույնպես կա,—
Ջավակն ես դու հզոր ազգի, սրտումդ սերն Անհասի:
Աքիլլեսը,— որ ծնված է հազար ու բյուր տարի առաջ,
Որի սրտում հնչում է միշտ հավերժության վերին կանչն,
Աշխարհ եկավ, որ մուրճ զարկի այս գոյության ընդանին.
— Բյուր-բյուր տարի նա պայքարեց, որ շարիքը կործանի,
Եվ որքան բյուր պատերազմներ բռնկվել են լուսնի տակ,
Աքիլլեսն է միայն եղել չարն հալածող դրժընդակ:

Բոլո՞ր, բոլո՞ր կռիվների քաջամարտիկ զորքի մեջ
Միշտ կորովն է Աքիլլեսի միայն եղել մեծատենչ:
Դու հարցնում ես կյանքի մասին, մահվան մասին շարադավ.
— Աքիլլեսը, ինչ որ դիտե, հայտ կանի քեզ սրտացավ:
Կյանքը մարդու անծայրածիր այս տիեզերքի մասն է մեկ.
Հավերժության անկրկնելի կառուցվածքի դասն է մեկ.
— Նյութն անկործան և անսկիզբ միշտ եղել է և միշտ կա,
Կյանքը նյութի՝ այդեկութի գերարժանի սաղն է սեգ,
Մինչ նյութական աշխարհի մեջ կա փոխանցում կենդանի,
Փոխանցումը տիեզերքի մեջ դժնի մահվան ձև ունի.

— Հավերժական է փոխանցումն իբրև նյութի իսկություն,—
Եվ ամեն ինչ միշտ մահ ունի,— մահը միայն մահ չունի։
Պերճ Ավետիք,— երկրի վերա կա գործարան հանճարի.
Գործարանն է ստեղծագյուտ իմաստության հորդ
աղբյուր,
Հավերժացող միտքն է նրա գեկավարը լուսատիպ։
Նյութն է սկիզբն այս գոյության—նրանից են հոգին
և գութն։
Նյութի ուժը և աշխույժը ծնում են կյանք սերն ու սուտ։
Միտքն է ելնում նյութի շենքից, հանց զորություն մի արի,
Որ նյութեղեն հենց վերուդիրն հաղթահարի, կառավարի՞.
Ինչ է հոգին, նրա կյանքը, թե ոչ միայն նյութը սանձող
Ստեղծագործ մի զորություն, կյանքի համար լույսեր
գանձող»։
Տարածության դաշտերի մեջ, եթերը մեկ ասպարեզ,
Մենք ալացանք հոգեղվարճ,— արարչության լույսի նման։
Երբ մոտեցանք երկրի պորտին, կրկին խոսեց Աքիլլեան.
— «Ահավասիկ, իմ ընկերնե՞ր, այն եզակի միակ ամրոցն,
Որ կա հիմա երկրի վրա։ Իմացումի հզոր ոգին
Հիմնել է ասա ստեղծարար, հանճարամիտ աշխատանոց։
Սա է իրոք նոր մարդկության և տիեզերքի խոհուն գանձն,
Սա է կերտում հավերժացող աշխարհներին հրահանգ.
Կյանքը քննող, հոգին գնող,— հավերժությանն իրազեկ,—
Սա է շարժում իր ձեռքի մեջ ողջ տիեզերքի խթան դեկն։
Եթե ճիշտ է, որ մահ չունի մահը միայն,
Է՛լ առավել անմահացող զորություն է միտքն համայն,—
— Նա է կառում և միշտ զոդում այս գոյության բյուր ձևերն.
Իմաստության հազար-հազար հանճարամիտ մեծ մշակ—
Առաքում են աշխարհներին նոր հայտնության դրոշակ։

Եվ ասվում են հանճարագետ իմաստունները միշտ այստեղ.
Երկնքի մեջ սա է անմահ ընդհանրությունն համատեղ։
— Միտք հորինող գործարանի ահավասիկ պետն է սա։
Պերճ Ավետիք, թե կցանկաս, հարցում արա և անսա»։—
Այդպես ասաց մեծն Աքիլլես։ Մենք նստեցինք բազմոցին,
Իսկ պետն հզոր, հանճարագետ իսկույն խոսեց սրտագին,—

— «Իմաստության գործարանն այս ճանաչում է, Աբիլլեսին,
Որն իր կյանքը նվիրել է այս գոյության նոր լույսին։
Բայց ո՞վ ես դուք, լավ ընկերներ քաղցրաանոյշ—
Որ այդպիսի փափագ ունեք նոր աշխարհի շենքի մեջ»։

Եվ վեր կացավ պերճն Ավետիք Հայոց ազգի անդրանիկն —
Ու սրտալի խոսքն իր ասաց Հավերժության շենքի մոտ.
— «Զավա՞կն եմ ես հոգեհանճար հայ մեծ ազգի,—
ավագիկ,
Իմ պապերը երազել են կյանքի պայծառ առավոտ,
Անմահացող գաղափարի դրրոշն իրենց հաղթ ձեռքին։
Անծերական բաղձանքների սիրով դյութված իր հոգին,—
— Իմ մեծ ազգը անթիվ դարեր դիմել է միշտ դեպ
բարձունք.
Աղատության ճանապարհին հեղեղել է ծով արցունք։—
Ուստի և ես Աբիլլեսի՛ց, նաև բեղնի՛ց պակաս չեմ,

Հավերժության շեմքին կանգնած, ես մտքերով կապող չեմ,
Եկել եմ ես պատասխանի իմ դարավոր հարցերին,—
— Ինչպես ազգն իմ, նույնպես և ես—նոր գոյությանն
անմաս չեմ։
Սրանք, ահա, իմ սրտակից ընկերներն են ուխտավոր.
Պատասխան ենք այստեղ ուզում մեր հարցերին
սրտատոչոր,
— Կատարվա՞ծ է արդյոք վսեմ մեր փափագը դարերի,
Ճշմարտության լո՞ւյսն է արդյոք կյանքի հիմքում նոր
աշխարհի»։
Եվ դեկավարն հավերժացող մեծ մտքերի այսպես խոսեց—
— Ես տեսնում եմ,— դու, եղբայր իմ, խոսք խոսեցիր
զգացված.
Երևում է, վաղնջական, հին դարերի, մարդ ես դու.
Քանզի սիրող զգացմունքի լիցքը ունի խիստ ազդու։
Զգացմունքը նոր գոյության երկնքի տակ բանուկ չի։
Սակայն, ընկեր, առաջարկիր սրտատոչոր քո հարցերն,
Քեզ պատասխան իսկույն կըտան անմահության մեր
փորձերն.

Ես կը կանչեմ իմ տեղակալ ընկերներին տասներկու,
Որ միասին այստեղ լենք պղպջումը քո հոգու։

Այդպես ասաց, ապա սեղմեց ձեռքով կոճակն,— և
իսկույն
Հանդես եկան տասներկու վեհ և քաջամարդ իմաստուն.
Որոնք արագ նստատեղին իմաստագույն պետի կողքին։
Եվ սկսեց պերճն Ավեսիք,— արևափայլ իր հոգին.
— Ես զարմանքով ասա իմացա, որ հոգու ջերմ զգացմունքն
Այս գովական նոր գոյության երկնքի տակ հարգի չէ,
Մինչդեռ նա է սիրտը դյումոզ, ստեղծագործ սուրբ
զեղմունքն,
Որն իր բերքով վսեմական իդեալների դրդիչ է։

Երդն ու նվագ, արվեստն անհագ, ստեղծագործ սուրբ
ավյունն,
Մերը սրտի և կախարդիչ կորովն հզոր գեղեցկի—
— Մեր թռիչքը դեպի երկինք, դեպ կատարյալը փառքի,—
Բողբոջներն են զգացմունքի,— նրա հույզերը փայլուն։
Երբ արևը ոսկի կառքով ալանում է երթերի մեջ—
— Զգացմունքն է կերտում նրան փայլեցնող անիվներ.
Հավերժության արմատներից անմահացող մեղեդիներ
Զգացմունքի սուրբ արինդն է հնչում սրտին կարոտատենչ։

Սա մատնավոր հարց էր միայն, որ դուրս պրծավ իմ սրտից։
Նախ ցույց տվեք մեզ գոյության ամենամեծ դաժան վերքն,
Ի՞նչ միտք ունի՝ մեր սրտերին միշտ անտարբեր այս
տիեզերքն,—
Ի՞նչ բան է նա։ Ո՞ր մայրն ահեղ ժայթքից այդ վեհն իր
արգանդից։
Կամ ինչ է սա,— այս առեղծվածն,— անթիվ դարեր
շարունակ
Սրտերն հուզող ցնորքների խորունկ աղբյուրն ամենամայր,
Որից կազմված է դանդը իմ և աշխարհն իսկ ծայրեծայր,—
Որն հնչում է քո բերանի խոռոչի մեջ փառունակ.—

— Ի՞նչ բան է նյութն, աշխարհի գութն, նրա կորումն
անեղեւույթ.
Լիցքը անհուն այս տիեզերքի, կրծքին կախած բյուր
արեւներ,—
Որ ժայթքում է անէության և գոյության բարեւներն.—
Նա է մեր մեջ միշտ հառուցում և կիրքն, և սեր, և
գայրույթ:
Ո՞ր գերագույն ճարտարապետն իր ձեռքերումն հանճարեղ
Կերտեց այս մեծ, անծայրածիր, աստղերով լի պերճ
գահլիճն:
Իսկ համրաբայլ լուռ ժամանակն ե՞րբ սկսեց իր շուն
այստեղ,
Կամ ո՞վ կարգեց հավերժության գործում նրան հորդորիչ:
Ժամանակը, որ անդադար շարժում է ծանոթ իր քայլերն,
Դնչին կապած այս գոյության բեռնավորված բյուր
ոտյլերն:

Ինչ է կյանքը այս բնության անկրկնելի բերքի մեջ,
Որ փնջել է սերն ու կարոտ գոյության նուրբ վերքի մեջ,
Կյանքն ահավոր, որ բարձել է իր լայն ուսին տանջանքն
ու վիշտ
Եվ հնչում է հավերժացող ճշմարտության երգը միշտ:
Ի՞նչ է միտքը, որ քաջունակ սերտ պահում է մեր
գանգի մեջ—
Տիեզերքն ամբողջ, ժամանակի, հավերժության ելեկջն:
— Ի՞նչ է մահը,— այդ անդադար արյունարբու ժանտ
հրեշն,
Որ կործանում է ամեն ինչ, կյանքը անում դահավիժ:
Անթիվ ազգեր այս հովիտը այցի եկան ու անցան,—
Փառքն ու պատիվ, բարքերն անթիվ ինչո՞ւ եղան մահացան:

Ո՞ւր է ազգն իմ ստեղծագործ, լի փափագով,
հանճարադյուտ,—
Մի՞թե կորավ: Մի՞թե չը կա տիեզերքի մեջ սեր և գութ:
— Հայոց լեզուն,— հավերժական կարոտներով միշտ
խոսուն.

Ո՞ւր է,— ասեք, իմ մեծ ազգի բարբառը սուրբ, երկնասուն»:
Այն ժամանակ հանձարաստեղծ գործարանի զեկավարն
Արտասանեց իր վեհ խոսքերն արժանապով ու գերազար.
— «Ո՞հ, հայ ազգի փայլուն զավակ, դու խոսեցիր
բազմարժան.
Բայց հնչում է քո ձայնը ճիշտ հին դարերի խորքերից,
Քո առածն է, քո տեսածն է կյանքի վաղանց վերքերից,—
Մինչ փոխված են ծաղկափթիթ այգիները գոյության:

Մութ անցյալում՝ մութ էր հոգին, ինչպես մթին քարանձավ,
Որի խորքից թնդում էին խորհրդավոր ձայներ ու ձոն,
— Զգայմունքն էր այն ժամանակ հզորագույն մի գործոն.
Կապում, կցում էր նա մարդկանց, ոգևորում գեպի լավն:
Քարանձավի խավարի մեջ զգայմունքն էր վարակիչ, —
— Քրմապետն էր նա տաճարի, վսեմության հաղորդիչ:
Սակայն հիմա հոգին լույս է,— նրա գահլիճը լուսաշող—
Նրա հույզերն են հաշվի տակ, նրա բույսերն են թվարկվող.
— Զգայմունքի ցայտուն կառքին տիրում է այժմ միտքն
հզոր,
Երգն ու նվագ, արվեստն անհագ՝ մտքի գործն են
փառավոր.

Սերը սրտի և կարոտի,— մտքի զորքին ենթակա,—
— Նոր գոյության կամարի տակ հին զգայմունքն էլ չկա:

Տիեզերքն է այս հավերժական և անսկիզբ մի հանդես,
Նյութակառույց և նյութական անջնջելի զորության.—
Բյուր բյուրերը համատարության տեսանելի և անտես
Կատարում են իրագործի անմահ գործը հավիտյան:
Հանդեսի մեջն հավերժական նյութն անսկիզբ ու համայն,
— Նյութն անվախճան, ստեղծագործ արարիչն է
ամենակեր.
Նա է միայն մեծ դերասանն արարքներում այս գոյության,
Նա է կերտել իր աստղազարդ վեհ գահլիճը ինքնագեան:

Ժամանակն է անվերջ ուղին և անվախճան երթը նյութի,—
— Արևների և աստղերի անմահացած ուղեշարն.

Անշեղելի ընթացք է նա հավերժական այդ կենսի,
Որ սահում է տիեզերքի մեջ, կարքը լծած քաջավարժ։
Անեզրական իր դահլիճում նյութն է կազմել ինքնացույց—
— Ինքնաճանաչ—լուսաճանաչ և անկործան գեղեցիկանք—
—Հավերժական բախումների նրբաստեղծն է մարդու կյանքն,
Ինքնազնին մի հայտնություն պարանոցի մեջ ինքնաբույծ։
Մահը սակայն, կործանարար,— ինչպես հզոր հարցն
էլ բա,—
Տիեզերքի մեջ առանձնակի ինքնություն չէ ինքնագոհ։

Մահը նյութի դարձն է բնության, նրա հավերժ փոխանցումն,
Եվ նյութավոր շարժումների լծորդության նոր դանձում։
Արդ, իմացի՞ր, հին դարերի ճարտարապետ անվանի,
— Մահը սանձել կիտենք մենք այժմ,— մահը թեպետ
մահ չունի։
Քո հորդորիչ մյուս հարցերին դու կըստանաս պատասխան,
Երբ այցելես այս աշխարհի ամենացույց թանգարանն։
Բայց ասում եմ,— հավերժության մատյանի մեջ ոսկեատառ
Գրված է վառ հանճարն ազգիդ, նրա լեզուն մեծամեծ»։

ՎԵՐՋԻՆ ՊՏՈՒՅՑ

Երբ հեռացանք, խսկույն ասաց մեծն Աքիլլես գերզմայլ.
— Մոռնենք հիմա թանգարանն այս, տեսնենք կյանքի մեծ
անցյալն»։
Մենք ներս մտանք, բայց ինչ տեսանք,— հրաշակերտ մի
հյուսվածք,
Անճառելի, գեղ. չիմացված հավերժացող մի կերտվածք։
Հնար չըկար այդ ամենը հիշողության մեջ դնել,
Հնար չը կար այդ ամբողջը ձևակերպել խոսքի մեջ.
Հատ ու կտոր մի երկու բան կարելի է վեր հանել,
Եվ միշտ պահել մտքերի մեջ, իբր անվախճան ոսկի էջ։
Ես չեմ կարծում, որ երկիրը բյուր-բյուրամյա իր կյանքում
Տեսած լինի այդքան բարձր, սքանչառես մի արվեստ.
Արևները և աստղերը կախարդական հմայքում
Կարող էին կարդալ նրան միայն անվերջ մի գովեստ։

Ժամանակը այդ գործի մեջ վերջին խոսքն էր ասել իր,
Իսկ տիեզերքը այնտեղ վերջին մեծ հրաշքն էր դասել իր,—
— Մի հոյակապ խորունկ ու խինդ ասողասպակ լաբիրինտ:
Կերտվածքն ունի պերճ դահլիճներ, ավելի քան տաս հազար
Ամեն մեկը արևազարդ մեծ հրաշքի հավասար:
Մուտքի վրա մենք կարդացինք մի ոսկեատառ ցուցանակ:
— «Տես, հողածին, իր գործերն է դնել այստեղ ժամանակն.
Ամեն մի հարց դուրս է բերված ճշմարտության լույսի
մեջ,—
Չը կա այստեղ և չի լինի ոչ մի կասկած, ոչ մի վեճ.
Ինչ որ տեսար, ինչ կարդացիր,— իսկը այդ է վերջնական.
Տե՛ս, ըմբռնիր և եղածը, և գալիքը, և ներկան»...

Եվ մենք տեսանք գործերը այդ, լույսի նման բացահայտ...
Հարյուր դահլիճ նվիրված էր այս գոյության դնացքին,
Մարդու կյանքին, տիեզերական մարմինների ընթացքին:
Իսկ դրանցից մեկի պատին վառ տառերով ասողանիշ
Կյանքի գործը, ասես հրաշք, մենք կարդացինք ակնապիշ.
«Մարդը, ծնված իբր անասուն, կատարյալի դարձավ սուն:
Մարդն, սկզբից որ ոչինչ էր, մինչ վիճակը կատարյալ
Անցել է բյուր ճանապարհներ, դարձել է այժմ գերավնյալ,
Բայց անցյալի բյուր փորձերը երբեք անմիտ կորած չեն.
Մութ ուղիներն լուսավորող ճրագները մարած չեն.
Նաղմերի պես, գույների պես ներկայի մեջ կան նրանք,
Իր անհամար կամիրներին օվկիանոսն է արձագանք:

— Հատորները մարդու հոգու գրանցված են այստեղ,—
Կերտվածքները հավերժության կյանքի համար են անշեղ»...
Դահլիճներից մեկում այնտեղ մենք կարդացինք բացեբաց—
Զարիքների արմատների մասին միայն մեծ հոդված.
— «Էությունը պատերազմի մարդու հոգին էր միայն,
Նա խրատն էր այս գոյության, թեպետ չարիք էր համայն —
Կործանիչը բյուր-բյուրերի, դահիճներով բազմազան—
— Կիրքն էր զինված չար գործերի,— կիրքը իբրև չար
դազան...

Գործը կրքի, որը միայն ժանտ քայլվածքն էր պատմության,
Վտարված է մարդու սրտից, մարդու հոգուց հավիտյան։

Եվ քանի կա երկիրը այս, ասող ու արև քանի կան,
Քանի կյանքում գործում է դեռ միաքն,— հանճարի
առարկան,
Աչքը մարդու էլ չի տեսնի պատերազմը վայրենի»։
Այդ հոյակապ և մեծաշուք դահլիճներից մեկի մեջ
Աչքիս ընկավ մի մեծ ցուցակ, ասահեղանիշ ելևէջ.
— «Մարդու ցեղին, արյունների մեծ հեղեղին մի հաշիվ.—
Ավելի ճիշտ՝ բիրտ անցյալի արարքներից մի մեծ շիվ»։

Ես կարդացի մարդու ձեռքով թափված արյան մեծ գումարն
Գերազանց է եռապատիկ,— քան օվկիանոսն ահավոր,
Միայն, միայն Թվարկումին այդ գործերի հանցավոր—
Բավական չէ նույնիսկ անծայր ժամանակի մեծ ոսմարն»։
Այդտեղ թողած այդքան բերմունք,— մենք այլ անցանք
բաժանմունք.
Մենք մեր աչքով տեսանք այնտեղ հարյուր ընտիր մեծ
դահլիճ,
Որ կերտում էր պատկերի մեջ կենդանական կյանքի խիճն,
Եվ կարդացինք պատի վրա—մեր սրտերին հորդորանք.
— «Ամենամեծ մեղքն է մարդու—լինել կյանքում մտակեր,
Եվ կոտրել, իբրև անմիտ որովայնի զարդարանք,
Կենդանիներ, որ ծնված են դառնալ մարդուն սուրբ ընկեր.
— Բյուր բյուրավոր անմեղներին, անպարտներին զոհել
զուր—
Միայն կրքին, ագահության ախորժակին մատնելիր։
— Կյանքը կրքին նավ մի կարծիր.— միտը ուտել
կենդանու—
Նույնն,—եթե գազանացած մարդը ծամի միտը իր»։

Մենք հինգ հարյուր դահլիճ անցանք—միմյանց կողքի,
շարունակ.
Գծված էին ոսկի տառով ասուածները փառունակ.
Անմահները Հոմերոսի, առջևն իրենց անհուն մեղք.

Աշուր, Պարսիկ և Բաբելոնն,— Եգիպտոսի բյուր Ահեղք,—
Եվ աստվածներն հնդիկ ու չին, Եվրոպականն իսկ վերջին։

Անմահների թիվն էր այդտեղ,— հասկանում եք, բյուրաբյուր
Եվ բոլորը սակեշղարշ—կոչված էր այդ. «սուտ աղբյուր»։
Բերված էին նրանց բոլոր գործերը շար, բանտարկու,
Գրված էին նրանց մոլոր փորձերը հար, ահարկու,
— Բայց վճիռն էր ժամանակի,— նրանց դլխին հոգնակի—
— Աստվածները բնության մեջ ոչ եղել են և ոչ կան,
Նրանց համար դյուրին օթյակ մարդու հոգին էր ներհակ։
Կապված էին նրանք միայն կրքերի հետ միշտ ապահ.
Եվ այնտեղից դրոհ տալիս, ինչպես ծովի կույր կոհակն.
Շնորհքի մեջ ստեղծագործ, ցնորքի մեջ դլխապարտ—
Մարդն էր սնել նրանց իր մեջ իր կրքերին պահապան.
Բայց էլ չը կան կրքերը այն,— այլ է հոգին ասպարդարդ,
Էլ չեն կարող ուստի լինել աստվածները այդպիսան։

Մարդու հոգուց վտարված են դազանները ժանտաժուտ,—
Չը կան նաև նրանց դրդիչ աստվածները միշտ անգութ...
— Ոչինչ էին նրանք իրոք, ոչընչացան անողոք»։
Անցանք հետո մենք բաժինը իրավունքի, պետության,
Խիղճը կերտող օրենքների, բյուր հորդորիչ բարքերի,
Խոր անցյալում կյանքի անող զարդարանքի, գթության,
Ցարն ու բարին միշտ տարբերող մեծ աղբյուրին Արդարի...

Անդ կարդացինք մենք ցուցանակն ոսկի տառով,—մի ազդակ.
— «Գործիք էին սրանք հոգու և ոչ հիմար մի կարծիք,
Դրդում էին մարդուն անվերջ, իբրև ասպար առանցիկ.
Հիմքը դրանց չը կա այսօր,— չը կան նրանք ինքնազոր»...
Այդ կարդալով՝ մենք միասին առաջ անցանք շտապուցի,
Եվ ցույց ավեց մեզ Աքիլլեան մի անսովոր երևույթ.
— Տեսեք, ահա,— հանճարների հանդեան է սա անթերի...
Հազար դահլիճ հավերժական լույսերի մեջ և բեղուն.
— Նուրբ, հմայուն կերտվածքի մեջ ասողներն էին
շաղշաղուն,

Աստղերը այն, որ առավել լուսատեղծ են և թովիչ,
Բան աստղերը կեսս գիշերին երթերի մեջն հմայիչ...
Հանճարները այս գոյության, վճարները փրկության—
Կանգնած էին պատկառող հայրենիքի հարկի տակ:

— Ճշմարտությունն,— լեզու առած, հայուսատի մեջ
խոսության—
Խոսում էր անդ կյանքը մարդու հավերժացած փառքի տակ.
Հանճարներից ամեն մեկին սերն էր ձոնած անմեկին...
Հանճարն հզոր, ձեռքին բռնած հավերժության բանալին,
Եվ նրա հետ բյուր-բյուրերը նայում էին անցյալին:
Շեքսպիր, Գյոթե, և Կանտն ու Դանթ, մեծն Էսքիլես և
Նյուտոն,
Արիստոտել, Պլուտարքոս, Սոկրատեսը, Պղատոնն,
Որն և մեզ հետ անդ արտագին մատնակից էր վերելքին,—
Կյանքին էրոս—մեծն Հոմերոսն, Լեյբնից, Դեկարտ,
Սպինոզ.—
Հազարները, հազարները,— մարի հեղեղն Օվկիանոս...
Եվ բոլորը թշում էին կատաղ դեպի արևներ,
Եվ բոլորը թաշում էին բերքը դեպի բարևներն.
Հայկը հմայք, Խորենացին և Գենեցիկն իսկ Արա,
Բյուր-բյուրերը, որոնց հոգին սերը նշեց երկրի վրա...
Հզորն Ալաս, ինքն Աբիլլես, Մակեդոնացին ու Կեսարն—
Հանճարների հանճարները հավերժությանն հավատար—
Նոր գոյության վառ ճակատին ինչպես անմահ
Ծիրկաթին»...

Մենք միասին կարդում էինք ամեն մեկի գործը մեստ.
— Կյանքը միշտ վեր բարձրացնողը, թևավորվողն էր
արվեստն.
Շեքսպիրի մոտ գրված էր պարզ,— մեր մտքերին իբրև
մարգ.
Փոթորիկը մարդու հոգու, կամ կրքերը բանսարկու
Սա նկարեց ամենից վառ իր վրձինովն ահարկու»:

Հոմերոսի գլխի վերև լուսադիրը ակնարկեց.
«Անմահների, հսկաների գործը հզոր սա երգեց»:

Դանտի գլխին գրված էր ճիշտ—«Սա բացատեց աշխարհն
հպարտ,—
Որի միջև ինքն էր ծնված, ինքն էր ապրում իբրև մարդ»:
Մեր սկզբած խուզարկությունն անդ կը տևեր շատ երկար,
Հավերժության գործերն էին խուզարկության առարկա.
Մինչ մեր առջև դեռ անքննին հազար հազար դահլիճ կար.
Ուստի հաճախ հարցնում էինք,— այս բոլորին
վերջ կը դա՞...
Մեր Ավետիքն այդ ժամանակ հարցում արեց փառունակ.
— Ո՞վ Աբիլլես, մենք հասկացանք քո նշածը շարունակ...
Դու այլ մի բան ևս մեզ ասա.— ո՞ւր են ապա
ազգությունները,
Երկրի վրա նրանց կերտած հանճարապյուտ լեզուները:
Միրահարն եմ ես իմ ազգի, բյուրաբազում ատնջանքի
տեր հայ ցեղի,
Ո՞ւր է գանձը այն հոգևոր,— արդյունքն հզոր ուղեղի,
Որ մարդկության հազի վերելքին հանձնեց հայի մեծ
հոգին»...

Եթե իրոք հավերժության դահլիճների մեջն այստեղ
Չլկան անմահ իմ ազգության կերտվածքները փառահեղ,—
Կը բողոքի իմ վեհ հոգին արարչության շնորհքին»...
Պատասխանեց քաջն Աբիլլես իմ ընկերոջ սիրակեղ.
— «Տե՛ս, Ավետիք, կորովակի, դու անպրանիկն հայ ազգի.
Ազգությունները իրև այժ, վերացել են ուղղակի:
Նրանց հոգին, նրանց հանճարն կա գոյության նորքի մեջ,
Եվ իսկ լեզուն, իրև ավյուն կա հավերժի զորքի մեջ.—
Սակայն իրև մեծ անցյալի ստեղծագործ մի կորով,
— Ինչպես արդյունք կերավնյալի մեծագով,—
Ազգերն անթիվ ցույց են տրված դահլիճներում առանձին,
Ուր կը տեսնես դու ազգը քո,— իրև հրճվանք քո անձին»...

Այնուհետև մենք մոտեցանք Աբիլլեսի նկարին
Ու կարդացինք նրա վերև.— «Կյանքը դարձել է արև».
Սա կամեցավ. կյանքը տեսնել շողյունի մեջ լույսերի,
Բախտը, սակայն, չկատարեց ըղձանքը նոր բույսերի»...

Ես հարցրեցի առաջնորդին,— «Տեսնո՞ւմ ես մեծ
մակարին»...
Ավա՜ղ, այնքա՜ն բարձր ասացի ես անպիտույշ ու դերև,
Որ վեր թռա իսկույն քնից, անցյալ երազը անբիծ։
Շուրջս ամուր ես նայեցի.— իրարարձն էր շատ մռայլ,—
Բայց ինձ ու ինձ միայն արեցի.— օրն է գալիք լուսափայլ...
Էն օրվանից ես անդադար աղմկում եմ մեծագոչ. —
— Կյանքը ..ցույց է անմահության,— հասկանո՞ւմ եք
դուք թե ոչ։

Ի Պ Ի Լ Ո Գ

ԷԼԻ ԴԵՊԻ ՀԱՅՐԵՆԻՔ

Մեր բաջերի և ջոջերի բոլոր վայրերը անցա,
Կյանքի անհայտ ուղիների պատկերահանը դարձա,
Գետերի մոտ՝ ջրերը հարց անցքերը հին խոսեցին,
Հուզվող ծովի, կանչող հովի հարց ու փորձը իմացա...
Ես մշուշից խոր անցյալի ես կանչեցի մեծերին,
Նոր քննություն ես տարբեցի մեր հնության գործերին,
— Որ իմանամ, ո՞վ է դրել հիմքը կյանքի փորձերին,—
Կյանքի բոլոր ուղիների ժիր քննիչը ես դարձա...

Վերջը փոշման ու անպյուման՝ միտքս դարձավ մի դահիճ,
Եղած չեղածը սրտիս մեջ նա համարեց մի ճահիճ.
Ամոլածներիս նա գլխատեց, կուռքերի հիմքը խախտեց,
Ու հաստատեց նոր կարգ ու տարբ իմ մեջ իբրև արարիչ...
Եվ ազատված կյանքի ծանր ճահիճներից ու ծեսից,
Իբրև հատված հավերժության, իբրև հոգի մի անբիծ,
Շրջում եմ ես օր ու գիշեր և որոնում իսկություն.
— Միտքս արի, սիրտս բարի, ես հեռո՞ւ չեմ ատաղերից...

Իմ հայրենի դաշտերի մեջ, Մասիս սարը իմ դիմաց,
Եթերային կյանքի մասին հարցում արի խորիմաց.
Եվ նա, քաջը մեր լեռների, իբրև վիպա անցյալի,
Խոսքը խոսեց ինձ իսկության, կյանքը ասաց սրտաջաց...
Քանի՞ անգամ Մասիս սարը պայծառատես և արի,
Ազատքի պես գիրքը կարդաց հավերժական աշխարհի.

522—26

Քանի՞ անգամ ես լսեցի խրատը խոր ու բարի.
— Նա ինձ ասաց, ուր է հասում կյանքի գնացը սրընթաց...
Մասի՜ս, Մասի՜ս, դու վիհարան երկնահռչակ զորքերի,
Հողմերը քեզ կարդում են վեհ գիրքը վերին բարքերի...
Ամպերը սեգ՝ քաշվորի պես, քո ուսերին տարածված՝
Աղաղակում ու թնդում են իմաստով հին երգերի...
Կայծակ ու շանթը բոցավառ՝ ասես թուրը արարչի,
Բռնկվում է, որ աշխարհը իր հարվածովը ջնջի.
Եվ վերջ դնի այս արարքին, այս արցունքին տարաունջի,—
Իսկ դու հզոր կանգնած ես միշտ վեհ ու վսե՜մ, վիթխարի՜...

Տես, շա՜տ անգամ բուքն ու բորան, ալան թալան ու մրրիկ
Ասես հեղեղ, բիրտ ու ահեղ, քեզ պաշարում են ասպատակ...
Բայց դու հզո՜ր՝ կանգնած ես միշտ, անպարտելի և հպարտ,
Եվ չես ուզում նայել անգամ դուր խաղերին այդ փոքրիկ...
Դու լա՜վ գիտես, բարվանի պես փորձը կգա ու կերթա,
Էլի արևը դուրս կգա, կյանքը նորից կվերդա,
Եվ քո սրտում աշխարհի միտքը հավիտյան կթնդա,—
Մինչ դու հզոր՝ կանգնած ես միշտ, երկնքի պես անսասկ...

Մասի՜ս, Մասի՜ս, տես քո գիմաց Արարատը երկնազոր
Քեզ պես արի կանգնած է միշտ՝ մեջքն ու ուսը անսասվոր...
Դուք երկուսով՝ որպես վկա անդառնալի անցյալի,
Դուք երկուսով զորքը գիտեք հին ազգերի ալևոր...
Ասե՛ք, խոսե՛ք,— ինչպես անցան ազգերը բյուր այս հոլմից,
Ո՞վ էր եկավ կամ ի՞նչ տարավ այս աշխարհից, այս բերդից,
Ո՞վ կար ազատ և անարատ սիրտը մաշող սև դարդից,
— Ասե՛ք, խոսե՛ք փորձը, զորքը հին ազգերի ալևոր...

Մասիսը ժիր, ճակատը բաց, և Արարատը խոհուն
Ինձ միտումի խոսք ասացին, խոսքը արի, կախարդուն...
Աչքիս առաջ՝ բարվանի պես՝ հեռուներից, անցյալից
Անցքերը բյուր եկան, անցան խորհրդավոր ու փայլուն։
Եվ ես կանգնած՝ նայում էի կյանքի հզոր դեմերին,
Լուռ և մխոր լսում էի սրտի հզոր դատերին,

Խո՞ր հայացքով դիտում էի հեռվից կանչող բաղերին,
— Անցքերը բյուր եկան, անցան խորհրդավոր և խոհուն...

Եվ Մասիսը, Արարատը, իբրև հզոր հսկաներ,
Հավերժության դռների մոտ՝ ինչպես ահեղ պահապան,
Ինձ ասացին հին ազգերի անցուդարձը, երգն ու սեր,
Եվ խոսեցին կռիվը հին, զայրույթն ու կիրքը բնության...
Ես լսեցի խոսքը նրանց այն հեռավոր օրերից,
Երբ կյանքը դեռ նոր էր ծնվել միշտ հարազատ իր մորից,
Երբ մարդը դեռ չէր բաժանված իր քույրերից, բույսերից.
Եվ երկիրը դեռքը ուներ իր անթառամ մանկության...

Եվ ես տեսա. քանի՞ անգամ սուրը ձեռին ու խռով,
Ազգերը բիրտ եկան անցան իմ հայրենի հովիտով.
Քանի՞ անգամ, անմահ ազգ իմ, դու զոհ դարձար թշնամուն,
Քանի՞ անգամ նա կործանեց քո շենքը սուրբ, անվրդով...
Էլ չմնաց և ոչ մի ցեղ որ բեռ չտար քո սրտին,
Էլ չմնաց ոչ մի հարված, որ չտեղար քո դլխին.
— Քո հարկի տակ, քո սրտի մեջ դարձար դերի դու
խալխին,
— Քանի՞ անգամ մահը դաժան անցավ քո սուրբ
հովիտով...

Քանի՞ անգամ հիմքն ես դրել քո վեհ ու սուրբ շենքերի,
Քանի՞ անգամ ուխտ ես արել դու երկնավոր բերքերի.
Բայց թշնամին ամեն անգամ սուր է քաշել անողոք,
Որ կործանի քո գործն անմահ՝ արյունի մեջ ավերի...
Քեզ քո բախտը թույլ չավեց հասնել կյանքի բարձունքին,
Դարեր ի վեր սահման չկա քո դառնագին արցունքին,
— Ոչ մի ազգից դու պակաս չես սրտիդ լուսավը վերին,—
Քեզ քո բախտը թույլ չի տալիս հիմնել գործը հանճարի...

Ո՞ւր են ապա քո երգիչները աննման և հզոր,
Ո՞ւր են, ասա քո կարիճները, հաղթության միշտ սովոր,

— Տես, քո սխուր ճանապարհին ավերակները անթիվ,
Եվ նրանց մեջ բուերն են այժմ կյանքը վարում
մենամոր...
Իմ հայրենի՜ք, ոսկի երազ,— ե՜րբ կգա քո առավոտ,
Ե՞րբ կճախրես դու դեպի վեր, արևներին միշտ կարոտ,—
— Որ քո սրտի տաճարի մեջ կյանքը շողա լույս ու սեր.
Ա՜զգ իմ անմահ, երբ կգա քո ճոխ ու փարթամ առավոտ...

Վե՜ր կաց, ով քաջ, արծվի պես վեր սավառնիր երկնքով,
— Եվ ոչ մեկից դու պակաս չես սրտի անհուն քո հանքով...
Մասիսը, տես և Արագած, քո հայտնությանը վկա,
Քեզ թև կտան դեպի արև իրենց անհաս բարձունքով:
Արծվի՜ պես, արծվի՜ պես, աչքերդ բաց և արի,
Կուրծքդ լեցուն հանդգն և սեր, սրտիդ ասավածը բարի,—
Վերե՜, վերև՜ կանչում է քեզ քարվանը վառ ասպղերի,
Ա՜զգ իմ, ա՜զգ իմ, վեր կաց շուտով, օրը անցավ երկնքով...

Դու առաջին աղբերի հետ ճամբա եկար վեհ ու վեհ,
Դու անմեկին քաջերի հետ հանդես եկար ինքնատես.
Մերթ ասպարեզը քո դրծի ներկվեց անմեղ արյունով,
Եվ սուրը հանդեսը քո փորձի դարձավ միայն ոգբի ծես...
Դարեր անցան, բայց ծովի մեջ՝ մրրիկների, հողմի դեմ
Դու քո ձեռքին պիրկ պահեցիր սուրը դրոշակը վսեմ...
— Ո՞վ կարող է ազատության քո ճանապարհը խափանել
— Չէ՞ որ երկինք սավառնողին պետք է վերին փորձի
բեմ...

Քեզ բնությունը համակիր՝ դա՞ռ է կանչում անդադար,
Ջուրն ու ջրվեժը քո ծոցին՝ ունին վրեժը անմար.
Տե՞ս, քո լեռները երկնահաս,—իսկ քո բևռները անթիվ—
Ասես կիրք են հավերժության, ձիրք են ոգառ ու համառ...
Անդնդախոր ձորերիդ մեջ գետերը հորդ՝ բարձրաձայն
Ահեղաշունչ երգ են ասում,—երգ անցյալի ու արյան,
—Տե՞ս, քո անտառը վիշտ ունի,—դեռ չլսված խոր մի վիշտ.
Իմ հայրենի՜ք, ե՜րբ կծագի սուրբ արշալույս քեզ համար...

Ա՜խ վաղեմի քո փառքերը տապալված են հողի տակ,
Հարուստ ու շեն քո կարգերը ավերված են ու խորտակ.
Ավերակներ շուրջը պատած՝ մեջը սուգ է ու ոգվոր,
—Ո՞ւր է, չկան քո գործի մեջ Մեսրոպ Մաշտոց ու Սահակ.
Հիմանգագին թույն է ծորում սուգ ու շիվան քո սրտից,
Քո գործերին վատն է տիրում,—վատը, սուտը և կսկիծ.
Քո դաշտերում, քո վաշտերում,—ամայություն ու թախիծ,
—Ա՜ղդ իմ, ա՜ղդ իմ, բարքերդ լուռ, փառքերդ զուր ու
խորտակ:

Տես, մարդկության միտքը արի սավառնում է դեպի վեր,
Եվ գիտության ձիրքը բարի հորինում է նոր թևեր.
Կյանքը լույս է, թռիչքը՝ հույս, մեզ տանում են դեպ արև,
—Իսկ դու ազգ իմ, ինչո՞ւ անվերջ ցավի մեջ ես ու ավեր...
Թևավորվա՜ծ, ձևավորվա՜ծ արդ ու զարդով և հպարտ,
Ե՛կ ասպարեզ, ձիրքերդ վեր, սեր ու հանճարդ անպարտ,
Թող տապալվին կուրծքդ մաշող տառապանքը, ցավ և դարդ,
Ո՛հ, հայրենի՛ք, շուտ տոքի եվ և սավառնիր դեպի վեր...

Ձեր սև վիճակը ես գիտեմ, քույր ու եղբայր իմ կորած,
Դուք տեղահան և ցիրուցան, ձեր սուրբ օջախը մտրած,
Օտարի մոտ, բեթարի մոտ, լույս ու գարնան միշտ կարոտ՝
—Հայրենի տուն, հայրենի բունը նգավոր, ավերված...
Քույր ու եղբայր,—լսում եմ միշտ ձեր երգը խոր ու կսկիծ,
—Մի տեղծված, որ ձեր ճամբին հնչում է խոր գարերից,
Հնչում, կանչում է դառնաձայն, բայց չի գտնում կարեկից...
—Հայրենի տուն, հայրենի բունը թարուրանդ և ընկած...

Ո՞ւր ես, դուրս եկ ձենով Օհան, ձեն տուր անհաղթ քաջերին,
Քո ձայնը զիլ կխորտակի Երիքոնի պատերը.
Դավիթ, Մհեր, անթիվ զոհեր—գործի ելեք սրտագին,
Թող նոր ընթացք ձեր դեմ առնեն կյանքի վարար գետերը.
Մեսրոպ Մաշտոց և սուրբ Սահակ, Շնորհալիդ մեծ Ներսես,
Եվ բյուր քաջեր, և բյուր ջոջեր անցեք մի նոր ասպարեզ,
—Իմ հայրենի՛քը ասող ունի,— ասողը պայծառ օրերի,
Վազեք հասեք, անհաղթ քաջեր, նոր գործ տրեք վեր ու վեր...

Ա՛զգ իմ անմա՞հ, խոսքդ ասա,— Հավերժության խոսք լինի.
Քո խոր սրտի սոսկումն ասա, որ կյանքը այս վեր հանի.
Մաքի ավազ տառերի մեջ դու միշտ վայել տեղ ունես,
—Խոսքդ ասա կայծակի պես, որ սիրելիքդ տատանի...
Զո՞ւր չես եղել անթիվ դարեր դու քաջության մարտերում,
Զո՞ւր չես դիմել անթիվ դարեր դեպի լույսը ու փարոս,
—Չէ՞ որ ցավն է քեզի արել ճշմարտության սուրբ հերոս,
—Խոսքդ ասա,—քեզ արժանի Հավերժության խոսք լինի...

Ա՛խ արյունդ իմ երակում սիրելիքի զարկն է զարկում,
Իսկ սվյունդ, իմ զգյակում անհունի երգն է երգում.
Սուրբ անունդ՝ հնչում է խոր, ասես կանչը երկնային,
Եվ դարունդ՝ երազի պես սրտերի մեջ է ծաղկում...
Ա՛զգ իմ հզո՛ր, շուտ ուրի եկ,—տես քո գործերը ընտիր,
Իմացության քաջերի պես՝ աշխարհի կարգը դատիր.
—Եվ ոչ սրից պակաս չես դու, սեր ու հանճարդ ազդու,
Սրտիդ հանքերը հանդես բեր, բարձր ու վսեմը գտիր...

Քեզ եմ ասում, Զևնով Օհան, դուրս եկ հզոր ու կանչիր,
—Երկրե երկիր սրտի պես թող միշտ քո ձայնը թնդա.
Հավերժության գործի անհագթ թմբուկահա՞ր դարձիր.
—Թող քո ազգի ձիրքն ու ձգտումը սիրելիքդում արտա...
Ա՛սող իմ, ա՛սող իմ վառ ու անբիծ՝ իմ մթնադույն երկնքից
Շա՛տ վաղուց ես դու կանչում ինձ դեպ հեռուները փայլուն.
—Թող հանապարհը իմ պատեն փորձանքը սև ու կսկիծ,
Բայց էլի ես քեզ կգիմեմ, միշտ դեպի վեր ու անհո՞ւն...

ՍԱՀՄԱՆԻ ՄՈՏ

Երկրի վրա տեղ չմնաց, որ աչքը իմ չտեսներ,
Մեր վերքերին դեղ չմնաց, որ սրտումս շրուսներ,
—Ծթերի պես տատղերի բուն՝ խոր երդերովս անհուն,
Էլ աշխարհում երգ չմնաց, իմ ականջին չհասներ...
Իսկը իմ մեջ նուրբ իրերի, սոսկումն իմ մեջ հավիտյան,
Գեսքը իմ մեջ սուրբ եթերի, խոսքը իմ մեջ անկործան.
—Ինձ են միայն խոսքը տվել, տերը ես եմ բնության,
Էլ աշխարհում գիրք չմնաց, որ իմ սիրտը չտեսներ...

Բոլոր գետերը աշխարհում հոսում են միշտ դեպի ծով,
Բոլոր բաղերը ջրերում խոսում են ճիշտ արտի սով,
Բոլոր դատերը մարդու մեջ հյուսում են նոր առավոտ,
—Գիրքը դրոց միայն իմ մեջ, սիրտս անհուն, ասես ծով...
Գիտե՞ք արդյոք, ի՞նչ են խոսում ծաղիկն ու բույսը դաշտի,
Հասկանո՞ւմ եք, ինչ են ասում մրրիկն ու լույսը սրտի,
— Բոլոր գետերը հոսում են կյանքի համայն աղբյուրից, —
Կյանքը մեկ է, աշխարհը՝ մեկ, սիրտը նրա մարդու մեջ...

Ինչ եղել է, կամ ինչ որ կա, ինչ կլինի անխուսափ,
Մեկ է միայն, մեկ անբաժան գետի նման բաղմաշատ....
Նա է հոսում, անվերջ դասում հավերժության գործը իր,
—Կյանքը մեկ է, աշխարհը մեկ, սիրտը նրան միակ չափ...
Սեղ սարերից ու ծովերից, խոր ու հզոր հողմերից
Լսվում է միշտ խորհրդավոր կյանքի իմաստը անբիծ...

Կյանքը մեկ է, աշխարհը մեկ, գիրքը նրա մարդու մեջ,
—Կարդա և տես հավերժության սուրբ էջերը սառցալից...
Չէ՞ որ ծաղիկը մորենու զգում է իր բողբոջը,
Կարմիր շողիկը վարդենու գիտե սիրտ սուրբ կոչը,
Բույս ու ծաղիկ, լույս ու հովիկ լեցված են խոր կարոտով,
Աղմկարար վտակը իսկ զգում է իր խոխոջը...
Եվ բնությունը միշտ հղի՝ շեն ու շողուն գարունին
Հաղար նազով, հաղար սազով սպասում է իր բերքին...
Ցավերի մեջ սիրտը անվերջ կարոտ է. միշտ իր երգին,
—Ո՞վ հորինեց այս երկնավոր կյանքի հզոր բողբոջը...

Մութ գիշերին իր հուշերին հոգին իր կարոտն է խոսում,
Իսկ անմեկին իր փշերին վարդը հեքիաթ է ասում.
Ասաղ ու արև, սեր ու բարև մեկ աղբյուրից են գալիս,
—Եթերի մեջ մեկը անվերջ իր սարք ու կարգն է դասում...
Իմ սրտի մեջ խոր ապրումի հաղար ու մի աղբյուր կա,
Ինձանից դուրս կյանքի գալանիքը գտնելու ճա՞ր չկա,—
Չէ՞ որ հոգին է բնության անցուդարձին միշտ վկա,—
—Չէ՞ որ մեր մեջն է աշխարհի վարար գնար միշտ հոսում...

Արծվի պես կանգնում եմ ես լերան բարձր կատարին,
Նայում եմ՝ ես հեռվից հեռու մարի թանձր սթարին.
Աչքիս առջև կյանք է հոսում բյուր բերքերով վեր ու վես,
—Սիս իմ գատածը նման չէ հին մարերի անտառին...
Տեսնում եմ ես՝— մահ ու ծնունդը անցավոր մի վիճակ.
—Չկա այստեղ ոչ կործանում և ոչ նորի հաղթանակ...
Կյանքը մեկ է և գործը մեկ,—ինքը իր մեջ նպատակ.
—Իմ տեսածը, իմ արածը ես չեմ մոտենի օտարին...
Արևն ահա լույս է տալիս,—գործը նրա անսասան,
Իմ մեջ մի նոր բույս է լալիս՝ փորձը նրա անբաժան:
— Չկա այստեղ ոչ մի էակ, որ իր դասը չունենա,
Հեռվից ահա լույս է գալիս,—գործը նրա անխափան...
Ոչ ոք չասի ինքն է այստեղ, այս գործի մեջ անդրանիկ,
Ոչ ոք չասի, ինքը իր մեջ նոր բերդ ունի անառիկ.
—Եվ ամեն ինչ մեկ է այստեղ,—մեկ՝ անբաժան ընտանիք,
Հեռվից անվերջ լույս է գալիս,—գործը նրա անսասան...

Եվ այս հոգոր պատկերի դեմ, կարոտով լի ճշմարտի՝
Դառնում է խոր հայացքը իմ դեպի խորանը սրտի.
Այնտե՞ղ, այնտե՞ղ կա խոկություն,—իրերի երթը խորին,
Ճշմարտությունն է պահ եկած ավյունի մեջ իր բերդի...
Աչքերս խուսի, մտքերս ծուսի, կյանքը ամբողջ՝ գանգիս մեջ.
Թռությունը բյուր մտերով թանձրանում է հանքիս մեջ...
Գայությունը բյուր դասերով մերկանում է ջանքիս մեջ, —
—Գուքն է, ահա ստվածանում հնոցի մեջ իմ սրտի...

Ա՞խ, թե մի օր ես թե առնեմ, այս մութ ձորիցը ելնեմ,
—Արծվի՛ պես, արծվի պես երկնակամարը բռնեմ.
Ես իմ սիրտ,— ես իմ սիրտ կյանքի վրա շաղ կաամ,
— Մտքերը իմ ստվերի պես բյուր խմբերի կդարձնեմ...
Եվ կկապեն մտքերը իմ մի նոր կամար երկնքի,
Եվ կթափեն ջահերը իմ՝ սերն ու լույսը բարձունքի.
Եվ կհնչի կյանքին այնօր խոսքը խորին գարունքի...
Ա՞խ, թե մի օր ես թե առնեմ, կյանքի կամարը բռնե՞մ...

Երբև հոգի մի նոր կարգի՝ ցույց կտայի բացերաց,
Ինչպես Գուքը՝ բյուր սրտերի մեր մեջ դառնում է ստվածա-
—Ցույց կտայի ներսը նրա, ուր կա հուզում ու տենչանք,
Որ և կցում է իրար հետ ստվեր ու արևը կերտված...
Տեսե՞ք, մեր մեջ կա խոկություն և իրերի նուրբ լեզուն.
Իմ մեջն է Գուքը կատարում ծեսերը իր երազուն.
Չէ՞ որ նա է կյանքի կանչել բույս ու թռչուն, անասուն.
Նա է մեր մեջ խոր հաստատել դիվանը այս և ստվածա...

Ո՞վ է արդյոք ինձ աչք տվել, որ հեռուները տեսնեմ,
—Լեռու, ականջ, հոգեր ու ատանջ, որ խոսք ասեմ ու լսեմ.
Ո՞վ է իմ մեջ կանգնել դիվան, ձիրքը վերին բարձրության,
Որ այս գործով, այս խո՞ր փորձով հեռուներին միշտ
հասնեմ...

Նյութն է այսպես աչքեր ծնել, որ ինքն իրեն լավ տեսնի,
Գուքն է այսպես ավյուն սնել, որ նա երկինքը հասնի.
Ձիրքը նրա իմ մեջ ահա ստվածարար կբուսնի,
Իմ սիրտ գուք՝ ես իրեն նյութ հեռվից հեռու կտեսնեմ...

—Բոցե՛ր, բոցե՛ր փարձերը ձեր միշտ արտարին ու անձոմ.
Միրան է միայն կյանքը ծնում, գործերը մեծ ու հատուկ.
Ձեր մեջ է լոկ խմացումի հրապը վառ ու պատրույգ,
Գուբին է ձեր մեջ կանգնել անշեջ իր երկնային գործարան...
Միրաբ, տես մի գինարան, գորբ է իր մեջ հարինում,
Նրա գորբը, տես գիման, իր մեջ նոր կարգ է ծնում.
Միրաբ, ահա, գրահավոր՝ գործով հեռու է գնում,
—Մեկ տանում է դեպի գարուն սրտի գորբը այդ անհուն
Հունար, հունարը Գուբի մեջ, կյանքի գումարը իմ մեջ,
Սերը նուրար է երկնային, նրա տոմարը իմ մեջ.
Բոլոր ջոջերը ցիրուցան, բոլոր քաջերը անցան,
Իսկ նրանց բեմը երկնային, հույսերի թեմը իմ մեջ...
Եկե՛ք, եկե՛ք, ընկեր ու սեր, ձիրքը ժամի ձեզ տանեմ,
Բերքերս հեզ և ամանաթ են միտումի կիսոսեմ.
Կյանքի երգը, որպես հեքիաթ, հեռուներին կտանեմ,—
— Հունար, հունա՛ր սրտի մեջ, տակի կամարը իմ մեջ...

Առաջ իմ, տաղ իմ, հեռվից հեռու ինձ կանչում ես դու
սրտանց,
Երազի մեջ, իմ տակի մեջ տեսնում եմ քեզ միշտ անանց.
Կյանքս անցավ, իսկ դու դեռ կաս իբրև վերջին ապավեն,
Քո հետևից և անհանգիստ են միշտ կրակ անթախանձ...
Բա՛խտ իմ, բա՛խտ իմ,—բեկնից բնավ վարդ ու ժպիտ
չեմ ուզի,
Քո բերքերը, քո ձիրքերը ինձի երբեք չեն հուզի.
—Քարը, քարը, տեսեք, իմ դեմ խոր հուզմունքից կիսոսի,
Ա՛ռաջ իմ շոգուն, ես կգտնեմ քո սուրբ ուղին դերազանց...
Իմ բերքը դուք, վայրի հողմեր, երկրե երկիր եք ցանում,
Եվ դուք, հեռու, անհայտ կողմեր, ձե՛զ է սիրտս որոնում.
Ո՞ւր ես, գարուն, դուրս բեր ցույցի սրտիս խորին հանդեսը.
—Տեսե՛ք, մարդիկ, Գուբը իմ մեջ սեր ու ասավաղ է
դառնում...
Հե՛յ, հե՛յ հեռու իմ ընկերներ, ո՞ւր եք, եկեք դուք իմ դեմ.
Եվ դուք, և դո՛ւք, թշնամիներ, ձեր արածը ես դիտեմ.
—Հեռուներից էի եկած և հեռուներ կճախրեմ,—
Բա՞վ է, բանի սիրտս ցանի կյանքի վրա լույս ու սեր...

Մնաք բարի յաղ ու ծանոթ, սահմանը մոտ է գործիս,
Մնաք բարի սեր ու կարոտ, պայմանը մոտ է դարձիս.
Բերքերը իմ ահա ձեր դեմ,—էլ ասելիք ես չունեմ,—
—Մնա՞ք բարի, գարուն, արև, պայմանը մոտ է դարձիս...
Քառերը այս, տառերը այս զորքեր են իսոր բնույթի.
Դիմակ հագած՝ գուրս են եկած անդունդներից իմ բերդի։
Կուզե՞ք հասնել դուք իրերին,—ներսը նայեք ձեր սրտի,—
—Մնա՞ք բարի սե՛ր ու կարոտ, պայմանը մոտ է դարձիս...

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Է

Երկու խոսք 3

ՈՉԵՇՆՉՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔ

Դարբին 5
Ջուրհակներ 7
Գզչարի երգը 9
Կլեյշի 12
Լուռ ես, Մասիս 15
Գարծարան 18
Դարծարանի մոտ 22

ԵՐԳ ԵՐԳՈՑ

Այս աշխարհում կյանքս մի դուր դրաղ է
Իմ կյանքը 30
Միտք ու երազ 31
Ո՞վ է խոսում մթի մեջ 32
Կյանքի լույսով լեփ լեցուն է իմ հոգին 33
Արևներին և աստղերին միշտ կանչում է իմ հոգին 33
Քանի կուզն վայրենարար 35
Կայծակը ինձ նետ 36
Մ ի տ ք ը 37
Լուռ գնում եմ իմ ճամփեն 38
Ամպ ու զամպ է իմ շուրջ կոպմ 38
Գարուն է վառ ու մայիս 39
Ճախրեմ հեռուն, ծովը անհուն 40
Ինձ արևն էր կանչում 41
Ապատություն 43
Ճախարակ 46
Շատ է երկար այս ճանապարհը 50
Քո սրտի մեջ կարող ու վեհ մի օրենք 51
Տիեզերքի խոր կենտրոնի մեջ 52
Ասի, մայրիկ 52
Զանգը զնգում է զանգատան 53
Ժամանակի ու գոյության կարն եմ ես 53
Ինչո՞ւ էապես ծանր եմ զգում ես ինձի 54
Բյուր բերքերով պարարտ հողը միշտ հղի 54

Տիեզերքի մեջ ես բնկերներ շատ ունեմ 55
Օր ու գիշեր աչքս ճամփին 55
Քեզ չսիրել ես չեմ կարող 56
Ով է լցրել կյանքը ցավով 56
Ինչու այսպես մահն եմ գայթ 56
Մրրիկ, մրրիկ ու լուս շարիք 58
Կամքը հզոր, որ կա սավոր 59
Հազար հազարը անցան 59
Ինչու այսպես խառն է այսօր 60
Վարդիր աստու 60
Օթե գնամ, իսկի շատեր 61
Ինչ ես սուլում, անգութ հոգմ 62
Դու, իմ վոտակ 62
Անհպատակ, զուր չես հիկ 63
Դու իմ լճակ, կապույտ լճակ 64
Արի, արի իմ հնագույր 64
Ես ճիշտ է, ես ինձ համար չեմ 64
Ես կա սասված 65
Դարեհ 66
Կյուրոս 68
Գորտերը 70
Ավետիք Իսահակյանին 72
Մ ո վ 74
Խեղճ ու կրակ Համազասպ 77
Քար է ընկած ճանապարհին 79
Ավերակների մեջ 80
Ես կանգնած եմ այստեղ 81
Ես չեմ կարող գնալ ճամփեն 82
Մոլ է սիրտս մի անմահ 83
Սիրտս կարծես ավեր մի տուն 84
Զուր եր լալիս անցյալի փառքը հզոր 85
Կյանքս կարծես արագահոս 86
Իմ որդի՛ Վիկտորին 87
Ոչոր գիտերը հոսում են դեպի ծով 89
Սիրտս պարտեզ մի երկնատես 90
Երազումս Դանդես գետի տիր հասա 91
Երկու ծանր լուծ են դրել 92
Նայի՛ր, ծաղիկը մորենու 93
Հանդես 94
Չէ՞ որ մի օր հոգուս բարձրին 96
«ԽՈՐՔԵՐ ԵՎ ՆՈՐՔԵՐ» ՈՒՐԻՆՅԱԿՆԵՐ . . . . . 97—144
ԱՐԵՎԱՄՈՒՏ. ԿԱՎԵ ԿԱՐԱՊԻ ԵՐԳԵՐԻՑ 1—24 . . . . . 145—158

ԳԻՔ ԵՎ ԴՅՈՒՅԱԶՈՒՆՔ ՀԱՅՈՑ

Գովք հայրենյաց 161
Հային ու Բելը 169
Դեղեցիկն Ադա և Շամիրամ 176
Արտավազդը 194
Դավիթ դյուցազն 198

ԵՐԿՆ ԱՇԽԱՐՀԻ, ՎԵՐՔՆ ԱԶԳԵՐԻ

Նախերգանք 245
Դեպի հնումներ։ Եգիպտոս, Բաբելոն, Պաղեստին 245
Նաշիքեատս, Մակիա-Մանի, Իրան, Աթենք 250
Հոմերոս և Պղատոն։ Հռոմ, Կեսար 263

ՀԱՏՎԱԾՆԵՐ ՀՈՒՆԱԿԱՆ ԴՅՈՒՅԱԶՆԵՐՈՒԹՅՈՒՆԻՑ

Թիրս 279
Նիոբե 285
Ամֆիոնաս 289
Հրաշակերտ մանյակը 299
Թեղես 316

ՀԱՏՎԱԾՆԵՐ «ԱՔԻԼԼԵՍԸ» ԴՐԱՄԱՏ. ՊՈԵՄԻՑ

Մահը միայն մահ չունի 337
Ժամանակը առագաստ, կատարյալ կյանքը իրրև փաստ . . . 344
Էպիլոգ՝ Էլի դեպի հայրենիք . . . . . 399—401

Տեխ. խմբագիր՝ Հ. ԴՈՐՈՅԱՆ
Վերստուգող սրբագրիչ՝ Հ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՎՖ 03445 Պատվեր 522 Տիրաժ 250։

Հանձնված է արտադրության 11/IV 1955 թ.։
Ստորագրված է տպագրության 4/VI 1956 թ.։
Թուղթ՝ 84×108 1/32։ Տպագր. 15,0 մամ. + 3 ներդ., հրատ. 11,0 մամ.

ՀՍՍՌ Կուլտուրայի մինիստրության Հրատարակչությունների և պոլիգրաֆ արդյունաբերության Գլխավոր վարչության Պոլիգրաֆկոմբինատ, Երևան, Տերյան № 91։

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
220028282

A II 28282